ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Փաստահավաք զեկույց

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան
HELSINKI CITIZENS ASSEMBLY
FOUNDATION law development and protection
Protection of Rights Without Borders NGO

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Փաստահավաք զեկույց

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 22

ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ 27

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 27

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՇԵՂՎԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ 31

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՌԱՍԻԶՄ ԵՎ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆ. ԷԹՆԻԿ ՋՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36

ՀԱՅԵՐԸ ՈՐՊԵՍ ԹՇՆԱՄԻ. ՌԱՍԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՀՊԱՏԱԿԵՑՄԱՆ ԵՎ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ 36

ԷԹՆԻԿ ՋՏՈՒՄ. ԱՐՑԱԽՆ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ 43

ՃՆՇՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆ 48

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 51

ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 51

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 69

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿՈՄԲԱՏԱՆՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ ՉԴՆԵԼԸ 81

Չտարբերակված հարձակումներ. ոչ ընտրողական զինտեսակների, ներառյալ՝ կասետային զինամթերքի, «Սմերչ» և «Գրադ» համազարկային համակարգերի կիրառում 83

Քաղաքացիական անձանց ուղղակի թիրախավորում. ԱԹՍ-ների հարձակումներ 100

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՁԱՎԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԿԱՄ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԵԾ ՏԱՌԱՊԱՆՔ, ՄԱՐՄՆԱԿԱՆ ԾԱՆՐ ՎՆԱՍՎԱԾՔ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԾԱՆՐ ՎՆԱՍԻ ՊԱՏՃԱՌՈՒՄ 104

ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ 104

Ռազմագերիների վկայությունները վատ վերաբերմունքի մասին 104

Անմարդկային վերաբերմունք այլ ռազմագերիների նկատմամբ 113

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳԵՐԵՎԱՐՈՒՄ, ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԴԱԺԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ 127

ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄ 139

ԴԻԵՐԻ ԱՆԱՐԳՈՒՄ ԵՎ ԽԵՂՈՒՄ 140

ՀԱՐԿԱԴԻՐ ԱՆՀԵՏԱՑՈՒՄ. ԳԵՐԵՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՉԾԱՆՈՒՑԵԼԸ ԵՎ ԿԱՊ ՉԱՊԱՀՈՎԵԼԸ 149

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 152

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ 153

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 156

ՔՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ ԳԵՐԲՆԱԿԵՑՎԱԾ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 159

ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԺՎԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 159

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 162

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 162

ԳԵՐԵԶՄԱՆԱՎԱՅՐԵՐ 163

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՍՆԱՏՈՒՄ 166

ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ 167

ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 168

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅՈՒՆ 168

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ 174

ՓԱՍՏԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 174

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ 180

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 181

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՐԿԻԶՈՂ ՁԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ ... 183

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ 190

ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍՈՒՄԸ ԵՎ ՎԱՆԴԱԼԻԶՄԸ 191

Եկեղեցիներ, վանքեր, կրոնական տեղավայրեր 191

Պատմական տեղավայրեր և թանգարաններ 209

Հուշարձաններ և պատմամշակութային այլ կոթողներ 213

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՈՉՆՉԱՑՎԱԾ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ 221

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՊԱՏԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ «ԱՂՎԱՆԱԿԱՆ» ԾԱԳՄԱՆ ՔԱՐՈԶ 223

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 225

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽԱԴՐՎԱԾ ՍԻՐԻԱՅԻ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ 230

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 231

ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ 233

ՏԵՂԱԿԱՅՈՒՄ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ 237

ՄՂՈՒՄՆԵՐ, ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ 245

ԼԻԲԻԱ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՅԴ ՓԱՍՏԻ ժԽՏՈՒՄԸ 250

ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՐՈՒՄ, ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿՈՎԿԱՍ 252

2020Թ.-ԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԴՐԲԵՋԱՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՍԻՐԻԱՑԻ ՈՐՈՇ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ (ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ) 258

ԱՐԳԵԼՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ 260

ԱԹՍ-ՆԵՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՀԱՐՎԱԾՆԵՐ 260

Հարձակումներ քաղաքացիական բնակավայրերի վրա 264

Հարձակումներ քաղաքացիական ավտոմեքենաների վրա 265

Կողմնակի վնաս և քաղաքացիական անձանց սպառնացող վտանգներ 267

ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎՐԱ 271

Զինվորական ընտանիքների բնակելի շենքեր 271

Բժշկական հիմնարկներ 275

Արտակարգ իրավիճակների պետական ծառայություն 287

Քաղաքացիական էլեկտրական ենթակառուցվածքներ 290

Ճանապարհներ եվ կամուրջներ 294

Մարտունու քաղաքապետարանի շենքը 306

Դպրոցներ եվ մանկապարտեզներ 312

Խաղաղ բնակիչների տներ 320

ԿԱՍԵՏԱՅԻՆ ՁԵՆՔԵՐ. ՈՉ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՁԻՆԱՄԹԵՐՔ 347

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ 358

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1, ՄԱՐՏՈՒՆԻ, ԱՐՑԱԽ 359

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2, ՄԱՐՏԱԿԵՐՏ, ԱՐՑԱԽ 364

2020 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8, ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ (ՂԱԶԱՆՉԵՑՈՑ) ԵԿԵՂԵՑԻ 367

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 368

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 374

Երախտիքի խոսքեր

Սույն փաստահավաք զեկույցը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի» և «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունների կողմից:

Զեկույցի պատրաստման աշխատանքներին աջակցել և դրանք համակարգել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը»:

Վահան Բուռնազյանը նշանակալի աջակցություն է ցուցաբերել աշխատանքի իրականացման տարբեր փուլերում, ինչպիսիք են մեթոդաբանության և իրավական շրջանակի մշակումը, տարբեր գլուխների խմբագրումը և աշխատանքների ընդհանուր համակարգումը: Զեկույցի պատրաստմանը մասնակցել են նաև Սարգիս Բալխյանը, «Թումանյան» փաստաբանական գրասենյակը և փաստաբան Աննա Մարալյանը: Զեկույցը պատրաստելիս փաստահավաք առաքելություն իրականացրած կազմակերպությունների խումբը համագործակցել է «Արմամենթ Ռիսերչ Սերվիսիզ» (Armament Research Services (ARES)) և «Մնեմոնիք» (Mnemonic) ընկերությունների հետ:

Զեկույցը հեղինակած կազմակերպություններն իրենց երախտագիտությունն են հայտնում բոլոր անհատներին, պետական և ոչ պետական կառույցներին ու կազմակերպություններին, որոնք մասնակցել և աջակցել են զեկույցի ստեղծման փաստահավաք աշխատանքներին:

Տիտղոսաթերթի նկարը՝ Ֆոտոլուրի

Ամփոփագիր

Սույն փաստահավաք զեկույցում ներկայացվում են պատերազմական հանցագործություններ և միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) և մարդու իրավունքների նորմերի այլ խախտումներ, որոնք տեղի են ունեցել գլխավորապես Արցախի (հայտնի է նաև որպես Լեռնային Ղարաբաղ) բնակչության դեմ՝ 2020 թվականի աշնանը Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում և դրա հետևանքով: Ներկայացված ապացույցները հիմնված են տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից տվյալների մանրակրկիտ հավաքագրման և վերլուծության վրա: Ստացված արդյունքների հիման վրա ներկայացվում են պատերազմական հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների հիմնավոր փաստարկներ, ինչպես նաև իրավիճակի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված համապատասխան շահագրգիռ կողմերին:

Աշխատանքների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ընդհանուր թվով 879 վկաների հետ, որոնցից 359-ի հետ անցկացվել են խորքային հարցազրույցներ, միաժամանակ ուսումնասիրվել են բռնությունների դեպքերի մասին արդեն իսկ հաղորդված և դեռևս չհաղորդված դեպքերը: Զեկույցի օբյեկտիվությունն ապահովելու նպատակով վկայությունների հավաստիությունը ճշգրտվել է այլ աղբյուրներից վերցված ապացույցների և վերլուծությունների, ինչպես, օրինակ, տեսանյութերի և լուսանկարչական նյութերի, ռազմական հետախուզության փորձագետների գնահատականների, մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցների և պաշտոնական պետական այլ զեկույցների օգնությամբ:

Հավաքագրված տվյալների վերլուծությունը կատարվել է վերաբերելի իրավական նորմերի համատեքստում, որի հիման վրա կարելի է պնդել, որ Ադրբեջանը գործել է պատերազմական հանցագործություններ, ինչպես նաև մարդու կյանքի իրավունքի, մարդկանց խոշտանգման և դաժան վերաբերմունքի արգելքի, առողջության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի, սեփականության իրավունքի պաշտպանության խախտումներ, շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության դեմ հանցագործություններ: Մասնավորապես զեկույցում ներկայացվում են Ադրբեջանի կողմից լրագրողներին թիրախավորելու, վարձկանների ներգրավելու, ռազմական գործողություններում արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելու փաստեր, որոնց մի մասը հանգեցրել է էթնիկ զտումների:

Այս հանցագործությունները և խախտումներն ունեցել են համակարգային բնույթ և հստակ նպատակ: Ադրբեջանական կողմը շարունակաբար ռասիստական վերաբերմունք է դրսևորել Արցախի ժողովրդի և նրա՝ ինքնորոշման համար պայքարի նկատմամբ: Որդեգրելով առավելապաշտական դիրքորոշում՝ Ադրբեջանի կառավարությունը սահմանափակել է խաղաղ կարգավորման հնարավորությունը և նախապատրաստվել է հարցի ռազմական «լուծմանը»: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանը քարոզել է հայատյացություն՝ ստեղծելով հայերի՝ արմատական «ուրիշ» լինելու կերպար: Այս «ուրիշին» նվաստացնելը և ոչնչացնելը դարձել է Ադրբեջանի պաշտոնական գաղափարախոսական հիմքը, որի նպատակն է եղել բոլոր միջոցների կիրառմամբ տարածքներ զավթելն ու այնտեղ հայկական ներկայությունն արմատախիլ անելը:

Մասնավորապես, իրենց բնիկ հայկական բնակչությունից զրկվել են 193 համայնքներ: 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմը նպատակային միջոցներ է ձեռնարկել իրենց սեփական տներում հազարավոր քաղաքացիական անձանց բնակվելն անհնար դարձնելու համար՝ հրետակոծելով առանց տարբերակման, թիրախավորելով քաղաքացիական ենթակառուցվածքները և վախի մթնոլորտ ստեղծելով: Պատանդ և ռազմագերի են վերցվել քաղաքացիական անձինք և զինվորներ, որոնք սպանվել են, խոշտանգվել կամ ենթարկվել այլ կտտանքների:

Զեկույցում ներկայացվում են ադրբեջանական ուժերի կողմից կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի մանրամասներ, որոնք օրինաչափ և համակարգված բնույթ են ունեցել պատերազմի ընթացքում և դրանից հետո: Զեկույցում ներկայացված են ռազմագերիների և քաղաքացիական անձանց ապօրինի սպանության 19 դեպքի վերաբերող փաստեր: Ավելին, ադրբեջանական կողմը տարբերակում չի դրել քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև, ինչի մասին են վկայում ՄՄԻ-ով սահմանվող պարտավորությունները խախտող անկանոն հարձակումները: Օրինակ, դաշտային այցերի և բաց աղբյուրների տվյալների վերլուծության ընթացքում հայտնաբերվել են բարձր բեկորայնության պայթուցիկ նյութերի կիրառման դեպքեր: Զեկույցում նաև ներկայացվում են Ադրբեջանի կողմից բազմաթիվ բնակելի շենքերի և քաղաքացիական ենթակառուցվածքների ռմբակոծման դեպքեր: Հարցազրույցներ են կատարվել չորս նախկին ռազմագերիների հետ, որոնք ներկայացրել են իրենց նկատմամբ դաժան վերաբերմունքի և խոշտանգման մանրամասներ: Զոհերը, հաճախ՝ տարեց անձինք, կենդանի վիճակում գլխատվել են, խեղվել կամ խոշտանգվել:

Զեկույցում ներկայացվում են նաև առողջության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, ինչպես նաև սեփականության իրավունքների խախտումների մասին ապացույցներ: Մասնավորապես փաստեր են ներկայացվում առ այն, որ հակամարտությունը ֆիզիկական և հոգեկան վնասներ է պատճառել հարյուրավոր հայերի: Ավելին՝ Ադրբեջանի հարձակումների հետևանքով կաթվածահար են եղել ՔՈՎԻԴ-19 համավարակի դեմ պայքարող առողջապահական ծառայությունները, անհնար է դարձել սոցիալական հեռավորության կանոնների պահպանումը, քանի որ մարդիկ ռմբակոծություններից պաշտպանվել են գերբեռնված ապաստարաններում: Պատերազմի պատճառով կան ընտանիքների բաժանման, երեխաների կրթական գործընթացի ընդհատումների, կյանքի պայմանների վատթարացման և տնտեսական դժվարությունների բազմաթիվ դեպքեր: Համատարած են սեփականության իրավունքի խախտման դեպքերը: Շատերը զրկված են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում գտնվող իրենց տներում բնակվելու հնարավորությունից: Մոլեգնող հայատյացության պատճառով այդ մարդկանց վերադարձը սեփական տներ հնարավոր չէ: Բացի այդ, շատ ընտանիքներ ստիպված են եղել փախչել տներից՝ հնարավորություն չունենալով իրենց հետ վերցնելու իրենց արժեքավոր իրերը:

Զեկույցը նաև փաստում է, որ պատերազմի ընթացքում ադրբեջանական ուժերը գործել են էկոլոգիական հանցագործություններ, ինչպես նաև ոչնչացրել հայկական մշակութային ժառանգության բազմաթիվ օբյեկտներ: Փաստահավաք առաքելությունը բացահայտել է հրկիզող զինատեսակների կիրառման դեպքեր, ինչը ստիպել է բազմաթիվ ընտանիքների լքել իրենց բնակավայրերը: Ըստ գնահատումների՝ այդ հարձակումների հետևանքով ոչնչացվել է մոտ 1800 հեկտար անտառ: Բացի այդ, եղել են Արցախի հայկական մշակութային

ներկայությունը ոչնչացնելու կանխամտածված փորձեր: Զեկույցում ներկայացվում են Ադրբեջանի կողմից հայկական եկեղեցիների և հուշարձանների ոչնչացման դեպքերի ապացույցներ: Եղել են նաև այդ հուշարձանների հայկական ժառանգությանը պատկանելու վկայությունները ջնջելու դեպքեր:

Զեկույցը բացահայտում է այն ապօրինի միջոցներն ու մեթոդները, որոնք Ադրբեջանը կիրառել է վերոնշյալ վայրագությունները գործելիս: Ներկայացվում են մանրամասներ պատերազմի ընթացքում օգտագործված զինատեսակների, քաղաքացիական բնակչությանը, բնակելի տարածքները և ենթակառուցվածքները թիրախավորելու մասին: Օրինակ, զեկույցն ընդգրկում է կասետային զինամթերքի օգտագործման, թուրքական և իսրայելական անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ) քաղաքացիական օբյեկտների թիրախային ռմբակոծման դեպքերի և ապօրինի այլ մեթոդների կիրառման վերաբերյալ կարևոր ապացույցներ: Ի հավելումն՝ զեկույցը բացահայտում է, թե ինչպես է Ադրբեջանը Թուրքիայի օգնությամբ պատերազմի ընթացքում օգտագործել սիրիական վարձկանների:

Ադրբեջանական կողմը փորձել է թաքցնել հիշյալ հանցագործությունները և խախտումները՝ խոչընդոտելով պատերազմի ընթացքում լրագրողների աշխատանքին: Օրինակ, քաղաքացիական տարածքների վրա անկանոն հարձակումները վտանգներ են առաջացրել լրագրողների համար, իսկ նրանց մի մասն անվտանգության նկատառումներով պարզապես ստիպված է եղել լքել Արցախի տարածքը: Բավարար տեղեկատվություն ունենալով որոշակի տարածքներում լրագրողների ներկայության մասին՝ Ադրբեջանն այնուամենայնիվ հարվածներ է հասցրել բարձր ճշգրտության զենքերով, ինչը վտանգել է բազմաթիվ լրագրողների կյանքը և նրանցից ոմանց համար դարձել հրազենային վիրավորման պատճառ:

Արցախի բնակչության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը հաշվարկված ընտրություն էր: Միջազգային իրավագետ և ՄԱԿ-ի փորձագետ Ալֆրեդ դե Զայասն այն բնորոշել է որպես ագրեսիայի պատերազմ, որի համար Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը պետք է պատասխանատվություն կրի:[1] Սույն զեկույցում փաստագրված պատերազմական հանցագործությունները, ՄՄԻ-ի և մարդու իրավունքների այլ խախտումները պահանջում են միջազգային հանրության հրատապ արձագանքը ոչ միայն հանուն տուժողների համար արդարադատության ապահովման, այլև անպատժելիության վերացման նպատակով, ինչը շարունակվում է անգամ ակտիվ ռազմական գործողությունների ավարտից հետո: Այն փաստը, որ Ադրբեջանը հրաժարվում է վերադարձնել հայ ռազմագերիներին, կիրառում է Արցախի և Հայաստանի սահմանամերձ գյուղերի բնակչությանն ահաբեկող ագրեսիվ և ռազմատենչ մեթոդներ, որոշ չափով նաև Ադրբեջանի գործողություններին միջազգային հանրության ձախողվածարձագանքի հետևանք է: Պատասխանատվության բացակայության պարագայում Ալիևի ռեժիմին կհաջողվի «ռազմական լուծումն» օգտագործել որպես ինքնորոշման իրավունքը ճնշելու, էթնիկ զտումներ իրականացնելու և հակամարտության երկարաժամկետ լուծումներն արհամարհելու միջոց:

1 Alfred de Zayas, թվիթերյան գրառում, հոկտեմբերի 3, 2020թ, https://twitter.com/alfreddezayas/status/1312400506069962754?lang=en.

Մեթոդաբանություն

Սույն փաստահավաք զեկույցը Հայաստանի քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների համատեղ ջանքերի արդյունք է, որի նպատակն է մանրամասն վերլուծել 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի ժողովրդի դեմ կատարված հանցագործությունները: Զեկույցում ներկայացված է 11 հետազոտողի, 30 հարցազրուցավարի և 8 մեդիա-վերլուծաբանի՝ մեկ տարվա աշխատանքի արդյունքը, օգտագործված են տեղեկություններ, որոնք ստացվել են «Արմամենթ Ռիսերչ Սերվիսիզ» (ARES) կոնսորցիումից, որն ապաքաղաքական գիտատեխնիկական հետախուզության խորհրդատվական ընկերություն է, և միջոլորտային, բազմապրոֆիլային «Մնեմոնիք» կազմակերպությունից, որի գործիքներն ու մեթոդաբանությունն իրավապաշտպաններին թույլ են տալիս օգտագործել թվային տեղեկություններ: Նման շոշափելի ռեսուրսներ ներդնելու արդյունքում հնարավոր է եղել իրականացնել ընդգրկուն թեմատիկ շրջանակով այս փաստահավաք նախագիծը, որի նպատակն է համապարփակ կերպով փաստագրել պատերազմի ընթացքում տեղի ունեցած զանազան հանցագործությունները և խախտումները:

Նախաձեռնությունը ձեռնարկվել է Արցախի հայաբնակչության դեմ գործած վայրագությունները բացահայտելու և գնահատելու նպատակով: Քննության հիմնական թիրախ է ընտրվել 44-օրյա պատերազմի ժամանակահատվածը, սակայն տվյալների հավաքագրման գործընթացը չի սահմանափակվել միայն դրանով, քանի որ ամբողջական պատկեր ձևավորելու նպատակով ուսումնասիրվել են նաև պատերազմից առաջ և հետո տեղ գտած իրավախախտումները: Տարածքային իմաստով ծրագիրը հիմնականում քննության է առել Արցախի և շրջակա հայաբնակ տարածքներում Ադրբեջանի գործած հանցագործությունները: Զեկույցում ներկայացված են նաև դիտարկումներ բուն Հայաստանի տարածքի վրա Ադրբեջանի կատարած հարձակումների վերաբերյալ: Ունենալով այսպիսի մեթոդաբանական ելակետ՝ փաստահավաք նախագծի նպատակն է եղել պարզապես մատուցել խոսուն տվյալներ: Այս ինդուկտիվ գործընթացի միջոցով փորձ է կատարվել բացահայտելու և վերլուծելու մարդու իրավունքների խախտումների հնարավորինս մեծ թվով տեսակներ և դեպքեր:

Այս նպատակով օգտագործվել են տվյալների հավաքագրման մի շարք գործիքներ: Ապացույցների մի զգալի մասը ստացվել է մարդու իրավունքների զանազան խախտումների ենթարկված վկաների և տուժողների հետ խորքային հարցազրույցներից: Կիրառվել է ընտրանքը կազմելու ձնագնդի դետերմինիստական մեթոդ: Նախապես զրուցել ենք 879 անհատի հետ, որի արդյունքներն օգտագործվել են նրանցից 359-ի հետ խորքային հարցազրույցներ անցկացնելու համար: Այս եղանակով հետազոտողներին հաջողվել է ներգրավել բավականաչափ մեծ թվով վկաների: Հարցազրուցավարները հանդիպել են պատերազմի հետևանքով Արցախից Հայաստան ժամանակավորապես տեղափոխված և հյուրանոցներում ապաստանած վկաների հետ: Պատերազմից հետո ձնագնդի մեթոդով լրացուցիչ տվյալներ հավաքելու նպատակով հարցազրուցավարներն այցելել են նաև Արցախ: Պատերազմի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների, օրինակ, ադրբեջանցիների կողմից որևէ ավանի կամ գյուղի գնդակոծման կամ զավթման հետքերով գնալով, հարցազրուցավարները գտել ու հանդիպել են նաև վկաների:

Հարցազրույցների առաջին փուլը 879 անձանց հետ մասամբ իրականացվել է ազատ ձևաչափով, որտեղ վկաներին խնդրել ենք մեկնաբանել որոշակի իրադարձություններ, ինչպես նաև ներկայացնել իրենց անձնական փորձառությունները: Այս մոտեցումը հնարավորություն է տվել հարցազրուցավարներին արձանագրել մարդկային տարբեր պատմություններ, ինչպես նաև այնպիսի պատմություններ, որոնք հենց վկաների ընկալմամբ են համարվել անարդարության դեպքեր: Այն դեպքում, երբ որևէ վկայի պատմությունն արձանագրել է մարդու իրավունքների հնարավոր խախտում, տվյալ անհատն ընտրվել է առավել հանգամանալից հարցազրույցների երկրորդ փուլի համար, որի ընթացքում կատարված խախտումների մանրամասները բացահայտելու նպատակով օգտագործվել են առավել կառուցակարգված հարցաշարեր: Հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների հնարավոր դեպքերը պատշաճ կերպով նույնականացնելու նպատակով բոլոր հարցազրուցավարներն անցել են իրավաբան փորձագետների կողմից անցկացված բարձրակարգ վերապատրաստում:

Այս աշխատանքների համար կարևոր բաղադրիչ է եղել տեղեկացված համաձայնությունը: Հարցազրուցավարները հավաստիացել են, որ վկաները ըմբռնել են նախագծի նպատակներն ու ակնկալիքները և քաջալերել են նրանց մասնակցելու նախագծին, եթե իհարկե համաձայն են դրա գլխավոր նպատակին, այն է՝ բացահայտել ճշմարտությունը 2020 թվականի պատերազմի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ: Հարցազրույցին մասնակցած վկաները հասկացել են, որ նախագիծը նախատեսված չէ անձամբ իրենց նկատմամբ անարդարության առանձին դեպքերը հասցեագրելու համար և ի վիճակի չէ երաշխավորել սոցիալական արդարություն համայնքի համար: Նախապես համաձայնեցված այս պայմանով վկաները ինքնակամ պատմել են իրենց փորձառությունների մասին: Նրանց տրվել է վկայություններում իրենց ինքնությունը հայտնելու, անանուն մնալու, միայն անվան սկզբնատառերով կամ կեղծ անունով հանդես գալու ընտրություն:

Այս հարցազրույցներից ստացված տվյալները համեմատվել են զանազան բաց աղբյուրներից ստացված ապացույցների հետ: Մասնավորապես, օրինակ, մեդիա-վերլուծաբաններն այս նախագծին օժանդակել են պատերազմի վերաբերյալ տեղական և միջազգային լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունները հավաքելով և վերլուծելով, որոնք հետազոտողներն այնուհետև օգտագործել են վկաների պատմությունների ճշմարտությունը հաստատելու համար: Վերլուծաբաններն ստուգել են տեղեկությունների վավերականությունը՝ գնահատելով դրանց իսկությունը, սկզբնաղբյուրից ստացված լինելը, ներքին հակասությունների բացակայությունը և բացահայտելով կասկածելի շարժառիթներ ունեցող հանրային կապերի սուբյեկտների կողմից դրանց սխալ ներկայացման դեպքեր: Որոշ դեպքերում անգամ համացանցում հայտնաբերվել են տեսանյութեր, որոնք վերահաստատում էին հարցազրույցներից և այլ աղբյուրներից ստացված տվյալները: Այլ դեպքերում մի վկայից ստացված տեղեկությունը վերահաստատվել է այլ վկաների կողմից, որոնք եղել են նույն վայրից, կամ անցել են նույն փորձությունների միջոցով: Աղբյուրների վավերականությունը ստուգելու և նոր ապացույցներ ձեռք բերելու նպատակով օգտագործվել են արբանյակային պատկերներ, գեոլոկացիոն տվյալներ և հետախուզական այլ ապացույցներ, որոնք տրամադրվել են «ARES»-ի/«Մնեմոնիք»-ի կողմից:

Նախագծի շրջանակում ստեղծվել է բաց աղբյուրների տվյալները հետաքննող (ԲԱՏՀ) թիմ, որը կենտրոնացել է չորս հիմնական նպատակների վրա. 1) մարտական գործողությունների

պատճառով հասցված վնասների գնահատման նպատակով լուսանկարների, տեսանյութերի, սոցիալական ցանցերի հրապարակումների, արբանյակային պատկերների և թվային այլ բաց աղբյուրների տեղեկությունների վերլուծություն՝ համաձայն «Թվային բաց աղբյուրներով հետաքննությունների մասին Բերկլիի արձանագրության» (Berkeley Protocol on Digital Open Source Investigations),[2] 2) հատուկ հետաքրքրություն ներկայացնող իրադարձությունների աշխարհագրական, իսկ հնարավորության դեպքում՝ ժամանակագրական տեղորոշում, 3) զինատեսակների նույնականացում, 4) առցանց կոնտենտի պահպանում և արխիվացում: Մարդուիրավունքներիխախտումներիհամատեքստումբժշկականփորձագետհանդիսացող լիցենզավորված բժշկի օգնությամբ թիմն ուսումնասիրել է նաև ենթադրաբար մահապատժի ենթարկված զինվորների լուսանկարները և տեսագրությունները: Աշխարհագրական և ժամանակագրական տեղորոշման և մարտական գործողությունների պատճառով հասցված վնասների վերլուծության նպատակով տարբեր աղբյուրներից ձեռք են բերվել արբանյակային պատկերներ, այդ թվում՝ «Google Earth Pro»-ից, «Planet's SkySat» պատկերների արխիվից և «Maxar SecureWatch»-ից: Զինատեսակների նույնականացումն իրականացրել են ռազմական ոլորտի, կրակային պատրաստության և/կամ պատկերների կամ տեսանյութերի օգնությամբ զինատեսակների հեռավար նույնականացման մասնագիտական մեծ փորձ ունեցող փորձագետներ:

Լուսանկարների և տեսանյութերի մետատվյալները վերլուծելու նպատակով ԲԱՏՀ թիմն օգտագործել է «exiftool» և «ffprobe» գործիքները, ինչպես նաև «MediaInfo»-ն՝ որպես GUI-ի (գրաֆիկական ինտերֆեյս) վրա հիմնված ծրագիր: Համեմատական և հակադրական պատկերներ ստեղծելու համար օգտագործվել է նաև տվյալների վիզուալիզացման «Flourish» հարթակը՝ ցույց տալու հետաքրքրության առարկա հանդիսացող նույն տարածքը որոշակի ժամանակահատվածից առաջ և հետո: Շատ դեպքերում տեսանելի է եղել հասցված ակնհայտ վնասը, սակայն եղել են նաև դեպքեր, երբ այդ վնասները տեսանելի չեն եղել կիրառած զինատեսակի, արբանյակային պատկերի՝ գետնի նմուշառման հեռավորության կամ լուծաչափի, կամ տվյալ ժամանակահատվածում հետաքրքրություն ներկայացնող տարածքի վրա դժվարաթափանց ծածկույթի պատճառով: Առցանց տեսանյութերը ներբեռնելու նպատակով օգտագործվել են տարբեր գործիքներ՝ «youtube-dl» գործիքը, սոցիալական ցանցերի հրապարակումների աղբյուրի կոդերը և «Linux»-ի վրա հիմնված վիրտուալ գործիքը՝ «Տելեգրամի»-ի կոնտենտն արտածելու համար:

Զինատեսակների նույնականացումն ու վերլուծությունն իրականացվել է «ARES» կազմակերպության կողմից: Անվտանգության և անձնական գաղտնիության նկատառումներով աշխարհագրական տեղորոշման և զինատեսակների նույնականացման փորձագետները ցանկացել են մնալ անանուն, սակայն նշենք, որ թիմի յուրաքանչյուր անդամ ունի ընդգրկուն հետաքննական փորձառություն և ըստ պահանջի կարող է տրամադրել նախկինում կատարված աշխատանքների օրինակներ կամ անանուն ինքնակենսագրություն:

Հարկ է նաև նշել, որ փաստահավաք խումբը միջոցներ է ձեռնարկել սույն զեկույցում քննվող հանցագործությունների ու իրավախախտումների վերլուծության նպատակով կիրառված

2 The Human Rights Center at the University of California, Berkeley, School of Law and The United Nations High Commissioner for Human Rights (OHCHR), "Berkeley Protocol on Digital Open Source Investigations" (New York and Geneva, 2020), https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/OHCHR_BerkeleyProtocol.pdf

առցանց տվյալները պահպանելու ուղղությամբ: Հաշվի առնելով, որ ուսումնասիրված նյութերից շատերը կարող են հեռացվել կոնտենտի հեղինակների կամ հենց հոսթինգ հարթակների կողմից (օր.՝ Telegram, YouTube, Twitter և այլն), դրանք պահպանվել են նորզելանդական «Mega.nz» կոդավորված տվյալների պահպանման ամպային ծառայությունում: Ընթերցողի համար այս նյութերի հասանելիությունն ապահովելու համար դրանց սկզբնական URL-ները, որոնք հետագայում կարող են այլևս չգործել, զեկույցի հղումներում փոխարինվել են «Mega»-ի տվյալների բազային տրվող համապատասխան հղումներով:

Տարբեր աղբյուրներից հավաքված մեծածավալ տվյալները դասակարգվել են ըստ կոնկրետ իրավախախտման դեպքի հետ նրանց ունեցած կապի: Այս եղանակով հնարավոր է եղել յուրաքանչյուր դեպքը դիտարկել բազմաթիվ անկյուններից և ներկայացնել իրադարձությունների մանրամասն և վստահելի դիտարկում: Այս գործընթացի ժամանակ օգտագործվել են նաև այլ սուբյեկտների կողմից պատրաստված հետաքննական զեկույցներ: Այնուհետև այս դիտարկումներն ուսումնասիրվել են իրենց համապատասխան իրավական համատեքստերում՝ բացահայտելու հնարավոր հանցագործություններ և մարդու իրավունքների խախտումներ: Այս գործընթացում ներգրավվել են նաև իրավական փորձագետներ՝ բացահայտված դեպքերը ՄՄԻ-ի և մարդու իրավունքների նորմերի տեսակետից գնահատելու նպատակով: Այս գնահատումներից հետո դեպքերը խմբավորվել են ըստ մարդու իրավունքների խախտումների տեսակների, ինչը նաև թույլ է տվել ի ցույց դնել այդ խախտումների պարբերական և համակարգային բնույթը: Զեկույցն ինքնին կառուցված է այս թեմատիկ դասակարգումների հիման վրա, որտեղ հավաքված ապացույցներն օգտագործվում են հանցագործությունների և իրավախախտումների շրջանակի և բնույթի վերաբերյալ պնդումներ կատարելու նպատակով:

Ամփոփելով նշենք, որ Ադրբեջանի կողմից պատերազմի ընթացքում կատարված վայրագությունների վերաբերյալ ապացուցահեն դիտարկումներ կատարելու նպատակով սույն զեկույցն օգտվել է բազմաթիվ աղբյուրներից: Սակայն, կարևոր է նաև նշել, որ այս նախագիծը գլխավորապես հիմնված է վկաների փորձառությունների վրա, այն է՝ քննարկված թեմաներն ու հարցերը հիմնված են վկաների տրամադրած տեղեկությունների վրա: Այլ լրացուցիչ տեղեկությունների ուսումնասիրությունը նպատակ է ունեցել ճշգրտելու և արժեվորելու վկաների փորձառությունների վերաբերյալ առաջին ձեռքից ստացված տեղեկությունները: Զեկույցը համապարփակ է, քանի որ այն փաստեր է ներկայացնում մարդու իրավունքների վերաբերյալ նախկինում չհաղորդված, ինչպես նաև այլ զեկույցներում տեղ գտած խախտումների մասին:

Առաջարկություններ

Ելնելով սույն զեկույցում փաստարկված պատերազմական հանցագործությունների վերաբերյալ փաստական տեղեկություններից և մարդու իրավունքների այլ խախտումներից և նման խախտումների համար պատասխանատվության ենթարկելու նպատակներից՝ հետազոտողները մշակել են մի շարք առաջարկություններ: Առաջարկությունները նախատեսված են առանձին միջազգային, տարածաշրջանային և ազգային դերակատարների համար և խմբավորված են ըստ թեմաների՝ զեկույցի բովանդակությանը համապատասխան:

ՀՀ կառավարությանը.

- Առավելագույնս օգտագործել մարդու իրավունքների պաշտպանության բազմակողմ և միջազգային մեխանիզմները, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, ԵՄ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հարթակները՝ 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտումները և Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիան լուսաբանելու, ինչպես նաև կոնկրետ գործողություններ, այդ թվում՝ իրավական, պահանջելու նպատակով:

Հակահայկական ռասիզմի առնչությամբ.

- Վերջին շրջանում Ադրբեջանի դեմ Արդարադատության միջազգային դատարան ներկայացված գործի շրջանակներում ներգրավել նաև ՄԱԿ-ի՝ ռասիզմի ժամանակակից ձևերի հարցերով հատուկ զեկուցողին, իսկ վարույթի ավարտից հետո դիմել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին՝ պահանջելով այս հարցը ներկայացնել Գլխավոր ասամբլեային և Անվտանգության խորհրդին Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կիրառելու նպատակով:
- Համագործակցել նաև եվրոպական և տարածաշրջանային կազմակերպությունների, օրինակ՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի և ԵԱՀԿ-ի հետ՝ պահանջելով պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին՝ ռասիստական քաղաքականություն վարելու և իրականացնելու համար:

Պատերազմական բոլոր հանցագործությունների և մարդու իրավունքների բոլոր խախտումների առնչությամբ.

- Հետամուտ լինել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի և ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (UN OHCHR) կողմից Ադրբեջանի պատերազմական հացագործությունները և մարդու իրավունքների խախտումները քննելուն, որոնց ապացույցները ներկայացված են սույն զեկույցում, ինչպես նաև նրանց կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային և անվտանգության խորհրդին՝ հարցը Միջազգային քրեական դատարան ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելուն:

Անձնական և ընտանեկան կյանքի և էթնիկ զտումների պատճառով տեղահանված անձանց իրավունքների առնչությամբ.

- Համագործակցելով և համակարգելով միջազգային գործընկերների և դոնորների հետ՝ ապահովել տեղահանված ընտանիքների և անհատների անմիջական կարիքների բավարարումը, այդ թվում՝ սննդի, հագուստի և ապաստանի տրամադրումը, մշակել և իրականացնել վերաբնակեցման և ինտեգրման սոցիալական ծրագրեր, որոնք ընդգրկում են մասնագիտական վերապատրաստում, աշխատանքի տեղավորում և աջակցություն երեխաներին:
- Աջակցելով տեղահանված անձանց՝ նրանց հասանելի դարձնել միջազգային և տարածաշրջանային իրավական մեխանիզմները, ինչպես օրինակ՝ ՄԻԵԴ-ը, իրավական պաշտպանության և տեղահանման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման նպատակով:

Մշակութային ժառանգության պահպանման առնչությամբ.

- Եվրոպայի խորհրդի Մշակույթի, ժառանգության և լանդշաֆտի գլխավոր կոմիտեի ուշադրությանը ներկայացնել հայկական մշակութային ու կրոնական հուշարձանների և ընդհանրապես հոգևոր ժառանգության ոչնչացման և ձևախեղման դեպքերը՝ պահանջելով ձեռնարկել հստակ գործողություններ և իրավիճակը ներկայացնել Նախարարների կոմիտեին:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից օտարերկրյա վարձկանների օգտագործման առնչությամբ.

- Համագործակցել այլ կառավարությունների հետ «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային կոնվենցիայի պահանջները կիրարկելու ուղղությամբ
- Այլ երկրների հետախուզական ծառայությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունների, օրինակ՝ «Amnesty International» և «Human Rights Watch»-ի հետ համագործակցելով՝ հավաքել տեղեկություններ վարձկանների և նրանց հավաքագրողների վերաբերյալ և այդ տեղեկությունները տրամադրել Միջազգային քրեական դատարանին և ՄԱԿ-ի՝ վարձկանների օգտագործման հարցերով աշխատանքային խմբին՝ որպես մարդու իրավունքների խախտումների մասին վկայություններ, որոնց փաստարկմամբ կհաստատվի, որ խոչընդոտվել է անձանց ինքնորոշման իրավունքի իրացումը, և դրա հիման վրա պատասխանատվության ենթարկել վարձկաններ ներգրաված և օգտագործած անհատ հավաքագրողներին և պետություններին:

Արցախում էթնիկ զտումների առնչությամբ.

- Կոչ անել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին՝ ա) զարգացման իրավունքի հարցերով հատուկ զեկուցողին, բ) ժողովրդավարական և արդարացի միջազգային հասարակարգի խթանման հարցերով անկախ փորձագետին, գ) մարդու իրավունքների և միջազգային համերաշխության հարցերով անկախ փորձագետին, դ) մարդու իրավունքների իրագործման վրա միակողմանի հարկադրման միջոցների բացասական ազդեցության հարցերով հատուկ զեկուցողին՝ ուսումնասիրել

Արցախի ինքնորոշման պահանջատիրությունը ժողովրդավարական և արդարացի միջազգային հասարակարգի խթանման հարցերով անկախ փորձագետի՝ 2014 թվականի ինքնորոշման մասին զեկույցի (A/69/272) շրջանակներում և միջնորդել, որ հիշյալ հատուկ մարմինները զեկուցեն և առաջարկեն ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին ճանաչել և աջակցել Արցախի ինքնորոշմանը, պաշտպանված սահմաններով, ներառելով հակամարտությունից առաջ ունեցած բոլոր հայաբնակ համայնքները, և ապահովել ցամաքային հաղորդակցություն Հայաստանի հետ։

ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերին.

Հակահայկական ռասիզմի առնչությամբ.

- Ռասիզմի ժամանակակից ձևերի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից անհանդուրժողականության հարցերով հատուկ զեկուցողին. քննության առնել Ադրբեջանի գործադրած հակահայկական ռասիզմի, ատելության խոսքի, ատելության հողի վրա հանցագործ քաղաքականությունը և պրակտիկան, ինչպես նաև առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ գործարկելով Ադրբեջանի նկատմամբ հատուկ ընթացակարգ։

Պատերազմական հանցագործությունների, կյանքի, անձի ազատության և անվտանգության, խոշտանգումից և դաժան վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների խախտումների առնչությամբ.

- Արտադատական, արագացված կամ կամայական մահապատիժների հարցերով հատուկ զեկուցողին ու խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցողին. քննության առնել Ադրբեջանի կողմից գործված և սույն զեկույցում փաստագրված պատերազմական հանցագործությունները և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ գործարկելով Ադրբեջանի նկատմամբ հատուկ ընթացակարգ, ինչպես նաև փոխանցել հարցը Միջազգային քրեական դատարանին՝ իրականացված պատերազմական և ագրեսիայի հանցագործությունները քրեորեն հետապնդելու համար։
- Կամայական ազատազրկման հարցերի աշխատանքային խմբին և հարկադրված և բռնությամբ անհետացումների հարցերով աշխատանքային խմբին. քննել Ադրբեջանի կողմից քաղաքացիական անձանց պատանդ վերցնելու և ռազմագերիներին ու այլ էթնիկ հայերին շարունակ պարտադրանքով պահելու փաստերը՝ անկախ նման անձանց՝ Ադրբեջանի կողմից տրված կարգավիճակի, պահանջել բոլոր էթնիկ հայերի ազատ արձակումը և վերադարձը, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ։

Առողջության իրավունքի խախտումների առնչությամբ.

- Յուրաքանչյուր մարդու՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքի հարցերով հատուկ զեկուցողին. քննել և ներկայացնել Ադրբեջանի կողմից համավարակի ընթացքում զինված հակամարտության նկատմամբ մորատորիումի խախտման, շտապօգնության մեքենաների թիրախավորման և բժշկական հաստատությունների ոչնչացման դեպքերը, որոնցից յուրաքանչյուրը կարճաժամկետ և երկարաժամկետ տևողությամբ և համավարակի պայմաններում խախտել է մարդու առողջության իրավունքը, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Էկոլոգիական հանցագործությունների առնչությամբ.

- Անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրից օգտվելու ոլորտում մարդու իրավունքների պարտավորությունների հարցերով հատուկ զեկուցողին. քննել Ադրբեջանի կողմից սպիտակ ֆոսֆորի ապօրինի օգտագործման դեպքերը և շրջակա միջավայրի համար վնասակար այլ գործողությունները, որոնք խաթարում են գյուղերի ինքնաբավությունը, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Մշակութային ժառանգության պահպանման առնչությամբ.

- Մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողին. այցելել և քննել Ադրբեջանի կողմից մշակութային հուշարձանները թիրախավորելու, վնասելու կամ ոչնչացնելու, ինչպես նաև հայկական մշակութային հուշարձանների ձևափոխման և մշակութային յուրացման, մշակութային սեփականության վերադարձը մերժելու դեպքերը, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու և ներկայումս վտանգված մշակութային հուշարձանների ու պատմական վայրերի պաշտպանությունը ապահովելու ուղղությամբ:

Լրագրողների և խոսքի ազատության իրավունքները հարգելու առնչությամբ.

- Ազատ կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողին. քննել Ադրբեջանի կողմից իր տարածքում և դրանից դուրս լրագրողներին և բլոգերներին թիրախավորելու, հետապնդելու և պատժի ենթարկելու դեպքերը, պահանջել ապահովել Հայաստանից լրագրողների և բլոգերների անարգել մուտքն Արցախի տարածք, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից օտարերկրյա վարձկանների օգտագործման առնչությամբ.

- Վարձկաններին՝ որպես մարդու իրավունքները խախտելու և ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործմանը խոչընդոտելու միջոց օգտագործելու հարցերով աշխատանքային խմբին. քննել Ադրբեջանի կողմից վարձկանների տեղակայման, Արցախում նրանց օգտագործելու նպատակով Թուրքիայի կողմից այդ վարձկանների հավաքագրման և փոխադրման դեպքերը, ուսումնասիրել Արցախի ինքնորոշման պահանջը, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել վարձկանների օգտագործման համար Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Էթնիկ զտումների առնչությամբ.

- Զարգացման իրավունքի հարցերով հատուկ զեկուցողին, ժողովրդավարական և արդարացի միջազգային կարգի խթանման հարցերով անկախ փորձագետին, մարդու իրավունքների և միջազգային համերաշխության հարցերով անկախ փորձագետին և մարդու իրավունքների իրագործման վրա միակողմանի հարկադրման միջոցների բացասական ազդեցության հարցերով հատուկ զեկուցողին. ուսումնասիրել Արցախի ինքնորոշման պահանջը Ժողովրդավարական և, հիմնվելով միջազգային հավասար իրավունքների խթանման հարցերով անկախ փորձագետի՝ 2014 թվականի ինքնորոշման մասին զեկույցի (A/69/272), միջազգային իրավունքի շրջանակում erga omnes պարտավորության, ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների և միջազգային դաշնագրերի վրա, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ ճանաչել և աջակցել արցախահայության ինքնորոշմանը այնպիսի պաշտպանելի սահմաններով, որոնք ներառում են 44-օրյա պատերազմին նախորդող բոլոր հայաբնակ համայնքները և ապահովում են ցամաքային հաղորդակցություն Հայաստանի հետ:

ՄԱԿ-ի պայմանագրերի մարմիններին

Հակահայկական ռասիզմի առնչությամբ.

- Ռասայական խտրականության վերացման կոմիտեին (CERD). նկատի առնելով Ադրբեջանի հակահայկական ռասիզմի քաղաքականությունը և գործելակերպը, որոնք արձանագրված են CERD-ի՝ 2001, 2005, 2009 և 2016 թվականների եզրափակիչ դիտարկումներում և Ադրբեջանի նախագահ Ալիևի ատելության խոսքի վերջին դրսևորումները, ճանաչել Ադրբեջանի կողմից կոնվենցիայի խախտումները և դրանց մասին տեղեկացնել կոնվենցիայի մյուս մասնակից պետություններին, համագործակցել Մարդու իրավունքների խորհրդի հետ՝ հարցը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և անվտանգության խորհրդին ներկայացնելու և վերջիններիս կողմից Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու նպատակով:

Պատերազմական հանցագործությունների, կյանքի, անձի ազատության և անվտանգության, խոշտանգումից և դաժան վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների խախտումների առնչությամբ.

- Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեին (CAT) և Հարկադրված անհետացումների հարցերով կոմիտեին. քննել էթնիկ հայերի, այդ թվում՝ պատանդ վերցված քաղաքացիական անձանց, ռազմագերիների և այլ կարգավիճակ ունեցող անձանց գլխատման, առանց դատի մահապատժի ենթարկելու, անդամախեղման, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի դեպքերը և Ադրբեջանից պահանջել վնասների փոխհատուցում, Ադրբեջանում ապօրինի պահվող բոլոր էթնիկ հայերի անհապաղ ազատ արձակում և հայրենադարձում՝ անկախ Ադրբեջանի կողմից նրանց վերագրվող կարգավիճակից, քննել Ադրբեջանի կողմից պահվող էթնիկ հայերի մասին չծանուցելու փաստը, զեկուցել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին և առաջարկել քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, այդ թվում՝ գործարկելով հատուկ ընթացակարգ վերջինիս նկատմամբ:
- Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեին (SPT). այցելել Ադրբեջանում պահվող բոլոր էթնիկ հայերին, բարձրացնել նրանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի ցուցաբերելու հարցը, պահանջել նրանց ազատ արձակումն ու վերադարձը:

Առողջության, անձնական և ընտանեկան կյանքի, սեփականության, էկոլոգիական և մշակութային իրավունքների խախտումների առնչությամբ.

- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (CESCR). քննել համավարակի ընթացքում զինված հակամարտության նկատմամբ մորատորիումի խախտման, շտապօգնության մեքենաների և բժշկական հաստատությունների թիրախավորման, վնասման և ոչնչացման, համավարակի ընթացքում առողջության իրավունքի խախտման, քաղաքացիական անձանց թիրախավորելու պատճառով անձնական և ընտանեկան կյանքի վրա բացասական հետևանքների, առանց տարբերակման խաղաղ բնակչությանը հրետակոծելու, սեփականության և կենսագոյության միջոցների ոչնչացման, էթնիկ զտումների գործադրմամբ հարկադրված տեղահանման, գյուղերի ինքնաբավությունը խաթարող շրջակա միջավայրի վնասման, մշակութային հուշարձանների, պատմական վայրերի վնասման և ոչնչացման, մշակութային ժառանգության և ինքնության խարխլման դեպքերը և Ադրբեջանից պահանջել հասցրած բոլոր վնասների փոխհատուցում, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Էթնիկ զտումների առնչությամբ.

- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին (CESCR). ուսումնասիրել Արցախի ինքնորոշման պահանջը և ըստ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 1-ին հոդվածի 3-րդ մասի՝ հիշեցնել Ադրբեջանին դաշնագրերով ստանձնած պարտավորությունները բարեխղճորեն կատարելու մասին, զեկուցել և առաջարկել ՄԱԿ-ի մարդու

իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին՝ քայլեր ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Եվրոպայի Խորհրդին և հարակից մարմիններին և հաստատություններին.

Ադրբեջանի հակահայկական ռասիզմի առնչությամբ.

- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովին (ECRI/ ՌԱԵՀ). նկատի առնելով Ադրբեջանում հակահայկական ռասիզմի երկարատև պատմությունը, վերջին պատերազմական հանցագործությունները՝ որպես ռասիզմի ակնառու դրսևորում, նախագահ Ալիևի՝ շարունակական ատելության խոսքը և խտրականության ու բռնության հրահրումը՝ կոչ անել Նախարարների կոմիտեին դիտարկել այս հարցն ու հարակից խնդիրները և Ադրբեջանին պատասխանատվության ենթարկել շարունակվող բռնությունների համար:

Խոշտանգումների արգելքի, ազատության և անվտանգության իրավունքի խախտումների առնչությամբ.

- Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեին (CPT). հատուկ այցեր (ad hoc) կատարել Ադրբեջան, հանդիպել այնտեղ պահվող բոլոր էթնիկ հայերի հետ՝ անկախ Ադրբեջանի կողմից նրանց վերագրվող կարգավիճակից, քննել և հաղորդել խոշտանգման և դաժան վերաբերմունքի դեպքերի մասին, հետամուտ լինել CPT-ի բոլոր հանձնարարականների իրականացմանը:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից օտարերկրյա վարձկանների կիրառման առնչությամբ.

- Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին (GRECO), Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտեին (MONEYVAL), «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (CETS No. 198) կողմերի համաժողովին. քննել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արցախում մարտական գործողություններին մասնակցելու նպատակով ներգրաված վարձկանների ֆինանսավորման աղբյուրները և վճարումները, հաշվի առնելով, որ առնվազն որոշ վարձկաններ հավաքագրվել են Թուրքիայի կողմից հովանավորվող «Սիրիայի ազգային բանակ» (ՍԱԲ) խմբավորման ահաբեկչական խմբերից, և Նախարարների կոմիտեին ներկայացնել առաջարկություններ պարունակող զեկույց:

Միջազգային և տարածաշրջանային այլ կազմակերպություններին և գործակալություններին.

Մշակութային ժառանգության պահպանման առնչությամբ.

- ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը (UNESCO). այցելել Ադրբեջանի հսկողության տակ գտնվող տարածքներ՝ իրավիճակը փաստաթղթավորելու և զեկուցելու համար, կանխել հայկական մշակութային

ժառանգության, հուշարձանների և գերեզմանատների ոչնչացման հետագա գործողությունները:

- Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությանը (INTERPOL). սերտորեն մշտադիտարկել և կանխել Արցախից մշակութային ժառանգություն ներկայացնող իրերի վաճառքը կամ փոխանցումը, ինչպես նաև Արցախի Հանրապետությանը վերադարձնել հայտնաբերված և առգրավված մշակութային նմուշները:
- Թանգարանների միջազգային խորհրդին (ICOM). Խումբ-77-ի կողմից հրապարակվող կարմիր ցուցակում ընդգրկել Ադրբեջանի հսկողության տակ հայտնված մշակութային և կրոնական շարժական հուշարձանները, դատապարտել Ադրբեջանի կողմից Շուշիի երկրաբանական թանգարանի, Շուշիի պատմության թանգարանի, Շուշիի գեղարվեստի պատկերասրահի և Հադրութի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանի ավերումը:
- Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդին (ICOMOS). ընդունել Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային կոթողների ոչնչացումը և դրանց նկատմամբ վանդալիզմի ակտերը դատապարտող բանաձև, օգտագործել ICOMOS-ի գիտական կոմիտեների և ICOMOS-ի համապատասխան ազգային կոմիտեների անդամների փորձագիտական կարողությունները՝ վտանգված մշակութային արժեքների կարևորությունը և դրանց սպառնացող վտանգները գնահատելու համար, վերահաստատել վտանգված մշակութային արժեքներին սպառնացող վտանգների փաստերը, կարևորել դրանց նշանակությունը, իրավիճակը ICOMOS-ի ցանցերով հանրայնացնելու միջոցով նախազգուշացնել հանրությանը մշակութային արժեքներին սպառնացող վտանգների և դրանց նշանակության մասին, ձեռնարկել հասցեական քայլեր՝ վտանգված մշակութային արժեքների պահպանմանն աջակցելու նպատակով:

Առանձին պետություններին.

- Պետությունները պետք է կոչ անեն Ադրբեջանին անհապաղ ազատ արձակել և վերադարձել Ադրբեջանում պահվող բոլոր էթնիկ հայերին՝ անկախ նրանց վերագրված կարգավիճակից, ինչպես նախատեսված է 2020 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ համաձայնագրով:
- Պետությունները համատեղ և առանձին պետք է պարտավորվեն արգելել ռազմական տեխնիկայի և զենքի վաճառքը կամ մատակարարումն Ադրբեջանին և դադարեցնեն տեխնոլոգիաների և ռազմական հետախուզական տվյալների փոխանակումը Ադրբեջանի հետ:
- Պետությունները պետք է կոչ անեն Մարդու իրավունքների խորհրդին՝ մարդու իրավունքների համակարգային խախտումները քննելու նպատակով Ադրբեջանի վերաբերյալ ստեղծել հատուկ ընթացակարգ:
- Հորդորել Ադրբեջանի կառավարությանը վավերացնել 2008 թվականի մայիսի 30-ի «Կասետային զինամթերքի մասին» կոնվենցիան, 1980 թվականի՝ սովորական սպառազինությունների այն տեսակների օգտագործումն արգելելու կամ սահմանափակելու մասին կոնվենցիան, որոնք կարող են համարվել չափազանց

մեծ վնասներ հասցնող կամ ունենալ անխտրական ազդեցություն, ինչպես նաև այդ կոնվենցիայի արձանագրությունները:

- Զերծ մնալ երկու պետություններին ուղղված անհասցե և հավասարակշռված կոչերից այն դեպքում, երբ առկա է ակնհայտ ագրեսոր՝ հաշվի առնելով այն, որ այս կոչերը դիտվում են որպես իրավիճակի անտեսման և իրադրության հանդեպ անտարբերության դրսևորում, նպաստում են շարունակվող անպատժելիությանը և իրավունքների կոպտագույն խախտումներին և վնաս են հասցնում հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարներին:

Սույն զեկույցում ներկայացված փաստերը և առաջարկությունները չեն կարող դիտվել այսօր տեղի ունեցող իրադարձություններից անջատ: Կոչ ենք անում անդամ պետություններին և համապատասխան միջազգային կազմակերպություններին դատապարտել Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կողմից դրսևորվող ընթացիկ ագրեսիվ քաղաքականությունը, ինչն արտահայտվում է Հայաստանի հետ դե ֆակտո սահմանին՝ հայկական գյուղերին և համայնքներին շատ մոտ, իսկ որոշ դեպքերում՝ Հայաստանի ինքնիշխան տարածքի ներսում ռազմական հենակետեր տեղակայելով, հաշվի առնելով, որ այս գործողությունները կաթվածահար են անում տեղի բնակչության բնականոն կյանքը և էական ազդեցություն ունենում նրանց իրավունքների վրա:

Կոչ ենք անում ձեռնարկել մարդու իրավունքների մշտադիտարկման հրատապ միջազգային առաքելություն, ինչպես նաև ստեղծել անվտանգության գոտի, որի շնորհիվ տեղական համայնքները ապահով կլինեն ագրեսիայից, և կկանխվեն իրավիճակի այնպիսի սրացումներն ու հարձակումները, ինչպիսին, օրինակ, տեղի ունեցավ 2021 թվականի նոյեմբերի 16-ին Ադրբեջանի կողմից ձեռնարկված հարձակման արդյունքում:

Նախապատմություն

2020 թվականի արցախյան պատերազմը, նաև հայտնի որպես 44-օրյա պատերազմ, աղետալի էր մարդու իրավունքների այնպիսի խախտումների տեսանկյունից, որոնք դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել: Համակարգային բնույթ կրող չարաշահումները և թիրախավորված տարածքը զտելուն և իր բնիկ բնակչությունից զրկելուն միտված փորձերը տասնամյակներ տևած, ատելության տարածման և հայերին՝ թշնամի հանդիսացող «ուրիշին», ոչնչացնելու մասին պետական գաղափարախոսության վերից վար գործող քաղաքականության արդյունք են: Սա է այն համատեքստը, որը որպես նախապայման ծառայեց ստորև ներկայացված դաժան բռնությունների իրականացման համար: Այն, ինչ տեղի ունեցավ Արցախում 2020 թվականի վերջում, նախապատրաստվում էր երկար տարիներ:

Սա բավականին բարդ հակամարտություն է: Այն արմատավորված է շահագործող և անփույթ կայսերական քաղաքականության մեջ, որտեղ տեղաբնիկների շահերն ու ձայնը անտեսվել են: Տարածքային բաժանումների վերաբերյալ ԽՍՀՄ կառավարության կամայական որոշումները և խորհրդային ազգություններին վերաբերող քաղաքականությունները դրել են այս վեճի հիմքը: Պատմականորեն հայկական տարածքը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) կարգավիճակով դարձավ Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետության (ԱԽՍՀ) մաս: Ադրբեջանական ինքնությունը, որպես տիտղոսակիր ազգի ինքնություն, մեծ կշիռ ստացավ, մինչդեռ հայերը զրկվեցին իրենց մշակութային և քաղաքական իրավունքներից: ԼՂԻՄ-ում հայերի նկատմամբ խտրականությունը համակարգային էր և համատարած, ինչը հանգեցրեց տնտեսական և մշակութային օտարման: [3]

Նման պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայկական մեծամասնությունը, ի դեմս Միխայիլ Գորբաչովի «պերեստրոյկա» և «գլասնոստ» քաղաքականությունների, տեսավ իր ձայնը լսելի դարձնելու և ինքնորոշում պահանջելու հնարավորություն: Նրանց պահանջների արձագանքը եղավ Սումգայիթում, Կիրովաբադում (Գյանջա) և Բաքվում [4]հայերի նկատմամբ բռնությունների և ջարդերի տեսքով: Շատ չանցած՝ լարվածությունը հայերի և ադրբեջանցիների միջև մեծացավ՝ հանգեցնելով լայնածավալ ռազմական հակամարտության, որը տևեց մինչև 1994 թվականի մայիսը: Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի և աշխարհասփյուռ հայության համար դարձավ գոյության պայքար՝ ամրացնելով այն համոզումը, որ ինքնորոշումն այդ գոյապայքարի միակ երաշխիքն էր:[5] Ադրբեջանական կողմն անընդունելի համարեց Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ հակամարտող կողմերին թողնելով պարագծորեն հակառակ դիրքերում:[6] Բաքուն

3 Ohannes Geukjian, Ethnicity, Nationalism and Conflict in the South Caucasus: Nagorno-Karabakh and the Legacy of Soviet Nationalities Policy, 1st edition (London New York: Routledge, 2016).

4 Vicken Cheterian, “Little Wars and a Great Game: Local Conflicts and International Competition in the Caucasus” (Berne: Swisspeace Foundation, July 2001), https://www.files.ethz.ch/isn/114725/wp32.pdf.

5 Christoph Zurcher, The Post-Soviet Wars: Rebellion, Ethnic Conflict, and Nationhood in the Caucasus (New York: NYU Press, 2009).

6 Laurence Broers, Armenia and Azerbaijan: Anatomy of a Rivalry, 1st edition (Edinburgh, UK: Edinburgh University Press, 2019).

անտեսեց Արցախի հայերի մտահոգություններն ու դժգոհությունները՝ հակամարտությունը դիտարկելով բացառապես պատմական ռեվիզիոնիզմի համատեքստում արտահայտված տարածքային սակրալիզացիայի շրջանակներում: Արդյունքում խաղաղ լուծման շուրջ բանակցելը դարձավ լուրջ մարտահրավեր: ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ ձգձգվող կարգավորման գործընթացը երկար տարիներ չկարողացավ որևէ շոշափելի հաջողություն գրանցել: Հիմնական սկզբունքներից զատ, որոնց վրա պետք է հիմնվեր կարգավորման գործընթացը, բանակցող կողմերը չկարողացան համաձայնության գալ:[7]

Ադրբեջանական կառավարությունը որոշեց որդեգրել առավելապաշտական մոտեցում՝ անտեսելով արցախահայության մարդու իրավունքները, տարրական կարիքներն ու հիմնավոր վախերը, որոնք ընկած էին նրանց՝ հանուն ինքնորոշման պայքարի հիմքում:[8] Վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումները, որոնք չափազանց կարևոր են կարգավորման գործընթացում առաջընթաց գրանցելու համար, խաթարվում էին Բաքվի ռազմատենչ վերաբերմունքի արդյունքում: Թեպետ սպառնալիքները կամ ուժի կիրառումը քննադատության են արժանացել կարգավորման գործընթացում ներգրավվածների կողմից, Ադրբեջանը չվարանեց դրանք կիրառելուց:[9] Այն չէր բացառում իր նպատակներին բռնության միջոցով հասնելու հնարավորությունը, եթե մյուս կողմը չհամաձայներ միակողմանի զիջումներին:

Այս մոտեցումն ավելի տեսանելի դարձավ 2011 թվականի հունիսին ռուսական կողմի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների կազանյան հանդիպման ժամանակ: Կար բեկման հեռանկար, սակայն Բաքուն սկսեց ներկայացնել լրացուցիչ պահանջներ՝ գործընթացը տանելով փակուղու:[10] Սրան հաջորդեցին ադրբեջանական կողմի կտրուկ ռազմական կուտակումներն ու շփման գծի երկայնքով հաճախակի գրանցվող ընդհարումները:[11] Աճող լարվածությունը հանգեցրեց 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմին: Այստեղ նույնպես ադրբեջանական կողմը փորձեց հարկադրանքի միջոցով հասնել իր առավելապաշտական նպատակներին՝ արհամարհելով կարգավորման գործընթացի հիմնական սկզբունքներից մեկը՝ ուժի չկիրառման սկզբունքը:[12] Քառօրյա պատերազմին հետևեցին նոր սպառնալիքներ՝ ակնհայտ դարձնելով Բաքվի կողմից մեկ այլ հարձակման հնարավորությունն այն դեպքում, եթե մյուս կողմը չընկրկեր ճնշման տակ:[13]

Այս զարգացումները ցույց են տալիս, որ պաշտոնական Բաքուն հետաքրքրված չէր խաղաղ համագոյակցությամբ և հակամարտությունը գլխավորապես մեկնաբանում էր թշնամուն պարտության մատնելու համատեքստում: Հայերին որպես թշնամի «ուրիշներ» դիտարկելը

7 “Digging out of Deadlock in Nagorno-Karabakh,” Europe and Central Asia (International Crisis Group, December 20, 2019), https://d2071andvip0wj.cloudfront.net/255-digging-out-of-deadlock.pdf.

8 Ohannes Geukjian, Negotiating Armenian-Azerbaijani Peace: Opportunities, Obstacles, Prospects, 1st edition (Ashgate, 2014).

9 “Collection of War Threat Statements by the President Ilham Aliyev and Other Azerbaijani Officials” (European Friends of Armenia, July 31, 2018), https://eufoa.org/wpcontent/uploads/2018/04/AliyevWarThreats_update_31.07.2018.pdf.

10 Richard Solash, “Kazan Summit: Time For Breakthrough In Nagorno-Karabakh Peace Process?,” Radio Free Europe/Radio Liberty, June 23, 2011, sec. Features, https://www.rferl.org/a/nagorno-karabakh_kazan_summit_breakthrough_in_peace_process/24244645.html

11 “Nagorno Karabakhs Gathering War Clouds,” Europe and Central Asia (International Crisis Group, June 1, 2017).

12 Broers, Armenia and Azerbaijan.

13 “Collection of War Threat Statements by the President Ilham Aliyev and Other Azerbaijani Officials.”

և նրանց ոչնչացնելու շուրջ գաղափարախոսության կառուցումը դարձել էր երկար ձգվող հակամարտության անբաժանելի գործոն, ինչը բորբոքում էր վերոնշյալ ռազմատենչ վերաբերմունքը, ինչն էլ իր հերթին վերարտադրում էր թշնամանքի զգացողությունը: Ադրբեջանի բռնապետական ռեժիմը սրում էր ազգայնամոլական տրամադրությունները՝ ապամարդկայնացնելով մի ամբողջ էթնիկ խումբ և ժողովրդին համախմբելով թշնամու դեմ պայքարելու առաքելության շուրջ՝ այդպիսով նրանց ուշադրությունը շեղելով ներքին խնդիրներից:

Ռամիլ Սաֆարովի դեպքն այս առումով շատ խոսուն է: Սաֆարովը քնած ժամանակ սպանեց հայկական բանակի լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին Բուդապեշտում, որտեղ նրանք մասնակցում էին ՆԱՏՕ-ի ուսումնական դասընթացներին: Երբ հանցագործը հունգարական կառավարության կողմից արտահանձնվեց Ադրբեջանին, այնտեղ նրան դիմավորեցին որպես հերոսի:[14] Այս քայլով ալիևյան ռեժիմը պարզապես տոնեց հայ մարդու սպանությունը:

ՄԱԿ-ի ռասայական խտրականության վերացման կոմիտեն (CERD) դատապարտեց այս քայլը՝ նշելով, որ «հայի սպանության համար դատապարտված քաղաքացու ընդունումը անդամ երկրի կողմից որպես ազգային հերոսի, փոխանցվելուց հետո նրան ներում շնորհելն ու ազատ արձակելը անդամ պետության կողմից հանդիսանում է ռասայական ատելության և ատելության հիմքով հանցագործությունների արդարացում և զոհերին փոխհատուցում տրամադրելու մերժում»:[15] Այս դեպքին, ի թիվս այլ հարցերի, անդրադարձել է նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ) Ադրբեջանի՝ մարդու իրավունքների հարցերով ստանձնած պարտավորությունների 2016 թվականի գնահատման շրջանակում:[16] Նույն դեպքի առնչությամբ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) նշեց, որ Ալիևի ռեժիմը գործել էր «առանց հաշվի առնելու ռասիստական հանցագործություններ գործող անձանց համար անպատժելիության մթնոլորտ ստեղծելու վտանգը»:[17] Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) քննվող գործի շրջանակում դատարանը գտավ, որ մարդասպանին շնորհված ներումը և ցուցաբերված արտոնյալ վերաբերմունքը ունեցել են «ռասայական շարժառիթներ» և ստեղծել են անպատժելիություն: Դատարանը նաև դատապարտել է «մի շարք ադրբեջանցի պաշտոնյաների կողմից Ռ.Ս.-ին, գործած արարքն ու նրան շնորհված ներումը փառաբանող» բազմաթիվ հայտարարությունները, որոնք «հատուկ աջակցություն են հայտնել այն հանգամանքին, որ Ռ.Ս.-ի հանցագործությունները ուղղված են եղել հայ զինվորների դեմ, շնորհավորել են նրան իր գործողությունների համար և նրան անվանել հայրենասեր, օրինակելի մարդ և հերոս»:[18]

14 “Azeri Killer Ramil Safarov: Concern over Armenian Anger,” BBC News, September 3, 2012, sec. Europe, https://www.bbc.com/news/world-europe-19463968.

15 «Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի՝ 7-9-րդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ» (ՄԱԿ-ի ռասայական խտրականության վերացման կոմիտե, հունիսի 10, 2016թ.), 3, https://bit.ly/39iPnBZ.

16 «Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի՝ չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ» (ՄԱԿ-ի ռասայական խտրականության վերացման կոմիտե, նոյեմբերի 16, 2016թ.), https://bit.ly/3hBDrk1

17 «ՌԱԵՀ զեկույց Ադրբեջանի մասին (հինգերորդ մոնիտորինգի շրջափուլ)» (Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, հունիսի 7, 2016թ.), 9, https://rm.coe.int/fourth-report-on-azerbaijan/16808b5581

18 Մակուչյանն ու Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի, դիմում no. 17247/13 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, մայիսի 26, 2020թ.):

Սաֆարովի դեպքը ներկայացնում է Ադրբեջանում առկա հայատյացության համընդհանուր բնույթը: Այն առկա է բազմաթիվ ոլորտներում՝ սկսած դպրոցական ուսումնական ծրագրերից, մինչև բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներ:[19] Ադրբեջանական պատմության դասագրքերը հայերին ներկայացնում են որպես «ֆաշիստներ», «ահաբեկիչներ» և «բարբարոսներ»:[20] Հակահայկական հռետորաբանությունն առկա է եղել բոլոր քաղաքական գործիչների ելույթներում և մամուլում:[21] Պետության գլուխն ինքն է խրախուսել ատելությունը հայերի նկատմամբ: Օրինակ, 2012 թվականին Իլհամ Ալիևն ասել է՝ «մեր գլխավոր թշնամիները աշխարհի հայերն են և նրանց վերահսկողության տակ գտնվող կեղծավոր և կոռումպացված քաղաքական գործիչները»:[22] 2015 թվականին Ալիևը թվիթերում արել է հետևյալ գրառումը՝ «Հայաստանը նույնիսկ գաղութ չէ, այն նույնիսկ ծառա լինելու արժանի չէ»:[23] 2018 թվականին Ադրբեջանի նախագահը հայտարարել է՝ «Հայաստանը անհաջողակ պետություն է...նրանց հերոսները, նրանց գեներալները գողեր են, նրանց բանակը գողերի բանակ է...մեր միջև եղած տարբերությունը երկնքի ու երկրի տարբերություն է...»:[24]

Ռասիզմի այս համակարգային բնույթը տեսանելի է նաև այն բանից, թե ինչպես են լռեցվել հակահայկական տրամադրություններին ընդդիմացող հայտնի այլախոհ ձայները: Վառ օրինակ է Աքրամ Այլիսլիի դեպքը: Ադրբեջանցի հայտնի գրող Այլիսլին իր «Քարակերտ երազներ» վիպակում նկարագրում էր հայերի նկատմամբ կատարված վայրագությունները: Ալիևի ռեժիմը դրան արձագանքեց ոտնձգություններով և կալանքով:[25] Նման վերաբերմունք դրսևորվեց նաև այլ հանրային գործիչների նկատմամբ:[26] Թշնամուն ատելու պաշտոնական գծից որևէ շեղում չէր հանդուրժվում:

Նման միջավայրում հայերին բացառապես թշնամանքի պրիզմայով դիտարկելը Ադրբեջանում սովորական էր դարձել: Հայերն այն արմատական «ուրիշն» էին, որոնց պետք է մեղադրել երկրի առջև ծառացած բազմաթիվ խնդիրների համար: Հետևաբար, զարմանալի չէ, որ 2020 թվականի հուլիսին հազարավոր մարդիկ դուրս եկան Բաքվի փողոցներ՝ «թշնամու» դեմ պատերազմի պահանջով:[27] Այդ իրադարձությունը հստակ ցուցադրումն էր այն

19 «Զեկույց Ադրբեջանում այլատյացության մասին» (Երևան-Ստեփանակերտ, 28 փետրվարի, 2021թ.), https://transparency.am/files/publications/1614606896-0-994587.pdf?v=4.

20 "Armenian Image in History Textbooks of Azerbaijan," Caucasus Edition, April 1, 2012, https://caucasusedition.net/armenian-image-in-history-textbooks-of-azerbaijan/.

21 «Երկրորդ զեկույց Ադրբեջանի մասին» (Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, 2007թ. մայիսի 24), https://rm.coe.int/second-report-on-azerbaijan/16808b557b.

22 Իլհամ Ալիևի եզրափակիչ ելույթը «Շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման 2009-2013 թվականների պետական ծրագրի» երրորդ տարվա արդյունքներին նվիրված համաժողովում» (President.az, փետրվարի 28, 2012թ.), https://en.president.az/articles/4423.

23 Իլհամ Ալիևի թվիթերյան գրառում. «Հայաստանը նույնիսկ գաղութ չէ, այն նույնիսկ արժանի չէ ծառա լինելու», @presidentaz, 29 հունվարի, 2015թ., https://twitter.com/presidentaz/status/560718307515318272?lang=en:

24 "Collection of War Threat Statements by the President Ilham Aliyev and Other Azerbaijani Officials," 1:

25 "Azeri Writer Akram Aylisli Hounded for 'pro-Armenian' Book," BBC News, February 15, 2013, sec. Europe, https://www.bbc.com/news/world-europe-21459091; Alison Flood, "Azerbaijan Detains Writer Akram Aylisli at Airport on Way to Festival," The Guardian, March 30, 2016, sec. Books, https://www.theguardian.com/books/2016/mar/30/azerbaijan-akram-aylisli-airport-incroci-di-civilta-festival.

26 "Azerbaijan's Leyla Yunus, Human Rights Defender, Held," BBC News, April 29, 2014, sec. Europe, https://www.bbc.com/news/world-europe-27202134.

27 "Azerbaijan Protesters Demand War after Armenia Clashes," BBC News, July 15, 2020, sec. Europe, https://www.bbc.com/news/world-europe-53415693.

բանի, թե ինչ կարող է ստեղծել տասնամյակների էթնիկ ատելության քաղաքականությունը: Հայերին որպես թշնամի տեսնելն Ադրբեջանում դարձել է աշխարհահայացքի հիմքում ընկած հատկանիշ՝ ի չիք դարձնելով հակամարտության լուծման բոլոր հեռանկարները: Արժե նշել, որ 44-օրյա պատերազմը բռնկվեց հենց այս բողոքի ցույցերից ոչ շատ անցած:

Ընդհանուր առմամբ կարելի է դիտարկել երկու զուգահեռ և փոխկապակցված գործընթացներ, որոնք հանգեցրել են 2020 թվականին Ադրբեջանի հարձակմանը Արցախի վրա: Նախ բանակցային գործընթացը գտնվում էր փակուղում, քանի որ Բաքուն պահանջում էր էական միակողմանի զիջումներ: Երկրորդ՝ հայատյացության շուրջ գաղափարախոսության կառուցումը խաթարեց հաշտեցման և խաղաղ համագոյակցության փորձերը: Փոխարենը այս քաղաքականությունը հող նախապատրաստեց այսպես կոչված «ռազմական լուծման» համար: Սրանք ալիևյան ռեժիմի կողմից կանխամտածված միջոցներ էին՝ ուղղված ադրբեջանական հասարակության աչքին պատերազմ սկսելու գաղափարը ընդունելի դարձնելուն: Արցախում ապրող մարդկանց իրավունքները ոչ մի արժեք չունեին Ադրբեջանի կառավարության կողմից տարածված ազգայնամոլական պատմություններում: Ուստի հակառակորդին ցանկացած կերպ ոչնչացնելը համարվում էր ընդունելի:

Հենց այս ահռելի ատելության մթնոլորտում էր, որ հնարավոր դարձան սույն զեկույցում փաստագրված խախտումները: Ադրբեջանի բռնապետական ռեժիմը պատերազմը փառաբանում էր որպես թշնամուն նվաստացնելու և ոչնչացնելու գործողություն: 2020 թվականի հոկտեմբերին Ալիևը հայտարարեց հետևյալը.

> «Մենք շարունակելու ենք վտարել այս [հայ] ստախոսներին: Նրանք հիմա տեսնում են՝ ով ով է: Նրանք տեսնում են, որ մենք իրենց դաս էինք տալիս, որը երբեք չեն մոռանա... Նրանք ո՛չ խիղճ ունեն, ո՛չ բարոյականություն: Նրանք նույնիսկ ուղեղ չունեն»:[28]

Այս վայրագությունները պարզապես տարածքներ զավթելու նպատակին հասնելու միջոց չէին: Թշնամու նկատմամբ բռնությունն ինքնանպատակ էր, որի միջոցով իրականացվում էր հայատյացության պետական գաղափարախոսությունը: Ալիևի ռեժիմը այս մոտեցումը չի փոխել նույնիսկ հակամարտությունից հետո: Ադրբեջանական պատմություններում հայերը շարունակում են մնալ գլխավոր թշնամին, որի հետևանքով դժվար է պատկերացնել հայկական համայնքների ապագան Բաքվի իշխանության տակ:

Գոյատևումը մնում է Արցախի հայերի առաջնային մտահոգությունը: Նրանց ձայնը լսելի չէ, և նրանց իրավունքները համակարգային կերպով ոտնահարվում են: Այս զարգացումները կանխելու առումով միջազգային վերահսկողությունը թույլ է: Ալիևի ռեժիմի մոտ անպատժելիության զգացում է ձևավորվել, և քանի որ պատերազմը չհանգեցրեց որևէ հակազդեցության, այն նպատակադրված է շարունակելու իր վայրագ պահվածքը՝ անվերջ շարունակելով այս փաստաթղթում ներկայացված չարաշահումները:

28 presidentaz, «Իլհամ Ալիևը դիմեց ժողովրդին», 2020 թվականի հոկտեմբերի 17, https://www.youtube.com/watch?v=PVdWkPPlle4.

Իրավական շրջանակ

Այս գլխում ներկայացվում է սույն զեկույցի շրջանակում ուսումնասիրված իրադարձությունների իրավական համատեքստը: Քանի որ վեճը վերաբերում է Արցախի ժողովրդի՝ ինքնորոշման մասին պնդմանը, էական նշանակություն ունի ինքնորոշման իրավական կողմերի ներկայացումը: Ինչպես հիմնավորվում է ստորև, արցախյան հակամարտությունն ունի միջազգային բնույթ, որի համար կիրառելի են Ժնևի կոնվենցիաները և ՄՄԻ-ի նորմերը: Բացի այդ, չնայած այն բանին, որ արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը շեղվել է իրավական պարտավորությունների կատարումից, այս գլուխն ապացուցում է, որ մարդու հիմնարար իրավունքները չեն ենթադրում նման շեղում, և հետևաբար՝ Ադրբեջանը պետք է պատասխանատվություն կրի սույն զեկույցում նշված բոլոր խախտումների համար:

Ինքնորոշման հիմքերը

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վաթսունյոթերորդ նստաշրջանի ընթացքում Ալֆրեդ-Մորիս դե Զայասը ներկայացրեց իր ազդեցիկ զեկույցը ժողովրդավարական և արդարացի միջազգային հասարակարգի խթանման վերաբերյալ: Իր զեկույցում նա նշում է.

> «Կանոնադրության համաձայն՝ պետությունների միավորումն ինքնիշխան ակտ է և ինքնորոշման արտահայտում, որը համահունչ է պետությունների ինքնիշխան հավասարությանը: Դրան չեն կարող խանգարել երրորդ պետությունների աշխարհաքաղաքական շահերը: Հետևաբար՝ ազգերը, որոնք առանձնացվել են գաղութատիրական կամ կամայական այլ սահմանագծման հետևանքով, իրավունք ունեն պահանջել ճշգրտում և վերամիավորում:
>
> Անջատողականությունը նույնպես ի հայտ է եկել ապագաղութացման համատեքստում՝ ի պատասխան ժողովրդակենտրոն այն ընկալման, որ հիմնարար իրավունքները և ազատությունները վերականգնելու միակ միջոցը լիարժեք անկախությունն է: Ինքնորոշման այս տարրի օրինակարգությունը բխում է բռնակալության դեմ ապստամբելու վերջին միջոց հանդիսացող հիմնարար իրավունքից, որին ուղղակի հղում է կատարված մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում:
>
> Հավասարության և խտրականության արգելքի երաշխիքներն անհրաժեշտ են պետությունների ներքին կայունության համար, սակայն խտրականության արգելքն ինքնին բավարար չի կարող լինել տարբեր ժողովուրդների համատեղ կյանքը ապահովելու համար, եթե նրանք չեն ցանկանում ապրել միասին: Տարածքային ամբողջականության սկզբունքը բավարար հիմնավորում չէ ներքին հակամարտության իրավիճակների հավերժ շարունակման համար, ինչը կարող է վերաճել քաղաքացիական պատերազմի և վտանգել տարածաշրջանային և միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:
>
> Երբ բազմազգ և/կամ բազմադավան պետական միավորումը կազմալուծվում է, և ձևավորված նոր պետական միավորումները նույնպես բազմազգ կամ բազմադավան են և շարունակում են տուժել հին թշնամանքի և բռնության արդյունքում, ապա կարող է կիրառվել անջատման նույն սկզբունքը: Եթե ամբողջի մի մասը հնարավոր է անջատել ամբողջից, ապա մասի մի մասը նույնպես հնարավոր է անջատել ինքնորոշման և ինքնուրույնացման իրավունքի տրամաբանության նույն կանոններով: Հիմնական նպատակն է՝ հասնել աշխարհակարգի այնպիսի իրավիճակի, որի պայմաններում պետություններն իրենց տարածքում հարգում են մարդու իրավունքները և ապահովում իրավունքի գերակայությունը, ինչպես նաև խաղաղ հարաբերություններ են ունենում այլ պետությունների հետ:

Տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավունքում այլևս չունի ավելի բարձր կարգավիճակ, քան ինքնորոշման իրավունքը, որը խարսխված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ և մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերում: Հարկ է հավասարակշռել իրավունքները և շահերը՝ մշտապես ձգտելով ապահովել մարդու իրավունքների ավելի պատշաճ պահպանում և ժողովրդավարական միջավայրի ընդլայնում»:[29]

Ինչպես ընդգծվում է նախորդ գլխում, Արցախի ինքնորոշման պահանջն այսօր ավելի հիմնավոր է, քան երբևէ: Ինքնորոշումը մարդու հիմնարար իրավունքներից է, որը երաշխավորված է բոլոր անհատների[30] և ժողովուրդների համար, ամրագրված է օրենքով,[31] ճանաչված է որպես *«jus cogens»*[32] և *«erga omnes»*[33], հիմնարար նշանակություն ունի բոլոր մյուս իրավունքների պաշտպանության և առաջխաղացման համար,[34] համընդհանուր հիմք է ծառայում աշխարհում խաղաղության և անվտանգության համար:[35] «Կայուն ներքին և արտաքին խաղաղությունը պահանջում է ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործում, որը ժողովրդավարության դրսևորում է. կառավարում՝ կառավարվողների համաձայնությամբ»:[36]

Այլ կերպ ասած՝ անհատները մարդու իրավունքների միջոցով անհատապես և ժողովրդավարության միջոցով հավաքականորեն իրագործում են ազատության և ընտրության իրավունքը, ինչը ենթադրում է «ժողովուրդ» կոչվող բնական համայնք, որն իր հերթին քաղաքականապես դրսևորվում է որպես ազգային պետություն: Ինքնորոշման ժխտումը մարդու իրավունքների ժխտում է,[37] ինքնորոշման ժխտումը բռնություն է[38] և հետևաբար սպառնալիք է միջազգային խաղաղության և անվտանգության համար, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Բացի այդ, ինքնորոշումը մշտապես կիրառելի է որպես *«jus cogens»* սկզբունք, անկախ ժամանակից կամ պատմությունից, քանի որ իր բնույթով այն հիմնարար իրավունք է, և կարևոր չէ՝ երբ է այն բարձրաձայնվել և արձանագրվել, և «...ինչպես կյանքի, ազատության և ինքնության իրավունքները, այն չափազանց կարևոր է»:[39]

29 Ալֆրեդ Մ. դե Զայաս, «Անկախ փորձագետի միջանկյալ զեկույցը ժողովրդավարական և արդարացի միջազգային կարգի խթանման վերաբերյալ» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, օգոստոսի 7, 2014թ.), պարբ. 34, 52, 70, 76, 82, https://undocs.org/pdf?symbol=en/A/69/272

30 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 30:

31 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա, 1966 թվականի դեկտեմբերի 16) ընդհանուր 1-ին հոդված, https://www.refworld.org/docid/3ae6b3aa0.html, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա, 1966 թվականի դեկտեմբերի 16), https://www.refworld.org/docid/3ae6b36c0.html:

32 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 15, 30, 66:

33 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 5, 26, 30, 31:

34 Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 12, պարբ. 1 և 5:

35 ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդ. 1(2) և 55 (ՄԱԿ, 1945 թվականի հոկտեմբերի 24), https://www.refworld.org/docid/3ae6b3930.html:

36 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 77:

37 Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանս, «Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 12 հուլիսի, 1993 թ.), պարբ. 1, 2, https://www.ohchr.org/EN/Issues/Education/Training/Compilation/Pages/ViennaDeclarationandProgrammeofAction(1993).aspx:

38 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 78:

39 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 66:

Ի տարբերություն վերոնշյալի, տարածքային ամբողջականությունը քաղաքական պահանջ է պետությունների միջև. այն հիմնված չէ մարդու իրավունքների վրա, չի հանդիսանում ժողովրդավարության իրականացում, *«jus cogens»*-ի, ինքնորոշման *«erga omnes»* սկզբունքի արտահայտում: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության և քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ICCPR/ՔՔԻՄԴ) ընդհանուր 1-ին հոդվածի և տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի՝ յուրաքանչյուր պետություն քաղաքական միավոր է, որն ինքնին ինքնորոշման արտահայտում է: Պետության *«raison d'être»*-ը ինքնորոշման արտահայտումն է: Հետևաբար՝ որևէ պետություն չի կարող հավակնել մի տարածքի, որտեղ ապրում է ինքնորոշման իրավունքը տվյալ պետությանը հակադիր կերպով իրագործող ժողովուրդ, քանի որ դա կնշանակի, որ խնդրո առարկա պետությունն ինքնին ոչ թե ինքնորոշման, այլ ուժի արտահայտում է: Ուստի՝ տվյալ տարածքի բնակիչների ինքնորոշման արտահայտմանը հակասող տարածքային պահանջը տրամաբանական սխալ է ՄԱԿ-ի կանոնադրության և մարդու իրավունքների տեսանկյունից:

Հաշվի առնելով այս սկզբունքը՝ Ալիևի ռեժիմի կողմից տարածքային ամբողջականության պնդումը համազոր չէ Արցախի հայերի ինքնորոշման սկզբունքի իրագործմանը, քանի որ ՄԱԿ-ի՝ խաղաղության և անվտանգության գերակա նպատակին հնարավոր է հասնել մարդու իրավունքների և ինքնորոշման միջոցով, որոնց ժխտումն էլ հակամարտության պատճառն է: Տարածքային ամբողջականությունը պետք է համադրվի ինքնորոշման հետ, երբ կազմալուծումը կարող է հանգեցնել ավելի մեծ հակամարտության և արդար է միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ընդհանուր առմամբ պաշտպանում է մարդու իրավունքները և մասնավորապես հարգում է ինքնորոշման իրավունքը.

> «Ըստ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն իրացվող պետությունների միջև համագործակցության և բարեկամական հարաբերությունների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի՝ վերոնշյալը (այն, որ ինքնորոշման մերժումը իրավունքների խախտում է) չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի գործողությունների լիազորում կամ խրախուսում, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն խաթարում կամ խարխլում են այն ինքնիշխան և անկախ պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնականությունը, որը պահպանում է ազգերի հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքը և ունի կառավարություն, որը ներկայացնում է տվյալ պետության տարածքում բնակվող ողջ ժողովրդի շահերը՝ առանց որևէ տարբերակման»:[40]

Այս առումով փաստերը հետևյալն են. Խորհրդային Միության իշխանության տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ն իր տարածքում բնակվող հայերի նկատմամբ իրականացրել է ապարտեիդի նմանվող քաղաքականություն՝ առաջացնելով դեպոպուլյացիայի ճնշումներ, որոնց ի պատասխան արցախահայերը հնչեցրել են անկախացման և Հայաստանի հետ վերամիավորման պարբերական կոչեր,[41] իսկ «պերեստրոյկայի» տարիներին՝ 1988 թվակա-նին, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը որոշում է ընդունել ԼՂԻՄ-ը հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին:[42] Իրավունքների իրագործմանն

40 Մարդու իրավունքների հարցերով համաշխարհային համաժողով, «Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր», պարբ. 1, 2, ընդգծումը մերն է:

41 Christopher J. Walker, "The Armenian Presence in Mountainous Karabakh," in Transcaucasian Boundaries, ed. John Wright, Richard Schofield, and Suzanne Goldenberg, 1st ed., The SOAS/GRC Geopolitics Series (Routledge, 1996), 102–103.

42 Walker, 104.

ուղղված իրավական այս քայլերի պատասխանը եղավ Սումգայիթում, Կիրովաբադում և Բաքվում ապրող հայերի՝ ռասայական վրեժխնդրությամբ լցված ջարդերն ադրբեջանցիների կողմից:[43] Ի վերջո, հանրաքվեի արդյունքներով և Խորհրդային Միության փլուզումից հետո ԼՂԻՄ-ի ժողովուրդը 1991 թվականի սեպտեմբերի 2-ին իրենց հռչակեց անկախ: Ադրբեջանական ԽՍՀ-ի՝ Արցախի դեմ պատերազմ սանձազերծած իրավահաջորդի, վարքագիծը երբեք չի համապատասխանել «ազգերի հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքին», այլ եղել է հակառակ մոտեցման դրսևորում: Սա նշանակում է, որ Ալիևի ռեժիմը չունի ներկայիս Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը փաստարկելու հիմքեր, ինչն այսօր առավել ճշմարիտ է՝ հաշվի առնելով վերջին պատերազմի ընթացքում Ադրբեջանի գործած պատերազմական հանցագործությունները և մարդու իրավունքների խախտումները, որոնք ներկայացված են սույն զեկույցում:

Դեռ ավելին՝ ինքնորոշմանը հակասող տարածքային սահմանները երբեք չեն կարող լինել պետության իրավացիության արտահայտությունը: Այս պատճառով.

> «Երկարատև պատմական կապերը որևէ տարածքի կամ տարածաշրջանի հետ, կրոնական կապերը սրբավայրերի հետ, նախորդող սերունդների թողած ժառանգության գիտակցումը, ինչպես նաև որոշակի տարածքի հետ սուբյեկտիվ նույնացումը պետք է արժանան պատշաճ ուշադրության: Համաձայնություններն այն անձանց հետ, որոնք իրավաբանորեն լիազորված չեն ներկայացնելու շահագրգիռ բնակչությանը, ինչպես նաև *«a fortiori»* համաձայնությունները կամակատար ներկայացուցիչների հետ, վավեր չեն»:[44]

Ելնելով այս տրամաբանությունից և հիմնվելով բնակչության և վերջինիս ունեցած պատմական կապերի վրա՝ Արցախը հայկական է: Արցախը Հայաստանից բաժանող ցարական, ապա ստալինյան սահմանները, որոնք, ինչպես վերը նկարագրվեց, հնարավոր դարձան հայերի՝ 1919 և 1920 թվականների ջարդերի և խորհրդային ժամանակաշրջանում կամակատար ներկայացուցիչների միջոցով, ինչն այսօր օգտագործվում է Ալիևի ռեժիմի կողմից Արցախը պահանջելու համար, լեգիտիմ չեն ինքնորոշման իրավունքի տեսանկյունից:

Ավելին՝ ամենևին էական չէ, որ իր ինքնորոշման իրավունքի արտահայտման պահին Արցախն ունեցել է ինքնավար մարզի կարգավիճակ ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում:

> «Երբ բազմազգ և/կամ բազմադավան պետական միավորումը կազմալուծվում է, և ձևավորված նոր պետական միավորումները նույնպես բազմազգ կամ բազմադավան են և շարունակում են տուժել հին թշնամանքի և բռնության արդյունքում, ապա կարող է կիրառվել անջատման նույն սկզբունքը: Եթե մի մասը հնարավոր է անջատել ամբողջից, ապա մասի որոշակի հատվածը նույնպես հնարավոր է անջատել ինքնորոշման և ինքնուրույնացման իրավունքի տրամաբանության նույն կանոններով: Հիմնական նպատակն է՝ հասնել աշխարհակարգի այնպիսի իրավիճակի, որի պայմաններում պետություններն իրենց տարածքում հարգում են մարդու իրավունքները և ապահովում իրավունքի գերակայությունը, ինչպես նաև խաղաղ հարաբերություններ են ունենում այլ պետությունների հետ»:[45]

Խորհրդային Միությունը փլուզվեց, և խորհրդային հանրապետությունները դարձան նոր պետություններ: Սակայն նոր սահմանները եղել են ոչ թե ինքնորոշման, այլ

43 V. Cheterian, «Little Wars and a Great Game», 5–17.

44 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 73:

45 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 76:

կայսերապաշտական «բաժանի՛ր և տիրի՛ր» մոտեցման դրսևորումներ:[46] Որպես ինքնավար մարզ՝ Արցախը ընտրել է ինքնորոշումը՝ որպես Հայաստանի հետ վերամիավորման տանող քայլ:

Քանի որ Ալիևի ռեժիմը պնդում է, որ հանդես է գալիս Ադրբեջանի անունից, նա իրավաբանորեն կորցնում է երրորդ երկրների իմպերիալիստական շահերի նպատակով ձևավորված սահմանների հիման վրա տարածքային պահանջ ներկայացնելու իրավունքը, քանի որ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ բոլոր պետությունների *«erga omnes»* պարտավորությունն է աջակցել ինքնորոշմանը և խրախուսել այն: Ինչպես վերը նշվեց, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ բոլոր պետություններն ինքնորոշման քաղաքական արտահայտությունն են, ինչը չի կարող այդպիսին համարվել, եթե պետության տարածքում բնակվող որևէ ժողովուրդ արտահայտում է տվյալ պետությանը հակադրվող ինքնորոշում: Բացի այդ, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 56-րդ հոդվածի՝ բոլոր պետությունները պարտավորվում են 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար ձեռնարկել համատեղ և ինքնուրույն գործողություններ, իսկ 55-րդ հոդվածը սահմանում է, որ ՄԱԿ-ը, ի թիվս այլ նպատակների, ձգտելու է խաղաղության և կայունության՝ հիմնված հավասար իրավունքների և ինքնորոշման վրա՝ նպաստելով մարդու իրավունքների համընդհանուր հարգմանը և պահպանմանը (ինքնորոշումը մարդու այդպիսի իրավունքներից մեկն է): Ավելին, ինքնորոշմանը վերաբերող իր որոշումներում այլ պետությունների *«erga omnes»* պարտավորությունը մեկնաբանելիս Արդարադատության միջազգային դատարանը նկատել է հետևյալը.

> «Պետությունների միավորումն ինքնիշխան ակտ է և ինքնորոշման արտահայտում, որը համահունչ է պետությունների ինքնիշխան հավասարությանը, ինչը նախատեսված է Կանոնադրությամբ: Դրան չեն կարող խանգարել երրորդ պետությունների աշխարհաքաղաքական շահերը: Հետևաբար՝ ազգերը, որոնք առանձնացվել են գաղութատիրական կամ կամայական այլ սահմանագծման հետևանքով, իրավունք ունեն պահանջելու ճշմարտության վերականգնում և վերամիավորում: Նույն օրինակով արհեստականորեն առանձնացված պետություններն ունեն վերամիավորման իրավունք...»:[47]

Այս առումով արդեն նշվել է, որ ցարական ռուսական իմպերիալիզմի կողմից Արցախի՝ Հայաստանից վարչական անջատմանը հետևեց ստալինյան «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը: Ուստի, արցախահայության ինքնորոշումը այդ իրավունքի համոզիչ դրսևորում է, որն իր բովանդակությամբ հակադրելի է իմպերիալիզմին և ռասիզմին:

Հակամարտության բնութագիրը, կիրառելի կանոնները և պարտավորությունների կատարումից շեղվելու խնդիրը

Ելնելով ինքնորոշման իրավունքի *«erga omnes»* բնույթից՝ ըստ միջազգային իրավունքի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է աջակցել արցախահայության ինքնորոշման պահանջին, ինչը արել է Խորհրդային Միության իշխանության տարիներին և վերջինիս փլուզումից հետո: Քանի որ Արցախի ինքնորոշմանն առնչվող

46 Council of Europe, Andrei Sakharov and Human Rights (Council of Europe Publishing, 2010).

47 Դե Զայաս, Միջանկյալ զեկույց, պարբ. 34:

հակամարտությանը ներգրավված են երկու պետություններ, այն բնութագրվում է որպես միջազգային հակամարտություն, որի համար կիրառելի են Ժնևի կոնվենցիաները, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերն արտացոլող կանոնները:

Որպես լրացում իրավական բոլոր նորմերի՝ Ադրբեջանի համար իրավապարտադիր են նաև ՄՄԻ և Մարդու իրավունքների միջազգային իրավունքի (ՄԻՄԻ), ինչպես նաև մարդու իրավունքների տարածաշրջանային իրավունքի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի) հետևյալ կոնվենցիոն նորմերը.

Միջազգային պայմանագիր	**Ադրբեջան**
Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ, անգլ.՝ ICCPR)	13.08.1992 (a)
Խոշտանգումների դեմ կոնվենցիա (ԽԴԿ, անգլ.՝ CAT)	16.08.1996 (a)
Ռասայական խտրականության վերացման մասին կոնվենցիա (ՌԽՎԿ, անգլ.՝ CERD)	16.08.1996 (a)
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ, անգլ.՝ ECHR)	15.04.2002
Հարկադրական տեղահանումից բոլոր անձանց պաշտպանելու մասին կոնվենցիա	06.04.2007
Ժնևի կոնվենցիաներ	01.06.1993
Վարձկանների մասին կոնվենցիա	04.12.1997
Քիմիական զենքի արգելման մասին կոնվենցիա	29.02.2000
Կենսաբանական զենքի արգելման մասին կոնվենցիա	26.02.2004
Մշակութային ժառանգության պաշտպանության մասին Հաագայի կոնվենցիա, 1954 թ.	20.09.1993
Մշակութային ժառանգության պաշտպանության մասին Հաագայի արձանագրություն, 1954 թ.	20.09.1993
Մշակութային ժառանգության պաշտպանության մասին Հաագայի երկրորդ արձանագրություն, 1999 թ.	17.04.2001
Ցեղասպանության կոնվենցիա	16.08.1996

Թեև Ադրբեջանը չի միացել Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություններին, և հետևաբար՝ դրանց նորմերն ուղղակիորեն իրավապարտադիր չեն նրա համար, սույն զեկույցում բոլոր հղումներն արվում են լրացուցիչ արձանագրությունների այն նորմերին և սահմանափակվում այն նորմերով, որոնք արտացոլում են միջազգային իրավունքը, ուրեմն և, հետևաբար, կիրառելի են նաև Ադրբեջանի համար:

Լայնորեն ընդունված է, որ զինված հակամարտությունների իրավիճակներում ՄՄԻ-ի և ՄԻՄԻ-ի համաձայնագրերը կիրառվում են միասնաբար,[48] իսկ իրավունքի այս երկու ոլորտների միջև կապն ընկալվում է որպես փոխլրացնող: Ելնելով քննարկվող կոնկրետ նորմից (օրինակ՝ կյանքի իրավունք կամ խոշտանգումից զերծ մնալու իրավունք)՝ կիրառվող առաջնային նորմը կարող է տարբերվել, պայմանավորված այն հանգամանքով, թե արդյոք այն կիրառվում է ՄՄԻ-ի կողմից, թե՝ ՄԻՄԻ-ի, թե՝ երկուսի կողմից միասին միաժամանակ: Սակայն, որոշակի խնդիրների, օրինակ՝ ռազմագերիների հարցում, մոտեցումն այն է, որ Ժնևի 3-րդ կոնվենցիան բացառիկ է, քանի որ կոնկրետ վերաբերում է հենց այդ թեմային: ՄՄԻ-ի և ՄԻՄԻ-ի համաձայնագրերի փոխլրացնող կիրառումը կարող է ենթադրել մարդու իրավունքների նորմերի կիրառում՝ մարդասիրական իրավունքի բացերը լրացնելու և երկու ռեժիմների նորմերը կիրառելու համար՝ պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու կամ այդ նորմերը, մեկը մյուսին հաշվի առնելով, մեկնաբանելու նպատակով:[49]

Հարկ է նշել, որ որոշակի դեպքերում պետությունը կարող է շրջանցել որոշ միջազգային պայմանագրեր, օրինակ, պատերազմի կամ արտակարգ իրավիճակի դեպքում կարող է շեղվել կամ հրաժարվել իր որոշ պարտավորություններից: Սակայն Թեպետ որոշ նորմերից կարելի է շեղվել, սակայն կան այնպիսիները, որոնք պետք է իրականացվեն անխաթար, օրինակ, հենց մարդու կյանքի իրավունքի պաշտպանությունը: ՔՔԻՄԴ-ը թույլ չի տալիս որևէ շեղում մարդու կյանքի իրավունքի պաշտպանության նորմից, իսկ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) թույլ է տալիս նման շեղում միայն «օրինական պատերազմական գործողությունների հետևանքով առաջ եկած մարդկային զոհերի մասով»: Իսկ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 15-րդ հոդվածը թույլ չի տալիս շեղվել 3-րդ հոդվածից (խոշտանգումների արգելք), 4-րդ հոդվածի 1-ին մասից (ստրկություն) և 7-րդ հոդվածից (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա):

ՔՔԻՄԴ-ի պարագայում Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ) պարզաբանել է արտակարգ իրավիճակների, այդ թվում՝ զինված հակամարտությունների ժամանակ պետությունների պարտավորությունները: Կոմիտեն հաստատել է, որ նույնիսկ մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից շեղվելու դեպքում, ինչը նրանք կարող են անել «միայն այն ժամանակ և այնքանով, որքանով իրավիճակը սպառնում է ազգի կյանքին», պետությունները պարտավոր են կատարել միջազգային իրավունքի շրջանակներում ստանձնած իրենց մյուս պարտավորությունները, այդ թվում՝ ՄՄԻ-ի սահմանած:[50] ՄԻԿ-ի կարծիքով՝

48 Միջուկային զենքի սպառնալիքի կամ օգտագործման օրինականությունը, խորհրդատվական կարծիք, Արդարադատության միջազգային դատարան (ԱՄԴ), 8 հուլիսի 1996 թ., պարբ. 25: Պաղեստինի օկուպացված տարածքում պատի կառուցման իրավական հետևանքները, խորհրդատվական կարծիք, ԱՄԴ, 9 հուլիսի 2004թ., պարբ. 106: Կոնգոյի տարածքում զինված գործողությունների վերաբերյալ գործ (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն ընդդեմ Ուգանդայի), վճիռ, ԱՄԴ զեկույցներ 2005թ., պարբ. 168, 216-219; ՄԻԿ, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 36, պարբ. 64:

49 Héctor Gros Espiell, "Humanitarian Law and Human Rights" in Janusz Symonides (ed.), Human Rights: Concepts and S-tandards (Aldershot and Paris: Ashgate and UNESCO, 2000), p. 3.

50 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ), Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29. Հոդված 4. Շեղումները արտակարգ դրության ժամանակ (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), օգոստոսի 31, 2001թ., պարբ. 9, https://www.refworld.org/docid/453883fd1f.html:

«ՔՔԻՄԴ-ը պահանջում է, որ նույնիսկ զինված հակամարտության ընթացքում Դաշնագրից շեղվելու միջոցները թույլատրելի լինեն միայն այն ժամանակ և այնքանով, որքանով իրավիճակը սպառնում է ազգի կյանքին: Եթե մասնակից պետությունները դիտարկում են զինված հակամարտությունից դուրս այլ իրավիճակներում 4-րդ հոդվածին հղում անելու հարցը, ապա նրանք պետք է մանրամասն հիմնավորեն՝ ինչու են նման միջոցներն անհրաժեշտ և օրինական տվյալ հանգամանքներում»:[51]

Այլ խոսքով՝ անհրաժեշտ է դիտարկել և գնահատել յուրաքանչյուր կիրառված միջոցի անհրաժեշտ և հիմնավոր լինելը, այլ ոչ թե անել ընդհանրական հայտարարություններ՝ պարտավորություններից շեղվելու անհրաժեշտության մասին:

Ավելին, առանձնակի կարևորություն ունի այն, որ պետությունը նաև «հիմնավորի այն կոնկրետ միջոցները, որոնք ձեռնարկվել են պարտավորություններից շեղվելու համար, և ցույց տա, որ դրանք պայմանավորված են եղել ստեղծված իրավիճակի պահանջներով: Սակայն եթե անգամ կոնկրետ դրույթից թույլատրելի շեղումը կարող է ինքնին հիմնավորվել ստեղծված իրավիճակի պահանջներով, դա դեռ չի վերացնում այդ պահանջը»:[52] Սա կերաշխավորի, որ Դաշնագրի որևէ նորմ, որքան էլ օրինական լինի դրանից կատարված շեղումը, ամբողջությամբ անկիրառելի չի լինի մասնակից պետության գործելակերպում: Մասնակից պետությունների զեկույցներն ուսումնասիրելու ընթացքում Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ ոչ բավարար ուշադրություն է տրվում համաչափության սկզբունքին:[53]

2020 թվականի սեպտեմբերի 29-ին դեպոզիտարիային ուղարկված ծանուցման մեջ[54] Ադրբեջանը գլխավոր քարտուղարին տեղեկացրել է ՔՔԻՄԴ-ի «9-րդ, 12-րդ, 14-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված պարտավորություններից շեղվելու» իր իրավունքից օգտվելու մասին: Ընդհանուր ձևակերպումով նշվել է նաև հետևյալը՝

«...կառավարության ձեռնարկած միջոցները համաչափ են և թիրախային: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ միջոցները պայմանավորված են ստեղծված իրավիճակի պահանջներով և համահունչ են պետության՝ միջազգային իրավունքով նախատեսված այլ պարտավորություններին»:

Տեքստում սահմանված չեն ձեռնարկված կամ ձեռնարկվելիք «միջոցների» կոնկրետ շրջանակը, կամ բնույթը: Մինչդեռ, ինչպես հստակ նշում է ՄԻԿ-ը, պահանջվում է յուրաքանչյուր քայլի դեպքում առանձին գնահատել տվյալ միջոցի անհրաժեշտությունը և համաչափությունը:

Այնուամենայնիվ, անգամ ՔՔԻՄԴ-ով նախատեսված պարտավորություններից թույլատրելի շեղման դեպքում Ադրբեջանը, միևնույն է, պարտավոր էր հավատարիմ մնալ մարդու իրավունքների ապահովմանն անգամ այն նորմերի պարագայում, որոնք նշված չեն 4-րդ հոդվածի 2-րդ մասում (այսինքն՝ նորմեր, որոնցից կարելի է շեղվել), որովհետև գոյություն ունեն տարրեր, որոնք ենթակա չեն օրինական շեղման: Նման տարրերի ոչ սպառիչ ցանկը հետևյալն է.

ա) Ազատությունից զրկված բոլոր անձանց նկատմամբ պետք է դրսևորել մարդկային

51 ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29, պարբ. 3:

52 ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29, պարբ. 4:

53 ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29, պարբ. 4

54 Reference: C.N.575.2020.TREATIES-IV.4 (Դեպոզիտար ծանուցում) [Դեպոզիտար ծանուցում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության կողմից՝ ներկայացված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին]» (ՄԱԿ, 29 սեպտեմբերի, 2020թ.), https://treaties.un.org/doc/Publication/CN/2020/CN.575.2020-Eng.pdf.

վերաբերմունք և մարդուն հատուկ արժանապատվությանը համապատասխանող հարգանք:

բ) Անձանց պատանդ վերցնելու, առևանգելու կամ գաղտնի կալանավորելու արգելքները բացարձակ արգելքներ են:

գ) Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանություն, որն իր արտացոլումն է գտել ցեղասպանության՝ միջազգային իրավունքով սահմանված արգելքի, 4-րդ հոդվածի 1-ին մասում խտրականությունն արգելող դրույթի, ինչպես նաև 18-րդ հոդվածի շեղման ոչ ենթակա բնույթի մեջ:

դ) Միջազգային իրավունքով արգելվում է արտաքսում կամ հարկադրված տեղահանում:[55]

Ադրբեջանի իշխանությունը ծանուցել է նաև իր՝ ՄԻԵԿ-ի պարտավորություններից շեղվելու մասին: 2020 թվականի սեպտեմբերի 28-ին[56] այն բանավոր տեղեկացրել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, Կոնվենցիայի արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածներով, Կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորություններից շեղվելու մասին: Պարտավորություններից հնարավոր շեղումների արտոնությունը վերացվել է 2020 թվականի դեկտեմբերի 12-ին: Հարկ է նշել, որ ՄԻԵԿ-ը պահանջում է, որ շեղումները բավարարեն որոշակի պայմաններ. մասնավորապես, դրանք կարող են կիրառվել միայն պատերազմական կամ ազգի կյանքին սպառնացող այլ հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ, իսկ ձեռնարկված միջոցները չպետք է երբևէ դուրս գան բացառապես իրավիճակի լրջությամբ պահանջվող սահմաններից, նման միջոցները պետք է համահունչ լինեն պետության՝ միջազգային իրավունքով սահմանված մյուս պարտավորությունների հետ:[57] Բոլոր դեպքերում որևէ շեղում չի կարող ենթադրել այնպիսի միջոցների կիրառում, որոնք խախտում են պետության՝ միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորությունները:

Եզրափակելով՝ հարկ է նշել, որ սույն զեկույցը պատրաստելու ընթացքում հաշվի է առնվել Ադրբեջանի՝ միջազգային որոշակի պարտավորություններից շեղվելու մասին պնդումը: Սակայն, ելնելով շեղման սահմանափակումներից և ՄՄԻ-ի ու ՄԻՄԻ-ի սահմանումների փոխլրացնող բնույթից, երբ դրանցից մեկը կիրառվում է մյուսի բացը լրացնելու նպատակով այն պարագայում, երբ որևէ շրջանակի կարգավորումները բավարար չեն, կարելի է եզրակացնել, որ սույն զեկույցում իրավունքի խախտումների վերաբերյալ ներկայացված բոլոր փաստերն անվիճարկելիորեն հավաստի են և ենթադրում են, որ միջազգային, տարածաշրջանային և ազգային դերակատարները պատասխանատվության ենթարկեն իրավախախտներին: Ավելին, քանի որ ինքնորոշումը «jus cogens» և «erga omnes» նորմ է, ուրեմն Արցախի ինքնորոշման պահանջը կմնա ուժի մեջ այնքան ժամանակ, որքան արցախահայությունը կմնա այդ տարածքում: Այս իրողությունը համահունչ է պատերազմի՝ ստորև քննարկվող էթնիկ զտումներին առնչվող խնդիրներին:

55 ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 29, պարբ. 13.

56 Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություն, «Բանավոր գրություն No5/11-3283/01/20», 15 դեկտեմբերի, 2020թ., 20, https://rm.coe.int/0900001680a0bee4.

57 Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի վերաբերյալ. արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում (https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_15_HYE.pdf):

Համակարգային ռասիզմ և հայատյացություն. էթնիկ զտման գործողություններ

Սույն զեկույցում փաստագրված պատերազմական հանցագործությունները և մարդու իրավունքների խախտումները գրանցվել են հակահայկական ռասիզմի և հայատյացության համատեքստում, որը տարիներ շարունակ քարոզվել է Ադրբեջանի կառավարության և անձամբ նախագահ Ալիևի կողմից: Այս համատեքստը նպաստող գործոն է եղել փաստագրված մարդու իրավունքների ծանրագույն խախտումներից շատերի մասշտաբի և բնույթի առումով: Ամբողջության մեջ դիտարկելիս՝ ալիևյան ռեժիմի գործողությունները այսպիսի ռասիզմի խթանման գործում հավասարազոր են պատերազմի քարոզչության՝ խախտելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 20-րդ հոդվածը, ինչպես նաև ռասայական հիմքով բռնության հրահրման՝ խախտելով Ռասայական խտրականության վերացման մասին կոնվենցիայի (ՌԽՎԿ) 4-րդ հոդվածը: Այս գործողությունները ագրեսիայի հանցագործություններ են՝ համաձայն Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի ստատուտի 8bis հոդվածի:

Ինչպես պատերազմի ընթացքում Ադրբեջանի պետական պաշտոնյաների հայտարարությունները, այնպես էլ նրանց զինված ուժերի գործողությունները նշանավորվեցին աննախադեպ հայատյացությամբ: Ադրբեջանական լրատվամիջոցներն ու սոցցանցերը հեղեղվել էին ատելություն պարունակող հայտարարություններով ու հրապարակումներով: Այս քարոզչության պատճառով հայերի նկատմամբ բռնություն գործադրելու և նրանց սպանելու կոչերը, ինչպես նաև սոցիալական ցանցերում հայ խաղաղ բնակիչների և զինվորների նկատմամբ բռնության և դաժանության սարսափելի տեսարաններով հրապարակային գրառումները լայն հավանության և աջակցության արժանացան ադրբեջանական հասարակության մեջ:[58] Ինչպես մատնանշվում է այս գլխում, հակահայկական ռասիզմը գաղափարական հիմք է ծառայել 44-օրյա պատերազմի ընթացքում ռազմական հանցագործությունների և էթնիկ զտումների փորձերի համար: Ալիևի ռեժիմի գլխավոր նպատակը եղել է Արցախն իր հայ բնակչությունից և ժառանգությունից զրկելը:

Հայերը որպես թշնամի. ռասիզմը որպես հպատակեցման և բնաջնջման արդարացում

Ալիևյան ռեժիմի ռասիզմը հայերի նկատմամբ լայնորեն փաստագրվել է 44-օրյա պատերազմից առաջ, ընթացքում և հետո: ՄԱԿ-ի ռասայական խտրականության

58 «2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի բնակչության դեմ ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակություն», միջանկյալ զեկույց (Ստեփանակերտ. Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 18 հոկտեմբերի, 2020 թ.), https://artsakhombuds.am/en/document/735:

վերացման կոմիտեն (ՌԽՎԿ) փաստագրել է այդ ռասիզմի դրսևորումները 2001, 2005, 2009 և 2016 թվականների իր վերջնական դիտարկումներում: 2016 թվականի զեկույցում Ալիևի կողմից Բուդապեշտում ՆԱՏՕ-ի ուսումնական դասընթացի ժամանակ հայ սպային կացնահարման միջոցով գլխատելու համար դատապարտված ադրբեջանական բանակի սպայի հերոսացումը հատկապես խոսուն է: Ալիևի ռեժիմը գնեց դատապարտյալի ազատ արձակման և Ադրբեջան տեղափոխելու հնարավորությունը և նրան ներում շնորհեց՝ չնայած այն բանին, որ Ադրբեջանում չկար դրա իրականացումն ապահովող որևէ օրենսդրական դրույթ: ՌԽՎԿ-ն դատապարտեց այդ արարքը՝ նշելով՝ «հայի սպանության համար դատապարտված քաղաքացու ընդունումը անդամ երկրի կողմից որպես ազգային հերոսի, փոխանցվելուց հետո նրան ներում շնորհելն ու ազատ արձակելը անդամ պետության կողմից հանդիսանում է ռասայական ատելության և ատելության հիմքով հանցագործությունների արդարացում և զոհերին փոխհատուցում տրամադրելու մերժում»:[59] Այս դեպքին, ի թիվս այլ հարցերի, անդրադարձել է նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ) Ադրբեջանի՝ մարդու իրավունքների հարցերով ստանձնած պարտավորությունների՝ 2016 թվականի գնահատման շրջանակում:[60]

Նույն դեպքի առնչությամբ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) նշեց, որ Ալիևի ռեժիմը գործել էր «առանց հաշվի առնելու ռասիստական հանցագործություններ գործող անձանց համար անպատժելիության մթնոլորտ ստեղծելու վտանգը»:[61] Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) քննվող գործի շրջանակում դատարանը գտավ, որ մարդասպանին շնորհված ներումը և ցուցաբերված արտոնյալ վերաբերմունքը ունեցել են «ռասայական շարժառիթներ» և ստեղծել են անպատժելիություն: Դատարանը նաև դատապարտել է «մի շարք ադրբեջանցի պաշտոնյաների կողմից Ռ.Ս.-ին, իր գործած արարքն ու նրան շնորհված ներումը փառաբանող» բազմաթիվ հայտարարությունները, որոնք «հատուկ աջակցություն են հայտնել այն հանգամանքին, որ Ռ.Ս.-ի հանցագործությունները ուղղված են եղել հայ զինվորների դեմ, շնորհավորել են նրան իր գործողությունների համար և նրան անվանել հայրենասեր, օրինակելի մարդ և հերոս»:[62]

Ավելին, ՌԱԵՀ-ի 2003 թվականի զեկույցը փաստեց հայերի նկատմամբ լայնատարած բացասական տրամադրությունների խրախուսումը, իսկ 2007 թվականի զեկույցում նկարագրվեց, թե ինչպես էին քաղաքական գործիչներն ու մամուլը խրախուսում բացասական կարծրատիպերը, որոնք ոչ միայն ճնշում էին առաջացնում դեռևս Ադրբեջանում քտնվող փոքրաթիվ հայերի նկատմամբ, այլ նաև բացասաբար էին ազդում այն ՀԿ-ների և իրավապաշտպանների վրա, որոնք փորձում էին պաշտպանել այդ մարդկանց իրավունքները:[63] 2016 թվականի իր զեկույցում ՌԱԵՀ-ը նշել է, որ Հայաստանի հետ հաշտեցման օգտին արտահայտվող իրավապաշտպանները դատվում և դատապարտվում

59 «Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի՝ 7-ից 9-րդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ», 3:

60 «Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ»:

61 «ՌԱԵՀ զեկույց Ադրբեջանի մասին (մոնիտորինգի հինգերորդ շրջափուլ)» (Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, 7 հունիսի, 2016թ.), 21, https://rm.coe.int/fourth-report-on-azerbaijan/16808b5581.

62 Մակուչյանն ու Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի, գործ թիվ 17247/13 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, հոկտեմբերի 12, 2020թ.):

63 «Զեկույց Ադրբեջանի մասին» (Ստրասբուրգ, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, 15 ապրիլի, 2003թ.), https://rm.coe.int/first-report-on-azerbaijan/16808b5579, «Երկրորդ զեկույց Ադրբեջանի մասին»:

էին կասկածելի մեղադրանքներով և որ «քաղաքական առաջնորդները, կրթական հաստատություններն ու մամուլը շարունակում են ատելության խոսք օգտագործել հայերի դեմ. ադրբեջանցիների մի ամբողջ սերունդ է մեծացել՝ լսելով այսպիսի ատելությամբ լի հռետորաբանություն»:[64] Այս ապացույցներն ընդհանուր առմամբ ընդգծում են Ալիևի ռեժիմի կողմից ժամանակի ընթացքում հակահայկական ռասիզմի ուժգնացումը՝ չնայած միջազգային և տարածաշրջանային շրջանակների կողմից ուղղիչ քայլեր ձեռնարկելու վերաբերյալ Ադրբեջանի կառավարությանն ուղղված կոչերին:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) 2008 թվականի զեկույցը նշում է, որ հակահայկական քարոզչությունն Ադրբեջանում իրականացվում է հետևյալ կերպ.

- Հայերի՝ որպես թշնամու և ագրեսորի իմիջի ձևավորում և հայկական տարածքների նկատմամբ Ադրբեջանի իրավունքի ինքնահաստատում:
- Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստի միտումնավոր խեղաթյուրման քաղաքականություն: Այդ նպատակով Ադրբեջանի իշխանությունները հորինեցին սեփական ժողովրդին «ցեղասպանության զոհ» հռչակելու գաղափարը, և հենց այդ նկատառումով նախագահ Հեյդար Ալիևը 1998 թվականին ստորագրեց «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագիրը: Այս փաստաթուղթը, որը լի է կեղծ մեղադրանքներով, չի հիմնավորվում որևէ վստահելի աղբյուրի, հետազոտության կամ գեթ մեկ պատմական փաստաթղթի միջոցով, ուներ մեկ այլ նպատակ ևս՝ մասնավորապես, աջակցություն հայտնել էթնիկական առումով Ադրբեջանի ազգական Թուրքիային՝ վերջինիս կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու իր ջանքերում:
- Ստեղծել թշնամանք հայերի և հրեաների միջև. այս առումով ջանքեր են գործադրվել հայերի «հակասեմականությունն» ապացուցելու համար:
- Փնտրել հայկական հետք և մեղադրել հայերին Ադրբեջանի գրեթե բոլոր ներքին ձախողումներում:
- Արձագանքել Հայաստանում տեղի ունեցող յուրաքանչյուր բացասական իրադարձությանը, հատկապես, երբ տվյալ հարցը գտնվում է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:[65]

Բացի այդ, Ադրբեջանն արելգում է իր քաղաքացիներին սեփական երեխաներին տալ հայկական անուններ:[66]

Այսպիսի հակահայկական քարոզչությունն ու հայատյացությունը հայերին տալիս է ազերիների թշնամի «ուրիշի» պիտակը: Այս առումով բազմաթիվ են հայերի մասին

64 «ՌԱԵՀ զեկույց Ադրբեջանի մասին (մոնիտորինգի հինգերորդ շրջափուլ)», էջ 9:

65 «Ադրբեջանի կողմից իրականացվող հակահայկական քարոզչությունը և ատելության տարածումը որպես բանակցային գործընթացի լուրջ խոչընդոտ» (ԵԱՀԿ, 7 հոկտեմբերի 2008 թ.), 3, https://www.osce.org/files/f/documents/e/b/34195.pdf

66 Արմինե Ադիբեկյան և Անժելա Էլիբեգովա, «Հայատյացությունը Ադրբեջանում» (Երևան, ՀՀ Նախագահի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի կենտրոն, 2015թ.):

բացասական կարծրատիպերի և սիմվոլիզացիաների օրինակները: Ալիևյան ռեժիմի իշխանության տարիներին պետական դասագրքերում բոլոր հայերը որակվել են որպես «թշնամիներ», «դավաճաններ», «անջատողականներ», «ահաբեկիչներ», «ծայրահեղականներ», «ֆաշիստներ» և պարզապես «զզվելիներ»:[67] Մանկական գրքերից մեկում հայերը նկարագրվում են որպես «մեռած բարոյականությամբ, ապագայից զուրկ մի ազգ, որի երակներով հոսում է աղբ ու թափոն, գարշելի և նողկալի մի ազգ...»:[68] Ավելին, 2018 թվականին Ալիևն ինքը հայտարարեց, որ «Հայաստանը անհաջողակ պետություն է...նրանց հերոսները, նրանց գեներալները գողեր են, նրանց բանակը գողերի բանակ է...մեր միջև եղած տարբերությունը երկնքի ու երկրի տարբերություն է...»:[69]

Սիմվոլիզացիայի միջոցով այս ցածրացումը նաև կրկնվում է Ադրբեջանի այլ քաղաքական գործիչների և քաղաքացիական առաջնորդների կողմից: Նմանեցնող պատկերումներն այնուհետև վերածվում են ապամարդկայնացման, որտեղ հայերը հավասարեցվում են կենդանիների և հիվանդությունների հետ: 2012 թվականի մայիսին 17-ին, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության համապատասխան նիստում ելույթ ունենալիս, Ադրբեջանի Քաղաքական վերլուծությունների և տեղեկատվության կենտրոնի ղեկավար Էլմուր Ասլանովը կատարեց հետևյալ մեկնաբանությունը. «Հայաստանը գորշ կետ է Հարավային Կովկասի քարտեզի վրա: Այն տարածաշրջանի «քաղցկեղն» է, որի միջով անցնում է ապօրինի զենքերի և թմրանյութերի շրջանառությունը»:[70]

Այս նախապատմությունը հաշվի առնելով՝ հասկանալի է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում առկա էր հայատյացության և ատելությամբ լի արտահայտությունների զգալի ալիք: Դրանցից որոշ օրինակներ ներկայացվում են ստորև.

- «Մենք շարունակելու ենք վտարել այս [հայ] ստախոսներին: Նրանք հիմա տեսնում են՝ ով ով է: Նրանք տեսնում են, որ մենք իրենց դաս էինք տալիս, որը երբեք չեն մոռանա... Նրանք ո՛չ խիղճ ունեն, ո՛չ բարոյականություն: Նրանք նույնիսկ ուղեղ չունեն», նախագահ Ալիևի կողմից արված արտահայտություն, 2020 թվականի հոկտեմբեր:[71]
- «Հիմա մենք նրանց դուրս ենք շպրտելու ինչպես շների», նախագահ Ալիևն արտահայտվում է հայերի մասին 2020 թվականի հոկտեմբերի 4-ին:[72]
- «30 տարի այն գտնվում էր վայրի գազանների, գիշատիչների, շնագայլերի ձեռքերում», Ալիևը խոսում է Արցախի մասին, հոկտեմբերի 17, 2020 թվական:[73]

67 «Հայկական կերպարը Ադրբեջանի պատմության դասագրքերում».

68 Ադիբեկյան և Էլիբեգովա, «Հայատյացությունն Ադրբեջանում», 93:

69 "Collection of War Threat Statements by the President Ilham Aliyev and Other Azerbaijani Officials," 1.

70 "Collection of War Threat Statements by the President Ilham Aliyev and Other Azerbaijani Officials," 61.

71 presidentaz, «Իլհամ Ալիևը դիմեց ժողովրդին», հոկտեմբերի 17, 2020, https://www.youtube.com/watch?v=PVdWkP-Plle4:

72 «Նախագահ Ալիև. ադրբեջանցի զինվորները շների պես քշում են նրանց», Defence.Az, 4 հոկտեմբերի, 2020թ., https://bit.ly/3qpANls:

73 «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հեռուստատեսությամբ դիմում է ժողովրդին. տեսանյութ՝ թարմացված», Defence.Az, հոկտեմբերի 20, 2020, https://bit.ly/37QymCi

Պատկեր 6.1. ադրբեջանական դրոշմանիշներ, հունվար 2021թ. (Աղբյուրը՝ «the Calvert Journal»):

2020 թվականի հոկտեմբերի 22-ին Ադրբեջանը հայտարարեց նոր ԱԹՍ-ների արտադրության մասին՝ դրանք անվանելով «ԻթիՔովան», ինչն ադրբեջաներենից թարգմանաբար նշանակում է «շուն քշող»:[74] Ապամարդ-կայնացման սիմվոլիզացիայի օրինա-կներից է ադրբեջանական դրոշ-մանիշը, որը պատկերում է Արցախի «ախտահանումը» իր հայկական բնակ-չությունից՝ վիրուսի ախտահանմանը նման եղանակով:[75]

Ալիևյան ռեժիմի կողմից իրականացվող հայերի ռասիստական դասակարգմանը, սիմվոլիզացիային և ապամարդկայնացմանը զուգահեռ խտրականություն առկա է նաև օրենքի և պրակտիկայի ասպարեզում: Հայկական ծագում ունեցող Ադրբեջանի քաղաքացիները, որոնք դեռ բնակվում են Ադրբեջանում, ենթարկվում են խտրականության և ոտնձգությունների՝ զբաղվածության, բնակարանային, սոցիալական ծառայությունների և անձնագրերի ձեռք բերման հետ կապված հարցերում:[76] Նրանք խոչընդոտների են հանդիպում նաև ուսումնառության, թոշակների և Բաքվում կացության թույլտվությունների թարմացման հարցերում: Նման իրավունքները դատական կարգով պաշտպանելու ընթացակարգերը համակարգային կերպով ձախողվում են:[77]

Հայերի նկատմամբ ռասիզմի և ատելության խոսքի դրսևորումները շարունակվեցին 44-օրյա պատերազմի ընթացքում: Օրինակների թվում են Ալիևի հետպատերազմյան տարածքային պահանջները Հայաստանից: 44-օրյա պատերազմը հաղթական հռչակելուց հետո Ալիևը հայտարարեց, որ «Զանգեզուրի [Սյունիք], Գոյչայի [Սևան] և Իրեվանի շրջանները մեր պատմական հողերն են»:[78] 2021 թվականի ապրիլին Ալիևն այս պնդումներն ավելի բացահայտ դարձրեց.

> *«Մենք ցանկանում ենք, որ երիտասարդ սերունդն իմանա, որ Զանգեզուրը Ադրբեջանի պատմական հողն է: Զանգազուրը Հայաստանին է տրվել 1920 թվականին՝ 101 տարի առաջ: Նախկինում այդ տարածքը մերն էր: Նրանք Գոյչա լճին Սևանա լիճ են կոչում: Ուղղակի նայեք 20-րդ դարասկզբի քարտեզին. այնտեղ դուք Սևան չեք տեսնի: Նույնը վերաբերում է Իրեվանին*

74 @cavidaga, «Հետևելով Ալիևի այս ելույթին, Ադրբեջանը սկսում է տեղական արտադրության անօդաչու թռչող սարքերի՝ «Շուն քշողի», զանգվածային արտադրությունը», թվիթերյան գրառում, հոկտեմբերի 22, 2020թ., https://twitter.com/cavidaga/status/1319158918908698625:

75 Lucía de la Torre, "Azerbaijani Postal Stamps Accused of Spreading Anti-Armenian Propaganda," The Calvert Journal, January 12, 2021, https://www.calvertjournal.com/articles/show/12442/azerbaijan-stamps-nagorno-karabakh-war-anti-armenian-propaganda.

76 «Ադրբեջանում 2011թ.-ի մարդու իրավունքների իրավիճակի մասին զեկույց» (ԱՄՆ պետդեպարտամենտ, մայիսի 24, 2012թ.), https://www.refworld.org/docid/4fc75abd5.html; «Ադրբեջանում 2016թ.-ի մարդու իրավունքների իրավիճակի մասին զեկույց» ((ԱՄՆ պետդեպարտամենտ, մարտի 3, 2017թ.), https://www.refworld.org/docid/58ec8a753.html.

77 «Զեկույց Ադրբեջանի մասին», «Երկրորդ զեկույց Ադրբեջանի վերաբերյալ»:

78 "At Baku Victory Parade, Aliyev Calls Yerevan, Zangezur, Sevan Historical Azerbaijani Lands, Erdogan Praises Enver Pasha," The Armenian Mirror-Spectator, December 11, 2020, https://mirrorspectator.com/2020/12/11/at-baku-victory-parade-with-erdogan-aliyev-calls-yerevan-zangezur-sevan-historical-azerbaijani-lands-erdogan-praises-enver-pasha/.

[Երևան]: Նրանք ոչնչացրել են Երևանի պատմական հատվածը: Ակնհայտ փաստ է, որ ազերիները, այդ թվում՝ իմ նախնիները, այնտեղ ապրել են...ես ասել եմ, որ մենք կվերադառնանք այնտեղ: Ես չեմ ասել, որ մենք կվերադառնանք տանկերով: Ես ասել եմ, որ մենք կվերադառնանք: Եթե մենք վերադառնում ենք Զանգեզուրի միջանցք, ապա ինչո՞ւ չվերադառնալ Երևան: Ժամանակը կգա՝ մենք կանենք դա: Ես իմ դիրքորոշումն եմ արտահայտում»:[79]

Այս արտահայտությունները ցույց են տալիս, որ ռեժիմը և Ալիևն ինքը հակահայկական ռասիզմը համատեղում են տարածքների զավթման սպառնալիքներով, ինչը հավասարազոր է պատերազմի քարոզչության, ռազմական գործողությունների հրահրմանը և դասական ագրեսիայի:

Մինչդեռ ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները պարտավոր են օրենքով արգելել թշնամանքի և բռնության հրահրման նպատակով իրականացվող պատերազմի և ռասայական ատելության քարոզչությունը, իսկ նման արգելքները հիմնավորող տրամաբանությունը պետք է նաև նշանակի, որ պետություններն իրենք, և հատկապես քաղաքական առաջնորդները, չպետք է ներգրավվեն պատերազմի քարոզչության և ատելության վրա հիմնված ջատագովության մեջ: Ավելին, Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ «Կոմիտեն, հետևաբար, կարծում է, որ մասնակից պետությունները, որոնք դեռևս այդպես չեն վարվել, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ իրականացնելու 20-րդ հոդվածով սահմանվող պարտավորությունները և զերծ մնան նման որևէ քարոզչությունից և ջատագովությունից»:[80]

Բացի այդ, CERD-ի 4-րդ հոդվածը պահանջում է, որ պետություններն օրենքով արգելեն ռասայական հիմքով բռնության հրահրումը, իսկ 4(c) հոդվածը հստակ ավելացնում է, որ «Պետությունները չպետք է թույլատրեն հանրային իշխանություններին կամ պետական հաստատություններին՝ համապետական, թե տեղական, խրախուսել կամ հրահրել ռասայական խտրականություն»: Հոդված 4(c)-ն մեկնաբանելիս Կոմիտեն մանրամասնել է, որ «Կոնվենցիայի 4(c) հոդվածն ուրվագծում է հանրային իշխանությունների պարտավորությունները: Հանրային իշխանությունները, բոլոր վարչական մակարդակներում, այդ թվում՝ համայնքապետարանների մակարդակում, առաջնորդվում են սույն պարբերությամբ: Կոմիտեն գտնում է, որ մասնակից պետությունները պարտավոր են ապահովել այս պարտավորությունների իրականացումը և ներկայացնել հաշվետվություններ դրա վերաբերյալ»:[81] Ուստի, Ալիևի ռեժիմի կողմից խրախուսվող հակահայկական ռասիզմը ակնհայտորեն խախտում է այս միջազգային նորմերը:

Հայատյացության ալիքն ու սպառնալիքները շարունակվում են: Օրինակ, 2021 թվականի սկզբին նախագահ Ալիևը հանդես եկավ նախորդ տարին ամփոփող տեսաուղերձով, որտեղ նա սպառնում էր հայերին և նսեմացնում նրանց արժանապատվությունը. «Մենք պարտերազմը դադարեցրեցինք, երբ հայերն ընդունեցին նվաստացուցիչ պարտությունը, ծնկի եկան և հանձնվեցին...»: Հայ պաշտոնյաների՝ Արցախ կատարվող այցերի մասին խոսելիս՝

79 «ՄԻՊ. Ադրբեջանի նախագահի վերջին հայտարարությունները հայերի նկատմամբ ֆաշիզմի և ցեղասպանության քաղաքականության ապացույց են», Panorama.am, 14 ապրիլի, 2021թ., https://www.panorama.am/en/news/2021/04/14/ombudsman-Azerbaijani-president/2485784

80 ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 11. Հոդված 20. Պատերազմի քարոզչության և ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելու արգելքը» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), 29 հուլիսի, 1983թ.), շեշտադրումը մերն է, https://www.refworld.org/docid/453883f811.html

81 «Կոնվենցիայի 4-րդ հոդվածի վերաբերյալ XV ընդհանուր հանձնարարական» (ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտե, 1993 թ.), պարբ. 7, https://bit.ly/3qpv7bt.

Ալիևը հայտարարեց՝ «Ի՞նչ է անում Հայաստանի արտգործնախարարը Ստեփանակերտում: Թող նրանք [հայերը] չմոռանան պատերազմի մասին, մեր երկաթյա ձեռքը դեռ այստեղ է: Հայերի այցերին պետք է վերջ տրվի: Մենք զգուշացնում ենք, որ Հայաստանը կզղջա, եթե նման հրահրիչ քայլերը շարունակվեն: Հայաստանի արտգործնախարար, դու ո՞վ ես: Եթե ևս մեկ այդպիսի քայլ արվի, մեր պատասխանը կլինի դաժան»:[82]

2021 թվականի ապրիլի 12-ին նախագահ Ալիևը մասնակցել և ելույթ է ունեցել Բաքվում 44-օրյա պատերազմին նվիրված «Ավարների պուրակի» բացմանը: «Պուրակում» ներկայացված են հայկական ռազմական տեխնիկա և հայ զինվորների մանեկեններ, որոնք պատկերված են չափազանց անմարդկային և նվաստացուցիչ տեսքով, ինչը խթանում է թշնամական, արհամարհական և բացասական վերաբերմունքը էթնիկ հայերի նկատմամբ: Այդպիսի հրապարակային ցուցադրությունը կոպտորեն անարգում է պատերազմի ժամանակ զոհված զինծառայողներին, ինչպես նաև գերեվերված և անհետ կորած անձանց: Այն խորը տառապանք է պատճառում այդ զինծառայողներին ընտանիքներին և վիրավորում հայերի արժանապատվությունն ու ազգային զգացումները:

Ռասիզմի վերաբերյալ վերը նկարագրված ապացույցները պատերազմական հանցագործությունների և սույն զեկույցում փաստագրված միջազգային իրավունքի խախտումները հիմնավորում են այն մեղադրանքը, ըստ որի Ալիևն անձամբ ներգրավվել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտով սահմանվող ագրեսիայի հանցագործության մեջ: Ագրեսայի հանցագործությունը քրեականացնում է պետական ապարատի վրա վերահսկողություն ունեցող անձի կողմից ագրեսիայի ակտ(եր)ի պլանավորումը, նախապատրաստումը, ձեռնարկումը կամ իրականացումը, ինչն իր բնույթով և ծանրությամբ խախտում է ՄԱԿ-ի կանոնադրությունը: Ագրեսիայի ակտերը, ի թիվս այլոց, ներառում են ներխուժումը, հարձակումը, օկուպացիան, ռմբակոծությունը և վարձկանների օգտագործումը:[83] ՄԱԿ-ի կանոնադրությունը ձգտում է ապահովել խաղաղություն և անվտանգություն բոլորի համար՝ մասնավորապես, խթանելով մարդու իրավունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի պահպանումը, ինչպես նաև հստակ կերպով արգելում է ռասայական հիմքով խտրականությունը:[84] Բացի այդ, Արդարադատության միջազգային դատարանը գտել է, որ ռասիզմի պրակտիկա ունեցող և ինքնորոշման իրավունքը ճնշող պետությունը խախտում է ՄԱԿ-ի կանոնադրությունը և դրա դրույթները:[85]

82 АЗЕРТАДЖ Новости, “Состоялось Совещание в Видеоформате, Посвященное Итогам 2020 Года” January 6, 2021, YouTube video, https://www.youtube.com/watch?v=_gvL0JmGLQ8.

83 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, «Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ», 92-9227-227-6 § (1998), https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html

84 ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդ. 1, 2:

85 Հակառակ Անվտանգության խորհրդի 276 (1970թ.) բանաձևի՝ Նամիբիայում (Հարավարևմտյան Աֆրիկա) Հարավաֆրիկյան Հանրապետության շարունակական ներկայության իրավական հետևանքները պետությունների համար, (Արդարադատության միջազգային դատարան, հունիսի 21, 1971)/Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970) (International Court of Justice June 21, 1971):

Էթնիկ զտում. Արցախն առանց հայերի

«Ադրբեջանցիները ցանկանում են ոչնչացնել Արցախի բնակչությանը»,
- Ծուշիի բնակիչ[86]

Այսօր Արցախի՝ հայերով երբեմնի բնակեցված 193 համայնքները զուրկ են իրենց բնակիչներից և օկուպացված են ադրբեջանական զորքերի կողմից:[87] Սա էթնիկ զտման ցայտուն օրինակ է, ինչպես որ այն սահմանվել է նախկին Հարավսլավիայում մարդու իրավունքների խախտումների մասին զեկույցում՝ «քաղաքացիական բնակչության համակարգային զտում, հիմնվելով էթնիկ չափանիշների վրա, նպատակ ունենալով նրանց ստիպել լքել այն տարածքները, որտեղ նրանք բնակվում են»:[88] Ադրբեջանական զորքերի առաջխաղացմանը զուգահեռ խաղաղ բնակիչները թողնում էին իրենց տները, աշխատանքը և իրենց համայնքի ու պատկանելության զգացումը: Այս տեղահանված անձինք, անկախ նրանից՝ նրանք տեղափոխվել են Արցախի այլ հատված, թե՝ Հայաստան, տասնամյակներով վերաբնակեցման աջակցության կարիք են ունենալու: Ադրբեջանը ձեռք բերեց հայկական բնակչությունից զուրկ տարածքներ և բնական ռեսուրսներ: Ադրբեջանի կողմից հաջողություն է համարվել ռասիզմի, մարդու իրավունքների ծանրագույն խախտումների ու անպատժելիության վրա հիմնված էթնիկ զտումների իրականացումը:

Չնայած այն բանին, որ ՄՄԻ-ն պաշտպանում է քաղաքացիական անձանց, հայկական ընտանիքներն ու համայնքները արդարացիորեն վախեցան վայրագություններից և փախան: Այդ վախը հիմնավորված էր՝ հաշվի առնելով նախկին և ներկա համատեքստը՝ ռասիստական գաղափարախոսություն, ռասիստական քարոզչություն, վարձկանների հավաքագրում և մարդու իրավունքների այնպիսի կոպիտ խախտումներ, ինչպիսիք են արտադատական սպանություններն ու նման հանցագործությունների տարածումը սոցիալական մեդիայով:

Թիկունքում մնացած քաղաքացիական անձինք պատանդ են վերցվել կամ խոշտանգվել, իսկ երբեմն՝ դաժանությամբ սպանվել: Զարմանալի չէ, որ Արցախում բնակվող հայերը Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմական գործողություններն ընկալում էին որպես իրենց ներկայությունն ամեն գնով արմատախիլ անելու փորձ: Օրինակ, Արցախի Հադրութի շրջանի Տող գյուղից փախած բնակիչներից մեկը նշում է.

> «Նրանք կարող են բոլորին մի գիշերվա մեջ սպանել և իրենց խոստումը կատարել՝ վերջին կենդանի հային պահել թանգարանում: Հայ ազգը կարող է բնաջնջվել: Ես չեմ կարող ապրել իմ գլխավերևում ծածանվող նրանց դրոշի տակ: Ես գիտեմ, թե ինչքան վտանգավոր են նրանք: Նրանք բոլորին կստիպեն փոխել իրենց կրոնը, խոսել իրենց լեզվով և աստիճանաբար կհասնեն իրենց ուզածին:[89]

86 Հարցազրույց Ծուշիի բնակչի հետ, 21 դեկտեմբերի, 2020թ.:

87 «Արցախը Հրապարակել է Ադրբեջանի Հսկողության Տակ Անցած Համայնքների և Բնակավայրերի Ցանկը», Ազատություն Ռադիոկայան, դեկտեմբերի 10, 2020թ., https://www.azatutyun.am/amp/30993297.html

88 Թադեուշ Մազովեցկի, «Մարդու իրավունքների իրավիճակը նախկին Հարավսլավիայի տարածքում. 6-րդ պարբերական զեկույց նախկին Հարավսլավիայի տարածքում մարդու իրավունքների իրավիճակի մասին / Ներկայացվել է Թադեուշ Մազովեցկիի կողմից, Մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ զեկուցող, համաձայն՝ Հանձնաժողովի 1993 թվականի փետրվարի 23-ի 1993/7 որոշման պարբ 32-ի: (ՄԱԿ, մարդու իրավունքների հանձնաժողով, հատուկ զեկուցող Բոսնիա և Հերցեգովինայում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ, փետրվարի 21, 1994թ.), պարբ. 283, https://digitallibrary.un.org/record/226410

89 Հարցազրույց Տողի բնակչի հետ, 25 փետրվարի, 2021թ.:

Պատկեր 6.2. Արցախից դեպի Հայաստան փախչող ժողովուրդը, նոյեմբերի 7, 2020 թվական (Աղբյուրը՝ «Ասոշիեյթիդ պրես»)

Պատերազմի ընթացքում մոտ 150,000 հազարանոց բնակչությունից ավելի քան 90 հազարը Արցախից տեղափոխվեց Հայաստան:[90] 2021 թվականի փետրվարի դրությամբ, ըստ գնահատումների, 68 հազար տնային տնտեսություն գտնվում էր փախստականին մոտ կարգավիճակում և այդպիսի տնային տնտեսություններից մոտ 37 հազարը շարունակում են բնակվել Հայաստանում ու չեն պատրաստվում վերադառնալ Արցախ:[91] Բացի այդ, բուն Արցախում իրենց գյուղերից և քաղաքներից տեղահանված արցախցիները շարունակում են մնալ ժամանակավոր կացարաններում, հիմնականում Ստեփանակերտում: Ինչպես հաղորդում են միջազգային մարդասիրական խմբերը՝ «ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքների մեծ մասը հիմա դատարկ են, քանի որ այնտեղ բնակվող բոլոր էթնիկ հայերը փախել են, իսկ Ադրբեջանը դեռևս չունի վերաբնակեցման պլաններ:[92]

Այս իրավիճակում Արցախի հայերը վախենում են վերադառնալ իրենց տները: Ինչպես Ասկերանի բնակիչներից մեկը նշում է՝

> «Մենք ցանկանում ենք վերադառնալ տուն, նույնիսկ վախենալով, սակայն ... անվտանգ չէ ապրելը, երբ ազերիներն ընդամենը 3 կմ կամ ավելի քիչ հեռավորության վրա են գտնվում: Նախկինում սահմաններն ավելի ամուր էին, թեպետ ազերիները նորից ներթափանցում էին, այս անգամ դա շատ ավելի հաճախ է լինելու...»:[93]

90 «Արցախից տեղահանված եվ Հայաստան ժամանած անձանց տվյալների հավաքագրում», Հայաստանի միգրացիոն ծառայություն, 18 դեկտեմբերի, 2020 թ., http://www.migration.am/news/412

91 "Multi-Sector Needs Assessment in Armenia, Second Round" (REACH, June 2021), https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/REACH_ARM_Report_ARM2002_MSNA-Second-round_June-2021.pdf.

92 "Post-War Prospects for Nagorno-Karabakh" (International Crisis Group, June 9, 2021), https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/264-post-war-prospects-nagorno-karabakh.

93 Հարցազրույց Ավետարանոցի բնակիչ Ա.Բ.-ի հետ, 25 նոյեմբերի, 2020թ.:



Պատկեր 6.3. Հայկական (կարմիր) և ադրբեջանական (սև) վերահսկողության տակ գտնվող Արցախի համայնքների քարտեզ, դեկտեմբերի 11, 2020 թվական (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ)

Հադրութի շրջանի Տող գյուղի բնակիչը նույն մտահոգություններն է հայտնում. «Եթե հաշվի առնենք, որ ազերիները կարող են մեզ գլխատել, ինչպե՞ս կարող ենք վերադառնալ և նրանց կողքին հանգիստ ապրել»:[94]

Փաստացի իրավիճակը Արցախում մնալու որոշում կայացրածների համար կյանքը շատ դժվար է դարձնում: Միջազգային ճգնաժամային խմբի վերջին զեկույցներից մեկում նշվում է.

> Առաջնագծի փոփոխությունների արդյունքում հայկական ռազմական դիրքերը գտնվում են քաղաքացիական բնակավայրերի ներսում կամ անմիջական հարևանությամբ: Տասնյակ հայկական գյուղեր և Արցախի՝ հայ բնակչություն ունեցող քաղաքների մեծ մասը, այդ թվում՝ Ստեփանակերտը, գտնվում են Շուշայի կամ մոտակայքում գտնվող ադրբեջանական զորքերի նշանառության տակ: Երկու կողմի զինվորներն էլ կարող են լսել թշնամուն՝ մյուս կողմում խոսելիս: Ադրբեջանցի զինվորների խոսակցություններն էլ լսելի են հայ քաղաքացիական բնակչության համար: «Նրանք այնքան մոտիկ են, որ գիշերը կարող ենք լսել նրանց ծիծաղը», - նշում է գյուղացիներից մեկը:[95]

Ավելին, տարածաշրջանի քարտեզի դիտարկումը հստակ ցույց է տալիս, թե ինչքան անպաշտպան են նոր սահմանները: Հայաստանը գտնվում է արևմուտքում, Ադրբեջանը՝ արևելքում: Կարմիրով նշված համայնքները հայկական բնակչություն ունեն, իսկ ներկայումս Ադրբեջանի կողմից օկուպացված նախկին համայնքները նշված են մոխրագույնով:[96]

Երկարաժամկետ կտրվածքում անկայունության և անորոշության այս վիճակը հանգեցնում է արտագաղթի: Մարդիկ տարակուսում են, թե արդյոք իմաստ ունի վերակառուցել իրենց կյանքն իրենց գտնվելու վայրում: Ինչպես Ջրականի (Ջեբրաիլ) նախկին բնակիչներից մեկն է նշում՝

> «Ես չեմ ցանկանում վերադառնալ: Նախ, Ջեբրաիլ, Հադրութ այլևս չկան: Հետո, ամեն ինչն արդեն պղծվել է: Իմ ու իմ երեխաների համար սա սթրես է: Ամեն անգամ, երբ երեխաները տեսնում են իրենց մանկության վայրերի լուսանկարները, սթրես են տանում: Բացի այդ, ավելի լավ կլինի, եթե երկիրը լքենք: Ես սպասում եմ գարնանը: Չգիտեմ, ինչ ուզում է՝ թող սարքեն այստեղ, բայց ես որոշել եմ հեռանալ»:[97]

Եթե անվտանգությունը չվերականգնվի, ավելի շատ հայեր են արտագաղթելու, և Արցախը կանգնելու է քայքայման եզրին: Սա համապատասխանում է ալիևյան ռեժիմի նպատակներին՝ ձեռք բերել մարդկանց որոշակի խմբից զերծ տարածք: Այս գործողությունը, որի արդյունքում բնակչությունը զրկվում է իր տներից, համայնքներից, բնական ռեսուրսներից և ապրուստի աղբյուրներից, ոչ միայն ստեղծում է ֆիզիկական և հոգեկան տրավմա ու կորուստ, այլ նաև մի ամբողջ էթնիկ խմբի դարձնում է ոչ կենսունակ՝ ֆիզիկական կեցության, ինչպես նաև համայնքի և ինքնության տեսանկյունից: Այս և այլ պատճառներով է, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան եզրակացրել է, որ էթնիկ զտումը ցեղասպանության ձև է:[98]

---

94 Հարցազրույց Տողի բնակիչ Ա.Ա.-ի հետ, 4 դեկտեմբերի, 2020թ.:

95 "Post-War Prospects for Nagorno-Karabakh" (International Crisis Group, June 9, 2021), https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/264-post-war-prospects-nagorno-karabakh.

96 Նազարեթյան, Հովհաննես, «Արցախը պատերազմից հետո». ինչ մնաց», Փաստերի ստուգման հարթակ, 25 նոյեմբերի, 2020թ., https://fip.am/13932:

97 Հարցազրույց Ջաբրայիլի բնակչի հետ, 25 նոյեմբերի, 2020թ.:

98 «Իրավիճակը Բոսնիա և Հերցեգովինայում. բանաձև/ընդունված է ցլխավոր ասամբլեայի կողմից» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 20 դեկտեմբերի, 1993թ.), https://www.refworld.org/docid/3b00f30940.html

Էթնիկ զտման զոհերի համար համայնքն ու պատմական կապերը, որոնք ինքնության նախապայման են հանդիսանում, կորսված են՝ էթնիկ ինքնության կորուստը դարձնելով մշտական: Դիտարկենք զոհերի կողմից ներկայացվող նյութական և մշակութային կորուստները.

- Այդ գյուղն ինձ համար սրբավայր է: Այնտեղ եմ թողել ծնողներիս գերեզմանը: Այն ինձ համար ամենակարևոր վայրն է», - Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղի բնակիչ:[99]
- «Ամուսնուս՝ այնտեղ մնացած գերեզմանն ինձ համար ամենացավոտն է: Գրադարանում 5,000-ից ավելի գիրք ունեի: Եթե իմանայի, ինձ հետ գոնե հին լուսանկարներ կվերցնեի», - Հադրութի շրջանի Հադրութ քաղաքի բնակիչ:[100]
- «Մի քիչ դժվար է Ստեփանակերտում ապրելն ու Հադրութ չգնալը, տան ճամփով չգնալը...», - Հադրութի շրջանի Տող գյուղի բնակիչ:[101]
- «Բոլոր գրքերս թողեցի այնտեղ...շատ մեծ գրադարան ունեինք՝ հեղինակների կողմից ստորագրված որոշ եզակի գրքերով: Հավաքածուիս մի մասը տվել էի Ծուշիում բնակվող աղջկաս: Ամենաշատ ցավն ու տառապանքն ինձ սա է պատճառում: Նկարում էի ու էնտեղ մոտ 175 կտավ եմ թողել: Շատ հին, ձեռքի սարքած, գեղեցիկ զարդասեղան ունեինք: Շատ հին գորգ ունեինք, որը շատերն էին ցանկանում գնել, բայց չվաճառեցինք: Այնտեղ թողած ամենակարևոր բաներից մեկը մեր լուսանկարների ալբոմներն են: Ամենափոքր աղջիկս նոր էր ամուսնացել ու իր օժիտն էինք հավաքել, սա էլ է շատ ցավ պատճառում: Մնացածը՝ ոչինչ: Մենք 5 սերունդ հադրութցի ենք»:[102]

Պատերազմի սկզբից ի վեր 10,021 խաղաղ բնակիչ ստիպված է եղել լքել տարբեր գյուղեր Հադրութի շրջանից, որը յուրահատուկ լեզվական ինքնությամբ և հավաքական հիշողությամբ եզակի համայնք է: Ըստ էության, 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի ստորագրումից հետո Հադրութի բնակչությունը ենթարկվել է էթնիկ զտման՝ զրկվելով տուն վերադառնալու որևէ հեռանկարից և իրենց հարազատների շիրիմներին այցելելու հնարավորությունից: Սա վտանգներ է ստեղծում նրանց ինքնության և պատմական արմատների պահպանման տեսանկյունից: Տեղահանումը նաև թուլացնում է այն հիմնարար արժեքները, որոնց վրա հիմնվում է անհատի, ընտանիքի և համայնքի էթնիկ և մշակութային ինքնությունը:

Ընտանիքները, որոնք կորցրել են իրենց տները, կացարանների կարիք ունեն, և, ըստ իրականացված ամենավերջին կարիքների գնահատումների, կացարանների խնդիրն ամենաառաջնային նշանակությունն ունի:[103] Կացարանների խնդրից հետո ամենահրատապ հարցը զբաղվածությունն է: Ինչպես ներկայացվում է սույն զեկույցի այլ հատվածներում, շատ գյուղացիներ իրենց կենսական կարիքները հոգում էին իրենց անասունների, հողի և տեղական գյուղատնտեսության շնորհիվ: Ապրուստի այս աղբյուրները կորսված են և կարող են միայն փոխարինվել զբաղվածությամբ: Վերաբնակեցման հետ կապված այս խնդիրների լուծումը, անկախ նրանից՝ դա կլինի Հայաստանում, թե Արցախում բնակվող ընտանիքներին օգնելու տեսքով, զգալի բեռ է այս բազմաթիվ խնդիրներ ունեցող երկրի համար:

99 Հարցազրույց Ակնաղբյուրի բնակիչ Ս.Գ.-ի հետ, 25 նոյեմբերի, 2020թ.:

100 Հարցազրույց Հադրութի բնակչի հետ, 3 դեկտեմբերի, 2020թ.:

101 Հարցազրույց Տողի բնակչի հետ, 4 դեկտեմբերի, 2020թ.:

102 Հարցազրույց Հադրութից ամուսինների հետ, 21 դեկտեմբերի, 2020թ.:

103 "Multi-Sector Needs Assessment in Armenia, Second Round" (REACH, June 2021), https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/REACH_ARM_Report_ARM2002_MSNA-Second-round_June-2021.pdf

Ճնշման բացակայության արդյունքում առաջացած անպատժելիություն

Հարկ է նշել, որ Ադրբեջանի կառավարության ռասիստական քաղաքականություններն ու էթնիկ զտման փորձերը չեն ունեցել որևէ հակազդեցություն, մասնավորապես՝ միջազգային հակազդեցություն: Չնայած բազմաթիվ զեկույցներին, որոնք փաստում են հայերի նկատմամբ պետական մակարդակով իրականացվող ռասիզմի քաղաքականության գոյությունը, Ադրբեջանը իր վարքագիծը փոխելու նշաններ չի ցուցաբերում: Այն մարգինալացնում է իր ընդդիմությանը և լռեցնում իրավապաշտպաններին՝ նրանց կոչելով ծագումով հայ, պիտակավորելով նրանց որպես «հայկական դավադրության» մաս կամ որևէ այլ կերպ կապելով նրանց հայերի հետ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

- Հայտնի գրող Աքրամ Այլիսլին իր վիպակում նկարագրեց 1920-ական թվականներին ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ իրականացված բռնությունները, և նրան անվանեցին «ադրբեջանական ազգի դավաճան»,[104] իսկ իր կինն ու որդին կորցրեցին հանրային ոլորտում ունեցած աշխատանքը:[105]
- Հայտնի բլոգեր և լրագրող Արզու Գեյբուլլաևան քննադատեց ալիևյան ռեժիմին և հիմնադրեց հակամարտությունների տրանսֆորմացիայի կենտրոն, ինչին ի պատասխան նա պիտակավորվեց որպես «դավաճան» և սկսեց մահվան սպառնալիքներ ստանալ:[106]
- Լրագրող Ռաուֆ Միրգադիրովը, որը հաղորդում էր Ադրբեջանում և Թուրքիայում մարդու իրավունքների հետ կապված խնդիրների և քաղաքական զարգացումների մասին, Թուրքիայի կողմից արտահանձնվեց Ադրբեջանին և այնուհետև քրեական պատասխանատվության ենթարկվեց իբր Հայաստանի օգտին արված լրտեսության համար և այս ամենը կատարվեց ի հեճուկս Human Rights Watch-ի, Freedom House-ի, Reporters without Borders և այլ կազմակերպությունների բողոքների, որոնք մեղադրանքները համարում էին կեղծ:[107]
- Իրավապաշտպաններ Լեյլա Յունուսը և նրա ամուսին Արիֆ Յունոսովը ձերբակալվեցին, մեղադրվեցին դավաճանության և ֆինանսական հանցագործությունների մեջ, դատապարտվեցին և տուգանվեցին այն բանից հետո, երբ նրանք իրենց գործունեության ընթացքում քննադատեցին Արցախի վերաբերյալ Ալիևի ռեժիմի պատմությունը, ինչպես նաև դպրոցական դասագրքերում հայերի մասին ներկայացվող կարծրատիպերը:[108]

104 "Azerbaijani Writer's Books Burned," Radio Free Europe/Radio Liberty, February 11, 2013, sec. Azerbaijan, https://www.rferl.org/a/azerbaijani-writer-books-burned-akram-aylisli/24898784.html.

105 "2013 Country Reports on Human Rights Practices - Azerbaijan" (United States Department of State, February 27, 2014), https://www.refworld.org/docid/53284b6114.html.

106 Aimee Hamilton, "Azerbaijan: Journalist Arzu Geybulla Threatened," Index on Censorship, October 10, 2014, https://www.indexoncensorship.org/2014/10/azerbaijan-journalist-arzu-geybullayeva-threatened/.

107 "Turkey/Azerbaijan: Journalist Deported, Imprisoned," Human Rights Watch, April 24, 2014, https://www.hrw.org/news/2014/04/24/turkey/azerbaijan-journalist-deported-imprisoned.

108 "Case History: Leyla Yunus," Front Line Defenders, April 19, 2016, https://www.frontlinedefenders.org/en/case/case-history-leyla-yunus; Adibekyan and Elibegova, Armenophobia in Azerbaijan.

Այսպիսով նրանք, ովքեր մարտահրավեր են նետում ռեժիմին, կապված մարդու իրավունքների հետ, այդ անձինք կապվում են հայերի հետ և հետապնդման ենթարկվում, իսկ նրանք, որոնք կասկածի տակ են դնում հակահայկական ռասիզմի հիմքերը, նույնպես հետապնդվում են և մարգինալացվում:

Ավտորիտարիզմին բնորոշ կերպով Ալիևի ռեժիմն այս ռազմավարությունը կիրառում է նաև արտասահմանում գտնվող անձանց նկատմամբ: Որևէ օտարերկրացի չի կարող Արցախ մուտք գործել Ադրբեջանի տարածքով, իսկ Հայաստանի տարածքով Արցախ մուտք գործող օտարերկրյա այցելուները ներառվում են Ադրբեջանում *անցանկալի անձանց* սև ցուցակում: 130 անձ ներառող այս ցանկը ներառում է եվրոպական պաշտոնյաներ և խորհրդարանի անդամներ, լրագրողներ, հետազոտողներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, օրինակ, HALO Trust ականազերծման ծրագիրը:[109] Ալիևյան ռեժիմի ծայրահեղության օրինակ էր բլոգեր և լրագրող Ալեքսանդր Լապշինի դեպքը, որն Արցախ այցելելուց հետո ձերբակալվեց Բելառուսում, արտահանձնվեց Ադրբեջանին և բանտարկվեց: Դիվանագիտական բանակցությունների արդյունքում ազատ արձակվելուց հետո Լապշինը հաղորդում ներկայացրեց ՄԻԵԴ, որը գտավ, որ ներկայացված հաղորդումը համապատասխանում էր նախնական ապացուցողական չափանիշներին՝ կապված Բաքվում կալանաքի ժամանակ սպանության փորձի և խոշտանգումների հետ:[110] Այսպիսով, ռեժիմը փորձում է լռեցնել ցանկացած ռացիոնալ ձայն, որը կարող էր աշխարհին պատմել Արցախի մասին, ինչը կարող էր հիմք հանդիսանալ հակամարտության լուծման համար և վիճարկեր ալիևյան վարչակարգի կողմից պաշտպանվող և քարոզվող հակահայկական կարծրատիպերն ու ռասիզմը: Ավելին, այդ մարդկանց օրինակ էին դարձնում մյուսներին նման քայլերից ետ պահելու համար:

Մինչ ոմանք պատժվում են, մյուսները խրախուսվում են. 2017 թվականին հայտնի դարձավ, որ ալիևյան ռեժիմը ներգրավված է եղել փողերի լվացման և արևմտյան քաղաքական գործիչներին որպես անմիջական կաշառք, ֆինանսական միջոցներ բաշխելու մի բարդ գործընթացի մեջ, մասնավորապես, նպատակ ունենալով գնել քաղաքական աջակցություն՝ ռեժիմի կողմից մարդու իրավունքների խախտումները քողարկելու, դրանք անհետևանք թողնելու, ինչպես նաև Արցախում սպասվող պատերազմին պատրաստվելու համար:[111] Չնայած այս բացահայտմանը՝ այդ սխեմաները կարծես թե հաջողություն ունեցան, քանի որ վերջին պատերազմի ընթացքում ամենաազդեցիկ համաշխարհային խաղացողները լուռ մնացին:

109 Sara Rajabova, "Foreign Ministry Releases List of Personas Non Grata," AzerNews.Az, August 5, 2013, sec. Nation, https://www.azernews.az/nation/57769.html; "Azerbaijan's Foreign Ministry Releases Names of Persons Declared Persona Non Grata for Paying Illegal Visits to Occupied Territories - FULL LIST," APA Azeri Press Agency, August 2, 2013, https://bit.ly/3qsfWfB; "List of People Declared Personae Non Gratae in Azerbaijan," in Wikipedia, March 22, 2022, https://en.wikipedia.org/w/index.php?title=List_of_people_declared_personae_non_gratae_in_Azerbaijan&oldid=1078540828

110 Լապշինն ընդդեմ Ադրբեջանի, No 13527/18 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան 2018թ.:

111 "In Whose Interest? Analysing How Corrupt and Repressive Regimes Seek Influence and Legitimacy through Engagement with UK Parliamentarians" (Transparency International UK, July 2018), https://www.transparency.org.uk/sites/default/files/pdf/publications/In_Whose_Interest_WEB3.pdf; "The Impact of the Azerbaijani Laundromat - News" (Transparency International, October 10, 2017), https://www.transparency.org/en/news/the-impact-of-the-azerbaijani-laundromat; "The Azerbaijani Laundromat" (Organized Crime and Corruption Reporting Project (OCCRP), September 4, 2017), https://www.occrp.org/en/azerbaijanilaundromat/; Andre Walker, "Westminster Was Bribed By Azerbaijan Ahead Of Armenian Invasion," October 11, 2020, https://www.youtube.com/watch?v=lruywlyeLac

Ինչպես ցույց են տալիս սույն զեկույցում տեղ գտած բացահայտումները, պատերազմն ինքնին ռասիստական ակտ է, իսկ Ալիևի վարչակարգը կարողացել է խուսափել բոլոր հետևանքներից: Ալիևյան ռեժիմը զգալի ջանքեր է գործադրել իր ռասիստական քաղաքականությունների և ագրեսիայի նկատմամբ քննադատությունը լռեցնելու ուղղությամբ, և այս փորձերը հաջողությամբ են պսակվել, քանի որ միջազգային հանրության արձագանքը եղել է անբավարար՝ նպաստելով անպատժելիության մթնոլորտի ստեղծմանը: Այս անգործությունը ավելի է ոգևորում Ադրբեջանի կառավարությանը և արդյունքում կոպտորեն խախտվել են հազարավոր մարդկանց իրավունքներ ոչ միայն 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո, այլ նաև շատ քիչ հույս կա, որ ապագայում այդ խախտումներին վերջ կտրվի:

Կյանքի իրավունքի խախտումներ

Ռազմագերիների դիտավորյալ սպանություն

2020 թվականի նոյեմբերի 9-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտին կնքվեց հրադադար, և ակտիվ ռազմական գործողությունների ավարտն արձանագրող եռակողմ հայտարարության 8-րդ պարբերությամբ հստակ սահմանվեց, որ իրականացվելու է ռազմագերիների, պատանդների և զինված ընդհարման համատեքստում ազատությունից զրկված այլ անձանց փոխանակում:[112] 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո կողմերը մի շարք առիթներով դարձյալ վերահաստատել են ռազմագերիներին և զինված ընդհարման համատեքստում ազատությունից զրկված այլ անձանց փոխանակելու իրենց հանձնառությունը: Այսպիսով, չնայած Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ համաձայնեցված «բոլորը՝ բոլորի դիմաց» փոխանակման ձևաչափին,[113] 2021 թվականի հուլիսի 29-ի դրությամբ ադրբեջանական իշխանությունները վերադարձրել են ընդամենը 104 հայի,[114] որոնց մեջ են եղել են նաև քաղաքացիական անձինք: Նշենք, որ զինված ընդհարման հետևանքով Ադրբեջանում անազատության մեջ գտնվող հայերի ճշգրիտ թիվը մնում է անհայտ:

2021 թվականի հուլիսի 29-ի դրությամբ Ադրբեջանի կառավարությունը հաստատել է միայն 45 անձի (այդ թվում՝ քաղաքացիական անձանց), գերեվարման ու անազատության մեջ պահվելու փաստը: Ադրբեջանի կառավարությունը չի վերադարձրել նրանց՝ պնդելով, որ նրանք ռազմագերիներ չեն, քանի որ այդ անձանց մեծ մասը (սակայն ոչ բոլորը) ադրբեջանական իշխանությունների ձեռքում է հայտնվել 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո, և հետևաբար նշված հայտարարության դրույթները կիրառելի չեն այդ անձանց նկատմամբ, և նրանք ենթակա են քրեական հետապնդման: Հայտնի է նաև, որ ադրբեջանական իշխանությունները քրեական օրենսգրքով նախատեսված մեղադրանքներ են առաջադրել 56 հայ գերիներին, այդ թվում՝ վերոնշյալ 45 անձանց:[115] 2021 թվականի հուլիսի 3-ի դրությամբ 2021 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետության տարածքում գերեվարված ևս չորս հայ զինծառայողների հետ միասին հայրենիք է վերադարձվել նրանցից տասնմեկը:[116] Իսկ 2020 թվականի դեկտեմբերի 12-13-ին Խծաբերդում ու Մեծ Թաղերում գերեվարված խմբի մյուս զինծառայողները դատապարտվել են երկարատև ազատազրկման, իսկ նրանց մի մասը շարունակում է մնալ բանտարկության մեջ Ադրբեջանում:[117]

112 “Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-Министра Республики Армения и Президента Российской Федерации” (Kremlin.ru [официальное интернет-представительство президента России], November 10, 2020), http://kremlin.ru/events/president/news/64384.

113 “Война в Карабахе: Армения и Азербайджан обменялись пленными, Баку арестовал четверых военных,” BBC News Русская служба, December 15, 2020, https://www.bbc.com/russian/news-55318145.

114 «Հայ» տերմինն օգտագործվում է էթնիկ պատկանելությունը սահմանելու համար՝ նկատի ունենալով ինչպես Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերին, այնպես էլ Հայաստանի բնակիչներին:

115 Interview with lawyers representing interests of victims and their families by the fact-finding group members, 14 May 2020.

116 Սիրանուշ Ղազարյան, «15 հայ ռազմագերի վերադարձել են ադրբեջանական գերությունից», Հայաստանի հանրային ռադիո, 3 հուլիսի, 2021թ., https://en.armradio.am/2021/07/03/15-armenian-pows-return-from-azerbaijani-captivity/

117 “Azerbaijan Imprisons 13 Armenian Military Personnel for Six Years,” Radio Free Europe/Radio Liberty, July 23, 2021, sec. Azerbaijan, https://www.rferl.org/a/armenian-military-personnel-prison/31373868.html; Ani Avetisyan, “New Convictions as Trials of Armenian Captives Continues in Azerbaijan,” OC Media, July 30, 2021, https://oc-media.org/new-convictions-as-trials-of-armenian-captives-continues-in-azerbaijan/.

Փաստահավաք խումբը զրուցել է փաստաբանների, գերիների ընտանիքների և հայրենդարձված ռազմագերիների ինչպես նաև հայրենիք վերադարձած նախկին ռազմագերիների հետ (խախտումներից տուժածները): Մասնավորապես, փաստահավաք խմբի անդամները զրուցել են 2020 թվականի դեկտեմբերին Հայաստան վերադարձած նախկին չորս ռազմագերիների հետ: Ստորև ներկայացված դեպքերը հաստատվում են տեսագրություններով, որոնք նկարահանել են հենց կատարողները կամ նրանց գործընկերները, ադրբեջանական զինված ուժերի տարբեր անդամներ կամ նրանց հետ կապված օգտատերեր դրանք տեղադրել են սոցիալական ցանցերում, ինչպես, օրինակ, տելեգրամյան Caliber, Kolorit 18+, Karabah_News ալիքներում, Facebook-ում, Instagram-ում և TikTok-ում: Փաստերի ստուգումը իրականացվել է նաև ՄԻԵԴ-ում տուժողների և նրանց ընտանիքների շահերը ներկայացնող փաստաբանների հետ հարցազրույցների և նույն կամ առնչվող փաստերի վերաբերյալ հայրենիք վերադարձած այլ ռազմագերիների՝ լրատվամիջոցներին տված հարցազրույցների միջոցով: Սույն զեկույցում ներկայացված տեղեկությունները հաստատում են նաև մարդու իրավունքների պաշտպանի, Human Rights Watch-ի, Amnesty International-ի զեկույցների եզրահանգումները, միջազգային լրատվամիջոցների կողմից իրականացված բաց աղբյուրների հետաքննությունները և միջազգային կազմակերպությունների հայտարարությունները:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից սոցիալական տարբեր ցանցերի, նրանց թվում նաև տելագրամյան ալիքների ադրբեջանցի օգտատերերը կանոնավոր կերպով տեղադրել են ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո հայտնված հայ զինծառայողներին բռնության ենթարկելու մասին տեսագրական ապացույցներ: Որոշ դեպքերում գերեվարված անձինք տեսանյութերում իրենք են իրենց ներկայացնում,[118] այլ դեպքերում նրանց ճանաչել են ընտանիքի անդամները: Քանի որ տեսանյութերը տեղադրվել են սոցիալական ցանցերում, բացակայում են դրանց տեսագրման ժամանակի և վայրի մասին մետատվյալները: Սույն զեկույցում վերլուծված բոլոր տեսանյութերը տեղադրվել են 2020 թվականի հոկտեմբերից մինչև 2021 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում:

Փաստահավաք խումբը եզրակացրել է, որ առկա են ադրբեջանական զինված ուժերի կողմից առնվազն չորս հայ զինծառայողի[119] դիտավորյալ սպանության հիմնավոր ապացույցներ: Ավելին, առկա են նաև Կովսականում (Զանգելանում) 61 հոգանոց խմբից երկու ենթախմբի (մեկ դրվագում առնվազն չորս հայ զինծառայող, իսկ երկրորդ դրվագում՝ 13 զինծառայող) դիտավորյալ սպանության ապացույցներ՝ հիմնված սոցիալական ցանցերում տարածված տեսանյութերի, տուժողների ներկայացուցիչների և մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունների, ինչպես նաև բաց աղբյուրների հետաքննության վրա: Ներկայացված դեպքերը սպառիչ չեն: Ադրբեջանը, սակայն, չի ընդունել և չի քննել լայն լուսաբանում ստացած դիտավորյալ սպանության այդ դեպքերը, ինչն ըստ էության, հաշվի առնելով համատեքստը, նշանակում է մարդու իրավունքների խախտումների և պատերազմական հանցագործությունների խրախուսում:

118 @samkarkav, “ Наши армянские пленные в Азербайджане после 9 ноября до сих пор там!” December 1, 2020, https://t.me/sisumasis/188.

119 «Հայ» տերմինն այստեղ և բոլոր այլ համատեքստերում ռազմական գործողությունների՝ համազգեստ կրող մասնակիցների մասին խոսելիս վերաբերում է նրանց էթնիկ պատկանելությանը և ներառում է Արցախի պաշտպանության բանակի անդամներին, հայաստանցի և արցախցի համազգեստ կրող կամավորներին և պահեստայիններին, որոնք միացել են կանոնավոր զինված ուժերին:

Որոշ տեսանյութերում կարելի է տեսնել կատարողների դեմքերը: Ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները ոչ միայն նկարահանել են իրենց մասնակցությունը ռազմագերիների սպանություններին, խոշտանգմանը, խեղմանը, այլև հետևողականորեն տարածել են այդ նյութերը սոցիալական ցանցերում կամ դրանք ուղարկել են տուժողների ընտանիքի անդամներին: Նման գործելաոճը, մասնակիցների թիվը, այդ թվում՝ նրանց, որոնք քաջալերում են կատարողների հանցագործությունները, ինչպես նաև տեսանյութերի քանակն ու դրանց տարածման պարբերականությունը, վկայում են պատերազմական հանցագործություններ հանդիսացող արարքների համար քրեական հետապնդման չենթարկվելու վստահության մասին, ինչի մասին ներկայացվում է հաջորդիվ:

Ադրբեջանի որևէ բարձրաստիճան քաղաքական կամ զինվորական պաշտոնատար անձ հրապարակայնորեն չի դատապարտել վերը նկարագրված արարքները: Հետևաբար՝ վստահությամբ կարելի է արձանագրել, որ ադրբեջանական պետությունն առնվազն լռելյայն հավանություն է տվել պատերազմական այս հանցագործություններին: Ավելին, այս տեսանյութերը տեղադրելու և տարածելու համատարած և շարունակական բնույթը կարող է նաև վկայել հայ բնակչությանն ահաբեկելու դիտավորության մասին:

Ստորև վերլուծված տեսանյութերում բոլոր սպանված զինծառայողները կրում են զինվորական համազգեստ և հստակ տարբերակվում են քաղաքացիական բնակչությունից:

Ռազմագերիների դիտավորյալ սպանությունը զինված ընդհարման համատեքստում ստացված վնասվածքի կամ գերեվարման հետևանքով ռազմական գործողություններին այլևս անմիջականորեն չմասնակցող կոմբատանտի դիտավորյալ սպանություն է և արգելված է ՄԻՄԻ-ով՝ որպես կյանքի իրավունքի խախտում, և ինչպես պայմանագրային, այնպես էլ սովորութային ՄՄԻ-ով՝ որպես լուրջ խախտում և պատերազմական հանցագործություն: Այս կարգավորումը վերաբերում է նաև այն իրավիճակներին, երբ կոմբատանտը հանձնվել է՝ վայր դնելով իր զենքը կամ այլևս չունենալով պաշտպանության միջոցներ: Ժնևյան 3-րդ կոնվենցիայի (ԺԿ III) 4-րդ հոդվածում նշված այն անձինք, որոնք հայտնվել են թշնամու իշխանության տակ, պաշտպանության ենթակա անձինք են և պետք է օգտվեն միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով երաշխավորված պաշտպանությունից՝ ընդհուպ մինչև վերջնական ազատում և հայրենադարձում: Դիտավորյալ սպանությունն արգելված է և որակվում է որպես լուրջ խախտում՝ անկախ արարքի շարժառիթից: Արգելված են նաև «գթասրտությունից մղված սպանությունները», որոնց նպատակն է «վերջ դնել» վիրավոր կոմբատանտների «տառապանքներին»: ՄԻՄԻ-ն նաև կյանքի իրավունքի խախտում է համարում կյանքից կամայականորեն զրկելը, ներառյալ արտադատական սպանության ենթարկելը, այսինքն՝ անձի դիտավորյալ սպանությունը, որը նախատեսված չէ իրավական համակարգով:

Յուրի Ադամյանի արտադատական մահապատիժը

Առաջին դեպքը լայն հանրությանը հայտնի դարձավ, երբ 2020 թվականի հոկտեմբերի 15-ին Տելեգրամում տարածվեցին երկու տեսանյութեր: Տեսանյութերում ներկայացվում է երկու տղամարդու՝ ադրբեջանական զինված ուժերին հանձնվելը և արտադատական սպանություն

ենթարկվելը:[120] Երկու տեսանյութերն էլ նկարահանվել են Արցախի Հադրութ քաղաքում: Արցախի իշխանությունների տվյալներով՝ առաջին տեսանյութում տեսանելի այդ երկու տղամարդիկ Հադրութ քաղաքի 73-ամյա բնակիչ Բենիկ Հակոբյանը (քաղաքացիական անձ, ում պատմությունը ներկայացված է ստորև) ու Հադրութի շրջանի Տյաք գյուղի 25-ամյա բնակիչ Յուրի Ադամյանն են (Արցախի պաշտպանության բանակի կամավորական):

Առաջին տեսանյութում ցուցադրված է՝ ինչպես են այս երկու հայ տղամարդիկ հանձնվում ադրբեջանական զինված ուժերի համազգեստով տղամարդկանց: Գերեվարվածներից ավելի երիտասարդը՝ Յուրի Ադամյանը, կրում է զինվորական համազգեստ (կամուֆլյաժ, սաղավարտ և զրահաբաճկոն): Տեսանյութում երևում է, թե ինչպես Յուրի Ադամյանը, զենքի սպառնալիքի ներքո հետևելով ադրբեջանցի զինծառայողի ռուսերեն տրված ցուցումներին, վայր է դնում զենքը, հանում զրահաբաճկոնը, և, այլևս չունենալով պաշտպանության միջոցներ, հանձնվում է մի խումբ ադրբեջանցի զինծառայողների: Ռուսերեն տրված ցուցումներին հետևելով՝ նա քայլում է ադրբեջանցի զինծառայողների ուղղությամբ, վերջիններս հրահանգում են նրան պառկել գետնին: Տեսանյութից երևում է, որ Յուրի Ադամյանը քայլում է ձեռքերը վեր բարձրացրած (Տե՛ս Պատկեր 7.1-ը):[121]

Պատկեր 7.1. Յուրի Ադամյանը բարձրացրած ձեռքերով և Բենիկ Հակոբյանը հանձնվում են իրենց շրջապատած ադրբեջանական զինծառայողներին նրանց զենքերի սպառնալիքի ներքո, 2020թ.հոկտեմբեր: (Աղբյուր՝ Karabakh_news տելեգրամյան ալիք)

Տեսանյութի վերջում Յուրին երևում է գետնին պառկած, իսկ ադրբեջանցի զինծառայողները զենքը պահում են նրա վրա: Ադրբեջանցի զինծառայողները կրում են ադրբեջանցի զինծառայողների մասնակցությամբ այլ տեսանյութերում նկատված համազգեստին համապատասխան համազգեստ, ներառյալ համազգեստի ձևը, ուսապարկերը, սաղավարտը և զենքերը (Տե՛ս Պատկեր 7.2): Նման համազգեստ ադրբեջանցի զինծառայողները կրում են նաև այլ տեսանյութերում[122] (Տե՛ս Պատկեր 7.3):

120 Nick Waters, "An Execution in Hadrut," Bellingcat, October 15, 2020, https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an-execution-in-hadrut-karabakh/. @antituran, "Вот так азербайджанские солдаты поступают с армянскими военнопленными, им не указ ни Женевская конвенция, ни общечеловеческие принципы," October 15, 2020, Telegram video, https://mega.nz/folder/60kEFQja#yqkGDf8NTbSy3GWJzuOHiw.

121 «Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ» (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 27 սեպտեմբերի, 2021թ.), https://artsakhombuds.am/sites/default/files/202109/3.%2027.09.2021%20Open%20Report.pdf:

122 Համեմատության համար տե՛ս @MaidenTower, "Видеозапись освобождённого от оккупации села Шукурбейли Джебраильского района-Минобороны АР," հոկտեմբերի 7, 2020., https://t.me/MaidenTower/4416; @Caucasian_bureau, "Город Физули и 10 сел Физулинского района освобождены от армянской оккупации...," հոկտեմբերի 17, 2020., https://t.me/Caucasian_bureau/1541; @MaidenTower, "В сети распространяется видео с поднятием флага Азербайджана в освобождённом от армянской оккупации селе Шукурбейли Джебраильского района Азербайджана," հոկտեմբերի 7, 2020.., https://t.me/MaidenTower/4409

Պատկեր 7.2. 44-օրյա պատերազմի ընթացքում այլ տեսանյութերում երևացող ադրբեջանցի զինծառայողները Շուքուրբեյլիում (Աղբյուրը՝ Maiden Tower տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.3. Բենիկ Հակոբյանին և Յուրի Ադամյանին գերեվարած ադրբեջանցի զինծառայողները (Աղբյուրը՝ Antituran տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.4. Երկու տղամարդ, ձեռքերը կապած, փաթաթված դրոշներով, գնդակահարվում են (Աղբյուրը՝ «Antituran» տելեգրամյան ալիք):

Հաջորդ տեսանյութում երևում են ձեռքերը մեջքի հետևում կապված, Հայաստանի և Արցախի դրոշներով փաթաթված երկու տղամարդ, որոնց գնդակահարում են համապատասխան հրաման ստանալուց հետո: Արցախի դրոշով փաթաթված տղամարդը կրում էր կապույտ վերնաշապիկ և կամուֆլյաժե տաբատ՝ ճիշտ այնպես, ինչպես Յուրի Ադամյանը հանձնման պահին: Նույնական են նաև երկու տղամարդկանց մազերի գույնը և կտրվածքը (Համեմատիր Պատկեր 7.1 և 7.4-ը): BBC-ի թարգմանության համաձայն՝ մինչև կրակոցներ արձակելը ինչ-որ մեկն ադրբեջաներեն հրամայում է. «Նշանառեք նրանց գլուխները»:[123]

BBC-ն[124] և Bellingcat-ը[125] իրականացրել են այս դեպքի մանրամասն քննություն և ստուգաճշտում: Խորհրդատու փորձագետը նկատել է, որ «Սրանք իսկական փամփուշտներ են, սա իսկական սպանություն է: Սա իրական է, և ես հիմք չեմ տեսնում ենթադրելու, որ այն բեմադրված է»:[126] ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը նույնպես անդրադարձել է այս դեպքին՝ նշելով, որ «ադրբեջանական զինծառայողների կողմից գերեվարված զինվորական համազգեստով երկու հայի արտադատական սպանությունը պատկերող տեսագրությունների՝ ՀԼՄ-ների կողմից իրականացված խորացված ուսումնասիրությունները բացահայտել են համոզիչ և չափազանց անհանգստացնող տեղեկություններ»:[127] Տուժողների ընտանիքների շահերը ներկայացնող փաստաբան Սիրանուշ Սահակյանի խոսքով՝ Յուրի Ադամյանի ընտանիքի անդամները ճանաչել են իրենց որդուն տեսագրության մեջ:[128] Պատերազմից տուժածների շահերը ՄԻԵԴ-ում ներկայացնող հայ փաստաբանները 2021 թվականի մայիսի 3-ին հայտարարել են, որ Յուրի Ադամյանն ազգությամբ հայ այն յոթ զինծառայողներից էր, որոնք դիտավորությամբ

123 “Nagorno-Karabakh Conflict: ‘Execution’ Video Prompts War Crime Probe,” BBC News, October 24, 2020, sec. Europe, https://www.bbc.com/news/world-europe-54645254.

124 Նույն տեղում:

125 Waters, “An Execution in Hadrut.”

126 “Execution’ Video Prompts War Crime Probe.”

127 “Nagorno-Karabakh Conflict: Bachelet Warns of Possible War Crimes as Attacks Continue in Populated Areas” (UNHR Office of the High Commissioner, November 2, 2020), https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=26464&LangID=E.

128 Հարցազրույց փաստաբան Սիրանուշ Սահակյանի հետ, 19 մայիսի, 2021թ.:

սպանվել են Ադրբեջանի հսկողության տակ հայտնվելուց հետո:[129] Ադրբեջանական իշխանությունները շարունակաբար ժխտում են այդ մեղադրանքը և պնդում են, որ սպանությունը բեմադրված է, և չեն իրականացնում դեպքի քննություն: 2021 թվականի հուլիսի 29-ի դրությամբ ադրբեջանական իշխանությունները չէին վերադարձրել Յուրի Ադամյանի աճյունը: Այս հանգամանքը խորացնում է նրա ընտանիքի տառապանքը:

Արթուր Մանվելյանի սպանությունը

2020 թվականի հոկտեմբերի 24-ին տելեգրամյան ալիքներից մեկը տարածեց հայկական համազգեստով զինծառայողի գնդակահարության տեսանյութ:[130] Տեսանյութում երևում է, որ ադրբեջանական համազգեստով զինծառայողը մոտենում է Արթուր Մանվելյանին և մոտ տարածությունից գնդակահարում նրան՝ անդադար ռուսերեն հայհոյելով (Տես Պատկեր 7.5): Տուժողի շահերը ՄԻԵԴ-ում ներկայացնող փաստաբանի խոսքերով՝ ընտանիքի անդամները սպանվածին նույնականացրել են 41-ամյա Արթուր Մանվելյանի հետ: Ըստ փաստաբանի՝ Արթուրը ծանր վիրավորում էր ստացել և չէր կարողացել լքել ռազմաճակատն այն ժամանակ, երբ ադրբեջանական զինված ուժերը մոտեցել էին նրանց դիրքերին: Մինչև գնդակահարելն ադրբեջանցի զինծառայողի մոտենալու ձևից ակնհայտ է, որ վերջինս չի վախենում, որ Մանվելյանը կկրակի, ինչը վկայում է այն մասին, որ Մանվելյանը եղել է անզեն կամ առնվազն չի փորձել զենքով պաշտպանել իրեն կամ հարձակվել ադրբեջանցի զինծառայողի վրա: Այս պնդումը հաստատվում է նրանով, որ տեսանյութում Մանվելյանի մոտ չի երևում որևէ հրազեն կամ որևէ վկայություն առ այն, որ նա մասնակցում է ռազմական գործողություններին: Տեսանյութում ակնհայտ երևում է, որ Մանվելյանը սպանվելու պահին շարքից դուրս եկած անձ էր («hors de combat»), այսինքն՝ այլևս չէր մասնակցում ռազմական գործողություններին:

Պատկեր 7.5. Ադրբեջանցի զինծառայողի կողմից անզեն և վիրավոր Արթուր Մանվելյանին մոտ տարածությունից գնդակահարելու պահը (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

129 «Հայ իրավապաշտպան. գերեվարվածներից 19-ը խոշտանգվել և սպանվել են ադրբեջանցի զինծառայողների կողմից», News.Am, 3 մայիսի, 2021թ., https://news.am/arm/news/641946.html

130 @karabakh_news, https://mega.nz/file/j1N2BTAL#qn4MTsZ_MR9ViYHfv5nWSSjv_iOn1RidmXVAT0hdvw8

Հայ զինծառայողների խումբ No1 Կովսականում (Զանգելան)

Տելեգրամյան ալիքներով 2020 թվականի հոկտեմբերի 30-ին տարածված մեկ այլ տեսանյութում[131] ցուցադրվում են հայկական զինվորական համազգեստով առնվազն 18 տղամարդկանց մարմիններ՝ մի մասի ձեռքերը և/կամ ոտքերն ու աչքերը կապած (գլուխները ծածկված), իսկ մյուսներն՝ առանց հագուստի, շարված գետնին: Ադրբեջանական համազգեստով մի զինծառայող քայլում է նրանց մոտով և տեսագրում մարմինները: Ըստ «The Center for Information Resilience» (@Cen4infoRes) հետաքննությունների տնօրեն, թվային ապացույցների հետաքննող Բենջամին Սթրիկի (Benjamin Strick)՝ 2020 թվականի հոկտեմբերի 24-ի արբանյակային պատկերները ցույց են տալիս Կովսականում (Զանգելանում)՝ շինության մոտակայքում[132] համազգեստով մարմինների շարք (Տես Պատկեր 7.6-ը):

Պատկեր 7.6. Կովսականում (Զանգելանում) հայկական համազգեստով զինծառայողների՝ գետնին շարված մարմինները (Աղբյուր՝ Բենջամին Սթրիկի թվիթերյան էջ):

Ավելի ուշ հայտնվեցին մի շարք տեսանյութեր, որոնցում պատկերված են սպանված հայ զինծառայողներ՝ տարբեր վայրերում, իսկ նրանցից մի քանիսին քարշ է տալիս մեքենան: [133]Փաստահավաք խմբի անդամները կարողացել են պարզել, որ տասնութ զինծառայողներից առնվազն չորսի ձեռքերը կապված են (Տես Պատկեր 7.7):

Այս տեսանյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ շարքի՝ կապված ձեռքերով վերջին չորս զինծառայողները ավելացվել են ավելի ուշ (Տես Պատկեր 7.8): Այն փաստը, որ մահացած զինծառայողները կապկպված են, խոսում է այն մասին, որ նրանք կենդանի վիճակում են հայտնվել ադրբեջանական վերահսկողության ներքո: Հաշվի առնելով ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու համատեքստը և հաստատված պրակտիկան՝ կարելի է ենթադրել է, որ նրանք մահապատժի են ենթարկվել:

131 @qarabagxeber, "Vətən torpağını murdarlayan hər kəsin sonu bu cür olacaq," October 30, 2020, https://mega.nz/folder/u8EHFYQB#o9aKRTxhwwZn4Q2UlTO65A.

132 Բենջամին Սթրիք (@BenDoBrown), «Տեսանյութի աշխարհագրական տեղորոշում, որտեղ երևում են դիեր, մի քանիսը ձեռնաշղթաներով, մյուսները՝ առանց հագուստի, Զանգելանում, #Ղարաբաղ...», թվիթերյան գրառում, հոկտեմբերի 30, 2020թ., https://twitter.com/BenDoBrown/status/1322200787141971971

133 Համապատասխան տեսանյութերն ու լուսանկարները հասանելի են հղումով՝ https://mega.nz/folder/6olHUI4L#x-EcV_V0aPLCpq3FlTJQp-Q

Պատկեր 7.7. Հայկական համազգեստով զինծառայողների դիեր, ոմանք՝ կապած ձեռքերով գետնին շարված (Աղբյուրը՝ Qarabagxeber տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.8. 14 մարմիններ շարված (ձախից). 4 մարմիններ ավելացվել են 14-ի կողքին՝ ձեռքերը կապված (աջից) (Աղբյուր՝ Qarabaginfo18 և Kolorit_18+ տելեգրամյան ալիքներ):

Ըստ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի զեկույցի՝ առճակատումը և հայ զինծառայողների դիտավորյալ սպանությունը տեղի է ունեցել Կովսականում (Զանգելանում), որտեղ 2020 թվականի հոկտեմբերի 21-ին ուղարկվել է 61 զինծառայողից կազմված խումբ:[134] Մարդու իրավունքների պաշտպանը նշել է, որ հայ զինծառայողների՝ նոր սափրված լինելու փաստը հուշում է, որ նրանք եղել են միջադեպի օրվանից քիչ ժամանակ առաջ Կովսականի ուղղությամբ ուղարկված ստորաբաժանումից:

Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ զորամասի մոտ շարքով պառկած որոշ զինծառայողներ նույն զինծառայողներն են, որոնց մարմինները մեկ այլ տեսանյութում ադրբեջանական համազգեստով զինծառայողները ճանապարհով քարշ են տալիս: Սույն եզրահանգումը հաստատվում է այն հանգամանքով, որ մահացած զինծառայողների ոտքերը կապված էին, իսկ հագուստը՝ դեպի վեր բարձրացված: Փաստահավաք խումբը վերլուծել է երեք տեսագրություն, որտեղ սպանված հայ զինծառայողներից մեկը նման է Կովսականում շարված զինվորներ պատկերող տեսանյութի, քարշ տրվող երկու հայ զինծառայողներ պատկերող տեսանյութի և ադրբեջանական տելեգրամյան ալիքներով տարածվող և իբր Կովսականում բռնված դիվերսիոն խումբ ներկայացնող տեսանյութի մեջ առկա զինվորներից մեկին: Մարմիններն ունեն համանման վերքեր, կրում են կարմրավուն շապիկ, և նման են դեմքի դիմագծերը: Սա հուշում է, որ դա կարող է լինել նույն մարդը (Տես Պատկեր 7.9):

Պատկեր 7.9. Սպանված հայ զինծառայողի մարմինը քարշ են տալիս (ձախ կողմում): Կովսականում (աջ կողմում) շարքով դրված հայ զինծառայողի դի (Աղբյուրը՝ «Bunk_18» տելեգրամյան ալիք):

134 Error! Hyperlink reference not valid.

Ըստ Հայաստանի ՄԻՊ-ի հաղորդագրության՝ Կովսականի խմբի զինծառայողներից առնվազն երեքը, որոնք գերեվարվել և հետագայում հայրենադարձվել են, հայտնել են, որ 2020 թվականի հոկտեմբերի 21-ին տեսել են Կովսականի միջնակարգ դպրոցում պահվող չորս հայ գերիների: Նրանք նկարագրել են, որ տեսել են գերիների ձեռքերը կապված այնպիսի մի սինթետիկ պարանով, որը հաճախ օգտագործվում է գյուղատնտեսության մեջ:[135] Փաստահավաք խմբի անդամները դիտարկել են նման պարանի կիրառումը հայ ռազմագերիների հետ այլ տեսանյութերում (տե՛ս Պատկեր 7.10):

Հայրենադարձված հայ զինծառայողների ցուցմունքները դիակների ձեռքերի կապված լինելու մասին, ինչպես նաև 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանցի զինծառայողների կողմից գերեվարված կամ մարտական դիրքում հայ զինծառայողներին մահապատժի ենթարկելու հաստատված դեպքերի փաստերը հուշում են, որ առնվազն տասնութ հոգանոց այդ խմբի առնվազն չորս հայ զինծառայող մահապատժի է ենթարկվել ադրբեջանցի զինծառայողների կողմից: Տեսանյութում երևում են դիերի կողքին գտնվող ադրբեջանցի զինծառայողներից մի քանիսի դեմքերը, ինչպես նաև նրանց համազգեստի տեսակը (Տե՛ս Պատկեր 7.11):

Դիերի մոտ կանգնած ադրբեջանցի զինծառայողները կրում են Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության (ՊՍԾ) համազգեստ՝ վերջին տարիներին կիրառվող եզակի «կանաչ անտառային» նախշերով համազգեստ: Դիզայնը ներառում է սև, մուգ կանաչ և ջրային կանաչ հիշեցնող անտառային գույն՝ ծովային կանաչ ֆոնի վրա (Տե՛ս Պատկեր 7.12):

Պատկեր 7.10. Ադրբեջանցի զինծառայողները սպիտակ սինթետիկ պարանով կապում են հայ գերիների ձեռքերը (Աղբյուրը՝ @elnuromarov7 և @natiq.eliyev948 Տիկտոկի օգտահաշիվներ):

135 https://www.ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf

Պատկեր 7.11. Ադրբեջանցի զինծառայողները՝ սպանված հայ զինծառայողների դիերի մոտ լուսանկարվելիս (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.12. Դիերի մոտ կանգնած ադրբեջանցի զինծառայողների համազգեստ (ձախից): Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության համազգեստը (աջից) (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք և ՊՍԾ-ի պաշտոնական կայք):

Մի խումբ հայ զինծառայողների սպանությունը

2020թ.-ի հոկտեմբերի 28-ին ադրբեջանական տելեգրամյան ալիքներից մեկում հայտնվեց հայ զինծառայողների սպանված մարմինները պատկերող տեսանյութ, որտեղ մեկնաբանող ձայնը նշում էր, որ Զանգելանում ոչնչացվել էր հայկական դիվերսիոն խումբ:[136] Տեսանյութում երևում են հայկական համազգեստով մի շարք զինծառայողներ, որոնցից ոմանք ունեին գլխի վրա հրազենային կրակոցի հետքեր (Տես Պատկեր 7.13): Նրանք բոլորը բերանքսիվայր պառկած են գետնին:

136 @caliber_az_official, “ВС Азербайджана ликвидировали армянскую РДГ в Зангилане,” October 28, 2020, Telegram video, https://mega.nz/file/r18xGKBD#P5hj0TbPbdZia7-Nz_Q-omLt8r2eTj0sR9rqEeuWQcM

Պատկեր 7.13. Հայ զինծառայողների դիերը Կովսականում՝ գլխի շրջանում կրակոցներով (Աղբյուր՝ Caliber տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.14. Հայ զինծառայողների մեծ խումբ՝ ձեռքերը կապած, գետնին նստած (Աղբյուրը՝ Xalqxalq տելեգրամյան ալիք):

2020թ.-ի դեկտեմբերի 15-ին հայտնվեց կենդանի հայ զինծառայողների տեսանյութ (առնվազն 13 հոգի), որոնք ծնկած, ձեռքերը կապած վիճակում նստած են գետնին: Ադրբեջաներեն ձայնը տեսանյութի մեջ նշում է՝ «Բռնել ենք էս շան որդիներին: Բոլորին սպանելու ենք»:[137]

Մեկ այլ տեսանյութ հայտնվեց տելեգրամում, որտեղ երևում էին ձեռքերը կապած հայ զինծառայողներին արդբեջանցի զինծառայողների կողմից սպանելու պահը, իսկ շրջակայքում ընկած են սպանված հայ զինծառայողների մարմիններ:[138] Տեսանելի է առնվազն յոթ հայ զինծառայողի մարմին, որոնք պառկած են գետնին և չեն շարժվում, ինչից կարելի է ենթադրել, որ նրանք մահացած են: Այս զինծառայողներից առնվազն 4-ի

137 @xalqxalq, "İgidlərimiz dığaları belə əsir götürdü," December 15, 2020, https://mega.nz/file/L5k0DLxJ#nWS0pdDr5-jN-FYJtqm8tUlHJJLuqo184J97TtW2V_w0.

138 @ararathau, "Твари расстреливают армянских солдат фактически в упор," December 16, 2020, https://mega.nz/file/b5tXFBDY#EwfFifDcVhnxH-ss4IwAfkphH16oDe2Rx4xsxZU7oS4.

ձեռքերը կապված են մեջքի հետևում, ինչը հուշում է, որ նրանք գերվերավել են կենդանի վիճակում: Ադրբեջանական համազգեստով զինծառայողը կրակում է հայ զինծառայողների վրա: Հոկտեմբերի 28-ի տեսանյութի և այս տեսանյութի գտնվելու վայրը թվում է՝ նույնն են, նման են նաև որոշ զինծառայողների դիմագծերը, ինչից կարելի է ենթադրել, որ երկու տեսանյութերն էլ պատկերում են նույն հայ զինծառայողներին (Տես Պատկեր 7.15):

Առնվազն չորս զինծառայողի կարելի է տեսնել կապված ձեռքերով: Հայ զինծառայողներից մեկի ձեռքերը կապված են սպիտակ պարանով (Տես Պատկեր 7.16): Ինչպես նշվեց վերևում, փաստահավաք խմբի անդամները նկատել են, որ ադրբեջանցի զինծառայողները, հայ զինծառայողներին գերեվերալիս, նրանց ձեռքերը կապելու համար օգտագործել են այդպիսի սպիտակ պարան:[139]

Պատկեր 7.15. Հայ զինծառայողներով երկու տեսանյութերի գտնվելու վայրերի պատկերների կոլաժ (Աղբյուրը՝ Ararat տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.16. Հայ զինծառայողների դիերը՝ կապված ձեռքերով (Աղբյուրը՝ Ararat տելեգրամյան ալիք):

Հոկտեմբերի 28-ի վերոնշյալ դիվերսիոն խմբի մասին պատմող տեսանյութում զոհված զինծառայողներից մեկը ճաղատ է: Մահապատժի պահին արված տեսանյութում սպանված հայ զինծառայողներից մեկը նույն տեսքն ունի. ճաղատ է և կրում է նմանատիպ համազգեստ (Տես Պատկեր 7.17): Ենթադրյալ դիվերսիոն խմբի մասին պատմող տեսանյութում դիերը ցրված են, ինչը վկայում է այն մասին, որ մահապատժից հետո մարմինները քարշ են տրվել և անկանոն դրվել գետնին, դեմքով ցած՝ իբր դարանակալման տպավորություն թողնելու նպատակով, որպեսզի նույնականացումը անհնարին դարձվի:

Ավելին, 2020 թվականի նոյեմբերին մեկ այլ տեսանյութ հայտնվեց, որտեղ մի խումբ հայ զինծառայողներ հարկադրաբար քայլում են, ձեռքերը կապված վիճակում, ադրբեջանցի զինծառայողների ուղեկցությամբ: Հայ զինծառայողներից ոմանք նման են շարքով ծնկած զինծառայողներին (Տես Պատկեր 7.18):

139 @elnuromarov7, " #esgerlermiziqoru #azerbaycan #turkiyem #pakistan#qarabağ," TikTok video, https://bit.ly/3MmsAY8; @ararathau, " Азербайджанские солдаты избивают армянского военнопленного," January 15, 2021, Telegram video, https://t.me/ararathau/5487.

Պատկեր 7.17. Ձախ կողմում՝ Կովսականում սպանված հայ զինծառայողի դի: Աջ կողմում սպանված հայ զինծառայողի դի է այն տեսանյութից, որտեղ պնդում է արվում, թե հայկական դիվերսիոն խումբ է ոչնչացվել (Աղբյուրը՝ Ararat և Caliber տելեգրամյան ալիքներ):

Պատկեր 7.18. Գերեվարված, քայլող հայ զինծառայողների պատկերներ (ձախից): Շարված հայ զինծառայողների պատկերներ (աջից) (Աղբյուրը՝ Karabah_news և Xalqxalq տելեգրամյան ալիքներ):

Պատկեր 7.19. Ադրբեջանցի զինծառայողը տեսանյութ է նկարահանում գերեվարված հայ զինծառայողների հետ (Աղբյուրը՝ @L_Team10 թվիթերյան միկրոբլոգ):

Այստեղ տեսանելի է տեսանյութը նկարող ադրբեջանցի զինծառայողի դեմքը (Տես Պատկեր 7.19):

Նույն տեղում նկարված երկու տեսանյութերի[140] գոյությունը, որտեղ հայ զինծառայողները երևում են կենդանի վիճակում, իսկ երկրորդում՝ գետնին պառկած, ինչպես նաև այն փաստը, որ սպանված հայ զինծառայողների ձեռքերը կապված են, իսկ ադրբեջանցի զինծառայողը կրակում է նրանցից առնվազն մեկի վրա, թույլ են տալիս եզրակացնել, որ հայ զինծառայողների այս խումբը մահապատժի է ենթարկվել: Այս եզրակացությունը նաև հիմնավորվում է այն փաստով, որ ենթադրյալ դիվերսիոն խմբի անդամների մեծամասնության մարմիններն ունեն հրազենային վիրավորումներ գլխի հատվածում:

Վիրավոր հայ զինծառայող խրամատում

2020 թվականի նոյեմբերի 15-ին Տելեգրամի ալիքներից մեկը հրապարակեց ադրբեջանցի զինծառայողի կողմից հայկական զինվորական համազգեստով շարքից դուրս եկած (hors de combat) զինծառայողի՝ մոտ տարածությունից գնդակահարության տեսանյութ: [141] Տեսանյութում հայկական համազգեստով զինծառայողը շարժում է իր աջ ձեռքը՝ փորձելով պաշտպանել իրեն, որը նաև նշանակում է, որ նա ողջ էր, երբ ինքնաձիգով զինված ադրբեջանական զինվորական համազգեստով զինծառայողը մոտենում է նրան և շատ մոտ հեռավորությունից կրակահերթ արձակում (առնվազն 15 գնդակ)՝ ուղիղ թիրախավորելով՝ սպանելու նպատակով (Տես Պատկեր 7.20):

Նախքան կրակելը հետևից լսվում է ադրբեջաներեն խոսացողի ձայն. «Բռնեցինք նրան»: Ադրբեջանցի զինծառայողը գիտի, որ խրամատում հայ զինծառայողը ողջ է, քանի որ հետին պլանից լսվում է մեկ այլ ձայն, որն ադրբեջաներեն հրահանգում է. «Կրակի՛ր, կրակի՛ր մինչև վերջին փամփուշտը, որ մեռնի»: Հայ զինծառայողին գնդակահարելու պահին ադրբեջանցի զինծառայողի դիրքը հուշում է, որ հայը որևէ վտանգ չի ներկայացնում նրա համար: Տեսանյութում չկա որևէ ապացույց, որ գնդակահարվածը շարքից դուրս եկած անձ (hors de combat) չէր: Հայ զինծառայողի ձեռքում կամ նրա անմիջական մերձակայքում զենք չի երեւում: Ծանր վիրավոր լինելու փաստի հետ մեկտեղ, սա հուշում է, որ մահապատժի ենթարկված զինծառայողը եղել է շարքից դուրս եկած:

140 Տես ծանոթագրություն 27 և 28:

141 @kolorit_18, դեկտեմբերի 23, 2020թ., https://mega.nz/file/21lnlTZR#emUAWZeN22BI13fy_0o_EO01Drt1Mcfeifq2vB41dR4

Պատկեր 7.20. Ադրբեջանցի զինծառայողը մոտ տարածությունից կրակում է շարքից դուրս եկած հայ զինծառայողի վրա (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Էրիկ Մխիթարյան

2020 թվականի նոյեմբերի 24-ին տելեգրամյան ալիքներում[142] հայտնվեց մի տեսանյութ, որտեղ երևում է գետնին պառկած հայ զինծառայող՝ շրջապատված ադրբեջանական զինվորական համազգեստով առնվազն երեք զինծառայողներով, որոնք իրենց զենքերն ուղղել են նրա վրա և ձեռքերը դրել նրա պարանոցին և հրահանգում են անընդհատ կրկնել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է» (Տես Պատկեր 7.21)։ Հայ զինծառայողի ինքնությունը հետագայում հաստատվել է՝ Էրիկ Մխիթարյան։ 2020 թվականի նոյեմբերի 30-ին ՄԻԵԴ-ը բավարարել էր Էրիկ Մխիթարյանի նկատմամբ միջանկյալ միջոց կիրառելու միջնորդությունը, սակայն ադրբեջանական իշխանությունները պաշտոնապես չէին հաստատել նրա գերեվարման փաստը և գտնվելու վայրը։ Նրա ճակատագիրն անհայտ էր մինչև 2021 թվականի ապրիլը։ 2021 թվականի ապրիլի 19-ին ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչը նշել է, որ Էրիկի մասունքները նույնականացվել են[143] և հաստատվել ԴՆԹ չորս փորձաքննություններով։[144] Այն փաստը, որ Էրիկը գերեվարվել է կենդանի վիճակում հուշում է, որ նա սպանվել է ադրբեջանական գերության մեջ։

Այդ տեսանյութում հստակ կարելի է տեսնել այն ադրբեջանցի զինծառայողների դեմքերը, որոնց հետ Էրիկին կենդանի վիճակում տեսել են վերջին անգամ (Տես Պատկեր 7.22)։

Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցի ժամանակ հայրենիք վերադարձած

142 @ararathau, "Видеоматериал с нашим пленным, локация и дата съёмки неизвестны," January 7, 2021, https://mega.nz/file/LkFxUZDK#AbTJbfOPBPs1q-edRXdAyWROI-yRVSWM8e_2k-FlaCY.

143 Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ, "Ադրբեջանը խախտել է Եվրադատարանի կողմից իր դեմ կայացրած որոշումները:," Facebook, April 19, 2021, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0s8DRaTcDc1MNDGQNwpSM8aTqtQyToAJpbcseKeC8pPjwvQopr54qGRDBa7JSvkel&id=108224237477781.

144 «Ադրբեջանում երրորդ գերու մահվան դեպքը. ՄԻԵԴ-ը բավարարել է միջանկյալ միջոց կիրառելու միջնորդությունը» Առաջին ալիք, Լուրեր, ապրիլի 19, 2021թ., https://www.1lurer.am/en/2021/04/19/Third-case-of-a-captive's-death-in-Azerbaijan-ECHR-upheld-the-motion-for-an-interim-measure/458236

Պատկեր 7.21. Գետնին պառկած Էրիկ Մխիթարյանին ադրբեջանցի զինծառայողները կարգադրում են ասել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է» (Աղբյուրը՝ Ararat տելեգրամյան ալիք):

ռազմագերի Արմանը (իրական անունը չէ) հայտնել է, որ իր ծառայակիցներից Էրիկ Մխիթարյանը սպանվել է Հադրութի շրջանում ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո գտնվելու ընթացքում: Արմանը նշել է, որ վերջին անգամ Էրիկին տեսել են 2020 թվականի հոկտեմբերին Հադրութի շրջանում: Արմանի խոսքերով՝ Էրիկը վիրավորվել էր ոտքերից:[145]

2021 թվականի մայիսի 3-ին ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո հայտնված ազգությամբ հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց ընտանիքի անդամների շահերը ներկայացնող հայ փաստաբանները հայտարարություն տարածեցին Ադրբեջանի հսկողության ներքո հայտնվելուց հետո 19 հայերի, այդ թվում՝ 7 զինծառայողների դիտավորյալ սպանության վերաբերյալ ապացույցներ ունենալու մասին: Էրիկ Մխիթարյանը նրանցից մեկն էր:[146] Ըստ ՄԻԵԴ-ում տուժողներին ներկայացնող փաստաբանների՝ Էրիկը մահացել է պարանոցին արձակված կրակոցից:

145 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

146 Նույն տեղում:

Պատկեր 7.22. Ադրբեջանցի զինծառայողները, որոնց հետ վերջին անգամ կենդանի վիճակում տեսնել են Էրիկ Մխիթարյանին (Աղբյուրը՝ Ararat տելեգրամյան ալիք)։

Քաղաքացիական անձանց դիտավորյալ սպանություն

Ռազմական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները դիտավորյալ սպանել են քաղաքացիական անձանց։ Դիտավորյալ սպանությունների դեպքերն առաջինը արձանագրվել են 2020 թվականի հոկտեմբերին Հադրութի շրջանում, իսկ հետո՝ Ադրբեջանի հսկողության տակ հայտնված այլ տարածքներում։ Նման դեպքերի մասին հաղորդումներ են ստացվել նաև հրադադարից և եռակողմ հայտարարության ստորագրումից ամիսներ անց։ Այդ մասին ապացույցներն ընդգրկում են տեսանյութեր, որոնք նկարահանվել և տարածվել են ռազմական գործողությունների ընթացքում և նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հայտարարությունից հետո, այդ մասին են վկայում նաև հայրենիք վերադարձված հայազգի քաղաքացիական անձանց մարմինների զննությունները, որից պարզ է դարձել, որ զոհվածները խոշտանգվել կամ անդամախեղվել են, երբ դեռ ողջ էին։ Սույն զեկույցը հիմնվում է քաղաքացիական անձանց սպանությունների և արտադատական մահապատժի ենթարկելու մասին վկայող հետևյալ ապացույցների վրա. ա) ռազմական գործողությունների ընթացքում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին հրադադար կնքելուց հետո ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների նկարահանած և սոցիալական ցանցերում տեղադրած տեսանյութեր, բ) Արցախի մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած փաստահավաք առաքելություն, գ) տուժողների, տուժողների ընտանիքների անդամների, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հետ փաստահավաք խմբի անդամների իրականացրած հարցազրույցները և դ) տուժողների շահերը ներկայացնող փաստաբանների հայտարարությունները, այդ թվում՝ մարմինների ախտաբանաանատոմիական փորձաքննության վրա հիմնված հայտարարությունները (փաստահավաք խմբի անդամները հնարավորության դեպքում անձամբ են ուսումնասիրել ախտաբանաանատոմիական հետազոտությունների եզրակացությունները)։

Սպանված քաղաքացիական անձանց մեծամասնությունը եղել են տարեցներ, որոնց մեջ՝ նաև կանայք և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, որոնք որոշել են մնալ Ադրբեջանի կողմից զավթված իրենց գյուղերում/քաղաքներում: Որոշ դեպքերում իրենց գյուղերում և քաղաքներում մնացած քաղաքացիական անձանց մեծ մասը սպանվել է իրենց բնակության վայրի՝ ադրբեջանցիների կողմից գրավումից անմիջապես հետո: Սրա մասին է վկայում այն փաստը, որ 2020 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի զավթած բնակավայրերում եռակողմ հայտարարությունը ստորագրելուց հետո իրականացված որոնողական գործողությունների ընթացքում հայտնաբերված մարմինները գրեթե ամբողջությամբ քայքայված էին: Ավելին, քաղաքացիական անձանց սպանությունների դեպքեր եղել են նաև եռակողմ հայտարարությունը ստորագրելուց հետո, ինչը հաստատվել է հայրենադարձված դիակների դատաբժշկական փորձաքննության միջոցով: Նրանց թվում են Շուշիից Ա.Մ.-ն, ում գերեվարել էին 2020 թվականի նոյեմբերի 8-ին կամ ավելի ուշ և հետո սպանել, Շուշիից Վ.Պ.-ն, որը հրազենային վիրավորումներ ուներ գլխի և որովայնի հատվածներում, իսկ դատաբժշկական փորձաքննության միջոցով պարզվել է, որ նա մահացել է 2020 թվականի նոյեմբերի 18-ին:[147]

Ընդհանուր առմամբ, հայրենիք վերադարձված սպանված քաղաքացիական որոշ անձանց մարմինների հետազոտությունը բացահայտել է խոշտանգման և խեղման հետքեր:[148] Զոհված քաղաքացիական անձանց մի մասն ունեցել է թափանցող հրազենային վիրավորումներ նաև գլխի և որովայնի հատվածում: Նրանց թվում՝

- Ասկերանի շրջանի Սղնախ գյուղից 83-ամյա Վ.Ա.-ն ունեցել է գլխի հրազենային վնասվածքներ:
- Մարտունի քաղաքից 57-ամյա Ա.Խ.-ն մոլորվել է և հայտնվել է Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքում, որտեղ նրան գերեվարել և կալանավորել են: Նրա մարմինը վերադարձվել է Հայաստան 2020 թվականի դեկտեմբերի 3-ին: Մարմնի կրծքավանդակում ունեցել է հրազենային վիրավորումներ, եղել են խոշտանգման հետքեր:
- Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղից 47-ամյա Վ.Լ.-ն և 69-ամյա Ս.Գ.-ն ունեցել են հրազենային վնասվածքներ: Հայրենադարձված մարմինների ուսումնասիրության արդյունքում հաստատվել են նաև ողնաշարային վնասվածքների առկայության փաստերը:
- Հադրութ քաղաքից 84-ամյա Մ.Մ.-ն ունեցել է գլխուղեղի՝ բռնության հետևանքով առաջացած վնասվածք:
- 64-ամյա Ե.Ժ.-ն Շուշիից՝ գլխի բաց վնասվածք:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2021 թվականի մայիսի 28-ի դրությամբ[149] հայազգի քաղաքացիական զոհերի թիվը եղել է 80, որոնցից 42-ը զոհվել են օդային ռմբակոծման և հրետակոծման հետևանքով, իսկ 38-ը սպանվել են ադրբեջանական զինծառայողների

147 Արցախի գլխավոր դատախազությունից ստացվածը գրություն՝ ի պատասխան Փաստահավաք խմբի կողմից ներկայացված տեղեկատվության հարցման, 10.05.2021թ.:

148 Արցախի գլխավոր դատախազությունից ստացված գրություն, «Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ»:

149 Տվյալները վերցված են Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ զեկույցից (2021 թվականի հունվարի 28, թարմացվել է 2021 թվականի սեպտեմբերին), ինչպես նաև ՄԻՊ-ին և Արցախի գլխավոր դատախազությանն ուղղված հետագա հարցումներից (10 մայիսի 2021թ.):

հսկողության ներքո ընկնելուց հետո: Սպանված քաղաքացիական անձանցից յոթը եղել են իգական սեռի ներկայացուցիչ, մեծամասնությունը եղել են տարեցներ՝ 65 տարեկան և բարձր, ոմանք ունեցել են հաշմանդամություն:[150]

Այս արարքները կյանքի իրավունքի խախտում են և ոտնահարում են միջազգային մարդասիրական իրավունքը՝ որակվելով որպես պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Ինչպես ներկայացվում է ստորև, այդ խախտումները վերաբերում են Ադրբեջանի կողմից քաղաքացիական հայ անձանց դիտավորյալ սպանություններին, քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների վրա չտարբերակված հարձակումներին, այդ թվում՝ բնակելի տարածքներում այնպիսի զենքերի կիրառմանը, որոնք չեն տարբերակում քաղաքացիական և ռազմական օբյեկտները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից նախազգուշացման միջոցներ չկիրառելը: Քաղաքացիական անձանց դիտավորյալ սպանությունը կամ նրանց խորը տառապանք պատճառելը կամ կյանքին ու առողջությանը ծանր վնաս հասցնելը խախտում են ՄԻՄԻ-ն և որակվում են պատերազմական հանցագործություններ՝ որպես Ժնևյան կոնվենցիաների լուրջ խախտումներ:[151] Հարկ է նաև նշել, որ զինված ընդհարումների ժամանակ կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորություններն արգելում են այնպիսի գործողություններ և գործելաոճ, որոնք վտանգում են քաղաքացիական և ՄՄԻ-ով հովանավորվող այլ անձանց կյանքը:[152] Հետևաբար՝ սույն զեկույցն անդրադառնում է ոչ միայն այն միջադեպերին, որոնց հետևանքով քաղաքացիական անձինք զոհվել են, այլև այն դեպքերին և գործողություններին, որոնք կարող էին առաջացնել նման սպառնալիքներ:

Բենիկ Հակոբյանի և նրա կնոջ արտադատական մահապատիժը

2020 թվականի հոկտեմբերի 15-ին տելեգրամյան ալիքներով տարածվեց ադրբեջանցի զինծառայողների կողմից երկու հայերի պատանդառման և երկու տղամարդու գնդակահարության երկու տեսանյութ:[153] Տեսանյութերի իսկությունը հաստատել են Bellingcat-ը[154] և BBC-ն:[155] Տեսանյութերից մեկում երևացող տարեց անձը նույնականացվել է 1947 թվականին ծնված, Հադրութ քաղաքի բնակիչ Բենիկ Հակոբյանի հետ:[156]

Առաջին տեսանյութում ադրբեջանցի սպաները Բենիկին հրահանգում են քայլել ձեռքերը

150 "Names of 19 Armenians POWs, Tortured and Killed by Azerbaijan, Publicized," Asbarez, May 3, 2021, https://asbarez.com/names-of-19-armenians-pows-tortured-and-killed-by-azerbaijan-publicized/; "Interim Report: On the Cases of the Killing of Civilians in Artsakh by the Armed Forces of Azerbaijan."

151 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, օգոստոսի 12, 1949թ.), հոդ. 3, 27, 146, 147, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380: «1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն և միջազգային զինված հակամարտություններից տուժածների պաշտպանություն (Արձանագրություն I)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 7 դեկտեմբերի 1978թ.), հոդ. 75, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/470: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, «Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ», 92-9227-227-6 § (1998), հոդ. 8, պարբ 2 (a)(b)(c) և (e), https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html

152 «Ընդհանուր մեկնաբանություն թիվ 36, հոդված 6 (Կյանքի իրավունք)» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), 2019թ., սեպտեմբերի 3), պարբ. 64, https://www.refworld.org/docid/5e5e75e04.html

153 ttps://t.me/antituran/306, https://www.youtube.com/watch?v=zkQXy3fG9BY, https://mega.nz/folder/60kEFQja#yqkGDf-8NTbSy3GWJzuOHiw

154 https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an-execution-in-hadrut-karabakh/

155 https://www.bbc.com/news/world-europe-54645254

156 Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույց (2021թ. հունվար, թարմացվել է 2021թ. սեպտեմբերին) (հասանելի է հղումով՝ <https://artsakhombuds.am/am/document/785>):

Պատկեր 7.23. Բենիկ Հակոբյանը զենքի սպառնալիքի տակ հանձնվում է, շրջապատված ադրբեջանցի զինծառայողների կողմից, 2020 թվականի հոկտեմբեր, Հադրութ (Աղբյուր՝ Antituran տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.24. Ադրբեջանցի զինծառայողը Բենիկ Հակոբյանին հրում է գետնին և զենքը պահում նրա վրա (Աղբյուրը՝ Antituran տելեգրամյան ալիք):

Պատկեր 7.25. Երկու հայ գերիների մահապատիժը Հադրութում (Աղբյուրը՝ Antituran տելեգրամյան ալիք):

վեր պահած (Տե՛ս Պատկեր 7.23)։ Այնուհետև նրանցից մեկը զենքի սպառնալիքով հրում է Բենիկին գետնին (Տե՛ս Պատկեր 7.24)։ Տեսանյութի վերջում լսվում է տարեց մարդու ձայնը՝ «Վա՛յ, վա՛յ»։

Երկրորդ տեսանյութում երևում է ձեռքերը կապած և Հայաստանի Հանրապետության և Արցախի դրոշներով փաթաթված երկու տղամարդու մահապատիժ (Տե՛ս Պատկեր 7.25)։ Մահապատժի ենթարկվածների ինքնությունը պարզվել է՝ Բենիկ Հակոբյան և Յուրի Ադամյան (միջադեպը քննարկվում է նաև նախորդ ենթագլխում)։ Հայաստանի դրոշով փաթաթված տարեց տղամարդը կրում է կամուֆլյաժե տաբատ, սև սվիտեր, ծանր, սև կոշիկներ, որոնք նույնական են առաջին տեսահոլովակում Բենիկ Հակոբյանի հագուկապին։

Խորհրդատու փորձագետը հատուկ նշել է, որ տեսանյութում «իսկական փամփուշտներ են, սա իրական սպանություն է։ Սա բնօրինակ է, բեմականացված լինելու վերաբերյալ ենթադրություն անելու պատճառներ չեմ տեսնում»։[157] Բենիկ Հակոբյանի մարմինը չի վերադարձվել։

Բենիկ Հակոբյանի 67-ամյա կնոջը՝ Ե.Հ.-ին, ով ամուսնու հետ մնացել էր իրենց բնակության վայրում, սպանված գտել են Հադրութում իր տան մոտ 2021 թվականի հունվարի 4-ին։ «Արդարության և մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնի հայտարարությունը ՄԻԵԴ-ում ներկայացված գերիների ազատ արձակման վերաբերյալ», Հորիզոն շաբաթաթերթ, 11 մայիսի 2021թ., https://bit.ly/3Kgmqr7։ Գրություն Արցախի գլխավոր

157 "'Execution' Video Prompts War Crime Probe."

դատախազությունից, «Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ»:[158] Կնոջ վերադարձված մարմնի վրա հայտնաբերվել են վայրագությունների և ամենադաժան վերաբերմունքի հետքեր. նրա ոտքերը կապված էին, իսկ մարմինը՝ գլխատված:[159]

Յուրի Ասրյանի գլխատումը

Պատկեր 7.26. Յուրի Ասրյանի գլխատումը (Աղբյուրը՝ Armenian Global Community տելեգրամյան ալիք):

2020 թվականի դեկտեմբերի 3-ին համացանցում հայտնվեց[160] հայազգի քաղաքացիական անձի գլխատելու տեսանյութ, որտեղ երևացող զոհը նույնա-կանացվել է Հադրութի շրջանի Ազոխ գյուղի 82-ամյա բնակիչ Յուրի Ասրյանի հետ: Նրա մարմինը հայտնաբերվել է 2021 թվականի հունվարի 21-ին՝ ադրբեջանական հսկողության տակ հայտնված տարածքներում որոնողական աշխատանքներ իրականացնելու ընթացքում:[161] Պատերազմը սկսելու օրը Մ.Ա.-ն՝ Յուրի Ասրյանի քույրը, եղել է Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: Եղբոր հետ այնտեղ է մնացել մինչև հոկտեմբերի 16-ը, երբ գրեթե բոլորն արդեն լքել էին գյուղը: Երբ 2020 թվականի հոկտեմբերի 22-ին Ազոխի գյուղապետը լքել է գյուղը, Յուրին համառորեն հրաժարվել է հեռանալ գյուղից:

Հետագայում տեղեկություն է ստացվել, որ գյուղն ադրբեջանցիները զավթել են հենց այդ օրը:[162] Տեսանյութում Յուրի Ասրյանը խնդրում է, հանուն «Ալլահի», չգլխատել իրեն, սակայն ադրբեջանական զինված ուժերի համազգեստով զինծառայողը սառնասրտորեն գլխատում է նրան, իսկ ներկա գտնվող այլ զինծառայողներ բացականչություններով ոգևորում են նրան (Տես Պատկեր 7.26-ը):[163] Գլխատող զինծառայողը կրում է ադրբեջանական համազգեստ, իսկ աջ բազկի վրա տեսանելի է Ադրբեջանի դրոշը և կարմիր թևկապը: Զինծառայողի ձեռքի կարմիր ժապավենը համապատասխանում է ադրբեջանցի զինծառայողների այլ

158 «Արդարության և մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնի հայտարարությունը ՄԻԵԴ-ում ներկայացված գերիների ազատ արձակման վերաբերյալ», Հորիզոն շաբաթաթերթ, 11 մայիսի 2021թ., https://bit.ly/3K-gmqr7: Գրություն Արցախի գլխավոր դատախազությունից, «Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ»:

159 Գրություն Արցախի գլխավոր դատախազությունից:

160 @armeniangc, "Террористы из вс азербайджана в лучших традициях ИГИЛ перерезают горло беззащитному старику и записывают это на видео," December 8 2020, Telegram video, https://mega.nz/file/no9BBZhJ#h359CY2-82Zp-FkzoOZNy7SR5EKZrTFQy0iPtEO6L6F4.

161 Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ:

162 «Հայրենի Ազոխի և Սպանված Եղբոր Կարոտով. Մարիա Ասրյանի Նոր Գաղթի Ճանապարհը, Մեդիամաքս, 12 ապրիլի, 2021թ., https://mediamax.am/am/news/hadrut/42708/

163 Միջանկյալ զեկույց Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ: Liz Cookman, "Videos from Nagorno-Karabakh Conflict Prompt Accusations of War Crimes," Washington Post, December 25, 2020, https://www.washingtonpost.com/world/armenia-nagornokarabakh-war-crimes/2020/12/24/f8b28900-4165-11eb-b58b-1623f6267960_story.html.

նկարներին:[164] Amnesty International-ը նույնպես հաստատել է, որ տեսանյութում երևացող համազգեստը համապատասխանում է ադրբեջանական զինված ուժերի համազգեստին:[165] Տեսանյութում հստակ երևում է նաև դանակ փոխանցող մյուս ադրբեջանցի զինծառայողի դեմքը: Փաստահավաք խմբի անդամների հետ զրույցում Լիլիթը (անունը փոխված է) հարցազրուցավարին ցույց է տվել նշված տեսանյութը և տեսանյութում երևացող անձին նույնականացրել իր համագյուղացի Յուրի Ասրյանի հետ:[166]

Գենադի Պետրոսյանի գլխատումը

2020 թվականի նոյեմբերի 22-ին տարածվեց ևս մեկ դաժան գլխատման ապացույց:[167] Տեսանյութում պատկերված անձն Արցախի Ասկերանի շրջանի Մադաթաշեն գյուղի 69-ամյա բնակիչ Գենադի Պետրոսյանն է:[168] Տարհանումից հետո նա իր իրերի հետևից գյուղ էր վերադարձել 2020 թվականի հոկտեմբերի 27-ին և գերեվարվել ադրբեջանցի զինծառայողների կողմից: Տարածված տեսանյութում երևում է Գենադի Պետրոսյանի գլխատումը, որից հետո նրա կտրված գլուխը դնում են սատկած կենդանու (խոզի) վրա (Տես Պատկեր 7.27-ը): Կադրից դուրս ադրբեջաներեն ձայնն ասում է. «Նայիր խոզերին՝ կողք կողքի», «Դու, անպատիվ, այս ամենը մեր նահատակների արյան համար է»[169] և «Ահա այսպես ենք մենք վրեժ լուծում՝ գլուխներ կտրելով»:[170]

Պատկեր 7.27. Գենադի Պետրոսյանի կտրված գլուխը՝ դրված խոզի վրա (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

164 Տես նաև՝ @Caucasian_bureau, “Город Физули и 10 сел Физулинского района освобождены от армянской оккупации...,” October 17, 2020, Telegram post, https://t.me/Caucasian_bureau/1541; @MaidenTower, “В сети распространяется видео с поднятием флага Азербайджана в освобождённом от армянской оккупации селе Шукурбейли Джебраильского района Азербайджана,” October 7, 2020, Telegram video, https://t.me/MaidenTower/4409.

165 “Armenia/Azerbaijan: Decapitation and War Crimes in Gruesome Videos Must Be Urgently Investigated,” Amnesty International, December 10, 2020, https://www.amnesty.org/en/latest/news/2020/12/armenia-azerbaijan-decapitation-and-war-crimes-in-gruesome-videos-must-be-urgently-investigated/.

166 Հարցազրույց Լիլիթի հետ, 19 հունվարի 2021թ.:

167 @kolorit_18l, December 23, 2020, Telegram video, https://mega.nz/file/PglnUTSQ#z3oW8vPMRKxPna5M--nFF_IKRjrQU_mDYI5rVPDrHUA.

168 Identified by the Human Rights Defender of Artsakh, the lawyers representing the interests of Genadi Petrosyan’s relatives, as well as Genadi Petrosyan’s fellow villagers.

169 Translation by a member of the Fact-Finding Group.

170 “Armenia/Azerbaijan: Decapitation and war crimes in gruesome videos must be urgently investigated.”

Պատկեր 7.28. ադրբեջանցի զինծառայողները կտրում են Գենադի Պետրոսյանի կոկորդը (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

2020 թվականի դեկտեմբերի 3-ին հրապարակած երկրորդ տեսանյութում[171] երևում է, թե ինչպես աջ ուսին ադրբեջանական դրոշով ադրբեջանական զինված ուժերի համազգեստով մի խումբ զինծառայողներ բռնել են դիմադրող մի տղամարդու, իսկ մեկ այլ զինծառայող կտրում է նրա գլուխը, երբ մեկ ուրիշը ոտքը դնում է զոհի մարմնին, որ օգնի գլխտողին (Տես Պատկեր 7.28-ը): Այլ աղբյուրներ նույնպես նույնականացրել են զինծառայողների կրած համազգեստը ադրբեջանական բանակի համազգեստին:[172]

Արսեն Ղարախանյանի սպանությունը

Հադրութ քաղաքի 44-ամյա բնակիչ Արսեն Ղարախանյանը սպանվել է Ադրբեջանում գերության մեջ լինելու ժամանակ: Նա սպանվել է 2021 թվականի հունվարին՝ պատերազմի ավարտի մասին եռակողմ հայտարարությունը ստորագրելուց հետո: Պատերազմը սկսվելուց հետո՝ մինչև հոկտեմբերի 7-ը, Արսենն ու նրա ընտանիքի անդամները մնացել էին քաղաքում, սակայն, տեսնելով, որ ադրբեջանական զինված ուժերը մոտենում են, որոշել էին թողնել քաղաքը:

Փաստահավաք խմբի անդամների հետ զրույցում Արսենի քույրը՝ Մ.Ղ.-ն ասել է, որ հոկտեմբերի 7-ին նրանք լքել են Հադրութ քաղաքը: Արսենը նրանց հետ էր, բայց իրենց հայրը՝ Սաշան, հրաժարվել էր գալ նրանց հետ: Ընտանիքը Հադրութից տեղափոխելուց հետո Արսենը վերադարձել էր Հադրութ: Վերջին անգամ ընտանիքը խոսել էր Արսենի

171 @kolorit_18l, դեկտեմբերի 24, 2020թ., https://mega.nz/file/6wVAGbIT#1ygF0xQm3h6G1dKnemsdeGPBXgblwj-hk0Wy-jNjcmi8

172 Cookman, "Videos from Nagorno-Karabakh Conflict Prompt Accusations of War Crimes"; Andrew Roth, "Two Men Beheaded in Videos from Nagorno-Karabakh War Identified," The Guardian, December 15, 2020, sec. World news, https://www.theguardian.com/world/2020/dec/15/two-men-beheaded-in-videos-from-nagorno-karabakh-war-identified.

Պատկեր 7.29. Արսեն Ղարախանյանին ստիպում են ասել, որ «Ղարաբաղն Ադրբեջան է» (ձախից): Արսենը պիկապ մեքենայի մեջ հարկադրված ողջունում է «լավ մարդկանց» (աջից):

հետ հոկտեմբերի 9-ին: Այնուհետև նրանց տեղեկացրել էին, որ ադրբեջանցիները մտել են Հադրութ քաղաք: 2020 թվականի հոկտեմբերի 15-ին ընտանիքը դիմել է ԿԽՄԿ և տեղեկացրել, որ Արսենն ու նրա հայրն անհետացել են:

Այնուհետև՝ մինչև 2021 թվականի հունվարի 6-ը, Արսենից որևէ նորություն չեն ունեցել, մինչև որ համացանցում Արսենի մասնակցությամբ տեսել են տեսանյութ, ուր սենյակում գտնվող Արսենին ստիպում են ադրբեջաներեն կրկնել մի զինված անձի ասածները, հայհոյել Հայաստանի վարչապետ Փաշինյանին և կրկնել ադրբեջաներեն այլ արտահայտություններ:[173] Մեկ այլ տեսանյութում[174] Արսենը երևում է պիկապ մեքենայի մեջ՝ շրջապատված ադրբեջաներեն խոսացող տղամարդկանցով, որոնք նրան հրահանգում են «ողջունել բոլոր լավ մարդկանց» (Տես Պատկեր 7.29): Արսենի կողքին կարելի է տեսնել այն նույն սև սաղավարտները, որոնք կրում են Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության հատուկ նշանակության զորքերը (DTX), ինչպես նաև այլ դեպքերում սպանված հայ զինծառայողների հետ լուսանկարված ադրբեջանցի զինծառայողները:

Փաստահավաք խմբի անդամները նկատել են, որ Էրիկ Մխիթարյանի հետ տեսանկարված ադրբեջանցի զինծառայողները (վերը ներկայացված) նույնպես կրել են սև սաղավարտներ (Տես Պատկեր 7.30):

Ընտանիքի խոսքերով՝ երկրորդ տեսանյութը հրապարակվել է 2021 թվականի հունվարի 8-ին: Տեսանյութում Արսենին ֆիզիկապես բռնած պահում և ստիպում են ադրբեջաներեն ասել «ցտեսություն»:

Առաջին տեսանյութը տեսնելուց հետո ընտանիքի անդամները դիմել են հնարավոր բոլոր ատյաններին՝ ԿԽՄԿ, ռուս խաղաղապահներին, բայց ապարդյուն: 2021 թվականի հունվարի 18-ին նրանց հետ կապ են հաստատել Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից և հրավիրել տղամարդու մարմնի ճանաչման համար, որը նման է տեսանյութերում ցուցադրված անձին: Մ.Ղ.-ն և նրա որդին գնացել են դիահերձարան և ճանաչել Արսենի մարմինը, որը գտնվել էր որոնողական աշխատանքների ժամանակ:

173 @herbixeber, “Söyüş var. Xanımlar izləməsin,” January 27, 2021, Telegram video, https://mega.nz/file/iwd-nEKaC#brPV8OCxcMY2X6lt5FuwQkFOuCpKTofw4P8aVxLEa2E.

174 Տեսանյութ տելեգրամում՝ https://mega.nz/file/TkciTAoR#lTz_aHIkzlRn3g2aQNlG1cZEb7gE6_oQ8W9RZZD7UrU.



Պատկեր 7.30. Պիկապ մեքենայի մեջ Արսեն Ղարախանյանի կողքին նստած սև զինծառայողների սև սաղավարտները (ձախից), Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության համազգեստը (կենտրոնում), Էրիկ Մխիթարյանի հետ տեսանյութում երևացող ադրբեջանցի զինծառայողները (աջից) (Աղբյուրը՝ Caspian News և Dtx.Gov.Az):

Պատկեր 7.31. Արսենի գլխի վնասվածքը, մարտի 3, 2021թ. (Աղբյուրը՝ Արսենի քրոջ տրամադրած լուսանկար):

Նրա մարմինը թաղել էին Հադրութ քաղաքից 2-3 կմ հեռավորության վրա, սակայն գլուխը թողել էին հողի մակերևույթին: Դատաբժշկական փորձագետները համոզված են, որ նրան սպանել են հունվարի 14-ին կամ 15-ին: Հարցացրույցի ժամանակ ընտանիքի անդամները հայտնել են, որ 2020 թվականի հոկտեմբերին նա մորուք չուներ, իսկ տեսանյութերում նա մորուքով էր, ինչից ելնելով՝ ընտանիքի անդամները ենթադրել են, որ գերեվարումից մինչև տեսանյութի նկարահանումը որոշակի ժամանակ է անցել: Արսենին թաղել էին իր ներքնազգեստով և սպորտային հագուստով, քույրը ճանաչել էր նրա դիմագծերը և կույրաղիքի վիրահատության սպին: Արսենի գլուխը ծածկված էր ցեխով, քանի որ մնացել էր հողից դուրս: Գլխի հատվածում առկա էին հրազենային երկու հետմահու վիրավորում (Տես Պատկեր 7.31-ը): Արսենի մարմնի վրա առկա էին դաժան ծեծի ենթարկվելու հետքեր, գլխին, կրծքավանդակին՝ բութ գործիքով հասցված վնասվածքներ, այդ թվում՝ կողոսկրերի բազմակի կոտրվածքներ և բազմաթիվ արյունազեղումներ գլխի և մարմնի վրա: Մ.Ղ.-ի խոսքերով՝ նաև այրված էր մաշկը:[175]

175 Հարցազրույց Մ.Գ.-ի հետ, 3 մարտի, 2021թ.:

Հայազգի քաղաքացիական անձանց սպանության այլ դեպքեր

Առաքելության խմբի անդամների հետ մեկ այլ հարցազրույցում Տող գյուղի բնակիչ Ա.Մ.-ն տեղեկացրել էր, որ ադրբեջանցի զինծառայողները գլխատել են Տող գյուղի երկու բնակիչների՝ Ռ.Ս.-ին և Մ.Ա.-ին:[176] Այս փաստը հաստատված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում, որտեղ ասվում է, որ Տող գյուղում դիակների որոնման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ռ.Ս.-ի և Մ.Ա.-ի քայքայված դիակները: Ռ.Ս.-ի գլուխը բացակայում էր, իսկ ոտքերը կոտրված էին:[177]

Տող գյուղում որոնման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է նաև նույն գյուղի 68-ամյա բնակիչ Մ.Ա.-ի դին:[178] Նրա կնոջ խոսքերով, երբ 2020 թվականի սեպտեմբերին սկսվել է պատերազմը, համագյուղացիները սկսել են լքել գյուղը, սակայն ինքը և իր ընտանիքը որոշ ժամանակ մնացել են գյուղում: Ավելի ուշ (կինը հստակ չի հիշում ամսաթիվը) երեխաների հետ ինքը թողել է գյուղը, սակայն ամուսինը հրաժարվել է հեռանալ: Գյուղը լքելուց հետո միայն մեկ անգամ է զրուցել ամուսնու հետ: Վերջին անգամ ամուսինը երեխաների հետ է խոսել, իսկ դրանից հետո հեռախոսազանգ չի եղել (կինը հստակ չի հիշում այդ վերջին հեռախոսազանգի ամսաթիվը): Հետո ազգականները տեղեկացրել են նրան, որ ադրբեջանական զինված ուժերը գրավել են իրենց գյուղը, ինչից հետո նա սկսել է տեղեկություններ որոնել՝ դիմելով ծանոթներին և ԿԽՄԿ: Միայն երկու ամիս անց նա հստակ տեղեկություններ է ստացել, որ Մ.Ա.-ն սպանվել է: Մ.Ա.-ի աներորդին և թոռը մասնակցել են որոնողական աշխատանքներին, գնացել են գյուղ, որտեղ էլ գտել են Մ.Ա.-ի դին: Նրանց խոսքերով՝ Մ.Ա.-ին նախ վնասվածքներ էին հասցրել, ապա կտրել գլուխը:[179]

Հայ կանանց դիտավորյալ սպանությունները

Հայազգի կանայք նույնպես ենթարկվել են վայրագությունների և դաժան սպանությունների: Օրինակ, Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղում հայտնաբերվել է 83-ամյա կնոջ՝ Ն.Դ.-ի դին՝ կտրված գլխով և կոտրված ձեռքով:[180] Նրա աղջկա խոսքով՝ երբ Ն.Դ.-ի ընտանիքի մյուս անդամները հեռացել են գյուղից, ինքն ու նրա ամուսինը՝ Դ.Դ.-ն, հրաժարվել են հեռանալ և մնացել են գյուղում: Աղջիկը և մյուս հարազատները ծնողներից լուր չեն ունեցել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 18-ը, երբ նրանց հետ կապ են հաստատել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից և կանչել դիակի ճանաչման: Ն.Դ.-ի թոռը ճանաչել է տատին, իսկ Դ.Դ.-ն դեռ եղել է անհետ կորած: Եվ միայն 2021 թվականի հունվարին, երբ իրենց գյուղում որոնողական աշխատանքներին մասնակցելու նպատակով Ն.Դ.-ի մյուս թոռը՝ Մանվելը (անունը փոխված է), միացել էր խաղաղապահներին և ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության աշխատակիցներին, հաջողվել է գտնել Դ.Դ.-ի մարմինը իրենց տնից 50մ հեռավորության վրա՝ տնամերձ այգում: Երբ Մանվելն այգի է մտել, տեսել է պապի հագուստը և հողին ընկած նրա անշնչացած մարմինը:[181] Ն.Դ.-ի և Դ.Դ.-ի դստեր խոսքերով՝ Դ.Դ.-ն վիրավորում է ունեցել մեջքին:

176 Հարցազրույց Ա.Մ.-ի հետ, 25 փետրվարի, 2021թ.:

177 Միջանկյալ զեկույց: Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ:

178 Գրություն Արցախի գլխավոր դատախազությունից:

179 Հարցազրույց Մ.Ա.-ի կնոջ՝ Է.Ն.-ի հետ, 29 հունիսի, 2021թ.:

180 Միջանկյալ զեկույց. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ:

181 Հաստատվել է նաև Արցախի գլխավոր դատախազությունից ստացված գրությամբ:

Հայտնաբերվել են նաև սպանված այլ կանանց մարմիններ: Քարինտակ գյուղում որոնողական աշխատանքների ժամանակ՝ 2021 թվականի հունվարի 13-ին, հայտնաբերվել է նույն գյուղի 52-ամյա բնակչուհի Ա.Թ.-ի դիակը: Դիակի ախտաբանաանատոմիական հետազոտությունը ցույց է տվել խոշտանգման ակնհայտ հետքեր. կտրված են եղել կնոջ ձախ ականջը և լեզուն:[182] Ա.Թ.-ի մարմնի դատաբժշկական հետազոտությամբ պարզվել է, որ նրա մահվան պատճառ են դարձել գանգի կոտրվածքները, պարանոցի արյունազեղումները, ուղեղի ձախ կիսագնդի քունքային բլթի հիմնային մակերեսի ջնջխումը, գանգուղեղային բութ, բաց վնասվածքը:[183] Այս փաստերը հիմնավորում են խոշտանգման կասկածները: Բացի այդ, Ա.Թ.-ի ազգականները հայտնել են, որ նրա մարմինը խեղված է եղել. կտրված էին ձեռքը, ականջը և ոտքը (Ա.Թ.-ի մարմինը ճանաչել է եղբայրը՝ Ս.Թ.-ն, ով մասնակցել է որոնողական աշխատանքներին):[184] Հադրութ քաղաքում սպանված են գտել նաև 69-ամյա Ե.Վ.-ին և նրա ամուսնուն՝ 71-ամյա Ս.Վ.-ին:[185]

Վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական անձանց դիտավորյալ սպանությունները համընկնում են Հադրութից դեպի Ծուշի և այլ տարածքներ ադրբեջանական ուժերի առաջխաղացման հետ (Տեմ Պատկեր 7.32):



Պատկեր 7.32. Վայրերը, որտեղ հայ քաղաքացիական անձինք դիտավորյալ սպանվել են առաջխաղացող ադրբեջանական զինված ուժերի կողմից (ձախից): Քարտեզը ցույց է տալիս 2020թ.-ի դեկտեմբերի 14-ի դրությամբ ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքները (Աղբյուրը՝ ՌԴ ՊՆ-ի և Google Maps/PRWB-ի տվյալների հիման վրա ստեղծված քարտեզ):

182 Միջանկյալ զեկույց Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ:

183 Փաստահավաք խմբի հարցմանն ի պատասխան ստացված գրություն Արցախի քննչական կոմիտեից, հունիսի 29, 2021թ.:

184 Սարկիսովա Անյա, "Քարին Տակի բնակիչ Ալվարդ Թովմասյանի դիակի վրա խոշտանգման հետքեր են եղել," Հետք, January 14, 2021, https://hetq.am/hy/article/126270; "Torturing and Killing of an Elderly Woman by Azeris in Karin Tak Village," AzeriWarCrimes.org, June 14, 2021, https://azeriwarcrimes.org/2021/06/14/torturing-and-killing-of-an-elderly-woman-by-azeris-in-karin-tak-village/.

185 Արցախի գլխավոր դատախազությունից ստացված գրություն:

***

Դիտավորյալ սպանությունների վերոնշյալ դեպքերի մասին ապացույցները հավաքվել են տարբեր աղբյուրներից, որոնց շարքում են առցանց տարածված տեսանյութերը՝ հաստատված տուժողների ազգականների հետ հարցազրույցների միջոցով, տուժողների ազգականների շահերը ներկայացնող փաստաբանների, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանների աշխատակազմերի հավաքած տեղեկությունները, ախտաբանաանատոմիական հետազոտությունները: Ավելին, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, այդ թվում՝ «Human Rights Watch»-ը, «Amnesty International»-ը և միջազգային լրատվական կազմակերպություններ, վերլուծել են սպանությունների տեսարաններով որոշ տեսանյութեր, որոնք հրապարակվել են համացանցում, և հաստատել են դրանց իսկությունը:

Բացի այդ, փաստահավաք խմբի անդամները փաստահավաք առաքելության ընթացքում հնարավորության դեպքում ճշտել և հաստատել են տեսանյութերում երևացող անհատների ինքնությունը հարցազրույց տված այլ տուժողներից ստացած տեղեկությունների միջոցով, որոնք տարածված տեսանյութերում ճանաչել են իրենց զինակիցներին և համագյուղացիներին: Ստուգման և հաստատման մեկ այլ աղբյուր է եղել տուժողների շահերը ՄԻԵԴ-ում ներկայացնող փաստաբանների հավաքած տեղեկությունները:

Այսպիսով՝ վերոնշյալ բոլոր դեպքերն ապացուցում են, որ ադրբեջանցի զինծառայողները դիտավորյալ սպանել են շարքից դուրս եկած (hors de combat) մի խումբ հայ զինծառայողների: Տեսաապացույցները փաստում են, որ սպանված հայ զինծառայողները կամ հանձվել են, կամ եղել են կապված, կամ արդեն վիրավոր՝ ըստ երևույթին անզեն, և ադրբեջանցի զինծառայողների համար որևէ վտանգ չեն ներկայացրել: Ադրբեջանցի զինծառայողները հստակ պատկերացրել են հայ զինծառայողների կարգավիճակը, քանի որ նրանք բոլորն էլ կրել են հայկական զինվորական համազգեստ, ինչպես նաև բավարար ժամանակ և հնարավորություն են ունեցել՝ հասկանալու, որ հայ զինծառայողներն այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին, սակայն, միևնույն է, սպանել են իրենց վերահսկողության ներքո հայտնված անձանց:

ՄՄԻ-ն արգելում է սպանել կամ վիրավորել շարքից դուրս եկած (hors de combat) ճանաչված անձանց: Պաշտպանության ենթակա անձանց, այդ թվում՝ ռազմագերիների դիտավորյալ սպանությունը Ժնևյան 3-րդ կոնվենցիայի լուրջ խախտում է և պատերազմական հանցագործություն: Բացի այդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) արգելում են կամայական կյանքից զրկումը:[186]

Իրավունքով պաշտպանված անձանց դեմ ուղղված հիշյալ արարքները կյանքի իրավունքի կոպիտ խախտում են և պետք է քրեական հետապնդման ենթարկվեն որպես ՄՄԻ լուրջ խախտումներ և դիտավորյալ սպանություն, խոշտանգում, մարդկային արժանապատվության նկատմամբ անարգանք և քաղաքացիական բնակչության կանխամտածված ահաբեկման ոճրագործություն հանդիսացող պատերազմական հանցագործություններ:[187] Այս

186 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 16 դեկտեմբերի, 1966թ.), https://www.refworld.org/docid/3ae6b3aa0.html, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա՝ փոփոխված թիվ 11 և 14 արձանագրություններով (Եվրոպայի խորհուրդ, նոյեմբերի 4, 1950թ.), https://www.refworld.org/docid/3ae6b3b04.html

187 Տես ստորև

արարքները մասնավորապես խախտում են Ժնևի կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածը, ինչպես նաև կյանքի իրավունքը և վատ վերաբերմունքի և խոշտանգման արգելքը, որոնք սահմանված են սովորութային միջազգային մարդասիրական իրավունքով և ՄԻՄԻ-ի գործիքներում, այդ թվում՝ ՔՔԻՄԴ-ում և ՄԻԵԿ-ում:

Քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև տարբերակում չդնելը

Ադրբեջանը խախտել է թիրախավորման ընթացքում քաղաքացիական անձանց և կոմբատանտներին մշտապես տարբերակելու մասին ՄՄԻ-ի հիմնարար պահանջը:[188] ՄՄԻ-ով, ինչպես նաև մարդու իրավունքների մասին օրենսդրությամբ զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բոլոր անձինք համարվում են պաշտպանված, և անձի կյանքը նպատակային կամ անզգուշության հետևանքով վտանգելը համազոր է կյանքի իրավունքի խախտման: Ստորև ապացուցվում է, որ Ադրբեջանը խախտել է քաղաքացիական անձանց կյանքի իրավունքը, երբ իրականացրել է ոչ տարբերակված հարձակումներ, այսինքն՝ հարձակումներ, որոնք իրենց բնույթով կարող են առանց տարբերակման վիրավորել ու սպանել քաղաքացիական անձանց, հարվածել քաղաքացիական կամ ռազմական օբյեկտներին: Ադրբեջանն իրականացրել է այնպիսի հարձակումներ, որոնք իրենց բնույթով ՄՄԻ-ն համարում է ոչ ընտրողական կամ ոչ տարբերակված:[189] Դրանք են՝ ա) հարձակումներ, որոնք կիրառում են պատերազմի վարման այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնց հետևանքները հնարավոր չէ սահմանափակել, ինչպես պահանջում է ՄՄԻ-ին,[190] բ) հարձակումներ, որոնք ուղղված չեն կոնկրետ ռազմական օբյեկտի վրա:

Ադրբեջանի իրականացրած հարձակումները ներառել են հրետանային զենքերից անխտրական, առանց նշանառման կրակով գործողություններ բնակելի տարածքների վրա, որտեղ չեն եղել ակնհայտ ռազմական օբյեկտներ: Ինչպես սահմանված է, հարձակումները կարող են ուղղվել միայն կոնկրետ (և տարբերակելի) թիրախի վրա, իսկ պատերազմի վարման կոնկրետ զենքերի և մեթոդների տեսանկյունից պետք է կիրառվեն այնպիսիք, որոնք առաջացնում են սահմանափակ (կամ առնվազն սահմանափակ) հետևանքներ:[191] Հետևաբար՝ արգելվում են նաև այն հարձակումները, որոնց նպատակը ոչ թե հստակ ռազմական առավելություն ստանալն է, այլ բնակչությանն ահաբեկելը կամ նրա դիմադրելու վճռականությունն ընկճելը:[192]

ՄՄԻ-ն նաև արգելում է որոշակի տարածքների դիտարկումը որպես «ռմբակոծության տարածքներ», քանի դեռ ռմբակոծության նման ձևը վտանգում է քաղաքացիական բնակչությանը և քաղաքացիական օբյեկտները: Հարձակումները պետք է ուղղված լինեն միայն որոշակի և տարբերակելի ռազմական օբյեկտների վրա: Այն դեպքերում, երբ

188 Սովորութային ՄՄԻ - Կանոն 1. Քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև տարբերակման սկզբունքը (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 6-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs /v1_rul_rule1

189 Սովորութային ՄՄԻ - Կանոն 12. Չտարբերակված հարձակումների սահմանումը (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 22, https://ihldatabases.icrc.org/customaryihl/eng/docs/v1_rul_rule12

190 Սովորութային ՄՄԻ - Կանոն 12. Չտարբերակված հարձակումների սահմանումը

191 Dieter Fleck, ed., The Handbook of International Humanitarian Law, Fourth Edition (Oxford, New York: Oxford University Press, 2021), 129.

192 Fleck, 170.D. Fleck, The Handbook of International Humanitarian Law (OUP 2014), p. 170.

թիրախը ցամաքային տարածք է, այն պետք է ամբողջությամբ լինի ռազմական թիրախ, քանի որ չի թույլատրվում որպես «ռմբակոծության տարածք» միատեղել իրարից անջատելի թիրախները: Սակայն, ինչպես ներկայացված է ստորև, ինչպես նաև հաստատված է «Human Rights Watch»-ի կողմից, Ադրբեջանը կիրառել է նման անթույլատրելի գործողություններ:[193]

Հարձակումների ոչ անխտրական բնույթն ակնհայտ երևում է նաև Ադրբեջանի կիրառած զինատեսակներից: Առկա ապացույցներից ելնելով (ԲԱՏՀ փորձագետների զեկույցներ, զինամթերքի բեկորների լուսանկարներ, որոնց պայթյունների հետքերն արձանագրել և փաստագրել են հայ և օտարերկրյա լրագրողներ, միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ՝ Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, «Human Rights Watch»-ը, «Amnesty International»-ը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանները և սույն առաքելության անդամները)՝ քաղաքացիական բնակչությանը հրետակոծելու համար օգտագործված հիմնական զինատեսակները եղել են «Գրադ» ՀԿՌՀ-ն[194] և «Սմերչ» ՀԿՌՀ-ն,[195] որոնք իրենց նախագծային տեխնիկական հատկանիշներով համարվում են ոչ ընտրողական, եթե կիրառվում են բնակելի տարածքների վրա կամ դրանց մոտակայքում:

Ավելին, առկա ապացույցները միանշանակ վկայում են Ադրբեջանի կողմից նաև ժամանակակից զենքերի (օրինակ՝ ԱԹՍ-ների) կիրառման մասին, որոնց շարքում եղել են բարաժող (պարեկություն անող) զինատեսակներ (որոնք հայտնի են նաև որպես ինքնասպան (կամիկաձե) դրոններ), հետախուզական և հրթիռային դրոններ: Հաշվի առնելով դրոնների/ԱԹՍ-ների ճշգրիտ նշանառման կարողությունները՝ կարելի է պնդել, որ Ադրբեջանը որոշ դեպքերում նպատակային է թիրախավորել քաղաքացիական անձանց, իսկ որոշ դեպքերում՝ անզգուշորեն, և գրանցված բոլոր դեպքերն էլ խախտումներ են՝ մեկը մյուսից ավելի սարսափելի:

Այս համատեքստում այն փաստը, որ Ադրբեջանը չի ձեռնարկել միջազգային իրավունքով պահանջվող նախազգուշական միջոցներ, լրացուցիչ ապացուցում է այն պնդումը, որ Ադրբեջանն իրականացրել է ոչ ընտրողական և ոչ տարբերակված հարձակումներ և ուղղակիորեն թիրախավորել է քաղաքացիական անձանց: Ըստ ՄՄԻ՝ պետությունները պարտավոր են այնպես կառավարել իրենց գործողությունները, որ նվազագույնի հասցնեն պատահական կորուստները և տան պատշաճ նախազգուշացում, ինչը պետք է լինի հասկանալի և ընձեռի դրան հետևելու իրատեսական հնարավորություն: Ռազմական գործողությունների կառավարումը և համապատասխան նախազգուշական միջոցներ

193 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh," Human Rights Watch, December 11, 2020, https://www.hrw.org/news/2020/12/11/azerbaijan-unlawful-strikes-nagorno-karabakh.

194 «Մարտունիում 4 զոհի ու 11 վիրավորի հանգեցրած հրետակոծությունը պատերազմական հանցագործություն է. Արտակ Բեգլարյան, Արցախի մարդու իրավունքների պաշտպան, 1 հոկտեմբերի, 2020թ., https://artsakhombuds.am/hy/news/460, «Հրադադարի մասին պայմանավորվածության ուժի մեջ մտնելուց հետո ադրբեջանական կողմը սպանել է առնվազն հինգ քաղաքացիական անձի», Արցախի ՄԻՊ, հոկտեմբերի 11, 2020թ., https://artsakhombuds.am/hy/news/467, Հայ փախստականներ Ադրբեջանից (@ArmRefugeesAze), «Ադրբեջանը BM-21 «Գրադ» (122 մմ) հրթիռ է արձակել Ստեփանակերտի բնակելի թաղամասերից մեկի ուղղությամբ, շատ մոտ դպրոցին և մանկապարտեզին @ArtsakhCenter, թվիթերյան գրառում, սեպտեմբերի 29, 2020թ., https://twitter.com/ArmRefugeesAze/status/1310873477935751168, @KarabakhRecords, "В течение дня враг продолжал обстреливать мирные населенные пункты Арцаха," November 5, 2020, Telegram post, https://t.me/KarabakhRecords/1710.

195 @reartsakh, "Еще одно доказательство того, что ВС Азербайджана обстреливают снарядами гражданские населённые пункты," September 28, 2020, Telegram post, https://t.me/reartsakh/3589; Նիլ Հաուեր (@NeilPHauer), «Երկու տարբեր «Սմերչ» հրթիռների մնացորդներ Շուշիում, Ղարաբաղ», թվիթերյան գրառում, հոկտեմբերի 12, 2020թ., https://twitter.com/NeilPHauer/status/1315699515765264384; @Abbasdjuma, "Неразорвавшиеся снаряды от «Смерча» близ Степанакерта," October 1, 2020, Telegram post, https://t.me/Abbasdjuma/6680.

ձեռնարկելու անհրաժեշտությունը նույնպես կապված է կիրառվող զենքերի, դրանց նախագծային տեխնիկական հատկանիշների, քաղաքացիական բնակչության վրա դրանց հնարավոր ազդեցության և ավելի մեծ ճշգրտություն ունեցող հնարավոր այլընտրանքային զենքերի կիրառման հետ: Թիրախավորման այս հարցերը ևս դիտարկվում են զեկույցի սույն բաժնում:

Հաջորդող հատվածներում ներկայացված ապացույցները վկայում են այն մասին, որ Ադրբեջանը չի տարբերակել քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև՝ ա) իրականացնելով չտարբերակված հարձակումներ ոչ ընտրողական զենքերով, այդ թվում՝ կասետային զինատեսակով, «Սմերչ» և «Գրադ» կայանքներով, բ) ուղղակի թիրախավորելով քաղաքացիական անձանց հիմնականում ԱԹՍ-ների միջոցով: Այս եզրակացությունները հիմնվում են միայն այն փաստարկների վրա, որոնք փաստահավաք առաքելության անդամները համարել են ճշմարիտ և արժանահավատ, քանի որ դրանք հնարավոր է եղել ճշտել, ստուգել և հաստատել այլ հավաստի ապացույցներով: Մասնավորապես ապացույցներ ստացվել են ականատես վկաների հետ հարցազրույցներից, համացանցում (այդ թվում՝ Տելեգրամի ալիքներում, ՏիկՏոկում և Ինստագրամում) հրապարակված տեսանյութերի վերլուծությունից, որոնց իսկությունը և դրանցում պատկերված անհատների ինքնությունը հաստատվել են հետևյալ աղբյուրներից առնվազն մեկի հիման վրա՝ ականատեսների վկայություն, տուժողների ազգականներին ներկայացնող փաստաբանների հայտարարություններ, լիազոր պետական մարմիններից ստացած տեղեկություններ: Սույն փաստահավաք խմբի անդամներն այցելել են նաև թիրախավորված բնակելի տարածքներ, փաստագրել են քաղաքացիական օբյեկտներին և բնակելի տարածքներին հասցված վնասը, բնակիչներից տեղեկություններ են հավաքել տուժողների և հարձակումների ժամանակագրության մասին: Փաստահավաք այցերից հավաքագրված ապացույցները ստուգվել և հաստատվել են այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով և մանրամասներով: Զեկույցում ներառվել են միայն հաստատված միջադեպերն ու մանրամասները: Առկա տեղեկությունները, ըստ հնարավորության, լրացուցիչ հաստատվել են նաև դատաբժշկական և զենքերի քրեագիտական փորձաքննությունների և արբանյակային տվյալների վերլուծության միջոցով:

Չտարբերակված հարձակումներ. ոչ ընտրողական զինտեսակների, ներառյալ՝ կասետային զինամթերքի, «Սմերչ» և «Գրադ» համազարկային համակարգերի կիրառում

Ռազմական գործողությունների ընթացքում Ադրբեջանը կիրառել է իր զինանոցի զանազան զինատեսակներ, այդ թվում՝ ԲՄ-21 և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ), «ԼՈՌԱ» հեռահար հրթիռներ և «Պոլոնեզ» ՀԿՌՀ-եր: Ապացույցները ստացվել են փաստահավաք խմբի անդամների փաստահավաք այցերից, զանգվածային լրատվամիջոցների աղբյուրներից, լիազոր մարմիններին, այդ թվում՝ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազությանը հասցեագրված հարցումներից ստացված պատասխաններից: Ելնելով առկա ապացույցներից՝ ԲԱՏՀ փորձագետների խումբը հաստատել է չկառավարվող, բեկորաֆուգասային զենքերի օգտագործման բազմաթիվ դեպքեր, որոնց կիրառումը բնակելի տարածքներում խիստ խնդրահարույց է: Նման զենքերն ունենում են հարվածային, բեկորային և ջերմային հետևանքներ: Կարևոր է ընդգծել, որ նման զենքերի պայթյունի կենտրոնից բեկորները սկզբում սլանում են

մեծ արագությամբ (մի քանի հազար մետր վարկյանում)՝ իրենց թռիչքի ճանապարհին պայթյունի հարվածային ազդեցության տարածքից դուրս՝ շատ ավելի մեծ հեռավորության վրա, վնաս պատճառելով թե՛ մարդկանց, թե՛ օբյեկտներին և թե՛ ցանկացած գույքի:[196] Պետք է նշել, որ բեկորաֆուգասային մարտագլխիկները, ի տարբերություն պայթյունի էներգիայի,[197] հիմնականում նախատեսված են մեծ արագություն ունեցող բեկորներ առաջացնելու միջոցով թիրախին վնաս հասցնելու համար, ինչը դրանց օգտագործումը բնակելի տարածքներում դարձնում է ավելի վտանգավոր և սարսափելի: ԲԱՏՀ խումբը մասնավորապես բացահայտել է ադրբեջանցիների կողմից հետևյալ զենքերի կիրառումը. «Elbit Systems»-ի 306մմ ցամաքային հեռահար հրետանու հրթիռներ (EXTRA), 9M5 շարքի 122մմ ցամաքային, 9M5 շարքի 300մմ ցամաքային հրթիռներ և 160մմ LAR հրթիռներ: Համազարկային կրակի կայանքներից, ըստ ԲԱՏՀ խմբի, կիրառվել են БМ-21 «Գրադ» ՀԿՌՀ, 9K58 շարքի «Սմերչ» ՀԿՌՀ, «Lynx» ՀԿՌՀ:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ բնակելի տարածքներում և դրանց մոտակայքում օգտագործված զենքերի տեխնիկական որոշ հատկանիշները դրանց կիրառումը ևս դարձնում են ոչ ընտրողական: 9M5 շարքի հրթիռների (ինչպես նաև որոշ այլ հրթիռների, այդ թվում՝ իսրայելական «Elbit Systems»-ի 306մմ ցամաքային հեռահար հրետանու հրթիռների) ուժային կայանքի մղիչ հատվածները, որոնք բազմիցս փաստագրվել են այս պատերազմի ընթացքում, անջատվում են հրթիռի հետագծի միջնակետում և ավելի հաճախ հարվածում են արձակման և թիրախային կետերի միջև ընկած տարածքներին:[198] Հետևաբար, հաշվի առնելով, որ զենքը կիրառող պետությունը գիտի և պետք է իմանա իր զինանոցում առկա տվյալ զենքի տեխնիկական հատկանիշների մասին, ապա այն պարտավոր է գնահատել բնակելի տարածքում ուժային կայանքի հատվածի ընկնելու հավանականությունը և դրանով հասցվելիք վնասը, որպեսզի հարձակման ոչ ընտրողական բնույթը որոշելու ընթացքում կարողանա կանխել ուժային կայանքի հատվածի կանխատեսելի վնասը: Հարկ է նշել, որ բնակելի տարածքներին այդ զինամթերքի ուժային կայանքի հատվածի հասցրած վնասները բազմիցս են արձանագրվել այս պատերազմի ընթացքում, այդ թվում՝ Ստեփանակերտում, Շուշիում և Մարտունիում:

Հարկ է նաև նկատել, որ այլ զինված հակամարտությունների համատեքստում «Գրադ» և «Սմերչ» ՀԿՌՀ-ները բնութագրվել են որպես ոչ ընտրողական, երբ կիրառվել են բնակելի տարածքներում: Մասնավորապես Մարդու իրավունքների խորհուրդը նշել է, որ «Սմերչ» ՀԿՌՀ-ն չկառավարվող զենք է, որը կարող է համազարկով արձակել մինչև 12 արկ, ինչը մեծացնում է խոցման մակերեսը և դարձնում զենքն ավելի ոչ ընտրողական և նշանառմամբ ոչ դիպուկ:[199] Ինչ վերաբերվում է «Գրադ»-ին կամ БМ-21-ին, որը խոցման լայն տարածք ունեցող անուղղակի նշանառման զենք է, ապա այն նախատեսված չէ կետային թիրախ խոցելու համար: Անճշտության և արձակված արկերի մեծ քանակության

196 Ove Dullum et al., “Indirect Fire: A Technical Analysis of the Employment, Accuracy, and Effects of Indirect-Fire Artillery Weapons” (Armament Research Services, January 2017), 79, https://www.icrc.org/en/document/indirect-fire-technical-analysis-employment-accuracy-and-effects-indirect-fire-artillery.

197 Dullum et al., 83.

198 ԲԱՏՀ փորձագետների վերլուծություն, տե՛ս նաև՝ N.R. Jenzen-Jones, “9M27K Series Cargo Rockets Used in Ukraine,” Armament Research Services (ARES), July 11, 2014, https://armamentresearch.com/9m27k-series-cargo-rockets-used-in-ukraine/..

199 Սիրիայի Արաբական Հանրապետության հարցերով անկախ միջազգային հանձնաժողովի զեկույց (A/HRC/44/61) (չխմբագրված տարբերակ) - Սիրիայի Արաբական Հանրապետություն (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, հուլիսի 2, 2020թ.), պարբ. 53, https://reliefweb.int/report/syrian-arab-republic/report-independent-international-commission-inquiry-syrian-arab-10

պատճառով այն կարող է անկանոն, չծրագրավորված և անկախատեսելի ազդեցություն ունենալ քաղաքացիական անձանց վրա:[200] Մեկ այլ եզրակացության մեջ նշվել է, որ համազարկային կրակի «Գրադ» ռեակտիվ կայանքները և կասետային զինամթերքը երկու զինատեսակներ են, որոնց կիրառումը նրանց ոչ ճշգրիտ լինելու պատճառով առանձնակի վտանգավոր է և լի մահաբեր հետևանքներով ոչ կոմբատանտների համար:[201] Լիբիայի հակամարտության վերաբերյալ փաստահավաք առաքելությունների ադրյունքում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ) եզրակացրել է, որ «խիտ բնակեցված բնակելի տարածքներում ծանր զենքերի, ինչպիսիք են «Գրադ» հրթիռների և ռեակտիվ նռնականետերի նռնակների գործածությունը, ընդունելի չէ, քանի որ հնարավոր չէ բավարար ճշգրտությամբ ապահովել դրանց նշանառումը»,[202] իսկ բնակելի տարածքներում դրանց կիրառման փաստը, որը հանգեցրել է բնակելի շենքերի մեծածավալ վնասման և քաղաքացիական անձանց մահվան և վիրավորումների, համարվել է անխտրական նշանառմամբ իրականացված հարձակման հետևանք:[203] Բացի այդ, ԿԽՄԿ-ի կարծիքով, խոցման մեծ շառավիղ ունեցող պայթուցիկ զինամթերքը չպետք է օգտագործվի խիտ բնակեցված տարածքներում, քանի որ մեծ է դրանց ոչ ընտրողական հետևանքների հավանականությունը, ինչը նշանակում է, որ նման զինամթերքի օգտագործումը բնակելի տարածքներում տեղակայված ռազմական օբյեկտի վրա[204] կարող է խախտել ոչ ճշգրիտ և անհամաչափ հարձակումներն արգելող ՄՄԻ-ի կանոնները:[205] Հետևաբար՝ նույնիսկ այն դեպքերում, երբ բնակելի տարածքների մոտակայքում կարող են լինել ռազմական օբյեկտներ, ոչ ընտրողական, ոչ ճշգրիտ զենքերի կիրառումը, թիրախավորման մասին ՄՄԻ-ի կանոնների և հետևաբար նաև կյանքի իրավունքի խախտում է, ինչն Ադրբեջանը թույլ է տվել բազմիցս:

Վերը նշվեց, որ 2020 թվականի սեպտեմբերին սանձազերծած պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակավայրերի դեմ Ադրբեջանը կիրառել է «Սմերչ» և «Գրադ» ՀԿՌՀ-ներ՝ չնայած ունեցել է ճշգրիտ նշանառման զենքեր, օրինակ՝ ԱԹՍ-ներ և 10մ շրջանային հավանական շեղում (CEP) ունեցող LORA հրթիռներ: Հետևաբար՝ ոչ ճշգրիտ զենքերի օգտագործումը, երբ տվյալ երկրի զինանոցում եղել են ճշգրիտ զենքեր և հետախուզական միջոցներ (օրինակ՝ ԱԹՍ-ներ), վկայում է զենքերի ընտրության կանխամտածված չարաշահման մասին և փաստում, որ խախտվել է քաղաքացիական և ռազմական

200 Սիրիայի Արաբական Հանրապետության հարցերով անկախ միջազգային հանձնաժողովի զեկույց (A/HRC/44/61) (չխմբագրված տարբերակ) - Սիրիայի Արաբական Հանրապետություն (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, հուլիսի 2, 2020թ.), պարբ 87:

201 Վրաստանի հակամարտության վերաբերյալ անկախ միջազգային փաստահավաք առաքելություն (Եվրոպական միության խորհուրդ, սեպտեմբեր, 2009թ.), պարբ. 29, https://casebook.icrc.org/case-study/georgiarussia-independent-international-fact-finding-mission-conflict-south-ossetia, «Քաղաքացիական անձինք՝ կրակագծում. Վրաստան-Ռուսաստան հակամարտություն», (Amnesty International, նոյեմբերի 18, 2008թ.), էջ 24, https://www.amnesty.org/en/documents/eur04/005/2008/en/

202 «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետաքննությունը Լիբիայում. մանրամասն բացահայտումներ» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, փետրվարի 15, 2016թ.), պարբ. 101, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/LY/A_HRC_31_CRP_3.pdf.

203 «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետաքննությունը Լիբիայում. մանրամասն բացահայտումներ»

204 «Քաղաքները, գյուղերը կամ այլ տարածքները, որտեղ կա քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտների համանման կենտրոնացում, պետք է դիտարկվեն որպես խիտ բնակեցված տարածքներ: Տե՛ս «Միջազգային մարդասիրական իրավունքը և ժամանակակից զինված հակամարտությունների մարտահրավերները», զեկույց (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, նոյեմբերի 13, 2015թ.), էջ 49, https://www.icrc.org/en/document/international-humanitarian-law-and-challenges-contemporary-armed-conflicts.

205 «Փորձագետների հանդիպում. պայթուցիկ զենքեր բնակեցված վայրերում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, փետրվարի 25, 2015թ.), էջ 8, https://shop.icrc.org/expert-meeting-explosive-weapons-in-populated-areas.html.

Պատկեր 7.33. Ավերված տներ Մարտունի քաղաքում, դեկտեմբերի 11, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

օբյեկտները տարբերակելու պարտավորությունը:

Մարտունի քաղաք այցի ընթացքում փաստահավաք առաքելության անդամները տեսել են զենքերի նման կիրառման հետևանքներ, որոնք առկա էին քաղաքի ամբողջ տարածքում:

Ռմբակոծության և հրետակոծության ակնհայտ ապացույցները, քաղաքի ամբողջ տարածքում պայթյունների հետևանքով առաջացած ռմբաձագարները[206] թողնում են այն տպավորությունը, որ բնակելի տներն ու շենքերը հայտնվել են Ադրբեջանի անկանոն կրակի տակ: Մարտունու մի բնակիչ նշել է.

> «Մի պահ կորցրի գիտակցությունս: Հետո աչքերս բացեցի, ոչ մի բան չէի լսում, միայն տեսնում էի: Տեսա՝ ինչ-որ բան էլ ընկավ հարևանիս տան վրա. նրանք մի բան էլ մյուս հարևանիս տան վրա գցեցին: Հարևանս զոհվեց: Հատուկ տների վրա էին գցում ...
>
> Ես մի կերպ վեր կացա, գոռգոռում էի, բան չէի լսում, երեխան էր ուշագնաց ընկած, աչքերը փակ էին, չէր խոսում, չէր լացում, կողքիս տեգրակինս էր՝ ոտքը ցրիվ եկած (Մանուշ Գևորգյան): Հարևանս՝ Էլլադան (Բաբայան), արնահոսում էր: Գոռգոռում էի, մտածում էի ես չեմ լսում, բայց ինձ կարող ա լսեն, էրեխեքս դուրս եկան տանից, ձեռքերով սենց եմ արել /ցույց է տալիս-գնա գնա նշան/, արագ մտել են տուն: Հետո, երբ [ամուսնուս] հաջողվեց կանգնել, բոլորս ավտուբուս նստեցինք (ամուսնու ավտոբուսը) և գնացինք Մարտունու քաղաքային հիվանդանոց»:[207]

Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցի ընթացքում վերոնշյալ մեջբերման հեղինակը՝ Ա.Գ.-ն, բացատրեց, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան՝ ժամը 705-ի սահմաններում, արթնացել է հրետակոծության ձայներից: Նա նշել է, որ իրենց համար սովորական կրակոցների ձայներ չէին՝ ավելի բարձր էին: Ամուսինն ասել է նրանց, որ պատրաստ լինեն գնալու ապաստարան: Մինչ ավագ երեխաները հագնվել են, Ա.Գ.-ն դուրս է եկել տնից՝ կրտսեր երեխային (երկու տարեկան) և 9-ամյա դստերը՝ Վիկային, բռնած: Դրսում տեսել է ինքնաթիռներ, ուղղաթիռներ և ԱԹՍ-ներ: Այդ պահին ինչ-որ բան անձայն պայթել է,

206 Դավիթ Գալստյան, «Ադրբեջանի ՀՈՒ-ի թիրախ դարձած Մարտունին «Գրադից» հետո. լուսանկարներ, տեսանյութ», Sputnik Արմենիա, 28 սեպտեմբերի, 2020թ. Լուրեր, https://armeniasputnik.am/20200928/grad-arcax-martuni-hretakocutyun-24646482.html

207 Հարցազրույց Մարտունու բնակիչ Ա.Գ.-ի հետ, 21 փետրվարի, 2021թ.:

և նրա դուստր Վիկան տեղում մահացել է:[208] Ա.Գ.-ն վիրավորվել է, նրա 2-ամյա որդին՝ ծանր վիրավորվել: Ա.Գ.-ն պատմել է, որ պայթյունը եղել է իրենց մեջտեղում: Դուստրը՝ Վիկան, ստացել է սրտի բեկորային վիրավորում (Վիկայի մարմնի ախտաբանաանատոմիական հետազոտությունը պարզել է, որ մահվան պատճառ են դարձել բազմաթիվ ներթափանցող բեկորները և բութ վնասվածքները):[209] Ա.Գ.-ն նույնպես ստացել է բեկորային վիրավորում (խոշոր բեկորները հեռացվել են, մի քանի փոքր բեկոր դեռ մնում են մարմնում, իսկ նրա 2-ամյա որդին ունեցել է ոտքի կոտրվածք, բեկորային վնասվածքներ և ձեռքի վնասվածք (երեք վիրահատություն է տարել) և ստիպված է եղել մոտ երեք շաբաթ մնալ հիվանդանոցում՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 20-ը, սակայն այդուհետ էլ մնացել է բժշկական հսկողության տակ:[210] Ա.Գ.-ի տեգրակինը՝ Մ.Գ.-ն, որը նույնպես վիրավորվել էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, պատմել է հետևյալը.

> «2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ ժամը 710-ի սահմաններում, բարձր ձայներ լսեցինք: Դուրս եկանք բակ և տեսանք, որ ամբողջ երկինքը բեզպիլոտնիկներով լիքը, անընդհատ կրակոցներ էին գալիս: Ամուսինս էլ դիրքերում էր, զանգեց, թե չվախենաք մտեք տուն: Հարևաններով հավաքվեցինք մեր բակը, ասեցինք տաքսի զանգ տանք տնից դուրս գանք, որ գնանք մի տեղ պախկվենք: Մեր թաղում չկար հարմար տեղ: Ապաստարան, նկուղ չկար, մեր տունն էլ չունի: Գնացել ենք դուրս, որ զանգեինք: Երեխաները ինձ մոտ էին, ուղարկեցի տուն, որ իրերը հավաքեին: Էդ մոմենտին ես էի, հարսս՝ Ա.Գ.-ի հետ էինք, ում գրկում իր 2-ամյա որդին էր, իսկ նրա 9-ամյա դուստրը (Վիկան) իմ կողքին էր: Կողքիս էր նաև մեր հարևանուհի Էլլադան: Ուզում էինք զանգել տաքսի, էլ չկարողացանք, կրակը մեր մեջ ընկավ: Երեխան [Վիկան] իմ կողքիս ընկած էր, ես էլ ընկած էի...
>
> Երեխային ես բարձրացրի տեսա՝ գլխի մի մասը լրիվ արյուն էր: Ուշքս գնաց էդտեղ: Էլ ոնց եմ եկել հիվանդանոց, չեմ հիշում»:[211]

Մ.Գ.-ն մեջքին և գլխին ստացել էր բեկորային վնասվածքներ: Իրանի և ոտքի շրջանում դեռ կան բեկորներ: Նա ծանր վիրավորվել էր: Նախ վիրահատվել էր Ստեփանակերտում, ապա՝ տեղափոխվել Ծուշիի հիվանդանոց: Հետագայում նրան տեղափոխել էին Երևան, որտեղ վիրահատել էին ծունկը և սրունքը: Պայթյունից վնասվել էին նրա բոլոր վերջույթները՝ բացառությամբ ձախ ձեռքի:

Մարտունի քաղաքի մեկ այլ բնակիչ՝ Էլլադան, զոհվել է այս նույն միջադեպի հետևանքով: Սույն փաստահավաք խմբի անդամների հետ զրույցում Էլլադայի ամուսինը՝ Ծ.Բ.-ն, պատմել է հետևյալը.

> «Առաջին պայթյունի ժամանակ ես տանն էի: Պայթյունը լսեցինք, դուրս եկանք. Ես էլ նայեցի դուրս, ասկոլկեքը խփեցին: Ամենամոտիկ պայթյունը երևի 3 մետրի վրա ա եղել, ոչ ավել: Մի ասկոլկա էլ տան պատը ծակեց: Հետո դեռ երկար ժամանակ զոքանչիս չէի ասում, որ աղջիկը մահացել ա, հարցնում էր՝ Էլլադան ո՞ւր ա, ասում էինք՝ հեսա կգա: Զոքանչս շատ ծեր կին ա»:[212]

208 ARTSAKH TV NEWS ՕՐ, "Լրատվական, Հակառակորդը Թիրախավորել է Մարտունի Քաղաքի Թաղամասերից Մեկը," September 27, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=rLKCdWBV4WE; @wargonzo, ЭКСКЛЮЗИВКарабах в огне...," September 28, 2020, Telegram video, https://t.me/wargonzo/3492; "Artsakh Human Rights Defender Reports the Names of Four Killed Civilians," The Human Rights Defender of Artsakh, September 29, 2020, https://artsakhombuds.am/en/news/456..

209 Արցախի քննչական կոմիտեից ստացված գրություն:

210 Հարցազրույց Ա.Գ.-ի հետ, 22 փետրվարի, 2021թ., տե՛ս նաև՝ «Արցախում վիրավորված փոքրիկ Արծվիկը դուրս է գրվել հիվանդանոցից. լուսանկար», Սպուտնիկ Արմենիա, հոկտեմբերի 20, 2020թ., Լուրեր, https://armeniasputnik.am/20201020/poqrik-artsviky-durse-grvel-hivandanocic-24989816.html.

211 Հարցազրույց Մարտունու բնակիչ Ա.Գ.-ի հետ, 21 փետրվարի, 2021թ.:

212 Հարցազրույց Մարտունու բնակիչ Ս.Բ.-ի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

Պատկեր 7.34. 2020թ.-ի սեպտեմբերի 27-ի դեպքի վայրը, Մարտունի (Աղբյուրը՝ Արցախի հեռուստատեսություն, Լուրեր)

Պատկեր 7.35. Տան դրսի հատվածին հասցված վնասը (դեպքի մոտակայքում) (Աղբյուրը՝ Lurer.com լրատվական գործակալություն):

ԲԱՏՀ ուսումնասիրությամբ պարզվել է, որ այս միջադեպի վայրին մոտ կիրառվել է իսրայելական «Elbit Systems»-ի LAR-160 ցամաքային հրթիռ, որը կրում և արձակում է «Lynx» ՀԿՌՀ-ն: Այն կարող է կրել մինչև 26 նման հրթիռ:[213] «Lynx» ՀԿՌՀ-ն չուղղորդվող, բեկորաֆուգասային զենք է և նկարագրվում է որպես հարաբերականորեն ոչ ճշգրիտ նշանառություն ունեցող զինատեսակ: Այս զինամթերքին բնորոշ տեխնիկական հատկանիշներն այնպիսին են, որ այն կիրառելու դեպքում կարող է մեծանալ քաղաքային բնակավայրերում կամ խիտ բնակեցված այլ վայրերում խաղաղ բնակչության կորուստների հավանականությունը:[214] ԲԱՏՀ փորձագետները եզրակացրել են, որ վերոհիշյալ վայրում վնասն առաջացել է բեկորների և պայթյունի գերճնշման համադրությունից, ինչը համապատասխանում է բեկորաֆուգասային մարտագլխիկների կիրառմանը: Զեկույցի այս համատեքստում հարկ է հիշատակել, որ ԿԽՄԿ-ն մտահոգիչ է համարում չուղղորդվող այն զինամթերքի օգտագործումը, որն ունի խոցման մեծ մակերես և բեկորներով ու պայթյունի էներգիայով խոցելու կամ հարվածելու մեծ շառավիղ:[215] Նման զենքերի կիրառումը բնակելի տարածքներում համարվում է անխտրական թիրախավորում:

Պատկեր 7.36. Դեպքի վայրը 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին, Մարտունի (Աղբյուրը՝ Արցախի հեռուստատեսություն, Լուրեր):

Ռազմական գործողությունների ընթացքում ոչ տարբերակված հարվածներ են հասցվել բազմաթիվ այլ տների և կառույցների: Օրինակ, Մարտունի քաղաքում հրթիռը հարվածել է Ն.Բ.-ի տանը՝ ծակելով երկրորդ հարկի առաստաղը: Ն.Բ.-ն տան ներսում հայտնաբերել է հրթիռի մնացորդները և տեղափոխել տնամերձ այգի (ստորև՝ լուսանկարում): Մարտունի կատարած այցի ընթացքում փաստահավաք խմբի անդամներն ուսումնասիրել են տունը, որը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, և որի մոտակայքում ռազմական որևէ օբյեկտ չի հայտնաբերվել:

213 ԲԱՏՀ փորձագետների եզրակացություններ:

214 ԲԱՏՀ փորձագետների եզրակացություններ: Տես նաև՝ Ove Dullum, "The Rocket Artillery Reference Book" (Norwegian Defence Research Establishment, June 30, 2010), https://www.ffi.no/en/publications-archive/the-rocket-artillery-reference-book.

215 «Միջազգային մարդասիրական իրավունքը և ժամանակակից զինված հակամարտությունների մարտահրավերները», էջ 49:

Պատկեր 7.37. Ն.Բ.-ի տանը հարված հասցրած զենքի լուսանկարը (Աղբյուր՝ Փաստահավաք խումբ, դեկտեմբերի 11, 2020թ.)

Պատկեր 7.38. Ն.Բ.-ի տան վնասված տանիքը (Աղբյուրը՝ Փաստահավաք խումբ, դեկտեմբերի 11, 2020թ.):

Պատկեր 7.39. Պ.Ս.-ի տունը Մարտունի քաղաքում (Աղբյուր՝ Փաստահավաք խմբի անդամների արած լուսանկարները (դեկտեմբերի 11, 2020թ.):

Պատկեր 7.40. Պ.Ս.-ի տունը, Մարտունի քաղաք (Աղբյուրը՝ Փաստահավաք խումբ, դեկտեմբերի 11, 2020թ.):

2020 թվականի հոկտեմբերի 10-ին իր տան հրետակոծության ժամանակ զոհվել է Մարտունի քաղաքի 75-ամյա բնակիչ Պ.Ս.-ն, որը մնացել է քանդված տան փլատակների տակ: Նրա մարմինը փլատակների տակից հանել են Մարտունու բնակիչները և Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության փրկարարները:[216] Պ.Ս.-ի մարմնի ախտաբանաանատոմիական հետազոտությամբ հայտնաբերվել են հեմատոմաներ, մարմնի և գլխի տարբեր մասերի կոտրվածքներ,[217] որոնք, հավանաբար առաջացել են պայթյունից հետո իր տան փլատակների տակ հայտնվելու հետևանքով: Մարտունի կատարած այցի ընթացքում փաստահավաք խմբի անդամներն ուսումնասիրել են տունը, որը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, և որի մոտակայքում ռազմական որևէ օբյեկտ չի հայտնաբերվել:

61-ամյա Գ.Մ.-ն բնակվել է Մարտակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցում: Իր խոսքերով՝ Մարտակերտ քաղաքի ռմբակոծությունը սկսվել է սեպտեմբերի 27-ին՝ վաղ առավոտյան՝ 730-800-ի սահմաններում:[218] Փաստահավաք խմբին նա պատմել է հետևյալը.

> «Առաջին օրվանից հետո [2020թ. սեպտեմբերի 27] նրանք սկսեցին հարվածել բուն Մարտակերտ քաղաքին: Չեմ էլ կարա ասեմ, թե օրը ինչքան են կրակել: Օրվա մեջ երևի մենակ մի ժամ ա եղել, որ երևի իրանց հաց ուտելու ժամն էր, որ չէին կրակում, մնացած ժամանակ սաղ օրը՝ յա գռադով, յա պուշկեքով, յա օդային: Գիշերներն էլ են ռմբակոծել...: Վերջին գիշերը, արդեն զինադադարից հետո [նոյեմբերի 9, 2020թ.], վերջին արկով խփել են մեր հիվանդանոցի առաջի շենքին, էնդեղ դեղատուն ա ու բիստրո, լրիվ ավիրել ա, երևի ժամը 2-ին, 3-ին»:[219]



Պատկեր 7.41. Կարմիր խանութը, որի մոտ զոհվել են Դ.Խ.-ի հայրը, մայրը և մորաքույրը/հորաքույրը: Տեսանելի են նաև զենքի մնացորդները (Աղբյուրը՝ Factor TV):

216 Արցախի գլխավոր դատախազությունից ստացված գրություն, Միջանկյալ զեկույց ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում սպանված քաղաքացիական անձանցք դեպքերի մասին, «Մարտունիում Հրետակոծությունից Մահացել է 75-Ամյա Պարգև Սաղյանը. ՏԵՍԱՆՅՈՒԹ» Ֆակտոր տեղեկատվական կենտրոն, հոկտեմբերի 12, 2020թ., https://factor.am/294613.html

217 ցախի քննչական կոմիտեից ստացված գրություն:

218 Տես Գ.Մ.-ի հետ հարցազրույցը (18 դեկտեմբերի, 2020 թ., Մարտակերտ քաղաք):

219 Նույն տեղում:

Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցում Մարտակերտի 38-ամյա բնակիչ Դ.Խ.-ն նշել է, որ Մարտակերտ քաղաքի հրետակոծումը սկսվել է առաջին օրվանից՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից: 2020 թվականի սեպտեմբերի 30-ին նա Մարտակերտ է առաքել սննդամթերք, երբ տեսել է քաղաքի խանութներին հասցվող հարվածները: Նա և իր ընտանիքն այդ ժամանակ գտնվել են սննդամթերքի իրենց սեփական խանութում: Երբ խանութից դուրս են եկել, մայրը, հայրը և մորաքույրը (կամ հորաքույրը) հեռացել են, իսկ Դ.Խ.-նվերադարձել է խանութի՝ բանալիների հետևից, որ փակի այն: Խանութ վերադառնալը փրկել է նրա կյանքը, քանի որ մյուսները (հայրը, մայրը և մորաքույրը/հորաքույրը), ովքեր գտնվել են դրսում, զոհվել են տեղում «Գրադ»-ի բեկորներից (Դ.Խ.-նպնդում է, որ տարածքը հրետակոծելու համար կիրառվել է «Գրադ»):[220] Դ.Խ.-ի 65-ամյա հայրը՝ Հ.Խ.-ն, մահացել է հեմոռագիկ շոկից, գլխի, կրծքավանդակի և որովայնի շրջանում ստացած ականապայթյունային վիրավորումից: Իսկ Դ.Խ.-ի 63-ամյա մայրը՝ Լ.Մ.-ն, մահացել է տրավմատիկ, հեմոռագիկ շոկից, համակցված գանգուղեղային բաց, իրանի և վերջույթների բաց և փակ պայթյունային բեկորային վիրավորումից, ոսկրերի կոտրվածքներից, գլխուղեղի արյունազեղունից:Դ.Խ.-ն ևս լուրջ վնասվածքներ է ստացել. ձախ և աջ սրունքներում հրազենային բեկորային միջանցիկ վիրավորում, ձախ կողմում՝ գաստրոկնեմիուսի ջնջխում:[221]

Մայրաքաղաք Ստեփանակերտի վրա անխտրական հարձակումները գրավել են միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների ուշադրությունը, որոնք հաստատել են այդ հարձակումների ոչ տարբերակված բնույթը:[222] «Human Rights Watch»-ն այցելել է Ստեփանակերտ և տեղում քննել ու հայտնաբերել բազմաթիվ դեպքեր, երբ ադրբեջանական զինված ուժերը կիրառել են իրենց բնույթով ոչ ճշգրիտ կասետային զինատեսակ, հրետանային արկեր կամ այլ զենքեր, որոնք չեն տարբերակում քաղաքացիական և ռազմական օբյեկտները: «Human Rights Watch»-ը հաստատել է, որ Ստեփանակերտին հարվածներ հասցնելու համար կիրառվել են կասետային զինամթերք և «Սմերչ» և «Գրադ» ՀԿՌՀ-ից արձակված հրթիռներ, որոնք չունեն ճշգրիտ նշանառման հնարավորություն:

Կարևոր է նշել, որ փաստահավաք առաքելության անդամները կատարած այցերի արդյունքում հանգել են այն եզրակացության, որ ադրբեջանական զինված ուժերը զերծ չեն մնացել իրենց բնույթով ոչ ճշգրիտ զենքերով բնակելի տարածքներին հարվածներ հասցնելուց, ինչպես նաև ավիառումբեր են նետել ակնհայտ ռազմական օբյեկտներ չունեցող բնակելի տարածքների վրա և ծանր հրետանով հրետակոծել դրանք: 2020 թվականի դեկտեմբերին Ստեփանակերտ կատարված այցի ընթացքում, փաստահավաք առաքելության անդամները տեսել են նաև ադրբեջանական զինված ուժերի կողմից այնպիսի տարածքների թիրախավորման հետևանքներ, որտեղ չեն եղել ռազմական օբյեկտներ, կամ որոնց մոտակայքում չեն եղել նմանատիպ օբյեկտներ:

Պատերազմի առաջին օրը վիրավորում ստացած Ստեփանակերտի բնակիչ Ա.Ս.-ն հայտնել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան՝ ժամը 7-ի սահմաններում, դուրս է եկել տնից, որպեսզի գնա և հավաքի իր աշխատանքային գործիքները և սարքերը (աշխատում

220 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Դ.Խ.-ի հետ, 19 մարտի, 2021թ, տես նաև՝ «Բացառիկ ռեպորտաժ հրետակոծվող Մարտակերտից. ՏԵՍԱՆՅՈՒԹ», Ֆակտոր տեղեկատվական կենտրոն, հոկտեմբերի 2, 2020թ., https://factor.am/290128.html

221 Էրեբունի բժշկական կենտրոնում ստացիոնար խնամքի մասին զեկույց:

222 “Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh.”

էր շինարարությունան ոլորտում):[223] Մեքենան վարելիս իր վերևում ձայներ է լսել: Կայանել է մեքենան, դուրս եկել, նայել դեպի վերև և տեսել ընկնող ռումբեր: Այդ պահին պայթյուն է զգացել իր աջ կողմում: Վազել է իր տան ուղղությամբ, բայց գիտակցելով, որ պայթյունների պատճառով դա կարող է վտանգավոր լինել, իջել է մոտակա շենքի նկուղը: Ներսում հայտնվելուց հետո պատռել է իր հագուստը և վիրակապել վնասված ոտքը, ինչպես նաև մեջքի վերքերը՝ արնահոսությունը կանգնեցնելու համար (թիկունքից ստացել է բեկորային վնասվածքներ, իսկ բժշկական զննումը ցույց է տվել, որ վիրահատություն հնավարոր չէ, քանի որ բեկորները շատ մոտ են եղել նյարդային համակարգին, և այդ հատվածում վիրահատական միջամտությունն ունի մեծ վտանգներ):Նա համոզված է, որ վիրվորվել է ԱԹՍ հարվածից:[224]

Մեկ այլ վկա՝ 65-ամյա Լ.Ս.-ն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ի սահմաններում, գտնվել է տանը, երբ լսել է ձայներ և կարծելով, որ ինչ-որ պայթյուն է եղել՝ դուրս է եկել տնից.

> «Տնից դուրս եկա: Տեսա, որ այլ տեղերում էլ էին պայթյուններ եղել, ուղիղ գլխավերևս երեք պարաշյուտ էր իջնում: Այդ պահին շրջվեցի, որ հետ գնամ. ամենամոտ տեղը մեր շենքի շքամուտքն էր: Հարված ստացա հենց մուտքի մոտ, չհասկացա պայթյունի ալիքն էր, թե ռումբը. չեմ հիշում: Կանգնեցի, ցավ չէի զգում, տեսա այրվող մեքենաներ. մեկը ջարդված էր: Հասկացա, որ պատերազմ է սկսվում: Ցավ չէի զգում, բայց երբ հարևաններս տեսան ինձ, ստիպեցին հիվանդանոց գնալ: Զարմացա, քանի որ ցավ չէի զգում, բայց նրանք ասացին, որ մեջքս աբողջությամբ արյուն է: Պարզվեց՝ բեկորները վիրավորել են ինձ»: [225]

Հիվանդանոց տեղափոխվելուց հետո բժիշկները պարզել են, որ նրա վիճակը ծանր է: Լ.Ս.-ն վիրահատվել է, բայց մարմնում դեռ բեկորներ կան: Լ.Ս.-ի խոսքերով՝ Ստեփանակերտի այն թաղամասը, որտեղ ինքն էր բնակվում, ամենաշատ թիրախավորված տարածքներից է եղել, քանի որ գտնվել է էլեկտրակայանի մոտ:

Պայթյունի նկարագրությունը, հանգամանքները, պայթյունից առաջ նկատված բազմաթիվ պարաշյուտները և Լ.Ս.-ի ստացած վնասվածքները համապատասխանում են կասետային զինամթերքի պայթյունից ստացած հետևանքներին: Մասնավորապես տուժողի տեսած պարաշյուտները բնորոշ են ավիացիոն զինատեսակների, օրինակ՝ կասետային զինատեսակի, որոնք արձակում են փոքր ռումբեր, որոնց վայրէջքը կայունացվում է պարաշյուտներով:[226] Կիրառվածզենքիխոցմանմեծտարածքընույնպեսբնորոշէկասետային զինատեսակին, քանի որ դրա փոքր ռումբերի ընդամենը մեկ կոնտեյները կարող է ծածկել հարվածային մեծ մակերես:[227] Բացի այդ, պայթյունից և բեկորների հարվածներից Լ.Ս.-ի ստացած բազմաթիվ վիրավորումները[228] նույնպես վկայում են կասետային զինամթերքի կիրառման մասին: Կասետային զինամթերքի կիրառումն Արցախի ամբողջ տարածքում

223 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Ա.Ս.-ի հետ, 2 փետրվարի, 2021թ

224 Գլխավոր դատախազության գրության մեջ ասվում է, որ Ա.Ս.-ն վիրավորվել է հրթիռի պայթյունի հետևանքով, զենքի ստույգ տեսակը չի նշվում:

225 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Լ.Ս.-ի հետ, 2 մարտի, 2021թ.:

226 "How Cluster Bombs Work," Humanity and Inclusion, accessed April 23, 2022, https://www.hi-us.org/how_cluster_bombs_work.

227 "How Cluster Bombs Work."

228 "Cluster Munition Victims" (International Committee of the Red Cross, February 29, 2008), https://www.icrc.org/en/doc/resources/documents/legal-fact-sheet/cluster-munitions-victims-factsheet-020208.htm.

փաստագրել են միջազգային տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ «HALO Trust-ը»[229] և «Human Rights Watch»-ը:[230]

Ն.Լ.-ի տունը գտնվել է Ստեփանակերտ քաղաքի Ալեք Մանուկյան փողոցում: 2020 թվականի հոկտեմբերի 4-ին Ադրբեջանը հրետակոծել է Ալեք Մանուկյան փողոցը:[231] Ն.Լ.-ի հայրը՝ Ա.Լ.-ն, որն այդ պահին գտնվել է տանը, զոհվել է հրետակոծության հետևանքով ստացած բեկորային վնասվածքներից:[232] Նրան, արնահոսող բեկորային վնասվածքներից մահացած, գտել են իր տան պատշգամբում: Ն.Լ.-ն պնդում է, որ իրենց տան մոտակայքում ռազմական օբյեկտներ չեն եղել: Ի պատասխան փաստահավաք խմբի անդամների հարցմանը՝ Արցախի գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ Ա.Լ.-ն մահացել է 2020 թվականի հոկտեմբերի 4-ին Ստեփանակերտ քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի հրետակոծման պատճառով:

2020 թվականի դեկտեմբերին Ստեփանակերտ կատարած այցի ընթացքում առաքելության անդամները եղել են վայրերում, որտեղի բնակիչները նրանց պատմել են քաղաքացիական անձանց մահվան դեպքերի մասին, որոնք գրանցվել հենց այդ վայրերում: Դրանց թվում է Իսակովի պողոտայի 5 հասցեում գտնվող բնակելի շենքը, որի հրետակոծության հետևանքով զոհվել է 50-ամյա Ա.Գ.-ն, որը շտապել էր գալ՝ օգնելու մորը թաքնվել ապաստարանում:[233]

Պատկեր 7.42. Ալեք Մանուկյան փողոցի թիրախավորված շենքերի լուսանկարներ, Ստեփանակերտ, դեկտեմբերի 12, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

229 "A Cluster Bomb in the Attic: Aro's Story," The HALO Trust, accessed April 14, 2022, https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/aros-story/; "Making Civilians Safe in Karabakh," The HALO Trust, accessed April 23, 2022, https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/karabakh-update/; "Beware the Pink Ribbons," The HALO Trust, accessed April 23, 2022, https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/beware-the-pink-ribbons/.

230 "Azerbaijan: Cluster Munitions Used in Nagorno-Karabakh," Human Rights Watch, October 23, 2020, https://www.hrw.org/news/2020/10/23/azerbaijan-cluster-munitions-used-nagorno-karabakh.

231 Արցախի հանրային հեռուստատեսություն, «Ստեփանակերտի Ռմբակոծության Եզակի Կադրեր Степанакерт Обстреливают Из Запрещенного Оружия», հոկտեմբերի 4, 2020թ., https://www.youtube.com/watch?v=tM5KnYmcI-A

232 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Ն.Լ.-ի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

233 Միջանկյալ զեկույց, Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախում քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ, Գլխավոր դատախազությունից ստացված գրություն:

Պատկեր 7.43. Իսակովի պողոտա 5, Ստեփանակերտ (2020թ.-ի հոկտեմբերի 4-ի հրետակոծության հետևանքները), դեկտեմբերի 10, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 7.44. 300մմ 9M5 երկիր-երկիր դասի հրթիռի մղիչ հատվածը, Ստեփանակերտ (Աղբյուրը՝ War Gonzo տելեգրամյան ալիք):

Արցախի գյուղերի անխտրական թիրախավորում

Անխտրական հարձակումների են ենթարկվել նաև Արցախի գյուղերը: 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դեպքերի մասին Հադրութի շրջանի Թաղասեռ գյուղի բնակիչ Ս.Ա.-ն պատմել է հետևյալը.

> «810-820-ի սահմաններում տանն էի: Պատրաստվում էի գնալ աշխատանքի, բակում էի, օդում երկու հատ ձայն եկավ, կանգնեցի նայեմ, միչև երկու վայրկյանը ռակետ խփեց կողքիս, ու արդեն ոտքերս, ձեռքերիս, փորիս տակը բեկորներ են: Ինչ ռակետ էր՝ չգիտեմ, տրուբայի նման էր»:[234]

Նրան ինչ-որ կերպ հաջողվել է մեքենա նստել և հասնել Հադրութ քաղաքի հիվանդանոց: Արնահոսել է, ոտքին ունեցել է մեծ վնասվածք, որն ամենացավոտն է եղել: Հադրութի հիվանդանոցում տեսել է ուրիշ համագյուղացիների, ովքեր վնասվածքներ էին ստացել գյուղի վրա հարձակման պատճառով: Ս.Ա.-ն ասել է, որ գյուղում, որը Հադրութից 3 կմ է հեռու, ռազմական օբյեկտներ չեն եղել:

Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցի պահին նրա վնասվածքների մի մասը թեև բուժվել էր, բայց մարմնի մեջ դեռ կային բեկորներ: Նա դեռ չի կարողանում ծալել ձախ ոտքը, քանի որ ծունկը վնասված է: Երևանում անցած վերջին զննությունը ցույց է տվել, որ նրա մարմնում կա 12 բեկոր: Ձախ ձեռքն ունի թմրածություն, ինչը թույլ չի տալիս լիարժեքորեն օգտագործել այն: Հատկապես ցավում է ցուրտ եղանակին:

Նույն Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղի (որը վերոնշյալ Թաղասեռ գյուղից 1կմ հեռավորության վրա է) 23-ամյա բնակիչ Ա.Ա.-ն սեպտեմբերի 27-ի առավոտյան՝ ժամը 715-ի սահմաններում, քնած է եղել տանը և իր ենթադրությամբ արթնացել է երկրաշարժից: Լսել է ընտանիքի անդամների բղավոցները.

> «Ես հասկացա, որ էտի երկրաշարժի բան չի: Արդեն հասկացա որ մի բան սկսվել է: Ելա գնացի վազելով, պատուհանները բացի տեսնեմ ինչ է կատարվում, գյուղում էի էդ ժամանակ: Գյուղի ձախի յանը մի 5 անգամ սնարյադ գցեց»:[235]

Գյուղը թիրախավորվել է պատերազմի առաջին օրվանից: Ա.Ա.-ի պնդմամբ՝ վիրավորվել է կասետային զենքից, որի մարտական փոքր տարրերը հարվածել են իրենց տան տանիքին, մի մասն ընկել է տանիքից, և դրանցից մեկը վնասել է իրեն.

> «էդ ժամանակ [փոքր ռումբերը] ընկել են տանիքի վրա, ու իմ վրա է թափվել, սաղ չի թափվել իմ վրա, սաղ որ թափված լիներ, հիմա ես ստեղ չէի լինի, մի հատ սենց շարիկ է ինձ կպել: ...էդ էլ տրաքեց, ոտս ջարդեց, մի թեթև կրակ ելավ, բոցի պես, պայթյունից: Հետո վալնա առաջացրեց ու էդ վալնեն ինձ տվեց պատով: Հետո, որ տեսա ձեռս ջարդվեց, սենց կախ էր ընկել, էսքան մասը փշուր-փշուր է եղել, էս վերևի ոսկորը: Հետո ներքևի ոսկորն էլ է ջարդվել, մենակ էս ջլերն էր պահում, սենց կախվել էր»:[236]

Ա.Ա.-ի խոսքով՝ Վարդաշատ գյուղում ռազմական օբյեկտներ չեն եղել:

Մեկ այլ դեպքում Ավետարանոց գյուղի 58-ամյա բնակիչ Հ.Ա.-ն վնասվածքներ է ստացել գյուղի հրատակոծման ժամանակ: Տարհանումը սկսվել է, երբ ադրբեջանական զինված ուժերը շարժվել են գյուղի ուղղությամբ, և հոկտեմբերի 26-ից սկսած՝ գյուղը ենթարկվել է ուժեղ ռմբակոծության: Հ.Ա.-ն պնդում է, որ կիրառվել է կասետային զինատեսակ, և երբ հոկտեմբեր

234 Հարցազրույց Թաղասեր գյուղի բնակիչ Ս.Ա.-ի հետ, 2 մարտի, 2021թ.:

235 Հարցազրույց Վարդաշատ գյուղի բնակիչ Ա.Ա.-ի հետ, 27 հունվարի, 2021թ.:

236 Նույն տեղում:

ամսին, դրանք կիրառվել են հինգերորդ անգամ, գլխին և ոտքին վիրավորումներ է ստացել (բեկորային վնասվածքներ է ստացել)։ Փաստահավաք խմբին նա պատմել է հետևյալը.

> «Ես մեր տան հայաթում էի։ Երբ կասետային ռումբը գցեցին, ես ու բաջանաղս վիրավորվեցինք։ Գյուղում մեծահասակ մարդիկ կային։ Վազելով եկան, կապեցին, որ արյուն չգնա, հետո ժիգուլիով մի մարդ ինձ ու բաջանաղիս գյուղից հանեց, տարավ Ստեփանակերտ»։[237]

Նրան օգնել են տեղի բնակիչները։ Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցներում Ավետարանոց գյուղի բնակիչները, նրանց թվում նաև Սիրանույշը (անունը փոխված է), հաստատել են, որ գյուղում ռազմական օբյեկտներ չեն եղել։[238]

Վերոնշյալ միջադեպերից բացի, ոչ ճշգրիտ թիրախավորմամբ հարձակումների են ենթարկվել նաև Արցախի այլ բնակավայրեր։ Վնասումներն ու փլուզումները ակնհայտորեն վկայում են բեկորաֆուգասային զենքերի կիրառման մասին։ Փաստահավաք խմբի անդամներն այցելել են նաև Կարմիր շուկա գյուղ։ Ստորև ցուցադրված լուսանկարները արված են փաստահավաք խմբի անդամների կողմից 2020 թվականի դեկտեմբերին կատարված այցի ընթացքում։

Ինչպես արդեն նշվել է, քաղաքացիական օբյեկտներին վնաս հասցրել է ոչ միայն մարտագլխիկը, այլև կիրառված զինատեսակի ուժային մղիչ կայանքի հատվածը։

237 Հարցազրույց Ավետարանոց գյուղի բնակիչ Հ.Ա.-ի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.։

238 Հարցազրույց Ավետարանոց գյուղի բնակիչ Սիրանուշի հետ, 16 փետրվարի, 2021թ.։

Պատկեր 7.45. Կարմիր շուկա գյուղը (Կարմիր շուկայում առաքելության անդամների կողմից արված տարբեր տների լուսանկարներ), դեկտեմբերի 11, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 7.46. 9M5 շարքի 300մմ «Երկիր-երկիր» հրթիռի ուժային կայանքի հատվածը քաղաքացու բակում, Ծուշի (Աղբյուրը՝ բաց աղբյուրներից վերցված նյութեր):[239]

239 Զենքը նույնականացվել է ԲԱՏՀ փորձագետների կողմից (ԲԱՏՀ եզրակացությունների հիման վրա):

Քաղաքացիական անձանց ուղղակի թիրախավորում. ԱԹՍ-ների հարձակումներ

«Ախր իրանք որ օդային նկարահանում էին, գիտեին, որ դա հացի փուռ ա, երևում էր, որ հաց են հանում: Մենք այդ անօդաչուները տեսնում էինք, որոշները շատ մոտ էին թռնում, մյուսժամանակ էլ լսում էինք: Ձենը գալիս ա, դվիժոկը լսում ես, մեկ էլ տեսար մի տեղ արդեն խփեց: Հենց ձենը լսում էինք, թաքնվում էինք: Էդ սարքերը անընդհատ Մարտակերտի մեջ նկարահանել են, իմացել են՝ ինչ ա»: [240]

Ինչպես արդեն նշվել է, 2020 թվականի սեպտեմբերին սկսած ռազմական գործողություններում Ադրբեջանը համատարած կիրառել է ԱԹՍ-ներ:[241] Ադրբեջանի զինանոցում առկա են ժամանակակից տարբեր անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ-ներ), որոնք նախատեսված են հետախուզության և հարձակման համար: ԱԹՍ-ների կազմում մասնավորապես կան հետախուզական «Aerostar» և «Searcher» դրոններ, ինքնասպան («կամիկաձե») «Obiter 1K» և «HAROP» անօդաչուներ, ինչպես նաև «Heron», «SkyStriker», «Bayraktar TB2» և «Hermes 900» բազմաֆունկցիոնալ ԱԹՍ-ներ, որոնք ունեն հետախուզական և ճշգրիտ հրթիռային հարվածներ հասցնելու հնարավորություններ:[242] Վերոնշյալ անօդաչուներն ունեն հետախուզական և թիրախավորման արդի կարողություններ, որոնք տալիս են ճշգրիտ նշանառման հնարավորություն: Մասնավորապես նշանառությունը, հետախուզումը և թիրախների տեղորոշումը հիմնականում կատարվում են գերժամանակակից հետախուզական սարքերով՝ տարբեր էլեկտրոնային հետախուզական սենսորներով («CO-MINT», «ELINT», որոնք ընդունակ են հավաքագրելու հետախուզական տվյալներ, անգամ արձանագրել մարդկանց միջև հաղորդակցությունը և կապի մեջ անմիջականորեն չօգտագործվող ազդանշանները),[243] GPS (գլոբալ տեղակայման համակարգ) նավիգացիոն միջոցներով, ինչպես նաև GPS-ի համար արգելված գոտիներում կիրառվող նավիգատորներով:[244] Որոշ ԱԹՍ-ներ նախագծվում են որպես անձայն, անտեսանելի, անակնկալ հարվածային դրոններ, որոնք կարող են թռչել ցածր բարձությունների վրա: Սա նրանց հնարավորություն է տալիս՝ դիտելու և գտնելու թշնամու թիրախը մինչև նրանց արագ և ճշգրիտ հարված հասցնելը:[245] Վերը նշվածները ներկայացնում են Ադրբեջանի ունեցած ԱԹՍ-ների հետախուզական և թիրախավորման ժամանակակից կարողությունների միայն մի մասը և ապացուցում, որ Ադրբեջանն ունեցել է ռազմական և քաղաքացիական

240 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Մ.Գ.-ի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

241 Robyn Dixon, "Azerbaijan's Drones Owned the Battlefield in Nagorno-Karabakh — and Showed Future of Warfare," Washington Post, November 11, 2020, https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabkah-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html; Shaan Shaikh and Wes Rumbaugh, "The Air and Missile War in Nagorno-Karabakh: Lessons for the Future of Strike and Defense" (Center for Strategic and International Studies, December 8, 2020), https://www.csis.org/analysis/air-and-missile-war-nagorno-karabakh-lessons-future-strike-and-defense; Mike Eckel, "Drone Wars: In Nagorno-Karabakh, The Future Of Warfare Is Now," Radio Free Europe/Radio Liberty, October 9, 2020, sec. Features & Blogs, https://www.rferl.org/a/drone-wars-in-nagorno-karabakh-the-future-of-warfare-is-now/30885007.html.

242 "Skystriker," Elbit Systems, հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 23-ին, https://elbitsystems.com/products/uas/skystriker/; "Bayraktar TB2," հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 23-ին, https://www.baykartech.com/en/baykartech.com; "HermesTM 900 Maritime Patrol UAS," Elbit Systems, n.d., https://elbitsystems.com/media/naval_hermes_900_maritime_2018_LR.pdf.

243 "Aerostar Tactical UAS (TUAS)," Aeronautics Group, հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 23-ին, https://aeronautics-sys.com/home-page/page-systems/page-systems-aerostar-tuas/.

244 "Orbiter 1K," Aeronautics Group, հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 23-ին https://aeronautics-sys.com/home-page/page-systems/page-systems-orbiter-1k-muas/.

245 "Skystriker."

օբյեկտներն ու տարածքները ճշգրիտ որոշելու և տարբերակելու, ինչպես նաև ընտրված թիրախին ճշգրիտ հարվածներ հասցնելու կարողություն:

Առկա ապացույցները ցույց են տալիս, որ Ադրբեջանն օգտագործել է վերոնշյալ դրոնները պատերազմից առաջ հետախուզական, իսկ 2020 թվականի սեպտեմբերին սանձազերծած պատերազմի ընթացքում՝ հետախուզական և հարվածային նպատակներով: Փաստահավաք խմբի անդամներին հարցազրույց տված քաղաքացիական որոշ անձինք նշել են, որ դեռևս 2020 թվականի սեպտեմբերին սկսված պատերազմից առաջ լսել են դրոնների ձայներ և տեսել՝ ինչպես են դրանք սավառնում բնակելի թաղամասերի վրա: Մ.Ա.-ն փաստահավաք խմբին պատմել է՝

> «[սեպտեմբերի 27-ից] առաջ՝ երկու ամիս մինչև այդ, դրոնները շրջում էին մեր տան վրա: Գալիս էին, մնում այնտեղ, արձանագրում վայրը և հետո հեռանում: Շատ կային դրանցից. այն ժամանակ կարծում էինք, որ կարող է մեր դրոնները լինեն, ով էր մտածում՝ ինչ է լինելու»... [246]
>
> «Ակնհայտ երևում էր որ ԱԹՍ գալիս ամբողջը նկարում և գնում էին: Ամեն ինչի տեղն էլ իմացել են»:[247]

Զենքերի մնացորդների ուսումնասիրությունը և Ադրբեջանի զինված ուժերի հրապարակած տեսանյութերի վերլուծությունը հնարավորություն է տվել հաստատելու, որ կիրառվել են հետախուզական «Orbiter 2,3», «Searcher 2» և «Heron 1», «ինքնասպան» «SkyStriker» և «Harop» ԱԹՍ-ներ:[248] Ավելին, բաց տվյալների աղբյուրների՝ այդ թվում՝ Ադրբեջանի զինված ուժերի հրապարակած տեսանյութերի և ոչնչացված դրոնների լուսանկարների վերլուծությունն օգնել է փորձագետներին հաստատելու «Aerostar» հետախուզական ԱԹՍ-ի, «IAI Harop» բարաժող դրոնի, «Skystriker» բարաժող դրոնի, «Orbiter 1K» բարաժող դրոնի, «Bayraktar TB2» հարվածային ԱԹՍ-ի և այլ ԱԹՍ-ների (փորձագետները դժվարացել են պարզել որոշ անօդաչուների տեսակները) կիրառումը:[249]

Պատերազմի ընթացքում Ադրբեջանն օգտագործել է ԱԹՍ-ներ ոչ միայն ռազմական, այլև քաղաքացիական օբյեկտների դեմ: Արձանագրվել են քաղաքացիական անձանց և օբյեկտներ ու տարածքներ թիրախավորելու, ինչպես նաև դրոնների կիրառմամբ քաղաքացիական անձանց վնասվածքներ պատճառելու դեպքեր: Առաքելության անդամները նման ապացույցներ հավաքագրել են հարցազույցներից, բաց աղբյուրներից, ինչպես նաև Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներից և գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվությունից:

Օրինակ, Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության տրամադրած պատասխանի համաձայն՝ Լ.Ս.-նզոհվել է «ինքնասպան» («կամիկաձե») դրոնի հարվածից: Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցում Լ.Ս.-ի մահվան փաստը հաստատել է Հադրութ քաղաքից 2-3 կմ հեռավորության վրա գտնվող Կարմրակուճ գյուղի բնակիչ Մ.Ջ.-ն: Նա ճանաչել է Լ.Ս.-ի ամուսնուն: Բացի այդ, մեկ այլ հարցազրույցում Վանք գյուղի բնակիչ Նարինեն (անունը փոխված է) նշել է, որ տեղյակ է ադրբեջանական դրոնի հարվածից զոհված քաղաքացիական անձի՝ Լ.Ս.-ի մասին:

246 Հարցազրույց Ա.Գ.-ի հետ, 21 փետրվարի, 2021թ.:

247 Հարցազրույց Մ.Ա.-ի հետ, 21 փետրվարի, 2021թ.:

248 Գրություն Արցախի քննչական կոմիտեից:

249 "The Fight for Nagorno-Karabakh: Documenting Losses on The Sides Of Armenia And Azerbaijan," Oryx, September 27, 2020, https://www.oryxspioenkop.com/2020/09/the-fight-for-nagorno-karabakh.html.

ԱԹՍ-ների հարվածից զոհված մեկ այլ քաղաքացիական անձ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի բնակիչ Ե.Խ.-ն է: 2020 թվականի հոկտեմբերի 28-ին նա գնացել է Մարտունի քաղաք, հետդարձի ճանապարհին նրան թիրախավորել էր ադրբեջանական ԱԹՍ-ն, որի արձակած հրթիռի հարվածից նա սպանվել է:[250]

Թաղավարդ գյուղի 60-ամյա բնակիչ Ս.Բ.-ն նույնպես սպանվել է ադրբեջանական ԱԹՍ-ի արձակած հրթիռի հարվածից: 2020 թվականի հոկտեմբերի 30-ի դրությամբ Թաղավարդ գյուղն ամբողջությամբ տարհանվել է, սակայն այդ օրը Թաղավարդ և Կարմիր շուկա գյուղերի որոշ բնակիչներ հավաքվել էին Ակնաղբյուր գյուղի սննդամթերքի խանութի մոտ: Այդ պահին ադրբեջանական ԱԹՍ-ներից նրանց ուղղությամբ արձակվել են հրթիռներ, որոնց պայթյունից Ս.Բ.-ն զոհվել է, ևս վեց քաղաքացիական անձ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:[251]

Բաց աղբյուրների տվյալները նույնպես արձանագրել են ԱԹՍ-ների կիրառումը քաղաքացիական բնակավայրերի դեմ: Մասնավորապես հոկտեմբերի 1-ին Արցախի տեղեկատվական շտաբը հայտնել է, որ Ասկերան քաղաքի բնակելի թաղամասերից մեկի մոտ ոչնչացվել է քաղաքի վրա արձակված ադրբեջանական դրոններից մեկը:[252]

Այսպիսով՝ ունենալով հետախուզական և թիրախավորման ժամանակակից կարողություններով զինված ԱԹՍ-ների արդի համակարգեր՝ Ադրբեջանը ունեցել է ռազմական և քաղաքացիական օբյեկտներն ու ենթակառուցվածքները ճշգրիտ որոշելու և տարբերակելու, ինչպես նաև ընտրված թիրախին ճշգրիտ հարվածներ հասցնելու կարողություն: Հետևաբար այն դեպքերում, երբ հաստատված է ադրբեջանական զինված ուժերի կողմից քաղաքացիական օբյեկտներին ԱԹՍ-ներով/դրոններով հարվածներ հասցնելու փաստը, ապացուցվում է, որ Ադրբեջանը կանխամտածված թիրախավորել է քաղաքացիական անձանց և օբյեկտներ:

***

Վերոնշյալ ապացույցները փաստում են, որ Ադրբեջանը խախտել է քաղաքացիական և ռազմական օբյեկտներն ու ենթակառուցվածքները տարբերակելու պարտավորությունները՝ նախ օգտագործելով զենքեր, որոնց օգտագործումը քաղաքացիական բնակավայրերում ինքնին դրանք դարձնում է ոչ ընտրողական զենքեր, և երկրորդ՝ քաղաքացիական անձանց դեմ օգտագործելով ճշգրիտ նշանառման կարողություն ունեցող կառավարվող ԱԹՍ համակարգեր:

Ադրբեջանի կողմից թիրախավորման գործողությունների իրականացման ձևը նույնպես վկայում է այն մասին, որ այն չի ձեռնարկել նախազգուշական անհրաժեշտ միջոցներ և իրականացրել է մարդու կյանքի անվտանգությունը անտեսող գործողություններ՝ խախտելով մարդու իրավունքները և ՄՄԻ-ն: Ապացույցները փաստում են, որ քաղաքացիական բնակավայրերը հարձակման են ենթարկվել առանց նախազգուշացման: Ավելին, հարձակումների համար ընտրված ոչ պատահական ժամերը և զենքերի ընտրությունը ապացուցում են, որ Ադրբեջանը չի նախաձեռնել նախազգուշական միջոցներ:

250 Գրություն Արցախի գլխավոր դատախազությունից:

251 Նույն տեղում:

252 @reartsakh, “На фото показан один из уничтоженных азербайджанских беспилотников в городе Аскеран. БПЛА целился в мирное население и был поврежден недалеко от жилого района. - передаёт Информационный штаб Арцаха,” October 1, 2020, Telegram post, https://t.me/reartsakh/3824.

Վերը ներկայացված ապացույցները վկայում են, որ քաղաքացիական բնակչությունը հարձակման է ենթարկվել առանց նախազգուշացման, ինչը պատճառ է դարձել բազմաթիվ քաղաքացիական զոհերի: Առավոտյան ժամերին՝ բնակիչների տանը գտնվելու ժամանակ, բնակելի թաղամասերի վրա հարձակումների փաստերը ապացուցում են, որ ադրբեջանական հարձակումները եղել են առանց նախազգուշացման, հանկարծակի ու անսպասելի, ինչը դարձյալ ՄՄԻ-ի իրավական նորմերի և մարդու իրավունքների խախտում է, քանի որ վտանգի է ենթարկվել քաղաքացիական անձանց կյանքը: Փաստերը վկայում են նաև, որ ԱԹՍ-ների կիրառումն ապահովել է ճշգրիտ հետախուզական տվյալներ, որոնք հնարավորություն կտային Ադրբեջանին թիրախավորելու ռազմական օբյեկտներ ու ենթակառուցվածքներ, այլ ոչ թե՝ բնակելի տարածքներ: Ռազմական գործողությունների վարումը ենթադրում է նաև կիրառվող զենքերի ընտրության խնդիր: Կասետային զենքերն իրենց էությամբ ոչ ճշգրիտ նշանառության զենքեր են, և հետևաբար՝ դրանց կիրառումը ՄՄԻ-ի նորմերի խախտում է՝ հատկապես բնակելի տարածքներում օգտագործելու դեպքում:

Ավելին, թիրախավորման նպատակով կիրառված զենքերի ընտրությունը ևս մեկ անգամ հաստատում են թիրախավորման գործողությունների ոչ տարբերակված բնույթը: Ինչպես արդեն նշվել է, պատերազմի ընթացքում լայնորեն կիրառված «Գրադ» և «Սմերչ» ՀԿՌՀ-ներն իրենց տեխնիկական հատկանիշներով բնութագրվում են որպես ոչ ճշգրիտ թիրախավորման զինատեսակներ, քանի որ դրանց կիրառման արդյունքում վնաս է հասցնում ոչ միայն մարտագլխիկը, այլև ուժային կայանքի մղիչ հատվածը: Հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ Ադրբեջանը շարունակել է կիրառել «Սմերչ» և կասետային զենք նույնիսկ այն բանից հետո, երբ ակնհայտ է դարձել (նաև լրատվամիջոցների լայն լուսաբանումից և պաշտոնական հաղորդագրություններից), որ հարձակումները լուրջ վտանգի են ենթարկում քաղաքացիական անձանց՝ պատճառելով վնասվածքներ և մահ: Կոնկրետ զենքի շարունակական կիրառումը այն դեպքում, երբ լրատվամիջոցները լայնորեն լուսաբանել էին դրա մահացու հետևանքները քաղաքացիական բնակչության համար, վկայում են, որ ադրբեջանական զինված ուժերը կանխամտածված են թիրախավորել քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտներն ու ենթակառուցվածքները:[253] Եվ վերջապես, ոչ ճշգրիտ զենքերի կիրառումը, երբ առկա են ճշգրիտ նշանառությամբ զինատեսակներ և հետախուզական ստույգ տվյալներ, վկայում է Ադրբեջանի կողմից զենքերի ընտրության հարցում կանխամտածված խախտման մասին:

253 Դատախազն ընդդեմ Միլան Մարտիչի (վճիռ), No. IT-95-11-T (Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ, հունիսի 12, 2007թ.):

Խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր, այդ թվում՝ նվաստացնող վերաբերմունք կամ դիտավորությամբ մեծ տառապանք, մարմնական ծանր վնասվածք կամ առողջությանը ծանր վնասի պատճառում

Ռազմագերիներ

Փաստահավաք խմբի անդամները վերլուծել են ադրբեջանական զինված ուժերի կողմից հայ զինծառայողների նկատմամբ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորումներ պատկերող տասնյակ տեսանյութեր: Տելեգրամում և ՏիկՏոկում տեղադրված տեսանյութերը պատկերում են ադրբեջանական զինված ուժերի անդամների, ինչպես նաև Ադրբեջանի իշխանությունների տարբեր ներկայացուցիչների կողմից գերության մեջ գտնվելու ընթացքում հայազգի զինծառայողներին ծեծի, նվաստացնող վերաբերմունքի և ծաղրի ենթարկելու դեպքեր՝ անմիջապես գերեվարվելուց հետո և վայրից վայր տեղափոխելիս:[254] Փաստահավաք խմբի անդամների ուսումնասիրած տեսանյութերում մասնավորապես երևում է՝ ինչպես են ադրբեջանցի զինծառայողներն ապտակում, ոտքով հարվածում, հրմշտում և սուր գործիքով ծակծկում հայազգի ռազմագերիներին, գերեվարելու պահին սպառնում անդամախեղել, ուժի ակնհայտ կիրառմամբ և նվաստացնելու բացահայտ նպատակով ստիպում նրանց համբուրել Ադրբեջանի պետական դրոշը, հայհոյել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին և հայտարարել, որ Ղարաբաղն Ադրբեջան է: Փաստահավաք խմբի կողմից հարցված հայրենադարձ ռազմագերիները նույնպես նշել են նման վերաբերմունքի մասին:

Ռազմագերիների վկայությունները վատ վերաբերմունքի մասին

Ստորև ներկայացված դեպքերը չորս հայրենադարձված ռազմագերիների ուղիղ վկայություններն են Ադրբեջանում անազատության մեջ գտնվելու ընթացքում իրենց փորձությունների մասին՝ սկսած գերեվարումից, մինչև հայրենադարձություն: Հարցազրույց տված նախկին ռազմագերիները, մինչև 2020 թվականի դեկտեմբերին Հայաստան հայրենադարձվելը, ադրբեջանական գերության մեջ եղել են 48-ից 65 օր:

254 @karabagxeber, “Erməni əsirlər “Qarabağ Azərbaycan”, “Lənkəran”, “Kürdəmir uşaqları”, “Paşinyan suka” söyləyə - söyləyə, Gəncə həbsxanasına aparıldı...,” նոյեմբերի 15, 2020թ., տեսանյութ «Տելեգրամում», https://mega.nz/file/Wx0DXYRZ#vhf5oN-B4VbO6kBP-bwH5pTH4QgmZFs2kts56ZLJGGSw.

Բոլոր չորս ռազմագերիների վկայությունները հաստատվում և համապատասխանում են հանցագործությունը կատարողների կամ նրանց գործընկերների կողմից արված տեսագրություններով, որոնք ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք տեղադրել են սոցիալական ցանցերում, այդ թվում՝ տելեգրամյան ալիքներում: Վկայությունները հաստատվում են նաև տուժողների շահերը ՄԻԵԴ-ում ներկայացնող փաստաբանի հետ հարցազրույցի և նույն կամ առնչվող փաստերի վերաբերյալ հայրենիք վերադարձած այլ ռազմագերիների՝ լրատվամիջոցներին տված հարցազրույցների միջոցով: Հարցված բոլոր ռազմագերիները եղել են տարբեր տեսանյութերում, իսկ նրանց տեսքն ու իրենց նկատմամբ վերաբերմունքի մասին պատմությունները համապատասխանում են նրանց վկայություններին: Սույն զեկույցում ներկայացված տեղեկությունները հիմնավորվում են, ի թիվս այլնի, մարդու իրավունքների պաշտպանի, «Human Rights Watch»-ի, «Amnesty International»-ի զեկույցներով, միջազգային կազմակերպությունների հայտարարություններով և միջազգային մամուլի կողմից իրականացված բաց աղբյուրների ուսումնասիրություններով:[255] Մասնավորապես, 2021 թվականի մարտի 19-ին «Human Rights Watch»-ը հաղորդել է, որ ադրբեջանի անվտանգության և զինված ուժերը կտտանքների են ենթարկել հայ ռազմագերիներին՝ գերեվարվելու ընթացքում, վայրից վայր փոխադրման ժամանակ կամ տարբեր կալանավայրերում պահման ընթացքում նրանց ենթարկելով դաժան և նվաստացուցիչ վերաբերմունքի և խոշտանգումների: Ինչպես նաև հաղորդվել է, որ Ադրբեջանը ժխտում է հայ ռազմագերիների նկատմամբ ժնևի կոնվենցիաներով արգելվող վերաբերմունքի առկայության մասին:[256]

Իր կողմից ընդունված բանաձևում Եվրոպական խորհրդարանը հայտնել է, որ

> «զինադադարից առաջ և հետո կալանավորված զինվորական և քաղաքացիական անձինք, միջազգային իրավունքի համաձայն, օգտվում են տարբեր կարգավիճակներից. մի կողմից, զինադադարից առաջ և հետո գերության մեջ հայտնված զինվորական անձինք պետք է ճանաչվեն որպես ռազմագերիներ և օգտվեն Ժնևի կոնվենցիաներով սահմանվող պաշտպանությունից, մյուս կողմից, հակամարտության ընթացքում կալանավորված քաղաքացիական անձինք պետք է ճանաչվեն որպես պաշտպանության ենթակա անձինք և պաշտպանվեն ըստ Ժնևի կոնվենցիաների, իսկ զինադադարից հետո ձերբակալված քաղաքացիական անձինք ենթակա են պաշտպանության համաձայն մարդու իրավունքների միջազգային իրավունքի»:

Եվրախորհրդարանը նշել է.

> «մինչդեռ մտահոգիչ տեղեկությունների համաձայն՝ մոտ 200 հայ գտնվում է ադրբեջանական գերության մեջ, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հայտարարել է, որ բողոքներ է ստացել Ադրբեջանի կողմից գերեվարված 249 հայերի վերաբերյալ: ՄԻԵԴ-ը միջանկյալ միջոցներ է կիրառել 229 հայերի մասով, որոնցից 183-ը դեռևս ուժի մեջ են: Հաշվի առնելով այն, որ ՄԻԵԴ-ը 2021 թվականի մարտի 9-ին եզրակացրել է, որ Ադրբեջանը չի կատարել նշված միջոցներից բխող քայլեր՝ տրամադրված տեղեկատվությունը գնահատելով որպես չափազանց ընդհանուր և սահմանափակ: Ադրբեջանի իշխանությունները ընդունել

255 “Armenia/Azerbaijan: Decapitation and War Crimes in Gruesome Videos Must Be Urgently Investigated,” Amnesty International, December 10, 2020, https://www.amnesty.org/en/latest/news/2020/12/armenia-azerbaijan-decapitation-and-war-crimes-in-gruesome-videos-must-be-urgently-investigated/; “Azerbaijan: Allow Human Rights Court to Investigate Reports of Detainee Torture,” Freedom House, May 11, 2021, https://freedomhouse.org/article/azerbaijan-allow-human-rights-court-investigate-reports-detainee-torture.

256 “Azerbaijan: Armenian POWs Abused in Custody,” Human Rights Watch, March 19, 2021, https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody.

են, որ 72 հայ գտնվում է իրենց մոտ գերության մեջ, իսկ ևս 112 անձի վերաբերյալ Ադրբեջանի կողմից ՄԻԵԴ-ին որևէ տեղեկություն չի ներկայացվել: Մյուս հայ ռազմագերիների ճակատագիրն անհայտ է: Ռազմական գործողությունների դադարեցումից ի վեր Հայաստան են վերադարձվել 73 հայ ռազմագերիներ և քաղքացիական անձինք»:[257]

Հարցված բոլոր չորս ռազմագերիներն էլ նշել են ռազմական ոստիկանության, պետական անվտանգության նախարարության (ռազմագերիների կողմից նշվում է որպես «ԿԳԲ»), ինչպես նաև բանտում պահվելու մասին: Նրանցից ոմանք հստակ նշել են, որ բանտը Բաքվի՝ Քյուրդախանի կալանավորված անձանց մինչդատական պահման վայրն է եղել: Ոմանք այն անվանել են «ռոմաշկա» (հաշվի առնելով բանտի ֆիզիկական ձևը) (Տես Պատկեր 8.1):

Պատկեր 8.1 Բաքվի մինչդատական կալանքի հաստատությունը (Աղբյուրը՝ Google Maps):

Հարցված բոլոր չորս նախկին ռազմագերիները տեղեկացրել են փաստահավաք խմբի անդամներին, որ գերեվարվելու պահից ընդհուպ մինչև բանտ տեղափոխվելը նրանց ենթարկել են ծեծի, մաշկը այրել, ստիպել են հայհոյել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին և այլ անձանց, ստորացրել են տարբեր եղանակներով, այդ թվում՝ հարկադրելով համբուրել Ադրբեջանի դրոշը: Նրանց ստիպել են տեսախցիկի առաջ, ինչպես նաև ամեն անգամ բանտախցի դռան բացվելու ժամանակ ոտքի կանգնել և ասել, որ Ղարաբաղն Ադրբեջան է: Անազատության մեջ գտնվելու ընթացքում, այդ թվում՝ պահման վայրից այլ տեղափոխման ժամանակ Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության տարածքում (այսուհետ՝ ԱԱՆ), ռազմական ոստիկանությունում, հարցաքննությունից

257 European Parliament resolution of 20 May 2021 on prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan (2021/2693(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0251_EN.html

առաջ, դրա ընթացքում և հետո գերիների մեծ մասը ենթարկվել է դաժան վերաբերմունքի: Գերիներից երեքի մաշկն այրել են ծխախոտով, երկուսի նկատմամբ էլեկտրաշոկեր են կիրառել: Վիրավոր ռազմագերիները հայտնել են, որ հիվանդանոցում վատ վերաբերմունքի են արժանացել բուժանձնակազմի և հսկիչների կողմից:

Նրանցից ոմանք նշել են, որ որպես իրենց փաստաբան ներկայացած անձն ադրբեջաներեն գրված ինչ-որ թղթեր էր ներկայացրել, որպեսզի ստորագրեն, փորձել է համոզել հրաժարվել Հայաստանի քաղաքացիությունից և մնալ Ադրբեջանում: Բանտի հսկիչները նույնպես պնդել են, որ Հայաստանը չի ցանկանում նրանց հայրենադարձնել:

Հարցված ռազմագերիներից ոմանք նաև նշել են, որ ադրբեջանցի զինծառայողները մտել են նրանց սոցիալական մեդիայի օգտահաշիվներ և կատարել գրառումներ, այդ թվում՝ ճնշման տակ ռազմագերիների կողմից արված հայտարարություններ:

Գերեվարելուց հետո ադրբեջանցի զինծառայողները գերիների ձեռքերը կապել են պլաստիկ կապով, որը որոշ դեպքերում մի քանի օր մնացել է ձեռքերին, ինչի պատճառով էլ ձեռքերն այտուցվել են: Պլաստիկ կապերով կապելու պրակտիկան փաստահավաք խմբի անդամներն արձանագրել են նաև ուսումնասիրված տեսանյութերում, ինչպես նաև այն հաստատվել է հայրենադարձված այլ ռազմագերիների կողմից հայկական ԶԼՄ-ներին տրված հարցազրույցներում:

Գերության ընթացքում

Հարցված նախկին ռազմագերիները տեղեկացրել են, որ սկսել են բռնության ենթարկվել ադրբեջանցի զինծառայողների կողմից գերեվարվելուց անմիջապես հետո, հիմնականում երբ նրանց տեղափոխել են ադրբեջանցիների ժամանակավոր հրամանատարական կետեր: Ադրբեջանցի զինծառայողները բռնություն կիրառել են խմբերով, հարվածներ հասցրել տարբեր առարկաներով, մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում արդեն առկա վնասվածքներին: Որոշ դեպքերում բռնությունը դադարեցվել է միայն հրամանատարի կողմից հնչեցված հստակ հրահանգից հետո:

> «Հրամանատարական կետում ինձ շրջապատեցին ադրբեջանցի զինծառայողներ: Նրանցից ոմանք ռուսերեն չէին խոսում, բայց ժեստերով ցույց տվեցին, որ կկտրեն կոկորդս: Տղամարդկանցից մեկը ցույց տվեց յոթ մատ ու կոկորդ կտրելու ժեստ: Հասկացա, որ յոթ մարդու կոկորդ է կտրել: Մտածեցի, որ նույնը կանեն ինձ հետ: Սկսեցին ծեծել ինձ, հաշվի չէին առնում, որ վիրավոր եմ: Եթե հրամանատարը ժամանակին չհայտնվեր և հրամայեր, որ ինձ չծեծեն, այնտեղ էլ կսպանվեի», - փաստահավաք խմբի անդամներին պատմել է 19-ամյա Արմանը (անունը փոխված է):[258]

> «Գերեվարվելուց մոտ մեկ ժամ հետո ադրբեջանցի զինվորականները ձեռքերս կապել էին, գցել գետնին, կանգնել գլխիս և մարմնիս այլ մասերին հարվածել, ծակծկել են մարմինս: Քանի որ աչքերս կապած էին, չէի հասկանում՝ դանակ էր, թե ինչ-որ ուրիշ բան: Քթիս ահավոր ուժեղ հարված ստացա, չտեսա ինչով էր, ենթադրում եմ՝ հրացանի ղոնդաղով: Քիթս կոտրվել էր, արնահոսում էր, 2-3 օր չէի կարողանում շնչել: Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում ձեռքերս կապած էին, ուռել էին: Հետո որ կապարները հանել են, ջուր են տվել, լվացվել եմ ու կարողացել շնչել», - փաստահավաք խմբի անդամներին պատմել է 23-ամյա Բաբկենը (անունը փոխված է):[259]

258 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ:

259 Հարցազրույց Բաբկենի հետ (անունը փոխված է), 3 մարտի 2021թ.:

Վայրից վայր տեղափոխելիս

Ադրբեջանցի զինծառայողները բռնություն կիրառել են նաև մեքենայի մեջ Բաքու տեղափոխելու ճանապարհին: Նրանցից երեքի մաշկն այրել են ծխախոտով, երկուսի նկատմամբ էլեկտրաշոկեր են կիրառել: Հարցազրույցի ընթացքում փաստահավաք խմբի անդամները տեսել են ձեռքերի վրա սպիեր, որոնք համապատասպանում են հարցված գերիների նկարագրություններին:

> «Գերեվարվելուց հետո տարել են իրենց ռազմական ոստիկանություն: Շատ վատ ճանապարհ էր: Էդ ճանապարհին ձեռքերս ահագին վառվել ա, սիգարետով են վառել: Ինձ տոկի են տվել էլեկտրաշոկով՝ ճանապարհին, մեքենայի մեջ, պերցովկա էին փչում: Փորից են էլեկտրաշոկը տվել, էն դեպքում, երբ փորից էլ վիրավորում ունեի», - փաստահավաք խմբի անդամներին պատմել է 24-ամյա Գնելը:[260]

24-ամյա Սանասարը փաստահավաք խմբի անդամներին հայտնել է.

> «Ավտո նստացրեցին, երկու հոգի ուղեկցող կային: Ճանապարհին սիգարետ են վառել ձեռքերիս: Հետո այլ ավտո տեղափոխեցին, ռեշոտկաներով կիսած էր մեջը:[261] Երկու հայ էլ ըտեղ կար, նույն մեքենայի մեջ էինք, բայց նույն կամերում չէինք: Ճանապարհին ինձ ոչ մի բան չեն արել, պառկած եմ եղել, ձեն չէի հանում, վրես վիճակ չկար, բայց հայերից մեկին տփում էին: Տիգրից իջացնելուց դե քաշում, քցում էին էլի: Մտածեցի, որ բարձր ավտո է, կոտրվածք կստանամ, սպասի սկզբից գլուխս հանեմ, որ ընկնեմ, ձեռներով ուդառը պահեմ, ըտենց էլ եղավ, քցին պլացին, ասեցին գնա ընդեղ»:[262]

Հարցված ռազմագերիների մի մասին անմիջապես տեղափոխել են Բաքու, իսկ ոմանց պահել են ճանապարհին գտնվող շինություններում:

> «Ճանապահին ինչ-որ շենքերում էին պահում, երևի զորամասերում, չգիտեմ տեղերը, մոտ 3 օր տևեց, մինչև հասանք Բաքու: Մենակ էի սենյակում պահվում: Ամեն նոր տեղում ծեծի էին ենթարկում: Ամեն հաջորդ շենք տեղափոխելուց հետո ծեծում էին, որպեն մեկ ծեծում էին: Եթե ձեն էիր հանում, ոգևորվում էին, ավելի ուժեղ էին ծեծում: Ես աշխատում էի ձեն չհանեմ: Հայ լինելու համար էին ծեծում ... Գիշերները աչքերս կապած մեքենայով տեղափոխում էին, իսկ օրվա ընթացքում պահում խոնավ սենյակներում՝ ջեռուցման համակարգից շղթայված: Հոկտեմբերի վերջն էր, բավականին ցուրտ: Բաքվում մեր տղերքը պատմել են, որ իրենց դեպքում ադրբեջանցի զինծառայողները ջուր էին լցնում գետնին, որտեղ նրանք շղթայված նստած էին: Հետո Բաքվում իմացա, որ ինձանից բացի, ինձ հետ խցում պահվող բոլոր հայերին «տոկի են տվել»:[263]

Ռազմական ոստիկանությունում

Բոլոր հարցված ռազմագերիները պատմել են, որ բռնության ենթարկվել են հատկապես Ադրբեջանի ռազմական ոստիկանությունում գտնվելու ընթացքում: Հատկապես վատ վերաբերմունքի են արժանացել տարիքով ավելի մեծ գերիները՝ ենթադրելով, որ նրանք մասնակցել են առաջին ղարաբաղյան պատերազմին: Հարցված գերիներից ոմանց սպառնացել են, որ ադրբեջանցիների ձեռքերում հայտված հայերը պատասխան են տալու

260 Հարցազրույց Գնելի հետ (անունը փոխված է), 1 հուլիսի 2021 թ.:

261 Օրինակ, տե՛ս @karabagxeber, “Erməni əsirlər “Qarabağ Azərbaycan”, “Lənkəran”, “Kürdəmir uşaqları”, “Paşinyan suka” söyləyə - söyləyə, Gəncə həbsxanasına aparıldı...,” November 15, 2020, Telegram video, https://mega.nz/file/Wx0DXYRZ#vh-f5oNB4VbO6kBP-bwH5pTH4QgmZFs2kts56ZLJGGSw.

262 Հարցազրույց Սանասարի հետ, 1 հուլիսի, 2021թ.:

263 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

1990-ականներին տեղի ունեցած ամեն բանի համար: Գնելը, օրինակ, պատմել է.

> «Արդեն ռազմական ոստիկանությունում էլի մի քանի հատ ծեծ, տոկի տալ: Ձեռով, ոտքով, դուբինկայով էին խփում, գլխի հատվածում էլ էին խփում: Դրանից հետո նոր տարան իրանց հոսպիտալ՝ հետազոտման, քանի որ վիրավոր էի»:

Սանասարը պատմել է հետևյալը.

> «Ռազմական ոստիկանությունում ով պարապ էր, գալիս և ծեծում էր ինձ: Այնտեղ մոտ հինգ ժամ եմ մնացել: Տարբերություն չկար՝ վիրավոր ես, թե առողջ: Որ տարել, կապել էին ռեշոտկաներին, մի հատ տարիքով մարդու լավ տփում էին, որովհետև 1990 ականների կռված էր ու հիմա կամավոր: Ընտեղ մարդիկ շատ էին, ռազմականի ծառայողներ, ջահել տղերք, գալիս, ծեծում էին, հերթով՝ խմբով, մի գռուպան՝ մի չորս հոգանոց: Հինգ ժամվա ընթացքում տփոց կերա, մի երեք անգամ դադար էր, ջուր էին լցնում վրեդ: Երկու հոգի եկան քաշին հանեցին, կանգնացրեցրին, մի հատ տրուբա էր, կապեցին, բա՝ եթե ընկար, կսպանենք: Ես էլ կանգնա: Սկսեցին ծեծելը, քաշում, հանում կանգնացնում են, ձեռներս կանդալ են քցում ու սկսում են փայտերով տփելը: Մի 5 րոպե տփում են, ասում եմ ինքս ինձ՝ մեռնել, մեռնել, գետնին մեռնեմ, ձև եմ տալիս, որ ուշքս անցավ, որ ուզում եմ ընկնեմ, կողքից մեկը կար, քացով խփում ա, ձեռս որ ձգում եմ, կանդալը տրաքումա: Ասում են՝ էս դու սպորտսմեն ես, ու էլի հանում են օդ», - պատմել է Սանասարը: «Այն մեծահասակ հային, ում ինձ հետ նույն օրն էին բռնել, ասում էին, որ ինձ խփի, դե ես գետնին կապած էի, չէր խփում, իրան խփում էին, ինքն էլ ինձ էր խփում: Հայերին իրար ծեծել էին տալիս էլի: Հեռախոսս ստուգեցին, բոլոր կոնտակտներիս ու նկարներիս մասին հարցեր տվեցին: Հեռախոսս պահեցին, մտան սոցիալական ցանցերի էջերս ու նկարներս նայեցին»:[264]

> «Սպառնում էին, որ Հայաստան չենք վերադառնալու: Հոգեբանական ճնշում եղել է հենց առաջին օրվանից, քանի որ ասում էին, որ 90-ականներին ով ինչ արել է, դրանց համար դուք պիտի պատասխան տաք: Ու շատ ավելի վատ են վերաբերվել տարիքով մարդկանց ու հիմնականում մեղադրում էին իրանց: Բռնություն չի եղել միայն վերջին փուլում՝ բանտում», - պատմել է Բաբկենը:[265]

Ազգային անվտանգության նախարարությունում [266]

Հարցված չորս նախկին գերիները հայտնել են, որ ռազմական ոստիկանությունից նրանց տեղափոխել են ազգային անվտանգության նախարարության շենք: Այնտեղ նույնպես կիրառվել է բռնություն և տառապանք պատճառելու տարբեր գործողություններ: Ադրբեջանցի հսկիչները հրամայել են ոտքի վրա մնալ ամբողջ օրը կամ հակառակը՝ ժամերով անշարժ նստել, այլապես ծեծի էին ենթարկում, եթե չէին հետևում նրանց հրահանգներին: Հաճախակի վիրավորել են, օրինակ, կոչելով «շակալ», «օղրաշ» (ադրբեջաներեն հայհոյանք է):

Բաբկենը փաստահավաք խմբին պատմել է հետևյալը.

> «Խցում մենակ էին պահում: Անգամ գիշերը ուժեղ լույս էր միացրած պրոժեկտորի պես, չէի կարողանում նորմալ քնել: Պրոժեկտորը ցերեկվա ժամերին թուլացրել են, բայց ամբողջ օրը միացրած է եղել: Ասում էին, որ ամբողջ օրը կանգնես, կամ ամբողջ օրը մի տեղ նստես չշարժվես, եթե չմտնեին ստուգելու՝ բախտը կբերեր: Եթե գային տեսնեին իրանց ասած դիրքում չես, լավ չէր, ծեծում էին: Իմ խցից լսել եմ գերեվարված այլ հայերի բղավոցներ,

264 Հարցազրույց Սանասարի հետ, 1 հուլիսի, 2021թ.:

265 Հարցազրույց Բաբկենի հետ (անունը փոխված է), 3 մարտի, 2021թ.:

266 Հարցված ռազմագերիներն այն անվանել են «ԿԳԲ»:

անգամ ճանաչել եմ ինձ հետ գերեվարված այլ զինծառայողի ձայնը: Այնտեղ եթե ոչ ամեն օր, ապա օրը մեջ ծեծել են, հիմնականում հարցաքննության օրը կամ դրանից մեկ օր առաջ: Ծեծել են դումբինկաներով, կիրառել են էլեկտրաշոկ մարմնին, հիմնականում կողքերին, վզի տակից հետևից ու ոտքերի ծնկի հետևի մկանին: Պահել են այնքան ժամանակ, մինչև գիտակցությունը կորցնելու պահը կլիներ: Ես չեմ կորցրել, բայց եղել են դեպքեր, որ մի երկու վայրկյան էլ պահեին, կկորցնեի: Այսինքն՝ հենց տեսել են, որ թուլանում ես, բաց էին թողում: Հարցաքննելիս էլ են խփել, հիմնականում գլխիս, բայց հիմնականում եղել է, որ կամերայում ծեծել են ու նույն օրը կամ հաջորդ օրը տարել հարցաքննության՝ ԿԳԲ: Մտնում էին խուց, ծեծում մեղադանքներով, ստիպում ասել Կարաբախ-Ազերբայջան, հայհոյել կոնկրետ անձին»:[267]

«Հիվանդանոցից հետո տարան իրանց ԿԳԲ, որտեղ մի 10 օր մնացի: Ընդեղ արդեն ընենց վատ վիճակում էի, էլ բան չէին անում, ձեռք տալ, բան, ինչ եղել ա մինչև ԿԳԲ-նա եղել: Պետին ասեցի՝ ձերոնց ասա ընձի որ ձեռ էլ չտան, լավ կտանջվեմ, ասեց՝ լավ, կզգուշացնեմ: Ինձ չեն ծեծել, բայց կողքի կամերներում լսվում էր, որ ծեծում էին: Հետո սկզբի մի քանի ժամը չէին թողնում պառկեի, ասում էին նստի, էդ էլ խոսացի, լուծեցի: Գալիս բացում, նայում էին, ասում էին՝ նստեք», - պատմել է Գնելը:[268]

«Գերեվարվելուց մոտ երեք օր հետո տարան Բաքու: Պատուհաններից երևում էր Բաքվի ապակե շենքերը, դրանից իմացա, որ Բաքու են տարել: Մոտ 10 օր այնտեղ եմ մնացել: ԿԳԲ-ում հարցաքննելու ընթացքում պաշտոնով անձինք էին գալիս, իրենք չէին ծեծում, բայց հարցաքննությունից հետո ծեծում էին, դուբինկաներով խփում էին: Բանտ տանելուց առաջ էլ են ծեծել», - պատմել է Արմանը:[269]

Քյուրդախանի բանտում

Հարցված բոլոր նախկին ռազմագերիները նշել են, որ գերության ինչ-որ փուլում տեղափոխվել են բանտ, որտեղ մնացել են մինչև հայրենադարձվելը: Ոմանք նշել են, որ դա Բաքվից ոչ հեռու գտնվող Քյուրդախանի մեկուսարանն էր: Բանտախցում նրանց պահել են մի քանի այլ հայ գերիների հետ: Բոլորն էլ նշել են, որ բանտում նրանց նկատմամբ ֆիզիկական բռնություն չի գործադրվել, սակայն հսկիչները կանոնավոր պահանջում էին, որ ասեն Ղարաբաղն Ադրբեջան է: Հարցվածներից մեկը նշել է, որ բանտում լսել է նաև հայ կանանց ձայներ, գիշերները գոռում էին, պահանջում տանել երեխաների մոտ, բաց թողնել: Կանանց գերեվարումը նրան ապշեցրել է, քանի որ չէր պատկերացրել, որ կանանց նույնպես կգերեվարեն ու կբերեն Բաքու:

«Խցումս կային թե՛ քաղաքացիական անձինք, թե՛ զինծառայողներ: Բանտում ոչ մի ծեծ չի եղել: Ասում էին, հենց խցի դուռը բացեն, ասենք Ղարաբաղ Ադրբեջան, ու քրֆեինք մեզ հետ պահվող մի մեծահասակ քաղաքացիական անձի», - պատմել է Գնելը: «Բերդում, վերևի հարկում կային նաև ադրբեջանցի ազատազրկվածներ, որովհետև զուգարանի տրապներով խոսում էին»:[270]

Բուժօգնություն

Բոլոր հարցված ռազմագերիները վիրավորում են ստացել ռազմական գործողությունների ընթացքում, սակայն նրանցից միայն մեկին են հիվանդանոցում բուժել: Նրանք պատմել են, որ չնայած ունեցել են ակնհայտ և լուրջ վնասվածքներ, գերեվարելուց հետո ոչ ոք չի մշակել

267 Հարցազրույց Բաբկենի հետ (անունը փոխված է), 3 մարտի, 2021թ.:

268 Հարցազրույց Գնելի հետ (անունը փոխված է), 1 հուլիսի, 2021թ.:

269 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

270 Հարցազրույց Գնելի հետ (անունը փոխված է), 1 հուլիսի, 2021թ.:

նրանց վերքերը, չեն տվել ցավազրկող, մինչև, օրինակ, հրամանատարը չի հրամայել բուժակին ինչ-որ բան անել վերքերի հետ: Իսկ հրամանատարի հեռանալուց հետո բուժակը բռնություն է գործադրել վիրավոր գերու նկատմամբ՝ դիտավորյալ ցավեցնելով վերքը: Վիրակապերը օրերով, որոշ դեպքերում շաբաթներով չեն փոխվել: Բաբկենը պատմել է հետևյալը.

> «Ոտքի շրջանում հրազենային վիրավորում էի ստացել, բայց առաջին անգամ բժիշկն այցելել է գերեվարվելուց մոտ երկուսուկես շաբաթ անց, երբ արդեն Բաքվում ինձ տեղափոխեցին բանտ: Բայց որևէ բժշկական միջամտություն չի արվել. ասում էին, որ եթե կարողանում ես քայլել, ուրեմն դրա կարիքը չկա: Բուժօգնություն տրամադրում էին միայն ծանր վնասվածքներ ստացածներին: Բայց երբ ցավազրկող ուզեցի, որպեսզի մեղմանա ցավս, ու կարողանամ քնել գիշերը, տվեցին»:[271]

> «Հիվանդանոցում սպեցնազի տղեքը, ախրանիկները սկզբում ծեծում էին ամեն օր: Ինձ հացից առաջ ու հետո ծեծում էին: Հատկապես նրանցից երկուսն էին դաժանությամբ վարվում: Չէին թողնում, որ քնեմ: Քնում էի, բերում տաք չայը լցրեց ճակատիս: Իմ գլխին մի անգամ ռացիայով էին խփել: Էնքան էին ծեծել, որ անգամ հոգնել էին, էլ չէին ոգևորվում: Դե ուրիշ բժիշկները ռազմականից, որ գալիս էին, նայում էին մարդ չլինի, մտնում տփում էին էդ վիճակում, դե երկու ձեռքերս էլ կանդալած էին միշտ: Մենակ, որ հաց էին տալիս, էդ ժամանակ էին քանդում: Շատ էի նիհարել, մոտ 40 կգ էի», - պատմել է Սանասարը:[272]

> «Վիրավոր էի: Այդ պատճառով ծեծելուց հետո ինձ տարան հիվանդանոց՝ ստուգման: Բայց այնտեղ մնացի միայն մեկ ժամ: Բերդում շաբաթը 2-3 անգամ բժիշկ էր գալիս, պերեվյասկա անում, հարցնում՝ ինչ դեղորայք է պետք ձեզ: Մեկ-մեկ ցավազրկող էինք ուզում, տալիս էին» – պատմել է Գնելը:[273]

> «Առաջին վիրակապ դրած բուժակն էլ է ինձ ծեծել վիրակապը դնելուց հետո: Վիրակապն էլ դրել է միայն հրամանատարից հատուկ հրահանգ ստանալուց հետո: Առաջին օրերին միայն վիրակապս էին փոխում, անգամ ցավազրկող չէին տալիս, չնայած, որ կոտրվածք ունեի: Բուժաշխատողները, երբ մոտները մարդ կար, նորմալ էին իրենց պահում, երբ ոչ՝ եղել են դեպքեր, որ ցավացրել են դիտմամբ», – պատմել է Արմանը:[274]

Սնունդը

Հարցվածները նշել են, որ ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության ներքո հայտնվելու առաջին շրջանում մինչև բանտ տեղափոխվելը ստացել են շատ փոքր չափաբաժիններով սնունդ, որոշ դեպքերում գերության առաջին 4-5 օրերի ընթացքում սնունդ չեն տրամադրել, պահել են սոված: Հարցազրույցի ընթացքում Բաբկենը պատմել է.

> «4-5 օր երևի բան չեմ կերել, սոված են պահել, հետո տվել են շատ քիչ՝ բռի չափ գրեչկա, բրինձ, հետո ԿԳԲ-ում արդեն համեմատաբար լավ են կերակրել, էլի գրեչկա, բրինձ, ջուր են տվել»:[275]

«ԿԳԲ-ում սնունդը համով էր, քիչ էր պորցիաները, բերդում էլ շատ էր, բայց անհամ ու անօգուտ բան էր», – պատմել է Գնելը:[276] «Սկզբնական օրերին՝ մինչև Բաքու տանելը, ցամաք հաց են տվել, ջուր: Հետո ԿԳԲ-ում կերակրում էին օրը 3 անգամ, բայց քիչ չափաբաժիններով»,

271 Հարցազրույց Բաբկենի հետ (անունը փոխված է), 3 մարտի, 2021թ.:

272 Հարցազրույց Սանասարի հետ, 1 հուլիսի, 2021թ.:

273 Հարցազրույց Գնելի հետ (անունը փոխված է), 1 հուլիսի, 2021թ.:

274 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

275 Հարցազրույց Բաբկենի հետ (անունը փոխված է), 3 մարտի, 2021թ.:

276 Հարցազրույց Գնելի հետ (անունը փոխված է), 1 հուլիսի, 2021թ.:

- պատմել է Արմանը:[277] «Կամերում հացն էր խնդիր դարձել: Էն որ զուտ գոյատևենք: Մի օր Կարմիր խաչից եկան, որ խցակիցս զանգի տուն, լավ հաց կերանք այդ օրը», - փաստահավաք խմբի անդամներին պատմել է Սանասարը:[278]

Հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ

Հարցված ռազմագերիներից երեքը կարողացել են կապ հաստատել իրենց ընտանիքի անդամների հետ ԿԽՄԿ աջակցությամբ՝ հեռախոսազանգի կամ նամակի միջոցով: Սակայն դա տեղի է ունեցել գերության մեջ գտնվելու՝ ընդհուպ մինչև 50-րդ օրը: Մինչ այդ նրանց ընտանիքի անդամները որևէ տեղեկություն չեն ունեցել իրենց ողջ լինելու կամ գտնվելու վայրի մասին: Իսկ Ադրբեջանում գերության մեջ գտնվելու ամբողջ ընթացքում՝ գրեթե երկու ամիս, նրանցից մեկը հնարավորություն չի ունեցել կապ հաստատել ընտանիքի հետ, նրան չեն այցելել ԿԽՄԿ կամ որևէ այլ չեզոք մարմնի ներկայացուցիչներ:

Փաստահավաք խմբին Արմանը պատմել է հետևյալը.

> «Բանտում մի օր նոր հագուստ տվեցին մեզ, հետո տարան նկուղային հարկ: Երբ վերադարձանք մեր խուց, երևում էր, որ ինչ-որ մարդիկ էին այցելել (դատելով դրված սնունդից, ծխախոտներից): Հետո մեզ այլ հայեր ասացին, որ Կարմիր խաչից էին եկել այդ օրը: Մինչև հայրենադարձվելս ընտանիքս որևէ տեղեկություն չի ունեցել իմ գտնվելու վայրի մասին՝ բացառությամբ տելեգրամյան ալիքով տարածված տեսանյութի, որում հաստատվում է իմ՝ ադրբեջանցի զինծառայողների վերահսկողության ներքո գտնվելու փաստը: Հայրենիք վերադառնալուց հետո կապ հաստատեցի իմ խցակիցների ընտանիքների անդամների հետ և տեղեկացրեցի իմ հետ գերեվարվածների գտնվելու վայրի մասին: Այդ ընտանիքների անդամներից տեղեկացա, որ իմ հետ հայրենիք չվերադարձած խցակիցներս իրենց ընտանիքների հետ առաջին անգամ կապ են հաստատել միայն 2021 թվականի փետրվարին՝ գերեվարվելուց չորս ամիս հետո»:[279]

> «Ես ընտանիքիս հետ չեմ խոսել, թղթային նամակ եմ գրել գալուց մոտ մեկ ամիս առաջ, Կարմիր խաչին եմ տվել, տեղ է հասել: Կարմիր խաչը որ եկավ, դաժը տխրեցինք, էնքան բան էին բերել, ասեցինք՝ մի երկու տարի ընդեղ ենք՝ քաղցր, հիգիենիկ պարագաներ և այլն», - պատմել է Գնելը:

Բռնության կիրառման լայնածավալ պրակտիկան, հատկապես առաջնագծում գտնվող ադրբեջանցի զինծառայողների կողմից և ռազմական ոստիկանությունում, նման արարքների համար բացարձակ անպատժելիությունը, վատ վերաբերմունք ու նվաստացում պատկերող տեսանյութերի տարածման միջոցով խրախուսումը վկայում են ադրբեջանական իշխանությունների՝ համակարգային մոտեցման մասին: Նշված եզրահանգումը հաստատվում է նաև նախկինում՝ մինչև 44-օրյա պատերազմը, հայ գերիներին խոշտանգման ենթարկելու և սպանության դեպքերով, որը հաստատվել է ՄԻԵԴ-ի կողմից:[280] Ինչպես նշվել է, այն դեպքերում, երբ հրամանատարները հրահանգել են բռնություն չկիրառել, նրանց ենթակաները զերծ են մնացել դա անելուց, այսինքն՝ իշխանությունների կողմից նման ցանկության դեպքում ռազմագերիների նկատմամբ խոշտանգման և վատ վերաբերմունքի

277 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

278 Հարցազրույց Սանասարի հետ, 1 հուլիսի, 2021թ.:

279 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի, 2021թ.:

280 Օրինակ, տես Պետրոսյանն ընդդեմ Ադրբեջանի, գործ 32427/16 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 4 նոյեմբերի, 2021թ.), Խոջոյանը և Վարդազարյանն ընդդեմ Ադրբեջանի, գործ թիվ 62161/14 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 4 նոյեմբերի 2021թ.):

կիրառումը հնարավոր էր բացառել: Միևնույն ժամանակ վերադասի վերահսկողությունից դուրս մնացած զինվորականները, ինչպես նաև բուժանձնակազմը համարել են, որ կարող են և պետք է բռնություն կիրառեն: Նման մոտեցումը հանդիսանում է ադրբեջանական իշխանությունների կողմից տարիներ շարունակ առաջ տարվող հայատյացության քաղաքականության դրսևորում:

Անմարդկային վերաբերմունք այլ ռազմագերիների նկատմամբ

Փաստահավաք խմբի անդամները վերլուծել են տելեգրամյան ալիքներով տարածված մի շարք տեսանյութեր, որոնք ներկայացնում են հայազգի զինծառայողների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքեր:

Դաժան վերաբերմունք Ա.Ս.-ի նկատմամբ

Պատկեր 8.2. Ա.Ս.-ին հրահանգում են հայհոյել Հայաստանի վարչապետ Փաշինյանին (Աղբյուրը՝ Herbixeber տելեգրամյան ալիք):

2020թ.-ի հոկտեմբերի 7-ին ադրբեջանական մի տելեգրամյան ալիքով տարածվեց տեսանյութ,[281] որտեղ երևում էր քաղաքացիական հագուստով հայ: Այդ անձը ռուսերենով հայհոյում է Հայաստանի վարչապետին, այնուհետև հայերեն պատմում է, որ ինքը որևէ մեղք չունի, պարզապես եկել էր իր երկամյա զինծառայությունն իրականացնելու, Ջաբրայիլի զորամասից է, 18 տարեկան: Խոսելիս նա անընդհատ նայում է կողքին կանգնած ինչ-որ մեկին՝ հավանություն ստանալու նպատակով: Հետևից ինչ-որ ձայն ռուսերենով Ա.Ս-ին հրահանգում է նույնը կրկնել ռուսերեն: Ա.Ս.-ն վախեցած և շփոթված տեսք ունի և դադար է խնդրում (Տես Պատկեր 8.2): Նա ակնհայտորեն ցավերի մեջ է և դժվարությամբ է շնչում: Նրան նաև հարցնում են, թե արդյոք «Երկրապահի» (հայ կամավորականների միություն) անդամ է:[282]

Ավելի ուշ տելեգրամյան ալիքներում մի շարք տեսանյութեր հայտնվեցին նույն հայի մասնակցությամբ, որին փաստահավաք խումբը կարողացել է նույնականացնել որպես 19-ամյա ժամկետային զինծառայող Ա.Ս.:[283] Նշված շարքի առաջին տեսանյութը, որը հայտնվեց 2020թ.-ի նոյեմբերի 9-ին, ցույց է տալիս ձեռքերը վեր պարզած հայ զինծառայողի, որը հայերենով ասում է, որ ոտքից վիրավոր է և այդտեղ է արդեն մեկ շաբաթ, իսկ ադրբեջաներեն խոսող տղամարդիկ գոռում են նրա վրա և հայհոյում[284] (Տես Պատկեր 8.3): Մեկ այլ դրվագում[285]

281 @herbixeber, "Döyüşlərdə Xüsusi Təyinatlılar tərəfindən əsir götürülən erməni əsgəri Paşinyanı söyür," October 7, 2020, Telegram video, https://mega.nz/file/7wV2HRyK#d4M_bFuM0JjaUY9F0jO7hGAbidsf9xTor9YgFgLzpik.

282 «Երկրապահ կամավորական միություն», Երկրապահ կամավորական միություն, մուտք կայք՝ 24 ապրիլի, 2022թ., https://ekm.am/:

283 "Azerbaijan: Armenian Prisoners of War Badly Mistreated," Human Rights Watch, December 2, 2020, https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated.

284 https://t.me/herbixeber/2591, https://mega.nz/file/m8shGADY#8NyewFXOCBTPKf3I5_g0MuirRxwh46OV245SeifH7eM

285 https://t.me/kolorit_21/376, https://mega.nz/file/WssX3CIB#zVpzKduA9fHx53QwNYQNBrXpadD34qSnkGUFfAFbMlY

Ա.Ս.-ն գետնին պառկած հարվածներ է ստանում ադրբեջանցի զինծառայողների կողմից: Իսկ մեկ այլ տեսանյութում[286] նույն շորերով արդեն գետնին պառկած հայ զինծառայողը ցավերի մեջ բղավում է. «Ղարաբաղն Ադրբեջան է»: Մյուս տեսագրությունում[287] համազգեստ կրող նույն զինծառայողը շարունակ ջուր է խնդրում, իսկ ադրբեջանցու ձայնը պահանջում է, որ նա ադրբեջաներեն ինչ-որ արտահայտություն կրկնի (Տե՛ս Պատկեր 8.4): Հաջորդ տեսագրությունը պատկերում է նույն հայ զինծառայողին տանկի վրա՝ վիրավոր և տանկի վերի հատվածից շղթայված: Տեսանյութում նա շրջապատված է մի խումբ ադրբեջանցի զինծառայողականներով: Ադրբեջանցի զինծառայողներից մեկը կանգնած է վիրավոր վիճակում գերի ընկած հայ զինծառայողի ձեռքի վրա: Ադրբեջանցի զինծառայողի հետևից Ա.Ս.-ն կրկնում և, տեսախցիկին նայելով, բացականչում է. «Ղարաբաղն Ադրբեջան է» և Հայաստանի վարչապետ Փաշինյանի հասցեին ադրբեջաներով ինչ-որ արտահայտություն է կրկնում, ինչին հետևում են ադրբեջանցի զինծառայողների սուլոցներն ու ոգևորված բացականչությունները[288] (Տե՛ս Պատկեր 8.5):

Պատկեր 8.3. Ա.Ս.-ն, ձեռքերը բարձրացրած, հանձնվում է ադրբեջանցի զինծառայողներին (աղբյուր՝ Herbixeber տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.4. Ա.Ս.՝ գետնին պառկած և ջուր խնդրելիս (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.5. Ա.Ս.-ն, տանկին շղթայված, գոռում է «Ղարաբաղը Ադրբեջան է», իսկ ադրբեջանցի զինծառայողը կանգնել է նրա ձեռքին (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

286 https://t.me/kolorit_21/1999, https://mega.nz/file/e01iyQTI#NcUQZibX1FqBQafWzVYqHX2vwpVYevQGVJZ0USEJR8o

287 Հղումը հասանելի չէ, https://mega.nz/file/LwFmiKxR#3xZX74TbBuopu6y1xW5mNXhjAy2DqAn5gkuQrkUinwI

288 https://t.me/karabah_news/1329; https://t.me/xalqxalq/1929, https://mega.nz/file/61dRBDIL#KNGYQ9HFon0J6cZvLD-PLxXDLRDJzZk4W3d2U0wDnNqE

Դաժան վերաբերմունք Ս.Ա.-ի նկատմամբ

2020թ.-ի հոկտեմբերի 20-ին տելեգրամյան մի ալիքում տեղադրված տեսանյութում հայ զինծառայողը երևում է պատի վրա Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի նկարով մի սենյակում:[289] Ադրբեջանցի զինծառայողը խփում է նրա գլխին (Տես Պատկեր 8.6): Ինչ-որ մեկը ռուսերենով նրան շարունակ կարգադրում է հայհոյել Հայաստանի վարչապետ Փաշինյանին: Փաստահավաք խմբի անդամները զինծառայողին նույնականացրել են Ս.Ա.-ի հետ:[290]

Պատկեր 8.6. ադրբեջանցի զինծառայողը հարվածում է գերեվարված հայ զինծառայողին (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

Մատաղիսում գերեվարված հայ զինծառայողների խումբ

2020թ.-ի հոկտեմբերի 20-ին տելեգրամյան ալիքներից մեկում հրապարակված տեսագրության մեջ հայկական ռազմական համազգեստով ութ հայերից կազմված մի խումբ շարքով կանգնած է ինչ-որ շենքի մոտ, հնարավոր է զորամասի վարչական շենքի առջև, որը հետագայում հայրենադարձված զինծառայողների հավաստմամբ, իրոք, եղել է Մատաղիսի հայկական զորամասը[291] (Տես Պատկեր 8.7): Հետագայում TikTok-ում տեղադրված մի տեսանյութում երևում է, թե երբ, որտեղ և ում կողմից են հայ զինծառայողները գերեվերավել:[292] Հայրենիք վերադառնալուց հետո հայկական լրատվամիջոցներին տված հարցազրույցների հիման վրա փաստահավաք առաքելության անդամները կարողացել են հաստատել Վ.Հ.-ի, Հ.Դ.-ի, Ն.Ն.-ի , Ռ.Ռ.-ի և Գ.-ի ինքնությունը:[293] Տեսագրության մեջ լսվող

289 @karabakh_news, տելեգրամյան տեսանյութ, https://mega.nz/file/yktD0DIQ#Fk-aGnvyCPCme5ZelLYi-Y2_A3qnpgfh1l-FlNOlOFBk.

290 «Կենտրոն» հեռուստատեսություն,«Սկզբում Ծատ Վատ Էր, Հետո՝ Ուղղակի Վատ». 55 Օր Բաքվի Բերդում Անցկացրած Սամվելը Վերհիշել է Ծանր Օրերը, փետրվարի 1, 2021թ., https://www.youtube.com/watch?v=2prjgb8YnBc.

291 @qarabagxeber, " Erməni əsirlər: "QARABAĞ AZƏRBAYCANDIR"," October 22, 2020, Telegram video, https://mega.nz/file/mhlSDb5T#-yzqk9gxZ8Wnl32j-l5Rq76aMP_75skJjZ-VcvQm4Mc.

292 @ruhinmikayilov, TikTok video, https://mega.nz/file/ul0TRbQD#lcMfD6LhCpfN2qrjdAcNTUAmyAQ5vm-sDX8TWyk31FE.

293 Ազատություն, «Գերությունից Վերադարձած Զինծառայողները Պնդում Են՝ Իրենք Ծառայության Պատրաստ Չեն», ապրիլի 25, 2021թ., https://www.youtube.com/watch?v=2shi9HV6WQ0.

ձայնը ռուսերենով հրահանգում է բոլորին հերթով կրկնել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է», իսկ այդ ընթացքում ադրբեջանցի մի զինծառայող քայլում է շարքի երկայնքով: Մեկ այլ տեսանյութումնույն հայերը մեկ այլ վայրում են՝ գետնին ծնկի եկած, ձեռքերը գլխի հետևում,[294] և նրանց հրամայում են միասին մի քանի անգամ կրկնել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»: Այդ խմբից հայրենադարձված ռազմագերի Հ.Դ.-ի խոսքերով՝ երկրորդ տեսագրությունն արվել է Թալիշից մեքենայով ընթանալիս մոտ մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող վայրում:[295]

Պատկեր 8.7. Գերի ընկած հայ զինծառայողներին, շարք կանգնեցրած, ստիպում են ասել՝«Ղարաբաղն Ադրբեջան է» (աղբյուր՝ «Qarabagxeber» տելեգրամյան ալիք):

Հոկտեմբերի 22-ին հայկական լրատվամիջոցներին տված հարցազրույցում Հ.Դ.-ն պատմել է,[296] որ ադրբեջանցիներն իրենց գտել են իրենց Մատաղիսի հայկական զորամասի տարածքում գտնվող բունկերում: Նրանցից մի քանիսը, այդ թվում՝ Հ.Դ.-ն և Վ.Հ.-ն, վիրավորվել էին մարտերում: Հ.Դ.-ն նշել է նաև, որ չնայած ադրբեջանցի զինծառայողները թշնամական վերաբերմունք են դրսևորել, բայց մինչև խմբին ռազմական ոստիկանություն տեղափոխելը նրանց ֆիզիկական բռնության չեն ենթարկել, քանի որ երկու ադրբեջանցի հրամանատարներ հրահանգել են, որ ոչ մեկը իրենց չկպչի: Այնուամենայինիվ, ռազմական ոստիկանությունում նրանց ծեծի են ենթարկել: Հայրենադարձվելուց հետո հայկական լրատվամիջոցներին տված հարցազրույցում նույն խմբից Վ.Հ.-ն պատմել է, որ իրենց ծեծել են «6-7 օր՝ հաշվի չառնելով, որ վիրավոր էին»:[297] Նրանց այնուհետև նաև ցուցադրել են ադրբեջանական հեռուստատեսությամբ:[298]

294 @Caucasian_bureau, " Армянские солдаты, попавшие в плен, утверждают, что Карабах - это Азербайджан. Думаю соглашусь с ними в этот раз," October 23, 2020, Telegram video, https://mega.nz/file/Pk1hVRbQ#60QJo6jhKGlo-qGBBcAQpyvTwZVEkCAWDwiqYCKefHqU.

295 Ժիրայր Ոսկանյան, «ԱնցնելովՍահմանը ԲԱՑԱՌԻԿ Մանրամասներ. Կապեցին Ու Տարան Բաքու. Բանտում Հայ Գերիների Ձայներ Էի Լսում», 6 փետրվարի, 2021թ., https://www.youtube.com/watch?v=KnHXMc_RC9w.

296 Նույն տեղում:

297 «Բացառիկ մանրամասներ Բաքվի բանտից հայ գերու պատմությունը. ՏԵՍԱՆՅՈՒԹ», Ֆակտոր տեղեկատվական կենտրոն, 22 հունվարի, 2021թ., https://factor.am/330952.html.

298 @xalqxalq, "10 günə yaxın bunkerdə gizlənən erməni hərbiçilərdən biri əsir götürülmə anlarını danışıb...," November 2, 2020, Telegram video, https://t.me/xalqxalq/3914.

Նույն խմբին պատկերող երրորդ տեսանյութում[299] նրանցից մեկը հարցաքննվում է ադրբեջանցի գեներալ մայոր Հիկմետ Հասանովի կողմից, իսկ մյուսները շարված են կապկպված ձեռքերով, կապված են նաև ոմանց աչքերը (Տեմ Պատկեր 8.9)։ Սա համապատասխանում է հայրենադարձումից հետո նրանց տված վկայություններին։ Երկու տեսանյութերի վերլուծությունը հուշում է, որ դրանք նկարահանվել են նույն վայրում (Տեմ Պատկեր 8.10)։

Պատկեր 8.8. Ծնկած նույն հայ զինծառայողներին ստիպում են դարձյալ ասել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է» (աղբյուր՝ «Caucasian Bureau» տելեգրամյան ալիք)։

Պատկեր 8.9. Գերեվարված հայ զինծառայողը հարցաքննվում է ադրբեջանցի զինծառայողների կողմից (Աղբյուրը՝ Herbixeber տելեգրամյան ալիք)։

299 @herbixeber, " Vətən müharibəsində Ağdərə Suqovuşan istiqamətində mühasirəyə salınan ermənilərin 6-cı dağ atıcı alayının əsir götürülən hərbçiləri," September 27, 2020, Telegram video, https://mega.nz/file/bhISWDZa#T-tOpBbJj9L5I659K3Y-8PA3DxS-S8RgQPvIVcsY-Oi0

Պատկեր 8.10. Վայրը, որտեղ նկարահանվել են երկու տեսանյութերը (Աղբյուրը՝ Caucasian Bureau և Xerbixeber տելեգրամյան ալիքներ):

Դաժան վերաբերմունք՝ վեց հայ ռազմագերիների նկատմամբ

2020 թվականի հոկտեմբերի 25-ին տելեգրամյան ալիքներից մեկով տարածված տեսանյութում երևում են հայկական ռազմական համազգեստով մի խումբ գերեվարված անձինք, որոնք դեմքով պառկած են գետնին՝ ձեռքերը հետևում կապված, փակված աչքերով:[300] Լսելի է նրանց մի մասի հայերեն խոսակցությունը: Ոմանց մարմինների վրա տեսանելի են ծակծկված վերքերի հետքեր: Տեսագրության մեջ ադրբեջաներեն խոսացող, ադրբեջանական զինված ուժերի համազգեստով տղամարդիկ քայլում են ձեռքերը կապված հայերի շուրջ և ծակում նրանցից ոմանց մարմինները երկաթյա ձողով (Տե՛ս Պատկեր 8.11): Գետնին պառկած և կապված հայ զինծառայողներից մեկին ծակելու և ոտքով հարվածելու ընթացքում ադրբեջանցի զինծառայողներից մեկն առաջարկում է կտրել նրա մատները: Հայ զինծառայողը ռուսերեն խնդրում է չանել դա: Ձեռքերը կապած և աչքերը փակված հայերից մեկը ռուսերեն ասում է. «Մի՛ արեք: Ամեն ինչ կասեմ»: Ադրբեջանցի զինծառայողները մի քանի անգամ ոտքով հարվածում են նրան, կանգնում նրա գլխին և ոտքին, ծակծկում նրան (Տե՛ս Պատկեր 8.12): Մի քանի վայրկյան անց կադրից դուրս ձայնը ադրբեջաներեն առաջարկում է կտրել նրա մատները, իսկ մեկ այլ ադրբեջանցի զինծառայող մետաղական առարկայով կպչում է կապկպված հայ գերու ձեռքերին[301] (Տե՛ս Պատկեր 8.13): «Human Rights Watch»-ը հաստատել է այս զինծառայողի ինքնությունը. նա 21-ամյա Մ.Մ.-ն է: «Human Rights Watch»-ն այդ խմբից հաստատել է մեկ այլ հայի ինքնությունը՝ 51-ամյա Լ.Մ.-ն:[302] Ադրբեջանցի երկու զինծառայողներ մի քանի անգամ ոտքով հարվածում են վերջինիս և մետաղյա ձողով ծակծկում նրա գլուխը, մեջքը, որովայնի հատվածը և ոտքերը, իսկ նա

300 @karabah_news, https://mega.nz/file/2kFyiAqL#zuMpUGQB465hNCg3IJtlWQtcvCISj1IPxLbkTmqGQ5w.

301 Ադրբեջաներենից անգլերեն թարգմանությունը կատարվել է փաստահավաք խմբի անդամներից մեկի կողմից:

302 “Azerbaijan: Armenian Prisoners of War Badly Mistreated.”

խնդրում է ցավ չպատճառել իրեն: Ադրբեջանական իշխանությունները հաստատել են Լ.Մ.-ի գերեվարումը՝ նրան առաջադրելով Ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում ազատագրկվածներին խոշտանգելու մեղադրանք:[303]

Ադրբեջանցի զինծառայողներից մեկը նույնպես ոտքերով հարվածում է հայ գերիների գլխներին կամ մարմնի այլ մասերին: Որոշ հայ զինծառայողների տաբատներն արյունոտ են, ինչը վկայում է նրանց վիրավոր լինելու մասին: Հայ ռազմագերիների շահերը ներկայացնող փաստաբանները հայտնել են առաքելության անդամներին, որ իրենց վստահորդների ընտանիքների անդամները ճանաչել են տեսագրության մեջ երևացող երեք այլ զինծառայողների՝ Վ.Հ-ին, Ա.Հ.-ին և Ա.Մ.-ին:[304] Հայրենադարձությունից հետո հայկական լրատվամիջոցներին տված հարցազրույցի հիման վրա առաքելության անդամները հաստատել են ևս մեկ զինծառայողի՝ 18-ամյա Ս.Մ.-ի ինքնությունը:[305] Այդ հարցազրույցում Ս.Մ.-ն նշել է, որ գերի ընկնելիս վիրավոր է եղել, գերության մեջ ենթարկվել է ծեծի և չի ստացել պատշաճ բուժօգնություն:

Պատկեր 8.11. Ադրբեջանցի զինծառայողները ձողով ծակծկում են ձեռքերը և աչքերը կապած, գետնին պառկած հայ զինծառայողներին (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.12. ադրբեջանցի զինծառայողը ոտքով խփում է գետնին պառկած, աչքերը կապած հայ զինծառայողի գլխին (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.13. ադրբեջանցի զինծառայողը սպառնում է կտրել գերեվարված և կապկպված հայ զինծառայողի մատները (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

303 CBC TV Azerbaijan, “Людвиг Мкртчян и Алеша Хосровян Пытали Азербайджанских Пленных,” June 6, 2021, YouTube video, https://www.youtube.com/watch?v=rfrkz9tq6Cw; Тимур Рзаев, “Арестован гражданин Армении, пытавший азербайджанских пленных в годы первой Карабахской войны,” 1news.az, December 22, 2020, https://1news.az/news/20201222055740909-Arestovan-grazhdanin-Armenii-pytavshii-azerbaidzhanskikh-plennykh-v-gody-pervoi-Karabakhskoi-voiny.

304 Հարցազրույց փաստաբան Սիրանուշ Սահակյանի հետ, 14 մայիսի 2021թ.:

305 Ազատություն, «Գերությունից Վերադարձած Զինծառայողները Պնդում Են՝ Իրենք Ծառայության Պատրաստ Չեն»:

Սույն առաքելության ընթացքում հարցազրույց տված Արմանը (անունը փոխված է) ադրբեջանական գերության ժամանակ եղել է Լ.Մ.-ի խցակիցը:[306] Արմանը հաստատել է, որ Լ.Մ.-ի գլխին և մարմնի այլ մասերին տեսել է սպիեր, որոնք վերջինս ստացել է գերության ժամանակ ադրբեջանցի զինծառայողների դաժան վերաբերմունքի, այդ թվում՝ մետաղյա ձողերով ծակծկելու հետևանքով: Սպիերի նկարագրությունը համապատասխանում է այն վերքերի արտաքինին, որոնք երևում են տեսագրության մեջ: Լ.Մ.-ն Արմանին ասել է, որ ադրբեջանցի զինծառայողների ձեռքն ընկնելուց հետո ինքը և հայազգի այլ զինծառայողներ ենթարկվել են դաժան վերաբերմունքի: Լ.Մ.-ն զգացել է, որ իրեն ծակել են ինչ-որ սուր գործիքով, բայց չի հասկացել՝ դա ինչ է:

Վիրավոր հայ զինծառայող

2020 թվականի նոյեմբերի 1-ին տեսանյութ հայտնվեց, որտեղ երևում էր, թե ինչպես է աջ ձեռքը վիրակապած հայ զինծառայողը հարկադրվում ադրբեջանցի զինծառայողի կողմից համբուրել ադրբեջանական դրոշը[307] (Տես Պատկեր 8.14): Փաստահավաք խումբը գերեվարված հայ զինծառայողին նույնականացրել է տասնինամյա Է.Ա.-ի հետ:

Պատկեր 8.14. ադրբեջանցի զինծառայողը հայ զինծառայողին ստիպում է համբուրել Ադրբեջանի դրոշը (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

Ս.Կ.-ի դեպքը

2020 թվականի նոյեմբերի 2-ին Տելեգրամով տարածված տեսանյութում ձեռքերը մեջքի հետևում կապված մի տղամարդ պառկած է գետնին: Ադրբեջանական զինծառայողի համազգեստով մեկը հարվածում է նրան, ապտակում, հայհոյում ռուսերեն և նրա գլուխը խփում գետնին[308] (Տես Պատկեր 8.15): Այդ տղամարդու շահերը ՄԻԵԴ-ում ներկայացնող փաստաբանը տեղեկացրել է առաքելության անդամներին, որ դա Ս.Կ.-ն է, որը գերեվարվել է և բռնության ենթարկվել ադրբեջանցի զինծառայողների կողմից: Նա հայրենադարձվել է 2020 թվականի դեկտեմբերին:

306 Հարցազրույց Արմանի հետ (անունը փոխված է), 7 մայիսի 2021թ.

307 @karabah_news, https://mega.nz/file/ulVXRa5T#D3Q0c6UdTWA961lc_5q1uyuks2CZNbs_Hw5JWVGRXdA.

308 @xalqxalq, "+18DİQQƏTSÖYÜŞ VAR+18," November 2, 2020, https://mega.nz/file/X1NxwCZa#cP3rKokixMnwnli02Cx8Y-DHWN7m_uDjILwcVTUENE3Q.

Պատկեր 8.15. Ադրբեջանցի զինծառայողը ծեծի է ենթարկում և հայհոյում ձեռքերը կապված հայ զինծառայողին (աղբյուր՝ «Xalqxalq» տելեգրամյան ալիք)։

Հայ զինծառայողների խումբ՝ Վանք գյուղում

Հոկտեմբերի վերջին տելեգրամյան ալիքներով տարածվեց ռազմական համազգեստով հայ զինծառայողներ պատկերող տեսանյութերի մեկ այլ շարք։ Առաջին տեսանյութում[309] ադրբեջանցի զինվորներով շրջապատված հայ զինծառայողին ստիպում են կրկնել ադրբեջաներեն արտահայտություններ, որից հետո նրանցից մեկը հարվածում է նրան։ Հետագայում պարզվել է, որ տեղանքը Հադրութի շրջանի Վանք գյուղն է։ Ադրբեջանցի զինծառայողներից մեկը ցուցադրում է թուրքական ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլերի» նշանը. այս կազմակերպությունը մի շարք եվրոպական երկրներում արգելված է ատելության հիմքով հանցագործությունների համար[310] (Տես Պատկեր 8.16)։

Պատկեր 8.16. ադրբեջանցի զինծառայողը ցուցադրում է «Գորշ գայլեր» խմբավորման նշանը, իսկ մեկ այլ զինծառայող ապտակում է հայ գերուն (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք)։

309 @karabah_news, https://mega.nz/file/y9MRWbJA#mMlYbgit5dYXNz46QEG2RqJLoxvbcio6Lu07Zakp4PI.

310 Patrick Keddie, "France Has Banned the 'Grey Wolves' – but Who Are They?," Al Jazeera, November 24, 2020, https://www.aljazeera.com/features/2020/11/24/france-has-banned-the-grey-wolves-but-who-are-they.

Պատկեր 8.17. Հայ զինծառայողներին ստիպում են ծնկաչոք ծափահարել և ասել, որ Ղարաբաղն Ադրբեջան է՝ շրջապատված ադրբեջանցի զինծառայողներով (Աղբյուրը՝ Karabax news, Karabax, Кавказ տելեգրամյան ալիքներ):

Մեկ այլ տեսանյութում[311] չորս հայ զինծառայողներ երևում են ինչ-որ տան դարպասի մոտ, իսկ կադրից դուրս լսվում է ծեծի ձայն: Նույն վայրում արված մեկ այլ տեսանյութում[312] երեք հայ զինծառայողներ, որոնք նույնականացվել են որպես Է.Ս., Ռ.Վ. և Ա.Գ. ծնկած են գետնի վրա, իսկ ադրբեջանցի զինծառայողները երաժշտության տակ պարում են՝ հայ գերիներին հրահանգելով ծափահարել (Տե՛ս Պատկեր 8.17):

Մեկ այլ տեսանյութում բոլոր հինգ հայ զինծառայողներին ստիպում են մեկ առ մեկ կրկնել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»:[313] Այս տեսանյութում տեսանելի է հինգերորդ հայ զինվորը, որը հետագայում նույնականացվել է Ռ.Վ.-ի հետ:[314] Բակում արված մեկ այլ տեանյութում[315] ադրբեջանցի զինծառայողը նրանց հրահանգում է ներկայանալ, որտեղ լսելի է նրանցից առնվազն երեքի անունը՝ Ռ., Ե.Խ. և Կ.Մ.: Նրանք տեախցիկի առջև նշում են, որ բոլոր հինգն էլ վիրավոր են:

Շենքի ներսում նույն հայերի հետ արված այլ տեսագրություններում ադրբեջանցի զինծառայողները հրահանգում են նրանց կրկնել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»:[316] Մեկ այլ տեսանյութում[317] հայ գերին ներկայանում է որպես Ա., իսկ ադրբեջանցի զինծառայողը հրամայում է նրան ադրբեջաներեն արտահայտություններ կրկնել: Ա.-ն այն աստիճան է շփոթված, ապակողմնորոշված և վախեցած, որ ինքնաբերաբար կրկնում է ադրբեջանցի զինծառայողի արտաբերած բոլոր բառերը, անգամ ռուսերեն տրված հրահանգները (Տե՛ս Պատկեր 8.18):

311 @Herbihisse, 6 հունվարի, 2021թ., https://mega.nz/file/289jyZYK#xyN83v5ur7n_WS8NsrUGsApUrY0V_BppRPDIqB8o-F0U.

312 @Herbihisse "Nə qəşeng əl çalırlar...," 23 նոյեմբերի, 2020թ., https://mega.nz/file/nwlDXIpQ#ayGVzu99TGGFuO5E8Hn-CAI2ac5hnCxwBiIr69oyu_8A.

313 @qarabagxeber, "Erməni əsirləri ilə bağlı yeni video yayıldı! Qorxmuş ermənilər "Qarabağ Azərbaycandır", qışqırırlar," January 6, 2021, https://mega.nz/file/zg8DTJiL#C4wO3GJ2pmjwDxtnnxsoAJ20I7WYHxZW9bb28RcS84E.

314 "Azerbaijan: Armenian Prisoners of War Badly Mistreated."

315 @karabah_news, https://mega.nz/file/ro1UAbKL#7Nv2R62LjDaJI-M3zactAh7J3x0bnH7hSKPBnMaW98c.

316 @ararathau, "Очередное доказательство жестокого обращения с армянскими военнопленными...," December 24, 2020, Telegram video, https://mega.nz/file/esdHSJpI#c6Bnw1L3dPnGXIjdZdaSN-HvZB3ZJsCsuJhVHKaLDE8.

317 @karabah_news, https://mega.nz/file/D9FEhaDB#KVOuaBG54PWFlJHk1zXA4gkBhZA9sGUoetd4GarH0SQ.

Այս խմբից մեկ այլ հայի, ում առաքելության անդամները հետագայում ՀԼՄ-ներին տրված հարցազրույցների հիման վրա նույնացրել են որպես հայրենադարձված ռազմագերի Կ.Մ., նկարահանել են սենյակում, միայնակ՝ շրջապատված մի խումբ ադրբեջանցի զինծառայողներով: Նրան քաշելով նստեցնում են աթոռին և հրահանգում ադրբեջաներենով նախադասություններ կրկնել, հայհոյել Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փաշինյանին:[318] Զինծառայողը վախենում է կողքին կանգնած ադրբեջանցի զինծառայողի ամեն շարժումից, կարծես սպասում է, որ ամեն վայրկյան նա կհարվածի իրեն (Տես Պատկեր 8.19):

Պատկեր 8.18. ադրբեջանցի զինծառայողը հայ ռազմագերուն ստիպում է կրկնել ադրբեջաներեն արտահայտություններ (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):



Պատկեր 8.19. ադրբեջանցի զինծառայողը ֆիզիկապես ճնշում է հայ գերուն՝ հրահանգներին հետևել ստիպելու համար (Աղբյուրը՝ Kolorit_18+ տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.20. ադրբեջանցի զինծառայողը քաշում է գերեվարված հայ զինծառայողի ականջներից (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

318 https://t.me/kolorit_21/1404, https://mega.nz/file/vtkkUTaR#fhivWyyrAdZ0-zb9ZhgUlgadwbcFtqJMSSATTLdG-vg

Մեկ այլ տեսանյութում[319] երեք գերիներ երևում են ինչ-որ շինության ներսում, որտեղ ադրբեջանցի զինծառայողը նվաստացուցիչ վերաբերմունք է ցուցաբերում Կ.Մ.-ի նկատմամբ, այդ թվում՝ քաշելով նրա ականջները (Տե՛ս Պատկեր 8.20)։

Հայ զինծառայողների նույն խմբին պատկերող մեկ այլ տեսանյութում[320] զինծառայողները բռնել են Հայաստանի դրոշը, իսկ ադրբեջանցի զինծառայողը հրամայում է նրանց իր հետ ռուսերեն և ադրբեջաներեն կրկնել, որ տված խոստման համաձայն՝ ինքը տուն է տանելու Հայաստանի դրոշը, որպեսզի իր որդին այրի այն (Տե՛ս Պատկեր 8.21)։ Տեսանյութում Ե.Խ.-ի ձախ ձեռքը վիրակապված է։ Մեկ այլ տեսագրության մեջ հայ ռազմագերիների այս խմբից երեքին ստիպում են հերթով համբուրել Ադրբեջանի դրոշը[321] (Տե՛ս Պատկեր 8.22)։

Այս խմբի որոշ անդամներ հայրենադարձվել են գերեվարումից միայն յոթ ամիս անց։[322] Հայրենադարձվելուց հետո հայկական լրատվամիջոցներին տված հարցազրույցում Կ.Մ.-ն հայտնել է, որ գերի են ընկել 2020 թվականի նոյեմբերի 21-ին՝ ռազմական գործողությունների ավարտից հետո։ Ինքն ու մյուսները՝ բոլորն էլ եղել են վիրավոր և թաքնվել են մի տան մեջ, քանի որ չգիտեին՝ ինչպես հասնել հայերի վերահսկողության տակ գտնվող տարածք։[323]

Պատկեր 8.21. Հայ զինծառայողները կանգնած են Հայաստանի դրոշով, իսկ ադրբեջանցի զինծառայողը հրահանգում է կրկնել, որ, ինչպես և խոստացել էր, Հայաստանի դրոշը տանելու է տուն, որպեսզի իր որդին այրի այն (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք)։



Պատկեր 8.22. Երկու հայ զինծառայողների ստիպում են համբուրել Ադրբեջանի դրոշը (Աղբյուրը՝ Kolorit_18+ տելեգրամյան ալիք)։

319 @sisumasis, “ икол! Еще сколько будут издеваться эти азербараны над нашими братьями? У тебя вообще есть честь?,” December 16, 2020, Telegram video, https://mega.nz/file/7g02TQLY#goVlqxVYKjxoJpSehKKo_WE7dFBEpylfs-UJ-f2aRKUU.

320 @Herbihisse, 22 ապրիլի, 2021թ., տելեգրամյան գրառում, https://mega.nz/file/K5sImAYL#iN2sruP6KAwYi4ND-nIGjUnYTofj5gDHiPGBgnQbx8BA.

321 @kolorit_21, https://mega.nz/file/748nUIbI#denax6sRvBK8d4XZLGwoNruxBXlne6JaT-WuzzbZJFc.

322 «15 գերի վերադառնում է Հայաստան», Ազատություն ռադիոկայան, 12 հունիսի, 2021թ., Լուրեր, https://www.azatutyun.am/a/31304127.html.

323 «Ուզում եմ զոհված ընկերոջս նորից տեսնել. գերությունից վերադարձած 19-ամյա Կարենն ուզում է աշխատել ու նպատակներն իրագործել», Հայկական ժամանակ, 3 սեպտեմբերի, 2021թ., https://armtimes.com/hy/article/219217.

Ե.Գ.-ի դեպքը

2020 թվականի դեկտեմբերի 13-ին տելեգրամյան ալիքներով տարածվեց տեսանյութերի շարք, որտեղ երևում է ձեռքերը մեջքի ետևում կապած, առնվազն յոթ զինված ադրբեջանցի զինծառայողներով շրջապատված հայկական ռազմական համազգեստ կրող զինծառայող, որին ստիպում են տեսախցիկի առջև ասել, որ Ղարաբաղն Ադրբեջան է[324] (Տե՛ս Պատկեր 8.23)։ Մեկ այլ տեսանյութում[325] կարելի է տեսնել երկու ադրբեջանցի զինծառայողների ուղեկցությամբ նույն հայ զինծառայողին, որը նստած է «պիկապում», իսկ մեկ այլ ադրբեջանցի զինծառայող նրան ռուսերեն հրահանգում է ներկայանալ տեսախցիկի առջև։ Հայ զինծառայողը ներկայանում է որպես Ե.Գ.։ Մեկ այլ տեսանյութում նույն զինծառայողին՝ Ե.Գ.-ին, ստիպում են տեսախցիկի առջև լվանալ ադրբեջանցի զինծառայողի կոշիկները[326] (Տե՛ս Պատկեր 8.24)։ Այլ տեսանյութում նույն հայ զինծառայողը նստած է մեկ այլ բեռնատարի մեջ, և նրան հրահանգում են ադրբեջաներենով կրկնել տարբեր արտահայտություններ։ Հարվածներից պաշտպանվելու համար նա փորձում է ձեռքերով փակել իր դեմքը, ունի շփոթված, հոգնած և վախեցած տեսք[327] (Տե՛ս Պատկեր 8.25)։ Ե.Գ.-ն հայրենադարձվել է գերեվարումից յոթ ամիս անց։[328]

Պատկեր 8.23. Հայ զինծառայողին ստիպում են ասել, որ Ղարաբաղն Ադրբեջան է (Աղբյուրը՝ Qarabagxeber տելեգրամյան ալիք):(Source: Qarabagxeber Telegram channel).

Պատկեր 8.24. Ե.Գ.-ն ծածկում է դեմքը՝ ադրբեջանցի զինծառայողից հարվածներ ստանալիս (Աղբյուրը՝ Kolorit18+ տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.25. Ե.Գ.-ին ստիպում են մաքրել ադրբեջանցի զինծառայողի կոշիկները (Աղբյուրը՝ Kolorit18+ տելեգրամյան ալիք):

324 @qarabagxeber, "Əsir tutulan erməni terrorçusu: Qarabağ Azərbaycandır," December 13, 2020, Telegram video, https://t.me/qarabagxeber/4611; @Caucasuan_bureau, "Ещё одно видео с армянским сепаратистом, которого азербайджанские военнослужащие взяли в плен вчера в Гадруте," December 13, 2020, Telegram video, https://mega.nz/file/Ps0AhSID#-JTW9IJnVOgOPAMxU0ZGQL-afxL2L3agRIN6PFzFqijc.

325 @ geo_official1, տեսանյութ «Տիկտոկ»-ում, https://mega.nz/file/PgNGXZIS#APGSI5A-04BVBSgYOkbQzUsCUAWuvaOs-vah_WfMSccI.

326 @kolorit_21, https://mega.nz/file/K8NR1Qob#tzjithJgwako2hbC4KFVd_lBoEzt6oEkauR2T2CDyAY.

327 @kolorit_21, https://mega.nz/file/G4dyGTJQ#QiwZRni_ug-de63FBXw0qWLlagwPFnFek1fC_nb2cqY.

328 «15 գերի վերադառնում է Հայաստան»։

Չորս հայ զինծառայողների հարկադրված քայլերթը

2020 թվականի դեկտեմբերի 19-ին նոր տեսագրություն ի հայտ եկավ,[329] որտեղ գերեվարված չորս հայ զինծառայողի հրահանգում են անցնել քայլերթով և երգել ադրբեջաներեն: Ադրբեջանցի զինծառայողները կանգնած են նրանց շուրջը և ծիծաղելով հրամայում են ավելի բարձր երգել (Տես Պատկեր 8.26)

Ձեռքերը կապած հայ զինծառայողը

2021թ.-ի մարտի 10-ին տելեգրամյան ալիքներից մեկով տարածված տեսանյութում [330] ադրբեջաներեն խոսացող մի անձ հրամայում է ձեռքերը մեջքի հետևում կապած և դժվարությամբ շնչող (ինչը վկայում է նրա՝ վիրավոր լինելու մասին) գերի ընկած հայ զինծառայողին մի քանի անգամ ասել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»: Երբ վերջինս չի ենթարկվում հրահանգներին, ադրբեջանցի զինծառայողն ապտակում է նրան (Տես Պատկեր 8.27): Տեսագրության եզրափակիչ մասում, չնայած նրան, որ գերեվարված հայ զինծառայողը կրկնում է այն, ինչ հրամայվել էր իրեն, ադրբեջանցին, միևնույն է, երկու անգամ ոտքերով հարված է հասցնում: Փաստահավաք խումբը հայ զինծառայողին հետագայում նույնականացրել է որպես Կովսականում գերեվարված Ա.Ա.:

Վերը քննարկված տեսանյութերում տեսագրված անձանց մեծ մասը հայրենադրձվել է: Սակայն, նրանցից մի քանիսի դեպքերում, չնայած ապացուցողական նշանակություն ունեցող տեսանյութերի առկայությանը, որը հաստատում է նրանց գերեվարումն ադրբեջանցի զինծառայողների կողմից և չնայած ՄԻԵԴ-ի կողմից միջանկյալ միջոցների սահմանմանը, Ադրբեջանը չի ընդունել նրանց գերության փաստը և տեղեկություններ չի տրամադրել նրանց գտնվելու վայրի մասին:

Պատկեր 8.26. Գերեվարված հայ զինծառայողներին հրահանգում են քայլերթով շարժվել և երգել ադրբեջաներեն (Աղբյուրը՝ Qarabagxeber տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.27. ադրբեջանցի զինծառայողը հարվածում է ձեռքերը կապած հայ ռազմագերուն (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

329 @karabagxeber, " Guya döyüşməyə gəlmişdilər. Silahları da vardı," December 19, 2020, Telegram video, https://mega.nz/file/e9VRGQDZ#yROBCJt23cQ2JzPNxR2f7ROZ8E7cIdoJG-XWfHd-ndk

330 @kolorit_21, https://mega.nz/file/3xFEQIyC#k4-z59MzO1SDZ2zf2tI9SSzs1iGg9NO-khMOg19M3kg

Նրանցից ոմանք հարցազրույցներ են տվել հայկական լրատվամիջոցներին և պատմել՝ ինչ է կատարվել իրենց հետ գերեվարումից հետո: Նրանց պատմությունները համապատասխանում են Տելեգրամով և ՏիկՏոկով տարածված տեսանյութերին: Ավելին, առաքելության անդամներին հարցազրույց տված հայրենադարձված ռազմագերիները եղել են վերը հիշատակված հայ ռազմագերիներ Լ.Մ.-ի, Ս.Մ.-ի, Ս.Մ.-ի և Հ.Դ.-ի խցակիցները: Նրանք նկարագրել են դաժան վերաբերմունքի մանրամասները, որոնք տեսանելի են նաև վերը քննարկված տեսանյութերում:

ՄՄԻ-ին պահանջում է մարդասիրաբար վերաբերվել շարքից դուրս եկած («hors de combat») անձանց նկատմամբ և արգելում է խոշտանգել, դաժան կամ անմարդկային վերբերմունք դրսևորել նրանց նկատմամբ, ինչպես նաև ոտնձգություններ թույլ տալ անձի արժանապատվության նկատմամբ, մասնավորապես ցուցաբերել նսեմացնող կամ նվաստացուցիչ վերաբերմունք: Խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, դիտարվորյալ լուրջ տառապանք կամ ծանր մարմնական վնասվածքներ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելը Ժնևյան 3-րդ կոնվենցիայի լուրջ խախտումներ են, և հետևաբար՝ պատերազմական հանցագործություն: Մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց հետ պետք է վարվել մարդասիրաբար, հարգել մարդու արժանապատվությունը: Այս նորմերը սահմանում են նաև հնարավոր խախտումներն արդյունավետ քննելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու պարտականություն:

Քաղաքացիական անձանց գերեվարում, խոշտանգում և դաժան վերաբերմունք

Ռազմական գործողությունների ընթացքում եղել են հաղորդումներ ադրբեջանական զինված ուժերի կողմից քաղաքացիական անձանց պատանդ վերցնելու բազմաթիվ դեպքերի մասին: Անգամ զինված հակամարտության ընթացքում, ըստ մարդու իրավունքների նորմերի, քաղաքացիական անձինք ունեն ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, իսկ ՄՄԻ-ի նորմերով՝ ազատությունից կարող են զրկվել բացառապես անվտանգությանը սպառնացող քաղաքացիական անձինք:[331] Առկա ապացույցները, սակայն, վկայում են, որ Ադրբեջանը պատանդ է վերցրել և գերության մեջ պահել քաղաքացիական անձանց, որոնք չեն կարողացել կամ չեն ցանկացել լքել իրենց տներն ու գյուղերը, թեպետ այդ անձինք անվտանգությանը սպառնացող ոչ մի վտանգ չեն ներկայացրել: Ավելին, ապացույցները ցույց են տալիս, որ գերության ընթացքում քաղաքացիական անձանց խոշտանգել են և/կամ դաժան վերաբերմունքի արժանացրել ՝ խախտելով մարդու իրավունքների և ՄՄԻ-ի նորմերը:

Սաշան (70տ) և նրա որդին՝ Արսեն Ղարախանյանը (45տ). Հադրութ (9-10 հոկտեմբերի, 2020թ.)

Արսենի (ում գերեվարման ու սպանության հանգամանքները ներկայացվել են վերևում)[332] քույր և Սաշայի դուստր Մ.Գ.-ն, պատմել է փաստահավաք խմբի անդամներին, որ

331 Հասանն ընդդեմ Միացյալ Թագավորության, գործ No 29750/09 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 16 սեպտեմբերի,2014թ.):

332 Արսեն Ղարախանյանի սպանության հանգամանքները ներկայացված են «Քաղաքացիական անձանց դիտավորյալ սպանություն» բաժնում:

ադրբեջանական զորքի առաջխաղացման վախից ընտանիքը 2020թ.-ի հոկտեմբերի 7-ին Հադրութից տեղափոխվել է Տող գյուղ:[333] Սակայն Սաշան հրաժարվել է գնալ և մնացել է Հադրութում: Արսենը մտահոգված վերադարձել է Հադրութ: Ընտանիքը վերջին անգամ Արսենի հետ կապ է հաստատել հոկտեմբերի 9-ին: Նոյեմբերի 14-ին համացանցում հայտնված տեսանյութում Սաշան խոսում է ադրբեջաներեն, և նրան ստիպում են համբուրել ադրբեջանական դրոշը: Դեկտեմբերի 14-ին Սաշան Ադրբեջանից հայրենադարձվել է Հայաստան:

Գերի ընկնելու պահից սկսած՝ Սաշան Հադրութում ենթարկվել է դաժան վերաբերմունքի: Նա հարվածներ է ստացել գլխին, նրա ձախ ձեռքը և ոտքը կապել են մեքենայից. նա չի հիշում՝որքան ժամանակ է մնացել այդ վիճակում: Հետո մեծ մեքենայով տեղափոխել են անհայտ մի վայր, աչքերը փակել են, որ ոչինչ չտեսնի:

Պատկեր 8.28. Սաշա Ղարախանյանի ոտքի վնասվածքը, 3 մարտի, 2021թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Սաշան հիշում է, որ իրեն այնուհետև հարցաքննել են Բաքվի բանտերից մեկում: Նա պատմել է, որ Բաքվի բանտում գերության ժամանակ իր ձեռքերը ամուր կապել են լարով, գլխին՝ հարվածել զենքի խզակոթով, մեջքը՝ ծակծկել մետաղական ձողով: Ձախ ձեռքի բթամատի և ցուցամատի միջև առկա ջիղը կտրել են, կտրվածքներ արել ափի մեջ և քերթել մաշկը: Սաշան պատմել է, որ ինքն է իր կտրված մաշկը դրել տեղը և վրան ծխախոտի մոխիր լցրել, որ վերքը շուտ լավանա: Փաստահավաք առաքելության անդամներին տեղեկացրել են, որ հայրենադարձությունից հետո կատարված բուժզննությունը ցույց է տվել, որ Սաշան ունի կողոսկրերի և քթի կոտրվածքներ: Փաստահավաք խմբի անդամները տեսել են այն սպիները, որոնք համապատասխանում են ստացած վնասվածքների նկարագրությանը:

Շահգելդյան Արեգա (72տ) և Էդուարդ (79տ), ամուսիններ, Ավետարանոց գյուղ, հոկտեմբերի 27, 2020թ.

Թեև հոկտեմբերի վերջին բոլորը թողել են գյուղը, սակայն ամուսիններ Արեգան և Էդուարդը հրաժարվել են լքել իրենց տունը: 2020թ.-ի հոկտեմբերի 27-ին նրանց դուստրը զանգահարել է ծնողներին՝ տեղեկացնելու, որ գալիս են՝ նրանց գյուղից տարհանելու: Ավելի ուշ, երբ դուստրը կրկին զանգահարել է նրանց, մի անծանոթ ձայն պատասխանել է ադրբեջաներենով՝ ասելով. «Ես ադրբեջանցի եմ, և սա Ադրբեջան է», իսկ դրանից հետո հեռախոսակապն անջատվել է:[334]

333 Հարցազրույցի ընթացքում Սաշա Ղարախանյանի դուստրը՝ Մ.Գ.-ն, պատմել է, թե ինչ էր Սաշան պատմել ընտանիքին իր հայրենադարձությունից հետո, 3 մարտի, 2021թ.:

334 Tanya Lokshina, "Survivors of Unlawful Detention in Nagorno-Karabakh Speak out about War Crimes," Human Rights Watch, March 12, 2021, https://www.hrw.org/news/2021/03/12/survivors-unlawful-detention-nagorno-karabakh-speak-out-about-war-crimes.

Տելեգրամում հայտնվել է տեսանյութ, որտեղ երևում էր, թե ինչպես են ադրբեջանցի զինծառայողները ստիպում մի քանի տարեց մարդկանց քայլել[335] (Տես Պատկեր 8.29)։

Պատկեր 8.29. ադրբեջանցի զինծառայողներն Արեգա և Էդուարդ Շահգելդյաններին և այլ կալանավորների հեռացնում են Ավետարանոց գյուղից (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք)։

Արեգան, որն ավելի ուշ հայրենադարձվել է, Human Rights Watch-ին պատմել է գերության ընթացքում իր նկատմամբ ցուցաբերված դաժան վերաբերմունքի մասին։[336] Նա պատմել է, որ զինծառայողները, բղավելով և ինքնաձիգներով սպառնալով, իրեն ամուսնու հետ հանել են իրենց տնից, զենքի փողերը ուղղել իրենց վրա։ Արեգայի աչքի առջև ադրբեջանցի զինծառայողները մի քանի անգամ բռունցքով և ոտքերով հարվածել են ամուսնուն՝ Էդուարդին։ Իսկ Ադրբեջան տեղափոխելուց հետո Արեգային գերության մեջ պահել են բանտախցում։

Արեգայի դուստրը նշում է, որ 2020թ.-ի դեկտեմբերի 5-ին հեռախոսազանգ է ստացել, որի ժամանակ լսել է մոր լացը և չհասկացվող խոսքը։ Դուստրը ցանկացել է խոսել Էդուարդի հետ, սակայն հեռախոսակապն անջատվել է։ Մոտ 3 րոպե անց դստերը կրկին զանգահարել են, և ադրբեջանական ակցենտով մի տղամարդ ռուսերեն ասել է, որ «Ձեր մայրը փորձում էր ասել ձեզ, որ ձեր հայրը մահացել է։ Ցավում եմ»։

Human Rights Watch-ի հետ հարցազրույցի ընթացքում[337] Արեգան պատմել է, թե ինչպես են առավոտյան պահակները բացել իր խցի դուռը և ասել, որ Էդուարդը քնած ժամանակ մահացել է, և իրեն պետք է տանեն Էդուարդի խուցը, որ տեսնի դին։ Նա ցնցվել է և այդ սարսափելի պահերից շատ բան չի հիշում, բացառությամբ նրա, որ ամուսնու դեմքը եղել է սևացած և կապտած։ Արեգան հայրենադարձվել է 2020թ.-ի դեկտեմբերի 9-ին։ Ու թեև ամուսնու դին պետք է վերադարձվեր այդ նույն ժամանակ, սակայն մինչև դեկտեմբերի 28-ը չի վերադարձվել։[338] Չնայած այս ուշացմանը՝ զննության պահին Էդուարդի մարմնի վրա դեռևս տեսանելի են եղել խոշտանգման և բռնության նշաններ, որոնք համապատասխանում էին Արեգայի պատմածներին։[339]

335 @kolorit_18l, “Азербайджанские солдаты куда то уводят несколько пожилых местных жителей,” 23 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/35FmDTwZ#fUo43UHJAHB_8OZd2tYYbs7BhoMuSxiXfdjTZJpI4A.

336 Lokshina, “Survivors of Unlawful Detention in Nagorno-Karabakh Speak out about War Crimes.”

337 Lokshina.

338 “ALC Releases Brief Information on 19 Armenian Captives, Both Military and Civilian, Who Were Tortured to Death by Azerbaijanis,” Arka News Agency, May 12, 2021, http://arka.am/en/news/politics/alc_releases_brief_information_on_19_armenian_captives_both_military_and_civilian_who_were_tortured_/.

339 Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Արեգա և Էդուարդ Շահգելդյանների շահերը ներկայացնող փաստաբաններ։ Տես նաև՝ Lokshina, “Survivors of Unlawful Detention in Nagorno-Karabakh Speak out about War Crimes.”

Ս.Պ.-ն (90տ) և որդին՝ Կ.Պ.-ն (56տ), Ավետարանոց գյուղ, հոկտեմբերի 27, 2020թ

Ս.-ն՝ Ս.Պ.-ի հարսը և Վ.Պ.-ի եղբոր կինը[340] պատմել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 25-ին ընտանիքն Ավետարանոց գյուղից տեղափոխվել է Ստեփանակերտ: Սակայն, լսելով սպասվող հրադադարի մասին, հաջորդ օրը Ս.Պ.-ն խնդրել է երկու որդիներին՝ Կ.Պ.-ին և Վ.Պ.-ին (Ս.-ի ամուսնուն), իրեն հետ տանել գյուղ, որպեսզի վերցնի իր անձնագիրը: Գիշերը երեքն էլ մնացել են գյուղում: Հոկտեմբերի 27-ի առավոտյան Կ. Պ.-ն դուրս է եկել բակ: Երբ տևական ժամանակ չի վերադարձել, Ս.Պ.-ն գնացել է՝ նրան փնտրելու: Երբ Ս.Պ.-ն էլ չի վերադարձել, Վ.Պ.-ն մեքենայով շրջել է գյուղում, որ գտնի նրանց: Գյուղում մարդ չի եղել: Գյուղի մի ծայրամասում Վ.Պ.-ն հանդիպել է մի խումբ հայ զինծառայողների և նրանց միջոցով կարողացել է փրկվել:

2020 թվականի դեկտեմբերի 8-ին՝ հայրենիք վերադառնալուց հետո, Ս.Պ.-ն հայտնել է փաստահավաք խմբի անդամներին, որ որդուն՝ Կ.Պ.-ին, տեսել է տնից ընդամենը 50մ հեռավորության վրա երեք ադրբեջանցի զինծառայողների ուղեկցությամբ, որոնք տարել են նաև Ս.Պ.-ին: Քանի որ Ս.Պ.-ն դժվարացել է քայլել, ճանապարհի մի մասը զինծառայողները նրան քարշ են տվել (Տես Պատկեր 8.28): Գրպաններից հանել են փողերը և նրան տեղափոխել մի անհայտ վայր:[341]

Կարինեն (անունը փոխված է)՝ Կ.Պ.-ի եղբոր աղջիկը, ավելացրել է, որ վերադարձից հետո Ս.Պ.-ն ունեցել է սպիեր, որոնք վկայում են այն մասին, որ «նրա ոտքերին հարվածներ են հասցրել», և նշել է, որ «նա չէր կարողանում քայլել, հիշողությունը թուլացած էր»:[342] Կարինեն փաստահավաք խմբին տեղեկացրել է նաև, որ իրենք համոզված են, որ իր հորեղբայրը՝ Կ.Պ.-ն, գերության մեջ սպանվել է: Նա պատմել է պապից ստացած տեղեկությունները, ըստ որի գերեվարումից հետո Կ.Պ.-ին տարել են անհայտ ուղղությամբ, իսկ հետո նրա հորը՝ Ս.Պ.-ին բերել են որդու կոշիկները և ասել, որ նա սպանվել է:[343]

Ավետարանոց գյուղի մեկ այլ բնակիչ՝ 66-ամյա Վ.Պ.-ն, ում նույնպես գերի էին վերցրել Ավետարանոց գյուղ ներխուժած ադրբեջանցի զինծառայողները, գերեվարումից հետո տեսել է Կ.Պ.-ին:[344] Վ.Պ.-ի խոսքով՝ ադրբեջանցի զինծառայողների կողմից գերեվարվելուց հետո նրան տարել են գյուղը շրջապատող անտառները, որտեղ տեսել է երկու համագյուղացու՝ Կ.Պ.-ին և Մ.Գ.-ին: Նրանց հետ խոսել չի հաջողվել, քանի որ ադրբեջանցի զինծառայողները սպառնացել են սպանել նրանց, եթե որևէ բառ փոխանակեն հայերենով: Հաջորդ օրը նրանց մեքենայով տարել են: Երբ հասել են մեքենային, Վ.Պ.-ն տեսել է նաև այլ համագյուղացիների՝ Ս.Պ.-ին և Արեգա ու Էդուարդ Շահգելդյաններին: Մեքենայի մեջ նրանց ծեծել են (Տես Պատկեր 8.30):

340 Հարցազրույց Ս.-ի հետ, 16 փետրվարի 2021թ.: Հարցազրույցին ներկա է եղել նաև Ս.Պ.-ն, սակայն ծերության և վատառողջության պատճառով խմբի անդամները հիմնականում զրուցել են Ս.Պ.-ի հարսի հետ:

341 Տես Պատկեր 8.29:

342 Հարցազրույց Կարինեի հետ (անունը փոխված է), 2 փետրվարի, 2021 թ.:

343 Հարցազրույց Կարինեի հետ (անունը փոխված է), 2 փետրվարի, 2021 թ.:

344 Անյա Սարկիսովա և Էդիկ Բաղդասարյան, «48 օր գերության մեջ. Վալերի Պողոսյանի պատմությունը», Հետք, հուլիսի 20, 2021թ., https://hetq.am/hy/article/133306.

Բոլորին միասին տարել են ադրբեջանական բանտ (Վ.Պ.-ն ենթադրում է, որ դա եղել է Բաքվին մոտ գտնվող հատուկ խստացված ռեժիմի բանտ), որտեղ Վ.Պ.-ին Կ.Պ.-ի և Մ. Գ.-ի հետ պահել են նույն խցում: Բանտ հասնելու հաջորդ օրը Կ.Պ.-ին տարել են այդ խցից, և Վ.Պ.-ն այլևս նրան չի տեսել: Մի քանի օր անց տարել են նաև Մ.Գ.-ին, և նրանից Վ.Պ.-ն նույնպես այլևս լուր չի ունեցել: Վ.Պ.-ն հայրենադարձվել է 2020 թվականի դեկտեմբերի 14-ին:[345]

Պատկեր 8.30. Մեքենայով փոխադրվող հայ քաղաքացիական անձանցից մեկին շարունակ հարվածում են ոտքով (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Բ.Բ., Ավետարանոց գյուղ, հոկտեմբերի 29, 2020թ.

Բ.Բ.-ն փաստահավաք խմբի անդամներին պատմել է իր գերեվարման և փախուստի պատմությունը:[346] Բ.Բ.-ն պատմել է փաստահավաք խմբի անդամներին իր գերեվարման և փախուստի պատմությունը: Նա ապրել է մենակ, և երբ ադրբեջանցի զինծառայողները մտել են գյուղ, թաքնվել է թոնի մեջ: Ավելի ուշ՝ հոկտեմբերի 27-ին, գերեվարվել է իր տան դարպասների մոտ: Նրա խոսքով՝ ադրբեջանցի զինծառայողները իրեն միայն ասել են, որ տեղափոխելու են Բաքու: Նա հաստատում է, որ իր հետ պահել են այլ համագյուղացիների, այդ թվում՝ Էդուարդ և Արեգա Շահգելդյաններին: Բ.Բ.-ն նշում է, որ իրեն և մյուս գերիներին սկզբում պահել են գյուղի վերին հատվածի տներից մեկի հավաբնում, հետո՝ տեղափոխել մեկ այլ տան բակում գտնվող անասնագոմ: Այդ շինության պատերը մասամբ եղել են փլուզված, և Բ.Բ.-ին հաջողվել է փախչել: Փախել է Ակնաղբյուր գյուղի ուղղությամբ (Ավետարանոց գյուղից հյուսիս-արևելք):[347]

Մ.Գ. (37տ), Շեխեր գյուղ (Մարտունու շրջան), նոյեմբերի 4, 2020թ.

Մ.Գ.-ն հոր հետ ապրել է Շեխեր գյուղում՝ Հադրութից 15 կմ հյուսիս-արևմուտք և Ստեփանակերտից 25 կմ հարավ-արևելք: Նա պատմել է, որ նոյեմբերի 4-ին տնից դուրս է եկել՝ աղբյուրից ջուր բերելու, սակայն աղբյուրի մոտ նրան գերի են վերցրել 19 տղամարդ: Նրան նստեցրել են «Մերսեդես» մակնիշի մեքենա և տեղափոխել Ադրբեջան, որտեղ գերի են պահել պահեստ հիշեցնող մի վայրում: Նրան պահել են ցուրտ խցում, տվել են հատակին փռված մի դոշակ և վերմակ. մահճակալ չի եղել: Զուգարանը գտնվել է խցում: Բանտարկության ամբողջ ընթացքում մենակ է եղել, նրան չեն հարցաքննել: ԿԽՄԿ-ի

345 Սարկիսովա և Բաղդասարյան:

346 Հարցազրույցներ Բ.Բ.-ի և Ի.Բ.-ի հետ, 17 մարտի, 2021թ.: Վկաները եղել են Ստեփանակերտում, իսկ հարցազրույցները կատարվել են հեռախոսով:

347 Նրա փախուստը հաստատվում է նաև համագյուղացիների ցուցմունքներով:

պատվիրակների այցից հետո՝ դեկտեմբերի 10-ին, օդանավով վերադարձել է Հայաստանի Հանրապետություն: Մ.Գ.-ն հոր մասին տեղեկություններ չունի, սակայն լուրեր կան, որ նրան սպանել են:[348]

Նարեկ (անունը փոխված է), Ծուշի, նոյեմբերի 8, 2020թ.

Նարեկը եղել է Ծուշիի բնակիչ: Երբ սկսել է պատերազմը, նա իր ընտանիքին ուղարկել է Երևան: Նոյեմբերի 8-ին ռմբապաստարանից դուրս գալու պահին, չիմանալով, որ քաղաքը գրավված է, Նարեկը գերեվարվել է մոտ 12 ադրբեջանցի զինծառայողների կողմից: Նրա խոսքերով՝ ադրբեջանցի զինծառայողները զայրացել են, որ ինքը դեռ Ծուշիում է, և ցանկացել են գնդակահարել իրեն, բայց ինչ-որ մեկը ռուսերեն բղավել է. «Մի՛ կրակեք, մի՛ կրակեք»: Նա համոզված էր, որ դա եղել է ռուս խաղաղապահ: Նարեկին պահել են մեկ այլ հայի՝ Ա.Գ.-ի հետ: Գերության ընթացքում Նարեկի մարմնին դանակով կտրող հարված են հասցրել և խփել գլխին: Ադրբեջանցի զինծառայողները սպառնացել են սպանել նրան, զենքը պահել են գլխին և սեղմել ձգանը, սակայն զենքը լիցքավորված չի եղել: Նույնն արել են Ա.Գ.-ի հետ:

Նարեկը բուժօգնություն չի ստացել և ստիպված է եղել արնահոսությունը կանգնեցնելու համար սավանն ամուր և երկար սեղմած պահել իր վերքին: Երկու օր սնունդ կամ ջուր չի ստացել: Ի վերջո, Նարեկին և Ա.Գ.-ին տեղափոխել են Բաքու: Նարեկը պատմել է, որ իրենց պահել են առանց լուսամուտների ցուրտ, խոնավ և գարշահոտ խցում: Այս դաժան փորձության ընթացքում 10 օր նրա ձեռքերը ամուր շղթայված են եղել, ինչի հետևանքով այտուցվել են: Մուրճով հարվածներ են հասցրել ծնկերին և գլխին՝ նրան թուլացնելու և կոտրելու նպատակով: Գերության ընթացքում մի անգամ խուց է մտել բարձրահասակ, հաղթանդամ մի տղամարդ, որը բարձրացրել է նրան և վերևից գցել գետնին, ինչի պատճառով նրա ամբողջ մարմինը ցավացել է: Ադրբեջանցիները ոտքերով տրորել են նրա ձեռքերը, որոնք հարցազրույցի օրը դեռ կարմրած էին: Նարեկին պահել են նաև հատուկ նշանակության զորքերի բանտում, որտեղ նրան դարձյալ ծեծի են ենթարկել:

> «Էդ բերդում,- պատմել է Նարեկը,- փիս տփեցին, փիս, ոտքով, 5 հոգով ծեծել են, 10 օր պահել են, ամեն օր ծեծել են, ջուրը լցրել վրան ծեծել են, հաց են տվել սպիտակ մի կտոր, մի քսան օր չի քնել, 10 օր մենակ էդ հացն են տվել.[349]

Այնուհետև նրան տեղափոխել են այլ բանտ, որտեղ պահել են չորս այլ հայերի հետ. այստեղ նրանց այցելել են ԿԽՄԿ-ից: Բուժօգնություն է ստացել, բավարար սնունդ ու ջուր: Երկու անգամ հարցաքննել են. քննիչն անընդհատ հայհոյել և վիրավորել է Հայաստանի վարչապետին:

2020 թվականի դեկտեմբերի 14-ին Նարեկը հայրենադարձվել է Հայաստան, բուժօգնություն է ստացել: Հարցազրույցի պահին ստացած հարվածների հետևանքով նրա ողնաշարը դեռևս ցավում էր, դժվարությամբ է քայլում և դեղեր է ընդունում:

348 Հարցազրույց Գ.Մ.-ի հետ, 16 փետրվարի, 2021թ.:

349 Հարցազրույց Նարեկի հետ (անունը փոխված է), 21 մարտի, 2021թ.:

Կ.Մ., Սղնախ գյուղ, Ասկերանի շրջան, նոյեմբերի 1, 2020թ.

Երբ պատերազմը սկսվել է, Կ.Մ.-ն և նրա ընտանիքը Արցախից տեղափոխվել են Հայաստան՝ ազգականների մոտ: Սակայն Կ.Մ.-ն չի համակերպվել նոր ստեղծված իրավիճակին և ցանկացել է վերադառնալ: Ընտանիքի անդամները հիշում են, որ նա շարունակ կրկնում էր. «Այլևս չեմ կարող այստեղ մնալ: Հետ եմ գնում՝ տանս տեր կանգնեմ»:

Պատկեր 8.31 Կ.Մ.-ին ծեծի ենթարկելու և դաժան վերաբերմունքի տեսագրության սքրինշոթը (աղբյուրը՝ «Infoteka24» տելեգրամյան ալիք):

Ընտանիքի անդամներին չի հաջողվել համոզել նրան, և հոկտեմբերի 25-ին նա վերադարձել է Արցախ: Նոյեմբերի 1-ին ընտանիքի անդամները նրա հետ կապը կորցրել են: Ավելի ուշ համացանցում հայտնված տեսագրության մեջ[350] միայն երևում է, թե ինչպես է Կ.Մ.-ն ադրբեջանցի զինծառայողների կողմից ենթարկվում ֆիզիկական բռնության և նսեմացնող վերաբերմունքի. նրա դեմքն արնաշաղախ է: Ադրբեջանցիները հրազենը լիցքավորում և պահում են նրա վրա, սպառնում սպանել:[351] Նա ծնկած է գետնին՝ ձեռքերը մեջքի հետևում կապված: Ադրբեջանցի զինծառայողները ռուսերեն երկու հարց են տալիս նրան, սակայն պատասխան չստանալով Կ.Մ.-ից՝ մեկը ոտքով հարվածում է նրա որովայնին, հայհոյում և հրամայում անմիջապես պատասխանել: Լրացուցիչ հարցեր տալուց հետո այդ զինծառայողը մի քանի անգամ հարվածում է նրա գլխին՝ ասելով, որ ադրբեջանցիները և թուրքերը գալու են հայերի հետևից, նրանց ծնկի են բերելու և մորթելու են (Տես Պատկեր 8.31):

Հայ քաղաքացիական անձի ականջը կտրելը

2020 թվականի նոյեմբերի 14-ին տելեգրամյան ալիքներում հայտնվեց տեսանյութ, որտեղ երևում է, թե ինչպես են սպիտակ մազերով տարեց հայ քաղաքացիական անձին պառկացրել գետնին և ձեռքերը կապել:[352] Նա շրջապատված է ադրբեջանցի զինծառայողներով, որոնցից մեկը կտրում է գերու ձախ ականջը (Տես Պատկեր 8.32): Զինծառայողների համազգեստը համապատասխանում է Ադրբեջանի սահմանապահ ծառայության համազգեստին (Տես Պատկեր 8.33):

350 Инфотека24 (@infoteka24), “ Азербайджанские варвары взяли в плен армянина в гражданском,” 4 դեկտեմբերի, 2020թ.,

351 «Էլ Չեմ Կարա Մնամ, Ես Հետ Եմ Գնում». Մանրամասներ Գերեվարված Քաղաքացու Մասին, Երևան Նյուզ, դեկտեմբերի 4, 2020թ., http://yn.am/?index&p=114219&l=am; “(18+) Civilian from Sznek, Artsakh Tortured While Interrogated by Azerbaijani Soldiers,” AzeriWarCrimes.org, December 14, 2020, https://azeriwarcrimes.org/2020/12/14/18-civilian-from-sznek-artsakh-tortured-while-interrogated-by-azerbaijani-soldiers/; «Գրավոր հաղորդում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, 1 մարտի, 2021թ.), https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G21/052/73/PDF/G2105273.pdf?OpenElement.

352 @karabah_news, https://mega.nz/file/PwkTRBjR#2MudScoEB3adkkXevL3dOsufHTxylVfEVgRJ6B5qoG0.

Պատկեր 8.32. ադրբեջանցի զինծառայողը կտրում է գերեվարված քաղաքացիական անձի ձախ ականջը (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք)։

Պատկեր 8.33. Ադրբեջանի սահմանապահ ծառայության երկու տարբեր տեսակի համազգեստ կրող ադրբեջանցի զինծառայողները շրջապատում են ձեռքերը կապած գերեվարված հայ քաղքացիական անձին՝ վերջինիս ձախ ականջը կտրելուց հետո։ ՊՍԾ-ի համազգեստը (ստորև) (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք)։

Ջ.Թ., Շուշի

Գերեվարված հայազգի քաղաքացիական անձանց խոշտանգելու և նրանց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի լրացուցիչ ապացույցներ են բացահայտվել տարածված տեսագրություններում: Այդ տեսագրություններում ադրբեջանցի զինծառայողները դաժանորեն են վերաբերվում հայազգի քաղաքացիական անձանց հետ և ստիպումեննրանցարտաբերելկոնկրետարտահայտություններ:Նմանտեսագրություններից մեկը պատկերում է տարեց անձանց, որոնց ուժով տարհանում են սեփական գյուղից, իսկ մեկ այլ տեսագրության մեջ ադրբեջանցի զինծառայողները նվաստացնում են Շուշիի բնակիչ տարեց մի տղամարդու և նրա նկատմամբ ցուցաբերում լկտի, ցինիկ ու դաժան վերաբերմունք[353] (Տե՛ս Պատկեր 8.34): Հայտնի է դարձել, որ տարեց տղամարդը եղել է Շուշիի 80-ամյա բնակիչ Ջ.Թ.-ն, որը չի կարողացել լքել քաղաքը և գերեվարվել է ադրբեջանական զինված ուժերի կողմից:[354]

Պատկեր 8.34. Ադրբեջանցի զինծառայողները նվաստացնում են տարեց հայազգի քաղաքացուն՝ Ջ.Թ.-ին (Աղբյուրը՝ Infoteka24 տելեգրամյան ալիք):

353 Инфотека24 (@infoteka24), “80-летнего Джоника Тевосяна, взятого в плен в городе Шуши, намерены окончательно добить в Азербайджане,” November 24, 2020, Telegram video, https://mega.nz/file/u80CHRgQ#eRe-HLah0Gf84CCpgoyIvyWeUGuB4PHnKYEj7EAGErlA, Արման Թաթոյան (@atatoyan), «Այս տեսանյութում #ադրբեջանցի զինվորները նվաստացնում են տարեց տղամարդուն», թվիթերյան գրառում, 18 նոյեմբերի, 2020թ., https://twitter.com/atatoyan/status/1329141994359316482

354 Արցախի Մարդու իրավունքների պաշտպան, ֆեյսբուքյան գրառում, 19 նոյեմբերի, 2020թ. https://www.facebook.com/100000847389707/videos/3730458263659050/.

Գերեվարված քաղաքացիական անձինք

Մեկ այլ տեսագրությունում[355] քաղաքացիական հագուստով երկու էթնիկ հայերի, որոնց ձեռքերը կապված են մեջքի հետևում, ստիպում են ռուսերեն ասել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»: Միաժամանակ ադրբեջանցի զինծառայողներից մեկը չորս անգամ ոտքով հարվածում է տեսագրության մեջ երևացող տղամարդկանցից մեկի գլխին (Տե՛ս Պատկեր 8.35): Նույն տեսագրության մեջ երևում է մի երրորդ տաղամարդ, որը պառկած է գետնին՝ գլուխը բաճկոնով ծածկված, ում ստիպում են ասել՝ «Ղարաբաղն Ադրբեջան է»:

Պատկեր 8.35. Ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ քաղաքացիական անձին հարվածելու տեսագրության սքրինշոթը (աղբյուրը՝ «Sisumasis» տելեգրամյան ալիք):

Երկու հայերի ստիպում են պարել

Մեկ այլ տեսագրության մեջ[356] հայազգի երկու քաղաքացիական անձի ստիպում են պարել. կադրից դուրս ադրբեջաներեն խոսացող և մեղեդի երգող մեկը նույնպես հրամայում է նրանց պարել (Տե՛ս Պատկեր 8.36): Հայերից մեկն ակնհայտորեն դժվարանում է ոտքի կանգնել և պարել:

355 @sisumasis, “В Сети появились дикие кадры с пленными армянами,” December 18, 2020, Telegram video, https://mega.nz/file/K08ykbRb#N_LUff9c4kblufcPfKmwAzEK56CQHCH9OiJXnEgkJ2c.

356 @kolorit_21, https://mega.nz/file/mplyXZCK#jAHkz60HZfCb3GSGp12vvczQA69Psb2DvQFRHz5pzqQ.

Պատկեր 8.36. Երկու հայ քաղաքացիական անձի հրահանգում են պարել (Աղբյուրը՝ Kolorit 18+ տելեգրամյան ալիք):

Ոտնձգություններ մարդկային արժանապատվության դեմ

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ վերոնշյալ արարքները ոչ միայն խոշտանգում և/կամ վատ վերաբերմունք են հանդիսանում, այլև պարունակում են միջազգային այլ հանցագործությունների տարրեր: Մասնավորապես էթնիկ հայերի դեմ գործած վայրագությունների տեսագրությունները լայնորեն տարածվել են սոցիալական ցանցերով, և այդ տարածումը ևս անձի մարդկային արժանապատվության դեմ ոտնձգության հանցագործություն է:[357] Մարդկային արժանապատվության դեմ ոտնձգությունը ենթադրում է այնպիսի գործողություններ կամ բացթողումներ, որոնք հանգեցնում են տուժողի պատվի և արժանապատվության ծանրագույն նվաստացմանը:[358] Նման գործողություններն ընդգրկում են այնպիսի արարքներ, որոնք նսեմացնում, նվաստացնում կամ այլ կերպ խախտում են անձի արժանապատվությունն այն աստիճան, որ «համընդհանուր ճանաչվում են որպես ոտնձգություն մարդկային արժանապատվության դեմ»:

Մարդկային արժանապատվության դեմ ոտնձգություն կարող է գրանցվել նաև անգիտակից, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կամ դիակների նկատմամբ:[359] Հատկանշական է, որ, ըստ Հռոմի ստատուտի, հանցագործության տարրեր առկա են նաև մահացած անձանց նկատմամբ դրսևորած վերաբերմունքի մեջ, քանի որ պարտադիր չէ, որ տուժողն «անձամբ գիտակցի նսեմացման կամ նվաստացման կամ այլ խախտման փաստը»:[360]

357 «Անձնական արժանապատվությունը վիրավորող պատերազմական հանցագործությունների հետապնդումը՝ հիմնված բաց աղբյուրների ապացույցների վրա – իրավական շրջանակը և Եվրամիության անդամ երկրներում վերջին զարգացումները» (Եվրամիության քրեական արդարադատության համագործակցության գործակալություն, 1 փետրվարի, 2018թ., https://www.eurojust.europa.eu/document/prosecuting-war-crimes-outrage-upon-personal-dignity-based-evidence-open-sources-legal.

358 Դատախազն ընդդեմ Զլատկո Ալեքսովսկու (Դատական վճիռ), No. IT-95-14/1-T (Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ, 25 հունիսի, 1999թ.):

359 «Անձնական արժանապատվությունը վիրավորող պատերազմական հանցագործությունների հետապնդումը՝ հիմնված բաց աղբյուրների ապացույցների վրա – իրավական շրջանակը և Եվրամիության անդամ երկրներում վերջին զարգացումները»:

360 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, «Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ», 92-9227-227-6 § (1998), հոդ. 8(2)(b)(xxi), պարբ. 1, https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html

***

Փաստահավաք խմբի անդամների կարծիքով՝ վկաների պատմություններն արժանահավատ են: Փաստահավաք խմբի անդամները տուժողների վրա հաճախ տեսել են սպիեր, ինչպես նաև վկաների հաղորդած վնասվածքների ֆիզիկական և հոգեբանական հետևանքները: Բացի այդ, գերության ինչ-որ փուլում վերոնշյալ քաղաքացիական անձինք և ռազմագերիները բանտարկված են եղել միասին, և նրանց վկայությունները հաստատում են միմյանց պատմություններն ու գերության փաստը: Ավելին, գերիները հայրենադարձվել են ԿԽՄԿ-ի կողմից: Բացի այդ, որոշ դեպքերում տեսաապացույցներն օբյեկտիվորեն հաստատում են տուժողների գերեվարումը, նրանց խոշտանգումը կամ նրանց նկատմամբ բռնությունը: ՄԻԵԴ-ում տուժողների շահերը ներկայացնող փաստաբանների խոսքով՝ տուժողների ընտանիքների անդամները տեսագրություններում ճանաչել են գերեվարված իրենց հարազատներին:

Ավելին, վերոնշյալ ապացույցները փաստում են, որ Ադրբեջանը խախտել է ՄՄԻ-ի և ՄԻՄԻ-ի շրջանակներում ստանձնած իր պարտավորությունները՝ անազատության մեջ պահելով և դաժան ու անմարդկային վերաբերմունքի արժանացնելով և/կամ խոշտանգելով հայազգի քաղաքացիական անձանց և ռազմագերիների: ՄՄԻ-ն արգելում է քաղաքացիական անձանց անհիմն ազատազրկումը, խոշտանգումը, նրանց նկատմամբ դաժան կամ անմարդկային վերաբերմունքը և մարդկային արժանապատվության ոտնահարումը, մասնավորապես՝ նսեմացնող կամ նվաստացնող վերաբերմունքը:[361] Ցանկացած արարք անմարդկային վերաբերմունք է որակվում ոչ միայն շարունակական դաժան վերաբերմունքի, այլև անազատության մեջ պահման անմարդկային պայմանների և մեկուսարանում բանտարկության դեպքերում:[362] Ազատությունից զրկված անձանց համար պատշաճ սննդի, ջրի և բուժօգնության բացակայությունը նույնպես համարվում է անմարդկային վերաբերմունք:[363]

Սույն փաստահավաք առաքելության կողմից փաստագրված խոշտանգման և դաժան վերաբերմունքի դեպքերը վկայում են, որ Ադրբեջանը խախտել է մարդու իրավունքների ոլորտում իր ստանձնած միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով և ՄԱԿ-ի՝ խոշտանգումների դեմ կոնվենցիայով նախատեսված նորմերը:

Ապացույցները փաստում են, որ զինված հակամարտության ընթացքում, նաև հրադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո Ադրբեջանը խախտել է ՄՄԻ-ի և ՄԻՄԻ-ի պարտավորությունները՝ բռնի վերաբերմունք դրսևորելով պաշտպանված անձ հանդիսացող քաղաքացիական անձանց և ռազմագերիների նկատմամբ: Խախտումների շարքում են քաղաքացիական անձանց, հիմնականում տարեցների գերեվարումն ու անազատության մեջ, անմարդկային պայմաններում պահելը, անձի արժանապատվության ոտնահարումը, ռազմագերիների և քաղաքացիական անձանց նկատմամաբ դաժան վերաբերմունքի

361 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 90. Խոշտանգումներ և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» (Կարմիր Խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 24-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs /v1_rul_rule90.

362 «ՔՔԻՄԴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 20. Հոդված 7 (Խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժների արգելում)» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ/HRC), 10 մարտի, 1992թ.),, https://www.refworld.org/docid/453883fb0.html.

363 "Essono Mika Miha v. Equatorial Guinea, Communication No. 414/1990, U.N. Doc. CCPR/C/51/D/414/1990 (1994)." (UN Human Rights Committee, August 10, 1994), para. 6.4, http://hrlibrary.umn.edu/undocs/html/vws414.htm.

արտահայտությունները, պատերազմի պայմաններում անազատության մեջ պահվող անձանց, այդ թվում՝ քաղաքացիական անձանց խոշտանգումը:

Խաղաղ բնակչության ահաբեկում

Վերջին պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանն իրականացրել է գործողություններ, որոնց նպատակն է եղել ահաբեկել խաղաղ բնակչությանը: Միջազգային մարդասիրական իրավունքն արգելում է բռնի գործողությունները կամ բռնության սպառնալիքները, որոնց հիմնական նպատակը խաղաղ բնակչության ահաբեկումն է:[364] Նման արարքները միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերի խախտում են և գտնվում են «կոպիտ խախտումների» տիրույթում և ենթակա են քրեական հետապնդման որպես պատերազմական հանցագործություններ:[365]

Ադրբեջանի կողմից հարձակումներ իրականացնելու ձևը՝ քաղաքացիական անձանց դիտավորյալ սպանության, պատանդ վերցնելու և ազգությամբ հայերի նկատմամբ բռնությունների և վայրագությունների տեսարաններով տեսագրություններ տարածելուն զուգահեռ, վկայում են խաղաղ բնակչությանն ահաբեկելու մտադրությունների մասին: Այդ մտադրությունների դրսևորվումներ են նաև հայազգի քաղաքացիական անձանց նկատմամբ դաժան և անմարդկային վերաբերմունքի և հայազգի զինծառայողների խոշտանգման դեպքերի տեսագրումը և տեսագրությունների տարածումը, ինչպես նաև զինադադարի հաստատումից հետո ագրեսիվ գործողությունների շարունակումը, ինչը ներառում է քարեր նետելը հայկական պետհամարանիշներով մեքենաների վրա[366] և ազգությամբ հայերին գերեվարելը:[367]

Հետևաբար՝ բռնության ծանրությունը, ադրբեջանցի զինծառայողների կողմից իրենց վայրագությունների տեսագրման և համացանցում (լայն հասարակությանը հասանելի հարթակներում) տեսագրությունների տարածման փաստը զուգահեռաբար հաստատում են, որ դրանց նպատակը եղել է հայ լայն հասարակությանն ահաբեկելը: Ավելին, քաղաքացիական բնակչության թիրախավորումը և ոչ տարբերակված ու ոչ ճշգրիտ նշանառությամբ հրետակոծումը, երբ մոտակայքում չեն եղել ռազմական կառույցներ, առանձին գյուղերի թիրախավորման ժամանակահատվածը, որը համընկել է ադրբեջանական զինված ուժերի առաջխաղացման հետ, նույնպես հուշում են, որ Ադրբեջանի գործողությունների հիմքում ընկած է եղել խաղաղ մարդկանց ահաբեկելու նպատակ՝ վերջիններիս իրենց տներից պարտադրաբար հեռացնելու համար:

Այսպիսով, կյանքի իրավունքի խախտումների ծավալը և բնույթը, մասնավորապես՝ քաղաքները և գյուղերը ոչ ճշգրիտ նշանառությամբ և համատարած հրետակոծելը, անխտրական և համատարած կամ թիրախավորված հարձակումները, որոնք հանգեցրել են քաղաքացիական անձանց շրջանում մահերի, քաղաքացիական անձանց պատանդ

364 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 12. Անխտրական/ոչ տարբերակված հարձակումների սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 22-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule12.

365 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, հոդված. 8(2)(ա):

366 «Կարմիր շուկա-Ստեփանակերտ ճանապարհին տեղի ունեցած միջադեպի առնչությամբ պետք է պատշաճ քննություն իրականացվի», - Արցախի Մարդու իրավունքների պաշտպան, 26 մարտի, 2021թ., https://artsakhombuds.am/en/news/502.

367 Սուսան Բաղալյան, «Լիբանանահայ Մարալ Նաջարյանը և Վիգեն Էուլջեքյանը նոյեմբերի 10-ից անհետացել են», «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայան, 11:53:38Z, Ղարաբաղյան խնդիր, https://www.azatutyun.am/a/30978583.html.

վերցնելը, խոշտանգելը և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքը, քաղաքացիական անձանց նկատմամբ ահասարսուռ վերաբերմունքի, այդ թվում՝ նրանց գլխատման տեսագրությունները տարածելը, բոլորը վկայում են խաղաղ բնակչությանն ահաբեկելու նպատակի մասին և հանդիսանում են միջազգային մարդասիրական իրավունքի, այդ թվում՝ Ժնևյան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի խախտում:[368]

Դիերի անարգում և խեղում

ՄՄԻ-ի համաձայն՝ զինված ընդհարման մասնակից յուրաքանչյուր կողմ պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիակների պղծումը կանխելու համար: Դիակների խեղումն արգելվում է: Ինչպես նշվել է վերևում, «անձնական արժանապատվության դեմ ոտնձգությունները» վերաբերում են այնպիսի գործողությունների կամ անգործության, որոնց արդյունքում տուժողը լրջորեն նվաստացվում կան նսեմացվում է:[369] Սա վերաբերվում է նաև մահացած անձանց նկատմամբ վերաբերմունքին, քանի որ ամենևին պարտադիր չէ, որ «տուժողն անձամբ գիտակցի նսեմացման կամ նվաստացման կամ այլ խախտման փաստը»:

Փաստահավաք խումբը վերլուծել է տելեգրամյան ալիքներով և սոցիալական այլ ցանցերով տարածված մի շարք տեսագրություններ, որոնցում ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները խեղում և անարգում են զոհված հայ զինծառայողների մարմինները: Արձանագրվել է, որ նրանք կտրում են մահացած հայերի ականջները[370] և ձեռքերը,[371] դանակը խրում դեմքի և մարմնի մեջ,[372] մարմինները մեքենայից կապած[373] կամ շղթայով[374] քարշ տալիս, մարմինների վրա կանգնում և հայհոյանքով դիակի գլխին ոտքով հարվածում, բահով խփում,[375] սեռական օրգանները ցուցադրելու նպատակով մերկացնում, ոտքերով հարվածներ հասցնում այրված մարմիններին:[376] Որոշ տեսագրություններում այդ ամենը կատարողները դիակները խեղելուց հետո, տեսախցիկի առջև հպարտ կեցվածք ընդունած, հայտարարում են ադրբեջաներեն, որ «Ղարաբաղը մերն է և լինելու է մերը»[377] կամ պարծենալով խոսում են տեսախցիկի առջև:

368 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 2. Բռնություն, որն ուղղված է քաղաքացիական բնակչության շրջանում ահաբեկչության տարածմանը» (Կարմիր Խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 24-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule2

369 Դատախազն ընդդեմ Զլատկո Ալեքսովսկու (Դատական վճիռ), պարբ. 56:

370 @bagramyan26, "18+. "Доблестные" солдаты ВС Азербайджана продолжают совершать военные преступления и глумятся над телами армянских военнослужащих," November 4, 2020, Telegram video, https://t.me/bagramyan26/22668; @kolorit_18l, December 23, 2020, Telegram video, https://t.me/kolorit_18l/20; @karabah_news, Telegram video,

371 @qarabaqinfoo, " Palvovnik Baxşəliyev qisasın alındı," 6 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/yhMxHYLa#kLIb-FbSKbnlwU-DEjwvigreYVuwhlUL7dKccCkQnv9A.

372 @kolorit_18l, 23 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/ro1BzARR#9NDWrO7IHxmkPh04RYpjlif2O0wg8oUmXr7SK-WF02Kc.

373 @kolorit_18l, 23 դեկտեմբերի, 2020թ., https://t.me/kolorit_18l/152, @kolorit_21, https://mega.nz/folder/D4NB0AC-C#D9i4vq6Z7ZPCQFZuY5XddA.

374 Инфотека24 (@infoteka24), "Азербайджанцы продолжают гордиться своими военными преступлениями (18+)," դեկտեմբերի 30, 2020թ., https://mega.nz/file/ukkQFKLK#meTGm2ZvZ0hU2e8TGgCP2dPmnGg6C8tzYWk9_d0BoOE.

375 @kolorit_21, https://mega.nz/file/a5d12IQT#fNHRu2I-mx3cwYsmgadUfyHZkdjqVQqT6oWhtjPDOp0.

376 @kolorit_21, https://mega.nz/file/m59wxSia#vXvJ686jNKerdpGAyQpS0dI8hbiRp5HFVJ9Ifh52504

377 @bagramyan26, "18+. "Доблестные" солдаты ВС Азербайджана продолжают совершать военные преступления и глумятся над телами армянских военнослужащих," 4 նոյեմբերի, 2020թ., https://mega.nz/file/jpM30AoA#TsvRAp8Ov4IYZyyLdp7UhRs1Kt9rF47dkJSAvLW4r9A.

2020 թվականի հոկտոմբերի 15-ին տելեգրամյան ալիքներում հայտնվեց երկու լուսանկար, որտեղ երևում էին, թե ինչպես է ադրբեջանցի զինծառայողը կտրում հայ զինծառայողի կոկորդը (Տե՛ս Պատկեր 8.37) և ապա ձեռքում բռնած պահում կտրված գլուխ (Տե՛ս Պատկեր 8.38)։ Այս լուսանկարները նախկինում երբևէ որևէ համատեքստում չեն նկատվել։ Հանցանքը կատարողների համազգեստը համապատասխանում է Ադրբեջանի հատուկ նշանակության զորքերի համազգեստի հետ (Տե՛ս Պատկեր 8.39)։ Այն նույնությամբ համապատասխանում է 44-օրյա պատերազմի ընթացքում ի հայտ եկած և նախորդ բաժիններում ցուցադրվող այլ տեսանյութերում տեսանելի զինծառայողների համազգեստներին։ Բացի այդ, լուսանկարներում առկա զենքերը, սարքավորումներն ու վերահսկողական միջոցները (օր.՝ ձեռքին կապած կարմիր ժապավենը) բոլորը համապատասխանում են 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի հանդերձանքին։ Ավելին, նկարի ֆոնին երևացող Կալաշնիկովի ավտոմատը (հավանաբար՝ AK-74(M)), ըստ երևույթին, ունի «Ռակուրս» օպտիկական համակարգ, ինչը նույնպես համապատասխանում է ադրբեջանական կողմի կրած զենքերին։ Լուսանկարի փորձագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ նկարը որևէ խմբագրական մանիպուլիացիաների չի ենթարկվել։ Սա հաստատվում է նաև լուսանկարի ստվերների վերլուծությամբ։

Պատկեր 8.37. ադրբեջանցի զինծառայողը կտրում է հայ զինծառայողի կոկորդը (Աղբյուրը՝ Antituran տելեգրամյան ալիք)։

Պատկեր 8.38. ադրբեջանցի զինծառայողը նկարվում է գկխատված տղամարդու գլուխը ձեռքին (Աղբյուրը՝ Antituran տելեգրամյան ալիք)։

Պատկեր 8.39. ադրբեջանական համազգեստների նախշերն ու տեսքը (Աղբյուրը՝ անհատապես հավաքված նմուշներ):

Փաստահավաք խումբը նկատել է ադրբեջանցի զինծառայողների կողմից սպանված հայ զինծառայողների ականջները կտրելու համատարած պրակտիկա (Տե՛ս Պատկեր 8.40): Տեսանյութերի ճնշող մեծամասնությունում կենդանի կամ մահացած հայերի ականջները կտրող ոճրագործները կրում են Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության համազգեստ (համեմատե՛ք Պատկեր 8.41-ը և Պատկեր 8.42-ը): Ոճրագործները կրում են երկու տեսակի համազգեստ կամ հետևյալ երկու տեսակների «խառնուրդ». ա) եզակի տեսք ունեցող «կանաչ անտառային» համազգեստ, որտեղ կան նաև սև, մուգ կանաչ և ջրային կանաչ գույներ՝ ծովային կանաչի ֆոնի վրա, բ) «Բերյոզկա» (կեչի ծառ) կամուֆլյաժ՝ կանաչ լիմոնի և մուգ խաքի դաշտային գույնի ֆոնի վրա:

Պատկեր 8.40. ադրբեջանցի զինծառայողները կտրում են մահացած հայ զինվորների ականջները (Աղբյուրը՝ Kolorit_18, Kolorit 18+ տելեգրամյան ալիքներ):

Պատկեր 8.41. Ականջներ կտրող ոճրագործների համազգեստների տեսքը (Աղբյուրը՝ Karabah_news տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.42. Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության համազգեստի նմուշներ (Աղբյուրը՝ Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության պաշտոնական կայքէջ):

Որոշ տեսանյութերում ոճրագործները պարծենում են (Տես Պատկեր 8.43): Կադրից դուրս լսելի է ոճրագործի ձայնը, որը մեկնաբանում է, որ կտրում է հայ զինվորի ականջը. *«Նաև նրա ականջներն եմ կտրում...դու մտածում էիր մեզ շահիդ դարձնե՞լ: Ռադ եղիր...կեղտոտ... մեռիր...»,*[378] կամ *«Կտրիր, կտրիր այդ ականջը: Ո՞ր է դանակը...բե՛ր....Կտրիր, կտրիր, կտրիր էդ անտերը», «Սա անպատիվ մեկի ականջն է...սա հալալ է մեզ համար»:* Մյուս զինծառայողները քաջալերում են ոճրագործին և նույնիսկ նշում նրա անունը՝ *«Ալիև Ռաշադ, շատ շնորհակալություն, եղբայր: Ռադ արա դրանց...նայեք մեր Ռաշադին՝ ականջ կտրողին ու նայեք էս շան որդուն»:* [379]

Մեկ այլ տեսանյութում կադրից դուրս ձայնը ադրբեջաներեն ոգևորում է ոճագործին. *«Կտրի՛ր, Ալլահն օրհնի քո ձեռքերը: Աստծո կամքով, սա մեր շահիդների արյան համար է: Մենք նրանց վրեժը լուծեցինք...ես ուզում եմ նրա գլուխն էլ կտրել...նրանք սպանեցին մեր տղաներին, իսկ մենք նրանց վրեժը լուծեցինք...Ալլահի կամքով...Ալլահը մեզ պահապան»:*[380]

Որոշ տեսանյութերում հնարավոր է լսել անուններ՝ Ռաշիդ, Մամադլը և այլն:

Մարմինների անարգումը տեղի է ունեցել ճանապարհի վրա[381] կամ շղթայով կապած[382] քարշ տալով: Սա նաև հայերին ապամարդկայնացնելու, նրանց հետ շների պես վարվելու ձև է: Տեսանյութերից մեկում ադրբեջանցի զինծառայողները դիտավորությամբ անարգում են մահացած հայ զինծառայողների մարմինները՝ ադրբեջաներեն ասելով՝ «քշեք ու քարշ տվեք էս կավատներին» և նրանց անվանում են «անպատիվ»: «Անպատիվ» բառը լսվում է բազմաթիվ այլ տեսանյութերում (Տես Պատկեր 8.44):

378 @kolorit_18I, 23 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/ro1BzARR#9NDWrO7IHxmkPh04RYpjlif2O0wg8oUmXr7SK-WF02Kc, թարգմանությունը՝ փաստահավաք խմբի:

379 @kolorit_18, https://mega.nz/file/WsMH1BqS#TmTLAkDGq7gykHeJsDk6z0M7VkLgRnsvQtO0DiWG384, թարգմանությունը՝ փաստահավաք խմբի:

380 @kolorit_18, https://mega.nz/file/S0UnGIqQ#PfoD4Kc890BmIHBpCqrQqAXw5kcDtT_8SOW6Dtd_tjo.

381 @kolorit_18I, 23 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/D1tTQD5Q#hn2if9he38LRZU-1iRkdiLKU337lqwL8hN6J_wTrGQA,

382 Инфотека24 (@infoteka24), " Азербайджанцы продолжают гордиться своими военными преступлениями (18+)," 30 դեկտեմբերի, 2020թ., Telegram video, https://mega.nz/file/ukkQFKLK#meTGm2ZvZ0hU2e8TGgCP2dPmnGg6C8tzY-Wk9_d0BoOE.

Պատկեր 8.43. ադրբեջանցի զինծառայողները, որոնց հնարավոր է հեշտությամբ նույնականացնել, տեսախցիկի առջև ցույց են տալիս մահացած հայ զինծառայողների ականջները (Աղբյուրը՝ Baghramyan 26 տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.44. ադրբեջանցի զինծառայողները երկու տարբեր տեսանյութերում քարշ են տալիս մահացած հայ զինծառայողների մարմինները (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք):

Պատկեր 8.45. ադրբեջանցի զինծառայողները մահացած հայ զինծառայողի մարմինը շղթայով կապած քարշ են տալիս (Աղբյուրը՝ Infoteka 24 տելեգրամյան ալիք):

2020 թվականի դեկտեմբերի 6-ին տելեգրամյան ալիքներում հայտնվեց մի տեսանյութ, որտեղ ադրբեջանցի զինծառայողն ատրճանակով քայլում է հայկական պետհամարանիշներով սպիտակ «Ժիգուլիի» շուրջը:[383] Նա ադրբեջաներեն ասում է, որ սկզբում կտրել է մահացած հայ զինծառայողի ձեռքը: Վարորդի նստատեղին տեսանելի է աջ ձեռքը կտրած հայ զինծառայողի մարմին (Տես Պատկեր 8.46):

Պատկեր 8.46. Ձախից ադրբեջանցի զինծառայողը պարծենում է տեսախցիկի առջև, որ կտրել է սպանված հայ զինծառայողի ձեռքը: Աջից երևում է սպանված հայ զինծառայող՝ ձեռքը կտրված վիճակում (Աղբյուրը՝ Ararat տելեգրամյան ալիք):

Տելեգրամում տարածվող տեսանյութերից մեկում[384] ադրբեջանական զինվորական համազգեստ կրող զինծառայողը շարունակաբար ոտքով հարվածում է հայկական պետհամարանիշով մեքենայի մեջ այրված տղամարդու դիուն (Տես Պատկեր 8.47): Լսելի է կադրից դուրս ադրբեջաներեն խոսացող ձայն:

Պատկեր 8.47. ադրբեջանական զինվորական համազգեստով ծառայողը ոտքով հարվածում է հայկական պետհամարանիշով մեքենայի մեջ այրված տղամարդու դիակին (Աղբյուրը՝ Kolorit18+ տելեգրամյան ալիք):

383 @qarabaqinfoo, " Palvovnik Baxşəliyev qisasın alındı," 6 դեկտեմբերի, 2020թ., https://mega.nz/file/yhMxHYLa#kLIb-FbSKbnlwU-DEjwvigreYVuwhlUL7dKccCkQnv9A

384 @kolorit_21, https://mega.nz/file/m59wxSia#vXvJ686jNKerdpGAyQpS0dI8hbiRp5HFVJ9lfh52504

Մեկ այլ տեսանյութում[385] երևում է, թե ինչպես է ադրբեջանցի զինծառայողը ոտքով հրում հայ զինծառայողի մարմինը դեպի ձորը (Տես Պատկեր 8.48)։

Պատկեր 8.48. ադրբեջանական ռազմական համազգեստ կրող տղամարդը ոտքով հրում է մահացած հայ զինծառայողի մարինը դեպի ձորը (Աղբյուրը՝ Kolorit 18+ տելեգրամյան ալիք)։

Տեսանյութերից մեկում ադրբեջանցի զինծառայողները բեռնաթափում են հայ զինծառայողների մարմիններով բեռնատարը։ Ադրբեջանցիներից մեկը մարմիններից մեկի գլխին հարվածում է բահով (Տես Պատկեր 8.49)։

Պատկեր 8.49. ադրբեջանցի տղամարդը մահացած հայ զինծառայողի դեմքին խփում է բահով (Աղբյուրը՝ Kolorit_18 տելեգրամյան ալիք)։

385 @kolorit_21, https://mega.nz/file/75M10KaC#fr2fzaENjT9idBfxkYDJotXph-KG4QL33nv3eVLPoDM,

Ըստ տուժողներին ՄԻԵԴ-ում ներկայացնող փաստաբանի՝ ադրբեջանցի զինծառայողների կողմից անարգված որոշ հայ զինծառայողների մարմինները նույնականացվել են նրանց ընտանիքների անդամների կողմից:[386]

Հատկանշական է նաև, որ իսլամական օրենքով խստագույնս արգելվում է մահացածների, այդ թվում՝ ոչ մահմեդական թշնամիների մարմինների խեղումն ու անարգումը: Իսլամում, կենդանի, թե մահացած, մարդկային մարմնի նկատմամբ պետք է ցուցաբերել հարգանք և արժանապատվություն: Իսլամական օրենքով նաև կան թե՛ մահմեդական, թե՛ ոչ մահմեդական թշնամիների հուղարկավորման կանոններ: Մասնավորապես, կա հակառակորդ կողմի սպանված մարմինները հուղարկավորելու պարտավորություն: Եթե որևէ պատճառով ոչ մահմեդական հակառակորդը չի հուղարկավորում իր զոհվածներին, ապա դա անելը դառնում է մահմեդականների պարտականությունը: Եթե մահմեդականները չհուղարկավորեն իրենց թշնամու մահացածներին, ապա մարմինները կքայքայվեն կամ գազանների և թռչունների կեր կդառնան: Նման արդյունքը հավասարազոր է մարմինների խեղման, ինչն արգելվում է իսլամական օրենքով:[387] Իսլամն արգելում է պատերազմի ընթացքում մարմինների խեղումը կամ ձևախեղումը՝ քիթը, ականջը կամ շուրթերը կտրելու, որովայնը կտրել-բացելու միջոցով, նույնիսկ եթե թշնամին է իրեն այդպիսի արարքներ թույլ տալիս:[388]

Չնայած սրան՝ ադրբեջանցի զինծառայողների կողմից կատարվել են նման արարքներ՝ հղում կատարելով Ալլահին և պնդելով, որ նման վարքը Աստծո կամքով է: Պատմականորեն պատերազմական ժամանակներում քիթ կտրելը զոհին անպատվելու միջոց է եղել:[389] Զոհերի գլխներին դիտավորությամբ կանգնելը ասոցացվել է տարածված մահմեդական սովորույթի հետ, ըստ որի կոշիկի տակը չափազանց վիրավորական է: Մարմինները բեռնատարի հետևից կապած քաղաքով քարշ տալը հակասում է հուղարկավորության ծիսակարգին, ըստ որի մարմինը պետք է լվացվի, փաթաթվի, աղոթք արվի նրա համար, թաղման թափորի ուղեկցությամբ անցկացվի քաղաքով և հուղարկավորվի հողում:[390]

Քանի որ Իսլամում մարդու մարմնի խեղումը խստիվ արգելված է, սակայն խոշոր եղջերավոր անասունների ականջները կտրելը խրախուսվում է, ադրբեջանցի զինծառայողների կողմից մահացած հայերի ականջները կտրելու պրակտիկան կարող է լինել հայերին ապամարդկայնացնելու նշան: Ըստ զոհված հայ զինծառայողների ականջները կտրելու տեսանյութերի տակ արված ադրբեջանցի օգտատերերի գրառումների մեկ այլ մեկնաբանության՝ սա կարող է նաև կապված լինել թուրք զինծառայողների նմանատիպ գործելաոճին, որոնք իբր կտրել են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թուրքական բանակի դեմ ապստամբած հայ հրամանատարներից մեկի ականջը: Այս պատմությունը լայնորեն տարածված է ադրբեջանական աղբյուրներում:

Այսպիսով, անկախ Ալլահին արվող հղումներից, ադրբեջանցի զինծառայողների վերը նկարագրված վարքը ոչ միայն ՄՄԻ-ի, այլ նաև իսլամական օրենքի խախտում է:

386 Հարցազրույց փաստաբանի հետ, 14 մայիսի, 2021թ.:

387 Լրացուցիչ տեղեկությունների համար տես Ahmed Al-Dawoody, "Respect for the Dead under Islamic Law: Considerations for Humanitarian Forensics," Humanitarian Law & Policy Blog (blog), November 1, 2018, https://blogs.icrc.org/law-and-policy/2018/11/01/respect-for-the-dead-under-islamic-law-considerations-for-humanitarian-forensics/

388 Sheikh Wahbeh al-Zuhili, "Islam and International Law," International Review of the Red Cross 87, no. 858 (2005): 269–83.

389 Jürgen Wasim Frembgen, "Honour, Shame, and Bodily Mutilation. Cutting off the Nose among Tribal Societies in Pakistan," Journal of the Royal Asiatic Society 16, no. 3 (November 2006): 243–60, https://doi.org/10.1017/S1356186306006444.

390 Dawn Perlmutter, "Mujahideen Desecration: Beheadings, Mutilation & Muslim Iconoclasm," Anthropoetics: The Journal of Generative Anthropology 12, no. 2 (2007), http://anthropoetics.ucla.edu/ap1202/muja07/.

Հարկադիր անհետացում. գերեվարման մասին չծանուցելը և կապ չապահովելը

Սույն առաքելության ընթացքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր, երբ Ադրբեջանը չի հաստատել առանձին անհատներին գերի վերցնելու փաստը, նաև չի ապահովել գերիների և նրանց ընտանիքների միջև կապը: Այդ մասին հաղորդել են նաև «Human Rights Watch»-ը և գերությունից վերադարձած և լրատվամիջոցներին հարցազրույց տված ռազմագերիները: Ռազմագերիների մի մասը հնարավորություն է ստացել կապ հաստատել ընտանիքների հետ միայն ԿԽՄԿ այցից հետո՝ գերեվարումից շաբաթներ անց, իսկ մի մասն էլ անազատության մեջ գտնվելու ամբողջ ընթացքում չի ունեցել նման հնարավորություն, և ոչ էլ նրանց այցելել են ԿԽՄԿ ներկայացուցիչներ: Նման գործողությունները խախտում են միջազգային նորմերը, և քանի դեռ ռազմագերիներին շարունակում են պահել նման պայմաններում, մեծանում է հարկադիր անհետացման վտանգը:

Ռազմագերիների շահերը ներկայացնող փաստաբանների խոսքերով՝ Ադրբեջանը մինչև 2021 թվականի փետրվարը միջազգային մարմիններին չի տեղեկացրել վերը նշված Ե.Խ.-ի և ևս չորս գերիների գերեվարման մասին, որոնց ադրբեջանցի զինծառայողականները գերի են վերցրել 2020 թվականի նոյեմբերի 21-ին՝ չնայած այն հանգամանքին, որ սոցիալական ցանցերով տարածվել են մի շարք տեսագրություններ, որտեղ այս գերեվարված զինծառայողներն անձամբ ներկայանում են:

Հայրենադարձված ռազմագերիներից մեկը փաստահավաք խմբի անդամներին պատմել է, որ Ադրբեջանում 65 օր գերության մեջ գտնվելու ողջ ընթացքում ԿԽՄԿ-ն կամ որևէ այլ չեզոք կազմակերպության ներկայացուցիչ իրեն չի այցելել, և ինքը չի ունեցել ընտանիքի հետ կապ հաստատելու հնարավորություն: Մինչև 2020թ.-ի դեկտեմբերին իր հայրենադարձման օրը, տելեգրամյան ալիքում շրջանառվող տեսանյութից զատ, որտեղ նա երևում է գերության մեջ, իր ընտանիքը ոչինչ չի իմացել նրա գտնվելու վայրի մասին: Բանտում գտնվելու ժամանակ նա և նրա խցակիցները տեղափոխվել են այլ խուց: Հետագայում այլ ռազմագերիներից տեղեկացել են, որ այդ օրը ԿԽՄԿ-ի պատվիրակներն այցելել են բանտ: Փաստահավաք խմբի անդամների կողմից հարցված այլ նախկին ռազմագերիներ ևս հաստատել են, որ երկար ժամանակ (մինչև 50 օր) իրենց ընտանիքների հետ կապ հաստատելու հնարավորություն չեն ունեցել, իսկ նրանց ընտանիքներին որևէ տեղեկություն չի փոխանցվել Ադրբեջանի կողմից:

2021 թվականի հուլիսի 29-ի դրությամբ Ադրբեջանը շարունակել է պահել 45 հայ գերիների, որոնց գերության մեջ լինելը հաստատված է: Հայաստանի կառավարությունը և զինված ընդհարման համատեքստում գերի պահվող անձանց շահերը ներկայացնող փաստաբանները 280 անձի, այդ թվում՝ քաղաքացիական անձանց վերաբերյալ միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդություններ են ներկայացնել ՄԻԵԴ: ՄԻԵԴ-ը բավարարել է այդ միջնորդությունների ճնշող մեծամասնությունը: ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը նշել է, որ միջնորդությունների 90 տոկոսի դեպքում որպես ապացույց ներկայացրել են լուսանկարներ և տեսագրություններ, որոնք հաստատում են Ադրբեջանի կողմից այդ անձանց գերեվարելու փաստը: Չնայած ծանրակշիռ ապացույցներին, այդ թվում՝ ադրբեջանցի զինծառայողների կողմից արված տեսագրություններին, որոնցով հաստատվում է այդ անձանց գերեվարելու փաստը, ադրբեջանական իշխանությունները չեն հաստատել այդ անձանց մի մասի գտնվելու վայրը:

Հաստատված գերիների ճնշող մեծամասնությունը գերեվարվել է ռազմական գործողությունների ավարտի մասին եռակողմ հայտարարության ուժի մեջ մտնելուց հետո: Հայաստանի իշխանությունները, մարդու իրավունքների պաշտպանը, մի շարք միջազգային կազմակերպություններ պնդում են, որ զինված ընդհարման համատեքստում գերեվարված բոլոր անձինք ունեն Ժնևյան կոնվենցիաներով նախատեսված կարգավիճակ և պետք է հայրենադարձվեն: Ադրբեջանի իշխանությունները, հղում կատարելով եռակողմ հայտարարությանը, շատ նեղ են մեկնաբանում նրա նշանակությունը և պնդում, թե հայտարարությունը չի տարածվում ստորագրելուց՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո գերի ընկածների վրա: Անկախ հայտարարությանը տրվող մեկնաբանություններից՝ ադրբեջանական իշխանությունները պարտավոր են կիրառել Ժնևյան կոնվենցիաները, որոնց մասնակից է հանդիսանում Ադրբեջանը: Այդ նորմերն առնչվում են ռազմական գործողությունների դադարից հետո զինված ընդհարման համատեքստում ազատությունից զրկված անձանց՝ հայրենիք վերադարձնելուն և այլ երաշխիքներին:

Առկա ապացույցները վկայում են, որ ադրբեջանական զինծառայողների կողմից ազատությունից զրկվելուց հետո բազմաթիվ քաղաքացիական անձինք պահվել են խիստ մեկուսացված: Քաղաքացիական որոշ անձանց ազգականներ իրենց հարազատների գերեվարման և անազատության մեջ պահվելու մասին իմացել են միայն համացանցում տարածված տեսագրություններից, ինչը վկայում է, որ Ադրբեջանը չի կատարել իր վերահսկողության ներքո գտնվող քաղաքացիական անձանց գտնվելու վայրի մասին տեղեկատվություն փոխանցելու և ազգականների հետ կապ ապահովելու իր պարտավորությունը:

Նման դեպքերից մեկն առնչվում է Սաշայի որդու՝ Արսենի ճակատագրի մասին երկար ժամանակ տեղեկությունների բացակայությանը:[391] Կ.Մ.-ի գերեվարման մասին (տես վերևում) նրա ազգականներն իմացել են միայն նրա մասնակցությամբ տեսագրությունների հրապարակումից հետո: Փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցների ընթացքում հարցվածները տեղեկացրել են անհետ կորած համագյուղացիների մասին: Օրինակ, Բերդաշեն գյուղից Հ.Ս.-ն հայտնել է իրենց գյուղից անհետ կորած յոթ անձի մասին: Վերը նշված Ա.Ա.-ի պարագայում ընտանիքի անդամները վերջինիս գերեվարումից հետո առնվազն տաս օր չեն իմացել նրա գտնվելու վայրը, և միայն ԿԽՄԿ պատվիրակների այցից հետո է Ա.Ա.-ն հնարավորություն ունեցել կապ հաստատել կնոջ հետ:

Ժնևյան III կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավոր են գերության մեջ գտնվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց մասին տեղեկատվությունը փոխանցել նրանց երկրին և/կամ ընտանիքին (ԺԿ III, հոդ. 70), ԿԽՄԿ հայտնաբերման կենտրոնական գործակալության (Central Tracing Agency) միջոցով ծանուցագիր ուղարկել ծագման պետությանը (ԺԿ III, հոդ. 69, 94, 104, 107, 120 և 122), և ապահովել հաղորդակցություն (ԺԿ III, հոդ. 71, 76 և հավելված IV C. [ՍՄՄԻ, կանոն 125]): Զինված ընդհարման բոլոր կողմերը պարտավոր են ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները զինված ընդհարման հետևանքով անհետ կորած բոլոր անձանց հաշվառելու համար և ընտանիքի անդամներին տրամադրել անհետ կորածների ճակատագրի մասին իրենց ունեցած բոլոր տեղեկությունները:

Քանի որ ռազմագերիներին գերության մեջ են պահում՝ միայն հետագա ռազմական գործողություններին մասնակցելու հնարավորությունից զրկելու նպատակով, նրանք

391 Հադրութցի հարցվածները հարցազրույցների ժամանակ հայտնել են, որ Արսենի մասին տեղեկություններ չեն ունեցել (տես, օրինակ, հարցազրույցը Ս.Ս.-ի հետ):

պետք է ազատ արձակվեն և հայրենադարձվեն, երբ անկարող են մասնակցել այդ գործողություններին (զինված ընդհարման ընթացքում՝ առողջական խնդիրների պատճառով, և բնականաբար ռազմական գործողություններն ավարտվելուց անմիջապես հետո)։ Ավելի կոնկրետ՝ ԺԿ III-ը սահմանում է հայրենադարձման կանոններ ռազմական գործողությունների ընթացքում (ԺԿ III, հոդ. 109-117), առողջական խնդիրների դեպքերում (ԺԿ III, հավելվածներ I և II) և կողմերի միջև համաձայնությունների հիման վրա՝ ակտիվ ռազմական գործողություններին ավարտին (ԺԿ III, հոդ. 118-119 [ՍՄՄԻ, կանոն 128 A.])։

Ավելին, ազատությունից զրկված անձանց գրանցմանը, այցելություններին և նրանց վերաբերյալ տեղեկությունների փոխանցմանն առնչվող մանրամասն պահանջները նպատակ ունեն կանխել հարկադրված անհետացման դեպքերը։ Այս կանոնների ընդհանուր արդյունքն այն է, որ ՄՄԻ-ն արգելում է «հարկադիր անհետացման» երևույթը։ Բացի այդ, ըստ մարդու իրավունքների նորմերի, հարկադիր անհետացումն արգելվում է բոլոր հանգամանքներում։ Այն խախտում է ոչ միայն անմիջական տուժողի, այլև նրա ազգականների իրավունքները։ Այդ պատճառով էլ միջազգային իրավունքով լիիրավ տուժող են ճանաչվում թե՛ անհետ կորած անձինք, թե՛ նրանց ընտանիքները։ Հանկարծակի բաժանումը, լուրերի բացակայությունը, անորոշությունը և վրեժխնդրության վախը թույլ չեն տալիս սգալ կորուստը և խորը տառապանք են պատճառում։

Վերոնշյալ բոլոր հանգամանքներից ելնելով՝ ակնհայտ է, որ գերիների՝ անազատության մեջ գտնվելու փաստը չհաստատելով և ուշացումով ապահովելով կամ ընդհանրապես չապահովելով գերիների կապը նրանց ընտանիքների հետ՝ Ադրբեջանը խախտել է ՄՄԻ-ի և մարդու իրավունքների նորմերը։

Առողջության իրավունքի խախտումներ

Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում տարբեր աստիճանի ֆիզիկական վնասվածքներ[392] է ստացել 150 քաղաքացիական անձ: Վիրավորումները հիմնականում ստացվել են Ադրբեջանի կողմից քաղաքացիական անձանց թիրախավորելու, քաղաքացիական օբյեկտները ռմբակոծելու և անխտրական հարձակումներ իրականացնելու հետևանքով: Վնասվածքներ ստանալու դեպքեր արձանագրվել են Արցախի ողջ տարածքում, այդ թվում՝ Ստեփանակերտ, Մարտակերտ, Մարտունի, Շուշի, Հադրութ, Ասկերան, Քարվաճառ քաղաքներում, Թաղասեր, Ավետարանոց, Կարմիր շուկա, Մաղավուզ, Վարդաշատ, Սպիտակաշեն, Ներքին Հոռաթաղ, Ծոշ, Հոչանց, Քնարավան, Ակնաղբյուր, Բերդաշեն, Պատարա գյուղերում: Քաղաքացիական մի շարք անձինք հրազենային վիրավորումներ են ստացել ճանապարհներին՝ Արցախի տարածքից տարհանվելու ժամանակ: Առկա են նաև ապացույցներ, որ ճանապարհները և մեքենաները մշտապես թիրախավորելու պատճառով վիրավորում ստացած քաղաքացիական անձանց օգնելու համար դժվարահաս են եղել շտապօգնության և բժշկական ծառայությունները: Ոմանք հիվանդանոց են հասել սեփական փոխադրամիջոցներով կամ սեփական միջոցներով ու հնարավորություններով են ապահովել բժշկական հնարավոր օգնություն:

Ստորև ներկայացվում են դեպքեր, երբ խաղաղ բնակիչների տների ու բնակելի թաղամասերի, մեքենաների, քաղաքացիական այլ տարածքների ոչ տարբերակված կամ նպատակային թիրախավորման հետևանքով քաղաքացիական անձինք ստացել են ոչ միայն հրազենային վնասվածքներ, այլև ձեռք են բերել հոգեկան առողջության խնդիրներ, որոնք շատ դեպքերում կունենան երկարատև բնույթ, մասնավորապես՝ երեխաների պարագայում:[393] Որոշ տուժողների հոգեկան առողջության վրա պատերազմն ունեցել է ծանր ազդեցություն, որի պատճառով առաջ են եկել հոգեկան առողջության խնդիրներ, որոնք պահանջում են հատուկ բուժում:

Բացի այդ, հաշվի առնելով այն փաստը, որ պատերազմը սանձազերծվել է ՔՈՎԻԴ-19 համավարակի ժամանակ, քաղաքացիական բնակչության տևական ռմբակոծումը լրացուցիչ բեռ է ստեղծել Արցախի՝ արդեն իսկ գերծանրաբեռնված առողջապահության համակարգի համար, ինչն ավելի է բարդացրել բժշկական ծառայությունների մատուցումը: Արցախի թիրախավորված տարածքների բնակիչները ստիպված պատսպարվել են լեփ-լեցուն ապաստարաններում, որտեղ անհնար է եղել պահպանել կորոնավիրուսի անվտանգության կանոնները: Որոշ մարդիկ վարակվել են այդ ապաստարաններում, մյուսները՝ այլ տարածքներ տեղահանվելուց հետո, որտեղ հիվանդությունն ունեցել է ավելի մեծ տարածում, քան Արցախում:

392 Տես Արցախի Հանրապետության դատախազության պատասխանը փաստահավաք խմբի աշխատակիցների հարցմանը (10 մայիսի, 2021թ.) այսուհետ՝ Արցախի դատախազության նամակ, մայիս 2021թ.:

393 Ադրբեջանի կողմից պատանդ վերցված անձանց առողջության իրավունքի խախտման դեպքերը ներկայացված են «Անձի ազատության և անվտանգության իրավունքի մասին» բաժնում:

Այս բաժնում փաստագրված խախտումները որակվում են որպես առողջության իրավունքի խախտում՝ համաձայն ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (CESCR) սահմանման: Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման համար առավելագույն հասանելի միջոցներից օգտվելու իրավունք, որը ստեղծում է կյանքի արժանապատիվ պայմաններ, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեկան առողջություն, սոցիալական բարեկեցություն:[394] Ավելին, առողջության իրավունքի հասկացությունը ժամանակի ընթացքում ընդլայնվել է, և ըստ կոմիտեի՝ «առողջության ավելի ընդգրկուն սահմանումը հաշվի է առնում նաև այնպիսի սոցիալական գործոններ, ինչպիսիք են բռնությունը և զինված հակամարտությունը»:[395] Իսկ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՏՍՄԻՄԴ) 12-րդ հոդվածը որպես հավելում նշում է, որ պետությունները պարտավոր են կանխարգելել, բուժել և վերահսկել համաճարակները, ինչից ելնելով էլ համավարակի վաղ փուլում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը հանդես եկավ համընդհանուր հրադադարի կոչով:[396] Ուստի, Ադրբեջանը պետք է պատասխանատվության ենթարկվի այդ իրավունքի կոպիտ խախտումների համար:

Ֆիզիկական վնասվածքներ

Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի 36-ամյա բնակիչ Ա.Գ.-ն հղի է եղել, երբ սեպտեմբերի 27-ին Ադրբեջանն սկսեց ռազմական գործողությունները: Գյուղից փախչելու ընթացքում, ինչպես ինքն է պատմել, անցել է հետևյալ փորձությունների միջով.

> «Երբ Մատաղիսից դուրս եկանք, անօդաչուներով անընդհատ խփում էին ճանապարհներին: Հիշում եմ, որ ինչ-որ բան հարվածեց մեքենային, ու մենք շուռ եկանք: Պայթյունը հենց ճանապարհին էր՝ մեքենայի դիմաց: Ես ուշաթափվեցի: Հետո ուշքի եմ եկել մեր գյուղապետի մեքենայում: Առաջինը հարցրել եմ՝ ո՞ւր են երեխաներս: Գյուղապետն ինձ պատմեց, որ մեքենային ռումբ է խփել, մեքենան շուռ է եկել, իսկ ես ուշագնաց եմ եղել: Իմացա, որ երեխաներիս տեղափոխել են ապահով վայր մի մեքենայով, որը եկել էր Երևանից: Վնասվել էր թևս. չէի զգում, ինձ թվում էր՝ պոկվել է: Ինձ տարան բունկեր, որտեղ ցուցաբերեցին առաջին բուժօգնություն: Երբ բժիշկները հասկացան, որ ես 35 շաբաթական հղի եմ, հենց բունկերում ինձ կեսարյան վիրահատություն արեցին: Բունկերում միայն վիրավոր զինվորներ էին, միակ կինը ես էի: Չորս կողմը ռմբակոծում էին: Հիշում եմ՝ ինչպես չորս բժիշկ ինձ տարան Ստեփանակերտի հիվանդանոցի ապաստարանը: Ծուրջբոլորը անընդհատ ռմբակոծության ձայներ էին: 2020թ.-ի սեպտեմբերի 29-ին ռեանիմացիայի մեքենայով ես տեղափոխվեցի Երևան: Ինչպես նշեցի՝ փախուստի ժամանակ թևս վնասվել էր. արդեն վեց անգամ վիրահատել են: Այս պահին ձեռքիս աշխատանքը վերականգնելու ընդամենը 30% հավանականություն կա»:[397]

Ա.Գ.-ի դեպքում այս ֆիզիկական վնասվածքները հանգեցրել են նաև հոգեկան առողջության խնդիրների՝ քնի խանգարում, ամեն անգամ ամպրոպի ձայնը լսելուց նրան թվում է, թե ռմբակոծություն է:

394 «Ընդհանուր մեկնաբանություն թիվ 14. Առողջության ամենաբարձր հասանելի ստանդարտի իրավունքը (Դաշնագրի հոդված 12)» (ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե (ՏՍՄԻԿ/CESCR), օգոստոսի 11, 2000թ.), պարբ. 1, 4, https://www.refworld.org/docid/4538838d0.html

395 «Ընդհանուր մեկնաբանություն թիվ 14», պարբ. 10.:

396 "COVID-19: UN Chief Calls for Global Ceasefire to Focus on 'the True Fight of Our Lives,'" UN News, March 23, 2020, https://news.un.org/en/story/2020/03/1059972

397 Հարցազրույց Ա.Գ.-ի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ., Դաշտադեմ գյուղ, Հայաստան:

Ռազմական գործողությունների մեկնարկից հետո բազմաթիվ քաղաքացիական անձինք սկսեցին թողնել իրենց քաղաքներն ու գյուղերը՝ ավելի անվտանգ վայրեր տեղափոխվելու համար: Մարտակերտ քաղաքի (Մարտակերտի շրջան) 37-ամյա բնակիչ Ջ.Ի.-ն ընտանիքի հետ փախել է քաղաքից մասնավոր մեքենայով: Նա պնդում է, որ ճանապարհները վտանգավոր էին, և ողջ մնալը բախտի բան էր, քանի որ ցանկացած պահի կարող էին ռմբակոծել մեքենան:[398] 2020 թ. սեպտեմբերի 27-ին Մարտակերտից դուրս գալու ճանապարհին Ջ.Ի.-ին տեսել է՝ ինչպես են հարվածել մի մեքենայի, որը գլորվել է ձորը: Մեքենայի մեջ գտնվող 13-ամյա երեխան՝ Ռոբերտը, վիրավորվել է և անգիտակից վիճակում մնացել 5 օր:[399] Վնասվել են նաև Ռոբերտի ընտանիքի անդամները:

Մղոզ գյուղի 38-ամյա բնակիչ Ա.Ա.-ն ևս տեղահանման ժամանակ ճանապարհին վիրավորվել է: Պատերազմը սկսելու օրը՝ սեպտեմբերի 27-ին, Ա.Ա.-ն որոշել է թողնել իրենց գյուղը և ընտանիքով տեղափոխվել, իրենց կարծիքով, ավելի ապահով վայր: Նրանք՝ հինգ հոգով, եղել են «Pajero» մակնիշի մարդատար մեքենայի մեջ: Ճանապարհին ժամը 2100-ից 2200-ն ընկած ժամանակահատվածում, երբ գտնվել են Մղոզ գյուղից մոտ 4 կմ հեռու (Մղոզ գյուղից դեպի Դրմբոն տանող ճանապարհին) Արմինեն լսել է ԱԹՍ-ի ձայնը: Ա.Ա.-ն պատմել է հետևյալը.

> «Ես հայացքով դեպի անտառի կողմն էի նայում, դրա համար ձախ թուշս ամբողջությամբ վնասվել էր կոտրված ապակու բեկորներից: Եթե ուղիղ նայեի, աչքս էլ կվնասվեր: ԱԹՍ-ն հարվածել է [թիրախավորել է] ճանապարհին, որից հետո մեքենայի ձախ կողմից արկի բեկորները թափանցել են ներս: Մեքենայում գտնվող մուս անձինք վիրավորվել են: Երեխաս գլխի բեկորային վնասվածք է ստացել, տեգորս կնոջ թևի մեջ ապակու բեկորներ են մտել»:[400]

Ա.Ա.-ն հաստատել է, որ թիրախավորված տարածքի մոտակայքում ռազմական կառույցներ չեն եղել, ռազմական մեքենաներ ճանապարհի այդ հատվածով չեն անցել, այլ ԱԹՍ-ն պարզապես թիրախավորել է ճանապարհը: Նրա խոսքերով՝ իրենց հետևից մեծ թվով մեքենաներ են եկել, և հնարավոր է, որ ԱԹՍ-ն նկատել է մեքենաների շարասյունը: Ա.Ա.-ն նաև նշել է, որ ռմբակոծությունը եղել է բավականին ինտենսիվ և շարունակվել է նույնիսկ իրենց հարվածելուց հետո:

2020թ.-ի սեպտեմբերի 30-ին Ադրբեջանը թիրախավորել է Մարտունի քաղաքի մոտ գտնվող կամուրջը: Արմենը (անունը փոխված է) վիրավորվել է պայթյունից: Նա փաստահավաք խմբին պատմեց հետևյալը.

> «Սեպտեմբերի 30-ին գնում էի՝ բենզին լցնելու, երբ մեքենային խփեցին: Վիրավորվել եմ կամուրջի մոտ, երբ մեքենայի մեջ էի: Մինչև հիմա երեք բեկոր գլխումս ա, մի հատ էլ մեջքիս էր, դա վիրահատել են, հանել, երկու հատ էլ ոտքիցս են հանել: Մի ոտքս մինչև հիմա չի աշխատում, ուզում եմ ձգեմ, չի ստացվում: Գլխի բեկորները չեն հանել, քանի որ իմ պառկած հիվանդանոցում միայն տրավմատոլոգներ էին. պետք է վիրահատությունը նեյրոխիրուրգ անի: Վիրահատությունները կատարվել են «Մեդլայն» բժշկական կենտրոնում»: [401]

398 Հարցազրույց Ջ.Ի.-ի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ., Մարտունի քաղաք, Հայաստան:

399 Նաև տես միջադեպի լուսաբանումը լրատվամիջոցներում https://www.facebook.com/FM103.8/posts/2451309221836983; https://www.aravot.am/2020/10/14/1143175/; https://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/robert-koma-13-5-/; http://ftp.sputnikarmenia.com/am/news/nagorno_karabakh/robert-koma-13-5-/

400 արցազրույց Մղոզ գյուղի բնակիչ Ա.Ա.-ի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

401 Հարցազրույց Մարտունի քաղաքի բնակիչ Արմենի հետ (անունը փոխված է), 18 դեկտեմբերի, 2020թ.:

ԲԱՏՀ փորձագետները չափավոր վստահությամբ կարողացել են նույնականացնել ճանապարհին հարվածներ հասցրած զենքերը բարձր պայթուցիկություն ունեցող մարտական ենթատարրեր ցրող կասետային զինամթերքի հետ: Փորձագետները գրանցել են նաև մարտական ենթատարրերի դետոնացիան և դրանցից առաջացած մեծ քանակությամբ բեկորներ, որոնք հավանական է, որ վնասել են մոտակա տները, մեքենաներն ու ճանապարհածածկը:

Բազմաթիվ քաղաքացիական անձինք հրազենային վիրավորումներ են ստացել իրենց բնակավայրերի, այդ թվում՝ քաղաքների և գյուղերի ուղիղ հրետակոծության արդյունքում:[402] 2020 թվականի հոկտեմբերի 23-ին հրետակոծվել է Ավետարանոց գյուղը, որի պատճառով տարբեր հրազենային վնասվածքներ են ստացել քաղաքացիական անձինք: Ա.Հ.-ն իր տանն է եղել, երբ ժամը 2200-ին մոտ թիրախավորել իրենց գյուղը:[403] Ա.Հ.-ի խոսքերով՝ ինքը վիրավորվել է կասետային զինատեսակից: Տան շուրջբոլորը հայտնաբերվել են արկերի բեկորներ և հրետակոծության հետքեր. երեք արկ ընկել է բակում, մեկը՝ տանիքին: Ա.Հ.-ին փոխադրել են Ստեփանակերտի հիվանդանոց, ապա՝ Երևան: Վնասվել է նրա ձախ ձեռքը, որը հետագայում անդամահատվել է: Ա.Հ.-ի խոսքերով՝ վիրավորվել է նաև նրա քենակալը (բաջանաղը): Պայթյունից վիրավորվել է նաև Ավետարանոց գյուղի մեկ այլ բնակիչ՝ Մ.Հ.-ն: Կասետային ռումբերից մեկը պայթել էր նրա կողքի սենյակում: Առաջին պայթյունից հետո նա ընտանիքի մյուս անդամների հետ փորձել է հեռանալ և ավելի անվտանգ տեղ հասնել, երբ արկի բեկորները հարվածել են Մ.Հ.-ին և վնասել նրա ոտքը:[404]

Մարտունի քաղաքի 64-ամյա բնակիչ Ծ.Բ.-ի տունը թիրախավորվել է պատերազմի առաջին օրը՝ 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին: Հրետակոծության հետևանքով երկու անձ զոհվել է (Էլլադան և Վիկան, տե՛ս քաղաքացիական անձանց թիրախավորելու մասին բաժինը), ևս հինգը ստացել են հրազենային վնասվածքներ: Փաստահավաք խմբի աշխատակիցների հետ զրույցի ընթացքում Ծ.Բ.-ն ասել է, որ իրենց տանը հարվածել է 2,5 մ երկարությամբ արկ: Մոտակայքում հայտնաբերվել են M096 կասետային զենքի մարտական բաղադրիչներ: Ծ.Բ.-ի դուստրը՝ Ա.Մ.-ն, մարմնի տարբեր մասերում ստացել է բեկորային վնասվածքներ: Ծ.Բ.-ն պատմել է.

> «(Աղջկաս) գլուխը դեռ օպերացիա չեն արել, բոլոր ասկոլկեքը մարմնից հանել են, բացի մեկից: Էդ մեկը ուղիղ ճակատով ա մտել՝ երկու կիսագնդի արանքը: Փոքր ասկոլկա ա, չի էլ խանգարում հիմա: Եկած բժիշկն ասում ա՝ էդ ասկոլկեն եթե հիմա հանեմ, մի կողմը թուլանալու ա, կոյկի վրա ա մնալու: Բժիշկը վեց տարի ժամկետ է տվել, որից հետո ինքը կհանի էդ ասկոլկան»:[405]

Փաստահավաք խմբի աշխատակիցների հետ զրույցի ընթացքում Ծ.Բ.-ի հարևան Ա.Գ.-ն պատմել է, որ ստացել է բեկորային վնասվածքներ. բեկորների մի մասը հեռացվել է, մյուս մասը դեռ մնում է: Որդին՝ Արծվիկը, նույնպես վիրավորվել է: Նա ստացել է գլխի ծանր վնասվածք. գլուխը վիրահատել են, իսկ բեկորի հարվածից կոտրվել է ոտքը:[406]

402 Հարցազրույց Ավետարանոցի բնակիչ Ա.Հ.-ի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

403 Ըստ Արցախի գլխավոր դատախազության գրության՝ գյուղը ենթարկվել է հրետանային կրակի:

404 Տե՛ս Ավետարանոց գյուղի դեպքի լուսաբանումը լրատվամիջոցներում, 24 հոկտեմբերի, 2020թ. https://www.youtube.com/watch?app=desktop&v=PKkVqkQVsTo

405 Հարցազրույց Ծ.Բ.-ի հետ, 17 դեկտեմբերի, 2020 թ., Մարտունի:

406 Հարցազրույց Ա.Գ.-ի հետ, 21 փետրվարի, 2021թ., Մարտունի::

Հարցազրույցի ընթացքում Ծ.Բ.-ի դուստրը՝ Ա.Մ.-ն, պատմել է, որ ինքն էլ վիրավորում է ստացել գլխից: Վիրավորվել են նաև ոտքերը, վնասվել՝ աղիքները: Նրա երեխան ստացել է բեկորային երկու վիրավորում: Ծ.Բ.-ի առողջությունը վատացել է. նա պնդում է, որ պայթյունից հետո մի ականջը լավ չի լսում:[407]

2020թ.-ի հոկտեմբերի 4-ին Լաուրան (անունը փոխված է) եղել է Ստեփանակերտի իր տանը, երբ ադրբեջանական զինված ուժերը մոտավորապես 1200-ից 1300-ն սկսել են ռմբակոծել: Պայթյուն է եղել շուկայի կողմից: Լաուրան նկարագրել է հետևյալը.

> «5 րոպե էլ չքաշեց, երկրորդ ուդառը արդեն մեր շենքին էր...Մեկ էլ տեսնենք, պատուհանները արդեն թռչկոտում են տան մեջ: Ամուսինս վնասվածք էր ստացել, շուրջբոլորն արյուն էր: Մեր աղջկա ոտքերը լոխ ապակի էին, ասկոլկա, դե տարանք, նկուղում մաքրեցինք»:[408]

Նա նաև ասել է, որ իրենց տան մոտակայքում ռազմական որևէ օբյեկտ չի եղել: Եղել է ընդամենը կրոնական մի կենտրոն, որը նույնպես թիրախավորվել է:

2020թ.-ի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 430-ի սահմաններում, դարձյալ Ստեփանակերտում, արկը հարվածել է 59-ամյա Վ.Ս.-ի տանը: Տանը եղել է միայն Վ.Ս.-ի քնած մայրը: Պայթյունի պատճառով մայրը ֆիզիկական վնասվածքներ չի ստացել, սակայն հետագայում կաթված (ինսուլտ) է ստացել, և նկատվել են նաև հոգեկան առողջության խնդիրներ:[409]

Հոգեկան առողջության խնդիրներ

«Միակ բանը, որ գիտեմ, այն է, որ պատերազմը վերապրած Արցախի բնակիչները լրիվ կորցրել են իրենց առողջությունը: Մարդիկ կորցրել են իրենց ազգականներին, ապրուստի միջոցները: Մեր հոգիներն այլևս հանգիստ չեն: Արդեն մի ամսից ավելի է՝ բուժում եմ ստանում, սակայն արդյունք չեմ տեսնում. ատամներս թափվում են: Մեր բնակչությունը սարսափելի հոգեկան վիճակում է, մեզ անհրաժեշտ է հոգեբանի, բժշկի օգնություն: Դեռևս մնում է ահաբեկված լինելու զգացողությունը»:

Մարտակերտի բնակիչ[410]

Պատերազմի հետևանքով շատ մարդիկ տառապում են քնի խանգարումներից: Նրանցից մեկը՝ Բերձոր քաղաքի բնակիչ Ա.Գ.-ն, ասել է փաստահավաք խմբի աշխատակիցներին, որ քնի խանգարում է ունեցել պատերազմի ընթացքում՝ Բերձորում եղած ժամանակ, ինչպես

407 Հարցազրույց Ա.Մ.-ի հետ, 25 փետրվարի, 2021թ., Երևան:.

408 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Լաուրայի հետ (անունը փոխված է), 18 դեկտեմբերի, 2020թ.:

409 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Վ. Ս.-ի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

410 Հարցազրույց Մարտակերտ քաղաքի բնակիչ Գ.Գ.-ի հետ, 22 մարտի, 2021թ.:

նաև Հայաստան տեղափոխվելուց հետո:[411] Թաղավարդ գյուղի բնակիչ Ն.Ք.-ն նույնպես նշել է, որ ունի քնի խանգարումներ, հաճախ արթնանում, վեր է թռչում Արցախի մասին մղձավանջային երազներից:[412] Հաճախ ունենում է նաև մկանային ցավեր, որոնց պատճառը նյարդային գերլարվածությունն է:

60-ամյա Ն.Բ.-ն նկատել է, որ պատերազմից հետո նյարդային է դարձել: Երիկամների խնդիր ունի, որոնք նյարդայնանալու դեպքում այտուցվում են, որի պատճառով հաճախ չի կարողանում սնվել: Բժիշկը դեղեր է նշանակել, այդ թվում՝ արյան ճնշումը կարգավորելու համար: Ն.Բ.-ն պատմել է նաև, որ իր երեխաները նույնպես շատ վախեցած են, շատ ծանր հոգեբանական սթրես են տարել: Ամեն անգամ, ինքնաթիռի ձայն լսելիս, փորձում են ինչ-որ տեղ թաքնվել և միայն հետո են գիտակցում, որ Հայաստանում են, այստեղ անվտանգ է: Պատերազմից հետո՝ դեկտեմբերի 23-ին, առողջության վատթարացման պատճառով Ն.Բ.-ի սիրտը վիրահատել են:[413]

Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի 40-ամյա բնակիչ Գ.Զ.-ն նույնպես խոսել է սթրեսի մասին, որը տարել են իր երեխաները, որոնք անընդհատ խոսում են պատերազմի մասին, իսկ կրտսեր որդին մշապես նյարդային վիճակում է:[414]

Հադրութ քաղաքի բնակիչ Վ.Մ.-ն հաշմանդամություն ունի, և նրա առողջական վիճակը վատացել է հատկապես այն բանից հետո, երբ համացանցում տեսել է տեսանյութ, որտեղ երևում է՝ ինչպես են ադրբեջանցի զինվորները մտնում իր տուն և պղծում ընտանիքի անդամների լուսանկարները:[415]

Քարինտակ գյուղի (Ծուշիի շրջան) 64-ամյա բնակիչ Ռ.Վ.-ն նույնպես բողոքել է իր հոգեբանական լարված վիճակից: Բժիշկները հաստատել են, որ դա պատերազմի հետևանք է: Պատերազմից մեկ ամիս անց էլ քնի խանգարումներ ունի:[416]

Պատերազմի մասին մշտական մտքերի հետևանքով Ազոխ գյուղի (Հադրութի շրջան) բնակիչ Հ.Բ.-ն հաճախ ունենում է զարկերակային բարձր ճնշում և քնի խանգարում:[417] Պատերազմի բազմաթիվ վկաներ դարձյալ փաստել են, որ ունեն կամ ունեցել են քնի խանգարումներ:[418]

Ծուշիի 25-ամյա բնակիչ Լ.Ա.-ն նշել է, որ իր 2 տարեկան երեխան քնի մեջ հաճախ սկսում է բղավել. «Պայթե՛ց, պայթե՛ց»: Լ.Ա.-ի կարծիքով՝ դա պայմանավորված է իրենց տան մոտ տեղի ունեցած պայթյունի մասին հիշողություններով:[419]

Մարտակերտի բնակիչ Լ.Գ.-ն ասել է, որ իր 11-ամյա երեխան շատ էր վախեցել ռմբակոծություններից, որից հետո մշտապես դողում էր և այժմ էլ ունի առողջական լուրջ

411 Հարցազրույց Բերձորի բնակիչ Ա.Գ.-ի հետ, 21 հունվարի, 2021թ.:

412 Հարցազրույց Ն.Ք.-ի հետ, 28 դեկտեմբերի, 2020թ.:

413 Հարցազրույց Ն.Բ.-ի հետ, 27 նոյեմբերի, 2020թ.:

414 Հարցազրույց Մեծ Թաղեր գյուղի բնակիչ Գ.Զ.-ի հետ, 2 փետրվարի, 2021թ.:

415 Հարցազրույց Հադրութի բնակիչ Վ.Մ.-ի հետ, 16 հունվարի 2021թ.:

416 Հարցազրույց Քարինտակ գյուղի բնակիչ Ռ.Վ.-ի հետ, 29 հունվարի, 2021թ.:

417 Հարցազրույց Ազոխ գյուղի բնակիչ Հ.Բ.-ի հետ, 5 փետրվարի, 2021թ.:

418 Հարցազրույցի մասնակիցներից մեկն ասել է, որ դեղեր է ընդունում քնի պակասի պատճառով:

419 Հարցազրույց Ծուշիի բնակիչ Լ.Ա.-ի հետ, 25 նոյեմբերի, 2020թ.:

խնդիրներ. ոտքերը թուլանում են, կորցնում է հավասարակշռությունը, ընկնում, դող ունի, արյան շաքարի մակարդակն է բարձրացել, ինչը, բուժող բժիշկների հավաստմամբ, հոգեբանական խնդիրների հետևանք է և առաջացել է պատերազմի պատճառով:[420] Մեկ այլ վկա՝ Հովտաշենի բնակիչ Վ.Մ.-ն, հայտնել է, որ իր 7 տարեկան երեխան, երբ ինքնաթիռի թռիչքի ձայն է լսվում, վախից «չիշիկ ա անում», իսկ մայրը ընդհանրապես չի խոսում:[421]

Գրեթե բոլոր հարցվածները բողոքել են, որ պատերազմից հետո տառապում են անքնությունից, երեխաների մոտ մշտական վախ կա բարձր աղմուկից, մասնավորապես թռչող ինքնաթիռների ձայներից: Մատնանշվել են նաև հետևյալ խնդիրները. վախ մթությունից, ախորժակի բացակայություն և/կամ սրտխառնոց, առանձին դեպքերում՝ հիշողության կորուստ, ուշաթափություն և հոգեկան ընկճվածություն, լռակյացություն և մեկուսացում, շփվելու ցանկության բացակայություն, որի պատճառով շատ երեխաներ չեն ցանկանում հաճախել դպրոց և շարունակել իրենց կրթությունը:

Հոգեկան առողջության խնդիրների մասին 2020 թվականի իր տարեկան զեկույցում խոսել է նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը՝ նշելով, որ մշտադիտարկման այցերի ընթացքում նկատել է, որ Արցախից տեղահանված անձինք, մասնավորապես՝ երեխաները, գտնվում են հոգեբանորեն ճնշված վիճակում:[422]

37-ամյա Ս.Գ.-ն գերեվարվել, խոշտանգվել և միայն 2020 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանից վերադարձվել է Հայաստան: Նրան հոսպիտալացրել են, բուժել և ախտորոշել նյարդային խնդիրներ: Հարցազրույցի օրը նա դեռ դեղեր էր ստանում: Ողնաշարը դեռ ցավում է, ինչը ծեծի ենթարկվելու հետևանք է: Դժվարությամբ է քայլում: Ս.Գ.-ի կինն ասել է, որ ամուսնու հոգեկան վիճակը շատ անորոշ է: Պատերազմում բազմաթիվ ընկերներ է կորցրել և երբ նայում է նրանց լուսանկարներին շատ է հուզվում: Հիմա էլ, եթե դեղերը չի խմում, դառնում է նյարդային և մռայլ: Ու չնայած աշխատելու ցանկություն ունի, բայց չի կարող, քանի որ ֆիզիկապես ունակ չէ և օրական 4 անգամ դեղեր է ստանում:[423]

Ն.Ա.-ի ամուսնու առողջական վիճակը սթրեսի պատճառով վատացել է պատերազմի ընթացքում, որի հետևանքով կաթված (ինսուլտ) է ստացել: Ընտանիքի մյուս անդամների առողջության վերաբերյալ Ն.Ա.-ն նշել է, որ ինքն ու որդին ունեն հոգեկան առողջության լուրջ խնդիրներ:[424]

420 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Լ.Գ.-ի հետ, 24 դեկտեմբերի, 2020:

421 Հարցազրույց Հովտաշենի բնակիչ Վ.Մ.-ի հետ, 8 դեկտեմբերի, 2020թ.:

422 «2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», տարեկան հաղորդում (Երևան, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, 2020թ.), https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf.

423 Հարցազրույց Ս.Գ.-ի հետ, 1 մարտի, 2021թ.:

424 Հարցազրույց Հադրութի բնակիչ Ն.Ա.-ի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

ՔՈՎԻԴ-19 Համավարակի ժամանակ գերբնակեցված ապաստարաններում հարկադրված գտնվելու հետևանքով առաջացած առողջական խնդիրներ

Ռ.Ա.-ն նշել է, որ ապաստարաններում հնարավոր չէր պահպանել ՔՈՎԻԴ-19 համավարակից պաշտպանվելու անվտանգության ապահովման ընթացակարգերը:[425] Լ.Ի.-ն ասել է, որ Շուշիում ստիպված են եղել միաժամանակ 60 հոգով մնալ նույն ապաստարանում: Միայն հետո են իմացել, որ այնտեղ ծանր շնչառությամբ մեկը վարակված է եղել ՔՈՎԻԴ-19-ով:[426] Բացի այդ, որոշ մարդիկ վարակվել են ՔՈՎԻԴ-19-ով, երբ տեղահանվել են այլ վայրեր, որտեղ վարակն ավելի տարածված է եղել, քան Արցախում:

Խոսելով քաղաքացիական բնակչության՝ մշտական ռմբակոծությունների պատճառով ապաստարաններում հաճախակի պատսպարվելու հետևանքների մասին՝ Ե.Ա.-ն ասել է, որ ոտքերն այտուցվել և ցավում են:[427]

Բժշկական սպասարկման դժվար հասանելիությունը

Ադրբեջանի իրականացրած ռազմական հարձակումների պատճառով բազմաթիվ քաղաքացիական անձանց համար անհասանելի է դարձել որակյալ բժշկական սպասարկումը: Ահասարսուռ հաղորդումներ են ստացվել այն մասին, որ Ադրբեջանի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունների, պարբերական ռմբակոծությունների և ճանապարհներին սպառնացող վտանգների պատճառով բազմաթիվ վիրավոր քաղաքացիական անձինք ունեցել են հիվանդանոց հասնելու և առաջին բուժօգնություն ստանալու խնդիրներ ու դժվարություններ: Բուժսպասարկման հասանելիությունն էլ ավելի է դժվարացել շտապօգնության մեքենաների անմատչելիության պատճառով, ինչը շատ հաճախ բերել է նրան, որ անհետաձգելի բուժօգնության անհրաժեշտության դեպքերում քաղաքացիական անձինք ստիպված են եղել օգտվել սեփական տրանսպորտային միջոցներից, իսկ երբեմն պարտադրված են եղել ինքնուրույն մշակել իրենց վերքերը՝ չկարողանալով դիմել բժիշկների օգնությանը:

Հադրութի շրջանի Ազոխ գյուղի բնակիչ Ն.Դ.-ն պատմել է, որ հոկտեմբերի 15-ին, երբ վիրավորվել է նրա քենակալը (բաջանաղը), չեն կարողացել շտապօգնություն կանչել, քանի որ ադրբեջանական զինված ուժերի առաջխաղացման պատճառով ճանապարհները փակ են եղել: Ստիպված են եղել վիրավորներին իրենց հետ տանել անտառներով. իրենց գյուղից մինչև Կարմիր շուկա-Թաղավարդ մոտ 7 կմ տարածություն է: Այդտեղից են միայն կարողացել մեքենայով տեղափոխվել Ստեփանակերտ, որտեղ նրա քենակալին վիրահատել են, ապա տեղափոխել Հայաստան՝ Երևան:[428]

425 Հարցազրույց Ռ.Ա.-ի հետ, 26 փետրվարի, 2021թ.:

426 Հարցազրույց Լ.Ի.-ի հետ, 1 դեկտեմբերի, 2020թ.:

427 Հարցազրույց Ե.Ա.-ի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

428 Հարցազրույց Ազոխ գյուղի բնակիչ Ն.Դ.-ի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.:

Շտապօգնության մեքենաների և բուժանձնակազմի ուղիղ թիրախավորումը մարդասիրական իրավունքի ևս մեկ նենգ խախտում է: Հայտնի է, որ 2020թ.-ի հոկտեմբերի 11-ին ադրբեջանցիների կողմից թիրախավորվել է շտապօգնության մեքենա, որը տեղափոխելիս է եղել վնասվածքներ ստացած անձանց:[429] Իսկ 2020թ.-ի սեպտեմբերի 28-ին Քարվաճառի շրջանում՝ ճանապարհին, ադրբեջանցի զինվորականները հարձակվել են զինվորական շտապօգնության մեքենայի վրա, սպանել ռազմական բժշկին և վիրավորել վարորդին:[430]

Ավելին, ականատեսներից շատերը փաստելեն, որ երբեմն ռմբակոծությունների ակտիվության պատճառով շտապօգնության մեքենաները չեն կարողացել հասնել հրազենային վիրավորում ստացած բոլոր անձանց, և հետևանքը եղել է այն, որ քաղաքացիական շատ անձինք պարզապես զրկվել են բժշկական օգնություն ստանալու հնարավորությունից և իրավունքից: Արձանագրվել են բուժանձնակազմեր և բուժհաստատություններ թիրախավորելու բազմաթիվ դեպքեր. 44-օրյա պատերազմի ընթացքում զոհվել է 15 ռազմական բժիշկ, 1 կամավոր բժիշկ, մոտ 60 բուժաշխատող:[431]

Մասնավորապես, 2020թ.-ի սեպտեմբերին երեք անգամ թիրախավորվել է Մարտակերտի հիվանդանոցը:[432] Հարվածի վայրի և հարվածային զենքի ուսումնասիրությունը թույլ են տվել պարզել, որ Մարտակերտի հիվանդանոցի վրա կիրառվել է LAR-160 զինատեսակ, որն արձակվել է EXTRA հրթիռներով: Հիվանդանոցի հիմնական մասնաշենքում և շրջակա տարածքում ԲԱՏՀ փորձագետներն արձանագրել են լուրջ ավերածություններ, որոնց պատճառը ամենայն հավանականությամբ եղել են բեկորային հարվածները և հարվածային ալիքից առաջացած գերճնշումը: Բացի հարվածային ալիքի և բեկորների պատճառած վնասներից՝ պայթյունը նաև հրդեհ է առաջացրել հիվանդանոցի մոտ գտնվող արագ արձագանքման մեքենաների կայանատեղիում:

2020թ.-ի հոկտեմբերի 28-ին ռմբակոծվել է նաև Ստեփանակերտի ծննդատունը: ԲԱՏՀ փորձագետները եզրակացրել են, որ հիվանդանոցը թիրախավորվել է 300մմ 9M5 շարքի «Երկիր-երկիր» հրթիռով, որն արձակվել է 9K58 «Սմերչ» ՀԿՌՀ-ից: Փաստագրված ավերածությունները համապատասխանում են խոշոր ֆուգասային մարտագլխիկի պայթյունի արդյունքում հնարավոր հետևանքներին: Նման կառույցների թիրախավորումը հավասարազոր է Ադրբեջանի կողմից անձի առողջության իրավունքը հարգելու պարտավորությունների խախտման:

Նշված բոլոր օրինակները վկայում են, որ Ադրբեջանը զերծ չի մնացել բուժանձնակազմերի և բժշկական օբյեկտների թիրախավորումից, ինչն առաջացրել է առողջապահական ծառայությունների և բժշկական օգնության հասանելիության լրացուցիչ խոչընդոտներ:

429 «Ադրբեջանը թիրախավորել է վիրավոր տեղափոխող շտապօգնության մեքենան», 11 հոկտեմբերի, 2020թ., https://armenpress.am/arm/news/1031300.html; «Ադրբեջանի ռազմական ագրեսիան, զարգացումների ժամանակագրություն 11.10.2020», Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, հոկտեմբերի 11, 2020թ., https://www.mfa.am/hy/awaa_chr/2020/10/11/w_nk_2020/10565.

430 Hugh Williamson, "Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh: New Research on Three Incidents from 2020 Conflict" (Human Rights Watch, February 26, 2021), https://www.hrw.org/news/2021/02/26/unlawful-attacks-medical-facilities-and-personnel-nagorno-karabakh.

431 «Արցախյան պատերազմում Ադրբեջանը թիրախավորում էր բժշկական անձնակազմը. ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ», Արմենպրես, մարտի 28, 2021թ., https://armenpress.am/arm/news/1047378.html&gt

432 Williamson, "Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh."

***

Եզրափակելով՝ նշենք, որ փաստահավաք խումբը գտել է, որ վկաները, որոնց հետ հարցազրույցներ են արվել, մեծապես արժանահավատ են: Փաստագրվել են իրեղեն ապացույցներ, օրինակ, վիրավորների՝ հրազենային վիրավորումից ստացած սպիները: Այն դեպքերում, երբ վկայություն են տվել նույն ընտանիքի տարբեր անդամներ կամ նույն վայրի տարբեր բնակիչներ, նրանց տեղեկությունները լրացրել են մեկը մյուսին՝ այդպիսով էլ ավելի հաստատելով յուրաքանչյուրի վկայությունը: Դեռ ավելին, պաշտոնական հաղորդագրությունները, օրինակ՝ պատերազմի ընթացքում հրազենային վիրավորումներ ստացած անձանց մասին գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունները ևս հաստատում են ներկայացված վկայությունների հավաստիությունը, որոնք հաստատվում են նաև լրատվամիջոցների տարածած տեղեկություններով: Այս ամենը սույն զեկույցում ներկայացված ապացույցները դարձնում են արժանահավատ և ճշտված:

Առանձնակի կարևորություն ունի այն հանգամանքը, որ մարդու առողջության իրավունքը փոխկապակցված է հիմնարար այլ իրավունքների իրագործման հետ, իսկ առողջության իրավունքի խախտումները հաճախ վտանգում են տուժողների կյանքը, ինչպես նաև կյանքի հետագա որակը: Բացի այդ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ առողջության իրավունքը տարածվում է նաև «առողջության հիմնարար գործոնների» վրա, և ըստ կոմիտեի ՝ «առողջության ավելի լայն սահմանումը հաշվի է առնում նաև այնպիսի սոցիալական գործոններ, ինչպիսիք են բռնությունը և զինված հակամարտությունը»:[433] Ավելին, ՏՍՄԻՄԴ-ի 12-րդ հոդվածը հատուկ պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները «համաճարակային, էնդեմիկ, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերահսկման համար»:[434]

Այսպիսով՝ տուժողների, որոնք բոլորն էլ անմեղ քաղաքացիական անձինք են, առողջությանը հասցված վերոնշյալ ֆիզիկական, զգայական և հոգեկան վնասները արտահայտում են ոչ միայն Ադրբեջանի կողմից ՏՍՄԻՄԴ-ի շրջանակում իր ստանձնած հանձնառությունների անտեսումը, այլև՝ լկտի արհամարհանքը Արցախում բնակվող ազգությամբ հայ քաղաքացիական անձանց բարեկեցության նկատմամբ: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ առանց պատասխանատվության որևէ զսպող գործոն չի լինի ապագայում նորանոր նման գործողությունների իրականացման դեմ:

433 ՏՍՄԻԿ, Ընդհանուր մեկնաբանություն 14, համապատասխանաբար պարբ. 11 և 10:

434 «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, դեկտեմբերի 16, 1966թ.), հոդ. 12, https://www.refworld.org/docid/3ae6b36c0.html

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտումներ

«Պատերազմից հետո երեխաներիցս մեկը չի շփվում ուրիշների հետ և միայն ընտանիքի անդամների հետ է խոսում...ես գիշերները չեմ քնում, մահճակալից դուրս եմ թռչում, երբ մի թեթև ձայն եմ լսում, նույնիսկ բացվող դռան ձայն: Հաճախ շորերով եմ գնում քնելու՝ մտածելով, որ եթե ինչ-որ բան պատահի, պատրաստ կլինեմ, երեխաներին արագ կհագցնեմ ու կօգնեմ նրանց...»

- Ստեփանակերտի բնակիչ[435]

Սույն փաստահավաք առաքելության ընթացքում արձանագրված մեկ այլ համատարած խախտում էր մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ անհատների իրավունքի խախտումը: Հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ պատերազմի ընթացքում և դրանից հետո իրենք և/կամ նրանց ընտանիքի անդամները, հատկապես երեխաները, ունեցել են սթրես, անհանգստություն, դյուրագրգռություն, հոգեկան անհանգստություն և դեպրեսիա: Որոշ հարցվածներ նաև ընդգծել են, որ հոգեկան անհանգստությունն ու դեպրեսիան հանգեցրել են ֆիզիկական առողջության խնդիրների, այդ թվում՝ ջերմության և զարկերակային ճնշման սուր տատանումների, ինչը շատ դեպքերում ստիպում է տուժողներին դիմել բժշկական աջակցության և շտապօգնության ծառայություններին: Տուժողները նշում են, որ ֆիզիկական առողջության այդ խնդիրները, բժիշկների ախտորոշմամբ, առաջացել են հոգեբանական սթրեսի հետևանքով:

Կրթություն

Հարցվածներից 144-ը[436] նշել է կրթության իրավունքի խախտումների մասին, որոնք հետևանք են պատերազմի ժամանակ ուսումնական հաստատությունների չգործելու, պատերազմից հետո որոշ տարածքների նկատմամբ ադրբեջանական վերահսկողության և Արցախում իրենց բնակության վայր վերադառնալու անհնարինության: Ծնողները նաև նշել են, որ դպրոց հաճախելը երբեմն խաթարվել է, քանի որ ստիպված են եղել փոխել ժամանակավոր

435 Հարցազրույց Ստեփանակերտի բնակչի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

436 Հարցվողները հատկապես մտահոգ էին, որ անհնար կլինի ուսումը շարունակել Արցախի պետական համալսարանում, «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանում, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանական քոլեջում:

կացարանը,[437] դպրոցը հեռու է եղել, դժվարություններ են ունեցել մյուս երեխաների խնամքի հարցում, իսկ որոշ դեպքերում հագուստ չեն ունեցել, քանի որ իրենց տներից փախչելիս հնարավորություն չեն ունեցել վերցնելու նույնիսկ նվազագույն անհրաժեշտության իրերը: Օրինակ, Բերձորի բնակչուհի Սուսաննան[438] նշել է, որ իր վեց երեխաները (մեկուկեսից տասնչորս տարեկան) գտնվում են սթրեսային վիճակում և վախեցած, և որ իր չորս դպրոցահասակ երեխաները մեկ ամիս է դպրոց չեն հաճախել (հարցազրույցի պահին): Մասնավորապես, նրա տասը տարեկան երեխան չէր ցանկանում դպրոց հաճախել, քանի որ վախենում էր անօդաչու թռչող սարքերից (ԱԹՍ-ներ):

Գերեզմանավայրեր

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման մեկ այլ տեսակ է այն, որ պատերազմն անհնարին է դարձրել հարազատների գերեզմաններ և գերեզմանոցներ այցելություններ կատարելը: Ավելին, նման վայրերը (գերեզմանոցներ և հուշաքարեր) քանդվում, վանդալիզմի են ենթարկվում և/կամ պղծվում: Այդ վայրերն անհնար է այցելել, քանի որ Ադրբեջանը օկուպացրել է բազմաթիվ համայնքներ, իսկ մյուս համայնքներն այժմ մոտ են առաջնագծին և այլևս ապահով չեն: Օրինակ՝ Հայաստանում ապաստան գտած հադրութցի Գոհարը նշել է. «Մտքերով հիվանդ էի. հիմա հարմարվել եմ այս իրավիճակին: Ինձ համար ոչինչ կարևոր չէ, բացի նրանից, որ չեմ կարող այցելել իմ երեխայի գերեզմանին, և դա ամենակարևորն է...»:[439]

Կան զոհերի պատմությունները հաստատող տեսանյութեր: Պատերազմի ընթացքում և դրանից հետո համացանց վերբեռնված տեսանյութերը վկայում են ադրբեջանական զինծառայողների[440] կողմից հայկական գերեզմանների ոչնչացման և/կամ պղծման մասին (ընդհանուր առմամբ Ադրբեջանը վերահսկողության տակ է վերցրել 108 գերեզմանատուն և սրբավայր):[441] Այս ամենը փաստագրվել է նաև Հայաստանի մարդու իրավունքների

437 Ծուշեցի Նարինեն պատմել է, որ սկզբում տեղափոխվել են Կապան, այնուհետև Գորիս, Ողջաբերդ և Արաքս գյուղ (Հարցազրույցը կատարվել է 2020թ. դեկտեմբերի 2-ին):

438 Հարցազրույց Բերձորի բնակչի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.:

439 Հարցազրույց Հադրութի բնակչի հետ, 26 փետրվարի, 2021թ.:

440 Մանրամասների համար տե՛ս Karabakh Records_English (@karabakhrecords_english), "Azerbaijani Soldiers Destroying Armenian Graves," Telegram video, https://mega.nz/file/Y7xCnTxR#2HrWl6NY_TkH-VCwtWlY1pQ2fdYbkJq3A7BJQtsQ8-U; Karabakh Records_English (@karabakhrecords_english), "Another Case of Vandalism and #Armenophobia," https://mega.nz/file/RuhCzZpa#ABgvpgi4eiDnFAIvTLPaaSWRVPKB5fdXiqcCVZgT708; Karabakh Records_English (@karabakhrecords_english), "Another Armenian Tombstone, Another Case of #AzerbaijaniVandalism," https://mega.nz/file/h34EiBgD#KDovUyXYhRe-1myAwF5m7gGV2-X8XljdKEl7gqNvsz4; Karabakh Records_English (@karabakhrecords_english), https://mega.nz/file/Yy4h0aqY#N12A1oi1NZsUcmiQseh11xpnAh3dW67UDSxWjA5ZRf0; Caucasus Heritage Watch (@CaucasusHW), "ALERT: An Armenian Cemetery in the Village of Mets Tagher/Böyük Tağlar Was Recently Destroyed.," Twitter, May 4, 2021, https://perma.cc/Z2LG-Y6CL; "USCIRF Releases Country Update on Azerbaijan," The US Commission on International Religious Freedom, March 18, 2021, https://www.uscirf.gov/news-room/releases-statements/uscirf-releases-country-update-azerbaijan; "Deliberate Destruction and Desecration of Armenian Cemeteries and Gravesites by Azerbaijan's Armed Forces," AzeriWarCrimes.org, January 11, 2021, https://azeriwarcrimes.org/2021/01/11/deliberate-destruction-and-desecration-of-armenian-cemeteries-and-gravesites-by-azerbaijans-armed-forces/; Инфотека 24 (@infoteka24), telegram video, https://mega.nz/file/w7QknJDb#I1s-fGTAYzkeGlShknqnWZsgUtLGPqZOhIIIYjRFE1w

441 «Հայկական մշակութային ժառանգությունը Արցախում (Լեռնային Ղարաբաղում. Ադրբեջանի կողմից վանդալիզմի դեպքերը և ոչնչացման սպառնալիքը», արտահերթ զեկույց (Ստեփանակերտ. Արցախի մարդու իրավունքների պաշտպան, 26 հունվարի, 2021 թ.), https:// artsakhombuds.am/hy/document/792

պաշտպանի,[442] Արցախի արտաքին գործերի նախարարի,[443] Արցախի մարդու իրավունքների պաշտպանի,[444] ինչպես նաև որոշ համայնքապետերի կողմից:[445] Կարևոր է նաև ընդգծել, որ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը դատապարտել է գերեզմանատների ավերումը կամ վնասումը հակամարտության ընթացքում և դրանից հետո:[446]

Պատկեր 10.1. Մեծ Թաղերի գերեզմանատունը պատերազմից առաջ և հետո (աղբյուրը՝ «Ազատություն» ռադիոկայան):

442 «Հայաստանի Սյունիքի մարզի համար Դավիթ Բեկ և Ագարակ գյուղերի վրա ադրբեջանական ռազմական հարձակումների մասին» արտահերթ զեկույց (Երևան. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, 2020թ.), https://ombuds.am/images/files/86cfd80eb354d0f2a60008323 .pdf

443 Խաչատրյան Մարինե, «Ադրբեջանը ոչնչացնում է հայկական գերեզմանատներն ու տապաններն օգտագործում որպես շինանյութ. ԼՂ արտգործնախարար», «Ազատություն» ռադիոկայան, մայիսի 11, 2011թ., Ղարաբաղյան խնդիր, https://www.azatutyun.am/a/31249493.html "Ադրբեջանը Շարունակում է Վանդալիզմի Իր Քաղաքականությունը՝ Ոչնչացնելով Օկուպացված Տարածքներում Հայկական Գերեզմանները. ԱՀ ՄԻՊ," Persona News, May 11, 2021, https://bit.ly/3NfluTR.

444 "Ադրբեջանը Շարունակում է Վանդալիզմի Իր Քաղաքականությունը՝ Ոչնչացնելով Օկուպացված Տարածքներում Հայկական Գերեզմանները. ԱՀ ՄԻՊ," Persona News, May 11, 2021, https://bit.ly/3NfluTR.

445 Խաչատրյան, «Ադրբեջանը ոչնչացնում է հայկական գերեզմանատներն ու տապաններն օգտագործում որպես շինանյութ. ԼՂ արտգործնախարար»:

446 «2391 բանաձև (2021թ.). Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության մարդասիրական հետևանքները / Լեռնային Ղարաբաղի հակամարտություն» (Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2021թ.), https://pace.coe.int/en/files/29483/html



Պատկեր 10.2. Սղնախի գերեզմանատունը պատերազմից առաջ և հետո, հուլիսի 3, 2021թ. (Աղբյուրը՝ «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոն, լուսանկարը՝ «Caucasus Heritage Watch»-ի):

Պատկեր 10.3. Շուշիի գերեզմանատունը պատերազմից առաջ և հետո, մայսիսի 18, 2021թ. (Աղբյուրը՝ Panarmenian.net, լուսանկարը՝ «Caucasus Heritage Watch»-ի):

Պատկեր 10.4. Գերեզմանի պղծում Արցախում ադրբեջանցի զինվորի կողմից, հունավրի 11, 2021թ. (Աղբյուրը՝ azeriwarcrimes.org):

Ընտանիքների մասնատում

Հարցազրույցների ժամանակ հաճախ տեղահանված ընտանիքների արական սեռի անդամները տարբեր պատճառներով գտնվել են Արցախում, և ընտանիքները մասնատվել են՝ ստեղծելով լրացուցիչ սթրես և անհանգստություն: Որոշ ծնողներ, անվտանգության նկատառումներից ելնելով, իրենց երեխաներին տեղափոխել են Հայաստան, սակայն իրենք մնացել են Արցախում: Մի ընտանիք չէր կարողացել բոլորի համար մեկ կացարան գտնել, և ընտանիքի անդամները ստիպված էին բաժանվել՝ կտրելով ընտանիքի հետ կապերը: Շուշեցի Նունեն նշել է.

> «Մեծ աղջիկս Երևանում վարձով է ապրում, երկրորդ աղջիկս՝ սկեսուրի տանը՝ Ստեփանակերտում, նախկինում միասին էինք, բայց հիմա դա անհնար է: Ես այստեղ եմ իմ ամենափոքր աղջկա հետ»: [447]

447 Հարցազրույց Շուշիի բնակիչ Նունեի հետ, 22 փետրվարի, 2021թ. (Երբ փաստահավաք խմբի անդամների այցի պահին Նունեն և նրա դուստրը գտնվում էին Էջմիածնի Զվարթնոց թաղամասում):

Կյանքի պայմաններ

Երբ ընտանիքներն այնուամենայնիվ փորձել են միասին մնալ, նրանք հաճախ բախվել են դժվարին իրավիճակների հետ, օրինակ, ստիպված են եղել քնել հատակին, չունեին անհրաժեշտ հարմարություններ և երբեմն ստիպված են ղել տվյալ տարածքը կիսել այլ ընտանիքների հետ, քանի որ գիշերելու տեղ չկար: Թաղավարդ գյուղից Նելա[448] և Արևիկ[449] քույրերը երկար ժամանակ տառապել են սուր շնչառական վարակով, քանի որ մինչև նոյեմբերի 19-ը ապրել են իրենց հորեղբոր մեկ սենյականոց բնակարանում՝ տասնչորս մեծահասակների և վեց անչափահասների հետ: Նրանք ստիպված են եղել քնել հատակին առանց որևէ տաք վերմակի: Մարտունու բնակիչ Սվետլանան հայտնել է, որ որոշ ժամանակ չորս ընտանիք (տասնութ հոգի) ստիպված են եղել միասին ապրել ստուդիայում:

Պատկեր 10.5. Շուշիի բնակիչ Գրետան իր հինգ անչափահասների և սկեսուրի հետ ապրում է ընդամենը 20 քմ տարածք ունեցող սենյակում, 24 դեկտեմբերի 2020թ. (Աղբյուրը՝ Փաստահավաք խումբ):

448 Հարցազրույց Թաղավարդի բնակչի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

449 Հարցազրույց Թաղավարդի բնակչի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

Զբաղվածություն

Հարցազրույցների ընթացքում 206 հարցվածներ նշել են, որ պատերազմի և տեղահանության պատճառով կորցրել են աշխատանքը, եկամուտը կամ կանգնած են իրենց աշխատանքը կորցնելու վտանգի առջև: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ նրանց նախկին համայնքները, որտեղ նրանք ունեին իրենց մասնավոր ֆերմաները, զբաղվում էին հողի մշակությամբ ու անասնապահությամբ կամ ունեին իրենց սեփական գործը, այժմ վերահսկվում և օկուպացված են Ադրբեջանի կողմից:

Անձնական անվտանգություն և ինքնաբավություն

Հարցվածները բացառում են Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող իրենց համայնքներում բնակվելու ցանկացած հնարավորություն՝ հաշվի առնելով իրականացվող հայատյաց քաղաքականությունը՝ սկսած իշխանության ամենաբարձր մակարդակից, էթնիկ զտումները, վերադառնալուն պես սպանվելու, առևանգվելու, ստրկացվելու կամ խոշտանգվելու իրական սպառնալիքները, որոնք արդեն հիմնավորվում են մի շարք կոնկրետ դեպքերով:[450] Հարցվածները հիմնականում շեշտել են անձնական անվտանգության խնդիրը, սեռական ոտնձգությունների ռիսկը, ներկա պայմաններում մասնավոր ֆերմայի (հողերի մշակում, անասնաբուծություն) մասին հոգ տանելու անհնարինությունը, ինչպես նաև պատերազմի վերսկսման հնարավորության հետ կապված անորոշությունները: Մյուրիշեն և Թաղավարդ գյուղերի բնակիչները նշել են, որ իրենց համայնքները «երեք կողմից շրջապատված են»:

Օրինակ՝ Թաղավարդցի Լիլյան նշել է.

> «...տունն այնտեղ է, բայց ես չեմ կարող երեխայիս տանել այդ տուն. թուրքերը նստած են իմ այգում: Իմ տունը երեք կողմից շրջապատված է թուրքերով: Ես չեմ կարող վերադառնալ: Եթե թուրքերին վտարեն, ես կվերադառնամ. Ինչպես կարող եմ ապրել այնտեղ. ջուր չկա, ես չեմ կարող նույնիսկ իմ բակում ուտելու համար կանաչի աճեցնել: Ջրի՝ և՛ խմելու, և՛ ոռոգման աղբյուրները թուրքերի ձեռքում են: Անմիջապես ջրամատակարարումը կտրեցին, ջրի հասանելիություն չունենք...»:451

Անվտանգության նկատառումներով Արցախ վերադառնալու ցանկության բացակայության վերաբերյալ հարցին ի պատասխան, շուշեցի Սվետլանան նշել է.

> «...ճշմարտությունն այն է, որ թուրքերն ու հայերը պետք է այսպես ապրեն, բայց ինչպե՞ս կարող ենք այսպես ապրել: Եթե ես չկարողանամ այցելել հիվանդ մարդուն գիշերը կամ երեկոյան ժամերին, իսկ հետո վերադառնամ, վախենալով, ամեն տեսակ վախեր ունեմ... դու մտնում ես շենք՝ առանց իմանալու, թե արդյոք թուրքը կարող է նկուղից դուրս ցատկել ու սպանել քեզ...»:[452]

Բերձորցիները նշել են, որ թեև քաղաքը չի գրավվել Ադրբեջանի կողմից, սակայն այն անվտանգ չէ, և նույնիսկ քաղաքապետն ինքն է իրենց հորդորել չվերադառնալ՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Բերձորցի Վիկտորիան մեզ ասաց, որ

450 Մանրամասները տես փաստահավաք զեկույցի համապատասխան բաժիններում:

451 Հարցազրույց Թաղավարդի բնակիչ Լիլյայի հետ, 5 փետրվարի, 2021թ.:

452 Հարցազրույց Շուշիի բնակիչ Սվետլանայի հետ, 3 դեկտեմբերի, 2020թ.:

«...Իշխանաձորում աղջիկ կար, որին բռնել էին, իրենց դրոշը նկարեցին ու իրենց լեզվով գրեցին՝ «կուսությունդ փչացրինք»: Մի քանի ամիս առաջ Շուշիի մոտ առևանգեցին մի աղջկա, սպանեցին: Հիմա նորից 21-ամյա մի աղջիկ է անհետացել...»[453]

Հարցին՝ մտադրություն ունե՞ն վերադառնալու իրենց նախկին բնակության վայրերը, եթե դրանք գտնվեն հայկական կողմի վերահսկողության տակ, կամ բնակություն հաստատելու Արցախի՝ այլ տարածքներում, հարցվածների մեծամասնությունը նշել է, որ լուրջ մտահոգություններ ունեն իրենց երեխաների անվտանգության հետ կապված, քանի որ հայկական ուժերի կողմից վերահսկվող բազում համայնքներ շատ մոտ են պատերազմի հետևանքով ձևավորված նոր շփման գծին, որի երկայնքով տեղակայված ադրբեջանական ուժերը բարենպաստ դիրքեր ունեն այդ համայնքները վերահսկելու տեսանկյունից, այնպես որ որոշ համայնքներից կարող է դժվար լինել փախչելը, եթե այդպիսի անհրաժեշտություն ծագի (օրինակ՝ ադրբեջանական զինուժն այժմ երեք կողմից շրջապատում է Թաղավարդը):

Կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը «Հայաստանի և Ադրբեջանի/Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների մասին» բանաձևում փաստացիորեն համաձայնել է, որ միջազգային հանրությունը լքել է Լեռնային Ղարաբաղում մնացած կամ վերադարձած բնակիչներին, ինչպես նաև նշել է անվտանգության վերաբերյալ իրենց մտահոգությունները՝ կապված սահմանային միջադեպերի, ադրբեջանական զորքերի՝ համայնքներին մոտ գտնվելու փաստի և պարբերաբար հնչող կրակոցների հետ:[454]

Վկաների պատմությունները մեծապես հաստատվել են մարդու իրավունքների հարցերի շուրջ այլ զեկույցներով: Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը, օրինակ, իր՝ 2020 թվականի տարեկան զեկույցում ներառել է ընտանիքների մասնատման հարցը, որտեղ, ի թիվս այլ հարցերի, նշվում է.

> «Ադրբեջանի կողմից հրահրված ռազմական գործողությունների պատճառով իրենց տները թողած և Հայաստանում ապաստան գտած ընտանիքները ստիպված են եղել ապաստան գտնել տարբեր վայրերում, օրինակ, ընտանիքի անդամները բաժանվել են միմյանցից և տեղավորվել տարբեր համայնքներում և հանրակացարաններում: Օրինակ՝ որոշ դեպքերում ընտանիքի տարեց անդամները ապաստան են գտել խնամքի հաստատություններում, որտեղ իրենց բոլոր կարիքները բավարարվել են, մինչդեռ ընտանիքի ավելի երիտասարդ անդամները ստիպված են եղել մնալ հանրակացարաններում և բախվել մի շարք խնդիրների»:[455]

Տարեկան զեկույցն ապացույցներ է տրամադրում առ այն, որ Արցախից տեղահանված բազմաթիվ մարդիկ իրենց տների հետ մեկտեղ կորցրել են նաև աշխատանքն ու եկամտի հնարավորությունները:[456]

---

453 Հարցազրույց Բերձորի բնակիչ Վիկտորիայի հետ, 22 փետրվարի, 2021թ.:

454 «2391 (2021թ.) բանաձև. Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության մարդասիրական հետևանքները / Լեռնային Ղարաբաղի հակամարտություն»:

455 «2020 Թվականի Ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու Իրավունքների Պաշտպանի Գործունեության, Մարդու Իրավունքների և Ազատությունների Պաշտպանության Վիճակի Մասին», Տարեկան հաղորդում (Երևան: Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, 2021թ.), https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf

456 «2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին»:

Միևնույն ժամանակ, իրավիճակը հատկապես սրվեց COVID-19-ի պայմաններում, քանի որ պատերազմի ժամանակ քաղաքացիական անձինք հաճախ չէին կարողանում պահպանել անվտանգության կանոնները (հաճախ մինչև քսան մարդ է բնակվել մոտավորապես մեկ 30-40քմ սենյակում)։ Դրա վառ վկայությունն է մահացության մակարդակը, որը պատերազմին նախորդած յոթ ամիսների ընթացքում կազմել էր 951, իսկ պատերազմի 44 օրերի ընթացքում գրանցվեց 658 մահ։ Այս խնդրին անդրադարձել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը՝ «Մարդկության դեմ Ադրբեջանի հանցագործությունները COVID-19 մարդածին աղետի համատեքստում» զեկույցում։[457]

Բացի այդ, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի նոյեմբերի 9-ի արտահերթ զեկույցում նշվում է, որ արցախցի մոտ 40 հազար երեխա տեղահանվել է,[458] իսկ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հրապարակված տեղեկության՝ արցախցի 24 հազար երեխա ընդգրկված չէ դպրոցներում՝ զրկվելով կրթության իրավունքից։[459] Տարեկան զեկույցում նշվել է, որ ի պատասխան Արցախի և Հայաստանի օմբուդսմենների համատեղ գրության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ 2020 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ Արցախից դպրոցներում ներառված է շուրջ 11500 երեխա Արցախից, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 7-ին նրանց թիվը եղել է 10849, քանի որ տեղահանված որոշ երեխաներ վերադարձել են Արցախ։[460] Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմը, հղում անելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվությանը, հայտնել է, որ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով տուժել է 41 դպրոց և 15 մանկապարտեզ։ Հաղորդվել է նաև, որ Ադրբեջանի վերահսկողության տակ է անցել 121 դպրոց և 20 մանկապարտեզ։[461] Պատերազմի ընթացքում դպրոցների վրա կատարված հարձակումների մասին տեղեկություններ փաստագրվել են նաև Human Rights Watch-ի կողմից։[462]

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի տարեկան զեկույցում նշել է նաև, որ իր մոնիթորինգային այցերի ընթացքում նկատել է, որ Արցախից տեղահանված մարդիկ, այդ թվում՝ երեխաները, հոգեբանական դեպրեսիայի մեջ են։[463] Նա

457 «Մարդկության դեմ Ադրբեջանի հանցագործությունների մասին՝ COVID-19 մարդածին աղետի համատեքստում (Պատերազմ Արցախի և Հայաստանի դեմ, սեպտեմբեր-նոյեմբեր 2020թ.)» (Երևան, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 2021թ.), https. //ombuds.am/images/files/e632fe2219cb340fc05194d684d7206f.pdf.

458 «Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի) դեմ ադրբեջանական հարձակումներից տուժած երեխաների իրավունքների մասին արտահերթ զեկույց» (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 9 նոյեմբերի, 2020թ.), https://bit. ly/3izvlTi

459 «Արցախում 24 հազար երեխա զրկված է կրթության իրավունքից», ՀՀ ԿԳՄՄՆ, 13 հոկտեմբերի, 2020թ. https://escs.am/am/news/7292.

460 «2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին»։

461 Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով վնասված դպրոցների և մանկապարտեզների, ինչպես նաև Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած տարածքներում (ըստ բնակավայրերի) մնացած դպրոցների և մանկապարտեզների մասին մանրամասն տեղեկությունների համար տես հետևյալ ցանկը. https://bit.ly/3vCt733 (Տեղեկությունը տրամադրել է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազը)։

462 Bill Van Esveld and Tanya Lokshina, “Lessons of War: Attacks on Schools During the Nagorno-Karabakh War” (Human Rights Watch, September 8, 2021), https://www.hrw.org/news/2021/09/08/lessons-war.

463 Ըստ ՀՀ ԱԻՆ-ի՝ հոգեբանական օգնություն է ցուցաբերվել Արցախի Հանրապետության անվտանգ տարածքներ տարհանված մի շարք քաղաքացիների, այդ թվում՝ երեխաների, ովքեր ունեցել են բացասական հույզեր՝ վախ, ապատիա, դեպրեսիա, ինչպես նաև քնի խանգարումներ։

մասնավորապես ընդգծել է, որ Արցախից տեղահանված շատ երեխաներ Հայաստանում դպրոց հաճախելիս հոգեբանական խնդիրներ են ունեցել, և նրանց ծնողները մտահոգված են եղել երեխաների անվտանգությամբ, քանի որ դպրոցները հեռու են գտնվում, ինչը երեխաներին դպրոց տանելու և տուն վերադարձնելու խնդիր է առաջացնում: Խնդիրներ են եղել նաև դպրոցական համազգեստի հետ կապված, և նշվել է, որ Ադրբեջանի կողմից հրահրված լայնածավալ ռազմական գործողությունների պատճառով Արցախից տարհանումը կազմակերպվել է հապճեպ, և օբյեկտիվորեն պարզապես հնարավոր չի եղել վերցնել դպրոցական համազգեստ և այլ իրեր, ուստի ծնողները որոշ վերապահումներ են ունեցել երեխաներին դպրոց ուղարկելու վերաբերյալ, իսկ երեխաներն, իրենց հերթին, իրենց սեփական վերապահումներն են ունեցել:[464] Դատախազությունն իր գործառույթների շրջանակներում պարզել է, որ ինքնասպանության և ինքնասպանության փորձերի մի շարք դեպքեր անմիջականորեն առնչվում են 2020 թվականին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ պատերազմի հետևանքով առաջացած ֆիզիոլոգիական խնդիրների հետ:[465]

Գերեզմանների պղծումը ևս մեկ խնդիր է, որն անհնար է դարձնում ադրբեջանական տիրապետության տակ հայերի ապրելը: Մարդիկ ականատես են եղել գերեզմանաքարերը վնասելու, գերեզմանաքարերն ու տապանաքարերը որպես շինանյութ օգտագործելու, գերեզմանատների տեղում ճանապարհներ կառուցելու, գերեզմանները քանդելու և պղծելու բազմաթիվ դեպքերի: Կան նաև փաստագրված դեպքեր հրադադարից հետո, երբ քաղաքացիական անձինք գերի են ընկել իրենց հարազատների գերեզմաններն այցելելիս:[466] Ավելին, հայկական գերեզմանատների ավերման համատեքստում մարդիկ միշտ անհանգստություն և անվստահություն են զգում իրենց հարազատների շիրիմների հետ կապված, հատկապես հաշվի առնելով միջազգային հանրության կողմից արդեն դատապարտված հայկական գերեզմանատների զանգվածային ավերումը (օրինակ՝ Ադրբեջանի կողմից հին հայկական գերեզմանատների ավերումը Ջուղայում՝ Նախիջևանի շրջանում):[467] Այդ իսկ պատճառով կան դեպքեր, երբ մարդիկ գերադասել են արտաշիրիմել իրենց հարազատների դիերը, որպեսզի կարողանան հետագայում այցելել նրանց շիրիմներին և կանխել դրանց ոչնչացումն ու պղծումը:

Ադրբեջանական զինված ուժերի այս գործողությունները որակվում են որպես անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի ակնհայտ խախտումներ: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային օրենսդրության մասով սույն իրավունքը, ի թիվս այլոց, ամրագրված է, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Ինչ վերաբերում է միջազգային մարդասիրական իրավունքին, համաձայն միջազգային մարդասիրական սովորութային իրավունքի 105-րդ կանոնի՝ «Ընտանեկան կյանքը պետք է առավելագույնս

464 «2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին»:

465 «Գլխավոր դատախազը բարձրացրել է պատերազմի մասնակիցների, զոհված կամ անհետ կորած զինծառայողների հարազատների հոգեբանական և հոգեբուժական առաջին բուժօգնության ընդլայնման անհրաժեշտությունը», - ՀՀ գլխավոր դատախազություն, 2 հուլիսի, 2021թ., http:// www.prosecutor.am/hy/mn/8209/

466 Արզումանյան Արփինե, «Արևիկ Թամրազյանի որդին պատերազմում զոհվել է, ամուսինը՝ գերեվարվել, իսկ տունն էլ անցել է ադրբեջանցիներին. «Դեռ ոչ մի բան չեմ կարողանում պատկերացնել»», ՄեդիաԼաբ, դեկտեմբերի 12, 2020թ., Հասարակություն, https://medialab.am/117499/

467 «Հին Ջուղա. Ոչնչացման ժամանակագրություն», ՀՀ ԱԳՆ, հասանելի է եղել 2022թ.-ի մարտի 23-ին, https://www.mfa.am/en/jugha

հարգվի»: Այս կանոնը միջազգային սովորութային իրավունքի նորմ է, որը կիրառելի է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտություններում:[468] Համաձայն այս կանոնի մեկնաբանության՝ սահմանված պրակտիկան ցույց է տալիս, որ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը պահանջում է առավելագույնս պահպանել ընտանեկան միասնությունը, ընտանիքի անդամների միջև շփումը և ընտանիքի անդամների գտնվելու վայրի մասին տեղեկատվության տրամադրումը:[469] 1949թ.-ի Ժնևի IV կոնվենցիայի 27-րդ հոդվածը սահմանում է հետևյալը՝ «Պաշտպանության ենթակա անձինք բոլոր հանգամանքներում ունեն իրենց ... ընտանեկան իրավունքների հարգման իրավունք»:[470]

Համաձայն տարածաշրջանային իրավունքի՝ անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Մի քանի դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի էությունը[471] և դիրքորոշում հայտնել առ այն, որ հակամարտության համատեքստում տեղահանված անձի կողմից նախկին բնակության վայր, այսինքն՝ «տուն» վերադառնալու անհնարինությունը, այդ թվում՝ սոցիալական կապերը վերականգնելու և հարազատների գերեզմաններ այցելելու անհնարինությունը, հանդիսանում է անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի խախտում:[472] Մասնավորապես, «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարել է, որ այն նկատառումները, որոնք հանգեցրել են թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտմանը, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի մասով կիրառելի են դիմումատուի գանգատի նկատմամբ: Դիմումատուի կողմից Գյուլիստանում գտնվող իր տուն և իր հարազատների գերեզմաններ հասանելիություն ունենալու անհնարինությունը, և այն, որ կառավարությունը որևէ միջոց չի ձեռնարկել նրա իրավունքները հասցեագրելու կամ դրանց իրացման բացակայության դիմաց գոնե փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ, եղել և շարունակում է լինել անհամաչափ բեռ նրա վրա: Ուստի, Դատարանը եզրակացրել է, որ գրանցվել է դիմումատուի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների շարունակական խախտում:[473]

Այսպիսով, վկաների նկարագրած փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանի գործողությունները ռազմական հանցագործություններ են և խախտում են մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային իրավունքը: Մասնավորապես, Ադրբեջանի կառավարության կողմից աջակցություն ստացող հայատյացության և նրա ցեղասպան ու ֆաշիստական քաղաքականության արդյունքում Ադրբեջանի կողմից ոտնահարվել է խաղաղ բնակչության անձնական և ընտանեկան կյանքը հարգելու

468 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 105. հարգանք ընտանեկան կյանքի նկատմամբ» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022թ. մարտի 26-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule105

469 «Կանոն 105. Հարգանք ընտանեկան կյանքի նկատմամբ»:

470 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 12 օգոստոսի, 1949թ.), https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380

471 Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության, գործ No 2346/02 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան 29 ապրիլի, 2002թ.), Ջոնսն ընդդեմ Միացյալ Թագավորության, գործ No 42639/04 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 13 սեպտեմբերի, 2005թ.), Էլլի Պոլուհաս Դյոդսբոն ընդդեմ Շվեդիայի, գործ No 61564/00 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 3 հուլիսի, 2006թ.), Հադրի Վիոննետն ընդդեմ Շվեյցարիայի, գործ No. 55525/00 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 14 մայիսի, 2008թ.)

472 Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի [ԸՔ], No. 40167/06 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 16 հունիսի, 2015թ.,), Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի, No. 25781/94 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան 2001թ., մայիս):

473 Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի [ԺԿ]:

իրավունքը: Մասնավորապես, խաղաղ բնակչությանը զրկել են իրենց բնակության վայրեր վերադառնալու իրավունքից, իրենց հարազատների գերեզմանների հասանելիությունից, թույլ են տվել այդ գերեզմանների ոչնչացումն ու պղծումը, ինչպես նաև անհատներին զրկել են կրթության, աշխատանքի կամ ինքնազբաղվածության հնարավորություններից և եկամուտից և առաջացրել են ընտանիքների մասնատում: Այս իրավիճակը մարդկանց ստիպել է լքել իրենց տները և ապաստան գտնել տարբեր վայրերում, և պատերազմական ագրեսիայի արդյունքում նրանց պատճառվել է ֆիզիկական և հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ: Բոլոր այս փաստերը վկայում են Ադրբեջանի կողմից այս անձանց անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ոտնահարման մասին:

Սեփականության իրավունքի խախտում

«Ունեինք երկհարկանի կահավորված և վերանորոգված սեփական տուն, որի յուրաքանչյուր հարկը 100 ք/մ էր: Ունեինք տանը կից 2.200 ք/մ հողամաս և երկու ավտոմեքենա» ... իմ բոլոր գրքերն են մնացել... ահռելի գրադարան ունեինք՝ բացառիկ հավաքածուներով. շատ գրքեր՝ իրենց՝ հեղինակների կողմից ստորագրված: Այդ գրքերի մի մասը տվել էի իմ՝ Շուշիում բնակվող աղջկան: Ես ամենաշատը այդ գրադարանի կորստի համար եմ նեղվում և տառապում: Ես նկարում էի, և իմ գրեթե 175 նկարներ մնացել են թշնամու ձեռքում: Մենք արդեն Հադրութում ապրող 5-րդ սերնդի ներկայացուցիչներ էինք»:

Հադրութցի ամուսիններ[474]

Փաստագրված խախտումներ

Փաստահավաք առաքելության շրջանակում արձանագրված ամենահամատարած խախտումներից է Արցախի Հանրապետության բնակիչների սեփականության իրավունքի խախտումը. ըստ փաստահավաք նյութերի՝ թվով 122 բնակավայրեր[475] անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ, և այնտեղ թողնված շարժական գույքը անհնար է վերադարձնել տեղի մարդկանց՝ ապահովելով նրանց՝ իրենց տներ վերադառնալու անվտանգությունը: Տեղահանված բնակչության՝ իրենց տարածքներ վերադառնալու անհնարինության պատճառը Ադրբեջանի կողմից բոլոր, այդ թվում՝ պետական ամենաբարձր մակարդակով տարվող հայատյաց քաղաքականությունն է, էթնիկ զտումները, վերադարձի դեպքում կյանքից զրկվելու, առևանգվելու կամ գերեվարվելու, խոշտանգման ենթարկվելու իրական վտանգները, որոնք փաստագրված են սույն զեկույցով արձանագրված բազմաթիվ կոնկրետ դեպքերով: Պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերի հազարավոր բնակիչներ (Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի բնակավայրերի բնակիչների ընդհանուր թիվը մինչև պատերազմը կազմել է շուրջ 38.154 մարդ)[476] զրկվել են իրենց տներից, շատերը կորցրել են իրենց՝ սեփականության իրավունքով պատկանող հողատարածքները, այլ անշարժ գույք, ինչպես նաև տարբեր տեսակի շարժական գույք, որ չեն կարողացել դուրս բերել և տեղափոխել իրենց բնակավայրը լքելիս:

474 Հարցազրույց Հադրութի բնակիչների հետ, 21-ը դեկտեմբերի, 2020թ.:

475 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող համայնքների ցանկի համար՝ ներառյալ տվյալ համայնքներում բնակվող մարդկանց թվի, ինչպես նաև Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող տարածքներում պայթյունների հետևանքով անօթևան մնացած անձանց թվի մասին տեղեկությունների համար տե՛ս https://bit.ly/3vxt5tg (Տեղեկությունը տրամադրել է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմը՝ հղում կատարելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը):

476 Նույն տեղում:

Ավելին, Արցախի վերահսկողության տակ մնացած տարածքներում ռմբակոծությունների հետևանքով բազմաթիվ ընտանիքներ/անձինք մնացել են անօթևան: Ըստ Արցախի Հանրապետության իրավասու պետական մարմինների կողմից տրամադրված տվյալների՝ Արցախի հսկողության տակ մնացած տարածքներում, մասնավորապես՝ Ստեփանակերտում, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների մի շարք համայնքներում, ռմբակոծությունների հետևանքով բնակարանների/տների ոչնչացման կամ ոչ պիտանի դառնալու հետևանքով անօթևան մնացած անձանց թիվը կազմել է 1176-ը:

Արցախի Հանրապետության իրավասու պետական մարմինների կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2021թ. մայիսի 30-ի դրությամբ Արցախի վերահսկողության տակ մնացած տարածքներում գրանցված էր հրետակոծությունից վնասված 10700 շենք-շինություն, որոնցից 5064 շենք-շինություն՝ քաղաք Ստեփանակերտում, 1758-ը՝ Ասկերանի շրջանում, 3150-ը՝ Մարտունու շրջանում, 969-ը՝ Մարտակերտի շրջանում: Ընդհանուր հաշվարկով վնասվել են 295 բազմաբնակարան բնակելի շենք (2239 բնակարան), 8443 մասնավոր բնակելի տուն և շինություն, 31 ոչ պետական հիմնարկ և գրասենյակային շենք, 98 քաղաքացիական ենթակառուցվածքներ: Հիմնահատակ ավերված շինությունների թիվը կազմել է 110-ը:

Պատկեր 11.1 Բնակելի տուն Մարտունիում՝ հարվածից հետո, 11 դեկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 11.2. Բնակելի տուն Մարտունիում՝ հարվածից հետո, 11 դեկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղի բնակիչ Իվանը հայտնել է, որ գյուղում վերանորոգված 10 սենյականոց մեծ առանձնատուն է ունեցել, 20 հեկտար վարելահող. «Ցորեն էի ցանում, գարի..., երեք հեկտար չափառած հողամաս, ծառեր ունեի՝ խնձորի, տանձի»: Ակնաղբյուրում է մնացել նաև նրա գյուղատնտեսական տեխնիկան՝ «տրակտոր՝ իրա գութանով. միլիոն հարյուր հազար տվել առել էի մի տարի առաջ»,- պատմել է նա և շեշտել, որ իր եկամուտը գոյանում էր հիմնականում մրգի, ցորենի վաճառքից: Ունեցել է նաև 15 գլուխ խոշոր անասուն, 32 խոզ, 27 ոչխար, 200 հատ հավ, որոնք դարձյալ եղել են եկամուտի աղբյուր:[477]

Հադրութի շրջանի Խանձաձոր գյուղի բնակիչ Լենան հայտնել է, որ գյուղում ունեցել են երկհարկանի 3 ննջասենյակ ունեցող առանձնատուն, «շատ մեծ այգի», որտեղ շուրջ երեք հարյուր խնձորի ծառ էին տնկել, արդեն բերք էին ստանում, որն էլ եղել է իրենց եկամուտի աղբյուրը. «Ամենաքիչը երեք տոննա խնձոր էր տալիս»: Բացի սրանից՝ ունեցել են 1,5 հեկտար հողատարածք, եկամուտ են ստացել նաև ընկույզի ծառերից, որոնցից ստացվող բերքի վաճառքից վճարել են դստեր ուսման վարձը: Ունեցել են նաև «1 կով, 10 հորթ, խոզ, հավ, ղազ, 160 գառ-ոչխար»:[478]

477 Հարցազրույց Ակնաղբյուրի բնակչի հետ, 2 փետրվարի, 2021թ.:

478 Հարցազրույց Խանձաձորի բնակչի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

Պատկեր 11.3. Բնակելի տուն Կարմիր շուկա գյուղում՝ հարվածից հետո, 11 դեկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Հադրութի շրջանի Բանաձոր գյուղի բնակիչ Կարինեն (անունը փոխված է) նշել է, որ իրենց գյուղը հակառակորդի հսկողություն տակ է անցել 2020 թ. հոկտեմբերի 6-ին, ինչի պատճառով կորցրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող երկհարկանի 3 ննջասենյակ ունեցող առանձնատունը, կես հեկտար տնամերձ հողամասը, բերքատու ծառերը և 20 հեկտար հողատարածքը, որտեղ ցորեն և գարի էին ցանում ու վաճառում: Մատնանշել է նաև, որ ունեցել են 10 կով, 40-50 խոզ, 10-ից ավելի ոչխար, 100 հավ:[479]

Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի բնակիչ Ծողիկը, որն իր բնակավայրում թողել է առանձնատուն և ավտոմեքենա, նշում է, որ «նախկին պայմանները» վերականգնելու և անվտանգությունը երաշխավորելու դեպքում պատրաստ են վերադառնալ Բերձոր: Մեկ անգամ ցանկացել է վերադառնալ, սակայն խաղաղապահ զորքերի ներկայացուցիչները չեն թույլատրել՝ նշելով. «Ձեզ և Ձեր երեխաներին անվտանգության որևէ երաշխիք չենք կարող տալ»:[480]

Իշխանաձոր գյուղի (պատերազմի ավարտից հետո, հրադադարի մասին հայտարարության համաձայն, հանձնվել է Ադրբեջանին) բնակիչ Կարինեն հայտնել է, որ հրադադարի

479 Հարցազրույց Բանաձորի բնակչի հետ, 12 փետրվարի, 2021թ.:

480 Հարցազրույց Բերձորի բնակչի հետ, 29 հունվարի, 2021թ ::

հաստատումից հետո անհրաժեշտ իրեր տարհանելու նպատակով կապ է հաստատել համայնքի ղեկավարի հետ, որը հորդորել է իրեն չգալ գյուղ՝ հաշվի առնելով այն, որ առկա է անվտանգության ապահովման խնդիր: Այդ պատճառով կորցրել է ոչ միայն առանձնատունը, շուրջ 2000 քմ տնամերձ հողատարածք, այլ նաև սեփական ավտոմեքենան և այլ շարժական գույք:[481]

Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի բնակիչ Ժենիկը նշում է, որ թեև իրենց գյուղը մնացել է հայկական կողմի վերահսկողության տակ, և ինքը մեծ ցանկություն ունի վերադառնալու այնտեղ, սակայն համոզված է, որ իր և իր երեխաների անվտանգությունը երաշխավորված չէ, քանի որ նոր գծված սահմանների պայմաններում ադրբեջանական զինված ուժերը շատ մոտ են իրենց արդեն նախին բնակավայրին, և անհրաժեշտության դեպքում գյուղը լքելու հնարավորություն չի ունենա:[482]

Արմինեն (անունը փոխված է) 35 տարի ապրել է Հադրութում: Արմինեն փաստահավաք խմբին պատմել է. «Ադրբեջանական զորքի զինվորները վիդեոներ են գցել՝ ոնց են իմ տան մեջ քայլում, մեր նկարները նայում, թոռնիկիս նկարները վերցնում: Իմ հայ լինելու պատճառով են էլի մտել ու տունս էդ օրին գցել: Հայի տուն են մտել, ամեն ինչ ջարդուխուրդ արել»:[483]

Սուսաննայի վկայությամբ՝ Հադրութում գտնվող իր տունն ադրբեջանցիներն այրել են: Սուսաննան հիշում է. «Տեսանյութեր չենք տեսել, բայց շատ մարդկանց հետ ենք խոսել, հետաքրքրվել, ու ասել են, որ անտառի կողմով են մտել ու մեր մասի տները սաղ վառել»:[484]

Հատկանշական է, որ անվտանգության սպառնալիքով պայմանավորված՝ իրենց նախկին բնակավայրեր չվերադառնալու մասին են վկայել նույնիսկ Ստեփանակերտի որոշ բնակիչներ: Օրինակ, Լուսինեն հայտնում է. «Վախի մթնոլորտն ա հիմնականում տիրում, ցանկանում ենք վերադառնալ, քանի որ տանիք ունենք, ուղղակի լիովին պաշտպանված չես զգում քեզ...»:[485]

Փաստահավաք առաքելության կողմից հարցված անձանցից 216-ը նշել են, որ չեն կարող վերադառնալ իրենց տուն և կորցրել են իրենց ունեցվածքը, որովհետև իրենց համայնքները վերահսկվում են Ադրբեջանի կողմից: Ինչ վերաբերում է անշարժ գույքին, ապա հարցվածները նշել են, որ կորցրել են.

- 216 առանձնատուն (այդ թվում՝ 23-ը՝ Ասկերանում, 108-ը՝ Հադրութում, 14-ը՝ Մարտակերտում, 18-ը՝ Մարտունիում, 24-ը՝ Շուշիում, 17-ը՝ Քաշաթաղում և 20-ը՝ Շահումյանում),
- 35 բնակարան (այդ թվում՝ 1-ը՝ Ասկերանում, 4-ը՝ Հադրութում, 2-ը՝ Մարտակերտում, 27-ը՝ Շուշիում և 1-ը՝ Քաշաթաղի շրջանում),
- 177 հողամաս (այդ թվում՝ 30-ը՝ Ասկերանում, 91-ը՝ Հադրութում, 8-ը՝ Մարտակերտում, 15-ը՝ Մարտունիում, 18-ը՝ Շուշիում, 12-ը՝ Քաշաթաղում և 3-ը՝ Շահումյան շրջանում):

481 Հարցազրույց Իշխանաձորի բնակչի հետ, 28 դեկտեմբերի, 2020թ.:

482 Հարցազրույց Քոլատակի բնակչի հետ, 02 դեկտեմբերի, 2020թ.:

483 Հարցազրույց Հադրութի բնակչի հետ, 16 հունվարի, 2021թ.:

484 Հարցազրույց Հադրութի բնակչի հետ, 14 դեկտեմբերի, 2020թ.:

485 Հարցազրույց Ստեփանակերտի բնակչի հետ, 02 դեկտեմբերի, 2020թ.:

Բացի դրանից՝ վերոնշյալ հարցված անձինք թվարկել են նաև կորցրած արժեքավոր շարժական գույք, այդ թվում՝ 72 մեքենա, մոտ 2030 կով, խոզ ու ձի և 41 միավոր գյուղտեխնիկա:

Եվս 23 հարցված անձինք հայտնել են, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, չեն կարող վերադառնալ պատերազմի պատճառով սահմանամերձ դարձած բնակավայրեր և փաստացի կորցրել են իրենց՝ այնտեղ գտնվող գույքը: Վերադառնալու անհնարինությունը հատկապես վկայակոչել են Քաշաթաղի շրջանի բնակիչները (17 հոգի), քանի որ իրենց բնակավայրերը (Բերձոր, Աղավնո) տեղակայված են ընդամենը 2,5 կմ երկարություն ունեցող և խաղաղապահների կողմից ոչ ամբողջապես վերահսկվող Լաչինի միջանցք կոչվող հատվածում: Նշված անձինք մասնավորապես հայտնել են, որ փաստացի կորցրել են իրենց պատկանող 18 առանձնատուն, 1 բնակարան և 5 հողատարածք ու չեն կարող տնօրինել դրանք:

Հարցված անձինք կորսված ունեցվածքի թվում նշել են նաև այլ տեսակի անշարժ և շարժական գույք, օրինակ՝ վարսավիրանոց, ֆերմա, ալրաղաց, պահեստներ, ավտոտնակներ, մեծ թվով (հարյուրավոր) փեթակներ, ձկնաբուծարաններ, անասնագոմեր, խանութներ և այլն:[486]

Համացանցում տեղ գտած բազմաթիվ տեսանյութեր փաստում են, որ հայկական բնակչության՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրեր վերադարձի անհնարինությունը պայմանավորված է ոչ միայն կյանքին սպառնացող իրական անմիջական վտանգներով, այլ նաև նրանց թողած սեփականության գրեթե իսպառ ոչնչացված լինելու հանգամանքով: Տեսանյութերը փաստում են առանձնատների և նրանցում գտնվող ունեցվածքի, շարժական գույքի, այդ թվում՝ մեքենաների ոչնչացումը, հրկիզումը և այլն:[487]

Կարևոր է անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Հայաստանի և Ադրբեջանի հակամարտության մարդասիրական հետևանքների վերաբերյալ բանաձևին (բանաձև 2391 (2021թ.)), որտեղ նշվել է, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը մտահոգված է Լեռնային Ղարաբաղի բնակիչների՝ իրենց բնակավայրերը հարկադրաբար լքելու ծանր հոգեկան ապրումներով և ընդգծում է իր անհանգստությունը սահմանային միջադեպերի, ադրբեջանական զորքերի վերահսկողության տակ անցած

486 Ադրբեջանի վերահսկողության տակ անցած շրջաններում անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի, բազմամյա տնկարկների և հողատարածքների կորստի, Արցախի վերահսկողության տակ գտնվող տարածքներում վնասված/ավերված գույքի կորուստների վերաբերյալ մանրամասների համար տես https://bit.ly/3K61mDS (տեղեկությունը տրամադրվել է Արցախի Հանրապետության նախագահի գրասենյակի կողմից՝ հղում անելով իրավասու պետական մարմիններին):

487 @fronthadrut, https://mega.nz/file/gyZ2DDYJ#hw5uQT86n9wGeegzYSxTH5lbcelGOkpOZw6a5c3b3rQ; @fronthadrut, https://mega.nz/file/hyZmXBhL#ISRxZdIM1pnz-ilq5BBufnSYrBFHUl2jPmiSeCgPRrc; @frontshushi, “Террористы оставили свой след на стенах армянских домов и магазинов,” 18 February 2021, https://perma.cc/DW6V-NDUT; @fronthardut, https://mega.nz/folder/szRynRhR#zrUsUcs72JhGFJltkYSXVg; @fronthadrut, https://mega.nz/file/Fi5CBbKR#pbXlodjktPFaP5OCKNAXhP5iICYIGQMOMHLvhchisZ4; @fronthadrut, https://mega.nz/file/k3IhRCKb#ZAgGcbxQg1eYsRiQXQw5-MzoaV2ALdIOOapfuSZrSm4; @fronthadrut, Telegram video, https://mega.nz/file/lqJBgAhJ#1omCH3BjU0Lqcv08BvXCSYNGN5bf8tP3TBtTDr2cs2E; @fronthadrut, https://mega.nz/file/57JGhJqZ#jFmeYwDEkZHnLg14x7Q_MzLVze8BXyUzK1O3hZy4KKY; @fronthadrut, https://mega.nz/file/N2ByDZjD#PT_LVg4i-z5TWimyKs4zF3nQmi17f7woeUP93Cgouis; @fronthadrut, “Опустевший Гадрут...,” December 26, 2020, https://perma.cc/44AB-LQ8H; @fronthadrut, https://mega.nz/file/huY-inTDS#TwsQbDKV2JT7X8-8MNrGCGIiAxCM1-hnqujSbkLr9TI; Кавказский Узел, “Карабах: Победные Граффити в Разрушенном Гадруте,” December 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=QkC2Oi9CrNk; Video from Valeri Isabekyan’s Facebook page: https://mega.nz/folder/0rQDmKCQ#w0yKCcRtsC8OQqWmM1OsoA: Video from Irina Agabekyan’s Facebook page: https://mega.nz/folder/0rQDmKCQ#w0yKCcRtsC8OQqWmM1OsoA; @mediaport2020, Telegram video, https://mega.nz/file/c74UURBS#nDG5OLahUXxzdeupAqgpexbFHgkk8m5V8KZgmI2euPA;

հայկական տարածքներում առկա տարատեսակ սպառնալիքների և կանոնավոր հնչող կրակոցների կապակցությամբ: Վեհաժողովը նշել է նաև այն դժվարությունները, որոնց բախվում են Լեռնային Ղարաբաղի բնակիչները՝ կապված ապրուստի միջոցների, պատերազմի հետևանքով հասցված վնասի վերականգնման և վերացման, նոր բնակարանների ձեռքբերման, ինչպես նաև մարդու հիմնարար իրավունքների խախտումների առումով: Վեհաժողովը նաև նշել է Հայաստանում տեղահանվածների առջև ծառացած խնդիրների մասին, մասնավորապես՝ երկարաժամկետ կացարանների, շարունակական դրամական օգնության, երեխաների կրթության և ապրուստի միջոցների ապահովման հարցերի մասին, հատկապես կանանց համար:[488]

Միջազգային մարդասիրական իրավունք և սեփականության իրավունքի խախտումներ Արցախում

Տեղահանված անձանց՝ տեղահանումը պայմանավորող պատճառների վերացումից անմիջապես հետո անվտանգության պայմաններում իրենց տներ կամ մշտական բնակության վայրեր կամավոր վերադառնալու իրավունքը համարվում է միջազգային սովորութային իրավունքի կանոն,[489] որը կիրառելի է ցանկացած տիպի տարածքների նկատմամբ: Ինչ վերաբերում է գրավյալ տարածքներին, ապա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի 12.08.1949թ.-ի կոնվենցիայի 49-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

> «Արգելվում են որևէ դրդապատճառով պաշտպանության ենթակա անձանց զանգվածային կամ անհատական տեղափոխումները, ինչպես նաև բռնագաղթը գրավյալ տարածքից գրաված տերության կամ ցանկացած այլ պետության տարածք՝ անկախ այն բանից, դրանք գրավյալ են, թե՝ ոչ»:[490]

1949 թվականի Ժնևի առաջին կոնվենցիայի 50-րդ, երկրորդ կոնվենցիայի 51-րդ և չորրորդ կոնվենցիայի 147-րդ հոդվածների համաձայն՝ գույքի ապօրինի, կամայական և լայնածավալ ոչնչացումը և յուրացումը, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, հանդիսանում է լուրջ խախտում: Ժնևի 1949 թվականի չորրորդ կոնվենցիայի 53-րդ հոդվածի համաձայն՝ մասնավոր անձանց կամ պետության, համայնքների, հասարակական կամ կոոպերատիվ կազմակերպությունների անհատական կամ կոլեկտիվ սեփականություն հանդիսացող շարժական կամ անշարժ գույքի ամեն տեսակ ոչնչացումը գրավող տերության կողմից, որը չի բխում ռազմական գործողությունների բացարձակ անհրաժեշտությունից, արգելվում է:[491]

488 «2391 (2021) բանաձև. Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության մարդասիրական հետևանքները / Լեռնային Ղարաբաղի հակամարտություն»:

489 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 132. Տեղահանվածների վերադարձ» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի մարտի 26-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule132; Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck, Customary International Humanitarian Law: Volume 1: Rules, vol. 1 (Cambridge: Cambridge University Press, 2005), https://doi.org/10.1017/CBO9780511804700

490 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 12 օգոստոսի, 1949թ.), հոդ. 49, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380:

491 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա), հոդ. 53:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության համաձայն՝ գույքն անօրինական, կամայական, լայնածավալ ոչնչացնելը կամ յուրացնելը, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, պատերազմական հանցագործություն է:

Սեփականության իրավունքին առնչվող միջազգային չափորոշիչներ

Սեփականության իրավունքն ամենալայն բնորոշումներով սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ինչպես նաև մարդու իրավունքների տարածաշրջանային պայմանագրերում: Իսկ ՄԱԿ-ի «Փախստականների և տեղահանման ենթարկված անձանց համար տան և գույքի ռեստիտուցիայի վերաբերյալ սկզբունքները»[492] (Պինեյրոյի սկզբունքներ), ի թիվս այլ դրույթների, սահմանում է բոլոր փախստականների և տեղահանման ենթարկված անձանց՝ բնակելի տուն ունենալու և սեփականության վերականգնման (ռեստիտուցիայի) իրավունքը: Մասնավորապես բոլոր փախստականները և տեղահանված անձինք իրավունք ունեն վերականգնելու իրենց իրավունքը այն տան, հողի և/կամ գույքի նկատմամբ, որից նրանք հարկադրաբար կամ ապօրինաբար զրկվել են, կամ ստանալու հատուցում յուրաքանչյուր կորցրած տան, հողի և/կամ գույքի դիմաց, որը փաստացի անհնար է վերականգնել՝ ըստ անկախ և անաչառ տրիբունալի որոշման: 13-րդ սկզբունքի համաձայն՝ տնից, հողից և/կամ գույքից հարկադրաբար կամ ապօրինաբար զրկված ցանկացած անձ պետք է կարողանա ռեստիտուցիայի և/կամ հատուցման վերաբերյալ հայց ներկայացնել անկախ և անաչառ դատական մարմին, ունենա իր հայցի վերաբերյալ որոշման ընդունման և այդ որոշման մասին ծանուցում ստանալու հնարավորություն:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային փաստաթղթերին, ապա Փախստականների և տեղահանման ենթարկված անձանց գույքային հարցերի կարգավորման վերաբերյալ ԵԽ խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) համար 1708 (2010թ.) բանաձևի համաձայն՝ գույքի ռեստիտուցիան, այսինքն՝ տեղահանման ենթարկված նախկին բնակիչների օգտին իրենց սեփականության իրավունքների և ֆիզիկական տնօրինման հնարավորության վերականգնումը կամ հատուցումն անհատի իրավունքների և իրավունքի գերակայության վերականգնման համար անհրաժեշտ փոխհատուցման ձևեր են:[493]

Ավելին, սեփականության իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համար 1 արձանագրության 1-ին հոդվածով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործեր է քննել միջազգային կամ ոչ միջազգային բնույթի հակամարտությունների պատճառով տեղահանված անձանց բնակարանային և սեփականության իրավունքների վերաբերյալ, այդ թվում՝ Հյուսիսային Կիպրոսի օկուպացիայի շրջանակներում, Թուրքիայում և Ռուսաստանի Դաշնությունում

492 Մարդու իրավունքների հանձնաժողով, Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ենթահանձնաժողով, «Ֆրանսուազ Հեմփսոնի հեղինակած աշխատանքային փաստաթուղթը ներպետական օրենսդրության մեջ արդյունավետ միջոցի կիրառման իրավունքի իրացման վերաբերյալ», (ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդ, հունիսի 27, 2005թ.):

493 «Բանաձև 1708 (2010թ.) - Փախստականների և ներքին տեղահանվածների գույքային խնդիրների լուծումը», (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2010թ.), http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp ?fileid=17814&lang=en

անվտանգության ուժերի գործողությունների, Լեռնային Ղարաբաղի (Արցախ) հակամարտության և այլ կոնֆլիկտների շրջանակներում:

Մասնավորապես Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի գործն առնչվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով դիմումատուի գույքի կորստի հարցին, որով դատարանն արձանագրել է Կոնվենցիայի համար 1 արձանագրության 1-ին հոդվածով (սեփականության պաշտպանություն), Կոնվենցիայի 8-րդ հոդվածով (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և 13-րդ հոդվածով (Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք) սահմանված իրավունքների շարունակական խախտում: Ըստ նշված իրավունքների՝ դատարանը գտել է, որ դիմումատուի համար Գյուլիստանում գտնվող իր գույքին հասանելիություն ունենալու հնարավորության բացակայությունը և կառավարության կողմից դիմումատուի գույքային իրավունքները վերականգնելուն ուղղված որևէ այլընտրանքային միջոց չձեռնարկելը կամ փոխհատուցում չտրամադրելը անհաղթահարելի խնդիր են դարձել և շարունակում են այդպիսին լինել դիմումատուի համար: Նշված հիմնավորմամբ դատարանը եզրահանգել է, որ առկա է դիմումատուի՝ Կոնվենցիայի համար 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքների շարունակական խախտում:

Այսպիսով՝ այստեղ նկարագրված փաստերը ցույց են տալիս, որ Միջազգային նորմերի մարդասիրական իրավունքի կանոնների համաձայն՝ Ադրբեջանի գործողությունները ռազմական հանցագործություն են: Մասնավորապես պետության կողմից աջակցվող հայատյաց, ցեղասպան քաղաքականությունը հանգեցրել է մի իրավիճակի, որն անհնար է դարձնում տեղահանված մարդկանց վերադարձը իրենց բնակության վայրեր: Էթնիկ հայերը, որոնք ունեն սեփականություն Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում կամ հայկական ուժերի կողմից վերահսկվող այնպիսի տարածքներում, որոնք անմիջապես մոտ են ադրբեջանական ռազմական ուժերի ներկայությանը, փաստացի չունեն և չեն կարող ունենալ այդ գույքն օգտագործելու կամ տնօրինելու հնարավորություն, քանի որ վերադառնալու դեպքում նրանց կյանքն ու առողջությունը իրական սպառնալիքի տակ կլինեն:

Էկոլոգիական հանցագործություններ. հրկիզող զենքի կիրառում

xՓաստահավաք գործունեության ընթացքում հայտնաբերված մեկ այլ մտահոգիչ հարց էր հրկիզող զենքի օգտագործումը, որը հանգեցրեց նրան, որ ընտանիքները լքեն իրենց տները և գյուղերը: Որոշ վկաներ հաստատել են այս իրողությունը, ինչը նաև տեղ է գտել իրավապաշտպանների զեկույցներում: Ըստ գնահատականների՝ ոչնչացվել է ավելի քան 1800 հեկտար անտառ:[494] Առանց հստակ ռազմական անհրաժեշտության նման զենքի օգտագործումը, միջազգային օրենքների համաձայն, մարդասիրական իրավունքի խախտում է և պատերազմական հանցագործություն:

Քաշաթաղ շրջանի Բերձոր քաղաքի բնակիչ Վիկտորյան (անունը փոխված է) հայտնում է. «Երկնքից կրակ էր թափվում, և ավելի քան երեք օր անտառն այրվում էր, ոնց որ աստղեր ընկնեին երկնքից»:[495] Նա կարծիք հայտնեց, որ կիրառվել է ֆոսֆորային զենք, և տեղեկացրեց, որ դրանք օգտագործվել են Իշխանաձոր տանող ճանապարհի անտառներում:

Ծահումյանի շրջանի Դադիվանք գյուղի բնակիչ Աստղիկի (անունը փոխված է) խոսքով՝ ֆոսֆորային զինատեսակը կիրառվել է իրենց գյուղից 10-12 կմ հեռավորության վրա գտնվող անտառներում:[496] Նոյեմբերի սկզբին՝ մինչև գյուղը լքելը, զգացել է ֆոսֆորային զինատեսակների կիրառման հետևանքները. գյուղն ամբողջությամբ պատված էր վառվող անտառներից եկող ծխով, որի պատճառով չէին կարողանում նորմալ շնչել, դիմակ էին կրում, սակայն այն չէր պաշտպանում և ավելի էր դժվարացնում շնչելը:

Շուշիի շրջանի Քարինտակ գյուղից Վլադիմիրը պատմել է, որ տեսել է հրկիզող զենքերը, որոնք «ասես «հրավառություն լինեին» և երկնքից թափվում էին Սղնախի անտառների վրա:[497] Նա ենթադրել է, որ դա ֆոսֆորային զենք է: Այդ ամենը տեսանելի է եղել Քարինտակ գյուղից, որից հետո հրդեհ է բռնկվել, և անտառից ծուխ է բարձրացել:

Ստեփանակերտի բնակիչ Ժաննայի (անունը փոխված է) խոսքով՝ իր ամուսնու հայրը, գտնվելով Շուշիի անտառների հարևանությամբ գտնվող իրենց տան մոտ, վիրավորվել է ֆոսֆորի հիմքով հրկիզող զենքի օգտագործման հետևանքով (ըստ ամուսնու տեղեկությունների):[498]

Այս առաքելության ընթացքում 11 հարցվածներ նշել են, որ իրենք անձամբ ականատես են եղել հրկիզող զենքի կիրառմանը կամ զգացել են դրա հետևանքները: Եվս 12 հարցված հայտնել է, որ նման զենքի օգտագործման մասին լսել են իրենց ընկերներից և

494 «Կառավարության քաղաքականությունը նպաստում է սիրիացիներին որպես վարձկան օգտագործելու դեպքերի աճին» («Սիրիացիները հանուն ճշմարտության և արդարության», նոյեմբերի 2, 2020թ.), էջ 21, http://stj-sy.org/wp-content/uploads/2020/11/Government-Policies-Contributing-to-Growing-Incidence-of-Using-Syrians-as-Mercenary-Fighters.pdf

495 Հարցազրույց Բերձորի բնակչի հետ, 22 փետրվարի, 2021թ.:

496 Հարցազրույց Դադիվանքի բնակչի հետ, 19 հունվարի, 2021թ.:

497 Հարցազրույց Քարինտակի բնակչի հետ, 10 դեկտեմբերի, 2020թ.:

498 Հարցազրույց Ստեփանակերտի բնակչի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

հարազատներից: Բացի նշվածներից՝ յոթ հարցվածներ տեղյակ են եղել այնպիսի դեպքերի մասին, երբ հրկիզող զենքի կիրառման հետևանքով խաղաղ բնակիչներն այրվածքներ են ստացել: Հարցվածներն ընդհանուր առմամբ հայտնել են Արցախի՝ Ծուշիի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Ծահումյանի և Քաշաթաղի շրջաններում հրկիզող զենքի օգտագործման մասին, այլ կերպ ասած՝ Արցախի բոլոր շրջաններում:

Հարցվածներից շատերը նշել են, որ անտառները, որտեղ օգտագործվել է զենքը, իրենց համար մեծ նշանակություն ունեին, հատկապես որպես թթվածնի աղբյուր և մաքուր միջավայր: Դրանք նաև ծառայում էին որպես անասնապահական արոտավայրեր, որտեղից նաև հատապտուղներ և այլ անհրաժեշտ բույսեր էին հավաքվում, ինչպես նաև օգտագործում որպես վառելափայտի աղբյուր՝ ճաշ պատրաստելու և ջեռուցման համար:

Հարցվածները վստահելի վկաներ են մի քանի հիմնավորմամբ. նրանք տրամադրել են զենքի կիրառման նույնական նկարագրություններ՝ հիմնականում բնորոշելով դրանք որպես կրակ կամ երկնքից ընկնող կայծեր, հայտնել, որ հրկիզող զենքի օգտագործման հետևանքով անտառային հրդեհներ են առաջացել, որոնք, ըստ հարցվածներից մեկի (Աստղիկը՝ Ծահումյան շրջանի Դադիվանք գյուղից), դեռևս շարունակվում էին 2020 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ: Բացի այդ, հարցվածների կողմից հրկիզող զենքի օգտագործման և դրանց հետևանքների նկարագրությունները համընկնում են տեսաձայնագրություններով փաստագրված օբյեկտիվ ապացույցների հետ,[499] Արցախի և Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանների հրապարակած համատեղ զեկույցներով և իրականացրած հրապարակումներով հաղորդվող տեղեկություններին,[500] ինչպես նաև Արցախի և Հայաստանի պետական գերատեսչությունների հայտարարությունների հետ:[501] Արցախի նախագահի աշխատակազմը, հղում կատարելով Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությանը, նույնպես տեղեկացրել է հրկիզող զենքի (սպիտակ ֆոսֆոր պարունակող) օգտագործման որոշ դեպքերի մասին:[502]

499 Peyotto Technologies, "Ադրբեջանն օգտագործում է սպիտակ ֆոսֆոր պարունակող զենք. փաստահավաք աշխատանքներով հաստատվել է. Արման Թաթոյան. ՏԵՍԱՆՅՈՒԹ," Ֆակտոր տեղեկատվական կենտրոն, October 30, 2020, https://factor.am/302905.html; ԱՀ պաշտպանության բանակ NKR Defense Army, "Ադրբեջանական Կողմը Կիրառել է Ֆոսֆորային Զինատեսակներ," October 31, 2020, Youtube video, https://mega.nz/file/hmZW0ZxL#vEkVx-If-U-YfA8hAtGmNHGOPNexDtdwNiWleWa5d-iY; Ani Avetisyan and Hovhannes Nazaretyan, "Confirmed by Evidence: Azerbaijan Did Use White Phosphorus in Artsakh," Fact Investigation Platform, November 13, 2020, https://fip.am/en/13682; Karabakh Records_English (@karabakhrecords_english), "The Artsakh Defense Army Presented Indisputable Facts...," October 30, 2020, https://mega.nz/file/wu4AGS4Q#wYEavzUTG-mMSHzvY07JJyuXgZ8207daRXgwHBLEFBE.

500 «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) քաղաքացիական օբյեկտների դեմ զանգվածային ոչնչացման զինամթերքի (հրկիզող զենքի) կիրառման մասին արտահերթ զեկույց» (Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 7 նոյեմբերի, 2020թ., https://artsakhombuds.am/en/document/761; Arman Tatoyan, "Ադրբեջանն Օգտագործում է, Ըստ Այս Պահի Տվյալների, Ֆոսֆոր Պարունակող Զենք, Որ Ունի Քիմիական Զենքի Տարրեր:," Facebook, October 30, 2020, https://perma.cc/H6ZD-LVWH; Artak Beglaryan (@Artak_Beglaryan), "Based on Preliminary Data, #Azerbaijan Used Banned White Phosphorus Munitions over #Artsakh/#Karabakh Causing Fires to Forests next to Civilian Communities.," Twitter, October 31, 2020, https://perma.cc/6DT8-D2X8; @karabakh_news, December 5, 2020, Telegram post, https://perma.cc/JJW3-D9UW?type=image.

501 Զինուժ Media, "Ադրբեջանը արգելված՝ ֆոսֆորային զինատեսակներ է կիրառում Արցախի դեմ," October 31, 2020, Youtube video, https://www.youtube.com/watch?v=qk4WBNmiygo; "Ադրբեջանն արգելված՝ ֆոսֆորային զինատեսակներ է կիրառում Արցախի դեմ," Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, October 31, 2020, https://perma.cc/P9XL-7J6X; Zohrab Mnatsakanyan (@ZMnatsakanyan), "This time #Azerbaijan used phosphorus munitions in #Artsakh over forests close to residential areas with many civilians.," Twitter, October 31, 2020, https://perma.cc/A8E2-DJX2; Artak Beglaryan (@Artak_Beglaryan, "Look How #Azerbaijan Armed Forces Burnt Aknaghbyur Village in #Artsakh/#Karabakh.," Twitter, October 29, 2020, https://perma.cc/CW6A-AUR8

502 Այսպես, տրամադրված տեղեկությունների համաձայն՝
- Արցախի Քաշաթաղի շրջանի Խաչգետիկ գյուղի հյուսիսային մասում Ադրբեջանի կողմից օգտագործվել է հրկիզող զենք, որի հետևանքով այրվել է մոտ 25 հեկտար դաշտավայր:
- Արցախի Մարտունու շրջանի Նորշեն համայնքի և Մարտունի քաղաքի մոտակայքում Ադրբեջանի կողմից օգտագործվել են քիմիական զենքի տարրեր (սպիտակ ֆոսֆոր) պարունակող, միջազգային

Ավելին, այս նկարագրությունները համընկնում են զինված այլ հակամարտություններում հրկիզող զենքի (հատկապես սպիտակ ֆոսֆոր պարունակող) և դրա օգտագործման պաշտոնական և փաստաթղթավորված նկարագրություններին: Մասնավորապես, ըստ զենքի կիրառման իրավունքի մասին հանրագիտարանի (Weapons Law Encyclopedia), սպիտակ ֆոսֆորի այրումը առաջացնում է ինտենսիվ ջերմություն, պայծառ լույս և խիտ սպիտակ ծուխ: Սպիտակ ծուխն առաջանում է օդում առկա խոնավության հետ ֆոսֆորի պենտօքսիդի փոխազդեցության պատճառով:[503] Բացի դրանից՝ հրկիզող զենքի օգտագործումը նույն կերպ է նկարագրվել հեղինակավոր «Human Rights Watch»-ի կողմից (HRW), որը Իսրայելի՝ Գազայում սպիտակ ֆոսֆորի օգտագործման վերաբերյալ 2009թ.-ի վերլուծությունում[504] սպիտակ ֆոսֆոր պարունակող հրկիզող զենքը որակել է որպես կրակի անձրև: Ռազմական այլ հակամարտություններում հրկիզող զենքի օգտագործման մասին վկայությունները (լուսանկարներ և տեսանյութեր) փաստում են նույն պատկերը, ինչը նկարագրված է Արցախում ականատեսների կողմից:[505] Հարցվածները տրամադրել են նաև նույն տեղեկությունը հրկիզող զենքի կիրառման ժամանակահատվածի մասին: Այս պնդումները նույնպես համընկնում են վերը նշված օբյեկտիվ ապացույցների հետ:

Գնահատման արդյունքում ԲԱՏՀ փորձագետը բարձր վստահությամբ եզրակացրել է, որ Արցախում իրականացված հարձակումների ընթացքում փաստագրված այս զինատեսակների մի մասը հրկիզող զինատեսակներ են եղել: Հիմնվելով զինատեսակների վիզուալ հետագծերի վրա՝ ԲԱՏՀ փորձագետը չափավորից բարձր վստահությամբ եզրակացրել է, որ այս զինատեսակներից որոշները պարունակել են թերմիտ, մագնեզիումի համաձուլվածք կամ գործնականում համանման այլ հրկիզող նյութ (տե՛ս, օրինակ, Պատկերներ 1 և 2-ը՝ Պատկեր 3-ի հետ համեմատության մեջ), իսկ մյուս զինատեսակները պարունակել են սպիտակ ֆոսֆոր (Պատկեր 4-ը համեմատել Պատկերներ 5-ի և 6-ի հետ):

Հրկիզող զինատեսակները հաճախ տարածում են զգալի քանակությամբ դյուրավառ «հրդեհային բաղադրիչներ»: Օրինակ, 9M22S հրթիռը (որտեղ տեղադրված է 9N510 մարտագլխիկ) կրում է 180 հրկիզող տարր, որոնք նախատեսված են լայն տարածության վրա ցրիվ գալու համար:

Հաշվի առնելով հարցվածների կողմից տրամադրված նույնական տեղեկությունները դեպքերի նկարագրությունների, հրկիզող զենքի կիրառման ժամանակահատվածի և

կոնվենցիաներով արգելված զինատեսակ և հրկիզող զենք: Տարածքի վնասման մակերեսը հայտնի չէ:

- Արցախի Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի մոտակայքում՝ Աղդարա սարի վրա, Նոր Կարմիրավան գյուղի մոտակայքում, Թալիշ գյուղի արևմտյան մասում, Վարնկաթաղ, Մաղավուզ, Ակնաբերդ, Զագլիկ, Հաթերք գյուղերի հարակից լեռնաանտառային տեղանքում և Զարդախաչ գյուղի ուղղությամբ Ադրբեջանի կողմից կիրառվել է հրկիզվող զենք, որի պատճառով այրվել է մոտ 7 հեկտար տարածք:
- Արցախի Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի հարակից տարածքներում կիրառվել են քիմիական զենքի տարրեր (սպիտակ ֆոսֆոր) պարունակող, միջազգային կոնվենցիաներով արգելված զինատեսակներ, որի հետևանքով հրդեհներ են բռնկվել մոտ 4000-5000 հեկտար անտառապատ տարածքներում:

503 «Սպիտակ ֆոսֆորային զինամթերք», Weapons Law Encyclopedia, հասանելի է եղել 2022 թվականի մարտի 26-ին, http://www.weaponslaw.org/weapons/white-phosphorus-munitions
"Rain of Fire: Israel's Unlawful Use of White Phosphorus in Gaza," Human Rights Watch, March 25, 2009, https://www.hrw.org/video-photos/photo-essay/2009/03/25/rain-fire-israels-unlawful-use-white-phosphorus-gaza.

504 "Rain of Fire: Israel's Unlawful Use of White Phosphorus in Gaza," Human Rights Watch, March 25, 2009, https://www.hrw.org/video-photos/photo-essay/2009/03/25/rain-fire-israels-unlawful-use-white-phosphorus-gaza.

505 TRT World, "How White Phosphorus Works," June 23, 2017, YouTube video, https://mega.nz/folder/ciYAFLCC#MNKEd-6Hy5gktkDLjjP6Y9Q; Human Rights Watch, "Incendiary Weapons: Human Cost Demands Stronger Law," November 9, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=90DmiMX9Lvg; Robert Hackwill, "Iraqi Government Accused of Firing White Phosphorus Shells into Mosul," Euronews, June 5, 2017, sec. news_nocomment, https://www.euronews.com/2017/06/05/iraqi-government-accused-of-firing-white-phosphorus-shells-into-mosul.

հետևանքների մասին, ինչպես նաև նման զենքի կիրառման վերաբերյալ հարցվածների հայտարարությունները հաստատող օբյեկտիվ ապացույցները՝ կարող ենք փաստել, որ փարատվում է դրանց իրական կիրառման վերաբերյալ ցանկացած կասկած: Ի դեպ, 2021թ.-ի վերջին ԱՄՆ Կոնգրեսը փոփոխություններ կատարեց 2022 թվականի «Պետական պաշտպանության ոլորտում լիազորությունների մասին» օրենքում (NDAA)՝ պահանջելով նաև անցկացնել հետաքննություն 2020 թվականի պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից խաղաղ բնակչության դեմ սպիտակ ֆոսֆորի և այլ արգելված զենքերի կիրառման վերաբերյալ:[506]

Պատկեր 12.1. Հրկիզող տարրերը թափվում են անտառային տարածքի վրա, 2020թ. (Աղբյուրը՝ Yerevan Today):

Պատկեր 12.2. Հրկիզող տարրերը թափվում են անտառային տարածքի վրա, 2020թ. (Աղբյուրը՝ Yerevan Today):

506 Շմարտության և արդարության կենտրոն, «Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատը 2021 թվականի սեպտեմբերի 22-ին փոփոխություն է կատարել 2022 թվականի Ազգային պաշտպանության լիազորման ակտում (NDAA)՝ դադարեցնելով ԱՄՆ ռազմական օգնությունը Ադրբեջանին և կոչ անելով անհապաղ և անվերապահ վերադարձնել բոլոր հայ ռազմագերիներին և գերեվարված խաղաղ բնակիչներին», ֆեյսբուքյան գրառում, 22 սեպտեմբերի, 2021թ. https://www.facebook.com/CFTJustice/posts/pfbid02f7L5e1zjhXkjCqmPAF8RHmbEsmvkwtMRRXij8vx-9Tck9wG5f4QvNffcDUSwD2cruI, Ճշմարտության և արդարության կենտրոն:

Պատկեր 12.3. Ուկրաինայում կիրառված հրկիզող զինատեսակներ, 2014թ. (Աղբյուրը՝ Vice News):

Պատկեր 12.4. NGK-001-P001 տեղամասում սպիտակ ֆոսֆորային հրկիզող զինամթերքի կողմից անտառապատ տարածքին հասցված վնասը, 2020 թվականի հոկտեմբեր (Աղբյուրը՝ ԼՂՀ ՊԲ):

Պատկեր 12.5. Սիրիայում կիրառված սպիտակ ֆոսֆորային զինատեսակ, 2017թ., Սիրիա (Աղբյուրը՝ Source: TRT World):

Պատկեր 12.6. Արևելյան Ուկրաինայում փաստագրված 9M22S հրթիռ, 2014թ. (Աղբյուրը՝ Mark Hiznay/ Human Rights Watch):

Վերոնշյալ փաստերով ապացուցված հրդեհային զենքի կիրառումը ռազմական հանցագործություն է, քանի որ այս հակամարտությունը միջազգայնացված է, գործում են Ժնևի կոնվենցիաները, որոնց կոպիտ խախտումները հավասարազոր են պատերազմական հանցագործության: Ըստ միջազգային մարդասիրական իրավունքի ԿԽՄԿ վերլուծության՝ նման ծանր խախտումները ներառում են «գույքի լայնածավալ ոչնչացում կամ յուրացում, որը չի հիմնավորվում ռազմական անհրաժեշտությամբ և իրականացվում է ապօրինաբար և դիտավորյալ»:[507] Ավելի կոնկրետ պետք է ընդգծել, որ ԿԽՄԿ վերլուծությունը ռազմական հանցագործություն է որակում «հարձակում նախաձեռնելը՝ կանխավ գիտակցելով, որ այն այնպիսի լայնածավալ, երկարաժամկետ և ծանր վնասներ կհասցնի բնական միջավայրին և ակնհայտորեն կգերազանցի կոնկրետ ու անմիջական ռազմական գործողությունները»:[508] Այս դրույթը ներառված է նաև Միջազգային քրեական դատարանի ստատուտում:[509] Ինչպես մատնանշում է ԿԽՄԿ-ն, կանոնները սահմանվում են բնական միջավայրի պահպանման

507 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 156. Պատերազմական հանցագործությունների սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի մարտի 26-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_cha_chapter44_rule156

508 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 156. Պատերազմական հանցագործությունների սահմանում», մաս (ii)

509 Տես Id. Also consider Fourth Geneva Convention, Art. 147; First Protocol Additional, Art. 48, 51, 52, 54; Rio Declaration on Environment and Development; Advisory Opinion on the Legality of the Threat or Use of Nuclear Weapons; the Environmental Modification Convention.

և խաղաղ բնակչության անվտանգության ապահովման նպատակով:[510] Ավելին, այս կանոնները հիմնավորում են ռազմական գործողություններն ըստ անհրաժեշտության արգելելու, խաղաղ բնակիչների և կոմբատանտների միջև տարբերակում դնելու և փոխադարձ հարձակումները կանխելու հիմնարար քաղաքականությունները:

Այսպիսով՝ պետք է նկատի ունենալ, որ գյուղի բնակիչների կյանքը կենսապահովման նվազագույն մակարդակ ունի և սերտորեն կապված է նրանց գյուղերը շրջապատող անտառների հետ: Այս դրույթի ներքո հատկապես պետք է արձանագրել՝ փաստերը ցույց են տալիս, որ, համաձայն միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների և նորմերի, Ադրբեջանի գործողությունները հավասարազոր են պատերազմական հանցագործությունների: Դրանից զատ, քանի որ նշված գործողությունների կարճաժամկետ հետևանքը գյուղերից ընտանիքների հարկադիր տեղահանումն էր, իսկ երկարաժամկետ հետևանքի առումով խաթարվել է այդ կենսունակ համայնքների կայունությունը, ապա այս պատերազմական հանցագործությունները փաստում են նաև էթնիկ զտումներ, իսկ երկարաժամկետ իմաստով դիտարկվում է նաև ցեղասպանություն:

510 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա), հոդ. 147, «Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն (I), 1977թ. 48, 51, 52, 54, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/470, «Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին, 1992թ.» (Միավորված ազգերի կազմակերպություն, 1992թ.), https://www.jus.uio.no/lm/environmental.development.rio.declaration.1992/portrait.a4.pdf, «Միջուկային զենքի սպառնալիքի կամ օգտագործման օրինականության վերաբերյալ խորհրդատվական կարծիք (Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից խորհրդատվական կարծիքի հայց)» (Արդարադատության միջազգային դատարան (ICJ), հուլիսի 8, 1996թ.), https://www.refworld.org/cases,ICJ,3ae6b67f14.html, «Շրջակա միջավայրի փոփոխման տեխնոլոգիաների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման մասին կոնվենցիա» (Միավորված ազգերի կազմակերպության զինաթափման հարցերով գրասենյակ, հոկտեմբերի 5, 1978թ.), https://www.un.org/disarmament/enmod/

Հանցագործություններ մշակութային սեփականության դեմ

«...յուրաքանչյուր ժողովրդի մշակութային արժեքներին հասցվող վնասը վնաս է ողջ մարդկության մշակութային ժառանգությանը, քանզի յուրաքանչյուր ժողովուրդ իր ավանդն ունի համաշխարհային մշակույթի մեջ»: [511]

44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը մի շարք հարձակումներ են իրականացրել Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղ) պատմական և մշակութային կառույցների ուղղությամբ: Արցախի տարածքում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությունը՝ ներառյալ եկեղեցիները, վանքերը, հնավայրերը, խաչքարերը, տարբեր հուշակոթողները և մատուռները, ենթարկվել են ոչնչացման կամ վնասվել են ադրբեջանական վերահսկողության տակ անցնելուց հետո: Հարկ է նշել, որ նշված կառույցների նկատմամբ հարձակումները միայն մշակութային սեփականության դեմ ուղղված հանցագործություններ չեն, այլ նաև ուղղված են հայ ժողովրդի դավանանքի ազատության դեմ:

Ստորև ներկայացված ապացույցներից ակնհայտ է դառնում, որ Արցախի պատմական և մշակութային կոթողների նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը դրսևորվում է երկու եղանակով.

- Արցախի պատմական և մշակութային կոթողների ֆիզիկական ոչնչացում, վնասում և վանդալիզմ,
- Արցախի պատմական և մշակութային կոթողների հայապատկանության ժխտում և դրանց վերաբերյալ տարվող «կովկասյան ալբանական» ծագման մասին կեղծ քարոզ:

Երկու մոտեցումներն էլ ՄՄԻ-ի և մարդու իրավունքների նորմերի խախտումներ են:

Ստորև քննարկվում են ինչպես վերջին շրջանում Ադրբեջանի կողմից իրականացված հայկական պատմական, մշակութային և կրոնական կոթողների ֆիզիկական ոչնչացման, վնասման և վանդալիզմի դեպքերը, այնպես էլ նախկինում կատարված համանման գործողությունները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից պատմական, մշակութային և կրոնական կոթողների հայապատկանության ժխտումը և դրանց «կովկասյան ալբանական» ծագում վերագրելու կեղծ քարոզը և այս հանցագործությունների դեմ կիրառելի իրավական նորմերը: Իրավական եզրակացությունն այն է, որ Ադրբեջանը գործել է և շարունակում է գործել պատերազմական հանցագործություններ:

511 «Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի կոնվենցիա» (ՅՈՒՆԵՍԿՕ, 1954թ.), https://en.unesco.org/protecting-heritage/convention-and-protocols/1954-convention

Վերջին շրջանում Արցախի պատմական և մշակութային կոթողների ֆիզիկական ոչնչացումը, վնասումը և վանդալիզմը

Փաստահավաք առաքելության հավաքած տվյալներով 2021 թվականի օգոստոսի դրությամբ ֆիզիկական ոչնչացման, վնասման կամ վանդալիզմի է ենթարկվել 29 եկեղեցի, հուշակոթող և թանգարան:

Եկեղեցիներ, վանքեր, կրոնական տեղավայրեր

«Արցախի Շուշի քաղաքի «Ավան Պլազա» հյուրանոցի հարևանությամբ մեր թշնամու մզկիթն է: Մենք վերականգնել ենք այդ մզկիթը 27 տարվա ընթացքում, իսկ նրանք ոչնչացնում և հիմնահատակ քանդում են անում մեր հուշակոթողները»:

Արսեն (անունը փոխված է), Շուշիի 48-ամյա բնակիչ[512]

Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցի, 1888թ.

2020 թվականի հոկտեմբերի 8-ին երկու անգամ թիրախավորվել և հրթիռակոծվել է Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին (Պատկերներ 13.3, 13.4 և 13.5): [513]Եկեղեցին գտնվում է Շուշի քաղաքի կենտրոնում՝ Ղազանչեցոց փողոցում՝ ռազմական գործողությունների գոտուց դուրս: Առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորի Ադրբեջանի պնդումները, թե Արցախի իշխանությունները փոխել են եկեղեցու նպատակայնությունը և այն որպես վահան օգտագործել ռազմական կառույցները կամ զինվորականներին պաշտպանելու նպատակով: Ավելին, ադրբեջանցիների կողմից հարված հասցնելու պահին եկեղեցու նկուղը որպես ապաստարան է ծառայել Շուշի քաղաքի խաղաղ բնակիչների համար: Հարձակումներից վնասվել է եկեղեցու տանիքը՝ առաջացնելով մոտավորապես մեկ մետր լայնություն ունեցող անցք գլխավոր գմբեթից անմիջապես հարավ, մասամբ վնասվել է նաև գլխավոր գմբեթը: Եկեղեցու վրա հարձակումները կրել են դիտավորյալ բնույթ, ինչը հաստատվում է նաև դրանց քանակով: Մի քանի ժամվա տարբերությամբ իրականացվել է երկու հարձակում. ընդ որում՝ առաջին հարվածը հասցվել է մոտավորապես ժամը 13:00-ին, իսկ երկրորդը՝ 16:30-ին: Երկու դեպքում էլ թիրախ է դարձել եկեղեցու տանիքի նույն հատվածը:[514]

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին կարևոր դեր ունի ողջ հայության մշակութային և կրոնական կյանքում: Այս պատմամշակութային կոթողը հայ ժողովրդի

512 Հարցազրույց Շուշիի բնակչի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

513 «Մշակութային վանդալիզմ. հրետակոծվել է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին», Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 8 հոկտեմբերի, 2020թ., https://escs.am/am/news/7277

514 2019 թվականի հոկտեմբերի 20-ի, 2020 թվականի ապրիլի 3-ի և 2020 թվականի սեպտեմբերի 14-ի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) տաճարի լուսանկարները հասանելի են հետևյալ հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7200957/

համար ունի նաև առանձնակի զգացական նշանակություն: Վերջինիս վառ վկայությունն է այն, որ 2008 թվականի հոկտեմբերի 16-ին 500 ամուսնական զույգ իր պսակադրման արարողությունը կատարել է հենց այս եկեղեցում (Պատկեր 13.2): Սուրբ Ամենափրկիչն Արցախի թեմի կենտրոնն է և ընդգրկված է Շուշի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում, Արցախի խորհրդանիշներից մեկն է: Եկեղեցին խոշոր չափերի ճարտարապետական հուշարձան է, որի ճակատները երեսպատված են տեղական սրբատաշ կաթնագույն կրաքարով: Այն ունի 34,7մ երկարություն, 23մ լայնություն և 35մ բարձրություն: Եկեղեցին հարուստ է իր դռներին, լուսամուտների կամարների վրա և այլ հատվածներում արված զարդաքանդակներով: Տաճարի հարավային դռան գլխամասում առկա է շինարարական արձանագրություն, ըստ որի՝ եկեղեցին կառուցվել է 1868-1887 թվականներին: Պատերին առկա են հայատառ բազմաթիվ արձանագրություններ: Եկեղեցին արցախյան 1-ին պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից օգտագործվել է որպես զինապահեստ: Այդ պատերազմի ընթացքում վնասվել էին գմբեթը և վերջինիս հարակից մասը, որոնք 1998թ. վերանորոգվել էին:

Եկեղեցու վրա հարձակման դեպքերը փաստագրվել են նաև «Human rights watch» կազմակերպության կողմից:[515] Զեկույցում մասնավորապես նշվում է, որ պայթյունից հետո բեկորներ են մնացել եկեղեցու տարածքում: Լրատվամիջոցներում շրջանառվող լուսանկարներում տեսանելի են պայթյունի հետևանքները և կրակոցի բեկորները և օգտագործված զինամթերքի մնացորդները, որոնց միջոցով կարելի պարզել, թե ինչ զինատեսակ է կիրառվել: Օրինակ, հռթիռային լողակների կամ թևերի հայտնաբերումը վկայում է, որ օգտագործվել է տերմինալ ուղղորդման համակարգ: Այսպես, «Human rights watch»-ը արձանագրել է, որ եկեղեցին թիրախավորվել է բարձր ճշգրտության զենքով: «Եկեղեցու վրա ուղղված երկու հարվածները, մասնավորապես, երկրորդը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ լրագրողներն ու այլ քաղաքացիական անձինք հավաքվել էին եկեղեցում. այն կարծես դիտավորյալ բնույթ է կրել»,[516]- ասել է «Human Rights Watch»-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնօրեն Հյու Ուիլյամսոնը:

Այդ հարվածները պատահական բնույթ չեն ունեցել: Շուշիի բնակիչ Ռոմանը նշում է, որ եկեղեցու վրա առաջին հարձակումից հետո տեսել է եկեղեցու գմբեթին առաջացած անցքը, երկրորդ հարվածը նկարագրելիս նշում է, որ այն այնքան ճշգրիտ է եղել, որ նույն խոցված անցքով է «ներս ընկել»:[517] Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը թեև հերքեց, որ հարձակումը դիտավորյալ էր, և եկեղեցին «ռազմական թիրախների մեջ չէր», այնուամենայնիվ հարվածները հասցվել են երկու անգամ, ժամերի տարբերությամբ:[518] «Նույնիսկ եթե հարձակումը եղել է պատահական, դա չի արդարացնում ադրբեջանական ռազմական ուժերի այդ գործողությունը»,- նշել է «Human Rights Watch»-ը: Եկեղեցու հրթիռակոծման վերաբերյալ հատուկ զեկույց է հրապարակել նաև Արցախի մարդու իրավունքների պաշտպանը, որտեղ նաև ներկայացված է եկեղեցու գտնվելու վայրի քարտեզը, ինչից երևում է, որ այն շրջապատված է եղել միայն քաղաքացիական ենթակառուցվածքներով:[519]

515 "Azerbaijan: Attack on Church Possible War Crime," Human Rights Watch, December 16, 2020, https://www.hrw.org/news/2020/12/16/azerbaijan-attack-church-possible-war-crime.

516 "Azerbaijan: Attack on Church Possible War Crime."

517 Հարցազրույց Շուշիի բնակիչ Ռոմանի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

518 Nagorno-Karabakh: President Ilham Aliyev speaks to the BBC (BBC News, 9 November 2020): https://www.bbc.co.uk/news/av/world-europe-54865589

519 «Արտահերթ զեկույց Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարի դեմ

Այսինքն՝ չկան փաստեր, որոնք կհաստատեն, թե եկեղեցուց անթույլատրելի հեռավորություն վրա տեղակայված են եղել ռազմական կառույցներ: Այս փաստական հանգամանքներից ելնելով՝ եկեղեցուն կրկնակի հարված հասցնելը վկայում է դիտավորյալ հարձակման մասին:

Հայկական մշակութային կոթողների, տվյալ դեպքում Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու նկատմամբ վանդալիզմի քաղաքականության վկայություն է նաև այն, որ ադրբեջանական զորքերի վերահսկողության տակ անցնելուց՝ նոյեմբերի 9-ից հետո, քանդվել են եկեղեցու պատերը: Վանդալիզմի ենթարկված եկեղեցու վերաբերյալ լուսանկարներ են տեղադրվել համացանցում նոյեմբերի 10-ից 14-ը (Պատկեր 13.8):[520]

2021 թվականի մայիսի 5-ին լուսանկարներ տարածվեցին համացանցում, որոնցում երևում է, որ Ադրբեջանը սկսել է եկեղեցու ճարտարապետական տեսքի փոփոխման աշխատանքներ կատարել:[521] Եկեղեցին պատված է հայկական արձանագրություններով, և եկեղեցու տեսքի փոփոխումը նպատակ ունի՝ ջնջելու նրա հայկականության պատմական ապացույցները (Պատկեր 13.9):

Պատկեր 13.1. Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին նախքան հրթիռակոծումը, 2013թ. (Աղբյուրը՝ Վիկիպեդիա):

ադրբեջանական նպատակաուղղված հարձակումների մասին՝ որպես պատերազմական հանցագործություն և մարդկության դեմ հանցագործություն» (Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, 20 հոկտեմբերի, 2020թ.), https://artsakhombuds.am/hy/document/740

520 «Վանդալիզմի է ենթարկվել Շուշիի հայկական Ղազանչեցոց եկեղեցին», Հայաստանի հանրային ռադիո, 14 նոյեմբերի, 2020թ., https://en.armradio.am/2020/11/14/armenian-ghazanchetsots-church-in-shushi-vandalized/

521 «Հայաստանի արտաքին գործերի նախարարության հայտարարությունը Սուրբ Ղազանչեցոց տաճարում Ադրբեջանի կողմից իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ» (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 4 մայիսի 2021թ.), https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/05/04/mfa_statement__ghazanchetsots/10927

Պատկեր 13.2. 500 ամուսնական զույգի պսակադրման արարողությունը Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցում, 16 հոկտեմբերի, 2008թ. (Աղբյուրը՝ Iammedia.am):

Պատկեր 13.3. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին հրթիռակոծումից հետո, 8 հոկտեմբերի, 2020թ. (աղբյուր՝ Արցախի մարդու իրավունքների պաշտպան):

Պատկեր 13.4. Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին հրթիռակոծումից հետո (Աղբյուրը՝ Արցախի մարդու իրավունքների պաշտպան):

Պատկեր 13.5. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին հրթիռակոծումից հետո, 8 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Արցախի մարդու իրավունքների պաշտպան):

Պատկեր 13.6. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին հրթիռակոծումից հետո, 14 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Պատկեր 13.7. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին հրթիռակոծումից հետո, 15 փետրվարի, 2021թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Պատկեր 13.8. Շուշիի վանդալիզմի ենթարկված Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին, նոյեմբեր, 2020թ. (Աղբյուրը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական կենտրոն):

Պատկեր 13.9. Ադրբեջանը սկսել է Ղազանչեցոց եկեղեցու ճարտարապետական տեսքի փոփոխման աշխատանքներ իրականացնել, 3 մայիսի, 2021թ. (Աղբյուրը՝ Հայաստանի հանրային ռադիո):

Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցի, Շուշի, 1818 թվական

Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին կառուցվել է 1818 թվականին՝ նախկին Ղարաբաղցոց փայտաշեն եկեղեցու փոխարեն: Այն ունի յուրահատուկ ճարտարապետական հորինվածք, որով էլ առանձնանում է Արցախի մյուս եկեղեցիներից:

Շուշի քաղաքի՝ ադրբեջանական վերահսկողության տակ անցնելուց հետո տեսանյութ[522] և լուսանկարներ տարածվեցին, որից երևում է, որ պայթեցվել են եկեղեցու տանիքը և զանգակատունը (Պատկեր 13.10 և 13.11):[523] ԲԱՏՀ փորձագիտական եզրակացության համաձայն՝ եկեղեցուն վնաս պատճառելու հավանական ժամանակահատվածը եղել է 2020 թ. նոյեմբերի 1-ից 15-ը:[524]

Ադրբեջանական իշխանությունները ջանք չեն խնայում Կանաչ ժամը որպես ռուս ուղղափառ եկեղեցի ներկայացնելու համար: Մասնավորապես 2021թ.-ի հուլիսի 10-ին Շուշի քաղաքի եկեղեցիներ են այցելել Ռուս ուղղափառ եկեղեցու Բաքվի և Ադրբեջանի թեմերի մամլո քարտուղար, ավագ քահանա Կոնստանտին Պոմինովը, Ադրբեջանի ալբանա-ուդի քրիստոնեական համայնքի նախագահ Ռոբերտ Մոբիլին և Ադրբեջանի կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս Վլադիմիր Ֆեկետեն, որոնք եկեղեցական ծես են կատարել Կանաչ ժամում:

Ադրբեջանական «CBC TV» հեռուստաալիքը լուսաբանել է Շուշիի Կանաչ ժամում կատարված ծեսը և կրկին ներկայացրել եկեղեցին որպես ռուս ուղղափառ: Հեռուստալիքը մասնավորապես նշել է, որ Ադրբեջանի կրոնական համայնքների ղեկավարները Շուշի այցելության ընթացքում եղել են բոլոր այն եկեղեցիներում, որոնք իբրև թե հայկական օկուպացիայից հետո պետք է վերականգնվեն Ադրբեջանի կողմից: Հեռուստալիքի ռեպորտաժում կեղծ տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, թե հայերը կեղծել են «Ադրբեջանի քրիստոնեական համայնքի» տարբեր եկեղեցիների պատկանելիությունը (այդ թվում՝ նաև Կանաչ ժամի) և հայացրել դրանք, իսկ ադրբեջանական կողմը պատրաստ է վերականգնել պատմական փաստերի «ճշմարտությունը»:[525]

522 Փաստերի ստուգման հարթակ, «Շուշիի Կանաչ Ժամ Եկեղեցին և շրջակայքը», 21, նոյեմբերի 2020թ., https://www.youtube.com/watch?v=fEMPX0gNhKY

523 Հովհաննես Նազարեթյան, «Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին մասնակի ավերվել է», Փաստերի ստուգման հարթակ, 19 նոյեմբերի, 2020թ., https://fip.am/hy/13788; «ՖՈՏՈ. Ադրբեջանցիները պայթեցրել են Շուշիի Կանաչ ժամը», Armlife.am, 20 նոյեմբերի, 2020թ. Արցախ, https://www.armlife.am/news/129320.html

524 Շուշի քաղաքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցի: 2020 թ. հոկտեմբերի 9-ի, 2020 թ. հոկտեմբերի 17-ի և 2021թ. փետրվարի 15-ի լուսանկարների համեմատությունը տես հետևյալ հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7201748 https://public.flourish.studio/visualisation/7201748/

525 CBC TV Azerbaijan, “Визит в Город Шуша Руководителей Религиозных Конфессий Азербайджана,” July 10, 2021, YouTube video, https://www.youtube.com/watch?v=WZsEw9PhqY8



Պատկեր 13.10. Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին՝ նախքան ավերումը և ավերումից հետո (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

Պատկեր 13.11. Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին՝ նախքան ավերումը և ավերումից հետո, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

Պատկեր 13.12. Կանաչ ժամի արբանյակային պատկեր, 17 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Պատկեր 13.13. Կանաչ ժամի արբանյակային պատկեր, 15 փետրվարի, 2021թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Սուրբ Աստվածածին եկեղեցի, Ջաբրայիլ (Ջրական կամ Մեխակավան), 2017թ.

Ջաբրայիլում (Ջրական կամ Մեխակավան) գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցին հիմնովին ոչնչացվել է, երբ քաղաքը անցել է ադրբեջանական վերահսկողության տակ: Պատկեր 13-ում տեսանելի է, որ եկեղեցու երբեմնի տարածքում այժմ դատարկ տարածություն է: Եկեղեցու «անհետացման» վերաբերյալ 2021 թվականի մարտի 25-ին տեսանյութ է հրապարակել BBC News-ը:[526] Նշենք, որ ավելի վաղ տարածված տեսանյութում տեսանելի է, թե ինչպես է ադրբեջանցի զինվորականը բարձրացել Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթի վրա և կանգնելով խաչի վրա՝ բղավում՝ «ալլահ ակբար»:[527] Այս տեսանյութից պարզ է դառնում, որ եկեղեցին կանգուն է եղել, այսինքն՝ եկեղեցին ադրբեջանական վերահսկողության տակ անցել է անվնաս վիճակում և հետո է միայն ենթարկվել ոչնչացման: Եկեղեցու հիմնովին ոչնչացման փաստը հաստատում են 2020թ.-ի հունիսի 21-ի և 2021թ.-ի օգոստոսի 31-ի արված արբանյակային լուսանկարները (Պատկերներ 13.16 և 13.17):[528] Այն, որ եկեղեցին

526 “Nagorno-Karabakh: The Mystery of the Missing Church,” BBC News, March 25, 2021, https://www.bbc.com/news/av/world-europe-56517835.

527 “Azerbaijani Soldier Screams ‘Allahu Akbar’ from Top of Church in Armenia,” OpIndia, November 15, 2020, https://www.opindia.com/2020/11/azerbaijani-soldier-screams-allahu-akbar-from-top-of-church-in-armenia/.

528 Լորի Խաչադուրյան (@lkhatcha), «Լեռնային Ղարաբաղում վտանգի տակ գտնվող հարյուրավոր մշակութային

Պատկեր 13.14. Ջաբրայիլի Սուրբ Աստվածածին եկեղեցին, 2017թ. (Աղբյուրը՝ News.am):

քանդվել, ոչնչացվել է քաղաքի՝ ադրբեջանական վերահսկողության տակ անցնելուց հետո, փաստել է նաև Հայաստանում ՅՈՒԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովը:[529] Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը եկեղեցու ոչնչացումը հիմնավորել է եկեղեցու՝ «ապօրինի շինություն» լինելու հանգամանքով:[530]

Եկեղեցու կառուցումը սկսվել էր 2012-2013թթ.-ին և այն օծվել է 2017 թվականին: Ջաբրայիլում այլ քրիստոնեական կոթողների սակավության պատճառով եկեղեցին բացառիկ նշանակություն է ունեցել տեղի բնակիչների համար: Ջաբրայիլի (Ջրական կամ Մեխակավան) զորամասի հոգևոր հովիվ տեր Գևորգ քահանա Աբյանը նշել է, որ եկեղեցին մեծ կարևորություն է ներկայացրել, քանի որ բլրի վրայից կարծես պահպանում էր ողջ տարածքը:[531]

ժառանգության վայրերի պատկերները ջնջվում են արբանյակների վրայից», թվիթերյան գրառում, 17 ապրիլի, 2021թ., https://twitter.com/lkhatcha/status/138348471879594, Լրացուցիչ ապացույցների համար տես հետևյալ լուսանկարների համեմատությունը՝ https://public.flourish.studio/visualisation/7532042/, https://public.flourish.studio/visualisation/7532154/

529 Տես Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի թվիթերյան գրառումը, 25 մարտի, 2021թ., (@ArmUnesco), "Strongly Condemn yet Another Act of Cultural #crime by #Azerbaijan.," Twitter, March 25, 2021, https://twitter.com/ArmUnesco/status/1374978285554253825

530 "Azerbaijani MFA Comments on Unfounded Claims by Armenia on Committing 'Cultural Crimes' in the Liberated Territories of Azerbaijan," APA Azeri Press Agency, March 26, 2021, https://apa.az/en/foreign-policy/Azerbaijani-MFA-comments-on-unfounded-claims-by-Armenia-on-committing-cultural-crimes-in-the-liberated-territories-of-Azerbaijan-345407

531 «Ամեն մի քարը բոլոր սրտացավությամբ դրել ենք. հողին հավասարեցված Ջաբրայիլի եկեղեցին կառուցվել էր զինվորների օգնությամբ», News.am, 25.03.2021, https://news.am/arm/news/635675.html

Պատկեր 13.15. Ջաբրայիլի Սուրբ Աստվածածին եկեղեցու երբեմնի գտնվելու վայրը, 2021թ. (Աղբյուրը՝ BBC News):

Պատկեր 13.16. Ջաբրայիլի Սուրբ Աստվածածին եկեղեցու արբանյակային պատկերը, 21 հունիսի, 2020թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Պատկեր 13.17. Ջաբրայիլի Սուրբ Աստվածածին եկեղեցու արբանյակային պատկերը, 31 օգոստոսի, 2021թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Սուրբ Եղիշե եկեղեցի, Մարտակերտի շրջան, Մատաղիս, 19-րդ դար, կառուցվել է 1892-1898 թթ.

Սուրբ Եղիշե եկեղեցու տանիքը պատերազմի ընթացքում լրջորեն վնասվել է, ինչը հաստատում են փաստահավաք առաքելության ընթացքում ձեռք բերված արբանյակային լուսանկարները: ԲԱՏՀ փորձագետների կարծիքով՝ վնասման ժամանակահատվածը 2020թ.-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 8-ի միջակայքն է:

Բացի այդ, ադրբեջանցի և թուրք զինվորականները պղծել և վանդալիզմի են ենթարկել Մատաղիսի Սուրբ Եղիշե եկեղեցին:[532] Նշված գործողությունները զինվորականները տեսանկարահանել և տեղադրել են համացանցում՝ տեսանյութում մասնավորապես ասելով. «Մենք գնում ենք եկեղեցի: Ես այստեղ երկու անգամ նամազ արեցի»: Տեսանյութում երևում է նաև, թե ինչպես մեկ այլ զինվորական եկեղեցու սրբապատկերն է դեն նետում, այնուհետև հարվածում ոտքով:[533] Լուսանկարներում զինվորականների համազգեստի վրա բացահայտ երևում են ադրբեջանական և թուրքական դրոշները: Նշված դեպքը արձանագրել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը:[534]

532 «Ադրբեջանցի զինվորականները վանդալիզմի են ենթարկում Արցախի Մատաղիսի շրջանի հայկական Սուրբ Եղիշե եկեղեցին», - Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան, 29 մարտի, 2021թ., https://ombuds.am/am/site/VideoGalleryView/520

533 Zara M_, "Азербайджанцы Оскверняют Армянскую Церковь," March 27, 2021, YouTube video, https://www.youtube.com/watch?v=nr7nZJwwGo8.

534 «Ադրբեջանցի զինվորականները վանդալիզմի են ենթարկում Արցախի Մատաղիսի շրջանի հայկական Սուրբ Եղիշե եկեղեցին»:

Պատկեր 13.18. Ադրբեջանցի և թուրք զինվորականները պղծում և վանդալիզմի են ենթարկում Սուրբ Եղիշե եկեղեցին, (Աղբյուրը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան):

Կատարո վանք (Կատարավանք), Հադրութի շրջան, գյուղ Խանձաձոր, 17-րդ դար

Կատարո վանքը հայկական հոգևոր կառույց-մատուռ է, որը կառուցվել է 17-րդ դարում, գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 2400 մետր բարձրության վրա՝ Դիզափայտ լեռան (2478 մետր) գագաթին: Վանքն Արցախի ամենաբարձրադիր հուշարձանն է:

Համացանցում տարածված տեսանյութում ադրբեջանցի զինվորականները Կատարո վանքում են և ժխտում են այդ հուշարձանի հայապատկանությունը՝ կոչելով այն «աղվանական»: Նրանցից մեկը հայտարարում է. «Սա ալբանական վանք-եկեղեցու ներսն է: Այն ունի 3-4 հազար մետր բարձրություն: Անամոթ հայերն այն վերագրել են իրենց»:[535] Մեկ այլ տեսանյութում երևում է Կատարո եկեղեցու մոտ տապալված խաչքար:[536]

Թաղավարդի Չուրհուշ եկեղեցի, Մարտունու շրջան, 17-րդ դար

Թաղավարդի Չուրչուշ եկեղեցին ամենայն հավանականությամբ կառուցվել է 17-րդ դարում: Այն եղել է Թաղավարդի և հարևան գյուղերի բնակիչների համար ուխտագնացության հայտնի վայր: Փաստահավաք խումբն այս եկեղեցու ավերման մասին ապացույցներ է ձեռք

535 Artsakh Monuments, "#occupiedbyazerbaijan" Facebook, March 30, 2021, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid022ri7gEHLzkSmgn4F7JgJo44g3etxcBEK4YyyadyEhKG9vpqjUUpxp3tNSgranSHAl&id=209098472619570

536 Մարինե Ասլանյան, «Ադրբեջանցիները պղծել են Դիզափայտի գագաթին գտնվող Կատարոյի տաճարը», 16 հունվարի, 2021թ., https://www.instagram.com/p/CKGuW93n6WM/

բերել Վարդիթերի հետ հարցազրույցի միջոցով: Վարդիթերն Արցախի 52-ամյա բնակիչ է: 2020 թ. սեպտեմբերի 27-ին նրան տարհանել են Մարտունու շրջանի Ջիվան գյուղից դեպի Թաղավարդ գյուղ, որտեղ նա մնացել է մեկ շաբաթ: Կինը նշում է, որ Թաղավարդը ենթարկվել է ինտենսիվ ռմբակոծության, որի ընթացքում էլ վնասվել է եկեղեցին: Վարդիթերի որդին պատմել է մորը, որ եկեղեցին ռմբակոծել և վնասել են նոյեմբերի 10-ին՝ ժամը 1-ի սահմաններում: Վարդիթերը չգիտի՝ ինչ աստիճանի է վնասվել եկեղեցին: Եկեղեցու վնասման փաստը արձանագրել է նաև «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» ծրագիրը (Monument Watch):

Թաղավարդի Չուրհուշ եկեղեցի, Մարտունու շրջան, 17-րդ դար

Թաղավարդի Չուրչուշ եկեղեցին ամենայն հավանականությամբ կառուցվել է 17-րդ դարում: Այն եղել է Թաղավարդի և հարևան գյուղերի բնակիչների համար ուխտագնացության հայտնի վայր: Փաստահավաք խումբն այս եկեղեցու ավերման մասին ապացույցներ է ձեռք բերել Վարդիթերի հետ հարցազրույցի միջոցով: Վարդիթերն Արցախի 52-ամյա բնակիչ է:[537] 2020 թ. սեպտեմբերի 27-ին նրան տարհանել են Մարտունու շրջանի Ջիվան գյուղից դեպի Թաղավարդ գյուղ, որտեղ նա մնացել է մեկ շաբաթ: Կինը նշում է, որ Թաղավարդը ենթարկվել է ինտենսիվ ռմբակոծության, որի ընթացքում էլ վնասվել է եկեղեցին: Վարդիթերի որդին պատմել է մորը, որ եկեղեցին ռմբակոծել և վնասել են նոյեմբերի 10-ին՝ ժամը 1-ի սահմաններում: Վարդիթերը չգիտի՝ ինչ աստիճանի է վնասվել եկեղեցին: Եկեղեցու վնասման փաստը արձանագրել է նաև «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» ծրագիրը (Monument Watch):[538]

Մատաղիս գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռ, Մարտակերտի շրջան

2020թ.-ի դեկտեմբերին տարածված տեսանյութում երևում է, որ պղծվել և ավիրվել է նաև Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում գտնվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռը:[539]

Ներքին Ճարտար գյուղի Սուրբ Եղիշե եկեղեցի, 17-րդ դար

Ճարտար գյուղից հարավ ընկած լեռան գագաթին գտնվում է Սուրբ Եղիշե վանքը կամ Ղշավանքը: Սեպագիր արձանագրության համաձայն՝ 12-րդ դարից այն եղել է ուխտագնացության հայտնի վայր: Վնասվելուց հետո եկեղեցին վերակառուցվել է 17-րդ դարում: Արձանագրություններից մեկը, վկայելով վերակառուցման փաստը, նշում է. «Ես՝ ուստա Գաբրիելս, սեփական ձեռքերով կառուցեցի այս եկեղեցին»: Եկեղեցին վերակառուցվել է 1655թ.-ին: Այն ունեցել է փոքր զանգակատուն, որը ներկայումս կիսաքանդ է: Հայ սուրբ Եղիշեն թաղված է եկեղեցու խորանի տակ:

537 Հարցազրույց Մարտունու շրջանի բնակիչ Վարդիթերի հետ, 5 փետրվարի, 2021թ.:

538 «Թաղավարդի Չուրհուշ եկեղեցի», Monument Watch, 16 մայիսի, 2021թ., https://monumentwatch.org/hy/monitoring_watch/թաղավարդի-չուրհուշ-եկեղեցի-2/

539 @thearmosphere, "Azerbaijanis Desecrated an Armenian Chapel Which Commemorated the Victims of the April 2016 War," Instagram, December 28, 2020, https://www.instagram.com/p/CJVnAyFnHEg/

Ներքին Ճարտար գյուղի բնակիչ Ռոբերտը պատմել է, որ թշնամու կողմից թիրախավորվել է նաև իրենց գյուղի Սուրբ Եղիշե եկեղեցին:[540] Թեև արկերը չեն հարվածել անմիջապես եկեղեցուն, սակայն, ինչպես նշել է նա, թշնամին հատուկ նշանառել էր հենց եկեղեցին, որովհետև գյուղի ողջ տարածքից միայն եկեղեցու շրջակայքն է թիրախավորվել (2-3 արկ ընկել է եկեղեցուն շատ մոտ): Ռոբերտը նշել է, որ եկեղեցին շատ հին է և հատուկ նշանակություն ունի տեղացիների համար, նրա հետ կապված են բազմաթիվ տեղական ավանդություններ:

Հադրութի շրջանի Կավաքավանք եկեղեցի, 1742 թ.

Կավաքավանքը գտնվում է կոնաձև բարձր բլրի վրա: Եկեղեցին եռանավ բազիլիկ է, որի երկարությունը 12,8 մետր է, լայնությունը՝ 9,8 մետր: Եկեղեցին վերակառուցվել է 1742 թ. Դիզակի քարագործ վարպետ Գրիգորի ձեռքով լայնանիստ բլրի ստորոտին գտնվող հայկական Գյումուշ, Չիման և Հողեր գյուղերի հավատացյալների օժանդակությամբ:[541]

Ըստ ԲԱՏՀ թիմի փորձագետների՝ եկեղեցու տարածքում և նրա մոտակայքում (200մ2) առկա են հրետանու հարվածից առաջացած փոսեր, որոնք երևում են նաև սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 30-ը լուսանկարված արբանյակային պատկերներում:[542]

Մարտունու շրջանի Ամարասի վանք, 4-րդ դար

Ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի՝ վանական համալիրի առաջին եկեղեցին հիմնադրել է Հայ առաքելական եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչը: Կառուցումն ավարտել է նրա թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը, որը նահատակվել է 338թ.-ին և թաղված է Ամարասում: Հայկական այբուբենի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը 5-րդ դարի սկզբին Ամարասում բացել է հայկական առաջին դպրոցը, ինչը նոր թափ է հաղորդել հայ գրավոր մշակույթի տարածմանը: Այդ ժամանակից սկսած Ամարասը դարձել է Հայաստանի խոշորագույն կրոնական և մշակութային կենտրոնը:[543]

Ռազմական գործողությունների ավարտից հետո փաստահավաք թիմն այցելել է Արցախի վերահսկողության տակ մնացած բնակելի տարածքներ, մասնավորապես՝ Մարտունու շրջան, որտեղ գտնվում է Ամարասի հայտնի վանքը: Վանքի և շրջակա տարածքի դաշտային տեղազննության ընթացքում փաստահավաք թիմը հայտնաբերել է հրթիռի բեկոր և արձանագրել վանքի արտաքին պատերի վնասված մասը:[544] Հրթիռի պայթյունից վնասվել է հատկապես Ամարասի վանքի արևելյան պատը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վանքի մոտակայքում ռազմական որևէ օբյեկտ չկա, փաստահավաք խումբը հիմնավոր է համարում այն պնդումը, որ հարձակումը նպատակ է ունեցել՝ վնաս հասցնելու վանքին:

540 Հարցազրույց Ներքին Ճարտարի բնակիչ Ռոբերտի հետ, 2 փետրվարի, 2021թ.:

541 «Կավաքավանք», Monument Watch, հասանելի է եղել 2020թ.-ի մարտի 30-ին, https://monumentwatch.org/en/monument/kaqavavank-monastery/.

542 Եկեղեցու՝ 2019, 2020 և 2021 թվականների արբանյակային պատկերների համար տես՝ https://public.flourish.studio/visualisation/7496120/, https://public.flourish.studio/visualisation/7496147/; https://public.flourish.studio/visualisation/7496182/

543 «Ամարասի վանքը» Armenian Travel Bureau, հասանելի է եղել 2022թ.-ի մարտի 30-ին, http://www.atb.am/en/armenia/sights/christ/monasamaras/

544 Վնասը համապատասխանում է 9M53F և 9M522 հրթիռների բեկորային մարտագլխիկների մոտավոր չափերին և տեսակին, ինչպես նաև 122 մմ տրամաչափի բեկորաֆուգասային այլ հրթիռներին: Մոտակայքում հրթիռի բաղադրիչների առկայությունը թույլ է տալիս՝ ARES-ին եզրակացնելու, որ տեսանելի վնասը պատճառվել է 9M5 դասի 122 մմ «Երկիր-երկիր» դասի հրթիռի մարտագլխիկի հարվածից:

Պատկեր 13.18. Ամարասի վանքը, դեկտեմբեր, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Սուրբ Աստվածածին եկեղեցի, Թաղավարդ գյուղ, Մարտունու շրջան, 17-րդ դար

«Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» նախաձեռնությունը (Monument Watch) 2021թ.-ի հուլիսին տեղեկություններ էր տարածել Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում լայնածավալ շինարարության և Թաղավարդի Սուրբ Աստվածածին եկեղեցու հնարավոր վնասման մասին: Տեղեկությունները հաստատելու նպատակով փաստահավաք թիմը որոշեց ստանալ արբանյակային պատկերներ և փորձագիտական եզրակացություն:

ԲԱՏՀ թիմի փորձագետների կարծիքով՝ արբանյակային պատկերների վրա հետպատերազմական ինչ-որ պահից կարելի է տեսնել եկեղեցու տանիքի ծածկի վնասում, որի ամենավաղ օրինակները երևում են՝ 2021թ.-ի փետրվարի 15-ից սկսած: Բացի այդ, տարբեր վայրերում, այդ թվում՝ գյուղի արևմտյան սահմանին, երևում են զգալի ավերումներ: Գյուղում իրականացվող քանդման աշխատանքները (հավանաբար ծանր տեխնիկայի օգնությամբ), որոնք կարծես խոշոր շինարարական մեծ ծրագրի մաս են կազմում, սկսվել են 2021թ.-ի հուլիսի 2-ից մինչև 2021թ.-ի հուլիսի 12-ն ընկած ժամանակահատվածում: Քանդման աշխատանքները շարունակվում են, քանի որ 2021թ.-ի հոկտեմբերի 25-ի արբանյակային պատկերներում կարելի է տեսնել նոր ավերածություններ:[545]

545 Թաղավարդի եկեղեցու քանդումը ցույց տվող արբանյակային պատկերներ՝ https://mega.nz/file/tipyhbjZ#M9x-czH6cpgRFaOgByvs_H-WLp_F_2o9ypXx5mg0kF54

Պատկեր 13.19. Թաղավարդի Սուրբ Աստվածածին եկեղեցու արբանյակային պատկերները՝ համապատասխանաբար 2020թ.-ի հունիսի 21-ին, 2021թ.-ի փետրվարի 15-ին և 2021թ.-ի օգոստոսի 23-ին (Աղբյուրը՝ Google Earth):

Պղծվել և քանդվել են Հադրութի Առաքել գյուղում 1997թ.-ին կագնեցված հուշարձան-խաչքարը [546] և Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղի խաչքարը:[547]

546 Աննա Նաղդալյան (@naghdalyan), «Սոցիալական մեդիայում հրապարակված ևս մեկ տեսանյութ, որը ցույց է տալիս #Ադրբեջանի զինված ուժերի կողմից #Հայաստանի հուշարձանների դիտավորյալ ոչնչացումը», հունվարի 12, 2021թ., https://twitter.com/naghdalyan/status. /1348922661318103040.

547 Karabakh Records (@KarabakhRecords), «Ադրբեջանցի օգտատիրոջ տեղադրած տեսանյութը ցույց է տալիս #ադրբեջանական վանդալիզմի հերթական դեպքը. Խաչքար է ոչնչացվել Ուխտաձորում, Հադրութի շրջան», 16 ապրիլի, 2021թ., https://twitter.com/KarabakhRecords/status/1383012793738223617

Պատմական տեղավայրեր և թանգարաններ

Տիգրանակերտի հնագիտական ճամբար, Մարտակերտի շրջան

Տիգրանակերտ քաղաքը կառուցվել է մ. թ. ա. 90-ական թթ.-ին՝ Հայոց արքա Տիգրան Բ Մեծի (95-55թթ. մ.թ.ա.) օրոք: Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005թ.-ին հայտնաբերեց Տիգրանակերտ քաղաքը, և 2006 թվականից սկսած, հնագիտական պեղումներ էր կատարում նրա տարածքում: Այն Տիգրան Մեծ արքայի անունը կրող միակ քաղաքն է, որի տեղը ճշտգրտորեն պարզված է, և որը ենթարկվում էր հնագիտական հետազոտության:

Պեղումների շնորհիվ 2006 թվականից հայտնաբերվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, նրա պատերը, կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին (Պատկեր 13.20): Պեղումների ամենակարևոր գտածոներից է 2008թ.-ի հուլիսի 15-ին հայտնաբերված հայերեն արձանագրությունը: 15 տարվա հնագիտական հետազոտության արդյունքներով կարելի է խոսել հելլենիստական ամրաշինական ու քաղաքաշինական նորարական կառուցապատումով և շինարարական տեխնիկայով ստեղծված ընդարձակ մի բնակավայրի մասին: Այն հիմնադրվել է մ.թ.ա. 1-ին դարում և հարատևել մինչև 13-րդ դարի վերջերը: Ադրբեջանի զինված ուժերը 2020 թվականի նոյեմբերի 5-ին հրետակոծել են Տիգրանակերտի հնագիտական ճամբարը՝ ոչնչացնելով հնագիտական երկու տնակները և վնաս պատճառելով ևս երկուսին:[548]

Պատկեր 13.20. Տիգրանակարտի հնեագիտական տեղավայրը, քաղաքի միջնաբերդը, նրա պատերը, կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին (Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն):

548 ՀՀ ԿԳՄՄՆ, «Մշակութային ցեղասպանություն. հրետակոծվել է Տիգրանակերտի հնագիտական ճամբարը», ՀՀ ԿԳՄՄՆ, 7 Նոյեմբեր, 2020, https://escs.am/am/news/7410

Շուշիի երկրաբանական թանգարանը

Երկրաբանության թանգարանը հիմնվել է 2014թ.-ին: Հավաքածուի մեծ մասը կազմել է երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1989-1991թթ.-ին ԽՍՀՄ երկրաբանության նախարար և Արցախի նախագահի խորհրդական Գրիգորի Գաբրիելյանցի անձնական հավաքածուն: Թանգարանում ցուցադրվում էին ապարների և օրգանական հանածոների 480 նմուշներ: Հավաքածուն ուներ նմուշներ՝ 47 պետություններից և Ռուսաստանի Դաշնության 20 երկրամասերից, որոնցից ամենահինը 1 միլիարդ 200 միլիոն տարեկան էր: Կային նմուշներ նաև Արցախից, որոնցից ամենահինը 146 միլիոն տարեկան էր: Գրիգորի Գաբրիելյանցը և Արցախի մշակույթի նախարարությունը ռուս խաղապահների միջոցով պահանջել են Ադրբեջանի վերադարձնել թանգարանային նմուշները, սակայն առ այսօր դեռ որևէ պատասխան չկա:[549]

Օգոստոսի 18-ին համացանցում տեսանյութ[550] տարածվեց, որտեղ հստակ երևում է՝ ինչպես են ադրբեջանցի զինվորականները ոչնչացնում Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված Շուշիի երկրաբանական թանգարանի ցուցանմուշները: Տեսանյութում երևում են թանգարանի վնասված տանիքը, գետնին ընկած թանգարանային ցուցանմուշների և արժեքավոր իրերի վրա թափված քարի և փայտի կտորները:

Շուշիի պատմության թանգարան

1992թ.-ին ստեղծված պատմության թանգարանը ներկայացնում էր քաղաքին առնչվող գրեթե ամեն ինչ՝ սկսած հնագույն ժամանակներից: Թանգարանում ցուցադրված էին պեղումների ընթացքում Շուշիում հայտնաբերված բազմաթիվ գտածոներ, ներկայացված էին Շուշիի առօրյա կյանքին ու կենցաղին վերաբերող ցուցանմուշներ: Թանգարանի սենյակներից մեկում ցուցադրված էր մեծահարուստ բարերար Թադոս Թամիրյանցի տան ներքին կահավորանքը: Ներկայացված էին նաև զանազան գորգեր, արծաթյա զարդեր, Շուշիում տպված գրքերի ու թերթերի նմուշներ և այլն: Շուշիի պատմության թանգարանի ամբողջ հավաքածուն՝ 5,000 ցուցանմուշներով, մնացել էր թանգարանում:[551]

Ադրբեջանական զինված ուժերն ավիրել են նաև Շուշիի պատմության թանգարանը: Փորձագետների կարծիքով՝ թանգարանային համալիրին հասցված վնասները տեսանելի էին 2020թ.-ի հոկտեմբերի 17-ից հետո: Հավանական է, որ թանգարանը և մի շարք հարակից շենքեր վնասվել են 2020թ.-ի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում: Վնասները համապատասխանում են ավիացիոն զինատեսակներից արձակված հարվածների հետևանքներին: Արբանյակային հասանելի պատկերների վրա թանգարանի անմիջական շրջակայքում ռազմական կառույցներ չեն երևում:[552]

549 Սառա Պետրոսյան, «Շուշիի թանգարանները. հավաքածուների մեծ մասը այժմ ադրբեջանական ձեռքերում են», Հետք, 26 հունվարի, 2021թ., https://hetq.am/hy/article/126646

550 @ararathau, "Примитивные кочевники в Шуши разрушают выставочный павильон полезных ископаемых," August 19, 2021, https://t.me/ararathau/9676

551 Տե՛ս Արցախի մարդու իրավունքների պաշտպանի՝ «Արցախում (Լեռնային Ղարաբաղում) հայկական մշակութային ժառանգություն՝ Ադրբեջանի իրականացրած վանդալիզմի դեպքերը և ոչնչացման սպառնալիքը» զեկույցը, էջ 21:

552 20.08.2019թ., 03.04.2020թ., 14.09.2020թ., 09.10.2020թ., 17.10.2020թ. և 16.08.2021թ. արբանյակային լուսանկարների համեմատությունը տե՛ս հետևյալ հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7518218/

Պատկեր 13.21. Շուշիի պատմության թանգարանի արբանյակային պատկերը, 16 օգոստոսի, 2021թ.:

Պատկեր 13.22. Շուշիի պատմության թանգարանի արբանյակային պատկերը, 20 օգոստոսի, 2019թ.:

Շուշիի կերպարվեստի թանգարան

«Կովկասյան ժառանգության մշտադիտարկում» (Caucasus Heritage Watch) նախաձեռնության՝ 2021թ.-ի օգոստոսի 13-ին հրապարակած լուսանկարներից ակնհայտ դարձավ, որ Շուշիի կերպարվեստի թանգարանի Քանդակների պուրակից անհետացել են բոլոր գործերը, տարածքն ամբողջությամբ կողոպտվել է, անհետացել է 51 քանդակ, որոնց ճակատագիրը մինչ օրս անհայտ է:[553]

553 Caucasus Heritage Watch (@CaucasusHW), "Satellite Imagery Shows That between April 10 and June 5, the 51 Sculptures in the Park of the Shushi Museum of Fine Arts Were Removed and the Area Completely Cleared.," Twitter, August 13, 2021,

Թանգարանի շենքը կառուցվել էր Շուշիի նախկին իջևանատան հիմքի վրա՝ պահպանելով վերջինիս ճարտարապետական առանձնահատկությունները: Թանգարանի հավաքածուն կազմվել էր նվիրատվությունների շնորհիվ: Այդ հանգամանքը թանգարանի յուրահատկություններից էր, քանի որ այն ուներ ոչ միայն նվիրատուների հարուստ ցանկ, այլ նաև նվերներն իրենց ծագումով աշխարհագրորեն լայն ընդգրկում ունեին՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Վրաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Եթովպիա, Ինդոնեզիա, Մադագասկար և այլն: Շուշիի թանգարանում ներկայացված էին հայտնի նկարիչների՝ Մ. Սարյանի, Մինասի, Ն. Գարզուի, Ե. Շահինի, Ժանսեմի, Հ. Հակոբյանի, Դ. Բարլյուկի, Ա. Շչենկոյի, Ա. Սաֆոխինի, Դ. Պլավինսկու և այլոց առանձնակի արժեք ներկայացնող ստեղծագործություններից:[554] Կերպարվեստի պետական թանգարանում պահվում էր 627 ցուցանմուշ:[555]

Պատկեր 13.23. Շուշիի կերպարվեստի թանգարանի արբանյակային պատկերները 2021թ.-ի ապրիլի 10-ի և 2021թ.-ի հունիսի 5-ի դրությամբ (Աղբյուրը՝ ԿԺՄ)

Հադրութի՝ Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան

Համացանցում 2021թ.-ի փետրվարին տարածված տեսանյութում երևում է՝ ինչպես են ադրբեջանական զինված ուժերը ոչնչացնում Հադրութի՝ Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը:[556] Թանգարանը հիմնադրվել էր 1984թ.-ի փետրվարի 28-ին: Թանգարանում գործում էր 6 սրահ, որոնցում ներկայացված էին Հադրութի մասին

554 «Շուշիում չորս թանգարան է գործում. կերպարվեստի պետական թանգարանը 630 ցուցանմուշ ունի», Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանման ծառայության, 27.02.2018թ., https://hushardzan.am/archives/19255

555 «Արցախում (Լեռնային Ղարաբաղում) հայկական մշակութային ժառանգություն՝ Ադրբեջանի իրականացրած վանդալիզմի դեպքերը և ոչնչացման սպառնալիքը»:

556 Մարտիրոսյան Հասմիկ, «Պղծվել է Հադրութի թանգարանը Արցախի հուշարձանները՝ խոչընդոտ Բաքվի տնտեսական ծրագրերի համար», Հայաստանի Հանրային Ռադիո, փետրվարի 22, 2021թ., https://bit.ly/3JNhx9n

ընդհանուր տեղեկություններ, շրջանի բուսական և կենդանական աշխարհի ցուցանմուշներ, նախնադարյան պատմությանը և տվյալ շրջանի կյանքը տարբեր դարաշրջաններում:

Հուշարձաններ և պատմամշակութային այլ կոթողներ

Արցախի Հանրապետության տարբեր շրջաններում առկա են երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին նվիրված բազմաթիվ հուշակոթողներ: Մասնավորապես այդպիսի հուշարձաններ են կանգնեցվել Շուշի քաղաքում, Շուշիի շրջանի Քարինտակ գյուղում, Հադրութի շրջանի Դրախտիկ[557] գյուղում և Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում:[558] Ադրբեջանական զորքերի վերահսկողության տակ անցնելուց հետո այդ հուշակոթողները ոչնչացվել են: Հարկ է նշել, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները մասնակցել են երկրորդ համաշխարհային պատերազմին և 1941-1945թթ.-ի ընթացքում թե՛ Խորհրդային Հայաստանից և թե՛ Խորհրդային Ադրբեջանից հարյուրհազարավոր զինվորներ են մեկնել ռազմաճակատ, այսինքն, կարելի է վստահ ասել, որ այդ հուշակոթողները համատեղ ձեռք բերված հաղթանակի մշակութային արտահայտությունն էին, որոնց նկատմամբ, սակայն, Ադրբեջանը դրսևորել է միևնույն մշակութակործան քաղաքականությունը:

Պատկեր 13.24. Երկրորդ համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված Շուշի քաղաքի հուշակոթողը (Աղբյուրը՝ onet.am)

Շուշիի հուշակոթող

Շուշի քաղաքում ադրբեջանական զինված ուժերը ոչնչացրել են երկրորդ համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշակոթողը: ԲԱՏՀ թիմի փորձագետների կարծիքով՝ հուշակոթողը դիտավորյալ է ոչնչացվել: Մեծ է հավանականությունը, որ հուշակոթողը քանդվել և անորոշ պահի փոխարինվել է դրոշաձողով: Հուշակոթողից 500 մ հեռավորությամբ գտնվող շենքերի վրա առկա են ավիացիոն զինատեսակներից արձակված արկերի պայթյունների ակնհայտ հետքեր: Հավանական է, որ պայթյունները եղել են հուշակոթողին շատ մոտ (15 մ հեռավորությամբ), և, ըստ երևույթին, հուշակոթողը փլուզվել է մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 19-ը:[559] Հարկ է նշել, որ հուշակոթողի անմիջական հարևանությամբ ռազմական կառույցներ չկան:

557 Դրախտիկի հուշահամալիրի արբանյակային պատկերները 2020 թվականի հոկտեմբերի 30-ին և 2021 թվականի փետրվարի 15-ին հասանելի են հղումով՝https://public.flourish.studio/visualisation/7154054/

558 Տես https://www.facebook.com/100007446721946/videos/pcb.419178009228940/2873503672907829. դիտվել է/ հասանելի է եղել 2021թ.-ի նոյեմբերի 11-ին:

559 03.04.2020թ., 14.09.2020թ., 25.10.2020թ., 19.12.2020թ., 15.02.2021թ., 16.08.2021թ. և 11.09.2021թ. արբանյակային լուսանկարների համեմատությունը տես հետևյալ հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7309932/.

Պատկեր 13.25. Շուշի քաղաքի՝ երկրորդ համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշակոթողի արբանյակային պատկերները. 2020թ.-ի սեպտեմբերի 14-ին և 2021թ.-ի սեպտեմբերի 11-ին (Աղբյուրը՝ Google Earth):

Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի հուշակոթող

Քարինտակ գյուղի բնակիչ Վլադիմիրը հայտնել է, որ կոտրատվել և ձորն է նետվել երկրորդ համաշխարհային պատերազմի (Հայրենական մեծ պատերազմի) մասնակիցների հիշատակին նվիրված հուշակոթողը:[560] Այն ձորը, ուր նետել են կոթողի բեկորները, կոչվում է Առվի ձոր, որը դպրոցից 100 մ հեռավորության վրա է: Հուշակոթողի քանդման մասին տեղեկությունները հաստատվել են համացանցում տարածված տեսանյութի և լուսանկարների հիման վրա:[561] Հուշակոթողի քանդումը փաստում են նաև արբանյակային լուսանկարները:[562]

Փորձագետների կարծիքով՝ շատ հավանական է, որ 2020թ.-ի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում հուշարձանի անմիջական հարևանությամբ (500մ) քանդվել են նաև բազմաթիվ շինություններ: Հասցված վնասները ակնհայտորեն ավիացիոն զինատեսակներից արձակված արկերի պայթյունների հետևանք են:

Պատկեր 13.26. Երկրորդ համաշխարհային պատերազմի (Հայրենական մեծ պատերազմ) ազատամարտիկներին նվիրված հուշակոթողը Քարինտակ գյուղում, 2015թ. (Աղբյուրը՝ Վիկիպեդիա):

560 Հարցազրույց Քարինտակի բնակիչ Վլադիմիրի հետ, 10 դեկտեմբերի, 2020թ.:

561 "Azeri Forces Destroy Monuments Dedicated to Heroes of WW2 and First Artsakh War in Village of Karin Tak," Azeri-WarCrimes.org, June 14, 2021, https://azeriwarcrimes.org/2021/06/14/azeri-forces-destroy-monuments-dedicated-to-heroes-of-ww2-and-first-artsakh-war-in-village-of-karin-tak/

562 2019 թվականի օգոստոսի, 2020 թվականի սեպտեմբերի, 2020 թվականի հոկտեմբերի, 2020 թվականի դեկտեմբերի, 2021 թվականի փետրվարի, 2021 թվականի օգոստոսի և 2021 թվականի սեպտեմբեր ամիսներին արված հուշահամալիրի հետևյալ արբանյակային պատկերները ցույց են տալիս, թե ինչպես է այն ոչնչացվել ադրբեջանական ուժերի կողմից տարածքը գրավելուց հետո՝ https://public.flourish: .studio/visualisation/7530297/

Պատկեր 13.27. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին նվիրված Քարինտակի հուշակոթողի արբանյակային պատկերները 2020թ.-ի սեպտեմբերի 14-ին, 2021թ.-ի փետրվարի 15-ին և 2021թ.-ի սեպտեմբերի 11-ին (Աղբյուրը՝ Securewatch):

Պատկեր 13.28. Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին նվիրված Դրախտիկի հուշակոթողի արբանյակային պատկերները 2020թ.-ի հունիսի 21-ին, 2020թ.-ի հոկտեմբերի 30-ին և 2021թ.-ի փետրվարի 15-ին (Աղբյուրը՝ Securewatch):

Բացի այդ, Ադրբեջանն ակտիվորեն ոչնչացրել է նաև ֆաշիզմի դեմ Խորհրդային Միության հաղթանակի գործում ներդրում ունեցած հայ զինվորների հուշարձանները, ինչի մասին հայտարարել է նաև Արցախի արտաքին գործերի նախարարությունը,[563] և ինչը փաստում են տեսանյութեր և լուսանկարներ: Շուշի քաղաքում ոչնչացվել է ԽՍՀՄ սև մետալուրգիայի արդյունաբերության հայազգի նախարար, Ճապոնիայում ԽՍՀՄ դեսպան, ԽՍՀՄ փոխվարչապետ Իվան Թևոսյանի կիսանդրին (Պատկեր 13.29): Ի. Թևոսյանի շնորհիվ է, որ ԽՍՀՄ կառավարությունը կարողացավ երկրի արդյունաբերական կառույցները արևմտյան շրջաններից առանց մեծ կորուստների տեղափոխել ուրալյան հատված: Ոչնչացվել է նաև Խորհրդային Միության կրկնակի հերոս, հայտնի ռազմական օդաչու, ծագումով հայ Նելսոն Ստեփանյանի հուշարձանը:[564]

Շուշի քաղաքում վանդալիզմի է ենթարկվել, այնուհետև մասնատվել հայազգի ռազմական և քաղաքական գործիչ, 1995-1999 թվականներին որպես ՀՀ վարչապետ պաշտոնավարած Վազգեն Սարգսյանի հուշարձանը (Պատկեր 13.30):[565]

Բացի այդ, 2020թ.-ի հոկտեմբերին տարածված լուսանկարներից պարզվեց, որ ադրբեջանական զինյալները ոչնչացրել են Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի «Վերածնված Թալիշ» հուշարձանը, որը տեղադրվել էր 2017 թվականին (Պատկեր 13.31): Ադրբեջանական ուժերը Թալիշը գրավել են 2020թ.-ի հոկտեմբերին: Ադրբեջանի պաշտպանության նախարարության՝ նույն ամսին հրապարակած տեսանյութում երևում է, որ հուշահամալիրը դեռ կանգուն է և անվնաս:[566] Եվ թեպետ հստակ չէ, թե հուշակոթողը կոնկրետ երբ է ոչնչացվել, պարզ է, որ դա տեղի է ունեցել գյուղի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո:

Ավելին, 2021 թվականի մարտին տարածված տեսանյութում երևում է նաև Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղի՝ վանդալիզմի ենթարկված հուշահամալիրը:[567] Պղծվել և ավիրվել է նաև Քաշաթաղի շրջանի Որոտան գյուղի հուշակոթողը:[568]

Տեղեկություններ են նաև ստացվել Թադևոս Թամիրյանի ջրամբարը քանդելու մասին, որը կառուցվել էր 1893-1901թթ.-ին: ԲԱՏՀ թիմի փորձագետների կարծիքով՝ հավանական է, որ ջրամբարը ավիրվել է 2021թ.-ին, թեև բավարար տեղեկություններ չկան հստակ ամսաթիվը որոշելու համար: Ջրամբարի անմիջական հարևանությամբ կարելի է

563 «Արցախի ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի մեկնաբանությունը News.am գործակալությանը Ադրբեջանի կողմից օկուպացված բնակավայրերում Հայրենական մեծ պատերազմի հերոսների հուշարձանների ոչնչացման վերաբերյալ», Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, 12 մարտի, 2021թ., http://www.nkr.am/en/news/2021-03-12/minister-interview

564 @KotenokVoenkorBot, "В Шуши азербайджанскими варварами уничтожен памятник уроженцу города дважды Герою Советского Союза Нельсону Георгиевичу Степаняну," March 11, 2021, https://t.me/voenkorKotenok/26251?fbclid=IwAR3-i4hgeZtrI6dzuCnZyX_ELx28RnNmr-4cOvN-zEOCb3mLSPuQncyOxlA

565 «Ադրբեջանցիները Պղծել Են Վազգեն Սարգսյանի Արձանը», Lurer.Com, 18 նոյեմբերի, 2020թ., https://lurer.com/?p=395099&l=am

566 Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեսանյութ է հրապարակել գրավված Թալիշ գյուղից (Azertag.Az, 2020թ. հոկտեմբերի 5). տես https://video.azertag.az/en/site/video/103481. դիտվել է/հասանելի է եղել 2021թ. փետրվարի 21-ին:

567 Karabakh Records (@KarabakhRecords), «Ակնաղբյուր գյուղ, Ասկերան, Արցախ — ադրբեջանական օկուպացիայից առաջ և հետո», թվիթերյան գրառում, 18 մարտի, 2021թ., https://twitter.com/KarabakhRecords/status/1372503310960357384

568 MedMedia TV, "Культурная Автономия От Алиева и Его Бармалеев" November 9, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=WclD4Pin0rE

տեսնել նոր շինարարական հրապարակներ:[569] Ջրամբարն ընդգրկված է Շուշիի շրջանի պատմամշակութային հուշարձանների ցանկում:[570]

Արցախի մշակութային ժառանգության պահպանման համար մտահոգիչ է Ադրբեջանի կողմից Արցախի տարածքում խոշորածավալ ճանապարհաշինական աշխատանքների իրականացումը: Ադրբեջանական կողմը նախաձեռնել և կատարում է հսկայածավալ հողաշինական աշխատանքներ, հատկապես կառուցվող ճանապարհների նախագծերից ելնելով՝ փոխում է լանդշաֆտը և ռելիեֆը: Մասնավորապես հատվել են մեծ թվով ծառեր, կատարվում են պայթեցման աշխատանքներ, նախագծով կառուցվելիք ճանապարհի անցմանը խանգարող բոլոր նախկին շինությունները և կառույցները, անկախ իրենց մշակութային արժեքից ու նշանակությունից, անխտիր քանդվում են կամ վտանգված են, ինչպես, օրինակ՝ Մոշխմհատ գյուղից ոչ հեռու գտնվող Թուխնակալ ապարանքը, Հեղինեի Քույր սրբատեղին, Մադաթաշեն գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին, նրան կից գերեզմանատունը և Ավետարանոց գյուղի կամուրջը:[571]

Պատկեր 13.29. Իվան Թևոսյանի արձանի քանդումը, 2021թ.-ի մարտ (Աղբյուրը՝ Եղիա Թաշչյանի կողմից թվիթերում տեղադրված տեսանյութի սկրինշոթ):

569 Թադևոս Թամիրյանի ջրամբարի 2019-2021 թվականների արբանյակային պատկերները տես՝ https://public.flourish.studio/visualisation/7359596/

570 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր» (Արցախի արդարադատության նախարարություն, 17 մարտի, 2017թ.), էջ 28, https://minjustnkr.am/nkr/documents/06-320ÕoÕ¡Õ·.pdf

571 ««Ադրբեջանի ճանապարհները» և հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգները», Monument Watch, 13 հոկտեմբերի, 2021թ., https://monumentwatch.org/en/alerts/the-roads-of-azerbaijan-and-threats-to-the-armenian-cultural-heritage/

Պատկեր 13.30. Վազգեն Սարգսյանի հուշակոթողը, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

Պատկեր 13.31. Թալիշ գյուղի «Վերածնված Թալիշ» հուշարձանը, 2016-2017թթ.-ին և 2020թ.-ին, (Աղբյուրը՝ Առավոտ օրաթերթ):

Ադրբեջանի կողմից նախկինում ոչնչացված պատմամշակութային կոթողները

Հարկ է նշել, որ ադրբեջանցիների կողմից հայկական մշակութային հուշարձանների, կառույցների դիտավորյալ ոչնչացման երևույթը նորություն չէ: Դեռևս 1990-ականներից Ադրբեջանում և Նախիջևանում պետական մակարդակով իրականացվել և այժմ էլ շարունակվում է հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականությունը: 1998-2006թթ.-ի ընթացքում ադրբեջանցիները ոչնչացրել են 5-17-րդ դարերով թվագրվող Ջուղայի[572] հայտնի գերեզմանոցի շուրջ 3000 գեղաքանդակ, արձանագիր խաչքար ու տապանաքար:[573] Ընդհանուր առմամբ՝ 1997 և 2006 թվականների միջև ընկած ժամանակահատվածում Նախիջևանում ոչնչացվել է 89 հայկական միջնադարյան եկեղեցի, 5840 զարդանախշ խաչքար և 22000 պատմական գերեզմանաքար:[574]

Պատկեր 13.32. Ջուլֆայի (Ջուղա) միջնադարյան հայկական գերեզմանատունը 1980-ականներին (Աղբյուրը՝ Սամվել Կարապետյան, «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս»):

572 ՀՀ ԱԳՆ, «Արաքսի նոր արցունքները» 2011թ, https://www.youtube.com/watch?v=zj__XvnQGP0

573 Ջուղա քաղաքը տեղակայված է եղել այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ջուլֆայի շրջանի Ջուղա գյուղի մերձակայքում՝ Արաքս գետի ձախ ափին:

574 Dale Berning Sawa, “Monumental Loss: Azerbaijan and ‘the Worst Cultural Genocide of the 21st Century,’” The Guardian, March 1, 2019, sec. Art and design, https://www.theguardian.com/artanddesign/2019/mar/01/monumental-loss-azerbaijan-cultural-genocide-khachkars.

Պատկեր 13.33. Գերեզմանատան ընկած խաչքարները փշրվում-մանրացվում են և բարձվում բեռնատարների մեջ՝ երկաթուղու՝ Արաքս գետի ափին նայող հատվածում բեռնաթափվելու նպատակով (Աղբյուրը՝ Սամվել Կարապետյան, «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս»):

2006թ.-ի հունվարի 19-ին Եվրոպական խորհրդարանը դատապարտեց Ջուղայի խաչքարերի ոչնչացումն ու ընդունած բանաձևով կոչ արեց ադրբեջանական իշխանություններին վերջ դնել խաչքարերի ոչնչացմանը: ԵԽ-ն ցանկանում էր նաև պատվիրակություն ուղարկել այդ տարածք, ինչը, սակայն, մինչ այժմ մերժում է Ադրբեջանը:[575] Հետևանքը եղավ այն, որ Ջուղայի խաչքարերը և արձանագիր տապանաքարերը հիմնովին ոչնչացվեցին:[576] Ակնհայտ է, որ միայն դատապարտման կոչերը անարդյունավետ են այն դեպքերում, եթե կա ֆիզիկական և մշակութային ցեղասպանություն իրագործելու վճռական կամք և նախաձեռնություն:

575 «Եվրոպական խորհրդարանի բանաձևը Ադրբեջանում մշակութային ժառանգության վերաբերյալ» (Եվրոպական խորհրդարան, 16 փետրվարի, 2006թ.), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-6-2006-0069_EN.html

576 Dale Berning Sawa, "Monumental Loss: Azerbaijan and 'the Worst Cultural Genocide of the 21st Century,'" The Guardian, March 1, 2019, sec. Art and design, https://www.theguardian.com/artanddesign/2019/mar/01/monumental-loss-azerbaijan-cultural-genocide-khachkars.

Հիմնովին ոչնչացվել են նաև Նախիջևանում գտնվող Ապրակունիսի, Ծորոտի, Քռնայի, Ցղնայի վանքերն ու եկեղեցիները:[577]

Հայկական եկեղեցիների և վանքերի ոչնչացման հաճախ հանդիպող եղանակներից է նաև դրանց վերափոխումը մզկիթների: Ոչնչացվել է Ագուլիսի[578] եկեղեցին, իսկ եկեղեցու տեղում կառուցվել է մզկիթ: Որոշ դեպքերում ադրբեջանցիները իրենց վերահսկողության տակ գտնվող հայկական պատմամշակութային և կրոնական կոթողները ձևափոխել են՝ ոչնչացնելով դրանց վրա առկա հայերեն արձանագրությունները և հիմա ներկայացնում և օգտագործում են իբրև իրենց սեփականություն՝ դրանց տալով այլ բովանդակություն: Դրանով Ադրբեջանը փորձում է ժխտել այդ կոթողների հայապատկանությունը: Մասնավորապես, օրինակ, Ադրբեջանի Գյանջա քաղաքում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցին վերածվել է կամերային երաժշտական սրահի, իսկ եկեղեցու պատերին առկա հայկական արձանագրությունները մաքրվել են: 1992թ.-ի բռնագաղթից հետո Գյուլիստան գյուղը հրդեհվել է, իսկ Սուրբ Աստվածածին եկեղեցին (17-րդ դար)՝ պայթեցվել, հիմնահատակ քանդվել է Կամո գյուղի Սուրբ Ամենափրկիչ (17-րդ դար) եկեղեցին:[579]

Արցախի պատմական և մշակութային կոթողների հայապատկանության ժխտում և դրանց «աղվանական» ծագման քարոզ

Ադրբեջանում լայնորեն տարածվում է այն քարոզչությունը, ըստ որի՝ իբրև թե Կովկասյան Ալբանիան ադրբեջանցիների նախնիների հայրենիքն է, թեև զուգահեռ խոսվում է նաև ադրբեջանցիների թուրքական ինքնության և կենտրոնաասիական ծագման մասին: Ադրբեջանն առաջ է քաշում այս հակասական դրույթը՝ փորձելով պնդել, որ Արցախի քրիստոնեական հուշակոթողները ոչ թե հայկական են, այլ ալբանական, ըստ այդմ, համարվում են իրենց պատմական ժառանգությունը: Ադրբեջանը համառորեն պնդում է այս դրույթը չնայած այն փաստին, որ Արցախը թեև սահմանակից է եղել Կովկասյան Ալբանիային, բայց երբեք չի եղել վերջինիս կազմում:[580] Մասնավորապես, 2020թ.-ի նոյեմբերի 25-ին իր թվիթերյան էջում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը գրել է. «Թեև հայ «պատմագետները» փորձել են հայկականացնել ալբանական եկեղեցիները, մենք դա թույլ չենք տվել.Կովկասյան Ալբանիային վերագրվող պատմագիտական հուշարձանները մեր պատմամշակութային ձեռքբերումն են»:[581] Մեկ այլ հրապարակմամբ Ի. Ալիևը գրել է. «Բոլոր վանքերը, որոնք գտնվում են մեր տարածքներում, մեր պատմական ժառանգությունն են, որոնք պահպանվում են պետության կողմից»:[582]

577 Մանասյան Ալեքսանդր and Ղևոնդյան Ալեն, Լեռնային Ղարաբաղ. Ինչպես է Դա Եղել (Երևան: ՀՀ Նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011թ.):

578 1987 թ. հոկտեմբերին ոչնչացվեց Ագուլիսի գերեզմանատունը, որտեղ գտնվում էր ավելի քան 400 տապանաքար՝ ազգագրական արժեք ներկայացնող արձանագրություններով:

579 Ադիբեկյան և Էլիբեգովա, «Հայատյացությունը Ադրբեջանում»:

580 Walker, “The Armenian Presence in Mountainous Karabakh.”

581 Լուսինե Ոսկանյան, «Արցախի կորսված հուշարձանները. շարունակվող վանդալիզմ», Փաստերի ստուգման հարթակ, հոկտեմբերի 9, 2021թ., https://fip.am/17184

582 «Իլհամ Ալիև. Մեր տարածքի բոլոր տաճարները մեր պատմական ժառանգությունն են», Report News Agency, 24 նոյեմբերի, 2020 թ., https://report.ge/en/world/ilham-aliyev-all-the-temples-on-our-territory-are-our-historical-heritage/ «Իլհամ Ալիև. Մեր տարածքի բոլոր տաճարները մեր պատմական ժառանգությունն են», Report News Agency, 24 նոյեմբերի, 2020 թ., https://report.ge/en/world/ilham-aliyev-all-the-temples-on-our-territory-are-our-historical-heritage/

Ներկայումս ադրբեջանական իշխանությունը լծված է Արցախի հայկական հոգևոր սրբատեղիներից մեկի՝ Դադիվանքի «ալբանականացմանը»: Դադիվանքը հայկական առաքելական միջնադարյան վանական համալիր է: Այն հիմնադրել է Հայաստանում քրիստոնեությունը տարածած Թադեոս առաքյալի աշակերտ Դադին: Կոչվել է նաև Խութավանք, որովհետև կառուցվել է խութի (բլրակի) վրա: Նշենք, որ խութը նույնպես հայկական բառ է: Հայ մատենագրական աղբյուներում Դադիվանքը առաջին անգամ հիշատակվել է 9-րդ դարում:

Ձանալով «ալբանացնել» տեղավայրը՝ Ադրբեջանում բնակվող ալբանա-ուդի քրիստոնեական համայնքի անդամները 2020թ.-ի դեկտեմբերի 5-ին այցելել են Դադիվանք (ըստ ադրբեջանական աղբյուրների՝ Խուդավանգ վանք), որը գտնվում է Արցախի Քարվաճառի (Քելբաջար) շրջանում: Համայնքի փոխնախագահ Ռաֆիկ Դանակարին նշանակվել է վանքի քարոզիչ: Ադրբեջանի ալբանա-ուդի քրիստոնեական համայնքի նախագահ Ռոբերտ Մոբիլին նշել է, որ «Քելբաջարը մեզ համար պարզապես տեղանք չէ, այլ բազմաթիվ ալբանական եկեղեցիների հայրենիք: Այսօր մենք գտնվում ենք Խուդավանգ վանքում իբրև ալբանական եկեղեցու հետևորդներ, այստեղ մենք կատարում ենք հոգևոր ծառայություններ: Քելբաջարի սրբավայրը պատկանել է ալբանացիներին, որոնք մասնակից են եղել ադրբեջանական ժողովրդի էթնոգենեզին»:[583]

Ադրբեջանի մշակույթի փոխնախարար Անար Քամիրովը, իր թվիթերյան էջում հրապարակելով Դադիվանքի լուսանկարները, անվանափոխել էր հայկական վանական համալիրի անունը՝ գրելով, թե իբր «Խուդավանգը հին Կովկասյան Ալբանիայի քաղաքակրթության լավագույն վկայություններից է, որը 9-13-րդ դարերում կառուցել է Ալբանիայի թագաժառանգ Վախթանգի կինը Ադրբեջանի Քալբաջարի շրջանում: Համալիրն ընդգրկում է Արզու Խաթուն եկեղեցին, Հասանի եկեղեցին, բազիլիկան և 2 մատուռներ»:[584] Նույն ժխտողական և հայկական մշակութային ժառանգականության «ալբանականացման» քաղաքակությունը վարվում է նաև հայկական մյուս եկեղեցիների և վանքերի նկատմամբ, ինչը նույնպես մշակութային հանցագործություն է՝ մշակութային բազմազանության ժխտմանը և ուրիշների մշակույթը անարգելուն ուղղված բացահայտ քայլ:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը իր ժողովրդին ուղղված ուղերձում անդրադարձել է Արցախի հայկական մշակութային ժառանգությանն ու եկեղեցիներին՝ շարունակելով խեղաթյուրել ու կեղծել պատմական փաստերն ու դրանք կրկին ներկայացնել որպես ալբանական մշակույթի մաս: «Քելբաջարի պատմական հուշարձանները մեր մեծ հարստությունն են: Ե՛վ մզկիթները, և՛ եկեղեցիները մեր պատմական հարստությունն են: Ամբողջ աշխարհը պիտի իմանա, որ Քելբաջարում գտնվող եկեղեցիները պատկանում են Կովկասյան Ալբանիա հնագույն պետությանը»[585] ,- հայտարարել է Ալիևը՝ հավելելով, թե հայերը հայացրել են ալբանական եկեղեցիներն ու յուրացրել:

Մեկ այլ հրապարակմամբ նա նշել է հետևյալը.

583 "Albanian-Udi Christian Community Returns to Khudavang Monastery in Kalbajar [VIDEO]," AzerNews.Az, December 5, 2020, sec. Nation, https://www.azernews.az/nation/173555.html.

584 Անար Քարիմով (@Anar_Karim), «#Խուդավանգ վանքը հին կովկասյան ալբանական քաղաքակրթության լավագույն վկայություններից մեկն է», 11 նոյեմբերի, 2020 թ., https://twitter.com/Anar_Karim/status/1326437397270310912

585 Էմմա Չոբանյան, «Ալիևը շարունակում է կեղծել պատմությունն ու Արցախի հայկական եկեղեցիները որպես ալբանական ներկայացնել», Ֆակտոր տեղեկատվական կենտրոն, 25 նոյեմբերի, 2020, https://factor.am/314135.html

«Նրանք (հայերը) փոխել են մեր քաղաքների և գյուղերի անունները և նույնիսկ քրիստոնեական կրոնական հուշարձանների ծագումը: Նրանք փոխել են քրիստոնեապաշտ հին ուդի ժողովրդի կրոնական ժառանգության ծագումը: Նրանք հին Կովկասյան Ալբանիայի եկեղեցիները դարձրել են հայկական եկեղեցիներ: Այդպիսով՝ նրանք կատարել են բազմաթիվ հանցավոր արարքներ»:[586]

Բացի այն փաստից, որ Արցախը՝ պատմական Հայաստանի ամենաարևելյան նահանգը, սահմանակից է եղել, սակայն երբեք Կովկասյան Ալբանիայի (Աղվանքի) մաս չի կազմել, գրեթե բոլոր հայկական վանքերի ու եկեղեցիների պատերին առկա են հայերեն բազմաթիվ փորագրություններ՝ այդպիսով վկայելով դրանց ծագման մասին և հերքելով ադրբեջանական պրոպագանդան: Ուստի, Ադրբեջանը կիրառում է «քերելու» և «պատերից հայկական հետքերը մաքրելու» մեթոդները: Այլ դեպքերում հայերեն փորագրություններով տապանաքերերն ու հուշակոթողները գլխիվայր շուռ են տրվում և լուսանկարվում՝ դրանք ալբանական ներկայացնելու նպատակով: Ադրբեջանի նախագահի ներկայությամբ ադրբեջանցի զինվորներին հրաման է տրվել «հղկելու» միջնադարյան հայերեն արձանագրությունները: Սա ևս մեկ անհերքելի վկայություն է այն բանի, որ հայկական մշակութային արժեքներին վնաս հասցնելու արշավն ուղղորդվում է հենց Ադրբեջանի ղեկավարության կողմից:[587]

Այսպիսով՝ Ադրբեջանը մի կողմից ոչնչացնում է հայկական պատմամշակութային ժառանգությունը, մյուս կողմից հայտարարում, թե այդ ժառանգությունը հայկական չէ և վերագրում է Կովկասյան Ալբանիային:

Ադրբեջանի կողմից խախտված իրավական նորմերը և պաշտպանական գործընթացները

Մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացումը պատերազմական հանցագործություն է: Այլ ազգերի քաղաքակրթական արժեքների նկատմամբ անհանդուրժողականության ցանկացած դրևսորում՝ մշակութային կամ կրոնական ժառանգությանը միտումնավոր վնաս հասցնելը կամ ոչնչացնելը, պետք է առաջ բերի իրավական պատասխանատվություն՝ հակառակ դեպքում կստեղծի մշակութային ոճրագործությունների շարունակականություն:

Մշակութային և կրոնական կոթողները պաշտպանված են սովորութային միջազգային իրավունքով և «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954թ.-ի կոնվենցիայով, որը վավերացրել են թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը:

Հաագայի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ մշակութային արժեքներ են համարվում. ա) «յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ ստեղծագործությունները, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները, կրոնական կամ աշխարհիկ, հնագիտական տեղավայրերը, ճարտարապետական համալիրները, որոնք իբրև այդպիսին ներկայացնում

586 "Armenia Has Committed Many Criminal Acts - President Aliyev," Azvision.Az, January 13, 2021, https://en.azvision.az/news/138049/-armenia-has-committed-many-criminal-acts-president-aliyev.html

587 Սիմոն Մաղաքյան (@simonforco), «Ինչպես ես կանխատեսել էի նոյեմբերին, Ադրբեջանն այժմ գնում է գրավված եկեղեցիների միջնադարյան հայերեն արձանագրությունները ջնջելու ուղղությամբ», 17 մարտի, 2021թ., https://twitter.com/simonforco/status/1371951305267277832

են պատմական կամ գեղարվեստական հետաքրքրություն, արվեստի գործերը, ձեռագրերը, գրքերը, գեղարվեստական, պատմական կամ հնագիտական նշանակության այլ առարկաներ, ինչպես նաև գիտական հավաքածուները կամ գրքերի, արխիվային նյութերի կամ վերը նշված արժեքների վերարտադրությունների կարևոր հավաքածուները»:[588] Ըստ այս սահմանման՝ վերը հիշատակված բոլոր ոչնչացված կոթողները համարվում են մշակութային արժեք:

Ի հավելումն՝ Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն.

1. «Պետական բարձր մակարդակ ապահովող կողմերը պարտավորվում են հարգել ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով դրանց և դրանց անմիջական հարևանությամբ գտնվող պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն և ձեռնպահ մնալ այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված պարտավորությունները կարող են չկատարվել միայն այն դեպքում, եթե հնարավոր չէ խուսափել ռազմական գործողություններից:

3. Այսօրինակ դեպքերից բացի՝ պետական բարձր մակարդակ ապահովող կողմերը պարտավորվում են արգելել, ըստ անհրաժեշտության՝ կանխել մշակութային արժեքների գողության, կողոպուտի կամ ապօրինի յուրացման բոլոր հնարավորությունները, ինչպես նաև դրանց նկատմամբ վանդալիզմի ցանկացած գործողություն...» (ընդգծումը մերն է):[589]

Հաագայի կոնվենցիային կից 2-րդ արձանագրության 7-րդ հոդվածը սահմանում է.

«չսահմանափակելով ռազմական գործողությունների իրականացման ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքով պահանջվող նախազգուշական տարբեր միջոցները, հակամարտության յուրաքանչյուր Կողմ.

ա) անում է հնարավոր ամեն բան՝ համոզվելու, որ հարձակման ենթակա կառույցները, ըստ կոնվենցիայի 4-րդ կետ, պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքներ չեն,

բ) ձեռնարկում է հնարավոր բոլոր նախազգուշական միջոցառումները, որպեսզի հարձակման միջոցների և մեթոդների ընտրության ժամանակ, ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքները չվնասվեն կամ վնասները լինեն առավել աննշան,

գ) ձեռնպահ է մնում ցանկացած այնպիսի հարձակման վերաբերյալ որոշում ընդունելուց, որը կարող է պատահականորեն վնաս պատճառել, ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքներին, և որը չի արդարացվի ակնկալվող կոնկրետ և ուղղակի ռազմական առավելություն ստանալու տեսանկյունից:

դ) ընդհատում կամ դադարեցնում է հարձակումը, եթե ակնհայտ է դառնում.

(i) որ կառույցը, ըստ ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի, պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեք է,

(ii) որ այդ հարձակումը կարող է պատահականորեն վնաս հասցնել, ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքներին, և որը չի արդարացվի ակնկալվող կոնկրետ և ուղղակի ռազմական առավելություն ստանալու տեսանկյունից»:[590]

588 Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա, 1954թ.:

589 Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա, 1954թ., հոդ. 4:

590 Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրություն (ՅՈՒՆԵՍԿՕ, 26 մարտի, 1999թ.), հոդ. 7, https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/Treaty.xsp?action=openDocument&documentId=F0628265ED4F2118412567BB003E0B0C

Ակնհայտ է, որ Ադրբեջանը չի պահպանել վերը հիշատակված սկզբունքները, քանի որ առնվազն մեկ դեպքում այն թիրախավորված հարձակում է իրականացրել ոչ ռազմական կառույցի (Ծուշիի եկեղեցին) վրա, մեկ այլ դեպքում, մշակութային հուշարձանները վերահսկողության տակ առնելուց հետո, դրանք ոչնչացրել է և ենթարկել վանդալիզմի:

Հաագայի կոնվենցիայի 2-րդ արձանագրության 9-րդ հոդվածը նշում է.

> 1. Չսահմանափկելով կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները՝ մի Կողմի տարածքն ամբողջովին կամ մասնակիորեն օկուպացրած Կողմը օկուպացված տարածքի առնչությամբ արգելում կամ կանխում է. […]
>
> գ) մշակութային արժեքի ցանկացած վերափոխում և դրա օգտագործման ձևի փոփոխություն, որոնք նպատակ ունեն թաքցնելու կամ ոչնչացնելու մշակութային, պատմական կամ գիտական վկայությունները:[591]

Ըստ վերոնշյալների՝ Ադրբեջանի գործողությունները՝ ուղղված հայկական մշակութայի կոթողների վրա առկա արձանագրությունների վերացմանը և կոթողների պատմամշակութային տեսքի փոփոխությանը, արգելված արարքներ են: Դրանով Ադրբեջանը փորձում է վերացնել այդ կոթողների հայկականության պատմական վկայությունը և առհասարակ Արցախում վերացնել հայկական մշակութային հետքը:

Հաագայի կոնվենցիայի 2-րդ արձանագրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «լուրջ խախտում» է համարվում կոնվենցիայի և 2-րդ արձանագրության դրույթների սահմանումներով պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքը հարձակման թիրախ դարձնելը, զանգվածաբար ոչնչացնելը կամ յուրացնելը: Միջազգային քրեական դատարանի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի «b» կետի (ix) ենթակետի համաձայն՝ «այլ լուրջ խախտումների» թվին են դասվում «հոգևոր-կրոնական, կրթական-մշակութային, գիտական կամ բարեգործական նշանակության կառույցների, պատմական հուշարձանների վրա դիտավորյալ հարձակումները… եթե դրանք ռազմական օբյեկտներ չեն»: Թեպետ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը չեն վավերացրել Հռոմի ստատուտը, այն փաստը, որ նման գործողությունները համարվում են լուրջ խախտումներ, խոսում է միջազգային նորմերի հիմքում ընկած արժեքների մասին, որոնք կարող են կիրառվել սովորույթների միջոցով:

Սահմանված գործընթացի տեսանկյունից, Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն, պայմանավորվող պետական իշխանությունները իրավունք ունեն տեխնիկական օժանդակության խնդրանքով դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ իրենց մշակութային արժեքների պաշտպանությունը կազմակերպելու համար կամ այլ խնդրով, որն առնչվում է սույն կոնվենցիայի կամ դրա կատարման կանոնակարգերի կիրառմանը: Հաագայի կոնվենցիային կից 2-րդ արձանագրության 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կողմերը կարող են դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ իրենց մշակութային արժեքների պաշտպանության կազմակերպմանը տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար, այդ թվում՝ մշակութային արժեքների պաշտպանության ուղղությամբ նախապատրաստական միջոցների, արտակարգ իրավիճակների դեպքում կանխարգելիչ կամ կազմակերպչական միջոցների կամ մշակութային արժեքների ազգային ցանկը կազմելու համար կամ սույն արձանագրության կիրառումից ծագող ցանկացած այլ հարցում օգնություն ցուցաբերելու մասին խնդրանքով»:[592]

591 Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրություն, հոդ. 7:

592 Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրություն:

2020 թվականի դեկտեմբերի 11-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն գործարկել է Հաագայի 1954 թվականի կոնվենցիայով իրեն վերապահված մանդատը, որի հիման վրա ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարը պատրաստակամություն է հայտնել Արցախում ամենանշանակալից մշակութային կառույցների վիճակը գնահատելու նպատակով ձևավորել անկախ տեխնիկական առաքելություն:[593] Սակայն այդ գործընթացն ամիսներ շարունակ արհեստականորեն արգելափակվել է Ադրբեջանի կողմից:[594] Ավելին, ի պատասխան՝ Ադրբեջանը մեղադրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ մշակութային ժառանգության պաշտպանությունը քաղաքականացնելու համար:[595]

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ) 16-րդ գլխավոր ժողովը 2008 թվականին ընդունել է մի բանաձև, որով միջազգային հանրության մտահոգությունն է արտահայտել Ջուղայի հայկական հուշարձանների նկատմամբ վանդալիզմի գործողությունների վերաբերյալ և ափսոսանքով նշել, որ «այս ժառանգությունը, որը ժամանակին իր արժանի տեղ էր զբաղեցնում համաշխարհային ժառանգության գանձերի թվում, այսօր այլևս չի կարող փոխանցվել գալիք սերունդներին»:[596]

2021թ.-ի սեպտեմբերի 27-ին ԵԽԽՎ-ն ընդունեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում սահմանված մարդասիրական նորմերի խախտումների մասին համար 2391 բանաձևը, որտեղ նշվում է, որ.

«Երկարատև հակամարտությունն աղետալի ազդեցություն է ունեցել տարածաշրջանի մշակութային ժառանգության և արժեքների վրա, որի համար պատասխանատու են թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը: Ըստ այդմ՝ վեհաժողովը.

18.1. դատապարտում է այն վնասներն ու ավերումները, որոնց համար պատասխանատու է Հայաստանը՝ Ադրբեջանին վերադարձված հակամարտության նախկին տարածքներում և մասնավորապես վերջին 30 տարիների ընթացքում Աղդամի, Ֆիզուլիի և այլ տարածքների գրեթե ամբողջական ավերումն ու թալանը, ինչպես նաև մշակութային ժառանգության փոխադրումը,

18.2. դատապարտում է վերջին 30 տարիների ընթացքում Ադրբեջանում՝ մասնավորապես Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում, հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը, որի համար պատասխանատվություն է կրում Ադրբեջանը, և դատապարտում է 6-շաբաթյա պատերազմի ընթացքում հայկական մշակութային ժառանգությանը դիտավորությամբ վնասներ հասցրած գործողությունները, մասնավորապես՝ Շուշիի Ղազանչի (Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ) եկեղեցու առերևույթ դիտավորյալ ռմբակոծումը, ինչպես նաև հակամարտության ընթացքում և դրանից հետո այլ եկեղեցիների և գերեզմանատների վնասումը կամ ոչնչացումը,

18.3. հայկական մշակութային ժառանգությանը հասցված վերջին ավերումների ու տված վնասների օրինակով շարունակում է մտահոգված մնալ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական բազմաթիվ եկեղեցիների, վանքերի, այդ թվում՝ Խութավանքի/Դադիվանքի, խաչքարերի և մշակութային այլ արժեքների ճակատագրով,

18.4. մտահոգություն է հայտնում Ադրբեջանում «կովկասական ալբանական» ժառանգություն

593 Nagorno-Karabakh: Reaffirming the Obligation to Protect Cultural Goods, UNESCO Proposes Sending a Mission to the Field to All Parties, UNESCO (Nov. 11, 2020), https://en.unesco.org/news/nagorno-karabakh-reaffirming-obligation-protect-cultural-goods-unesco-proposes-sending-mission.

594 Mehdiyev, "Azerbaijan Responds to UNESCO's Claims of Karabakh Mission Delay," Caspian News, December 24, 2020, https://caspiannews.com/news-detail/azerbaijan-responds-to-unescos-claims-of-karabakh-mission-delay-2020-12-24-0/.

595 "No:479/20, Commentary of the Press Service Department of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan to the UNESCO press release on sending of a mission to Azerbaijan," Republic of Azerbaijan Ministry of Foreign Affairs, December 22, 2020, 20, https://mfa.gov.az/en/news/xin.gov.az.

596 «ԻԿՕՄՕՍ-ի 16-րդ Գլխավոր ասամբլեան. Գլխավոր ասամբլեայի բանաձև» (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ, 4 հոկտեմբերի, 2008թ.), էջ 3:

մասին ասույթի ձևավորման խրախուսման վերաբերյալ՝ նպատակ ունենալով փոխարինել «հայկական» համարվող մշակութային ժառանգությունը,

18.5. առաջարկում է Հայաստանին և Ադրբեջանին՝ ապահովել ՅՈՒՆԵՍԿՕ-ի անխափան մուտքը իրենց պետություններում մշակութային արժեք(ներ) և ժառանգություն ունեցող տարածքներ ու տեղավայրեր՝ գնահատելու վնասները և անհրաժեշտ քայլերը՝ միտված եղածը պաշտպանելուն,

18.6. կոչ է անում ՅՈՒՆԵՍԿՕ-ին ուսումնասիրել «Կովկասյան Ալբանիայի» ժառանգության մասին ձևավորվող ասույթի բովանդակությունը՝ պետություններից յուրաքանչյուրի կողմից դրա մանիպուլացումը բացառելու նպատակով»:[597]

Ամփոփելով նշենք, որ ներկայումս առնվազն 1456 հայկական պատմական և մշակութային հուշարձան հայտնվել են ադրբեջանական վերահսկողության ներքո: Դրանց թվում են 161 հայկական եկեղեցի, Տիգրանակերտի հնագիտական տարածքը, Ազոխի պալեոլիթյան քարանձավը, Նոր Կարմիրավանի դամբարանները, Միրիկը, Կերենը և հնագիտական տարբեր հուշարձաններ՝ պալատներ, կամուրջներ և պատմական վաղեմի թաղամասեր: Դրանցից բացի՝ ադրբեջանական վերահսկողության տակ են անցել նաև 8 պետական թանգարաններ և պատկերասրահներ՝ 19311 ցուցանմուշով, ինչպես նաև Շուշիի հնագույն գորգերի և կարպետների ու հայկական դրամի թանգարանները, որոնք գործում էին մասնավոր հիմունքներով:[598] Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2021 թվականի հունվարի 26-ին հրապարակված զեկույցում ներկայացված է մշակութային այն կոթողների ցանկը, որոնք անցել են ադրբեջանական վերահսկողության տակ, և որոնց սպառնում է ոչնչացման և վանդալիզմի նույն վտանգը, ինչ վերը նշված մշակութային կոթողների դեպքում:[599]

Հարկ է նշել, որ սույն զեկույցում ամփոփված են նաև բազմաթիվ փաստեր, որոնք հասանելի են ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումներից: Կարելի է ենթադրել, որ բազմաթիվ գործողություններ դեռ մնում են անհայտ, քանի որ չեն հրապարակվում: Այդուհանդերձ նույնիսկ եղած այս փաստերը վկայում են, որ դեռևս կան պատմամշակութային ժառանգության բացառիկ կոթողներ, որոնց գոյությունը վտանգված է, և անգործության ու անտարբերության յուրաքանչյուր ժամ ավելացնում է սպառնալիքը՝ դրանք դասակարգելու արդեն ոչնչացված այն կոթողների շարքին, որոնց ներկայությունը այլևս ողջ մարդկությունը չի կարող վայելել: Հետևաբար՝ պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեխնիկական առաքելության մուտքն Արցախ (Լեռնային Ղարաբաղ) ապահովելու համար, որպեսզի գալիք սերունդներին փոխանցվի ժառանգությունից մնացածի գոնե մի մասը: Այլապես միջազգային հանրությունը պետք է ափսոսանքի խոսքերից ավելին անի և հստակ իրավական պատասխանատվության մեխանիզմներ կիրառի մշակութային ժառանգության ոչնչացման դեպքերի, այդ թվում՝ մշակութային զտման, վանդալիզմի, ջնջման և մարդկության մշակութային ժառանգության նկատմամբ իրագործվող բազմաթիվ հանցանքների համար, իսկ փրկված մշակութային ժառանգության պահպանության նպատակով իրականացնի մշտադիտարարկում և արդյունավետ վերահսկողություն:

597 «2391 (2021թ.) բանաձև. Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության մարդասիրական հետևանքները /Լեռնային Ղարաբաղի հակամարտություն»:

598 «Արցախում (Լեռնային Ղարաբաղում) հայկական մշակութային ժառանգություն՝ Ադրբեջանի իրականացրած վանդալիզմի դեպքերը և ոչնչացման սպառնալիքը»:

599 «Արցախում (Լեռնային Ղարաբաղում) հայկական մշակութային ժառանգություն՝ Ադրբեջանի իրականացրած վանդալիզմի դեպքերը և ոչնչացման սպառնալիքը», էջ 33:

Թուրքիայի միջոցով փոխադրված սիրիացի վարձկանների ներկայությունն Ադրբեջանում և Արցախում

«Մենք վարձկաններ չունենք: Սա մեր պաշտոնական հայտարարությունն է: [Պատերազմի] սկզբից ոչ մի երկիր չի ներկայացրել գեթ մեկ ապացույց»:

Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիև[600]

«Ադրբեջանից Սիրիա վերադարձա 2020 թվականի դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում: Երկու ամիս Լեռնային Ղարաբաղում կռվելու դիմաց ինձ վճարել են 4000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար թուրքական լիրայով»:

2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից մարտերին մասնակցած Հալեպ քաղաքից սիրիացի վարձկան Աբու Մոհամեդի (կեղծանուն) զրույցից՝ «Ալեպպո-ՀԿ» կազմակերպության հետազոտողի հետ:

Զեկույցի այս բաժինն ուսումնասիրում է 2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի հայության դեմ կռվելու նպատակով Թուրքիայի կողմից Ադրբեջան փոխադրված սիրիացի վարձկանների օգտագործման փաստերը: Ներկայացված ապացույցները ստացվել են համացանցային նյութերի ուսումնասիրման և Սիրիայում, Թուրքիայում և Հայաստանում մեր գործընկեր կազմակերպության՝ «Ալեպպո-ՀԿ»-ի կողմից իրականացված դաշտային հետազոտությունների արդյունքում: Ըստ վարձկաններ օգտագործելու մասին միջազգային համաձայնագրի, որի մասնակից է, ի դեպ, նաև Ադրբեջանը, վարձկան նշանակում է զինված հակամարտությանը մասնակցելու նպատակով հավաքագրված, անձնական օգուտ ստանալու ցանկությամբ շահագրգռված անձ, ով հակամարտության որևէ կողմի քաղաքացի կամ բնակիչ չէ, հակամարտության որևէ կողմի զինված ուժերի կամ կանոնավոր զորքեր ուղարկող այլ պետության զինված ուժերի անդամ չէ:[601] Այս կոնվենցիայից զատ, վարձկանների հավաքագրումը և օգտագործումն ընդհանրապես արգելվում է և նույն կերպ սահմանվում է միջազգային մարդասիրական իրավունքի կողմից (տես սույն զեկույցի «Իրավական շրջանակ» բաժինը): Բացահայտված և ստորև ներկայացված ապացույցները փաստում են, որ Արցախում հայերի դեմ կռվելու նպատակով Թուրքիան հավաքագրել և հակամարտության ռազմական գործողությունների գոտի է փոխադրել սիրիացիների, որոնք մասնակցել են մարտական գործողություններին՝ անձնական շահ ստանալու նպատակով, ինչը համարվում է վարձկանների օգտագործման՝ ՄՄԻ արգելքի խախտում: Բացի այդ, ներկայացված ապացույցները բացահայտում են, որ այդ

600 "Ilham Aliyev Was Interviewed by France 24 TV Channel," Official web-site of President of Azerbaijan Republic, October 14, 2020, https://president.az/en/articles/view/43037/print.

601 «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և պատրաստման դեմ միջազգային կոնվենցիա» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 4 դեկտեմբերի, 1989թ.), հոդ. 1 (2), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-against-recruitment-use-financing-and

խախտումները ոչ միայն կրել են շարունակական բնույթ, այլ գրանցվել են համակարգային ձախողումներ, որոնք նպաստել են շարունակական խախտմանը, ինչը պետք է հասցեագրվի միջազգային հանրության կողմից:

Ինչ վերաբերում է զեկույցի այս բաժնում մինչև 2021 թվականի մայիս ամիսը կատարված համացանցային ուսումնասիրություններին, ապա պետք է նկատել, որ սոցիալական ցանցերի մասնագետները և հետազոտողները մշտադիտարկել և արխիվացրել են սոցիալական կայքերում (օրինակ, Facebook, Twitter, Youtube, Instagram հարթակներում) շրջանառված, ապացույց հանդիսացող, ինչպես նաև ադրբեջանական, սիրիական, թուրքական, քրդական և տելեգրամյան այլ ալիքներով տարածված լուսանկարներն ու տեսանյութերը: Արխիվացված մեդիա կոնտենտն ուսումնասիրել են վերլուծաբաններ, որոնց մայրենին արաբերենն է, թուրքերենը, քրդերենը կամ անգլերենը, ինչպես նաև Mnemonics-ի փորձագետ վերլուծաբանները, որոնք վերլուծել են հավաքված փաստերի մեթատվյալները և գեոլոկացիան: Վարձկանությանը վերաբերող վերաբերելի իրավական շրջանակների իրավական ուսումնասիրությունը կատարվել է միջազգային իրավունքի մասնագետի կողմից (տե՛ս սույն զեկույցի «Իրավական շրջանակ» բաժինը):

Բացի այս, 2020 թվականի դեկտեմբերից մինչև 2021 թվականի հունիս ամիսը իրականացվել են դաշտային հետազոտություններ, մասնավորապես վկայություններ են հավաքագրվել 44-օրյա պատերազմի ավարտից հետո Սիրիա վերադարձած սիրիացի 5 վարձկանի, պատերազմի ընթացքում զոհված սիրիացի վարձկանների ընտանիքի անդամների և ընկերների (ընդհանուր թվով՝ 4), Սիրիական ազգային բանակի (ՍԱԲ) հսկողության տակ գտնվող տարածքներում գործող 3 անձանց հետ, 2019 թվականի հոկտեմբերին Սիրիայի հյուսիս-արևելքում՝ Ռաս-ալ-Այն շրջանում, թուրքական զինված ուժերի կողմից իրականացված «Խաղաղության գարուն» ռազմական գործողության հետևանքով տեղահանված 3 սիրիահայ տուժողների հետ՝ հարցազրույցների միջոցով: Այս հարցազրույցներից տասներկուսը կատարվել են առերես արաբախոս և հայախոս հետազոտողների կողմից Սիրիրայում, Թուրքիայում և Հայաստանում, իսկ Սիրիայի դժվարհասանելի շրջաններում ապրող մարդկանց հետ երեք հարցազրույց իրականացվել է հեռախոսով: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ հարցազրույցներին մասնակցածներն ունեցել են իրենց անձը թաքցնելու իրավունք: Սակայն զեկույցում կան հարցազրույցի մասնակիցների անձը նույնականացնող տեղեկություններ՝ նրանց հետ համաձայնեցված ծավալով, մասնակիցներին չվտանգելու համար այդ տեղեկություններն առանձին գնահատել են նաև փորձագետները:

Նախապատմություն

2020 թվականի հուլիսի 12-ից 16-ը՝ ՀՀ Տավուշի մարզում Հայաստանի զինված ուժերի և ադրբեջանական զինված ուժերի միջև ընդհարումներից հետո, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց ադրբեջանցի իր գործընկերոջն ընդունել այն փաստը, որ հակամարտությունը չունի ռազմական լուծում:[602] Տավուշում ռազմական գործողությունների ավարտից մի քանի օր հետո Մերձավոր Արևելքում և Սիրիայում գտնվող որոշ ակտիվիստներ, վերլուծաբաններ և լրատվամիջոցներ սկսեցին խոսել Արցախի հայերի դեմ կռվելու նպատակով Թուրքիայի կողմից սիրիացի վարձկաններ հավաքագրելու մասին:

602 «Ն. Փաշինյան. «Տավուշի մարտերն ապացուցեցին՝ ԼՂ հարցը չունի ռազմական լուծում», «Մեդիամաքս», 21 օգոստոսի, 2020թ., https://mediamax.am/am/news/armypolice/39040/

«Հայաստանի և Ադրբեջանի սահմանները. սիրիացի վարձկաններ օգտագործելու միջոցով ստեղծվող թուրքական քաոսի նոր էպիկենտրոնը» արաբական խմբագրական սյունակում Բեյրութի նորարարական ուսումնասիրությունների ինստիտուտի գործադիր տնօրեն Մուհամմադ Շիհաբ Էլ-Իդրիզին 2020 թվականի հուլիսի 19-ին գրել է.

> «Թուրքիան չի սահմանափակվում միայն պատերազմ հրահրելով: Երկրի ռազմական արդյունաբերության ղեկավարը վերջերս հայտարարեց, որ թուրքական դրոնները և հրետանին ադրբեջանական բանակի տրամադրության տակ են: Միաժամանակ Թուրքիայի զավթած սիրիական տարածքներից լուրեր են տարածվում, որ Աֆրինում, Ջանդարիսում և Ռաջուում Թուրքիան բացել է 2000-ից 2500 ԱՄՆ դոլար աշխատավարձով սիրիացի վարձկաններ հավաքագրելու գրասենյակներ: Սա Թուրքիայի՝ Լիբիայում իսրայելական տեխնոլոգիաների և ահաբեկիչ վարձկանների օգտագործման համար վարած քաղաքականության ուղղակի շարունակությունն է»:[603]

2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ ՔՈՎԻԴ-19-ի համավարակի գագաթնակետին, Ադրբեջանը, Թուրքիայի աջակցությամբ, անտեսելով ինքնորոշման իր իրավունքն իրագործելու վերաբերյալ 30 տարի առաջ արտահայտած Արցախի ժողովրդի անսասան կամքը, խախտեց հրադադարը և սանձազերծեց լայնամասշտաբ պատերազմ Արցախի դեմ՝ ձգտելով այդ տարածքի վրա վերահաստատել իր իշխանությունը:

Պատերազմի հաջորդ օրն արդեն առաջատար անկախ լրատվամիջոցները գրեցին, որ Արցախում Ադրբեջանի կողմից կռվելու նպատակով Թուրքիան հավաքագրել և ռազմական գործողությունների տարածք է փոխադրել սիրիացի զինյալների:[604] Այս տեղեկությունները հաջորդիվ հաստատվեցին պետական և ՄԱԿ-ի պաշտոնատար տարբեր անձանց կողմից, սոցիալական ցանցերի հրապարակումներից և վարձկանների կամ նրանց ընտանիքի անդամների հետ հարցազրույցներից:[605] Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները շարունակում են ժխտել 2020 թվականի 44-օրյա պատերազմին արցախյան ժողովրդի դեմ իրենց հրահրած պատերազմում սիրիացի վարձկանների անմիջական մասնակցության մեղադրանքները՝ անտեսելով այն փաստը, որ գնալով շարունակաբար ավելանում են Թուրքիայի աջակցությամբ և հովանավորությամբ գործող Սիրիական ազգային բանակի (ՍԱԲ) որոշ խմբավորումներից, մասնավորապես ՍԱԲ-ի 2-րդ լեգիոնի «Սուլթան Մուրադ» և «Համզա» խմբավորումներից 2000-ից ավելի սիրիացի վարձկանների հավաքագրման

603 الإدريسي, "حدود أرمينيا وأذربيجان.. بؤرة جديدة للفوضى التركية بمرتزقة سوريين؟," دقائق.نت, July 19, 2020, https://daqaeq.net/armenia-azerbaijan/

604 Bethan McKernan, "Syrian Rebel Fighters Prepare to Deploy to Azerbaijan in Sign of Turkey's Ambition," The Guardian, September 28, 2020, sec. World news, https://www.theguardian.com/world/2020/sep/28/syrian-rebel-fighters-prepare-to-deploy-to-azerbaijan-in-sign-of-turkeys-ambition; "Turkey Deploying Syrian Fighters to Help Ally Azerbaijan, Two Fighters Say," Reuters, September 28, 2020, sec. AMERS, https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-turkey-syria-idUSKBN26J25A; "Наемник из Сирии в Карабахе: 'Я не знал, что придется воевать,'" BBC News Русская служба, September 30, 2020, https://www.bbcrussian.com/russian/features-54348623

605 "France Accuses Turkey of Sending Syrian Jihadists to Nagorno-Karabakh," Reuters, October 1, 2020, sec. AMERS, https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-putin-macron-idUSKBN26L3SB; Bethan McKernan, "Syrian Recruit Describes Role of Foreign Fighters in Nagorno-Karabakh," The Guardian, October 2, 2020, sec. World news, https://www.theguardian.com/world/2020/oct/02/syrian-recruit-describes-role-of-foreign-fighters-in-nagorno-karabakh; Bel Trew and Rajaai Bourhan, "'We Don't Even Know Where Azerbaijan Is': The Syrian Mercenaries Dying in a Distant War," The Independent, October 9, 2020, sec. News, https://www.independent.co.uk/news/world/middle-east/armenia-azerbaijan-syria-war-fighting-mercenary-russia-b912446.html; "Deaths of Syrian Mercenaries Show How Turkey, Russia Could Get Sucked into Nagorno-Karabakh Conflict," Washington Post, accessed March 11, 2022, https://www.washingtonpost.com/world/middle_east/azerbaijan-armenia-turkey-nagorno-karabakh/2020/10/13/2cdca1e6-08bf-11eb-8719-0df159d14794_story.html; Alexander Mckeever, "SNA Mercenaries in Azerbaijan: The Visual Evidence," Akmckeever, October 26, 2020, https://akmckeever.com/2020/10/26/sna-mercenaries-in-azerbaijan-the-visual-evidence/; "Mercenaries in and around the Nagorno-Karabakh Conflict Zone Must Be Withdrawn – UN Experts" (Office of the United Nations High Commissioner for Human Rights, November 11, 2020), https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=26494&LangID=E&fbclid=IwAR0_JnkNB7eo-EgeedExyVrl0wruHYff4BwhgLJDEQPSFAFDS9Ax3DBQxvo; "The Syrian Mercenaries Used as 'cannon Fodder' in Nagorno-Karabakh," BBC News, December 10, 2020, sec. Stories, https://www.bbc.com/news/stories-55238803.

և արցախահայության դեմ կռվելու նպատակով ռազմական գործողությունների տարածք ուղարկվելու ապացույցները:[606]

Հավաքագրում

Ապացույցները վկայում են, որ վարձկանների հավաքագրումը նախապես է եղել պլանավորված և կրել է սիստեմատիկ բնույթ: Ադրբեջան տեղափոխելու նպատակով Թուրքիայի կողմից սիրիացի վարձկաններ հավաքագրելու մասին առաջին հաղորդումներից մեկը տվել է «Middle East Wars»[607] թվիթերյան օգտահաշիվը, որն այս թեմայով նյութ է հրապարակել 2020 թվականի հուլիսի 18-ին՝ ՀՀ Տավուշի մարզում զինված ընդհարումներից ընդամենը երկու օր անց: Բացի այդ, 2020 թվականի հուլիսի 18-ից սեպտեմբերի 26-ն ընկած ժամանակահատվածում՝ արցախահայության դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմին նախորդող ամիսներին, տեղական և տարածաշրջնային արաբական լրատվամիջոցներում եղել են առնվազն 40 հրապարակումներ՝ Թուրքիայի կողմից սիրիացի վարձկաններ հավաքագրելու և նրանց անմիջապես Ադրբեջան տեղափոխելու մասին: Այս հրապարակումները վերահաստատել են հյուսիսային և հյուսիսարևմտյան Սիրիայում տեղակայված բազմաթիվ տեղական տեղեկատվական կենտրոններ և ակտիվիստներ, որոնք այս մասին գրել են սոցիալական ցանցերում՝ Facebook-ում և Twitter-ում:

Բացի սոցիալական ցանցերից այս թեմային են անդրադարձել նաև պաշտոնական լրատվամիջոցները: Դեռևս 2020 թվականի հուլիսի 24-ին դրանք սկսեցին տեղեկություններ հրապարակել «Ձիթենու ճյուղ» և «Եփրատի վահան» գործողությունների ընթացքում Թուրքիայի կողմից զավթված շրջաններում ՍԱԲ հավաքագրման նոր կենտրոններ բացելու մասին:[608] 2020 թվականի օգոստոսի 25-ին «Rumaf» լրատվական գործակալությունը հրապարակեց Լիբիայում կռված սիրիացի վարձկանների վկայությունները: Հրապարակման մեջ տեղ գտած երկու վկայություններ տրամադրվել էին վարձկանների կողմից՝ Սիրիայի Աֆրինի շրջանի բնակիչ և «Սուլթան Մուրադ» խմբավորման վարձկան Ղասսան Բաքրիի և «Համզա» խմբավորման վարձկան Օմար Յաղիի կողմից, որոնք հաստատում էին նրանց՝ Արցախում ռազմական գործողություններին մասնակցելու մասին տարածված լուրերը:

«Սուլթան Մուրադ» խմբավորման կողմից կռված Ղասսան Բաքրին ասել է.

> «Սիրիական ազգային բանակի մասին խոսակցությունները բազմապատկվեցին Լիբիայում սիրիացիների տեղակայումից հետո: Մի քանի ամիս առաջ լսեցինք, որ Թուրքիան ցանկանում է սիրիացիներ ուղարկել Յեմեն, սակայն հետո այս լուրերը հերքվեցին: Հետո լսեցինք, որ մեզ կարող են ուղարկել Ադրբեջան...»:

Իսկ «Համզա» խմբավորման կողմից կռված Օմար Յաղին ասել է.

> «Լսեցի, որ Ադրբեջան ենք գնալու... Լսեցի նաև, որ այդ երկիր գնալու համար մեր ստացած աշխատավարձին կավելացնեն 2000 կամ 3000 ԱՄՆ դոլար... Ինձ համար միևնույն է, որտեղ է կռիվը, կարևորը փողն է: Մենք շատ էինք լսում այդ [Ադրբեջան գնալու] մասին, և եթե դա լուրջ է, ապա ես և շատ ուրիշներ տրամադրված են գնալ այնտեղ...»:

606 "Turkey Denies Sending Syrian Fighters to Help Ally Azerbaijan," Reuters, September 29, 2020, sec. World News, https://www.reuters.com/article/uk-armenia-azerbaijan-turkey-idUKKBN26K391

607 Օգտահաշիվն անանուն է և, ըստ լուրերի, պատկանում է Իրաքի Հանրապետության բանակի մի նախկին սպայի: Արաբալեզու օգտահաշիվն ամբողջությամբ նվիրված է Մերձավոր Արևելքում պատերազմական ռազմավարությանը և գործողությունների վերլուծությանը. տե՛ս @abduljabbar1612, "الصراع الأذربيجاني الأرمني...," թվիթերյան գրառում, հուլիսի 18, 2020թ., https://twitter.com/abduljabbar1612/status/1284552968755458049

608 "بعد ليبيا... تركيا تجهّز مسلّحين للقتال في أذربيجان," الأخبار, July 24, 2020, sec. سوريا, https://al-akhbar.com/Syria/291892.

Վաղ պլանավորված և համակարգված հավաքագրման փաստը հաստատել են նաև այս զեկույցը պատրաստելու համար հարցազրույց տված վկաները: Ըստ վարձկանների, տեղեկություններ տրամադրող անձանց, Արցախում 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում սպանված վարձկանների ընկերների կամ ազգականների հետ անցկացված տասներկու անկախ հարցազրույցների՝ պատերազմին նախորդող ամիսներին ՍԱԲ-ի հավաքագրման գրասենյակները և հեռավար գործակալներն աշխատել են Հալեպի նահանգի Աֆրին և Աթարիբ քաղաքներում, Համա նահանգի Ուքայրիբաթ քաղաքում և Իդլիբ նահանգի բազմաթիվ վայրերում, ներառյալ Աթմայի՝ ներքին տեղահանվածների համար ճամբարում, որտեղ ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում ապրում են շուրջ 1 միլիոն սիրիացիներ: Բացի այդ, հայտնի է, որ Ադրբեջան ուղարկելու նպատակով սիրիացի վարձկաններ հավաքագրելու հիմնական պատասխանատվությունը ՍԱԲ-ում դրված է եղել «Սուլթան Մուրադ»[609] և «Համզա»[610] խմբավորումների, ինչպես նաև «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադի վրա: Ավելին, փաստագրված և վերլուծված առնվազն երկու դեպք էլ հաստատել են զինյալների հավաքագրման գործընթացին «Ֆայլաք ալ-Շամի» անունով խմբավորման մասնակցությունը հատկապես Իդլիբ նահանգում:

Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 23-ին «Հավար» լրատվական գործակալությունը հրապարակել է սիրիացի 42 վարձկանների անուններ և լուսանկարներ, որոնց հավաքագրել էին Աֆրինում և արցախահայության դեմ կռվելու նպատակով տեղափոխել Ադրբեջան: Զեկույցի այս բաժնի վերջում հրապարակված ցանկում սիրիացի վարձկանների ու նրանց մայրերի անուններն են և ծննդյան տարեթվերը:[611]

Վարձկանների հավաքագրման մասին տեղեկացրել են նաև Սիրիայում գործող իրավապաշտպան կազմակերպությունները: Սիրիայի Աֆրինում գործող Աֆրինի մարդու իրավունքների կազմակերպության տվյալներով՝ ՍԱԲ-ն Աֆրինի առնվազն երկու դպրոց օգտագործել է որպես վարձկանների հավաքագրման կենտրոն: Մեկը Ամիր Ղարաբի պետական միջնակարգ դպրոցն է եղել, իսկ մյուսը՝ «Աֆրին ֆլաուերս» մասնավոր դպրոցը: Հավաքագրման երկու կենտրոնները գտնվել են միմյանցից 10 րոպե ոտքով քայլելու հեռավորության վրա: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին խումբը հրապարակել է հավաքագրման երկու կենտրոնների լուսանկարներ:[612]

609 Ֆեհիմ Իսսան, որը հայտնի է նաև որպես Իսսա ալ-Թուրքմանի, առաջնորդել է «Սուլթան Մուրադ» խմբավորումը առնվազն 2015 թվականից: Ինչպես Բալուդը, նա ևս վայելել է Թուրքիայի հովանավորությունը և ազգությամբ թուրքմեն է: Ըստ տեղեկությունների՝ Թուրքիայի աջակցությամբ նա և նրա խմբավորումը նույնպես եղել են Արցախում, նախկինում մեղադրվել ռազմական գործողություններում գործած բազմաթիվ հանցագործությունների՝ օրինակ, քուրդ զինվորներին խոշտանգելու և քաղաքացիական անձանց առանց տարբերակման հրետակոծելու համար:

610 Սայֆ Բալուդը, որը հայտնի է նաև որպես Սայֆ Աբու Բաքր, եղել է ՍԱԲ-ի «Համզա» խմբավորման առաջնորդը 2016 թվականից: Տեղեկությունների համաձայն՝ նա մոտ 500 իր զինյալների հետ օդանավով տեղափոխվել է Ադրբեջան ՝ Արցախում ընթացող մարտերին մասնակցելու համար: Բալուդը սիրիացի թուրքմեն է: Բալուդի էթնիկ պատկանելությունը լրացուցիչ վստահություն է տալիս Թուրքիային՝ նրան պատերազմական առավել «զգայուն» գործողություններին մասնակից դարձնելու կամ այդ գործողությունները ղեկավարելու համար (ինչպես, օրինակ, վերջին շրջանի միջնորդավորված հակամարտություններում): Բալուդը և իր խմբավորումը պատասխանատու են պատերազմական բազմաթիվ հանցագործությունների համար, ներառյալ՝ քուրդ կանանց առևանգումը և դաժան բռնաճնշումներն Աֆրինում: Նա Թուրքիայի ամենաբարձր վստահությունն ու աջակցությունը վայելող վարձկան առաջնորդներից է:

611 "تركيا ترسل مرتزقتها إلى أذربيجان...مصدر خاص يكشف أسماء 40 منهم," Hawar News, September 23, 2020, http://hawarnews.com/ar/haber/trkya-trsl-mrtzqtha-ila-athrbyjanmsdr-khas-ykshf-asmaa-40-mnhm-h39468.html

612 Human Rights Organisation -Afrin -Syria, "Turkey Opens Two Recruit Centres in Afrin to Assemble Syrian Mercenaries Bound for Azerbaijan.," Facebook, September 27, 2020, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid025P3Jk-vdq2RZZkskQbzE6H6DyBz31GZU589WTZXL9SJ11GD9fL7q3NESuno9xPQVRl&id=114977619885802

Իրավապաշտպան մեկ այլ կազմակերպություն՝ «Սիրիացիները հանուն ճշմարտության և արդարության» (ՍՃԱ), որը Փարիզում գտնվող սիրիական դիտորդական խումբ է, տեղեկացրել է, որ ՍԱԲ-ի նախկին հրամանատարներից մեկը հայտնել է, որ 2020 թվականի հուլիսից սկսվել է սիրիացի վարձկանների հավաքագրումը Ադրբեջանում տեղակայելու նպատակով, որն իրականացվել է այն նույն եղանակով, որը Թուրքիան կիրառել է Լիբիայում պատերազմած սիրիացի վարձկաններին հավաքագրելու ժամանակ: Հիմնական տարբերությունը եղել այն, որ Ադրբեջանում ռազմական գործողություններին մասնակցելու համար չեն հավաքագրվել մինչև 18 տարեկան և 45 տարեկանից բարձր վարձկաններ:[613] ՍՃԱ-ի տվյալներով՝ փոխհատուցման դիմաց Ադրբեջանի կողմից կռվելու ցանկություն ունեցող սիրիացիները կարող էին ուղղակի գրանցվել «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության ընթացքում զավթված շրջաններում՝ «Սուլթան Մուրադ» կամ «Ֆայլաք ալ-Շամ» խմբավորումների գրասենյակներից մեկում, կամ միջնորդների միջոցով, որոնք սերտ կապեր ունեին թուրքական հետախուզության հետ: Իսկ «Ֆայլաք ալ-Շամ» խմբավորումը կազմակերպել էր արցախահայության դեմ հրահրված պատերազմին մասնակցելու համար քաղաքացիական անձանց և զինյալների հավաքագրման և գրանցման գործընթացն Իդլիբում:

Պատկեր 14.1. Աֆրինում գտնվող դպրոցի մուտքը, որը Թուրքիայի հովանավորությունը վայելող Սիրիական ազգային բանակն օգտագործել է սիրիացի վարձկաններ հավաքագրելու համար՝ նախքան արցախահաության դեմ կռվելու համար նրանց՝ Ադրբեջան ուղարկելը (Աղբյուրը՝ Աֆրինի մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպություն):

613 "Government Policies Contributing to Growing Incidence of Using Syrians as Mercenary Fighters" (Syrians for Truth and Justice, November 2, 2020), http://stj-sy.org/wp-content/uploads/2020/11/Government-Policies-Contributing-to-Growing-Incidence-of-Using-Syrians-as-Mercenary-Fighters.pdf

Պատկեր 14.2. Աֆրինի երկու դպրոցների գտնվելու վայրերը, որոնք «Աֆրին-Սիրիայի մարդու իրավունքների կազմակեր-պության» տվյալների համաձայն՝ օգտագործվել են որպես հավաքագրման կենտրոններ: Դպրոցները գտնվել են Աֆրինում՝ միմյանցից ընդամենը 10 րոպե ոտքով քայլելու հեռավորության վրա:

Այս զեկույցի համար Սիրիայում և Թուրքիայի հարավում առանձին կազմակերպված չորս հարցազրույցները հաստատել են, որ սիրիացի վարձկանների հավաքագրմանը մասնակցել են առնվազն ՍԱԲ-ի «Ֆայլաք ալ-Շամ», «Սուլթան Մուրադ» և «Համզա» խմբավորումները և «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադը: «Ֆայլաք ալ-Շամ»-ի համար տեղեկություններ տրամադրող Քասեմը (կեղծանուն), ով Սիրիայում գործող զինյալ խմբից ստանում է 500 թուրքական լիրա (մոտ 58 դոլար) ամսական աշխատավարձ, հետևյալ տեղեկություններն է հայտնել 2020 թվականի պատերազում սպանված վարձկանի մասին.

> «Մոհամմեդը (կեղծանուն) ամուսնացած էր և ուներ չորս երեխա: Նա մի կերպ գոյատևող ներքին տեղահանված անձ էր, որը բնակվում էր Իդլիբի Աթմա փախստականների ճամբարում, որտեղ նրան հավաքագրել է Աբու Սայիֆ կեղծանունով միջնորդը, ով անմիջապես ենթարկվում էր Աբու-Ամշային: Նրան ամսական 3,000 դոլար են խոստացել՝ «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադի կազմում Լեռնային Ղարաբաղում կռվելու դիմաց և հավելյալ 50,000 դոլար հետմահու փոխհատուցում, եթե նա սպանվի ռազմական գործողությունների ընթացքում»:[614]

Մարտերի ընթացքում Մոհամեդը հինգ անգամ կապ է հաստատել ընտանիքի հետ՝ տեղեկացնելու, որ ողջ է: Նա կապ է հաստատել նաև Քասեմի հետ և հայտնել, թե կասկածներ ունի, որ իր հեռախոսազրույցները ադրբեջանցի և թուրք հետախուզությունները գաղտնալսում են: Տասնօրյա լռությունից հետո Մոհամմեդի ընտանիքին տեղեկացրել են, որ նա սպանվել է Լեռնային Ղարաբաղի պատերազմում, և որ նրա մարմինը կտեղափոխվի Սիրիա:

614 Աբու Ամշա, ում իրական անունը Մուհամմադ ալ-Ջասսիմ է, «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադի (որի կեղծանունն է «ալ-Ամշաթի աշխարահզոր») հրամանատարն է: Բրիգադը հայտնի դարձավ 2018 թվականին՝ որպես թուրքական զորքերի աջակցությամբ Աֆրինը գրաված ամենադաժան խմբավորումներից մեկը: Աֆրինում ալ-Ամշաթը բռնազավթել է գույք, փրկագին ստանալու նպատակով առևանգել է մարդկանց, կողոպտել, բռնաբարել և սպանել շատերին: Ամշան անմիջականորեն մասնակցել է պատերազմական ամենատարբեր հանցագործությունների՝ տարեկան 12 միլիոն դոլար եկամուտ ստանալով միայն փրկագներից: Նրան մեղադրել են նաև բռնաբարության և սպանության մեջ: Թուրքիայի հովանավորությամբ նա խուսափել է պատժից: Նա նույնպես սիրիացի թուրքմեն է, ինչպես Իսսան և Բալուդը:

Չնայած նմանություններին՝ Լիբիայի և Արցախի հակամարտությունների համատեքստում Թուրքիայի կողմից Լիբիա ուղարկվելիք վարձկանների հավաքագրման գործընթացի հիմնական տարբերությունը արցախյանից այն էր, որ պաշտոնական պայմանագրերը սիրիացի վարձկանները ստորագրում էին մինչև Լիբիայում տեղակայվելը: Լիբիայում սիրիացի վարձկանների մասին 2020 թվականի հունվարին հրապարակված զեկույցում «Guardian»-ը գրել է.

> «Հունվարի 5-ին ևս 1350 տղամարդ, հատելով սահմանը, մուտք է գործել Թուրքիա: Նրանց մի մասն արդեն ուղարկվել է Լիբիա, իսկ մյուսները դեռևս պատրաստություն են անցնում Թուրքիայի հարավում գտնվող ճամբարներում: Իսլամական «Շամ» լեգեոնից այլ տղամարդիկ նույնպես ցանկանում են ուղևորվել Լիբիա... Ինչպես հայտնում են ՍԱԲ-ի աղբյուրները, զինյալները 2000 դոլար ամսական աշխատավարձով վեցամսյա անմիջնորդ պայմանագրեր են ստորագրել ոչ թե թուրքական զինված ուժերի, այլ ՄԱԿ-ի աջակցությունն ունեցող Ազգային համերաշխության կառավարության (ԱՀԿ) հետ...»:[615]

Մյուս կողմից, այս զեկույցի համար «Ալեպպո-ՀԿ»-ին հարցազրույց տված բոլոր տեղեկություններ տրամադրողները (ինֆորմանտներ), վարձկանները կամ արցախյան 44-օրյա պատերազմում սպանված սիրիացի վարձկանների ընտանիքի անդամները հաստատեցին, որ հավաքագրողների և Արցախ մեկնող վարձկանների միջև պայմանավորվածությունները եղել են բանավոր՝ ի տարբերություն հավաքագրողների և Լիբիայի հակամարտությանը մասնակցած վարձկանների միջև ստորագրված գրավոր պայմանագրերի: Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմի համատեքստում սիրիացի վարձկանների հավաքագրման մասին այլ լրատվամիջոցների և դիտորդական կազմակերպությունների հրապարակած բոլոր վկայությունները և հաղորդումները ևս հաստատում են գրավոր պայմանագրերի բացակայության փաստը, ինչը հաստատում են նաև այս զեկույցի համար «Ալեպպո-ՀԿ»-ին տված հարցազրույցներում հարցվողների վկայությունները:

Հետևաբար, թեև ֆորմալ առումով անտեսվել է գրավոր պայմանագրերի կնքումը, այնուամենայնիվ Արցախում կռվելու նպատակով սիրիացի վարձկանների հավաքագրումը կազմակերպվել է հավաքագրման հատուկ կենտրոնների և գործակալների միջոցով, իսկ մատուցվածմարտականծառայություններիդիմացառաջարկվելէվճարում՝աշխատավարձի, իսկ պատերազմում զոհվելու դեպքում՝ հետմահու ընտանիքին փոխհատուցելու ձևով:

Տեղակայում, նյութատեխնիկական ապահովում և ներկայություն Արցախում

2020 թվականի օգոստոսից սեպտեմբերի կեսն ընկած ժամանակահատվածում՝ գրանցմանը և հավաքագրմանը հաջորդիվ, վարձկանները հավաքվել են Թուրքիայի և Սիրիայի միջև սահմանին տեղակայված Հավար Քիլիս ռազմական անցակետի մոտ, որը գտնվում է «Եփրատի վահան» ռազմական գործողության ընթացքում Թուրքիայի աջակցությունը վայելող ՍԱԲ-ի կողմից զավթված տարածքում, որտեղից էլ ավտոբուսներով և «Պիկապներով» նրանց փոխադրել են Թուրքիայի տարածք՝ Գազիանթեփ:

615 Bethan McKernan and Hussein Akoush, “Exclusive: 2,000 Syrian Fighters Deployed to Libya to Support Government,” The Guardian, January 15, 2020, sec. World news, https://www.theguardian.com/world/2020/jan/15/exclusive-2000-syrian-troops-deployed-to-libya-to-support-regime

Այս զեկույցի համար Ալ-Աթարիբում հարցազրույց տված վարձկան Ահմեդի խոսքով՝ իր բրիգադի անդամները «Համզա» խմբավորման մեքենաներով 2020 թվականի սեպտեմբերի վերջին Աֆրինից տեղափոխվել են Ազազ: Իսկ այստեղից նրանց տեղափոխել են Հավար Քիլիս գյուղ (Ազազից մոտ 16 կմ հեռավորությամբ), որտեղ նստեցրել են «Բոլման» ավտոբուսներ[616] և Հավար Քիլիս անցակետով տեղափոխել Թուրքիայի Գազիանթեփ քաղաք:[617] Այս զեկույցի համար հարցազրույց տված բոլոր վարձկանները հաստատել են այս նույն տեղեկությունները:

Օրինակ, վարձկան Ջալալի խոսքով՝ իրենց՝ վարձկաններին, «Գազիանթեփից [Թուրքիայից] ինքնաթիռով տեղափոխել են Անկարա»: «Ալեպպո-ՀԿ»-ին հարցազրույց տված մեկ այլ վարձկան՝ Լուայը, նաև նշել է, որ Գազիանթեփից Անկարա իրենց փոխադրել են ռուսական արտադրության «Իլյուշին» ինքնաթիռով, թեև առցանց բաց աղբյուրները պնդում են, որ Թուրքիան վերջին տասը տարիներին դադարեցրել է ռազմական այդ ինքնաթիռների շահագործումը: Ջալալն ավելացրել է, որ Գազիանթեփից Անկարա թռիչքի ընթացքում իրենցից հավաքել են բջջային հեռախոսները:

Այս զեկույցի համար Ալ-Աթարիբում հարցազրույց տված մեկ այլ վարձկանի՝ Ալիի խոսքերով՝ Անկարայից Բաքու ժամանած սիրիացի վարձկաններից Թուրքիայի տարածքով թռչելու ընթացքում կամ Անկարա ժամանելուց հետո դարձյալ հավաքել են բջջային հեռախոսները: Ալին ասել է. «Նրանք վերադարձրել են մեր բջջային հեռախոսները (անձը հաստատող փաստաթղթերի հետ) միայն Ադրբեջան ժամանելուց հետո»:

Ավելին, Ալին պատմել է նաև, որ վարձկանների շարքերում եղել են քաղաքացիական անձինք, ովքեր, ինչպես ինքը, պատերազմին պատրաստվելու համար նախնական զինվորական պատրաստություն են անցել Ադրբեջանում. «Ադրբեջանում ադրբեջանցի և սիրիացի հրամանատարները նախնական պատրաստություն են կազմակերպել մեզանից ոմանց համար, այդ թվում՝ ֆիզիկական պատրաստություն և զենքի օգտագործում»: Ադրբեջանում սիրիացի վարձկաններին պատրաստելու փաստը հաստատում է նաև (Ehtemalat News) տելեգրամյան ալիքով տարածած տեսանյութը: Տեսանյութում երևում են զինավարժություններ անող ադրբեջանական զինվորական համազգեստով սիրիացի վարձկաններ, իսկ տեսագրող անձը տեսախցիկից դուրս խոսում է արաբերեն:[618] Իսկ Արցախում սպանված մի սիրիացի մի վարձկանի եղբայր՝ Օբայդ անունով, «Ալեպպո-ՀԿ»-ին հաղորդել է. «Եղբայրս միացել էր «Ալ Ամշաթին» («Սուլթան Սուլեյման Ծահին») և մինչև Ադրբեջան մեկնելը ռուսական դիպուկահար հրացանից օգտվելու 10-օրյա պատրաստություն անցել»:[619] Արցախից վերադարձած երկու վարձկաններ հաստատել են, որ սիրիացի և ադրբեջանցի հրամանատարները մարտական սահմանափակ փորձ կամ փորձ չունեցող զինյալների համար կազմակերպել են ռազմական պատրաստության վարժանքներ, իսկ

616 Բրենդային անվանում՝ տրված 40-60 տեղանոց խոշոր ավտոբուսներին, որոնք շահագործվել են Սիրիայի Արաբական Հանրապետությունում մինչև 2011 թվականի Սիրիական հեղափոխությունը:

617 Հատված 2021 թվականի մարտի 23-ին «Ալեպպո-ՀԿ»-ին Ահմեդի՝ (կեղծանուն) առերես տված հարցազրույցից: Ահմեդը սիրիացի վարձկան է, որը մասնակցել է 2020 թվականի պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո՝ 2020 թվականի դեկտեմբերին, վերադարձել է Սիրիա:

618 @ahtemalat, սեպտեմբերի 29, 2020թ., https://t.me/ahtemlat/6903

619 Փաստահավաք խմբի առերես հարցազրույցը Օբեյդի հետ (անունը փոխված է) 2021 թվականի մարտի 29-ին: Օբայդը սիրիացի վարձկանի եղբայրն է, որը կռվել է 2020թ.-ի ԼՂ հակամարտությունում և սպանվել մարտերի ժամանակ: Օբայդի եղբոր ընտանիքին խոստացել էին 60,000 ԱՄՆ դոլար հետմահու փոխհատուցում, սակայն հարցազրույցի պահին նա դեռևս ստացել էր ընդամենը 10,000 ԱՄՆ դոլար:

ավելի փորձառու զինյալները անցել են ժամանակակից զինատեսակներից օգտվելու պատրաստության հատուկ դասընթացներ: Իսկ վարձկան Ահմեդը, օրինակ, «Ալեպպո-ՀԿ»-ին փոխանցել է հետևյալը. «Սիրիացի և ադրբեջանցի սպաները պատրաստում էին հավաքագրված անփորձ նորեկներին: Իսկ ինձնից, նախկինում «Հազմ» շարժման մարտիկ լինելու շնորհիվ, շատ մեծ պատրաստություն չէր պահանջվում: Հավաքագրածներին վարժեցնող սիրիացի սպաներից մեկի անունը Բաքիրա էր»:

Ինչ վերաբերում է զինյալների համազգեստին և զենքերին, հարցազրույց տված սիրիացի բոլոր վարձկանները հաստատել են, որ իրենք ստացել են ադրբեջանցի զինվորների կրած համազգեստի նման կանաչ գույնի զինվորական համազգեստ: Հարցազրույց տված վարձկաններից մեկը՝ Ջալալը, նշել է. «Մեզ տվել են անձնական օգտագործման պարագաներ, զինվորական համազգեստ, զենք, ներքնազգեստ, կապի միջոցներ և ամեն բան, ինչ մարտի համար պահանջում էին թուրք և ադրբեջանցի սպաները»:

Թուրքիայի կողմից Լիբիայում և Արցախում սիրիացի վարձկանների օգտագործման հարցը լուսաբանող լրագրող Լինզի Մնելլի թվիթերյան հրապարակման համաձայն՝ «Աֆրինում «Սուլթան Մուրադ» խմբավորման հրամանատարներից և Ջաբհաթ ալ-Նուսրայի (ալ-Քաիդայի) նախկին անդամ Հոսսամ Դիբը սիրիացի վարձկանների հրամանատարներից էր, ում Ադրբեջան էին ուղարկել՝ ԼՂ-ում 2020 թվականի պատերազմին մասնակցելու համար»: Տիկ. Մնելլը թվիթերում նաև ներկայացրել էր անձնական կապերի միջոցով ստացված երեք լուսանկարներ, որոնք ակնհայտ փաստում էին Դիբի նախկին անդամակցությունը գրոհայինների «Ալ-Նուսրա Ճակատ»-ին և հաստատում նրա ներկայությունը Ադրբեջանում. լուսանկարում Դիբն է՝ հետևում ադրբեջանական զինված ուժերի համազգեստ (կամուֆլյաժ) հագած զինվորականներ:[620]

Պատկեր 14.3. «Սուլթան Մուրադ» խմբավորման հրամանատար Հոսամ Դիբի նկարները (Աբյուրը՝ Լինզի Մնելի թվիթերյան էջ):

620 Լինդսի Մնել (@LindseySnell), «Սա Հոսսամ Դիբն է, «Սուլթան Մուրադ»-ի հրամանատարը Աֆրինում», թվիթերյան գրառում, 2021 թվականի հունվարի 29, https://twitter.com/LindseySnell/status/1355093294481625091

Պատկեր 14.4. «Դատաստանի օր» ալիքով հրապարակած տեսանյութից (սկզբնաղբյուրը՝ «Ռոջավայի ակտիվիստների ցանց») արված սքրինշոթ, որտեղ պատկերված է Արցախում մարտական գործողություններին մասնակցող ադրբեջանական զինվորական համազգեստ հագած սիրիացի վարձկան, որը հայհոյում է հայերին։

Պատկեր 14.5. Վերևում՝ ձախից՝ մարտական գործողությունների ընթացքում սիրիացի վարձկանների տեսագրած և հրապարակած տեսանյութի սքրինշոթն է, իսկ աջից՝ Նախիջևանում 2017թ.-ին ադրբեջանական ռազմական շքերթի սքրինշոթը։

Սոցիալական ցանցերում և տելեգրամյան ալիքներով տարածված, նաև «Դատաստանի օր» յութուբյան ալիքում 2020 թվականի հոկտեմբերի 3-ին տեղադրված 2 րոպե տևողությամբ տեսանյութում ադրբեջանական զինվորական համազգեստով արաբերեն (արաբերենի սիրիական բարբառ) խոսացող սիրիացի վարձկանը փորձում է թաքնվել հայկական հրետանու արձակած կրակոցներից և «Կալաշնիկով» ինքնաձիգի կրակահերթերից: Տեսանյութի 1:36 րոպեին վարձկանը բղավում է. «Ալլահու ակբար... հայ շները ոչնչացրին մեր տղաներին (սիրիացի վարձկաններին)»:[621]

Մեկ այլ 2 րոպե տևողությամբ տեսանյութում, որը սոցիալական ցանցերով և տելագրամյան ալիքներով շրջանառվել է 2020 թվականի հոկտեմբերի 10-ին և 2020 թվականի հոկտեմբերի 11 տեղադրվել «Info Warrior» յություբյան ալիքում, տեսանելի են Արցախում ռազմական գործողություններին մասնակցող մի քանի տասնյակ սիրիացի վարձկաններ: Տեսանյութում ցուցադրված են առնվազն երկու «Պիկապ», մի քանի զրահապատ ավտոմեքենաներ և ադրբեջանական զինվորական համազգեստով (կամուֆլյաժ) վարձկաններ:[622]

Երկու րոպեանոց տեսանյութում սիրիացի վարձկանները, որոնք անընդհատ կրակահերթեր են արձակում որոշակի ուղղությամբ, խոսում են արաբերենի սիրիական բարբառով: Տեսանյութում տարբեր պահերի վարձկանները գոռում են. «Ալլահու ակբար (Աստված մեծ է)... Զգո՛ւյշ եղեք, նրանք «Պիկապին» կխփեն... Բիսմիլլահ (Աստծո անունով)... Ձեր դիմացը նայե՛ք և զգո՛ւյշ եղեք... Մեզ լրացուցիչ ռազմամթերք տվե՛ք... Բլուրի վրա ոչ մեկը չկա... Համոզվեք, որ նրանք մեր խմբից չեն»:[623]

Տեսագրության մանրամասն ուսումնասիրությունը և բովանդակության վերլուծությունը հաստատում են, որ սիրիացի վարձկանները մասնակցել են ռազմական գործողությունների Արցախի տարածքում, քանի որ տեսանյութում երևացող մեքենաներից առնվազն մեկը «Օթոքար Կոբրա» զրահամեքենա է (այն «AM General» ամերիկյան ընկերության աջակցությամբ արտադրում է թուրքական «Օթոքար» ընկերությունը), որն ադրբեջանական զինված ուժերի զինանոցում է, իսկ մյուս երկուսը՝ զրահապատ ավտոմեքենաներ, որոնք դարձյալ օգտագործվում են ադրբեջանական զինված ուժերի կողմից:[624]

Ադրբեջանում սիրիացի վարձկանների ներկայության վերաբերյալ լրացուցիչ ապացույց են նրանց մահվան դեպքերն ու փաստերը ռազմական գործողությունների ընթացքում: 2020 թվականի սեպտեմբերի 29-ին՝ 44-օրյա պատերազմի երրորդ օրը, մի շարք սիրիացի ակտիվիստներ և սոցիալական ցանցերի էջեր հայտնեցին Մուհամմադ Ծաալան Աբդուլ Ռազզաքի սպանության մասին, որը կարևորագույն դեր էր ունեցել Աթարեբում «Համզա» խմբավորման համար զինյալներ հավաքագրելու գործում:[625] Մի քանի օր անց դարձյալ մի շարք սիրիացի ակտիվիստներ և սոցիալական ցանցեր հրապարակեցին Արցախում սպանված տասը սիրիացի վարձկանների անուններ, ինչպես նաև Մուհամմադ Ծաալան

621 «Դատաստանի օր», «Լեռնային Ղարաբաղ. ադրբեջանական բանակի կամուֆլյաժ հագած սիրիացի վարձկան, Հայաստան», 3 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=bIAr68T3-Ag

622 «Info Warrior», «Ադրբեջանական բանակի սիրիացի վարձկանները՝ ընդդեմ հայկական բանակի», 11 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=j6VRWiHOl_E.

623 Նույն տեղում:

624 «Global Press Office 8», «Վերլուծություն. սիրիացի ջիհադիստները կռվում են Եվրոպայում, Հայաստանում, Արցախում» 12 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=quASdNMxO3Y

625 Հուսեյն Ակուշ (@HousseinAk), «Մուհամմադ Ծաալանը՝ իմ քաղաքից՝ Ալ Աթարիբից, սպանվել է Ադրբեջանում», թվիթերյան գրառում, սեպտեմբերի 29, 2020թ., https://twitter.com/HousseinAk/status/1310978787014840324

Պատկեր 14.6. Ձախ կողմի սկրինշոտը Ադրբեջանում գտնվող սիրիացի վարձկանների կողմից կատարված մարտական գործողությունների տեսագրությունից է, իսկ աջինը՝ Բաքվում տեղի ունեցած ռազմական շքերթից է։

Աբդուլ Ռազզաքի մահը հաստատող տեղեկություններ։

Այս տեղեկությունները հաստատել են նաև սույն զեկույցի համար հարցազրույց տված ականատեսները։ Մուհամմադ Ծաալան Աբդուլ Ռազզաքի ազգական Բ. Ռազզաքի (կեղծանուն) հետ հարցազրույցի ընթացքում ականատեսն ասել է.

> «(Սիրիական) հեղափոխության ընթացքում Մուհամմադ Ծաալանն Ալ-Աթարիբի հիվանդանոցի անվտանգության աշխատակից էր։ Երկու տարի առաջ դարձել էր զինյալ, աշխատել Աթարիբի տեղական խորհրդում որպես օգնության գրասենյակի տնօրեն, ապա՝ ապաստանի կենտրոնի տնօրեն։ Աշխատել է նաև կապիտան Ալի Ծաքերդիի անվան հետ կապված «Թուվար ալ-Ծամ» խմբավորման անվտանգության գումարտակում։ Երբ «Հայաթ Թահրիր ալ-Ծամ» (ՀՏԾ) խմբավորումը հսկողություն հաստատեց Աթարիբում, նա փախավ Աֆրին և տևական ժամանակ մնաց «Թուվար ալ-Ծամ» խմբավորումում, ապա միացավ «Համզա» խմբավորմանը։ Մուհամմադ Ծաալանն ուներ ութ երեխա՝ հինգ որդի և երեք դուստր»։[626]

Մուհամմադ Ծաալան Աբդուլ Ռազզաքի ազգականն այսպիսով հաստատեց, որ Մուհամմադն Ադրբեջան էր փոխադրվել 2020թ.-ի սեպտեմբերի կեսերին և նույն ամսվա վերջին՝ հավանաբար 28-ին կամ 29-ին, սպանվել մարտում։ Նույն ազգականը նաև վկայել է. «2020 թվականի սեպտեմբերի 30-ին Աթարիբում Մուհամմադի հոգեհանգստի արարողությունն ենք արել։ Իսկ 2020 թվականի հոկտեմբերի 4-ին, երբ Ադրբեջանից բերեցին Մուհամմադի մարմինը, նույն օրը՝ առավոտյան՝ ժամը 3-ին, կազմակերպեցինք նրա թաղման պաշտոնական արարողությունը»։[627]

626 2021 թվականի մարտի 27-ին Աթարեբում Բ. Ռազզաքի (կեղծանուն) տված առերես հարցազրույցից։ Բ. Ռազզաքը Մուհամմադ Ծաալան Աբդուլ Ռազզաքի մերձավոր ազգականն էր, որն օգնել էր հավաքագրել «Համզա» խմբավորման առնվազն 65 վարձկանների՝ հիմնականում Աթարեբի բնակիչների, և 2020 թվականի սեպտեմբերի կեսերին փոխադրվել էր Ադրբեջան, որտեղ էլ 2020 թվականի սեպտեմբերի 28-ին կամ 29-ին սպանվել էր ռազմական գործողությունների ընթացքում։

627 Նույն տեղում

Ադրբեջանում ռազմական գործողություններին մասնակցած սիրիացի վարձկանների մահվան փաստերը հաստատում են նաև զոհվածների մարմինների՝ հայրենիք փոխադրման և թաղման արարողությունների տեսաագրությունները: 2020 թվականի հոկտեմբերի սկզբին համացանցում տարածվեցին տեսագրություններ, որոնք պատկերում էին Արցախում հայերի դեմ մարտերում սպանված մի շարք սիրիացի զինյալների դիակների փոխադրումն ու հուղարկավորումը: 2020 թվականի հոկտեմբերի 4-ին «Դատաստանի օր» յութուբյան ալիքում տեղադրված տեսանյութում երևում է կտորով փաթաթված և ցելոֆանով ծածկած սիրիացի վարձկանի դի: Դագաղը, որով դիակը տեղափոխվում էր թաղման վայր, մետաղապատ էր: Սիրիական սովորական դագաղները ներսից մետաղապատ չեն լինում, իսկ դիակները գրեթե երբեք ցելոֆանով չեն փաթաթվում, ինչը վկայում է, որ տեսանյութում ներկայացվող դիակը Սիրիա՝ թաղման վայր է տեղափոխվել հեռու տեղից (օրինակ՝ Ադրբեջանից): Ավելին, 17 վայրկյան տևողությամբ տեսանյութում լսվող խոսակցությունների վերլուծությունը հաստատում է, որ հուղարկավորման վայրում հավաքվածները սիրիացի են:[628]

7 րոպեանոց մեկ այլ տեսանյութում, որը 2020 թվականի հոկտեմբերի 5-ին տեղադրվել էր «Jesr Press» յութուբյան ալիքում, ներկայացվում են առնվազն երկու սիրիացի վարձկանների թաղման արարողությունները, և տեսանելի է ոչ պակաս, քան չորս վարձկանի դի: Ակնհայտ տեսանելի է, որ թաղման արարողությունը կատարվում է գիշերվա ժամերին, իսկ հուղարկավորման վայրում հավաքված տասնյակ ներկաները խոսում են արաբերենի սիրիական բարբառով: Այս 7 րոպեանոց տեսանյութում լսելի է, թե ինչպես են սպանվածներին կոչում «շահիդ» (նահատակ), ինչը հուշում է, որ նրանք զոհվել են մարտի դաշտում, իսկ խորքից կցկտուր լսվում է հետևյալը. «Այստեղ չորս նահատակ կա... Մենք թաղելու ենք նրանց երկու-երկու... Աստված օրհնի ձեր հոգիները... Ադրբեջան... Ես նրա զարմիկն եմ»: Բացի այդ, տեսանյութում մի քանի հոգի կրում են զինվորական համազգեստ, որոնցից առնվազն հինգը՝ սիրիական սովորական կամուֆլյաժ, իսկ մեկը՝ թուրքական/ադրբեջանական զինվորական համազգեստ, որի ձախ բազկի կողային մասում կա թուրքական դրոշի կիսալուսնով տարբերակիչ նշան: Նախորդի նման այս տեսանյութում ևս դագաղների ներսի մասը մետաղական է, իսկ դիակները ցելոֆանով փաթաթված են:[629]

Այս տեսանյութերի հրապարակման ամսաթվերը, թաղման արարողության ժամերը (գիշերը) և սիրիացի վարձկանների դիերի տեղափոխման և թաղման արարողության մանրամասները, որոնք երևում են տեսանյութերում, հաստատում են Մուհամմադ Ծաալանի ազգականի՝ «Ալեպպո-ՀԿ»-ին տված հարցազրույցները: Այսպիսով, զինյալներ հավաքագրելու, Ադրբեջան կամ Թուրքիա փոխադրելու և ռազմական գործի համար նրանց պատրաստելու, ադրբեջանական զինվորական համազգեստով և սպառազինությամբ պատերազմական գործողություններին նրանց մասնակցություն ունենալու փաստերը, արաբերեն խոսելու, սպանված կոմբատանտների դիերը հայրենիք փոխադրելու մասին վկայությունները և տեսանյութերում եղած նյութերի համակցությունն ապացուցում են, որ սիրիացիները հավաքագրվել, փոխադրվել և տեղակայվել են Ադրբեջանում՝ Արցախի հայության դեմ մարտերին մասնակցելու համար:

628 «Դատաստանի օր», «Թուրքիայի հովանավորյալ սիրիացի վարձկաններն ուղարկվել են Սիրիա՝ Ադրբեջանում Հայաստանի դեմ մարտերում սպանվելուց հետո», 4 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=oiQYRCf-bcpg

629 Jesr Press, "وصول جثامين قتلى سوريين من اذربيجان," October 5, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=Doc2sfjVErE.



Պատկեր 14.7. Սքրինշոթերը՝ 2020 թվականի հոկտեմբերի 5-ին «Jesr Press»-ի տեղադրած տեսանյութից:

Պատկեր 14.8. Սքրինշոթերը՝ 2020 թվականի հոկտեմբերի 5-ին «Jesr Press»-ի տեղադրած տեսանյութից: Ձախից նկարում երևում է, թե ինչպես են փոխադրում մի զոհվածի դագաղը, երբ միևնույն ժամանակ թաղում են մեկ ուրիշին: Մեջտեղի նկարում զինյալներից մեկի թուրքական/ադրբեջանական զինվորական համազգեստի թևին երևում է թուրքական դրոշի կիսալուսինը. այս զինյալի համազգեստը ակնհայտորեն տարբերվում է թաղմանը մասնակցող մյուս զինյալների համազգեստներից:

Մղումներ, ակնկալիքներ և փոխհատուցում

Հարցազրույց տված անձանց ներկայացրած փաստերը վկայում են, որ վարձկանների մղումը եղել է ֆինանսական օգուտը և նրանք նախապես իմացել են մարտական պայմանների մասին: Թեև ոմանք կարծում են, թե սիրիացի վարձկաններին ապատեղեկատվությամբ կամ խաբեությամբ են փոխադրել Ադրբեջան՝ Արցախի հայության դեմ կռվելու,[630] սույն զեկույցի համար տեղեկություններ տրամադրողներից, վարձկաններից և սպանված վարձկանների ընտանիքի անդամներից և ընկերներից հավաքած տասներկու վկայություններից ոչ մեկից հնարավոր չէ ենթադրել, որ վարձկանները սխալ տեղեկություններ են ունեցել Ադրբեջանում տեղակայվելուց հետո իրենց սպասվող առաջադրանքների մասին: Թեպետ Աֆրինում և Աթարեբում հարցազրույց տված երեք սիրիացի վարձկաններ վերահաստատել են, որ իրենք Արցախ մեկնել են ոչ թե հենց հատկապես հայերի դեմ կռվելու համար, այլ իրենց երկրում՝ Սիրիայում տիրող ծանր տնտեսական վիճակի պատճառով ցանկացել են սեփական ֆինանսական խնդիրները լուծել՝ վարձկան դառնալով, ինչը որ առաջարկվել է նրանց հավաքագրողների կողմից:

Դիտարկենք, օրինակ, Արցախում 1000 ԱՄՆ դոլար ամսական աշխատավարձի դիմաց Արցախում կռիվներին մասնակցած սիրիացի վարձկան, սիրիական հեղափոխությունից առաջ ուսուցիչ աշխատած Ահմեդի (կեղծանուն) պատմությունն ունրա տված վկայությունները: Պարզվում է՝ Սիրիական հեղափոխության ընթացքում Սիրիայի իշխանությունները բողոքի ակցիաներին մասնակցելու մեղադրանքով ձերբակալել և 10 ամսով ազատազրկել են Ահմեդին: Նրան ազատ են արձակել միայն Սիրիայի կառավարության և «Հազմ» շարժման միջև գերիների փոխանակման ժամանակ: Բանտից ազատվելուց շատ չանցած՝ Ահմեդը միացել է «Հազմ» շարժմանը և դարձել Աթարեբի տեղական խորհրդի անդամ և տեղական խորհրդի կրթական բաժնի տնօրեն: «Հազմ» շարժման լուծարումից հետո՝ 2015 թվականին, Ահմեդը միացել է «Նուր ալ-Դին ալ-Զանկի» շարժմանը և մնացել Աթարեբում մինչև քաղաքի՝ «Հայաթ Թահրիր ալ-Շամ»-ի կողմից զավթելը:[631] Սիրիայում (Աթարիբում) «Ալեպպո-ՀԿ»-ի հետազոտողին դեմ առ դեմ տված հարցազրույցում Ահմեդը պատմել է.

> «Ամուսնացած եմ և ունեմ մեկ երեխա: Ատում էի կյանքս Սիրիայում, քանի որ ինձ համար՝ որպես արաբերենի ուսուցչի, այլևս չէր մնացել վաստակելու որևէ հնարավորություն: Եվ քանի որ ինձ գումար էր պետք, Անթարիբի ընկերներիս և ազգականներիս հետ միացել էի «Համզա» խմբավորմանը, որի հրամանատարը Մոհամմադ Շաալան Աբդուլ-Ռազզաքն էր»:[632]

Արցախում 44-օրյա պատերազմին մասնակցած սիրիացի մեկ այլ վարձկան՝ Լուայը (կեղծանուն), եղել է ավագ դպրոցի աշակերտ, երբ 2011 թվականի մարտին սկսվել է Սիրիական հեղափոխությունը: Եվ երբ Աթարեբում մահացել է ոստիկանության ծառայող նրա հայրը, Լուայը թողել է դպրոցը և միացել նախ Աթարեբի «Ազատ ոստիկանությանը», որը գործում էր Սիրիայի ազատ բանակի հրամանատարության ներքո, ապա որպես զինյալ՝ «Հազմ» ընդդիմադիր շարժմանը: Երբ «Հայաթ Տահրիր ալ-Շամ»-ը գրավում է Աթարեբը, և

630 BBC News عربي, "أرمينيا وأذربيجان: بي بي سي عربي تحاور مقاتل سوري على خط النار بين البلدين" October 1, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=wrHrrxte6a8.

631 2021 թվականի մարտի 23-ին Ահմեդի (կեղծանուն)՝ «Ալեպպո-ՀԿ»-ին տված առերես հարցազրույց: Ահմեդը եղել է սիրիացի վարձկան, ով մասնակցել է Արցախի՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո, 2020 թվականի դեկտեմբերին վերադարձել Սիրիա:

632 Նույն տեղում:

«Հազմ» շարժումը լուծարվում է, Լուայը Անթարեբից փախչում է Թալ Աբյադ և վերադառնում ոստիկանի աշխատանքին: Սիրիայում (Աթարիբում) «Ալեպպո-ՀԿ»-ի հետազոտողներին տված հարցազրույցում Լուայը պատմել է.

> «Սերս և հարգանքս Մուհամմադ Ծաալան Աբդուլ-Ռազզաքի նկատմամբ և աղքատությունը Սիրիայում ստիպեցին ինձ միանալ «Համզա» խմբավորմանը և մեկնել Լեռնային Ղարաբաղ՝ պատերազմելու: Մուհամմադ Ծաալանը վստահեցրեց ինձ, որ աշխատավարձը բարձր է լինելու, և քանի որ վստահում էի նրան, չհարցրի անգամ, թե որքան են պատրաստվում վճարել ինձ: Երբ գնացի Աֆրին՝ «Համզա» խմբավորման գրասենյակ՝ գրանցվելու, այնտեղ նույն նպատակով ևս հինգ հոգի էին եկել»:[633]

Իսկ, օրինակ, Արցախում հայերի դեմ կռվելու համար «Սուլթան Մուրադ» խմբավորման կողմից հավաքագրված սիրիացի վարձկան Ջալալը (կեղծանուն) երկար տարիներ եղել է ՍԱԲ «Սուլթան Մուրադ» խմբավորման զինյալներից: Արցախ մեկնելու և կռվելու համար նրան հավաքագրել են «Սուլթան Մուրադ» խմբավորման 100 այլ զինյալների հետ:[634] Սիրիայում (Աֆրինում) «Ալեպպո-ՀԿ»-ի հետազոտողին երես առ երես տված հարցազրույցում Ջալալը պատմել է.

> «Կամավորագրվեցի, որ գնամ և կռվեմ Ադրբեջանում, քանի որ ֆինանսական փոխհատուցումը շատ ավելի բարձր էր, քան այն, ինչ ստանում էինք Սիրիայում: Ադրբեջանում կռվելու համար ինձ առաջարկեցին 12,000 թուրքական լիրա (մոտ 1,600 դոլար), իսկ ռազմական գործողությունների ընթացքում սպանվելու դեպքում խոստացան 60,000 դոլար վճարել ընտանիքիս»:[635]

Սույն զեկույցի համար հարցազրույց տված ընդհանուր թվով տասներկու ինֆորմանտներից, վարձկաններից և սպանված վարձկանների ընտանիքի անդամներից և ընկերներից միայն մեկը՝ Ջալան է ունեցել է թուրքմենական ծագում, որը նշել է. «Ադրբեջան մեկնելը գերակա հարց էր սիրիացի թուրքմեն զինյալների համար, քանի որ ադրբեջանցիք նույն ազգի մասն են, և նրանք նման լեզվով են խոսում»: Իսկ ֆինանսական փոխհատուցումը՝ որպես 2020 թվականի պատերազմին մասնակցելու հիմնական շարժառիթի մասին է նշել յուրաքանչյուր երկրորդ սիրիացի վարձկան կամ սպանված սիրիացի վարձկանի ընտանիքի անդամ:

Այս փաստը հաստատում են նաև այլ աղբյուրներ: ՍԵԱ-ին տված հարցազրույցում, օրինակ, վարձկաններից մեկը նշել է, որ Արցախի հայության դեմ կռվելու համար իրենց առաջարկվել է («Սուլթան Մուրադ» խմբավորման կողմից) 1,500-ից 2,000 ԱՄՆ դոլար ամսական աշխատավարձ, որը սահմանվել է՝ ըստ զինյալի մասնագիտության. լրացուցիչ 40,000 ԱՄՆ դոլար փոխհատուցում՝ մահվան դեպքում, 30,000 ԱՄՆ դոլար՝ վերջույթների անդամահատման և հաշմանդամ դառնալու դեպքում, 15,000 ԱՄՆ դոլար՝ առանց անդամահատման ծանր վիրավորում ստանալու դեպքում...»:[636]

633 2021 թվականի մարտին Լուայի (կեղծանուն) տված առերես հարցազրույց: Լուայը սիրիացի վարձկան էր, ով մասնակցել է 2020 թվականի 2020 թվականի 44-օրյա արցախյան պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո 2020 թվականի դեկտեմբերին վերադարձել է Սիրիա:

634 2021 թվականի մարտին Ջալալի (կեղծանուն) տված առերես հարցազրույց: Ջալալը սիրիացի վարձկան էր, որը, ֆինանսական շարժառիթներով և Թուրքիային հավատարմությունից դրդված, մասնակցել է 2020 թվականի պատերազմին ԼՂ-ում, քանի որ ազգությամբ Սիրիայի թուրքմեն էր:

635 Նույն տեղում:

636 “Mercenarism in Syria: Predatory Recruitment and the Enrichment of Criminal Militias” (Washington, D.C: The Syria Justice and Accountability Centre, May 2021), 19, https://syriaaccountability.org/wp-content/uploads/ENG-Mercenaries.pdf.

Ըստ վարձկանների, հավաքագրողների, ինֆորմանտների և սպանված վարձկանների ընտանիքի անդամների՝ սույն զեկույցի համար տված տասներկու հարցազրույցների, ինչպես նաև միջազգային լրատվամիջոցների կամ սիրիական և միջազգային դիտորդական խմբերի փաստագրած 30 այլ վկայության վերլուծության, առաջնորդվելով նաև ապացույցների ճնշող մեծամասնությամբ, կարելի է փաստել, որ հավաքագրված սիրիացի վարձկաններին առաջարկվել է. ա) 1,000-ից 4,000 ԱՄՆ դոլար ամսական աշխատավարձ, բ) 3,500-ից 15,000 ԱՄՆ դոլար փոխհատուցում՝ առողջությանը հասցված վնասի դեպքում, գ) 40,000-ից 75,000 ԱՄՆ դոլար հետմահու փոխհատուցում, եթե նրանք սպանվեին արցախահայերի դեմ 2020 թվականի պատերազմի ընթացքում: Պատերազմում սպանված վարձկանների ընտանիքները և Սիրիա վերադարձած վարձկանները գումարային հատուցում ստացել են թուրքական լիրայով, թեև նրանց մի մասին խոստացել էին վճարել ԱՄՆ դոլարով: «Ալեպպո-ՀԿ»-ի փաստագրած բոլոր դեպքերը վկայում են, որ ողջ մնացած վարձկանները վճարվել են միայն Սիրիա վերադառնալուց հետո, իսկ բոլոր սպանված վարձկանների հարազատներին փոխհատուցումը տրվել է միայն պատերազմի ավարտից հետո և ոչ թե սկսած այն պահից, երբ նրանք հայտնվել են Արցախում: Իսկ դա նշանակում է, որ վճարումը եղել է մարտական ծառայությունների դիմաց:

Իսկ ինչ վերաբերվում է պատերազմական գործողություններին, պայմաններին ու իրավիճակներին, նաև սպասելիքներին, այդ հարցերի կապակցությամբ դիտարկենք հետևյալ վկայությունները: Այսպես, օրինակ, Աթարիբում դեմառդեմ հարցազրույցի ժամանակ Լուայը, խոսելով վարձկանների նախապատերազմյան ակնկալիքների և մարտի դաշտում ստեղծված իրողությունների մասին, ասել է հետևյալը.

> «Մինչև տեղակայումը մեզ խոստացել էին, որ ադրբեջանական օդուժը նախնական հարվածներ կհասցնի հայկական թիրախներին՝ բացելով ցամաքային ներխուժման ճանապարհ: Սկզբում մտահոգ էինք, քանի որ ծանոթ չէինք տեղանքին/տարածքին, մանավանդ նաև, որ Մուհամմադ Ծաալանը՝ մեր առաջնորդը, սպանվել էր հայկական հրետանու արկի պայթյունից հենց պատերազմի սկզբում: Այդուհանդերձ թուրքական ԱԹՍ-ների օգնությամբ մենք հաջողեցինք»:[637]

«Ալեպպո-ՀԿ»-ին հարցազրույց տված մեկ այլ վարձկան՝ Ահմեդը, ով եղել է «Հազմ» շարժման զինյալներից մինչև դրա լուծարումը 2015 թվականին և «Համզա» խմբավորման զինյալներից էր Արցախում, ասել է.

> «Առաջին հրահանգը, որը ստացել էինք սիրիացի և ադրբեջանցի հրամանատարներից, ամեն գնով գերի ընկնելուց խուսափելն էր: Մեզ խոստացել էին, որ օդուժը կաջակցի մեզ, և մենք հեշտությամբ կներխուժենք հայկական տարածքներ: Սակայն առանձին մարտերի ժամանակ տարածությունը մեր և հակառակորդի բնագծերի միջև շատ մոտ էր, և կռիվը շատ թեժ էր ընթանում: Հայկական հրետանու հարվածներից և հրթիռներից մեզանից շատերը վիրավորվեցին և սպանվեցին, սակայն օդուժի օգնությամբ մենք ի վերջո ներխուժեցինք հայերի գրաված տարածքները: Ադրբեջանում թեև մնացել եմ 70 օր, բայց կռվել եմ մոտ 40 օր և 2020 թվականի դեկտեմբերի 2-ին վերադարձել եմ Սիրիա: Ինչպես խոստացել էին, Սիրիա վերադառնալուց հետո ստացա մոտ 4,000 ԱՄՆ դոլար փոխհատուցում»:[638]

637 2021թ. մարտին Լուայի (կեղծանուն) տված հարցազրույցից: Լուայը սիրիացի վարձկան էր, որը մասնակցել է 2020 թվականի 44-օրյա արցախյան պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո 2020 թվականի դեկտեմբերին վերադարձել է Սիրիա:

638 2021 թվականի մարտի 23-ին Ահմեդի (կեղծանուն) առերես տված հարցազրույցից: Ահմեդը սիրիացի վարձկան էր, որը մասնակցել է 2020 թվականի 44-օրյա արցախյան պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո 2020 թվականի դեկտեմբերին վերադարձել է Սիրիա:

«Ալեպպո-ՀԿ»-ին Աթարիբում հարցազրույց տված մեկ այլ վարձկան՝ Ալին, հետևյալ կերպ է նկարագրել Արցախում ունեցած իր փորձառությունները.

> «Մինչև Ադրբեջանում տեղակայվելն ունեցել եմ մարտական փորձ «Ֆայլաք ալ-Շամ» խմբավորման կազմում: Հետո ինձ հավաքագրեց Մուհամմադ Շաալանը, որ միանամ «Համզա» խմբավորմանը, գնամ և կռվեմ Ադրբեջանում: Ինձ խոստացել էին 1,500 ԱՄՆ դոլար վճար և հրահանգել ադրբեջանական զինված ուժերի կողմից ինձ տրամադրված ձեռքի հակատանկային նռնականետից (ՁՀՆ) խոցել հայկական զրահամեքենաներ և տանկեր: Մեր տեղակայման կետերում մարտերը թեժ էին. երկու զինվոր սպանվեց, բայց ուրիշ սպանվածներ կամ վիրավորվածներ չունեցանք: Մեր հաղթանակից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերի սկզբին, վերադարձա Սիրիա և միքանիանգամյա վճարումներով ստացա 3,500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար»:[639]

Աֆրինում սույն զեկույցի համար տրված դեմառդեմ հարցազրույցում Ջալալը խոսել է նախապատերազմյան սպասելիքների և մարտի դաշտում ստեղծված իրավիճակների մասին.

> «Տեղակայվելուց հետո մեզ տեղեկացրեցին, որ պետք է ներկայանանք ոչ թե սիրիացի, այլ իբրև թուրք մարտիկներ: Ես «Սուլթան Մուրադ» բրիգադի անդամ էի և մեր խմբում, որն առաջնորդում էր Ֆահիմ Էյսան, կար 100 զինյալ: Ռազմական առումով Ֆահիմը շատ փորձառու չէր, բայց ես շատ չէի մտահոգվում, քանի որ ունեի մարտական նախնական փորձառություն: Տեղային մարտերը թեժ էին, և մեր գումարտակից շատերը զոհվեցին կամ վիրավորվեցին. ես նույնպես վիրավորվեցի: Մինչև Սիրիա վերադառնալը բուժում ստացա Բաքվի հիվանանոցներից մեկում: Հավար Քիլիսում գտնվող թուրք հաշվապահներից ստացա վիրավորվելու համար հավելավճար և 40 օր մարտական գործողություններին մասնակցելու աշխատավարձ»:[640]

Սակայն, պետք է նկատել, որ եղել են նաև աշխատավարձի հափշտակության կամ ոչ լիարժեք փոխատուցման դեպքեր: Միացյալ Թագավորությունում գտնվող «Մարդու իրավունքների սիրիական դիտարանը» 2021 թվականի հուլիսին հայտնել է. «Սիրիացի վարձկանների մեծ մասը դեռևս խնդրում է առաջնորդներին վճարել իրենց ամսական աշխատավարձերը, որոնք դադարեցվել են, երբ նրանք վերադարձել են Լիբիայում և Լեռնային Ղարաբաղում կռվելուց հետո»:[641] Թեև սույն զեկույցի համար հարցազրույց տված բոլոր վարձկանները հաստատել են, որ իրենք ստացել են հավաքագրողների հետ բանավոր համաձայնությամբ նախատեսված փոխհատուցման ամբողջ գումարը, սպանված մի շարք վարձկանների ընտանիքի անդամներ բողոքել են իրենց հարազատի՝ հետմահու խոստացված փոխհատուցման գումարները հափշտակելու մասին: Սիրիայում (Իդլիբում) սույն զեկույցի համար հարցազրույց տված սպանված վարձկաններից մեկի եղբայրը՝ Խալեդը, բողոքել է նմանօրինակ դեպքի մասին.

> «Եղբորս հետ էի «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադից (ալ-Ամշաթ) Աբու Խալեդ Աաշարինայի հետ բանակցությունների ժամանակ: Եթե եղբայրս սպանվեր Լեռնային Ղարաբաղի պատերազմում, ըստ պայմանավորվածության, ես լիազորված էի ստանալ 60,000 ԱՄՆ դոլար փոխհատուցում՝ նրա ինը հոգանոց ընտանիքին աջակցելու համար, իսկ եղբորս կինը յուրաքանչյուր ամիս

639 2021 թվականի մարտին Ալիի (կեղծանուն) առերես տված հարցազրույց: Ալին սիրիացի վարձկան էր, որը մասնակցել է 2020 թվականի 44-օրյա արցախյան պատերազմին ԼՂ-ում և 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսատանի Դաշնության միջև հրադադարի մասին եռակողմ հայտարարություն ստորագրելուց հետո 2020 թվականի դեկտեմբերին վերադարձել Սիրիա:

640 2021 թվականի մարտին Ջալալի՝ (կեղծանուն) առերես տված հարցազրույցից: Ջալալը եղել է սիրիացի վարձկան, որը մասնակցել է 2020 թվականի 44-օրյա պատերազմին ԼՂ-ում՝ ունենալով ինչպես ֆինանսական եկամուտի ակնկալիքներ, այնպես էլ գաղափարական մղումներ. ազգությամբ լինելով Սիրիայի թուրքմեն՝ ձգտել է իր հավատարմությունը ցույց տալ Թուրքիային:

641 Syrian Observatory for Human Rights, «Syrian Mercenaries Complain | Practices of Turkish Factions leaders and Proxies in Libya and Azerbaijan Varied from Looting Salaries to Trading Drugs». **տես** https://www.syriahr.com/en/220167/.

ստանալու էր 400 ԱՄՆ դոլար փոխհատուցում: ԼՂ-ում եղբորս մահվանից հետո մենք ստացել ենք ընդամենը 10,000 ԱՄՆ դոլար հետմահու փոխհատուցում և 400 ԱՄՆ դոլար ամսական վարձատրություն»:

Մյուս կողմից, «Համզա» խմբավորման առնվազն 65 վարձկանի հավաքագրմանը նպաստած, 2020 թվականի պատերազմի առաջին օրերին սպանված Մուհամմադ Ծաալան Աբդուալ Ռազզաքի ազգական Բ. Ռազզաքը հաստատել է, որ Մուհամմադ Ծաալանի ընտանիքն ամբողջությամբ ստացել է խոստացված 60,000 ԱՄՆ դոլար հետմահու փոխհատուցումը. «Մուհամմադ Ծաալանի մայրը ստացել է 20,000 ԱՄՆ դոլար, իսկ նրա կինը՝ 40.000 ԱՄՆ դոլար: Նրանց վճարել են թուրքական լիրայով, որը այլ արժույթի փոխանակելիս ունեցել են որոշակի կորուստ»:[642]

«Macro Media Center»-ի (Հյուսիսային Սիրիայում իրադարձություններին հետևող խումբ) ներկայացուցիչ Օմար Մահմուդ ալ-Բոմի պնդմամբ «Իդլիբից [դեպի Ադրբեջան] համատեղ մեկնել է մոտ 200 զինյալ, իսկ հետո Հալեպից հյուսիս գտնվող Հավար Քիլիս անցակետով հիսունի դիերը վերադարձվեցին և հանձնվեցին նրանց ընտանիքներին (մինչև 2020 թվականի հոկտեմբերի 12-ը)»:[643]

2021 թվականի մարտին հեռախոսային հարցազրույցի ժամանակ Իդլիբում գտնվող ինֆորմանտը դրամական փոխհատուցման մեկ այլ դեպքի մասին հայտնել է, որ ինքը փորձել է օգնել զոհված սիրիացի մի վարձկանի ընտանիքին՝ ստանալու խոստացված հետմահու փոխհատուցման ամբողջ գումարը. «Մոհամմեդի մարմինը վերադարձրին Աթմա ճամբարում գտնվող իր ընտանիքին: Ներկա եմ եղել նրա հուղարկավորությանը և գիտեմ, որ ևս 10 վարձկանների դիակներ են հանձնվել Իդլիբի Աթմա ճամբարում գտնվող նրանց հարազատներին»:[644] Թեև Արցախում Մոհամմեդի զոհվելու դեպքում նրա կնոջը խոստացել էին 50,000 դոլար փոխհատուցում, այս նյութը պատրաստելու ժամանակ նրա կինը ստացել էր ընդամենը աշխատավարձի մնացորդը՝ 1,400 ԱՄՆ դոլար, և ևս 60,000 թուրքական լիրա (մոտ 6,900 ԱՄՆ դոլար) որպես հետմահու փոխհատուցում: Հարցազրույցի պահին ինֆորմանտը փորձում էր միջնորդի դեր ստանձնել Մոհամմեդի կնոջ և Աբու-Ամշայի միջև, որպեսզի օգնի կնոջը՝ ստանալու ամուսնու մահվան դիմաց դեռևս չվճարած 40,000 ԱՄՆ դոլարը գերազանցող գումարը:

Այսպիսով, եղած ապացույցներն ակնհայտ կերպով վկայում են, որ Արցախ տեղափոխված սիրիացի զինյալները եղել են վարձկաններ, որոնց հավաքագրել, տեղակայվել են՝ մասնավոր ֆինանսական շահ ստանալու նպատակով՝ հիմնականում աշխատավարձի ձևով և հետմահու երաշխիքների կամ այլ վճարների տեսքով, որոնք ընդհանուր առմամբ իրականացվել են և համապատասխան վճարումներ կատարվել են մարտական ծառայությունների և/կամ մարտական գործողությունների արդյունքում գրանցված մահերի դիմաց:

642 2021 թվականի մարտի 27-ին Աթարեբում Բ. Ռազզաքի (կեղծանուն) տված առերես հարցազրույցից: Բ. Ռազզաքը Մուհամմադ Ծաալան Աբդուլ Ռազզաքի մերձավոր ազգական էր, ով օգնել էր հավաքագրել «Համզա» խմբավորման առնվազն 65 վարձկանների՝ հիմնականում Աթարեբի բնակիչների, և 2020 թվականի սեպտեմբերի կեսերին փոխադրվել էր Ադրբեջանի Հանրապետություն, որտեղ էլ 2020 թվականի սեպտեմբերի 28-ին կամ 29-ին սպանվել է ռազմական գործողությունների ժամանակ:

643 Fatima Ashour, "Destitution, Deception Thrust Syrians into the Azerbaijani-Armenian War in Nagorno-Karabakh Region," Syria Direct, October 12, 2020, https://syriadirect.org/destitution-deception-thrust-syrians-into-the-azerbaijani-armenian-war-in-nagorno-karabakh-region/; Malachy Browne et al., "A Civilian Camp in Syria Was Bombed. Here's How We Traced the Culprit.," The New York Times, December 1, 2019, sec. Reader Center, https://www.nytimes.com/2019/12/01/reader-center/syria-russia-bombing-video-investigation.html

644 2021 թվականի մարտի 21-ին Ա. Ալիի (կեղծանուն) տված հեռախոսային հարցազրույցից: Ա. Ալին ապրում է Իդլիբում և հաճախ որպես կապալառու աշխատում է Իդլիբում տեղակայված զինյալ խմբերի համար:

Պատկեր 14.9. Թուրքիայի հետ սահմանին՝ Իդլիբ նահանգի հյուսիսարևմտյան հատվածում գտնվող ներքին տեղահանված սիրիացիների Աթմա ճամբարը: Այս ճամբարում ապրում են մոտ 1 միլիոն ներքին տեղահանվածներ, 2020թ. (Աղբյուրը՝ AFP):

Լիբիա. Թուրքիայի կողմից վարձկանների օգտագործման նախկին փորձը և այդ փաստի ժխտումը

Արցախի հայության դեմ ծավալված ռազմական գործողություններին մասնակցելու համար Թուրքիայի կողմից սիրիացի վարձկաններ հավաքագրելու և Ադրբեջան փոխադրելու փաստերը, ինչպես ապացուցվեց վերը, արժանահավատ են և հիմնավոր՝ չնայած նրան, որ Թուրքիան և Ադրբեջանը ժխտում են այդ իրողությունը: Այս իրողությունը հիմնավորվում է նաև Լիբիայում Թուրքիայի կողմից վարձակնների օգտագործման նախկին փորձով և դրա շարունակական ժխտողականությամբ:

2019 թվականի նոյեմբերի 27-ին Թուրքիան փոխըմբռնման երկու հուշագիր է ստորագրել Լիբիայի ազգային համաձայնության կառավարության հետ, որոնցից մեկը ռազմական համագործակցության մասին է, իսկ մյուսը՝ Արևելյան Միջերկրականում ծովափնյա պետությունների ծովային սահմանների վերաբերյալ:[645] 2019 թվականի դեկտեմբերին Սիրիայից ստացվեցին առաջին հաղորդումները՝ Թուրքիայի կողմից սիրիացի վարձկաններ հավաքագրելու և Լիբիայում տեղակայելու մասին, որտեղ նրանք պետք է կռվեին Տրիպոլիում գտնվող և Թուրքիայի աջակցությունը վայելող ազգային համաձայնության կառավարության կողմից: 2020 թվականի հունվարի 17-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար

645 Waleed Abdullah, "Libya's GNA Activates Security Deal with Turkey," Anadolu Agency, December 19, 2019, https://www.aa.com.tr/en/africa/libyas-gna-activates-security-deal-with-turkey/1678715

Մևլութ Չավուշօղլուն մերժեց իրենց ուղղված այն մեղադրանքները, թե Լիբիայում կռվելու դիմաց թուրքական կառավարությունը քաղաքացիություն է շնորհում կամ դրամական փոխհատուցում տալիս սիրիացի վարձկաններին՝ ընդգծելով, որ «այդ մեղադրանքները բացարձակ սուտ են»:[646] Ապացույցները, սակայն, վկայում են, որ այդ ժխտումներն են կեղծ: Չավուշօղլուի՝ 2020 թվականի հունվարին արած հայտարարությանը նախորդել էին 2019 թվականի դեկտեմբերին Թուրքիայի հովանավորությունն ու աջակցությունը վայելող Սիրիայի ժամանակավոր կառավարության և ՍԱԲ-ի ժխտողական հայտարարությունները՝ Լիբիայում սիրիացի զինյալների տեղակայման մասին: Եվ իսկապես, 2020 թվականի փետրվարին անգամ Թուրքիայի նախագահ Էրդողանը ընդունեց, որ Լիբիայում կռիվներին մասնակցելու համար այնտեղ են տեղակայվել թուրքամետ սիրիացի վարձկաններ. «Թուրքիան այնտեղ է մարտական պատրաստության հրահանգիչների տեսքով: Կան նաև մարդիկ՝ Սիրիական ազգային բանակից»:[647]

Ավելին, ԱՄՆ պաշտպանության նախարարության հրապարակած «Հակաահաբեկչական գործողությունները հյուսիսային, արևելյան և արևմտյան Աֆրիկայում» առաջին եռամսյակային զեկույցում (հունվար-մարտ 2020թ.) գլխավոր տեսուչ Ջոն Ու. Օ'Դոննելլը հայտնել է ԱՄՆ Կոնգրեսին, որ 2020 թվականի առաջին երեք ամսվա ընթացքում Թուրքիան Լիբիա է ուղարկել 3,500 սիրիացի զինյալի, իսկ 2020 թվականի ապրիլին՝ ևս 300-ի:[648] Բացի այդ, 2020 թվականի փետրվարին «Associated Press» գործակալությանը տված հարցազրույցում Միացյալ Թագավորությունում գտնվող և Սիրիայում իր վստահելի աղբյուրներն ունեցող «Մարդու իրավունքների սիրիական դիտարանի» տնօրեն Ռամի Աբդուրահմանի հաշվարկներով՝ 2020 թվականի առաջին եռամսյակում Թուրքիան Լիբիա է ուղարկել 4,700-ից ավելի սիրիացի վարձկանների, որոնցից 130-ն Իսլամական պետության կամ Ալ-Քաիդայի նախկին զինյալներ են:[649] Այնուհետև «Մարդու իրավունքների սիրիական դիտարանը» հայտնել է, որ մինչև ռազմական գործողությունների ավարտը և 2020 թվականի հոկտեմբերին հրադադարի պայմանագրի ստորագրումը, Թուրքիան 18,000-ից ավելի սիրիացի վարձկան է տեղակայել Լիբիայում:[650]

Իսկ ինչ վերաբերում է Արցախում սիրիացի վարձկանների ներկայության փաստը ժխտելուն, 2020 թվականի հոկտեմբերի 10-ին՝ 44-օրյա պատերազմի թեժ օրերին, ՍԱԲ առաջնորդներից Զիադ Հաջ Աաբիիդն «Alhurrah» հեռուստաընկերությանը հաղորդել է.

> «Թուրքիան Հայաստանի դեմ կռվելու նպատակով սիրիացի զինյալների փոխադրումն Ադրբեջան չի կազմակերպել, քանի որ իրավիճակը [Լեռնային Ղարաբաղում] այլ էր, քան Լիբիայում... Հնարավոր է, որ կան թուրքական մասնավոր ռազմական ընկերություններ, որոնք

646 "Cavusoglu Denies Granting Turkish Citizenship to Syrians in Exchange for Fighting in Libya," Middle East Monitor, January 17, 2020, https://www.middleeastmonitor.com/20200117-cavusoglu-denies-granting-turkish-citizenship-to-syrians-in-exchange-for-fighting-in-libya/

647 Haftar Khalifa, "Turkey's Erdogan Confirms Sending Syrian Fighters to Libya," Al Jazeera, February 21, 2020, https://www.aljazeera.com/news/2020/2/21/turkeys-erdogan-confirms-sending-syrian-fighters-to-libya

648 «Արևելյան, հյուսիսային և արևմտյան Աֆրիկայում հակաահաբեկչական գործողությունների հարցերով գլխավոր տեսուչի եռամսյակային զեկույցը ԱՄՆ Կոնգրեսին | 2020 թվականի հունվարի 1 - 2020 թվականի մարտի 31» (ԱՄՆ պաշտպանության նախարարություն, գլխավոր տեսուչի գրասենյակ, 16 հուլիսի, 2020թ.), https://www.stateoig.gov/system/files/q2fy2020_leadig_ea_nw_africa_cto.pdf.

649 Sam Magdy, "Turkey Deploys Extremists to Libya, Local Militias Say," AP News, February 5, 2020, sec. Civil wars, https://apnews.com/article/civil-wars-united-nations-islamic-state-group-syria-turkey-91feba2d2b530e471721b2dc285e69bf

650 "After Transferring over 18,000 Syrian 'Mercenaries' to Libya to Serve Turkey's Regional Interests | Turkish Authorities Arrest Libyan, as He Tries to Enter Turkish Territory Illegally • The Syrian Observatory for Human Rights," The Syrian Observatory for Human Rights, February 17, 2021, https://www.syriahr.com/en/205372/; "Libya Rivals Sign Ceasefire Deal in Geneva," BBC News, October 23, 2020, sec. Africa, https://www.bbc.com/news/world-africa-54660039

կռվելու համար սիրիացիներ են փոխադրում Ադրբեջան, բայց դա կապ չունի Սիրիական ազգային բանակի պաշտոնական դիրքորոշման հետ»:[651]

Ժխտելու փոխարեն այս հայտարարությունն իրականում հաստատում է այն, որ եղել է մարտական գործողությունների մեջ ներգրավվածություն հանուն մասնավոր շահի: Ավելին, ակնհայտ է, որ փոխադրումը Թուրքիայի տարածքով հնարավոր չէր կարող լինել առանց պետության թույլտվության: Հետևաբար, ժխտումը միայն ավելի ակնառու է դարձնում վարձկանների գործածման համակարգային բնույթը:

Համակարգային գործընթացի վերաբերյալ ապացույցները միայն ավելացնում են անհաղթահարելի ապացույցները, որոնք Թուրքիային կապում են այս երկու հակամարտություններում սիրիացի վարձկանների օգտագործման հետ, այդ թվում՝ թուրքական և ադրբեջանական զինվորական համազգեստների, թուրքական զինատեսակների և զրահատեխնիկայի, թուրքական ավիաբազաների և օդանավակայանների և թուրքական արժույթի օգտագործումը որպես փոխհատուցման ձև կիրառելու միջոցով:

Միջնորդավորված պատերազմի վարում, պատերազմական հանցագործություններ և էթնիկ զտումներ հյուսիսարևմտյան Սիրիայում. Թուրքիայի վնասակար գործելակերպի արտահանումը Կովկաս

Սույն զեկույցի՝ նախապատմությանն ու ռասգիմին վերաբերող բաժիններում ներկայացված փաստերի համաձայն՝ Էրդողանի իշխանության օրոք Թուրքիան հետամուտ է պանթուրքիզմի գաղափարներին և օգտագործում է պանիսլամիզմի հռետորաբանությունը՝ Անատոլիայում, իսկ այժմ նաև Կովկասում իսլամիզմի գործակալներին այլազգիների դեմ մոբիլիզացնելու նպատակով: Ստորև քննարկվում են Թուրքիայի վարած ռազմական գործողությունները հյուսիսային Սիրիայում, նրա ունեցած ծանրակշիռ դերն ու ցուցաբերած աջակցությունը Սիրիական ազգային բանակի (ՍԱԲ) ստեղծմանը, որի միջոցով հյուսիսարևելյան Սիրիայում իրականացվեցին այնտեղ ապրող քրդերի, հայերի և այլ ազգերի էթնիկ զտումներ: Թուրքական իշխանությունները, կրոնական ծայրահեղականներին իրենց գաղտնի դաշնակիցը դարձնելով և նրանց միջոցով առաջ տանելով պանթուրքիզմը, որպես գործակից պետություն՝ փորձեցին մնալ ստվերում՝ պատասխանատվությունից խուսափելու համար: Իսկ վարձկաններ (շատերը՝ ՍԱԲ-ի շարքերից) հավաքագրելը և Արցախում հայերի դեմ պատերազմին մասնակցելու նպատակով նրանց Ադրբեջան ուղարկելը այս վնասակար քաղաքականության և գործելակերպի ընդլայնում էր:

Որպես նախապատմություն հիշենք, որ 2016 թվականից Թուրքիան մի շարք ռազմական գործողություններ է իրականացրել հյուսիսային Սիրիայում, որոնցից առանձնացնենք մասնավորապես «Եփրատի վահան» (2016թ. օգոստոս – 2017թ. մարտ), «Ձիթենու ճյուղ» (2018թ. հունվար-մարտ), «Խաղաղության գարուն» (2019թ. հոկտեմբերի 9-17) և «Գարնանային վահան»

651 @alhurranews, “#شاهد_الحرة الحكي_سوري - حقيقة إرسال تركيا السوريين للحرب بين أرمينيا وأذربيجان,” Twitter, October 10, 2020, https://twitter.com/alhurranews/status/1314702180394430471.

(2020թ. փետրվարի 27-մարտի 6) գործողությունները: Վերջինիս միջոցով ձևավորվեց այսպես կոչված «բուֆերային գոտին» և հյուսիսարևմտյան Սիրիան de facto (փաստացի) բռնազավթվեց Թուրքիայի կողմից:

2017 թվականին՝ «Եփրատի վահան» գործողության ավարտին, Էրդողանը կազմակերպեց ՍԱԲ ստեղծումը՝ փորձելով թաքցնել Սիրիայի ազատ բանակի զանազան ստորաբաժանումների կողմից կատարված պատերազմական և մարդկության դեմ կատարված հանցագործությունները, որոնց թվում էին Սիրիայում ապրող հայերի առևանգումն ու խոշտանգումը[652] և Հալեպի հայկական թաղամասերի՝ առանց տարբերակման ռմբակոծումը:[653] 2017 թվականի դեկտեմբերին Սիրիայի ազատ բանակի առավել արմատական խմբավորումները և այլ ծայրահեղական խմբեր վերանվանվեցին և միավորվեցին ՍԱԲ-ի մեջ, որի կազմում այդ պահին արդեն կային առնվազն 30 զինված խմբավորում և մոտ 22,000 զինյալ, որոնց պատրաստել և զինել է Թուրքիայի կառավարությունը:

Ռազմական գործողությունների ընթացքում Թուրքիայի բացահայտ աջակցությամբ ՍԱԲ-ը բազմաթիվ պատերազմական հանցագործություններ է գործել քաղաքացիական անձանց դեմ, ինչպես, օրինակ, խաղաղ բնակչության և քաղաքացիական կառույցների չտարբերակված ռմբակոծում, թալան,[654] գույքի բռնազավթում, հարկադիր տեղահանություն և ժողովրդագրական կազմի փոփոխություն,[655] կամայական մահապատիժներ,[656] բռնաբարություն, առևանգում և խոշտանգում, ինչպես նաև արգելված զինատեսակների, օրինակ՝ սպիտակ ֆոսֆորի կիրառում քաղաքացիական անձանց դեմ: [657] Մասնավորապես, 2018 թվականին Հալեպ նահանգի Աֆրինի շրջանում «Ձիթենու ճյուղ» գործողության ընթացքում ՍԱԲ-ը սպանել է 350-ից ավելի խաղաղ բնակչի, որոնց թվում՝ 55 երեխա և 36 կին,[658] տեղահանել է 150,000-ից ավել մարդու,[659] բռնազավթել ու կողոպտել է վերջիններիս գույքը:[660] Թուրքիայի աջակցությունը վայելող ՍԱԲ-ի կողմից սպանվածների և տեղահանվածների մեջ եղել են քրդեր, արաբներ և հայեր:[661] Բացի այդ, ՍԱԲ-ը ռազմական ուղղակի աջակցություն է ստացել Թուրքիայից, և ըստ 2018 թվականի սեպտեմբերին Սիրիայում տեղի ունեցած

652 Sarkis Balkhian, "45 Days in Hell: Syrian Armenians Kidnapped and Tortured by FSA," The Armenian Weekly, June 17, 2014, https://armenianweekly.com/2014/06/17/hell/.

653 Sarkis Balkhian, "When Even 'Terrorists' Acknowledge Their Crimes," The Armenian Weekly, March 21, 2014, https://armenianweekly.com/2014/03/21/when-even-terrorists-acknowledge-their-crimes/.

654 "Syria: Turkey Must Stop Serious Violations by Allied Groups and Its Own Forces in Afrin," Amnesty International, August 2, 2018, https://www.amnesty.org/en/latest/news/2018/08/syria-turkey-must-stop-serious-violations-by-allied-groups-and-its-own-forces-in-afrin/.

655 "Prior Turkish Operations Forebode New Offenses in Northeast Syria," Syria Justice and Accountability Centre, October 24, 2019, http://syriaaccountability.org/updates/2019/10/24/prior-turkish-operations-forebode-new-offenses-in-northeast-syria/.

656 "Turkey May Be 'responsible' for Executions of Kurds in Syria: UN," France 24, October 15, 2019, https://www.france24.com/en/20191015-turkey-may-be-responsible-for-executions-of-kurds-in-syria-un.

657 Lara Seligman, "Turkish Proxies Appear to Be Using White Phosphorus in Syria," Foreign Policy, October 17, 2019, https://foreignpolicy.com/2019/10/17/turkish-proxies-chemical-weapons-syria-kurds/.

658 "On the Eve of Nowruz Festivals...Afrin Witnesses Arrests against Its Residents by the Factions of 'Olive Branch' on Charge of Celebrating and Setting Fire in the Festival's Anniversary • The Syrian Observatory for Human Rights," The Syrian Observatory for Human Rights, March 21, 2019, https://www.syriahr.com/en/121535/.

659 "UNHCR - Syria Factsheet (January - November 2018)" (United Nations High Commissioner for Refugees, December 31, 2018), https://reliefweb.int/report/syrian-arab-republic/unhcr-syria-factsheet-january-november-2018.

660 Hannes Baumann, ed., Reclaiming Home: The Struggle for Socially Just Housing, Land and Property Rights in Syria, Iraq and Libya (Friedrich-Ebert-Stiftung, 2019), http://library.fes.de/pdf-files/bueros/tunesien/15664.pdf.

661 "Turkish Shelling Destroys 3,000-Year-Old Temple in Afrin; Armenian Possibly Killed as Offensive Continues," The Armenian Weekly, January 29, 2018, https://armenianweekly.com/2018/01/29/turkish-shelling-continues-in-afrin/.

դեպքերը հետաքննող Անկախ միջազգային հանձնաժողովի՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին ներկայացված զեկույցի՝

> «թուրքական օդուժը փետրվարի 22-ին՝ ժամը 20:30-ի սահաններում, Բասութա գյուղի մոտ հարձակումներ է իրականացրել մարդատար ավտոբուսների, միկրոավտոբուսների և մեքենաների շարասյան վրա, որը հարյուրավոր ցուցարարների էր տեղափոխում Ջաբալ ալ-Ալիամով... Ականատեսները պատմել են՝ ինչպես էր շարասյունը փորձում սնունդ և դեղորայք հասցնել Աֆրին: Բազմաթիվ վկայություններ ուսումնասիրելուց հետո հանձնաժողովը հաստատել է, որ շարասյունը կազմված է եղել ակտիվիստներից, բուժքույրերից և բժշկից, ինչպես նաև ցուցարարներից, որոնց թվում նաև եղել են կանայք և երեխաներ»: [662]

Թուրքական զինված ուժերի և ՍԱԲ-ի պատերազմական հանցագործությունների այս պատկերը կրկնվեց 2019 թվականի հոկտեմբերին, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ հյուսիսային Սիրիայից ԱՄՆ զինված ուժերը դուրս բերելու որոշումից հետո,[663] Էրդողանը սկսեց «Խաղաղության գարուն» կոչված հարձակողական գործողությունը հյուսիսարևելյան Սիրիայում: Թուրքական զինված ուժերի և ՍԱԲ-ի իրականացրած հիմնական գործողություններին մասնակցեցին «Համզա» և «Սուլթան Մուրադ» խմբավորումները, «Ահրար ալ-Շամ», «Ֆայլաք ալ-Շամ», «Ահրար ալ-Շարքյա» (վերջինիս ներառում է ալ-Քաիդայի սիրիական մասնաճյուղի՝ «Ալ-Նուսրա» ճակատի նախկին զինյալներ) ծայրահեղական խմբերը և զինված ընդդիմության այլ խմբավորումներ, որոնք ներգրավված էին Սիրիայի հակամարտությանը:

«Amnesty International» կազմակերպության իրականացրած հետաքննության համաձայն՝ թուրքական զինված ուժերը և ՍԱԲ-ը «Խաղաղության գարուն» գործողության ընթացքում «լկտիաբար անտեսել են քաղաքացիական անձանց կյանքի իրավունքը՝ բազմաթիվ անմարդկային գործողություններ իրականացնելով և գործելով պատերազմական հանցագործություններ, ինչպես, օրինակ՝ կամայական մահապատիժներ և ապօրինի հարձակումներ, որոնց պատճառով սպանվել կամ վիրավորվել են խաղաղ բնակիչներ»:[664] «Amnesty International»-ի հետաքննությունը բացահայտել է նաև «բնակելի թաղամասերի՝ տների, փռի և դպրոցի վրա առանց տարբերակման հարձակման դեպքեր, [ինչպես նաև] սիրիացի հայտնի քուրդ կին քաղաքական գործիչ Հևրին Խալաֆի դաժան ու ապօրինի մահապատժի դեպքը:[665] Գործողության ավարտին՝ 2019 թվականի հոկտեմբերի 17-ին, իրենց տներից տեղահանվել էր գրեթե 300,000 անձ:[666]

Տեղահանվածների մեջ է եղել Ռաս ալ-Այն քաղաքի մոտ գտնվող Մրեկիս գյուղում բնակվող առնվազն ութ հայ ընտանիք: 2021 թվականի մայիսին դեմառդեմ հարցազրույց է կազմակերպվել «Խաղաղության գարուն» գործողության պատճառով տեղահանված և այժմ

662 «Սիրիայի Արաբական Հանրապետության հարցերով անկախ միջազգային հետաքննության հանձնաժողովի զեկույց» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 9 օգոստոսի, 2018թ.), էջ 6, https://www.ohchr.org/en/documents/country-reports/ahrc3965-report-independent-international-commission-inquiry-syrian-arab

663 Eric Schmitt, Maggie Haberman, and Edward Wong, "President Endorses Turkish Military Operation in Syria, Shifting U.S. Policy," The New York Times, October 7, 2019, sec. U.S., https://www.nytimes.com/2019/10/07/us/politics/trump-turkey-syria.html

664 Eric Schmitt, Maggie Haberman, and Edward Wong, "President Endorses Turkish Military Operation in Syria, Shifting U.S. Policy," The New York Times, October 7, 2019, sec. U.S., https://www.nytimes.com/2019/10/07/us/politics/trump-turkey-syria.html

665 ABC News In-depth, "Who Killed 'the Jasmine of Syria'? | Foreign Correspondent," March 10, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=iTNE9L3jCDA

666 "Turkey/Syria: Civilians at Risk in Syria Operation," Human Rights Watch, October 11, 2019, https://www.hrw.org/news/2019/10/11/turkey/syria-civilians-risk-syria-operation.

Հայաստանում բնակվող հայ երեք տարբեր ընտանիքների երեք անդամների հետ:

«Ծնվել եմ 1979 թվականին Սիրիայի Ռաս ալ-Այն քաղաքում: Հայոց ցեղասպանության պատճառով պապս Թուրքիայից տեղափոխվել էր Սիրիա», - ասել է Հասսաքահ նահանգի Մրեկիս գյուղից տեղահանված հայազգի Ի.Հ.-ն: «Կյանքը Սիրիայում հոյակապ էր մինչև հակամարտությունը: Մեր գյուղում ապրում էր 12 կամ 13 ընտանիք՝ ութը՝ հայկական, չորսը՝ քրդական: Իրականում այդ չորս քուրդ ընտանիքները ևս հայկական ծագում ունեին»:[667]

Ռազմական հիշյալ գործողությունների վերաբերյալ վկաներից մեկը հայտնել է հետևյալը.

> «Ժամը 21-ի մոտ էր, երբ մեր հարևանը շտապ եկավ մեր տուն և հայտնեց, որ թուրքական ռազմական ինքնաթիռը հարևան գյուղում, որը 10-15 կմ հեռավորության վրա էր մեզնից, հարվածել է մի տան և քաղաքացիական այլ կառույցների: Սկզբում հույս ունեինք, թե քրդական ուժերին կհաջողվի հետ մղել «Դավայեշին»,[668] բայց ժամը 1-ի կողմերը սկսեցինք լսել մեր գլխի վրայով թռչող թուրքական ինքնաթիռների ձայներ: Գիտեինք, որ թուրքական ռազմաօդային ուժերի ինքնաթիռներն են, քանի որ ո՛չ քրդական ուժերը, ո՛չ էլ «Դավայեշը» չունեին օդուժ: Իսկ երեսուն րոպե անց, երբ լսեցինք ինքնաթիռի օդային հարվածի՝ մոտ տեղից եկող ձայնը, արագ հավաքեցինք մեր իրերը և մեր երեխաների կյանքը փրկելու համար՝ փախանք Հասսաքահ քաղաքի ուղղությամբ»:[669]

Ըստ բոլոր երեք վկաների հավաստումների և ՍԱԲ-ի կողմից Ռաս ալ-Այնը զավթելուց հետո տեղում մնացած, հարևան գյուղերում բնակվող իրենց արաբ ընկերներին «WhatsApp» հավելվածի միջոցով ուղարկած լուսանկարների՝ ՍԱԲ-ի զինյալները գյուղեր մտնելուց անմիջապես հետո սկսել են կողոպտել հայերի և քրդերի տները: Սա ցույց է տալիս, թե ինչպես թուրքական ռազմական աջակցությունը, ՍԱԲ-ի անվան քողի տակ կրոնական ծայրահեղականների լեգիտիմացման միջոցով, քաղաքացիական անձանց նկատմամբ պատերազմական հանցագործությունների միջոցով փաստացի էթնիկ զտում է իրականացրել տարածաշրջանի ոչ թուրք և չափավոր գաղափարախոսական հայացքներ ունեցող մահմեդական արաբների դեմ:

Սիրիայում տեղի ունեցած նմանօրինակ երևույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Սիրիայում մարդու իրավունքների նման խախտումներ և պատերազմական հանցագործություններ կատարած հանցագործներին տեղական, տարածաշրջանային և միջազգային մարմինների կողմից պատժի ենթարկելու անկարողությունը հանցագործների մոտ ստեղծել է անպատժելիության գիտակցում՝ ոգևորելով մասնավորապես Թուրքիայի աջակցությունը վայելող ՍԱԲ-ին և նրա խմբավորումներին («Ֆայլաք ալ-Շամ», «Ֆայլաք ալ-Մաժդ» զինյալ խմբերը, «Համզա» խմբավորումը, «Սուլթան Սուլեյման Շահ» բրիգադը և «Սուլթան Մուրադ» խմբավորումը): Հետևանքը եղավ այն, որ նորանոր վարձկաններ զինվորագրվեցին՝ պատրաստ կռվելու Լիբիայում, ինչպես նաև Արցախի հայության դեմ:

Օրինակ, «Համզա» խմբավորման հրամանատար Սայֆ Բալուդը (հայտնի է նաև Սայֆ Աբու Բաքր անունով), ըստ լուրերի, նախկինում եղել է Իսլամական պետության (ԻՊ) անդամ:

667 Հայաստանի մայրաքաղաք Երևան ժամանելուց հետո Ի.Հ-ն առաջին հարցազրույցը տվել է 2019 թվականի դեկտեմբերի 18-ին, իսկ հաջորդը՝ սույն զեկույցի համար 2021 թվականի մայիսի 5-ին:

668 Արաբերենում «Դավայեշ» բառը «Դայեշ»-ի հոգնակի թիվն է, իսկ վերջինը եզրույթ է, որով բնութագրում են ԻՍԻՊ-ի (ԻՊ-ի) զինյալներին: Սիրիայում հարձակումների վկա դարձած բազմաթիվ քաղաքացիական անձինք սիրիական զինված ընդդիմության բոլոր խմբավորումներին անվանում են «Ազատ բանակ» (այսինքն՝ Սիրիայի ազատ բանակ), ԻՍԻՊ կամ ալ-Նուսրա:

669 Հարցազրույց Սիրիայի Հասսաքահ նահանգի հայ բնակիչի հետ:

Պատկեր 14.10. Ի.Հ.-ի տունը Մրեկիսում, որը գյուղը գրավելուց հետո կողոպտել են ՍԱԲ-ի զինյալները: Տան արտաքին պատերը վանդալիզիմի են ենթարկվել, 2020թ. (Աղբյուրը՝ մասնավոր):

«Համզա» խմբավորման հավաքագրած երկու վարձկաններ՝ Ահմեդը և Լուայը, ովքեր այս զեկույցի համար հարցազրույց էին տվել «Ալեպպո-ՀԿ»-ին, հաստատել են Սայֆ Բալուդի՝ Ադրբեջանում գտնվելու փաստը և նրա անմիջական մասնակցությունը արցախահայության դեմ կռիվներին: Իսկ «Ջեյմսթաուն» հիմնադրամի հրատարակած զեկույցում Նիկոլաս Հերասը (Ջեյմսթաունի հիմնադրամի նախկին ավագ վերլուծաբան և Ամերիկյան անվտանգության ապահովման նոր մոտեցումների կենտրոնի (CNAS) հետազոտող, որն աշխատում է Մերձավոր Արևելքի անվտանգության ծրագրում) գրել է.

> «2013 թվականի վերջերին, երբ Իսլամական պետությունը (ԻՊ) սկսեց ասպարեզ գալ որպես ազդեցիկ դերակատար ալ-Բաբ տարածաշրջանում, Սայֆ Աբու Բաքրը և նրա ընտանիքի անդամները հավաքեցին մի խումբ զինյալների և միացան ԻՊ-ին: Հետագայում նա դարձավ ալ-Բաբի և շրջակա տարածաշրջանի համար ԻՊ-ի գլխավոր պատասխանատուի առանցքային օգնականներից մեկը: Ըստ տեղեկությունների՝ Սայֆ Աբու Բաքրի պարտականությունները մասնավորապես վերաբերում էին ԻՊ-ի և ալ-Բաբի տարածաշրջանում գործող զինված ընդդիմության այլ կազմակերպությունների միջև կապի ապահովմանը և ԻՊ-ին զենքի մատակարարումների կազմակերպմանը: Թեև պարզ չէ՝ արդյո՞ք Սայֆ Աբու Բաքրը միացել է ԻՊ-ին՝ այդ կազմակերպության գաղափարախոսությանը ու նպատակներին աջակցելով, թե զուտ ֆինանսական պատճառներով, սակայն ակնհայտ է, որ ԻՊ-ի հետ աշխատելու ընթացքում խումբն ամրապնդել է իր ուժերը և հսկողությունը ալ-Բաբի նկատմամբ և միացրել տարածաշրջանը Խալիֆաթին: Այս ժամանակահատվածում Սայֆ Աբու Բաքրի պարտականություններն ԻՊ-ում էապես նպաստել են ԻՊ-ի ազդեցության և հեղինակության ամրապնդմանն ալ-Բաբի տարածաշրջանում: Տեղեկությունների համաձայն՝ նա շարունակել է կատարել իր պարտականությունները մինչև 2014 թվականի կեսերը, երբ նա և իր ընտանիքի անդամները լքեցին ԻՊ-ն և որոշ ժամանակ ապաստանեցին Թուրքիայում: Տեղեկություններ կան նաև, որ ԻՊ-ի հետ աշխատելու ինչ-որ պահի՝ 2013-2014 թվականներին, նա սիրիական զինված ընդդիմության միջոցով դարձել է թուրքական հետախուզության կարևոր գործակալ»:[670]

670 "Militant Leadership Monitor: Personalities Behind the Insurgency" (Jamestown Foundation, November 2018), 12, https://jamestown.org/wp-content/uploads/2018/12/November-2018_MLM.pdf

Իսկ այս զեկույցի համար հարցազրույց տված վկաներից մեկը՝ Օբայդը, ընդունել է, որ իր եղբայրը, որն Արցախում հայերի դեմ կռված սիրիացի վարձկան էր, նախկինում եղել է ԻՊ-ի անդամ. «Եղբայրս միացավ Իսլամական պետությանը (ԻՍԻՊ) 2014 թվականին, երբ Դայեշը գրավեց Ուքայրիբաթ քաղաքը, բայց մի տարի անց դուրս եկավ խմբից՝ տեղափոխվելով Իդլիբի Քելլի ճամբար»:[671] Օբայդի եղբայրը, ում հավաքագրել էր Թուրքիայի աջակցությունը վայելող «Ալ Ամշաթին» («Սուլթան Սուլեյման Շահ») խմբավորումը, մինչև Արցախում հայերի դեմ կռվելն անցել էր ռուսական արտադրության դիպուկահար հրաձիգից կրակելու 10-օրյա պատրաստություն:

Ավելին, սույն զեկույցի համար հարցազրույցում Իդլիբում գտնվող ինֆորմանտը տեղեկացրել է, որ Արցախ մեկնելու և այնտեղ կռվելու նպատակով «Սուլթան Մուրադ», «Համզա» և «Ֆայլաք ալ-Շամ» խմբավորումների առաջնորդները հավաքագրել են ալ-Նուսրա ճակատի նախկին զինյալների և այլ ծայրահեղական խմբերի անդամների: Փախստականների ճամբարներից հավաքագրած սիրիացիների համեմատ նրանց առաջարկել են ավելի բարձր աշխատավարձ, քանի որ նրանք ունեցել են ռազմական փորձ:

Այսպիսով՝ Թուրքիայի՝ զինյալների և վարձկանների ծառայություններից միջնորդավորված օգտվելու, մարտական գործողություններին նրանց ֆինանսական և ռազմական աջակցություն ցույց տալու, միաժամանակ պատերազմական հանցագործությունների արգելքն անտեսելու և անպատժելիության գործելակերպին նպաստելու արատավոր փորձը ծառայել է նրա շահերին, քանի որ պատերազմական հանցագործությունների սպառնալիքը ստիպել է՝ տեղի բնակչությանը փախուստի դիմել, որի հետևանքով Թուրքիայի համար շատ տեղերում ձևավորվել է «բուֆերային գոտի», որտեղ հիմնականում հաստատվել են թրքամետ արմատականներ: Այդ տարածքները նաև մաքրված են Թուրքիայի համար անցանկալի ազգերից և ոչ ծայրահեղական արաբներից: Այս ամենով Թուրքիան շրջանցում է իր՝ որպես պետության վրա դրված պարտավորությունները: Նրա՝ վարձկաններ հավաքագրելու, փոխադրելու և ռազմական գործողությունների տարածք զինյալներ տեղակայելու վերաբերյալ վերոնշյալ արատավոր գործելակերպը ներմուծվեց նաև Կովկաս:

***

Ապացույցները վկայում են, որ մասնավոր օգուտի, ինչպես, օրինակ, աշխատավարձի, հետմահու և այլ փոխհատուցումների խոստումներով և հավաստիացումներով արցախահայերի դեմ պատերազմելու նպատակով Թուրքիան և Ադրբեջանը համակարգված ջանքեր են գործադրել՝ սիրիացի զինյալներ հավաքագրելու, նրանց ռազմական գործողությունների տարածք փոխադրելու, ռազմական գործողություններին նախապատրաստելու համար: Հավաքագրվածների մի մասը ունեցել է ֆինանսական անմխիթար վիճակ, մյուսներն էլ եղել են ՍԱԲ-ից կամ նրա խմբավորումներից: Թեև գրավոր պայմանագրերը պարտադիր պահանջ չեն եղել, սակայն վարձկանները կամ նրանց կողմից երաշխավորված անձինք ստացել են պատերազմին մասնակցելու համար վարձատրություն: Այս ամենն ուղղակիորեն համապատասխանում է վարձկանին տրված իրավական սահմանմանը: Ավելին, սա լիովին համապատասխանում է Թուրքիայի գործելակերպին, որը նույնությամբ կրկնում է Լիբիայում վարձկանների հետ կապված իրավիճակը՝ ռազմական գործողությունների

671 2021 թվականի մարտի 29-ին «Ալեպպո-ՀԿ»-ին Օբայդի (կեղծանուն) տված առերես հարցազրույցից: Օբայդը ԼՂ-ի 2020 թվականի 44-օրյա պատերազմին մասնակցած և սպանված սիրիացի վարձկանի եղբայր է: Օբայդի եղբոր ընտանիքին խոստացել էին 60.000 դոլար հետմահու փոխհատուցում, սակայն մինչև հարցազրույցը պարզվեց, որ տվել են ընդամենը 10.000 դոլար:

տարածք վարձկաններ փոխադրելով, պատրաստելով, զինվորական համազգեստ և զենք մատակարարելով: Այս ամենը նաև հաստատվում է լուսանկարներով և տեսանյութերով: Ավելին, պատերազմական հանցագործությունների համար անպատժելիությունը և պատերազմական հանցագործություններ գործողի համբավը, ըստ երևույթին, նպաստում է նաև այլ նպատակների, մասնավորապես՝ տարածքները տեղական քաղաքացիական բնակչությունից զտելուն: Նույնը կատարվեց նաև Արցախում: Հետևաբար, մինչորդավորված ձևով կռվող զինյալների և վարձկանների բարդ համակարգն ապացուցում է պետական պատասխանատվության հարցը՝ չնայած միջնորդների կիրառությանը:

2020թ.-ին արցախյան երկրորդ պատերազմում ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով Ադրբեջան ուղարկված սիրիացի որոշ վարձկանների անվանացանկը (հայերեն թարգմանություն)

#	Վարձկանի անուն-ազգանունը	Մոր անունը	Ծննդյան տարեթիվը
1	Ծաալան Մարի Խալիլ	Ծաուք	1976
2	Աբդուլլահ Սուբհի Համադեհ	Ամինա	1984
3	Մուհամմադ Աբդուլ Ռահման Քաբի	Ռոզ	1983
4	Մուստաֆա Խալեդ ալ-Դիք	Անղամ	1999
5	Ֆաիզալ Մուհամմադ ալ-Ահմադ	Սուրյա	1988
6	Խալեդ Վահիդ ալ-Ջումաա	Ամուն	1997
7	Հասան Մուհամմադ Սաղիր	Սաքինա	1980
8	Յազին Վալիդ Օթման	Ֆաթիմա	1997
9	Ալի Մուհամմադ Դավալիբի	Ֆաթիմա	1998
10	Մուստաֆա Մուհամմադ ալ-Քուդդուր	Մանար	1999
11	Ահմեդ Շեհադի Շռեյիդի	Շամսա	1988
12	Սամի Մուհամմադ Ղանդուր	Իզդիհար	1998
13	Հուսսեյն Աբդուլ Խալեք Հասսուն	Ֆաթիմա	1998
14	Մուհամմադ Իբրահիմ Յումա	Հալա Արեֆ	1994
15	Խալեդ Վալիդ ալ-Ռահմուն	Սուբհիյա	1992
16	Սամեր Աբդել Ազիզ Շոբակ	Ամալ	1994
17	Յամեն Վալիդ Աբդին	Ամնա	1996
18	Նաժմ Նիմեր ալ-Խալիլ	Սուկրա	1980
19	Ադել Աբդուլ Ռահման ալ-Օմար	Մահդիա	1994
20	Աբդուլլահ Զահիր ալ-Դին Ագինի	Ջամիլա	1994

21	Աբդուլազիզ Մուհամմադ Քաբի	Դիբահ	1980
22	Ահմեդ Աբդել-Նասսեր Մահեր	Մոնա	1999
23	Ալի Աբդուլ-Խալիք Հասսուն	Ֆաթիմա	1997
24	Ահմեդ Ֆայսալ ալ-Իբրահիմ	Բահիջա	1999
25	Մուհամմադ Ահմադ Բզամանի	Այյուչ	1992
26	Աբդուլլահ Հասսան Շոբակ	Համիդա	1985
27	Խալեդ Մուստաֆա Աբրաս	Մարիամ	1984
28	Ահմադ Իմադ Բազարա	Հանա'ա	1997
29	Հասսան Կամել ալ-Աքդի	Աիշա	1998
30	Աբդուլլահ Աբդել Ազիզ Շոբակ	Ամալ	1997
31	Եզզ Էլ Դին Խադեր Շաքեր	Մարիամ	1997
32	Համմուդ Իբրահիմ Համմուդ	Ջամիլա	1998
33	Յասսեր Աբդուլ Լատիֆ Աբդուլ Քադիր	Ամինա	1994
34	Օբայդահ Աբդ ալ-Ռահման Նասիր	Ֆաթիմա	1999
35	Նադեր Մուսա Ֆարիս	Նաբիհ	1988
36	Իբրահիմ Մուստաֆա Համադեհ	Իբթիսամ	1998
37	Բարաքաթ Մուհամմադ Մուհսին Համմաշ	Շուքրիա	1998
38	Բասիլ Օմար Մուսթաֆա	Ֆաթիմա	1997
39	Յուսսեֆ Իբրահիմ Ջամալ	Մուինե	1991
40	Ջիհադ ալ-Ահմադ ալ-Համվի	Նադիա	-
41	Մուսաբ Հասսան ալ-Հասսան	Ղազալա	1992
42	Ազու Մահմուդ ալ-Յուսեֆ	Ամմունա	1998

Արգելված միջոցներ եվ մեթոդներ

ԱԹՍ-ների թիրախային հարվածներ

«Գիշերը լույսերն անջատում էինք, սև տոպրակներ էինք ամրացրել պատուհանների ապակիներին, որ չերևար ներսի լույսը: Ամբողջ գիշերն անօդաչուն էր պտտվում. մտածում էինք՝ ուր որ է կխփեն, չենք փրկվի»:

Անդրանիկ Հարությունյան՝ Հավսաթաղ գյուղից[672]

«Անօդաչուները անընդհատ քաղաքի վրա են եղել, նկարում էին, խփում, նկարում ու խփում: Մի անգամով չէին բավարարվում, կարկուտի նման թափում էին: Էդ հարվածներից տունը դղրդում էր: Ես չեմ կարալու էս շոկից դուրս գալ»:

Արմինե (անունը փոխված է)՝ Հադրութ քաղաքից[673]

Թուրքիայի Հանրապետության ռազմական ղեկավարության ուղղակի աջակցությամբ Ադրբեջանի Հանրապետությունը լավ նախապատրաստվել էր Արցախի Հանրապետության դեմ ռազմական ագրեսիային: Այդ են ապացուցում ականատեսների արժանահավատ վկայությունները, որոնք ստուգել և հաստատել է փաստահավաք թիմը, ինչպես նաև հարվածների ժամանակագրության, թիրախների և ուղղությունների, պատերազմի ընթացքում օգտագործված զենքերի և մեթոդների մասին իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարությունները և հաղորդումները, ինչպես նաև լրագրողական հետաքննությունները:

2020թ.-ի սեպտեմբերի 27-ին՝ կիրակի վաղ առավոտյան, հրետանին և հարվածային ԱԹՍ-ները մի շարք ուղղություններով միաժամանակյա հարվածներ են հասցրել Հադրութի, Մարտունու, Մարտակերտի շրջաններին և մայրաքաղաք Ստեփանակերտին: Նախապես հարձակման է ենթարկվել հակաօդային պաշտպանության համակարգը, ինչպես նաև Արցախի և Ադրբեջանի զինված ուժերի միջև շփման գծին մոտ գտնվող բնակելի թաղամասերը: Արցախի բնակելի թաղամասերի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի առաջին հարվածները, որոնք առանց նախնական նախազգուշացման տեղի են ունեցել ժամը 650-ից 730-ի սահմաններում, երբ երեխաները, կանայք, տարեցները և քաղաքացիական այլ անձինք դեռ քնած էին, բավարար հիմքեր են տալիս՝ պնդելու, որ դրանք նպատակ են ունեցել ահաբեկել խաղաղ բնակչությանը, առաջացնել խուճապ և ստիպել նրանց լքելու իրենց տները:

Բաց աղբյուրների համաձայն՝ պատերազմից առաջ Ադրբեջանը համալրել էր իր զինանոցը թուրքական և իսրայելական արտադրության դրոններով: Դրոններն անօդաչու, հեռակառավարվող զենքի հարթակներ են: Եզրույթն առավել հաճախ օգտագործվում է անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ-ների) մասով, թեև կան նաև ցամաքային և ծովային անօդաչու թռչող սարքեր: Օդային դրոնները բաղկացած են անօդաչու թռչող սարքերից (այսինքն՝ դրանք կարող են տեղակայվել առանց օդաչուի կամ ուղևորի), որոնք գործում են հեռակառավարմամբ կամ ինքնավար եղանակով: Անօդաչու թռչող սարքերն օգտագործվում

672 Հարցազրույց Հավսաթաղի բնակիչ Անդրանիկի հետ, 1 դեկտեմբերի, 2020թ.:

673 Հարցազրույց Հադրութի բնակիչ Արմինեի հետ, 16 հունվարի, 2021թ.:

են տարբեր գործողությունների, օրինակ՝ հետախուզության, հսկողության, գրոհների համար և այլ նպատակներով:[674] Ըստ տեղեկությունների՝ Ադրբեջանը նաև արդիականացրել էր հեռակավարման համակարգերով գործող խորհրդային շրջանի «ԱՆ-2» բիպլանները, որոնք օգտագործվել են ռազմաճակատային գծին մոտ՝ հայկական հակօդային պաշպանության համակարգերը շարքից հանելու նպատակով:[675] Իսկ որոշ հաշվարկներով՝ 2020թ.-ի ամռան ընթացքում՝ պատերազմի նախաշեմին, Ադրբեջանը Թուրքիայից գնել է մոտ երկու տասնյակ «Բայրաքտար ՏԲ2» ԱԹՍ-ներ:[676]

Փաստահավաք խումբը բազմաթիվ համոզիչ վկայություններ է հավաքել Արցախի տարբեր շրջանների բնակիչներից՝ քաղաքացիական կառույցներ, ենթակառուցվածքներ, բնակելի թաղամասեր հայտնաբերելու, թիրախավորելու և ոչնչացնելու, ինչպես նաև խաղաղ բնակչության շրջանում վախի մթնոլորտ ստեղծելու նպատակով Ադրբեջանի կողմից ԱԹՍ-ների կիրառման վերաբերյալ:

Օրինակ, փաստահավաք խմբին հարցազրույց է տվել Շուշի քաղաքի բնակիչ Արինա Սարգսյանը, ով տեսել է քաղաքի վրա թռչող բազմաթիվ ԱԹՍ-ներ և լսել պատերազմի առաջին ձայները: Արինան պատմում է, որ սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան ժամը 715-ից, քաղաքի հակաօդային պաշտպանության միջոցները հարվածի տակ են եղել: «Շուշիում,- պատմել է նա,- մի քանի հատ, սենց ասում են, լոկատոռներ կան, իրանց են հարվածել, արթնացել ենք այդ ձայնից և տեսել ենք բազմաթիվ ԱԹՍ-ներ»: Քաղաքի բնակիչները ԱԹՍ-ների ձայնը բնութագրում են այսպես. «Դը՞զզ. մեղվի նման ձայն էր հանում»:[677] Արինան նշել է, որ հոկտեմբերի 27-ին իրենց տնից 100 մետր հեռավորության վրա գտնվող խանութի վրա արկ է ընկել, որի հարվածից վնասվել են նաև իրենց տան պատուհանների ապակիները: Իսկ երբ հոկտեմբերի 29-ին Արինան գնացել է իրենց տուն՝ իրերը հավաքելու, տեսել է, որ տան դուռը պոկված է, կախովի առաստաղը՝ փլված, իսկ դարպասը՝ վնասված: Արագ վերցրել է իրերը և դուրս եկել: Իսկ հոկտեմբերի վերջին արկն ընկել է նրանց տան մոտակայքում և տան պատուհաններն ավիրել ամբողջությամբ: Պայթյունն Արինան չի տեսել, որովհետև այդ ժամանակ գտնվել է ապաստարանում: Հետո միայն, երբ գնացել է փաստաթղթերի հետևից, տեսել է տունն արդեն ավիրված:

Փաստահավաք խումբը հարցազրույց է վերցրել նաև Հադրութի բնակիչ Արմինե Մայիլյանից, ով հայտնել էր, որ պատերազմի ժամանակ թշնամու կողմից անընդհատ օգտագործվել են ԱԹՍ-ներ. «Առաջին հարվածները եղել են ռազմական կառույցների՝ զինվորական շտաբների, զորամասերի վրա, կապ ապահովող կայանների, ապա տարբեր ուղղություններով անկանոն ռմբակոծություններ են տեղացել նաև քաղաքացիական նշանակության կառույցների, բնակելի և տարբեր նշանակության շենքերի վրա: Առաջին անգամն էր, որ Հադրութի վրա ԱԹՍ-ներ օգտագործվեին, օրինակ՝ 2016 թվականին նման բան չէր եղել»,- հիշում է Արմինեն:[678]

674 "Drones | How Does Law Protect in War? - Online Casebook," International Committee of the Red Cross, դիտվել է/հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 7-ին, https://casebook.icrc.org/glossary/drones-0.

675 Shaan Shaikh and Wes Rumbaugh, "The Air and Missile War in Nagorno-Karabakh: Lessons for the Future of Strike and Defense" (Center for Strategic and International Studies, December 8, 2020), https://www.csis.org/analysis/air-and-missile-war-nagorno-karabakh-lessons-future-strike-and-defense

676 Dan Sabbagh, "UK Wants New Drones in Wake of Azerbaijan Military Success," The Guardian, December 29, 2020, sec. World news, https://www.theguardian.com/world/2020/dec/29/uk-defence-secretary-hails-azerbaijans-use-of-drones-in-conflict

677 Հարցազրույց Շուշիի բնակիչ Արինա Սարգսյանի հետ, 15 դեկտեմբերի, 2020թ.:

678 Հարցազրույց Հադրութի բնակչուհի Արմինե Մայիլյանի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.

Իսկ Հերմինե Հովհաննիսյանը՝ Քարին տակ գյուղից, հիշում է.

> «Առաջին մի քանի օրը չէինք իջնում նկուղ, մտածում էինք՝ ի՞նչ պիտի լինի: Իսկ հետո, երբ այդ անօդաչու սարքերը տեսանք, հասկացանք, թե որքան սարսափելի է: Կարելի է ասել՝ ականջդ սղոցում են էդ ձայները: Մեր տանը նույնիսկ լսվում էին: Լինում էին պահեր՝ այնքան ցածր էին թռչում, որ մտածում էիր, թե հեսա կխփի»:[679]

Իսկ Միշա Գյուրջանը՝ Մարտակերտ համայնքի ղեկավարը, տեսել է ցածր թռչող ԱԹՍ-ներ կամ լսել դրանց ձայնը. «Ձայն էր գալիս. լսում էիր շարժիչի աշխատանքի ձայնը, հետո տեսա, որ արդեն ինչ-որ տեղ հարվածել է: Երբ լսում էինք այդ ձայնը, փախչում, թաքնվում էինք»:[680]

Փաստահավաք թիմը հարցազրույցներ է իրականացրել նաև Ծահումյանի շրջանի 34 բնակիչների հետ, որոնցից 17-ը խոսել են ԱԹՍ-ների, իսկ 3-ը՝ ինքնաթիռների մասին:

Անդրանիկ Հարությունյանը, օրինակ, պատմում է, որ Ծահումյանի շրջանում գրեթե կռիվ չի եղել, տները չեն վնասվել, քանի որ բնակիչները պարզապես խաղաղ եղանակով լքել են իրենց տները: «Հիմնականում դրոններ էին օդում, օրական յոթ-ութ հատ գլխիս վերևով անցնում էին,- պատմել է նա:- Վախեցնում էին մեզ դրոններով, ամեն րոպե մտածում էիր, որ կգա ու կխփի»:[681]

Քանի որ վկայություններից հնարավոր չէր պարզել Արցախում Ադրբեջանի կողմից օգտագործված դրոնների տեսակները, փաստահավաք թիմը կիրառված ԱԹՍ-ների մասին տեղեկատվություն ստանալու խնդրանքով դիմել է Արցախի Հանրապետության դատախազություն:

ԱՀ դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կիրառվել են. ադրբեջանական արտադրության «ԶԱՌԲԱ-1Կ» հարվածային անօդաչու, «ՅԱՐԱՍԱ» հետախուզական անօդաչու, իսրայելական «Օրբիտեր-2» և «Օրբիտեր-3» հետախուզական անօդաչուներ, «ՍԲՐՉԵՐ-2» հետախուզական անօդաչու, «ՍԿԱՅՍՏՐԱՅԿԵՐ» հարվածային անօդաչու, «ՀԵՐՈՆՍ» հետախուզական և «ՀԱՐՈՊ» հարվածային անօդաչուներ, թուրքական «ԲԱՅՐԱՔԹԱՐ ՏԲ2» հետախուզական և հետախուզահարվածային, «ԱՆԿԱՍ» հետախուզահարվածային անօդաչուներ: «ԲԱՅՐԱՔԹԱՐ ՏԲ2» ինքնաթիռային տիպի տակտիկական անօդաչուի տեսախցիկը կանադական արտադրության է՝ WES-CAM CMX 15D տեսակի: Ըստ ԱՀ դատախազության՝ քաղաքացիական կառույցներն ու ենթակառուցվածքները հիմնականում խոցվել են հարվածային և հետախուզահարվածային անօդաչուների, ինքնաոչնչացող անօդաչուների, ինչպես նաև հեռակառավարվող հրթիռների, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի, «ԼՈՌԱ» օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրների, բելառուսական «Պոլոնեզ» ՀԿՈՀ-ների միջոցով:

Հատկանշական է, որ պատերազմի սկբնական փուլում սահմանից հեռու գտնվող բնակավայրերը թիրախավորվել ու հարձակման են ենթարկվել բացառապես հեռահար հրթիռների ու անօդաչուների միջոցով, սակայն հետագայում այդ նույն բնակավայրերը թիրախավորվել են նաև փոքր հրանոթների օգտագործմամբ:

Ամենակարևորն այն է, որ ադրբեջանական իշխանություններն Արցախի վրա հարձակման

679 Հարցազրույց Քարինտակ գյուղի բնակիչ Հերմինե Հովհաննիսյանի հետ, 25 նոյեմբերի, 2020թ.

680 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Միշայի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.

681 Հարցազրույց Ծահումյանի բնակիչ Անդրանիկի հետ, 1 դեկտեմբերի 2020թ.

առաջին իսկ ժամերից հաստատել են ԱԹՍ-ների ակտիվ կիրառման փաստը: Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնեց Արցախի հակաօդային պաշտպանության 12 միավոր համակարգ ոչնչացնելու մասին: Նախագահ Իլհամ Ալիևը հոկտեմբերի 5-ին հայտարարեց, որ Ադրբեջանն ունի թուրքական հարձակողական անօդաչու թռչող սարքեր:[682] Ալիևը նշեց նաև, որ Ադրբեջանն իր նպատակներին հասնելու համար ունի բավարար քանակությամբ անօդաչու թռչող սարքեր, սակայն դրանց ստույգ թիվը չհայտնեց:[683] Վերլուծաբանները նշում են, որ Ադրբեջանն անօդաչու թռչող սարքեր է օգտագործել թիրախներ հայտնաբերելու համար, իսկ դրանք ոչնչացնելու նպատակով օգտագործել է հարվածային կամ «կամիկաձե» անօդաչուներ:[684]

Ադրբեջանի կողմից թուրքական արտադրության ինքնաթիռների և ԱԹՍ-ների կիրառումը փաստել են նաև տեղացի հայ մասնագետները: Օրինակ, «Հայաերոնավիգացիա»-ի տեխնիկական տնօրեն Գևորգ Սիմոնյանը նշել է, որ ՀՀ սահմանին մոտ թուրքական հետախուզական «Բայրաքթարներ» նկատվել են սեպտեմբերի 27-ից: Ըստ պաշտպանության բանակի ներկայացուցչի՝ Արցախի օդային տարածք ներխուժած «Բայրաքթարների» միջոցով հնարավոր թիրախների կոորդինատները կարող էին փոխանցվել օդուժի հրամանատարական կետին, իսկ այնտեղից էլ՝ հարվածային ինքնաթիռներին: Մասնագետները գրանցել են «Բայրաքթարի» և հակառակորդի երկու ինքնաթիռների համագործակցություն, ինչպես նաև այն, որ Ադրբեջանի երկնքում այդ օրերին պտտվել են թուրքական նշաններով ինքնաթիռներ:[685]

Կանադայի արտաքին գործերի նախարար Մարկ Գարնոն 2021 թվականի ապրիլին հայտարարեց Թուրքիա ռազմական ապրանքներ և տեխնոլոգիաներ արտահանելու թույլտվությունները չեղարկելու մասին, քանի որ ձեռք էին բերվել բավարար ապացույցներ այն մասին, որ Արցախում պատերազմի ընթացքում Ադրբեջանն օգտագործում է Թուրքիա արտահանած կանադական արտադրության տեխնոլոգիաներ:[686] Կանադան կասեցրեց ռազմական ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման 25 թույլտվություն 2020թ. հոկտեմբերին, ևս չորսը՝ նոյեմբերին, երբ տեղեկություններ հրապարակվեցին, որ հայկական ուժերի դեմ հարձակողական գործողությունների ընթացքում Ադրբեջանն օգտագործել է կանադական արտադրության օպտիկական և թիրախների հայտնաբերման համակարգեր:[687]

Ըստ «Ռոյթերս» գործակալության հրապարակած տվյալների՝ Թուրքիան իր դաշնակից Ադրբեջան արտահանած ռազմական ապրանքների ծավալները 2020 թվականին ավելացրել

682 Ռագիփ Սոյլու (@ragipsoylu), «ՆՈՐՈՒԹՅՈՒՆ — Ադրբեջանն առաջին անգամ ընդունում է, որ օգտագործում է թուրքական անօդաչու սարքեր Հայաստանին հարվածելու համար», թվիթերյան գրառում, 5 հոկտեմբերի, 2020, https://twitter.com/ragipsoylu/status/1313100758523555842

683 A. Мамедов, "Азербайджан Дронами Уничтожил Военной Техники Армении На $1 Млрд в Боях в Карабахе - Алиев," Interfax-Azerbaijan, October 15, 2020, http://interfax.az/view/816439/ru

684 Robyn Dixon, "Azerbaijan's Drones Owned the Battlefield in Nagorno-Karabakh — and Showed Future of Warfare," Washington Post, November 11, 2020, https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabkah-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html

685 NEWS AM, «Թուրքական Բայրաքթարները Հայաստանի Սահմանին Մոտ Ամեն Օր Հետախուզական Թռիչքների Են Դուրս Գալիս», 28 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=XhLxuF5uXc8

686 "Statement from Minister Garneau to Announce the Cancellation of Export Permits to Turkey," Government of Canada, April 12, 2021, https://www.canada.ca/en/global-affairs/news/2021/04/statement-frommminister-garneauto-announce-the-cancellation-of-export-permits-to-turkey.html

687 " Levon Sevunts, "Canada Cancels Permits for High-Tech Arms Exports to Turkey | CBC News," CBC News, April 13, 2021, https://www.cbc.ca/news/politics/arms-sales-turkey-canada-1.5984453

է վեց անգամ, իսկ դրոնների և այլ ռազմական միջոցների վաճառքը միայն սեպտեմբերին՝ Արցախում պատերազմը սկսվելու նախաշեմին, հասցրել է 77 միլիոն ԱՄՆ դոլարի:[688]

Դրոնների կիրառումը, ըստ Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), հիմնականում չի արգելվում, եթե հարձակվող կողմը պահպանում է պատերազմի վարման միջոցների և մեթոդների ընտրության սահմանված ընդհանուր կանոնները: ԿԽՄԿ նախագահ Պետեր Մորերը նշել է, որ չնայած միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտում գործող պայմանագրերում ԱԹՍ-ների վերաբերյալ որևէ հստակ նշումներ չկան, սակայն ԱԹՍ-ներ օգտագործելիս հակամարտության կողմերը միշտ պետք է տարբերակեն կոմբատանտներին խաղաղ բնակիչներից, ինչպես նաև ռազմական թիրախները քաղաքացիական կառույցներից: Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները և հետաձգեն կամ չեղարկեն հարձակումը, եթե ենթադրվում է, որ դա կհանգեցնի քաղաքացիական բնակչության մահվան, խաղաղ բնակիչների վիրավորման կամ քաղաքացիական կառույցների վնասման: Պետեր Մորերը նկատել է նաև, որ ԿԽՄԿ-ն կարևորում է անօդաչու թռչող սարքերի՝ մարդկանց վրա հոգեբանական հնարավոր ազդեցություն ունենալու վտանգները:[689]

ԱԹՍ-ի հարվածները կարող են շատ ճշգրիտ լինել և պետք է թիրախավորեն բացառապես կոնկրետ ռազմական կառույց, մինչդեռ փաստահավաք թիմը ձեռք է բերել ապացույցներ, որ Ադրբեջանի կողմից կիրառված ԱԹՍ-ները հարվածներ են հասցրել բնակելի թաղամասերին, որտեղ գտնվել են քաղաքացիական խաղաղ բնակիչներ և քաղաքացիական կառույցներ, և դրանով խախտվել են ՄՄԻ-ի համաչափության և տարբերակման սկզբունքները: Բացի վերոնշյալից՝ հայտնաբերվել են ԱԹՍ-ների կիրառման պատճառով խաղաղ բնակիչների մահվան և վնասվածքներ ստանալու լրացուցիչ դեպքեր:

Հարձակումներ քաղաքացիական բնակավայրերի վրա

70-ամյա Լեսմոնյա Ստեփանյանը սպանվել է Հադրութ քաղաքի իր տան բակում՝ «կամիկաձե» անօդաչու թռչող սարքի կողմից տանը հարվածելու հետևանքով: Հադրութի բնակիչ Արմինե Մայիլյանը հայտնել է փաստահավաք խմբին, որ առաջին կրակոցների ձայները լսել է սեպտեմբերի 27-ին՝ ժամը մոտավորապես 0710-ին. «Պայթունների աղմուկից վախեցած, տնային շորերով դուրս եկանք տանից և գնացինք անտառ, անտառում մնացինք մի քանի ժամ՝ մինչև հանդարտվելը, հետո գնացինք տուն, կարևոր իրերը վերցրինք՝ անձնագրեր և այլ փաստաթղթեր, ու նորից վերադարձանք անտառ: Անտառում մնացել ենք 3-4 օր»:[690] Արմինեն նաև պատմել է. «Սեպտեմբերի 27-ին, երբ երկրորդ անգամ գնացինք անտառ, մի քանի րոպե հետո անօդաչուն մոտեցավ և մեր տան մոտ գտնվող հարևանի բակում ռումբ գցեց, ինչի հետևանքով մահացավ հարևանի կինը»: Արմինեն անտառից զանգահարել է հարևանի որդուն. հենց նա էլ ասել է, որ ռումբը ընկել է իրենց թաղամասի վրա՝ իրենց բակում, որի պատճառով էլ նրա մայրը զոհվել է: Փաստահավաք խումբը նաև ԱՀ դատախազությունից է ստացել տեղեկատվություն, որը հաստատել է խաղաղ բնակչության դեմ «կամիկաձե» անօդաչու թռչող սարքի կիրառման փաստը:

688 Ece Toksabay, “Turkish Arms Sales to Azerbaijan Surged before Nagorno-Karabakh Fighting,” Reuters, October 14, 2020, sec. Middle East & Africa, https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-turkey-arms-int-idUSKBN26Z230

689 Peter Maurer, The use of armed drones must comply with laws - ICRC, International Committee of the Red Cross, May 10, 2013, https://www.icrc.org/en/doc/resources/documents/interview/2013/05-10-drone-weapons-ihl.htm

690 Հարցազրույց Հադրութի բնակիչ Արմինեի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.:

Փաստահավաք խումբը փաստագրել է նաև ԱԹՍ-ների կիրառումը Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղի բնակելի թաղամասում: Ջուլիետա Գասպարյանը իր մոր հետ սեպտեմբերի 27-ին գտնվել է Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղում: Նա հայտնել է, որ գյուղը հրետակոծվել է հենց առաջին օրվանից, և արկերը հիմնականում ընկել են գյուղի ներքևի ու վերևի տարածքներում: Ընդ որում՝ հրետակոծությունն ընթացել է անդադար ու տարբեր զինատեսակներով: Նկատել է նաև ինքնաթիռի ռմբակոծության դեպքեր ու երկնքում մշտապես տեսել է անօդաչու թռչող սարքեր: Ջուլիետա Գասպարյանը նշել է, որ գյուղում որևէ ռազմական կառույց տեղակայված չի եղել, ինչպես նաև կարծիք է հայտնել, որ ռմբակոծության հիմնական նպատակը եղել է գյուղը բնակիչներից ազատելը:

Իվան Հովսեփյանը ևս մեկ վկա է Ակնաղբյուր գյուղից: Սեպտեմբերի 27-ին Իվանը կնոջ և 4 երեխաների հետ գտնվել է Ակնաղբյուրում: Առավոտյան՝ ժամը 0800-ի սահմանում, նկատել է անօդաչու թռչող սարքեր և տեսել պայթյուններ՝ տարբեր վայրերում: Նշել է, որ Ակնաղբյուրը ռմբակոծվել է հոկտեմբերի 11-12-ին, որի պատճառով իրենք լքել են գյուղը.

> «Մի երկու օրից արդեն սկսել են գյուղի անասուններին կրակել, դաշտերին խփել, սամալյոտը ռումբ էր գցում. ամենամեծ ռումբերից էր... Փոսի մեջ էր ընկնում, քանդում էր, ավիրում... Ջարդում էր, հարվածից դռները բացում էին: Մեր տան մենակ շուշեքն էին ջարդած, ռամկեքը... Տարբեր սնարյադներով էին խփում... Երևի գաուբից էր, որոնցից մեկը ընկել էր մեր հայաթը»:[691]

Իվանի կարծիքով՝ ռմբակոծության նպատակը քաղաքացիական բնակչությանը ահաբեկելն էր, որպեսզի վախից նրանք լքեն իրենց գյուղը, քանի որ այնտեղ ռազմական որևէ կառույց չկար:

Հարձակումներ քաղաքացիական ավտոմեքենաների վրա

Փաստահավաք խումբը պարզել է, որ սեպտեմբերի 27-ին Մարտակերտ-Դրմբոն ճամապարհին ԱԹՍ-ն հարվածել է քաղաքացիական ավտոմեքենայի, որի հետևանքով վիրավորվել են 5 քաղաքացիական անձինք, որոնցից երկուսը եղել են անչափահաս: Փաստահավաք խմբին հաջողվել է զրուցել դեպքի երեք ականատեսների և մեկ տուժողի հետ:

Վկաներից մեկը՝ Ջուլիետա Իշխանյանը, հիշում է.

> «2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ն էր: Դե՛, բնականաբար բոլորս քնած էինք, կիրակի օր էր: Կրակոցից վեր թռանք, տեսանք ահավոր վիճակ ա, զանգում էինք իրար, որ հասկանանք՝ ինչ ա պատահել: Երեխաներին հանեցի. դե՛, արդեն պարզ էր, որ հերթով մեր տան վրա էին գալու: Առաջին երկու արկն ընկավ մեր տան վերևի մասում՝ իմ տեգոր աղջկա՝ Պետրոսյան Անիի տան վրա: Մենք հենց 27-ին դուրս ենք եկել, հեռացել: Հենց սկզբից քաղաքը սկսեցին հրետակոծել, էլ սպասելու ժամանակ չկար: Ճանապարհին հրաշքով ենք փրկվել, որովհետև ամեն վայրկյան հնարավոր էր՝ արկը մեքենայի վրա ընկներ: Մենք 13 հոգի էինք՝ երկու եղբոր ընտանիք, սկեսուրս, սկեսրայրս»:[692]

Ջուլիետա Իշխանյանը տեղեկացրել է նաև, որ ԱԹՍ-ն հարվածել է իրենց առջևից ընթացող ավտոմեքենային.

> «Մեքենայի մեջ երեխաներից մեկը ծանր վիրավորվել էր. մի կերպ հանեցին այդ երեխային:

691 Հարցազրույց Հադրութի բնակիչ Իվանի հետ, 2 փետրվարի, 2021թ.:

692 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Ջուլիետայի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.:

> Մյուս մեքենայով հասցրին հիվանդանոց: Դա Դրմբոնի խաչմերուկն էր. մենք այդտեղ տեսանք, որ վիրավոր երեխային տեղավորեցին այլ մեքենայի մեջ: Մեր վերևով որ թռչում էր այդ անօդաչուն, մեզ թվում էր, թե էսա՝ ամեն վայրկյան, կխփի մեր մեքենային»:[693]

Սոնա Գրիգորյանը նույնպես ականատես է եղել Մարտակերտ-Դրմբոն ճանապարհին տեղի ունեցած վերոհիշյալ հարձակմանը: Հիշում է.

> «Հասանք Դրմբոն, ասացինք՝ կարող ա՝ Ապրիլյանի (2016թ.) նման ա, Դրմբոն կմնանք, մինչև վերջանա, հետո կվերադառնանք Մարտակերտ: Մի երկու ժամ կանգնեցինք Դրմբոնի խաչմերուկում, էն էլ քանի գնում, ուժեղանում էին կրակոցները: Տեսանք վիրավորներ բերեցին. մեկը մի 50-ին մոտ կին էր, արնաթաթախ: Ու էդ սաղ մեր աչքի առաջ, սարսափելի էր: Սա Ապրիլյան չէր. սա հատուկ նպատակադրված ցեղասպանություն կարծես լիներ մի անպաշտպան ազգի դեմ, ու ոչ մեկս չէր պատկերացնում, որ էսքան երկար կձգվեր, որ նման զենքեր կօգտագործեին: Չէինք պատկերացնում, որ ոչ մեկը չի կանգնի էս ժողովրդի կողքին»:[694]

Ականատեսների վկայությունը հաստատել է նաև դատախազությունը, որի տվյալների համաձայն՝ երկու անչափահաս երեխա՝ Ռոբերտ և Նարեկ Գևորգյանները, գտնվել են մեքենայում, վիրավորում են ստացել Մաղավուզ գյուղում՝ ընտանիքի անդամների հետ Մարտակերտից տեղափոխվելու ժամանակ:

Արմինե Աբրահամյանը, որ վիրավորում է ստացել հարձակման հետևանքով, պատմել է, որ սեպտեմբերի 27-ին, երբ իմացել է, որ պատերազմ է սկսվել, որոշել է մեքենայով մեկնել Վաղուհաս գյուղ՝ մտածելով, թե այնտեղ ավելի ապահով կարող է լինել: Մեքենայի մեջ եղել են ինքը, նրա երեխան, տեգրը, տեգոր կինն ու նրանց երեխան: Ճանապարհին արդեն ժամը 9-ից 10-ը ընկած ժամանակահատվածում, երբ Մաղավուզ գյուղից դեպի Դրմբոն ճանապարհին են եղել (Մաղավուզից մոտ 4կմ հեռու), Արմինեն լսել է անօդաչու թռչող սարքի ձայն և պայթյուն.

> «Ես հայացքով դեպի անտառի կողմն էի նայում, դրա համար ձախ թուշս ամբողջությամբ վնասվել էր կոտրված ապակու բեկորներից: Եթե ուղիղ նայեի, աչքս էլ կվնասվեր: ԱԹՍ-ն խփեց գետնին, հետո բեկորները թափանցեցին ներս մեքենայի ձախ կողմից: Բոլորս վիրավորվեցինք»:[695]

Արմինեն նստած է եղել մեքենայի անմիջապես դռան կողմում: «Մեր հետևից ուրիշ մեքենաներ էլ էին գալիս, ուղղակի մենակ մենք պերեվալը հասցրինք շրջվել, իրենք չէին հասել, ու էդ պահին խփեց մեզ»:

Արմինեն ասում է, որ ճանապարհի այդ հատվածում ռազմական կառույցներ չկային, զինվորական մեքենաներ չէին անցնում: Նրա կարծիքով՝ անօդաչուն օգտագործվել է ճանապարհը գտնելու և այն արգելափակելու նպատակով, քանի որ իրենց հետևից ավտոմեքենաների շարասյուն էր գալիս: Արմինեն փաստահավաք խմբին է տրամադրել այդ օրը վիրավորում ստացած բոլոր անձանց բժշկական փաստաթղթերը, որոնցով արձանագրվել է, որ քաղաքացիական անձինք ստացել են ականապայթյունային բնույթի վիրավորումներ:

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի մամուլի խոսնակ Գևորգ Դերձյանը դեպքի

693 Նույն տեղում:

694 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Սոնայի հետ, 5 դեկտեմբերի, 2020թ.:

695 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Արմինեի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

վերաբերյալ հայտնել է, որ Ռոբերտն ու նրա ընտանիքը ստիպված են եղել հեռանալ ադրբեջանական բանակի կողմից հրետակոծվող Մարտակերտից, սակայն ճանապարհին մեքենային ԱԹՍ է հարվածել: Ընտանիքի բոլոր անդամները ծանր վնասվածքներ են ստացել. ամենից շատ տուժել է Ռոբերտը. տղան 5 օր եղել է անգիտակից վիճակում:

Պատկեր 15.1. Մեքենան, որի մեջ է եղել Արմինեն, հարվածից հետո, 27 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Արմինե Աբրահամյան):

Ստացված փաստերի հիման վրա փաստահավաք խումբը եզրակացրել է, որ ուսումնասիրված բոլոր դեպքերում ադրբեջանական զինված ուժերն ուղիղ հարձակումներ են իրականացրել քաղաքացիական անձանց, բնակելի շենքերի և քաղաքացիական այլ կառույցների վրա, որոնք, ըստ սահմանված միջազգային նորմերի, պատերազմական իրադրությունների ժամանակ պետք է մնան անխոցելի: Ադրբեջանի զինված ուժերը, սակայն, խախտել են միջազգայնորեն հաստատված այդ սահմանումը, որի համաձայն՝ քաղաքացիական բնակչությունը և քաղաքացիական կառույցները չպետք է դառնան հարձակումների թիրախ:

Կողմնակի վնաս և քաղաքացիական անձանց սպառնացող վտանգներ

Փաստահավաք խումբը քննել է Ասկերանի շրջանի Այգեստան գյուղին հասցված կողմնակի վնասը, որը առաջացել էր ԱԹՍ-ի հարվածի հետևանքով գյուղից 1-ից 2 կմ հեռավորությամբ գտնվող զենքի պահեստի պայթյունից: Հարձակման և պայթյունների հետևանքով զգալի քանակությամբ զինամթերք է ընկել բնակելի տների այգիներում և մոտակա տարածքներում՝ սպառնալիք դառնալով քաղաքացիական բնակչության կյանքի և առողջության համար: Փաստահավաք խումբը ստացել է Այգեստան գյուղի մի բնակչի վկայությունն այն մասին, որ զենքի պահեստի ուղղությամբ արձակված հարվածի հետևանքով մոտակայքում գտնվող քաղաքացիական կառույցներն ամբողջությամբ կամ մասնակիորեն քանդվել են, վնասվել է նաև գյուղի դպրոցը: Փաստահավաք խումբն ուսումնասիրել է նաև Ադրբեջանի տարածած տեսանյութը, որտեղ երևում է՝ ինչպես է հարվածային դրոնի միջոցով իրականացվում հարձակումը զենքի պահետի ուղղությամբ: Ընդհանուր առմամբ հինգ հարված է հասցվել:[696]

«HALO Trust» միջազգային կազմակերպությունը, ի թիվս այլ վտանգների, որոնց այն բախվել է հետպատերազմյան Արցախում, մատնանշել է նաև ավիացիոն զենքի կիրառումը:

696 marin bodrug, “The Karabakh War. Azerbaijani Army Destroys New Ammunition Depot near Stepanakert / Hankəndi,” November 3, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=UK0UCMm7ink

Պայթյունների վտանգ է առաջացրել նաև դրոններից ցած նետված զինամթերքը:[697] Կազմակերպությունը հաստատել է, որ հոկտեմբերի 5-ին հարված է հասցվել Այգեստանում գտնվող զինամթերքի պահեստին, որը գտնվում է Ստեփանակերտից 13 կմ հեռավորության վրա: Հրետանային հազարավոր արկեր ցրվել են ավելի քան 2,5 կիլոմետր շառավղով: Կազմակերպությունը հունիսին նյութ հրապարակել է այն մասին, որ գյուղը գտնվում է ավերված վիճակում: «HALO»-ն ականազերծել է ավելի քան 19,000 միավոր պայթուցիկ և ռազմամթերք Այգեստանի շրջակայքում:[698]

Այգեստանի դպրոցի ուսուցչուհի Մարինա Սարգսյանը անկախ լրագրող Նաիրի Աբրահամյանին պատմել է.

> «Լսեցինք, թե ինչպես նախ անօդաչու թռչող սարքեր, հետո հրթիռներ պայթեցին: Մենք գիտեինք, որ պահեստն է թիրախավորվել: Իջանք նկուղ: Պայթյունները տևել են երկու ժամ տասնհինգ րոպե: Ձայնը խլացնում էր: Նկուղի դռներն ու պատուհանները պոկվեցին, դուրս թռան: Կարծում էինք՝ մեր վերջն է: Այգեստանի դպրոցը վնասվել է զինամթերքի պահեստի պայթյունից՝ գտնվելով ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Դպրոցի պատուհանները և պատերը մեծապես վնասվել են»:[699]

Արցախի Հանրապետության նախագահի գրասենյակի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Այգեստան գյուղում 3 անձ մնացել է առանց տուն:

Պատկեր 15.2-ում ներկայացված է գյուղի և ռազմական կառույցի միջև ընկած տարածությունը, որտեղ կառույցը նշված է կարմիր, իսկ գյուղը՝ կանաչ գույնով:

Ադրբեջանական զինված ուժերի հարձակումներին իրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է այդ միջադեպերի առնչությամբ կիրառել ՄՄԻ-ի հետևյալ սկզբունքները, որոնք ՄՄԻ-ի կոնվենցիոն և նորմային անկյունաքարերն են.

- «...հակամարտության կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը կոմբատանտներից, ինչպես նաև քաղաքացիական կառույցները ռազմականից և իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական կառույցների վրա»,[700]
- «քաղաքացիական կառույցները չպետք է դառնան հարձակման կամ պատասխան գործողությունների թիրախ»,[701]
- «քաղաքացիական բնակչությունը որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է դառնան հարձակումների թիրախ»,[702]

697 "Karabakh Update from HALO," The HALO Trust, հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 7-ին, https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/karabakh-update/; AP Archive, "Experts Inspect Unexploded Munitions," 28 November 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=b8VEQoDuk44

698 HALO NagornoKarabakh (@HALO_NK), «Ողբերգություն է տեղի ունեցել Այգեստան գյուղում, երբ հարված է հասցվել ռազմական զինամթերքի պահեստին: Այն պայթել է, և հազարավոր պայթուցիկ մասնիկներ ցրվել են ամենուր»,- թվիթերյան գրառում, 2021 թվականի հունիսի 25, https://twitter.com/HALO_NK/status/1408433413393195011

699 Nyree Abrahamian, "Danger Afoot: In Artsakh, the Threat of Unexploded Munitions Lingers Long after the War," Armenian General Benevolent Union, April 14, 2021, https://agbu.org/news-item/danger-afoot/

700 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության հոդված 48, տե՛ս J.M. Henckaerts and L. Doswald-Beck, "Customary International Humanitarian Law. Volume I: Rules" (Cambridge, ICRC/Cambridge University Press, 2005), Կանոններ 1 և 7 (այսուհետ՝ Կանոն):

701 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության հոդված 52, Կանոն 7:

702 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության հոդված 51(2):

- «հարձակումներն արգելվում են, եթե դրանք կարող են հանգեցնել քաղաքացիական բնակչության շրջանում մարդկային պատահական կորուստների կամ պատճառ դառնալ մարմնական վիրավորումների, քաղաքացիական կառույցների վնասման...»,[703]
- «պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր գործնական նախազգուշական միջոցները՝ քաղաքացիական անձանց շրջանում պատահական զոհերի կամ քաղաքացիական գույքին հասցվող վնասը կանխելու կամ գոնե նվազագույնի հասցնելու համար»:[704]

Փաստահավաք խումբն արձանագրել է, որ ուսումնասիրված դեպքերից ոչ մեկում ադրբեջանական զինված ուժերը չեն նախազգուշացրել իրենց հարձակման մասին:

Դեռ ավելին՝ թե՛ Ակնաղբյուր գյուղում, թե՛ Հադրութում ԱԹՍ-ները մահացու հարվածներ են հասցրել քաղաքացիական անձանց, վնասել ռազմական նշանակություն չունեցող քաղաքացիական կառույցներ այն դեպքում, երբ վերջիններիս ոչնչացումը կամ վնասումը Ադրբեջանին չէր կարող տալ որևէ էական կամ անմիջական ռազմական առավելություն: Փաստահավաք խումբը չի գտել հակառակը վկայող փաստեր և եզրակացրել է, որ, ելնելով առկա հավաստի վկայություններից ու փաստերից, ապացուցված է այն, որ ադրբեջանական զինված ուժերը չեն ունեցել հիմնավոր պատճառներ ենթադրելու, որ իրենց գործողությունների հետևանքով սպանված քաղաքացիական անձինք անմիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողություններին և կարող էին թիրախավորվել.[705] սա է հաստատում 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նորմային կանոնների միասնական ամբողջություն է:[706] Ավելին, հաշվի առնելով ԱԹՍ-ների ճշգրիտ նշանառման տեխնիկական հնարավորությունները, փաստահավաք խումբը, ուսումնասիրելով վերոնշյալ միջադեպերը, Հադրութի և Ակնաղբյուրի դեպքերի կապակցությամբ եզրակացրել է, որ քաղաքացիական անձանց և կառույցների վրա ադրբեջանական զինված ուժերի դիտավորությամբ կատարված հարձակումները պատերազմական հանցագործություն են,[707] քանի որ վերջիններս որևէ սպառնալիք չեն հանդիսացել ադրբեջանական զինված ուժերի համար և գտնվել են ՄՄԻ-ի ընդհանուր պաշտպանության ներքո:

Այգեստանի դեպքերի առնչությամբ փաստահավաք խումբը եզրակացրել է, որ թեև զինամթերքի պահեստն իրականում եղել է ռազմական թիրախ, սակայն, միևնույն է, ադրբեջանական բանակը պետք է գնահատեր հնարավոր այն հետևանքները, որոնք կարող էին բացասական ազդեցություն ունենալ քաղաքացիական բնակչության համար, ուստի՝ հարձակումից առաջ պետք է նախաձեռներ բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները և հետաձգեր կամ չեղարկեր հարձակումը, եթե ենթադրվում էր, որ այդ հարձակումը կհանգեցնի քաղաքացիական զոհերի, խաղաղ բնակիչների մարմնական վիրավորումների կամ քաղաքացիական կառույցների վնասման, որոնք չափից ավելի մեծ կլինեն՝ իրենց ռազմական ենթադրվող առավելության համեմատ: Փաստահավաք խումբը

703 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության հոդված 51(5)(b), Կանոն 14:

704 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 15. Հարձակման ժամանակ նախազգուշական միջոցների սկզբունքը» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 7-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule15

705 Տե՛ս 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրության հոդված 51(3)

706 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 8. Ռազմական նպատակների սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 7-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule8

707 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, «Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ», 92-9227-227-6 § (1998), հոդ. 6 (b) (i), (ii), https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html

Պատկեր 15.2. Գյուղի տեղանքի (կանաչ) համեմատությամբ ռազմական կառույցի (կարմիր) դիրքը ներկայացնող քարտեզ (Աղբյուրը՝ Google Maps):

չի կարողացել գնահատել, թե ինչ ռազմական առավելություն է ստացել Ադրբեջանը այդ հարձակումներից, և ինչ զինամթերք է եղել պահեստում հոկտեմբերի 5-ի դրությամբ, սակայն դրա վրա հարձակման բացասական հետևանքները կանխատեսելի են եղել հարձակվող կողմի համար, որը տվյալ դեպքում չի կիրառել նախազգուշացման որևէ միջոց:

Հաշվի առնելով, որ հարձակումը հանգեցրել է Այգեստան գյուղի համար տևական և լուրջ հետևանքների, փաստահավաք խումբը գտնում է, որ Ադրբեջանը դիտավորյալ է կատարել հարձակումը՝ խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի համաչափության սկզբունքի պահանջը:

Հրետանային եվ հրթիռային հարվածներ բնակելի տարածքների վրա

«Կիրակի օր էր, թշնամին նշանառության տակ էր առել սպայական շենքերը, ավտոբուսները, որ չկարողանանք դուրս գալ: Կրակն ու ձայները մեր ուղղությամբ գալիս էին Ադրբեջանի կողմից. այդտեղից հասկացանք, որ պատերազմ է, թշնամին հարձակվել է»:

Աննա Գալստյան՝ Մատաղիս գյուղից[708]

Զինվորական ընտանիքների բնակելի շենքեր

Արցախի վրա հարձակման առաջին օրվանից ադրբեջանական զինված ուժերը վնաս են հասցրել սպայական բնակելի շենքերին, որտեղ ապրում էին զինծառայողների ընտանիքները, ինչի հետևանքով վտանգի են ենթարկվել այդ պահին այդտեղ գտնվող քաղաքացիական անձինք՝ կանայք, երեխաներ և տարեցներ: Փաստահավաք խումբը տասներեք[709] վկայություն է հավաքել Մատաղիսի, Մարտակերտի, Ջրականի, Մարտունու, Ծահումյանի բնակիչներից, ովքեր սպայական շենքերում ապրող քաղաքացիական անձինք են եղել:

Օրինակ, Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում առաջին հարվածները հասցվել են սպայական շենքին, որը գտնվում էր գյուղի զորամասից 1-1,5 կմ հեռավորության վրա: Շենքում բնակվել են զինվորական ծառայողների ընտանիքները: Մատաղիսը գտնվում է Արցախի և Ադրբեջանի միջև՝ շփման գծին մոտ և հարձակման է ենթարկվել նաև 2016 թվականի պատերազմի ընթացքում: Գյուղում ապրել է շուրջ 225 ընտանիք՝ 710 բնակիչ: Սպայական շենքերում բնակվել են նաև կանայք և երեխաներ:

Հեղինե Ենգիբարյանը պատմում է. «էդ օրը [սեպտեմբերի 27-ին]՝ 710, 715», արդեն մտել էին թաքստոց: Իսկ Հեղինեի ամուսինը՝ Միսակ Ենգիբարյանը, հիշում է.

> «Ես կանգնած էի, երբ երկու սմերչով խփեցին. մեկն եկավ, ընկավ շենքի կողը, մյուսը՝ աֆիցերսկի շենքի գլխին: Հետո սկսեցին տանկով խփել հենց աֆիցերսկի շենքին: Հրետանին 5-7 րոպեն մեկ էր կրակում, էդ ընթացքում ասել եմ՝ պիտի հասցնենք գյուղից դուրս գալ»:[710]

Հեղինեն շարունակել է պատմել.

> «Մենք Մատաղիսի կենտրոնական ճանապարհով ենք եկել, հլը էդ ժամանակ բաց էր: 730 էր արդեն, որ դուրս եկանք: Մեզանից հետո արդեն խփել ա, մարդիկ չեն կարողացել էդ ճանապարհով դուրս գան: Հրետանի, բեզպիլոտնիկ... դրանցով են խփել: Ճանապարհին բեզպիլոտնիկներ կային, մեզնից մի 4 ավտո հետո գտնվող մեքենայի խփեցին: Մատաղիսից Դրմբոն հասնող ճանապարհին խփել էին մի մեքենայի, բայց չգիտենք՝ ովքեր էին, չէինք ճանաչում: Մենակ նրանց տեղափոխող վարորդին գիտեի. թալիշցի էր: Մեքենայի մեջ մի կին էր՝ լրիվ ասկոլկեքով վիրավորված, փորը ճղված, ձեռը տրաքած: Դրանից հետո մենք նստեցինք

708 Հարցազրույց Աննայի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

709 4 վկայություն՝ Մատաղիսի, 2-ը՝ Մարտակերտի, 4-ը՝ Ջրականի, 2-ը՝ Մարտունու, 1-ը՝ Ծահումյանի բնակիչներից:

710 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Հեղինեի հետ, 27 հունվարի, 2021թ.:

> մեքենան, ամեն մեկս մի կողմ գնաց: Թե հետո շտապօգնություն եկամ, չեկամ, չգիտենք: Եկանք Վարդենիսի ճանապարհով, ոստիկանները ասացին՝ էդ ճանապարհն արդեն քանդված է, չենք կարա՝ տեղով գնանք: Կլիներ մոտավոր ժամը 8-ի կողմերը: Մեզ Քելբաջարով են ճանապարհել: Եկել ենք Քելբաջար, ճանապարհները հարցնելով՝ հասել: Ոստիկանը մեզ ասաց՝ կենտրոնական ճանապարհով չգնանք, ասաց՝ սարերով փախեք, Քելբաջարի ճանապարհներին էլ են խփում արդեն: Սարերով եկանք, տեղ հասանք: Բայց ըտեղ արդեն չէին կրակում: Տենց եկանք Վարդենիս»:[711]

Սպայական շենքի մեկ այլ բնակիչ՝ Աննա Գալստյանը, պատմել է, որ առաջին հարվածը կպել է բնակարանի խոհանոցին սեպտեմբերի 27-ի առավոտյան, երբ տանը եղել են ինքը, ամուսինը և երկու անչափահաս երեխաները: Երբ կրակոցները դադարել են, Աննան երեխաների հետ դուրս է եկել շենքից՝ Հայաստան գալու նպատակով: Աննան պատմում է, որ անընդհատ անօդաչուներով խփում էին ճանապարհներին, որի հետևանքով իրենց մեքենան վնասվել է. «Հիշում եմ, որ ինչ-որ բան հարվածեց մեքենային, ու մենք շուռ եկանք: Հարվածը ճանապարհին էր՝ մեքենայի դիմաց: Ես ուշաթափվեցի: Երբ արթնացա, չէի զգում թևս. թվում էր պոկվել է»:[712] Աննան 35 շաբաթական հղի է եղել, երեխային ծննդաբերել է դեպքից անմիջապես հետո Ստեփանակերտի «Մոր ու մանկան» հիվանդանոցի ապաստարանում: Աննան նշում է, որ կրակն ու ձայները գալիս էին Ադրբեջանի կողմից. դրա համար հասկացել են, որ պատերազմ է, թշնամին հարձակվել է:

Սպայական շենքերի վրա հարձակումներին ականատես է եղել նաև Վեներա Աբելյանը: Նա պատմել է, որ հնարավոր չէր շենքի նկուղից դուրս գալ, քանի որ թե՛ շենքը, թե՛ նրա մոտակայքը շարունակաբար հրետանային հարվածի տակ էին, վնասվել էին նաև շենքի տարածքում կայանած մեքենաները: Վեներան նաև պատմել է, որ նույնիսկ ապաստարանում իրենց ապահով չեն զգացել, ապաստարանի փոքր լուսամուտների կողքով անցնելիս կռացել են, որպեսզի հանկարծ պայթյունների բեկորները չկպչեն իրենց: Վեներան պնդում է, որ առաջինը հարվածել են սպայական շենքերին՝ թիրախ դարձնելով դրանք. «Առաջին հարվածը կպավ շենքին: Մենք իջանք նկուղ: Տեսանք, որ մուտքի մոտ կայանած մեքենաներն ամբողջությամբ վնասվել են: Չէինք կարողանում նկուղից դուրս գալ»:[713]

ԱՀ դատախազությունից ստացված տեղեկատվությամբ հաստավել է, որ Աննա Գալստյանը վնասվածք ստացել է մեքենայի մեջ գտնվելու ժամանակ. մեքենան կողքի է ընկել, որի պատճառով ծննդկան կնոջը ձեռքը կոտրվել է, իսկ նրա երեխային հաջողվել է միայն կեսարյան հատումով փրկել ու աշխարհ բերել: Աննա Գալստյանի վիրավորման վերաբերյալ դեպքն արձանագրվել է նաև ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում: ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի մեկ այլ զեկույցում նշվել է, որ Մատաղիս գյուղը ենթարկվել է Ադրբեջանի զինված ուժերի հարձակմանը:

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է նաև Մարտունու և Եղեգնուտ գյուղերի վրա հարձակման մի շարք դեպքեր: Օրինակ, Մելսիկ Գևորգյանը պատմել է, որ սեպտեմբերի 27-ին ականատես է եղել, թե ինչպես է ավիրվել հարևանի տունը, երբ ինքը դուրս է եկել բնակելի շենքի ապաստարանից.

> «Մեկ էլ նկատեցի (ռումբը), բուռ՜ում. հարևանի տունը ցնդեց: Երկու հարկանի բնակելի շենք ա սպաների համար: Հարևան շենքը գտնվում է մեր բնակելի շենքի դիմաց: Ես ապրում եմ

711 Նույն տեղում:

712 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Աննայի հետ, 24 դեկտեմբերի, 2020թ.:

713 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Վեներայի հետ, 11 դեկտեմբերի, 2020թ.:

> Խաչատրյան 37 հասցեում, որը քաղաքի կենտրոնական թաղամասերից է, խիտ բնակեցված է և գտնվում է քաղաքապետարանի շենքից 200 մետր հեռավորության վրա: Մեր շենքի կրիշը շուշից ա, էդ սաղ ջարդվեց ու թափվեց: Այդ պահին զգացի հարվածային ալիքը, որը շպրտեց ինձ պատի տակ: Իմ կողմից հլա ալիքը էդքան ուժեղ չի եղել, մյուս կողմի վրա ա եղել: Որ ինձ պատով տվեց, մտածեցի՝ պրծել եմ: Բայց հելա, տեսա, ոտերս տեղն են, ամեն ինչը տեղն ա: Ծատ էի վախեցել, մենակ ասի, լավ ա՝ երեխեքիս հանել եմ»:[714]

Մելսիկը ասել է նաև, որ իրենց շենքը համարվել է սպայական, քանի որ այնտեղ հիմնականում բնակվել են սպաներն իրենց ընտանիքների հետ, բայց նաև նշել է, որ սպաների մեծ մասը ժամանակի ընթացքում սեփականաշնորհել և վաճառել էր իրենց բնակարանները: Ըստ Մելսիկի՝ տան թիրախավորումը ռազմական որևէ նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ թաղամասում բնակվում էին քաղաքացիական անձինք: Մելսիկին այժմ ապաքինման համար անհրաժեշտ է մշտական բժշկական խնամք ու հսկողություն, քանի որ այդ միջադեպի պատճառով վնասվել էր նրա աջ ձեռքը:

Միխայիլ Միրզոյանը՝ Ծահումյանի շրջանի Եղեգնուտ գյուղից, պատմել է, որ սեպտեմբերի 27-ին՝ ժամը 540-ին, Ադրբեջանը կրակել է զորամասերի վրա, հետո՝ ժամը 6-ին, գյուղի ուղղությամբ: «Ծառայողականների բնակելի շենքեր կային. դրանք էլ փլատակ սարքեցին: Ինչ եղել ա, մի կես ժամվա մեջ ա եղել. իրար հետևից կրակում էին ու թիրախավորած շենքեր էին խփում»: Չապլիում եղել են սպայական շենքեր, որտեղ ապրել են զինծառայողներն ու նրանց ընտանիքները: Միխայիլը պատմել է. «Մենք դեպի Կիրովաբադ մոտավորապես ութսունհինգ կմ հեռավորության վրա ենք գտնվում: Օդային ճանապարհով մի 15 կմ կլինի: Հենց Օմար սարի հետևից են արձակվել կրակոցները՝ Ադրբեջանի սահմանից»:[715]

Բոլոր վկայությունները հաստատում են, որ սպայական բնակելի շենքերը եղել են առաջին հարձակումների թիրախային շարքում, և հարձակում-կրակոցները լուրջ վնասներ են հասցրել թե՛ շենքերին, թե՛ մոտակայքում կայանած ավտոմեքենաներին և խոչընդոտել քաղաքացիական բնակչության՝ դեպի անվտանգ վայրեր տարհանմանը: Վկայություններում նշվում էր, որ հարձակումները սկսվել են ժամը 6-ից 7-ը:

Պարզելու համար՝ արդյոք Ադրբեջանը կատարել է սահմանված իրավունքի պահանջները, երբ հարվածներ է հասցրել այն շենքերին, որտեղ բնակվել են սպաների ընտանիքները, անհրաժեշտ է սահմանել քաղաքացիական բնակչություն և քաղաքացիական կառույց հասկացությունները ՄՄԻ-ի դիտանկյունից և պարզել՝ ինչ միջոցներ են գործադրվել քաղաքացիական բնակչությանը և կոմբատանտներին, ինչպես նաև քաղաքացիական կառույցները ռազմական թիրախներից տարբերակելու համար և ինչ միջոցներ են կիրառվել քաղաքացիական անձանց պաշտպանության ու մահվանից փրկելու կամ հնարավոր վնասվածքներից զերծ պահելու համար, ինչպես նաև քաղաքացիական կառույցները հարձակումներից պաշտպանելու նպատակով:

Ըստ սովորութային ՄՄԻ-ի՝ «ռազմական գործողությունների ընթացքում պետք է մշտապես հոգ տանել խաղաղ բնակչությանը և քաղաքացիական կառույցները հարձակումներից պաշտպանելու մասին»:[716] Այս պահանջն իրագործելու համար սովորութային ՄՄԻ-ին պարտավորեցնում է ձեռնարկել բոլոր նախազգուշական միջոցները՝ ռազմական կառույցների վրա հարձակումների ընթացքում կանխելու քաղաքացիական զոհեր ունենալու

714 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Մելսիկի հետ, 11 դեկտեմբերի, 2020թ.:

715 Հարցազրույց Ծահումյանի բնակիչ Միխայիլի հետ, 5 դեկտեմբերի, 2020թ.:

716 «Սովորութային ՄՄԻ- Կանոն 15. Հարձակման ժամանակ նախազգուշական միջոցների սկզբունքը»:

սպառնալիքը, ինչպես նաև արգելելու կամ նվազագույնի հասցնելու քաղաքացիական կառույցներին ու գույքին հասցված վնասները:[717]

Քաղաքացիական բնակչությունը կազմված է քաղաքացիներից, իսկ քաղաքացիական բնակչության մեջ քաղաքացիական անձին տված սահմանմանը չհամապատասխանող անհատի ներկայությունը ամենևին չի զրկում բնակչությանն իր քաղաքացիական բնույթից:[718] Պատերազմի պայմաններում անխուսափելի են այնպիսի վիճակները, երբ կոմբատանտների որոշակի խմբին պատկանող անձինք խառնվում են քաղաքացիական բնակչության հետ (օրինակ՝ արձակուրդում գտնվող և ընտանիքներին այցելող զինվորականներ): Սակայն հաշվի առնելով այն, որ նման զինվորների ներկայությունը ընտանքիներում չի ենթադրում ռազմական որևէ սպառնալիք կամ մեծաքանակ կանոնավոր ստորաբաժանման ձևավորում, ապա այն չի փոխում բնակչության՝ քաղաքացիական լինելու հանգամանքը: 1977 թվականի 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական կառույցները «ռազմական թիրախներ չեն»:[719] Ավելին՝ 1977 թվականի 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ինչ վերաբերում է կառույցներին, ապա դրանցից ռազմական են համարվում նրանք, որոնք իրենց բնույթով, տեղակայությամբ, նշանակությամբ կամ գործածությամբ արդյունավետ ներդրում կարող են ունենալ ռազմական գործողություններում և որոնց լիակատար կամ մասնակի ոչնչացումը, զավթումը կամ չեզոքացումը առկա հանգամանքներում կարող է ապահովել բացահայտ ռազմական առավելություն»:[720] Այսպիսով՝ չնայած զինված ուժերի անդամներն իրավաբանորեն համարվում են թիրախ, երբ նրանք կոմբատանտ են,[721] այսինքն՝ ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցելու իրավունք ունեցող անձինք, այնուամենայնիվ նրանց սովորական կենցաղային ներկայությունը տանը կամ ընտանիքում պատճառ չի կարող դառնալ նրանց բնակության տվյալ շենքը կամ ընդհանրապես քաղաքացիական բնակչությանը հարձակման իրավական թիրախ դարձնելու համար:

Փաստահավաք խումբը, ուսումնասիրելով առկա վկայությունները, գտնում է, որ սպայական շենքերի և մոտակա տարածքների ուղղությամբ իրականացված հարձակումները քաղաքացիական անձանց կյանքի և առողջության համար առաջացրել են լուրջ սպառնալիքներ և իրենց բնույթով եղել են չտարբերակված: Փաստահավաք խումբը չի կարողացել պարզել հարձակման պահին շենքերում գտնվող զինծառայողների թիվը, սակայն վկայություններից պարզ է դարձել, որ Արցախի պաշտպանության բանակի բազմաթիվ սպաներ և բարձրաստիճան զինվորականներ գտնվել են զորամասերում: Ականատեսների վկայությունների հիման վրա փաստահավաք խումբը կարող է եզրակացնել, որ բոլոր դեպքերում իրականացվել են հրթիռային հարվածներ: Ավելին, փաստահավաք խումբը պարզել է, որ ադրբեջանական զինված ուժերը որևէ ջանք ու միջոց

717 Տես Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով, գործ 11.137 (Արգենտինա), 1997 թ. նոյեմբերի 18-ի զեկույց, §177:

718 Դատախազն ընդդեմ Դարիո Կորդիչի, Մարիո Չերկեզի (Վերաքննիչ վճիռ), IT-95-14/2-A (Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալ, 17 դեկտեմբերի, 2004թ.):

719 «Սովորութային ՄՄԻ - 9-րդ կանոնին առնչվող պրակտիկա. Քաղաքացիական օբյեկտների սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 9-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/ v2_rul_rule9

720 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 8. Ռազմական նպատակների սահմանում»:

721 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 3. Կոմբատանտների սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 9-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule3

չեն գործադրել քաղաքացիական բնակչությանը կորուստներից զերծ պահելու ուղղությամբ, որի պատճառով վնաս է հասցվել քաղաքացիական կառույցներին, և գրանցվել են քաղաքացիական զոհեր: Փաստահավաք խումբը եզրակացնում է, որ բնակելի շենքերը, որտեղ ապրում էին սպաների ընտանիքները, չեն բավարարել ռազմական հարձակման համար որպես թիրախ որակվելու անհրաժեշտ չափորոշիչներին: Հակամարտող կողմերը պարտավոր են մշտապես տարբերակել քաղաքացիական անձանց և կոմբատանտներին: Հարձակումների թիրախ կարող են լինել բացառապես կոմբատանտները կամ ռազմական կառույցները: Ոչ տարբերակված հրետակոծությունը մարդասիրական իրավունքի լուրջ խախտում է:

Բժշկական հիմնարկներ

Փաստահավաք խումբը փաստագրել է Մարտակերտի քաղաքացիական հիվանդանոցին և զինվորական հոսպիտալին, Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնին, ծննդատանը և «Մոր և մանկան առողջության կենտրոնին» հասցված վնասները: Ադրբեջանական զինված ուժերը չեն նախազգուշացրել այս հաստատությունների վրա հարձակումներից առաջ: Փաստահավաք խմբին հայկական իշխանությունները հայտնել են, որ պատերազմի արդյունքում վնասվել են առնվազն 40 բուժհաստատություններ/հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, շտապ օգնության կայաններ:

Մարտակերտ

Փաստահավաք խումբը ստացել է փաստաբան Արայիկ Պապիկյանի վկայությունը, որը պատերազմից հետո այցելել է վնասներ կրած հաստատություններ: Փաստաբանը զրուցել է Մարտակերտի Ռ. Բազյանի անվան շրջանային բուժմիավորման բժիշկ վիրաբույժ Տիգրան Արզումանյանի հետ: Տիգրանը տեղեկացրել է, որ Մարտակերտի հիվանդանոցը թիրախավորվել է պատերազմի առաջին օրերից և պարբերաբար հրթիռակոծվել: Հիմնականում կիրառվել են համազարկային ռեակտիվ համակարգերի հրթիռներ: Հիվանդանոցի մասնաշենքերը, պոլիկնինիկան, օժանդակ շինությունները, բակը, տեխնիկական միջոցները կրել են զգալի վնասներ: Թեև պատերազմի սկզբից մի քանի օր հետո հիվանդներին և հիվանդանոցային սարքավորումները տեղափոխել են այլ վայր, քանի որ հնարավոր չի եղել ապահովել բուժմիավորման անվտանգ գործունեությունը, այդուհանդերձ հիվանդանոցի հրթիռակոծումները շարունակվել են: Հիվանդանոցի հարևանությամբ կամ մոտակայքում ռազմական նշանակության շինություններ կամ կառույցներ չկան: Հիվանդանոցի հարևանությամբ բնակելի շենքեր և շինություններ են, ինչպես նաև առևտրի և սպասարկման կետեր: Այդ տարածքները ևս բազմիցս հրթիռակոծվել են, և մի շարք բնակելի շենքեր լիովին փլուզվել են: Փաստահավաք աշխատանքների կատարման օրը դեռևս առկա էին հասցված վնասների և պայթած հրթիռների մնացորդները:

Մարտակերտի հիվանդանոցին հասցված ավերածությունները փաստագրել է նաև 2020թ.-ի նոյեմբերի 24-ին տարածք այցելած «Human Rights Watch» (HRW) կազմակերպությունը: HRW-ը հայտնել է, որ հիվանդանոցը և նրան կից պոլիկլինական զգալի վնասներ են կրել պայթյուններից և արձակված բեկորներից: Հիվանդանոցի բակում՝ հարվածների տեղերում, հայտնաբերվել են ռազմամթերքի, մասնավորապես «Գրադ»-ի և LAR-160 հրթիռների կասետային ռազմամթերքի մնացորդներ:[722]

722 Hugh Williamson, “Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh: New Research on

Իրենց բնույթով «Գրադ»-ի հրթիռները և կասետային ռումբերը չունեն թիրախավորման բարձր ճշգրտություն և ընդունակ չեն ռազմական թիրախները տարբերակել քաղաքացիականից: Դրանց կիրառումը բնակեցված տարածքներում խստորեն արգելվում է պատերազմի կանոններով, որոնց համաձայն՝ պատերազմող կողմերը պետք է միշտ հոգ տանեն քաղաքացիական բնակչության մասին՝ չպատճառելով անհարկի տառապանք և վնասներ:

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է նաև Մարտակերտի մոտ գտնվող զինվորական հոսպիտալի վրա հարձակման դեպքը: Խումբը վերլուծել է հարձակման օրը տեղի ունեցած դեպքերի լուսանկարները և թվային տեսագրությունները:[723] Բաց աղբյուրների տեղեկություններով՝ զինվորական հոսպիտալը վնասվել է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 1630-ին: Հարձակման պահին հոսպիտալն աշխատել է և այնտեղ բուժվել են հիվանդներ: Հարվածի հետևանքով տուժել են շատերը:

Բժիշկ Գևորգ Թադևոսյանը «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին պատմել է այդ օրվա դեպքերի մասին. «Երեկ էստեղ ենք եղել, ոնց որ միշտ. վիրահատություն կար, այդ պահին 3 վիրահատություն էր ընթանում, մեր բժիշկները վիրահատություն էին անում, այդ պահին անընդհատ էլի «սկոռիներով» վիրավորների էին բերում: Մեկ էլ սկսեիցին խփել: Օդային տագնապ տվեցին. 3 սամալյոտ էր, սկսեցին ռակետներով խփել, հետո բոմբեր թափեցին, դրանից հետո էլ կանտրոլնի շարիկովի բոմբեր թափեցին, որպեսզի դուրս եկող օգնողներին էլ վերացնեն»: [724]

Հարձակման նպատակով կիրառած զենքը նույնականացնելու խնդրանքով փաստահավք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին, որը բարձր վստահությամբ նշել է, որ Մարտակերտի զինվորական հոսպիտալին և հարակից տարածքներին հարվածել են երեք տեսակի զինատեսակներով՝ վնասելով շենքը: ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարել, որ այդ զինատեսակներից առնվազն մեկը եղել է «Երկիր-երկիր» տեսակի 160 մմ LAR-160 հրթիռ:

Զինատեսակի կառուցվածքի, արկի իրանի պատերի հաստության գնահատումը և մնացորդային հատվածի չափի համեմատությունը Պատկեր 15.3-ում արտացոլված ոտնաթաթի հետ հնարավորություն են տալիս մոտավորապես պնդելու, որ բեկորը «Երկիր-երկիր» տեսակի 160 մմ LAR-160-ի հրթիռի մաս է:

LAR-160-ը 45 կմ առավելագույն հեռահարություն ունեցող չկառավարվող հրթիռ է, որը կրում է 45 կգ մարտագլխիկ: Մարտագլխիկը լինում է բեկորաֆուգասային (HE-FRAG), կասետային և ունի հավելյալ ճշգրտություն:[725] ԲԱՏՀ մասնագետի գնահատմամբ՝ առկա փաստարկները բավարար չեն հոսպիտալի վրա հարձակման ժամանակ կիրառված զինատեսակի մարտագլխիկի տեսակը որոշելու համար:

Three Incidents from 2020 Conflict" (Human Rights Watch, February 26, 2021), https://www.hrw.org/news/2021/02/26/unlawful-attacks-medical-facilities-and-personnel-nagorno-karabakh.

723 Hugh Williamson, "Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh: New Research on Three Incidents from 2020 Conflict" (Human Rights Watch, February 26, 2021), https://www.hrw.org/news/2021/02/26/unlawful-attacks-medical-facilities-and-personnel-nagorno-karabakh.

724 Սուսան Բաղալյան, «Մարտակերտի բժշկի խոսքով՝ հոսպիտալը հատուկ է թիրախավորվել», Ազատություն ռադիոկայան, 15 հոկտեմբերի, 2020թ., Ղարաբաղյան խնդիր, https://www.azatutyun.am/a/30895175.html

725 Ove Dullum, "The Rocket Artillery Reference Book" (Norwegian Defence Research Establishment, June 30, 2010), https://www.ffi.no/en/publications-archive/the-rocket-artillery-reference-book.

Պատկեր 15.3. Մարտակերտի ռազմական հոսպիտալի մոտ հարվածից հետո հայտնաբերված և միակ փաստագրված բաղադրիչը, 14 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Human Rights Watch).

Հակամարտության համատեքստում LAR-160 հրթիռներ կիրառել է միայն Ադրբեջանը:[726] LAR-160-ի կառավարվող տարբերակը՝ AccuLAR-ն, ուղղորդվում է գլոբալ տեղակայման համակարգի միջոցով: LAR-160-ն արձակում է «Lynx» ՀԿՌՀ-ն, որը կարող է կրել մինչև 26 LAR-160 հրթիռներ: 2005 թվականին Ադրբեջանն Իսրայելից պատվիրել է 6 «Lynx» համակարգ, որոնք ստացել է 2006 թվականին:

Տեսագրություններում[727] երևում են երեք պայթյուններից առաջացած հետքերը՝ հոսպիտալի հիմնական մասնաշենքի մոտ: Պատկեր 15.4-ում ցուցադրված են հոսպիտալի տարածքում այդ զինատեսակի պայթյուններից առաջացած հետքերը: Հրթիռների պայթյունները, ինչպես երևում է, հրդեհ են առաջացրել հոսպիտալում, իսկ նրա հարևանությամբ կայանած մի քանի մեքենաներ լրիվ այրվել են: Մեքենաների մնացորդները երևում են 15.5 և 15.7 պատկերներում:

Հիմնական մասնաշենքում և հոսպիտալի հարակից տարածքներում կարելի է տեսնել պայթյունների բեկորներից և հարվածային ալիքի գերճնշման պատճառով առաջացած վնասներ: Պատկեր 15.6-ում երևում են հիմնական մասնաշենքի արտաքին մասի բեկորային ավերածությունները, իսկ ջարդված պատուհաններն ամենայն հավանականությամբ բեկորների և հարվածային ալիքի գերճնշման հետևանք են:

726 "The Military Balance 2020" (The International Institute for Strategic Studies (IISS), February 14, 2020), https://www.routledge.com/The-Military-Balance-2020/IISS/p/book/9780367466398.

727 Ստեփանյան (@ShStepanyan), «Որքան անմարդկային պետք է մարդ լինի, տիկին Մեհրիբան, որ հարվածի զինվորական հոսպիտալին և հետո պաշտոնապես հայտարարի նավթի և քսայուղերի խանութի ոչնչացման մասին»:

Պատկեր 15.4. Հարվածից տուժած մոտավոր հատվածները, 14 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Google Maps):

Պատկեր 15.5 Հիվանդանոցի մեքենաների կայանման տարածքին հասցված վնասը, 14 հոկտեմբերի, 2020թ.: Տարածքին ուղիղ հարված է հասցվել կոնկրետ զինատեսակով, ինչպես երևում է տեսագրության մեջ (Աղբյուրը՝ «Human Rights Watch»):

Պատկեր 15.6. Մարտակերտի զինվորական հոսպիտալի հիմնական մասնաշենքին հասցված վնասը, 14 հոկտեմբերի, 2020թ.: (Աղբյուրը՝ «Ազատություն ԹիՎի»):

Պատկեր 15.7. Մարտակերտի զինվորական հոսպիտալի մեքենաների վնասված կայանատեղին: Կարմիրով նշված է զինատեսակի կիրառումից տուժած տարածքը, 14 հոկտեմբերի, 2020թ.: (Աղբյուրը՝ «Ազատություն ԹիՎի»):

Ստեփանակերտ

Ստեփանակերտում հոկտեմբեր ամսին թիրախավորվել են հանրապետական բժշկական կենտրոնը և ծննդատունը, նոյեմբերին՝ մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնը:

Արայիկ Գրիշայի Պողոսյանը հիշում է. «Ստեփանակերտում հիվանդանոցի մոտ կանգնած էինք, երբ ինքնաթիռ մոտեցավ ու բոմբերը օդապարիկով թափվեց հիվանդանոցի վրա. մի կերպ փախանք»:[728]

Հենրիխ Ադամյանը Ստեփանակերտի հիվանդանոց է տեղափոխվել հոկտեմբերի 27-28 Ավետարանոց գյուղից՝ ունենալով բեկորային վնասվածքներ: Նա հիշում է. «Օդային հարված հասցվեց հիվանդանոցին, երբ ես այնտեղ էի: Սակայն մարդ չզոհվեց, որովհետև պատսպարվեցինք նկուղում: Այդ օրերին նաև հարվածի տակ էր ծննդատունը»:[729] Հարցվողի խոսքերով՝ ո՛չ հիվանդանոցում, ո՛չ էլ ծննդատանը ոչ մի զինվորական չի եղել:

Ռոզետան նույնպես նշում է, որ հոկտեմբերի վերջին ռմբակոծվել են հիվանդանոցը և ծննդատունը: Նա հստակ չգիտի՝ ինչ զենքեր են կիրառվել. «Ինչ-որ մեկն ասում էր՝ օդապարիկով 500 կիլոգրամանոց ռումբ էր, մյուսներն ասում էին «Սմերչ» էր, բայց մենք չենք տեսել, միայն սուլոցն ենք լսել. աներևակայելի սուլոց էր, որը հիմա էլ սարսափեցնում է ինձ, երբ հիշում եմ դրա ձայնը»: Երբ դուրս են եկել ապաստարանից, օգտագործված ու պայթած զինամթերքի հետքեր կամ մասեր չեն տեսել, քանի որ տարածքն ամբողջությամբ ծածկված էր ծխով, և տեսանելիությունը զրոյական էր:[730]

Վկայությունների միջոցով ստացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով ուսումնասիրվել են միջազգային և տեղական լրատվամիջոցների տեսանյութերը, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները և «Human Rights Watch»-ի հրապարակած զեկույցը: Տեղական և միջազգային լրատվականները հաղորդել են, որ հրետանային հարվածի հետևանքով վնասվել է Ստեփանակերտի ծննդատունը: Մի շարք աղբյուրներ հարձակման համար մեղադրել են Ադրբեջանին, թեև վերջինս ժխտել է հարձակման փաստը: «Human Rights Watch»-ը հայտնաբերել է «Սմերչ» տեսակի հրետանային արկի մնացորդ ծննդատան առաջին հարկում և եզրակացրել, որ բնակելի թաղամասում չկառավարվող հրետանային արկի կիրառումն իր տեսակով զինատեսակի չտարբերակված գործածում է:[731]

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է 4 տեսանյութ[732] և լուսանկարներ,[733] որոնք ակնհայտ

728 Հարցազրույց Հադրութի բնակիչ Արայիկի հետ, 18 հունվարի, 2021թ.:

729 Հարցազրույց Ասկերանի բնակիչ Հենրիխի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

730 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Ռոզետայի հետ, 16 դեկտեմբերի, 2020թ.:

731 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh," Human Rights Watch, December 11, 2020, https://www.hrw.org/news/2020/12/11/azerbaijan-unlawful-strikes-nagorno-karabakh

732 Karabakh Records (@KarabakhRecords), «Ստեփանակերտի կենտրոնական հանրապետական հիվանդանոցի ծննդատան և երեխաների խնամքի կենտրոնի վրա Ադրբեջանի իրականացրած հարձակման հետևանքները», թվիթերյան գրառում, 28 հոկտեմբերի, 2020թ., https://twitter.com/KarabakhRecords/status/13214841806014, Արտակ Բեգլարյան (@Artak_Beglaryan), «#Breaking! Իմ տեսաուղերձն ու պատմածս #Ադրբեջանի կողմից #Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնի, այդ թվում՝ ծննդատան և մանկական հիվանդանոցի վրա այսօրվա կանխամտածված հարվածի մասին», թվիթերյան գրառում, 28 հոկտեմբերի, 2020թ., https://twitter.com/Artak_Beglaryan/status/1321439215616430080, Associated Press, "Nagorno-Karabakh Hospital Hit by Shelling," October 29, 2020, https://www.youtube.com/watch?v=o8XivRzn1L8

733 Karabakh Records (@KarabakhRecordbot), "ВС Азербайджана бросили авиабомбу (добавлено: возможно ракета) на Республиканскую больницу в Степанакерте, прямо на здание роддома," October 28, 2020, Telegram video, https://t.me/KarabakhRecords/1276; "Azerbaijani Armed Forces Target Stepanakert Maternity Hospital," Massis Post, October 28, 2020, https://massispost.com/2020/10/azerbaijani-armed-forces-target-stepanakert-maternity-hospital/

Պատկեր 15.8. Ստեփանակերտի ծննդատան մոտ լուսանկարված «Երկիր-երկիր» 9M5-ի 300 մմ հրթիռի քթի հատվածը, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Инфотека 24»):

հաստատում են հիվանդանոցը և ծննդատունը թիրախավորելու փաստը: Հոկտեմբերի 28-ին Արցախի մարդու իրավունքների պաշտպանը հայտնեց, որ «Ադրբեջանական զինված ուժերը հոկտեմբերի 28-ին ավելի քան 15 անգամ հարվածել են Ստեփանակերտի և Շուշիի տարբեր հատվածների ուղղությամբ՝ դիտավորյալ թիրախավորելով մոր և մանկան առողջության կենտրոնը և բնակելի ու հանրային նշանակության որոշ կառույցներ»:[734] Իսկ Human «Rights Watch»-ի զեկույցում նշվել է, որ «հոկտեմբերի 28-ին ադրբեջանական «Սմերչ» հրետանային արկի հարվածի հետևանքով վնասվել է Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցի վերանորոգված ծննդատունը»:[735] Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը հայտնել է, որ «Սմերչ» կայանքից հրթիռ են արձակել Ստեփանակերտի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի ուղղությամբ:[736]

Հարձակման նպատակով կիրառված զենքի տեսակը որոշելու նպատակով փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետի, որը բարձր վստահությամբ նշել է, որ Ստեփանակերտի ծննդատանը և հարակից տարածքներին հարվածել են 9K58 «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌՀ) «Երկիր-երկիր» 300մմ տեսակի հրթիռով, որը շինությանը պատճառել է զգալի վնասներ: Իսկ հայտնի է, որ ադրբեջանական զինված ուժերի զինանոցում առկա են խոշոր տրամաչափի ՀԿՌՀ-ներ, այդ թվում՝ 9K58-ներ (30 միավոր 9K58 համակարգեր):[737]

734 «Ադրբեջանը հարվածել է Ստեփանակերտի ծննդատանը և բնակելի ու հանրային տարածքներին», - Արցախի մարդու իրավունքների պաշտպան, 28 հոկտեմբերի, 2020թ., https://artsakhombuds.am/hy/news/474

735 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh," Human Rights Watch, December 11, 2020, https://www.hrw.org/news/2020/12/11/azerbaijan-unlawful-strikes-nagorno-karabakh

736 «Ստեփանակերտի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի ուղղությամբ հրթիռ է արձակվել, հայտնում է ԱԻ ծառայությունը», Ազատություն ռադիոկայան, 3 նոյեմբերի, 2020թ., Լուրեր, https://www.azatutyun.am/a/30928460.html

737 «Ռազմական հավասարակշռություն 2020»:

Պատկեր 15.9. Ստեփանակերտի ծննդատան մոտ լուսանկարված «Երկիր-երկիր» 9M5-ի 300 մմ հրթիռի քթի հատվածը, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «AP Photo»):

Պատկերներում և տեղական ու միջազգային լրատվամիջոցների հրապարակած նյութերում երևում է Ստեփանակերտի հիվանդանոցի բակում ընկած խոշոր հրթիռի քթի հատվածը: Զինատեսակի բաղադրիչների մնացորդների լուսանկարները կարելի է տեսնել Պատկերներ 15.8-ում և 15.9-ում: Ըստ տեղական ու միջազգային լրատվամիջոցների՝ այս միջադեպը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 28-ին:

9K58 զինատեսակ արտադրում է ՌԴ Տուլա քաղաքում գտնվող ռուսական զենքի «Սպլավ» գիտաարտադրական միավորումը, որը մտնում է «Ռոստեխ» պետական կորպորացիայի կազմի մեջ:[738] Այն սովորաբար հավաքվում է ՄԱԶ-543 անվավոր թափքի վրա: Մեկ ամբողջական համազարկով 9K58 համակարգը կարող է 38 վայրկյանում արձակել տասներկու 300մմ արկ: Համակարգի կրակի առավելագույն հեռահարությունը 70 կմ է: «Սմերչն» ունի կրակի կառավարման բլոկ (ԿԿԲ), որն ընդգրկում է ուղղորդման, տեղազննման, հաշվարկման և արձակման խողովակների վիճակի մշտադիտարկման ենթահամակարգեր: Բացի այդ, 9K58-ը կարող է նաև կահավորված լինել «Ուսպեխ-Ռ»՝ նշանառման և կրակի ավտոմատացված կառավարման համակարգով, որն ունի ինքնակողմնորոշման հոլակային համակարգ, համակարգիչ, նավիգացիոն համակարգ (հիմնված է ԳԼՈՆԱՍՍ կամ ՆԱՎՍԹԱՐ համակարգերի վրա), նշանառման վահանակ և տվյալների փոխանցման մոդուլ:[739]

738 "300-Mm 'Smerch' Multiple Rocket Launcher System," Splav, July 8, 2006, https://web.archive.org/web/20060708221749/http://www.splav.org/en/arms/smerch/index.asp, այս զենքերը նախկինում արտադրում էր Խորհրդային միությունը:

739 Russia's Arms and Technologies. The XXI Century Encyclopedia. Vol. 2 - Rocket and Artillery Armament of Ground Forces, vol. 2 (Oruzhie i tekhnologii, 2001), https://ruslania.com/en/books/5847-russia-s-arms-and-technologies-the-xxi-century-encyclopedia-vol-2-rocket-and-artillery-armament-of-ground-forces/

Պատկեր 15.10. Ծննդատանը վնաս հասցրած պայթյունի մոտավոր տարածքը ցույց տվող արբանյակային պատկեր, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Google Earth):

Թեև տեղեկությունները բավարար չեն կիրառված 9M5-ի արկի տեսակը որոշելու համար, սակայն տեղանքին հասցված պայթյունի վնասը, որը երևում է Պատկեր 15.11-ում, համապատասխանում է միաբլոկ բեկորաֆուգասային մարտագլխիկի պայթյունից առաջացող հետևանքներին:[740] Ըստ առկա ապացույցների՝ հիվանդանոցի անմիջական տարածքից և հարևան շենքերի շրջակայքից զատ լրացուցիչ ավերածություններ չկան:[741] Տեսանելի վնասը ավելի շուտ համապատասխանում է խոշոր բեկորաֆուգասային մարտագլխիկի պայթյունից առաջացող հետևանքներին:[742] Շենքի բազմաթիվ վնասված պատուհանները և դեպի ներս փլուզված արտաքին պատերը հուշում են, որ շենքի դրսում պայթյունն առաջացրել է զգալի գերճնշում: ԲԱՏՀ մասնագետի գնահատմամբ՝ պայթյունը հավանաբար եղել է Պատկեր 15.10-ի շրջանակված հատվածում: Պատկերի վրա երևացող վնասների մեծ մասն առաջացել է հենց այդ հատվածում եղած պայթյունից:

Պատկեր 15.12-ում երևում է շենքի հյուսիսային մուտքը: Տեսանելի են հասցված զգալի վնասները և հարվածի հստակ ուղղությունը: Պատկեր 15.11-ում երևացող քանդված դիմապատը սեղմվել է դեպի ներս, որը հուշում է պայթյունի հարվածային ալիքի ուղղությունը: Բացի այդ, շենքի ներսում պայթյունի հետևանքով առաջացած շինաղբը և թափոնը, որոնք երևում են Պատկեր 15.14-ում, 15.12-ում և 15.15-ում, ավելի են հիմնավորում վերոհիշյալ գնահատականը:

740 Keneth Cross et al., "Explosive Weapons in Populated Areas: Technical Considerations Relevant to Their Use and Effects," Report (Armament Research Services, May 2016), https://www.icrc.org/en/document/explosive-weapons-populated-areas-use-effects

741 Ըստ AP-ի տեսանյութի՝ տեղանքից դուրս որևէ վնաս չի երևում. տե՛ս Associated Press, 2020թ.:

742 Cross et al., "Explosive Weapons in Populated Areas," 14–15; "Explosive Weapon Effects: Final Report" (The Geneva International Centre for Humanitarian Demining, February 2017), https://www.gichd.org/fileadmin/GICHD-resources/rec-documents/Explosive_weapon_effects_web.pdf

Պատկեր 15.11. Ստեփանակերտի ծննդատան ավերածությունները, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Massis Post»):

Պատկեր 15.12. Ստեփանակերտի ծննդատան ավերածությունները, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Massis Post»):

Պատկեր 15.13. Ստեփանակերտի ծննդատան ավերածությունները, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Տիգրան Մկրտչյանի թվիթերյան օգտահաշիվ (@TMkrtchyan)):

Պատկեր 15.14. Ստեփանակերտի ծննդատան ավերածությունները, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Panarmenian.net):

Պատկեր 15.15. Ստեփանակերտի ծննդատան ավերածությունները, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Инфотека24»):

Հադրութ

Փաստահավաք խումբը հաղորդումներ է ստացել նաև Հադրութի հիվանդանոցի վերաբերյալ: Գոհար Հովսեփյանը 2020թ.-ի սեպտեմբերի 27-ի առավոտյան գտնվել է Հադրութի հիվանդանոցում, երբ ժամը 0700-ի սահմաններում լսել է պայթյունների ձայներ: Հիվանդանոցում գտնվել է մինչև հոկտեմբերի 13-ը և իր հավաստմամբ՝ նշված ժամանակահատվածում Ադրբեջանը մշտապես անկանոն հրետակոծել է քաղաքը: Նշել է, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, օրվա բոլոր վիրահատություններն իրականացվում էին հիվանդանոցի նկուղային հարկում: Հարձակումների ակտիվության աճի պատճառով հոկտեմբերի 5-ից 7-ն ընկած ժամանակահատվածում հիվանդանոցը տեղափոխվել է Ազոխ գյուղի դպրոցի ապաստարան: Փաստահավաք խումբը զրուցել է նաև Վալենտինա Հարությունյանի հետ, որը ևս հաստատել է, որ ակտիվ կրակոցների պատճառով Հադրութի հիվանդանոցը հոկտեմբերի սկզբին տեղափոխվել է Ազոխի դպրոցի ապաստարան. «Հոկտեմբերի 2-ին տնօրենը խնդրեց ազատել ապաստարանը, քանի որ Հադրութի հիվանդանոցը տեղափոխելու էին դպրոցի ապաստարան»,- հիշում է Վալենտինան:

***

Հիվանդանոցները, բժշկական այլ հիմնարկները և բուժանձնակազմը չեն որակվում որպես հարձակման թիրախ: Ժնևի 1949 թվականի 1-ին կոնվենցիայի 19-րդ հոդվածը սահմանում է, որ «բժշկական ծառայության մշտական հիմնարկները և շարժական կազմավորումները որևէ հանգամանքում չեն կարող ենթարկվել հարձակման. նրանք մշտապես պետք է գտնվեն հակամարտող կողմերի հովանավորության և պաշտպանության տակ»:[743] Ժնևի 1949

743 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 12 օգոստոսի, 1949թ.), հոդ. 19, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380

թվականի 4-րդ կոնվենցիայի 18-րդ հոդվածը սահմանում է, որ «վիրավորներին, հիվանդներին, հաշմանդամներին և հղի կանանց օգնություն ցույց տալու համար կազմակերպված քաղաքացիական հիվանդանոցները ոչ մի պարագայում չեն կարող լինել հարձակման թիրախ. դրանք մշտապես պետք է գտնվեն հակամարտող կողմերի հովանավորության և պաշտպանության տակ»:[744] Միջազգային քրեական դատարանի ստատուտի համաձայն՝ պատերազմական հանցագործություն են համարվում դիտավորությամբ հարձակումները «հիվանդանոցների և հիվանդների ու վիրավորների կուտակված վայրերի (վրա), պայմանով, որ դրանք ռազմական թիրախներ չեն»:[745]

Բացառության կարգով և նախադեպային իրավունքի համաձայն՝ «հիվանդանոցը կարող է դառնալ ռազմական թիրախ, երբ այն օգտագործվում է մարդասիրական գործառույթի հետ կապ չունեցող թշնամական կամ ռազմական սպառնալիք ներկայացնող գործողությունների համար, սակայն հակամարտող կողմը պարտավոր է նախազգուշացում տալ հարձակումներից առաջ»: Բացի այդ, հարձակումը պետք է ուղղված լինի հաստատության ներսում կամ շրջակայքում գտնվող ռազմական կառույցների դեմ, հետևաբար կարող են կիրառվել միայն այդ նպատակի համար օբյեկտիվորեն անհրաժեշտ զենքեր:[746]

Հավաքված ապացույցները ցույց են տալիս, որ պատերազմի ամբողջ ընթացքում հիվանդանոցները սպասարկել են հիվանդ և վիրավոր քաղաքացիական անձանց և զինծառայողների, իսկ փաստահավաք խումբը չի ստացել որևէ տեղեկություն, ըստ որի վերը նշված զինվորական հոսպիտալը և քաղաքացիական հիվանդանոցներն օգտագործվել են ռազմական նպատակներով: Հարձակումները վտանգել են բուժանձնակազմի և հիվանդանոցների բուժառուների կյանքը: Հարձակումներից առաջ նախազգուշացում չի տրվել:

Նույնիսկ եթե թիրախավորված տարածքներում եղել են ռազմական կառույցներ, որպիսիք փաստահավաք խումբը չի կարողացել հայտնաբերել, Ադրբեջանի ռազմական գերագույն հրամանատարությունը, բուժհիմնարկների հարակից տարածքներում կիրառելով 9K58-շարքի «Սմերչ», «Գրադ» արկեր և կասետային զինամթերքով LAR-160 հրթիռներ, պետք է հաշվի առներ խաղաղ բնակչությանը հասցվող հնարավոր անուղղակի վնասը և հարվածների դեպքում ձեռնարկեր նախազգուշական միջոցներ: Փաստահավաք խումբը, ելնելով ստացված տվյալներից, եզրակացրել է, որ ադրբեջանական զինված ուժերը թիրախավորված և ոչ տարբերակված հարձակումներ են իրականացրել Արցախի բուժհիմնարկների վրա:

Արտակարգ իրավիճակների պետական ծառայություն

Փաստահավաք խումբն ապացույցներ է հավաքել առ այն, որ Ադրբեջանի ռազմական ուժերը հրթիռային հարվածներ են հասցրել Արցախի արտակարգ իրավիճակների քաղաքացիական ծառայության շենքին՝ խախտելով ՄՄԻ-ի պահանջները: Արցախի փրկարար ծառայությունն Արցախում գործող քաղաքացիական պաշտպանության կազմակերպություն է: Ծառայության պարտականություններն ընդգրկում են քաղաքացիական պաշտպանությունը, որոնողափրկարարական և արտակարգ այլ

744 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա), հոդ. 18

745 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ

746 Դատախազն ընդդեմ Ստանիսլավ Գալիչի (դատավճիռ), No. IT-98-29-A (Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ, նոյեմբերի 30, 2006թ.)

աշխատանքների իրականացումը: Փաստահավաք խումբը ուսումնասիրել է Azgonline TV-ի կողմից հրապարակված տեսանյութը,[747] որը պատկերում է Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայության շենքի ռազմական թիրախավորումը, լրագրող Միխայիլ Ակսելի հրապարակած տեսանյութերը,[748] ինչպես նաև արբանյակային պատկերներ:[749] Տեսանյութերում երևում է, որ հարվածը հասցվել է Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայության շենքի տարածքին, որից շենքը և մոտակայքում կայանված մեքենաները վնասվել են: Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնը հայտնել է, որ «Ադրբեջանի զինված ուժերի կողմից Ստեփանակերտը հրթիռակոծելու հետևանքով Արցախի փրկարար ծառայությունում 10 վիրավոր կա: Նրանցից ոչ մեկի կյանքին վտանգ չի սպառնում: Ստեփանակերտում փրկարար ծառայության շենքը մասնակի ավերվել է, փշրվել են ապակիներ, քանդվել են պատեր, կայանատեղիում վնասվել են մեքենաներ»:[750]

Հարձակման նպատակով կիրառված զենքերի տեսակը որոշելու նպատակով փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին, որը բարձր վստահությամբ նշել է, որ Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայության շենքի վնասներն առաջացել են մեկ կամ ավելի պայթուցիկ զինատեսակների հարվածներից: Առկա ապացույցներից երևում է, որ Ստեփանակերտում գտնվող գլխավոր մասնաշենքի շրջակա տարածքը և ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության վարչական շենքը պայթյունի հետևանքով կրել են զգալի վնասներ՝ կոտրվել են պատուհանները, տեղաշարժվել են շենքի արտաքին կառուցամասերը: Նմանօրինակ ավերածությունները համապատասխանում են բեկորաֆուգասային զինամթերքի պայթյունից առաջացրած հետևանքներին: Այլ ապացույցներում երևում են տարածքին մոտ կայանած մեքենաներին հասցված զգալի բեկորային վնասները: ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարել, որ հարձակման ընթացքում օգտագործվել է մեկ կամ ավելի բեկորաֆուգասային կամ բեկորային մարտագլխիկ: Պատկերներից երևում է նաև աջ ձեռքի վիրավորում ստացած առնվազն մեկ անձ: Հավանական է, որ նա վնասվածքը ստացել է առաջնային (զինամթերք) կամ երկրորդային (միջավայրային) բեկորի հարվածից: Պայթյուն(ներ)ից առաջացած բեկորային հարվածների այլ հետևանքները կարելի է տեսնել նաև Պատկերներ 15.17-ում և 15.18-ում, որոնք ներկայացնում են տարածքի՝ գլխավոր մասնաշենքին և մերձակա կառույցներին պատճառված վնասները: Առկա փաստերը բավարար չեն հարված կատարած զինատեսակ(ներ)ը հստակ որոշարկելու համար, որովհետև հիմնական մասնաշենքի ճակատային մասին պատճառվել է սոսկ մակերեսային վնաս, իսկ ներքին-կառուցվածքային վնասներ հասցվել են մասնավորապես առանձին տեղակայված հսկիչ անցակետին (Տես Պատկեր 15.16): ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարում, որ հարձակման ընթացքում կիրառվել է արկ կամ հրթիռ:

747 Արմեն Մանվելյան, «Ստեփանակերտի ԱԻՆ-ի Շենքը Ռմբակոծությունից հետո», 3-ը հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=lw9GhBosJco

748 @mihailaksel1993, "Эксклюзив" ВС Азербайджана обстреляла Степанакерт," October 2, 2020, Telegram video, https://t.me/mihailaksel/251

749 Արտակարգ իրավիճակների պետական ծառայության շենքի՝ 2020 թվականի սեպտեմբերի 14-ի և 2020 թվականի հոկտեմբերի 17-ի արբանյակային պատկերների համար տես հետևյալ հղումը՝ https://public.flourish.studio/visualisation/6762399/

750 Armenian unified infocenter/Հայկական միասնական տեղեկատվական կենտրոն, «Ադրբեջանի զինված ուժերի կողմից Ստեփանակերտը հրթիռակոծելու հետևանքով Արցախի փրկարար ծառայությունում 10 վիրավոր կա», ֆեյսբուքյան գրառում, 2 հոկտեմբերի, 2020թ., https://www.facebook.com/282013979301203/photos/a.2861925155501.798934974275765/

Պատկեր 15.16. Շինության ներքին կառուցվածքային փլուզում, որի հավանական պատճառը եղել է Արցախի փրկարար ծառայության գլխավոր մասնաշենքի հարևանությամբ գտնվող հսկիչ անցակետի վրա արձակված արկի պայթյունից առաջացած արտաքին գերճնշումը, 2020թ. (Աղբյուրը՝ «Ruptly»):

Պատկեր 15.17. Արցախի փրկարար ծառայության գլխավոր մասնաշենքի առջև բեկորներից և պայթյունի գերճնշումից վնասված մեքենաներ (Աղբյուրը՝ «Ruptly», 2020թ.)

Պատկեր 15.18. Արկի հարվածից գետնին առաջացած ծագար՝ Արցախի փրկարար ծառայության գլխավոր մասնաշենքից մոտ 38 մետր հեռավորության վրա, 2020թ. (Աղբյուրը՝ «Ruptly»):

Քաղաքացիական էլեկտրական ենթակառուցվածքներ

Ստեփանակերտ քաղաքի էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացնող «Արցախէներգո» ՓԲԸ կենտրոնական շենքը և էլեկտրակայանը պատերազմի ժամանակ շարունակաբար թիրախավորվել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից տարբերակում չդնող զինատեսակներով: Հարձակման հետևանքով քաղաքը տևական ժամանակ հոսանքազրկվել է, վնասվել են մի շարք քաղաքացիական ենթակառուցվածքներ և բնակելի տներ:

Արտիկ Պետրոսյանը բնակվում է Ադմիրալ Իսակով 2բ հասցում, որը Ստեփանակերտի էլեկտրակայանից գտնվում է 20 մետր հեռավորության վրա, իսկ №10 դպրոցից՝ մոտ 100-130 մետր հեռավորության վրա: Արտիկը փաստահավաք խմբին հայտնել է, որ կնոջ առողջական խնդիրների պատճառով պատերազմի առաջին օրերին մշտապես գտնվել են տանը: Նա նաև նշել է, որ հոկտեմբերի 4-ին իրենց շենքի մոտ արկ է ընկել, և տան լուսամուտների ապակիները փշրվել են, որից հետո տեղափոխվել են ապաստարան: Արտիկը ասել է, որ իրենց տան մոտ որևէ ռազմական կառույց չի եղել, արձակված արկն ընկել է իրենց հարևանությամբ գտնվող դպրոցի բակում, և ռմբակոծությունների նպատակը ամենայն հավանականությամբ եղել է էլեկտրակայանին հարվածելը:

«Human Rights Watch»-ը փաստագրել է, որ հոկտեմբերի 2-ից լույս 3-ի գիշերը LAR-160 դասի կասետային հրթիռներով ադրբեջանական ուժերը հրետակոծել են «Արցախէներգո» ՓԲԸ-ի տարածքն ու և էլեկտրակայանը: «Human Rights Watch»-ը դիտարկել է կառավարման գլխավոր շենքից մոտ 100 մետր հեռավորության վրա հայտնաբերված հրթիռի մնացորդները, բացահայտել M095 զինամթերքի համար բնութագրական բազմաթիվ հատվածներ, որոնք հիմնականում ընկած են եղել շենքին և էլեկտրակայանին հարող փողոցի երկայնքով:[751]

ՀՀ արտաքին գործերի նախարարությունն օրվա լրահոսով հրապարակել է, որ հոկտեմբերի 3-ին՝ ժամը 2245 դրությամբ, վնասվել է «Արցախէներգո»-ի կառավարման կենտրոնի շենքը, և քաղաքը հոսանքազրկվել է:[752]

Հոկտեմբերի 4-ին Ադրբեջանը կրկին հրետակոծել է «Արցախէներգո» ՓԲԸ-ի վարչական շենքն ու էլեկտրակայանը, որի պատճառով քաղաքը հոսանքազրկվել է: Human Right Watch-ը փաստում է, որ «հոկտեմբերի 4-ին՝ կեսօրին մոտ, ադրբեջանական ուժերը հարվածեցին ինչպես կառավարման գլխավոր կենտրոնի շենքին, այնպես էլ էլեկտրակայանին՝ վնասելով երկուսն էլ»:

Առաջին հարվածը հասցվել է գլխավոր շենքին՝ շարքից հանելով կառավարման կենտրոնը, առաջացնելով ծառայության աշխատանքի ընդհատումներ, և դարձել քաղաքացիական երկու աշխատակիցների մահվան պատճառ, որոնցից մեկը եղել է հսկիչ և բաշխիչ բաժնի ղեկավարը: Մեկ այլ հարձակում, որը տեղի է ունեցել առաջինից քիչ հետո՝ ժամը 1300-ի սահմաններում, եղել է տարածքին հասցված մոտ տասնյակ հարվածներից մեկը, որը վնասել է էլեկտրակայանը:

751 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh."

752 «Ադրբեջանի ռազմական ագրեսիան. զարգացումների ժամանակագրություն 03.10.2020», ՀՀ ԱԳՆ, 3 հոկտեմբերի, 2020թ., https://www.mfa.am/am/awaa_chr/2020/10/03/w_nk_2020/10556

Արցախում գտնվելու ընթացքում փաստահավաք խումբը եղել է «Արցախէներգո» վարչական շենքի մոտ գտվող փողոցում և լուսանկարել հետևանքները (լուսանկարները հասանելի են):[753] Խումբը ուսումնասիրել է նաև հոկտեմբերի 4-ին «Комсомольская правда»-ի լրագրող Ալեքսանդր Կոցի նկարահանած էլեկտրակայանի և դրան կից բնակելի թաղամասի տների և մեքենաների՝ պայթյուններից առաջացած վնասները,[754] ինչպես նաև Պատրիկ Լանկաստեր անկախ լրագրողի՝[755] հոկտեմբերի 8-ին և EVN report-ի լրագրող Ռուբինա Մարկոսյանի՝[756] հոկտեմբերի 12-ին արված դեպքի վերաբերյալ տեսանյութերը: Տեսանյութերում երևում է, որ բացի հիշյալ ենթակառուցվածքից, վնասվել են նաև մոտակայքում գտնվող բնակելի թաղամասի տները, մեքենաները, խանութները և այլ քաղաքացիական շինություններ: Հոկտեմբերի 4-ին Ստեփանակերտի ուղղությամբ իրականացված հարձակումները «լայվ» տարբերակով նկարահանել են Արցախի հանրային հեռուստատեսությունը,[757] հայկական միասնական տեղեկատվական կետրոնը[758] և «Բարս Մեդիան»:[759] Տեսանյութերում երևում է, որ հարվածներն առանց տարբերակման հասցվել են խիտ բնակեցված տարածքներին:

Ավելին, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ հոկտեմբերի 18-ին հրապարկած զեկույցում նշվում է, որ Ադրբեջանի զինված ուժերը, բացի Ստեփանակերտի էլեկտրակայանը թիրախավորելուց, վնասել են նաև այլ քաղաքաներում և գյուղերում գտնվող էլեկտրակայաններ և մեծաթիվ էլեկտրական ցանցեր: Հետևանքը եղել է այն, որ ոչնչացվել կամ լուրջ վնաս են կրել 10-ից ավելի կայան: Ադրբեջանը դիտավորյալ հարվածներ է հասցրել նաև երկրի խորքում գտնվող մի քանի հիդրոէլեկտրակայանների՝ նպատակ ունենալով ոչնչացնել Արցախի էլեկտրաէներգիայի արտադրական կարողությունները:[760]

Ելնելով փաստահավաք խմբի հավաքած փաստերից՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի զինված ուժերը հարվածներ են հասցրել ոչ տարբերակված զենքով (LAR-160 շարքի կասետային ռումբ)՝ առանց տարբերազատման վնասելով քաղաքացիական ենթակառուցվածքներ: Հարվածները զգալի վնասներ են պատճառել մասնավորապես Ստեփանակերտի էլեկտրակայանին՝ շարքից հանելով այն: Համոզվելու համար, որ հարձակումը եղել է ոչ իրավաչափ, պետք է դիտարկել ռազմական նպատակներով էլեկտրակայանի շահագործման հարցը՝ նկատի առնելով ռազմական կառույցների իրավաբանական սահմանումը:

753 «Արցախէներգո»-ի վարչական շենքի լուսանկարները՝ 2020 թվականի հոկտեմբերի 4-ի հարվածից հետո՝ https://mega.nz/folder/m0VBGRAS#to0dpqNIbPgZFd3r3EP-qw

754 Александр Коц, “Степанакерт обесточен в результате массированного удара,” Комсомольская правда, October 4, 2020, sec. В мире, https://www.kp.ru/daily/217190.5/4298202/

755 Patrick Lancaster, “Results of Shelling in The Armenia Azerbaijan War,” October 8, 2020, https://www.youtube.com/watch?v=pSH6UyUcpHs

756 EVN Report, “Stepanakert: October 12,” October 13, YouTube video, https://www.youtube.com/watch?v=YYYkxGD2lgw

757 Արցախի հանրային հեռուստատեսություն, «Ստեփանակերտի Ռմբակոծության Եզակի Կադրեր Степанакерт Обстреливают Из Запрещенного Оружия», 4 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=tM5KnYmcI-A

758 Armenian Unified Infocenter (@ArmenianUnified), «Ստեփանակերտ, 04.10.2020 #StopAzerbaijaniAggression», թվիթերյան գրառում, հոկտեմբերի 4, 2020թ., https://twitter.com/ArmenianUnified/status/1312744283288547328

759 Bars Media, «Ստեփանակերտի Խաղաղ Բնակչության Հրետակոծությունը/ Azerbaycan Forces Bombing Civilians in Stepanakert», 5 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=VIbjJqAliZE

760 «2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի բնակչության դեմ ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակությունը», միջանկյալ զեկույց (Ստեփանակերտ. Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 18 հոկտեմբերի, 2020թ.), https://artsakhombuds. .am/hy/document/735

Ռազմական կառույցների վերաբերյալ սահմանումը տրված է 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածում, որն ընդունվել է որպես սահմանված իրավունքի մաս: 1977 թվականի 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

> «Հարձակումները խստորեն սահմանափակվում են բացառապես ռազմական նշանակության կառույցներով: Ռազմական են համարվում այն կառույցները, որոնք իրենց բնույթով, տեղադրությամբ, նշանակությամբ կամ գործածությամբ կարող են արդյունավետ ներդրում ունենալ հակառակորդների ռազմական գործողություններում, և որոնց լիակատար կամ մասնակի ոչնչացումը, գրավումը կամ չեզոքացումը տվյալ պահին և առկա հանգամանքներում տալիս է բացահայտ ռազմական առավելություն»:[761]

Այսպիսով, սահմանումն ունի երկու բաղադրիչ. «արդյունավետ ներդրում ռազմական գործողություններում» և «հստակ ռազմական առավելություն». ուրեմն՝ կառույցը որպես իրավական ռազմական թիրախ ճանաչելու համար անհրաժեշտ է սահմանման երկու բաղադրիչների առկայությունը:

1956 թվականի՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կազմած ռազմական կառույցների դասակարգման ցուցակի համաձայն՝ հիմնականում պետական պաշտպանության նպատակով էլեկտրաէներգիա մատակարարող կառույցները (օրինակ՝ ածուխ, այլ վառելիք կամ ատոմային էներգիա) և առավելապես ռազմական նպատակների իրականացման համար գազ կամ էլեկտրաէներգիա արտադրող կայանները համարվում են ընդհանուր ռազմական նշանակության կառույցներ: Բացի այդ, ՄՄԻ-ին քաղաքացիական է սահմանում այն կառույցները, որոնք իրենց «երկակի նշանակությամբ» կարող են թիրախ դառնալ զինված հակամարտությունների ժամանակ: Էլեկտրակայանը կարող է համարվել երկակի նշանակության կառույց: Այն կարող է օգտագործվել ինչպես քաղաքացիական բնակչության կենցաղային կարիքները հոգալու, այնպես էլ ռազմական նպատակների համար, օրինակ՝ էլեկտրաէներգիա մատակարարել ռազմական արդյունաբերությանը: Սակայն եթե անգամ կառույցը, քաղաքացիական բնակչության կենցաղային պահանջները սպասարկելուց զատ, ստանում է նաև ռազմական նշանակություն՝ առնելով երկակի նշանակություն, այնուամենայնիվ նրա վրա հարձակումը կարող է անօրինական համարվել, եթե այդ հարձակումը կարող է վնաս պատճառել խաղաղ բնակչությանը: Նման իրավիճակներում հարկ է, որ մի կողմից հաշվի առնվեն հարձակման ժամը և վայրը, ակնկալվող ռազմական առավելությունը, իսկ մյուս կողմից՝ քաղաքացիական բնակչության հնարավոր կորուստները և քաղաքացիական կառույցներին հասցվելիք վնասի չափը:[762]

Չկան ապացույցներ, անգամ ադրբեջանական կողմից պնդումներ առ այն, որ ԱՀ-ի՝ թիրախավորած էներգետիկ ենթակառուցվածքները հարձակման պահին արդյունավետ կերպով նպաստել են Արցախի պաշտպանության բանակի ռազմական գործողություններին: Հավաքած փաստերը վկայում են, որ էլեկտրակայանի վնասումը քաղաքացիական բնակչության համար ամբողջ պատերազմի ընթացքում ստեղծել է լուրջ խնդիրներ՝ զրկելով հոսանքի և գազի մատակարարումից, և միայն նոյեմբերի վերջին է մատակարարումը վերականգնվել, այն էլ 95-97 տոկոսով և պարբերական անջատումներով: Ստեփանակերտի էլեկտրակայանից էներգիա մատակարարվել է նաև այլ շրջանների բնակավայրեր: 2020

761 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացնող արձանագրություն, հոդված 52

762 Claude Pilloud et al., Commentary on the Additional Protocols of 8 June 1977 to the Geneva Conventions of 12 August 1949 (Geneva; Norwell, MA, USA: International Committee of the Red Cross: Martinus Nijhoff Publishers; Distributors for the United States and Canada, Kluwer Academic Publishers, 1987).

Պատկեր 15.19. «Արցախէներգո»-ի՝ հարձակումից հետո զգալի վնասներ կրած վարչական շենքը Ստեփանակերտում, 4 հոկտեմբերի, 2020թ.: Շենքի կառուցվածքային փլուզումը բնորոշ է մեկ կամ ավելի պայթյուններից վնասված շենքերին (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

թվականի դեկտեմբերի 8-ին Արցախի հանրային հեռուստատեսության լուրերի ծրագրին «Արցախէներգո» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղեկալ Տիգրան Գաբրիելյանը հայտնել է, որ երկու համայնքում դեռևս առկա է էլեկտրաէներգիայի մատակարարման խնդիր, և անհրաժեշտ է կառուցել էլեկտրահաղորդման նոր գիծ: Մարտունու շրջանում էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է սահմանափակումներով: Իսկ Արցախի Հանրապետության նախագահի գրասենյակից հայտնել են, որ Արցախի էներգահամակարգի առաջնահերթ ծրագրերը (վնասված ենթակառուցվածքների վերականգնումը) ֆինանսավորելու համար անհրաժեշտ է 11,470,426.000 դրամ: Բացի այդ, անգամ այն պարագայում, երբ էներգետիկ ենթակառուցվածքները համարվում են ռազմական կառույցներ, միևնույն է, Ադրբեջանը խախտել է ՄՄԻ-ի՝ պատերազմի վարման մեթոդների և միջոցների ընտրության պահանջը՝ խիտ բնակեցված թաղամասերում կիրառելով ոչ տարբերակված զենք՝ LAR-160 դասի կասետային հրթիռ:

Ելնելով փաստահավաք խմբին հասանելի տեղեկատվությունից՝ կարելի է եզրակացնել, որ էներգետիկ ենթակառուցվածքների, մասնավորապես՝ Ստեփանակերտում գտնվող կառույցների վրա հարձակումը համարվում է չտարբերակված հարձակում, որով լրջորեն խախտվել է սովորութային միջազգային մարդասիրական իրավունքը, որը պահանջում է հարձակումները խստորեն սահմանափակել միայն ռազմական նպատակներով: Նման հարձակումները համարվում են պատերազմական հանցագործություն, քանի որ Միջազգային քրեական դատարանի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի b կետի iv ենթակետի համաձայն՝ իրականացվում են դիտավորությամբ՝ գիտակցելով, որ նման հարձակումը կարող է հանգեցնել քաղաքացիական բնակչության շրջանում պատահական կորուստների կամ վիրավորումների, քաղաքացիական կառույցների վնասման:

Ճանապարհներ եվ կամուրջներ

Ադրբեջանն իրականացրել է մի շարք հարձակումներ Արցախի կարևորագույն քաղաքացիական ենթակառուցվածքների, ներառյալ՝ Բերձորի հիմնական կամուրջը և գյուղերն ու քաղաքները կապող կարևոր ճանապարհների վրա: Հոկտեմբերի 1-ի դրությամբ գյուղերն ու քաղաքները կապող հիմնական ճանապարհները և կամուրջները, դրանց մոտ գտնվող էլեկտրակայանները և բնակելի շենքերը եղել են մշտական վտանգի տակ:

Բերձոր և Աղավնո

Ըստ հաքագրված տվյալների և ԶԼՄ-ների նյութերի՝ Ադրբեջանը հոկտեմբերի 2-ին հրթիռակոծել է Բերձորի կամուրջը, իսկ հոկտեմբերի 17-ին՝ Աղավնոյի անցակետի կամուրջը: Ադրբեջանի հարձակումների օրինականությունը գնահատելու նպատակով փաստահավաք խումբը զրուցել է ականատեսների հետ, ուսումնասիրել լրատվամիջոցներում հրապարակված լուսանկարները և տեսանյութերը, հետազոտել արբանյակային պատկերները:

Բերձորը Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոնն է: Քաղաքն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ ծառայում է որպես Հայաստանը Արցախին կապող «միջանցք»: Բերձոր-Գորիս մայրուղու՝ Հակարի գետի վրա կառուցված կամուրջն առանցքային նշանակություն ունի այդ միջանցքի համար: Այս ճանապարհը ծառայել է թե՛ ժամանակավոր բնակության համար Հայաստան տեղափոխվող Արցախի քաղաքացիներին, թե՛ Հայաստանից արցախցիներին մարդասիրական օգնություն հասցնելու համար: Այս տարածաշրջանում ճանապարհներին և հարակից ենթակառուցվածքներին հասցված որևէ զգալի վնաս լրջորեն խաթարում է միջանցքում գտնվող կամ դրա միջոցով սպասարկվող բնակավայրերի բնականոն կյանքը: Բացի այդ, Քաշաթաղի շրջանի Աղավնո համայնքի կամուրջը գտնվում է Արցախի և Հայաստանի սահմանին՝ Աղավնոյի անցակետի մոտ: Աղավնոյի անցակետից Բերձորի կամուրջ 6,7 կիլոմետր է:

Ականատեսների վկայությունների համաձայն՝ կամուրջների և ճանապարհների մոտակայքում Ադրբեջանի զինված ուժերի կողմից հրետակոծվելու պահին ռազմական կառույցներ չեն եղել:

- Մարետա Լալաբեկյանը բնակվել է Ներքին Սուս գյուղում: Երբ լսել է գնդակոծության ձայներ, երեխաների հետ գնացել է ամուսնու եղբոր տուն՝ Վերին Սուս: Նա պատմել է փաստահավաք խմբին. «Տունը դղրդում էր, ոնց որ շարժվեր, իսկ ամուսնուս եղբոր տունը մեկ հարկանի էր ու համեմատաբար ապահով»:[763] Ներքին Սուս համայնքը ի թիվս այլ բնակավայրերի սահմանակից է Աղավնո և Բերձոր համայնքներին: Ներքին Սուս համայնքից փաստահավաք խումբը հավաքագրել է վեց վկայություն, որից երկուսը հաստատում են, որ կամուրջը թիրախավորվել է մի քանի անգամ: Քարտեզների և ականատեսների վկայությունների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Ներքին Սուս գյուղի բնակիչները կամուրջի մասին խոսելիս նկատի ունեն հենց Բերձորի կամուրջը: Հոկտեմբերի 3-ին հերթական անգամ ամուսնու եղբոր տուն գնալու ճանապարհին Մարետան տեսել է, թե ինչպես է հարված հասցվել կամրջին: Նա պատմում է. «Կամրջով անցնելուց 1 րոպե հետո այն պայթեցրին.

763 Հարցազրույց Քաշաթաղի շրջանի բնակիչ Մարետայի հետ, 20 դեկտեմբերի, 2020թ.:

պայթյունից առաջացած ուժգին ալիքը հրաբուխի նման ծուխ ու փոշի առաջացրեց: Մի կերպ ենք մահից պրծել: Անընդհատ ճանապարհներին խփում էին, տեսնում էինք, որ անօդաչուները նկարում են ու հետո էլ խփում»: Մարետայի կրտսեր որդին չի էլ ցանկացել Լաչինով անցնելու մասին մտածել. նա անմիջապես ծնողներին ասել է, որ այնտեղ վտանգավոր է:

- Բերձորի կամրջի մոտակայքում ապրող Բերձորի բնակիչ Ծողիկ Քոչարյանը շեշտել է, որ «քաղաքում ռազմական որևէ կառույց չի եղել, և քաղաքը հիմնականում ռմբակոծում էին կամուրջը վնասելու համար, որպեսզի ելքն ու մուտքը փակեն»:[764]

- Սաթենիկ Գրիգորյանը Բերձորում է գտնվել մինչև հոկտեմբերի 22-ը և այդ ընթացքում բազմաթիվ անօդաչու թռչող սարքեր է տեսել, լսել ռմբակոծությունների ձայներ ու թեև անձամբ ռմբակոծությունների ականատես չի եղել, սակայն տեսել է երկու կամուրջների (Աղավնոյի ու Բերձորի) ռմբակոծությունների հետևանքները: Կարծիք է հայտնել, որ բնակելի վայրերի ռմբակոծությունների նպատակը եղել է խաղաղ բնակչությանը վերացնելը:

- Կարինե Մատինյանը նշել է, որ հոկտեմբերին ռմբակոծել են Աղավնոն, մասնավորապես այնտեղ գտվող հիդրոկայանն ու կամուրջը: Ռմբակոծությունների հետևանքները իրենք տեսել են, երբ հոկտեմբերի 22-ին այդ ճանապարհով ուղևորվել են Հայաստան:

Ճանապարհային ցանցերի վնասումները արձանագրվել են նաև ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի զեկույցում, որտեղ ի թիվս այլ հարցերի նշվել է, որ.

> «Ադրբեջանի զինված ուժերը համակարգված և կանխամտածված կերպով թիրախավորել են նաև ճանապարհային ցանցն ամբողջ երկրի տարածքում, ներառյալ՝ միջպետականները: Ճանապարհների և մայրուղիների տարբեր հատվածներին հարվածելուց բացի՝ Ադրբեջանը թիրախավորել է որոշ առանցքային կամուրջներ՝ կաթվածահար անելու երթևեկությունը երկրի ներսում և Հայաստանի Հանրապետության հետ»:[765]

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է Բերձորի[766] և Աղավնոյի անցակետի[767] կամուրջների թիրախավորման տեսանյութերը և Բերձորի կամրջի արբանյակային պատկերները:[768] Պատկեր 15.20-ում երևացող Աղավնոյի կամրջի ավերածությունների վերաբերյալ լուսանկարներ կամ նյութեր չեն հայտնաբերվել, հետևաբար հնարավոր չէ եզրակացություն անել պատերազմի վարման միջոցների մասին:

Ինչ վերաբերում է Բերձորի կամրջին, ապա կիրառված հարձակման միջոցները հնարավոր է նույնականացնել: Ռազմական գործողությունների ավարտից հետո փաստահավաք խումբը դեկտեմբերին այցելել է Բերձոր և փաստագրել կամրջի ավերածությունները, որոնք երևում են Պատկեր 15.21-ում: Ապացույցներ, լուսանկարներ և տեսանյութեր հավաքելուց հետո

764 Հարցազրույց Քաշաթաղի շրջանի բնակիչ Ծողիկի հետ, 29.01.2021թ.:

765 «Արցախի բնակչության նկատմամբ 2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակություն», էջ 22:

766 Ա1+, «Կադրերում երևում է, թե ինչպես է արկն ընկնում ՀՀ և Արցախը կապող կամուրջը Հակարի գետի վրա», 2 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=LJV5sAx1_AE

767 Patrick Lancaster, “Azerbaijan Attacks Another Bridge. This Time on the Armenia Border,” October 17, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=4w_a-RHg_5Q

768 Բերձորի կամրջի արբանյակային պատկերները 2019 թվականի օգոստոսի 20-ին և 2020 թվականի նոյեմբերի 24-ին՝ https://public.flourish.studio/visualisation/6750514/

փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին՝ Բերձորի կամրջի վրա օգտագործված զենքը նույնականացնելու նպատակով: ԲԱՏՀ մասնագետը չափավորից մեծ վստահությամբ պնդել է, որ ադրբեջանական զինված ուժերը Գորիս-Բերձոր մայրուղու վրա գտվող Հակարի գետի վրայով անցնող կամրջին հարվածել են իսրայելական արտադրության IMI LORA բալիստիկ հրթիռով: Բալիստիկ հրթիռը Հակարի գետի վրայի կամրջին հավանաբար հարվածել է 2020 թվականի հոկտեմբերի 2-ին: ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ հայտնել է, որ հարձակումը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 2-ին, ինչպես և պնդել, որ հարվածով նպատակաուղղված թիրախավորվել է Բերձոր-Գորիս մայրուղու՝ Հակարի գետի վրայով անցնող կամուրջը:

Կիրառված զենքը չի փլուզել կամուրջը, որը կանգուն է մնացել հարվածից հետո: ԲԱՏՀ մասնագետը եզրակացրել է, որ տարբեր աղբյուրների, այդ թվում՝ տեղական և միջազգային լրատվամիջոցների հավաքած ապացույցները վկայում են, որ այնուամենայնիվ հարձակման պատճառով կամրջին պատճառվել է զգալի վնաս: Սակայն, չնայած վնասումներին, կամուրջը չի քանդվել: Կամուրջը կառուցված է երկաթբետոնից, ինչն ակնհայտ է հարվածից հետո արված լուսանկարներում երևացող ճանապարհածածկի ձողային ամրաններից, որոնք պայթյունակայուն են և նրանց զգալի վնաս հասցնելու համար անհրաժեշտ է պայթյունի մեծ ուժ: Հաշվի առնելով, որ LORA-ի մարտագլխիկների մեջ կան 400 և 600 կգ մոդելներ, տեսանելի վնասից դժվար է որոշակիորեն հաստատել կիրառված մարտագլխիկի տեսակը: Պատկեր 15.23-ը հարվածին նախորդող պահի սկրինշոթն է: Պատկեր 15.22-ը ներկայացնում է կամրջի տեղանքը, որը նշված է կարմիր շրջանագծով:

Պատկեր 15.20. Աղավնոյի անցակետի վնասված կամուրջը, 17 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Պատրիկ Լանկաստերի յութուբյան ալիք):

Պատկեր 15.21. Բերձորի կամուրջը հարվածից հետո, 2 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

Պատկեր 15.22. Բերձորի կամուրջի դիրքը (կարմիրով) վարչական կենտրոնների համեմատ (Աղբյուրը՝ Google):

Պատկեր 15.23. Բերձորի կամուրջին հարված հասցնող զինատեսակը՝ հարվածից մեկ վայրկյան առաջ, 2 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Ա1+»):

LORA բալիստիկ հրթիռն արտադրում է իսրայելական «Israel Aerospace Industries» ընկերությունը: Արձակման առավելագույն հեռավորությունը 430 կմ է՝ մինչև 10 մ (CEP)-ի սահմանված ճշգրտությամբ:[769] LORA համակարգն ունի նշանառման երկու միջոց՝ գլոբալ տեղակայման (GPS) և նավիգացիայի իներցիոն (INS) համակարգեր: Նշանառման երկու համակարգ կիրառելով՝ LORA-ն կարող է ինտեգրվել նավիգացիոն և մարտական կառավարման գոյություն ունեցող համակարգերին կամ գործել ինքնուրույն՝ չինտեգրված մեթոդներով: LORA հրթիռն ունի քվազիբալիստիկ հետագիծ, ինչը տալիս է թռիչքի ընթացքում նպատակասլաց գործելու հնարավորություն և միաժամանակ նվազեցնում է թիրախի՝ հարվածը չեզոքացնելու ժամանակը: Ելնելով ընտրված թիրախից՝ LORA-ն կարող է կրել երկու տեսակի մարտագլխիկ՝ 400կգ բեկորային կամ 600կգ ներթափանցող:[770] Ադրբեջանը 2018 թվականին ձեռք է բերել LORA բալիստիկ հրթիռների երկու համակարգ և, ըստ հավաստի տեղեկությունների, եղել է միակ հակամարտող կողմը, որը պատերազմի ընթացքում օգտագործել է այդ համակարգը:[771]

769 Ծրջանային հավանական շեղումը (ԾՀԾ) բալիստիկայում զինամթերքի ճշգրտությունը սահմանող եզրույթ է: Այն նկարագրում է շրջանի շառավիղը, որի կենտրոնը թիրախն է, և որին պետք է հարվածի զինամթերքի 50%-ը: Ծրջանի շառավիղը 4 անգամ մեծացնելու դեպքում ցուցանիշն ավելանում է մինչև 99%: Օրինակ, 100մ ԾՀԾ նշանակում է, որ զինամթերքի 50%-ն ընկնելու է հարվածի ցանկալի նշանակետից առավելագույնը մինչև 100 մ հեռու (Dullum et al., 2017 թ.): 10մ ԾՀԾ-ն LORA համակարգը դարձնում է ավելի ճշգրիտ թիրախներ, օրինակ, կամուրջներ խոցելու համար իդեալական զենք (Տե՛ս Ove Dullum et al., "Indirect Fire: A Technical Analysis of the Employment, Accuracy, and Effects of Indirect-Fire Artillery Weapons" (Armament Research Services, January 2017), https://www.icrc.org/en/document/indirect-fire-technical-analysis-employment-accuracy-and-effects-indirect-fire-artillery.

770 «Ճշգրիտ հարվածային հրթիռ. LORA հեռահար հրետանային համակարգ», Իսրայելի օդատիեզերական արդյունաբերություն, հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 11-ին, https://www.iai.co.il/p/lora

771 «Ռազմական հավասարակշռություն 2020»

LORA համակարգը բարձր ճշգրտության զենք է և հավանաբար այդ պատճառով էլ կիրառվել է նախընտրված թիրախների դեմ: Ապացույցները հուշում են, որ ճշգրիտ հարված հասցնելու համար ամենայն հավանականությամբ պահանջվել են հրամանատարական և կառավարման լուրջ կարողություններ: Ըստ երևույթին, բացի հրթիռն արձակող մեքենայից՝ կամրջին հարված հասցնելու համար ներգրավված են եղել նաև C3[772] և ISTAR միջոցներ, ինչը և վկայում է, որ հարվածը նախապես է ծրագրավորվել: Ցանկացած թիրախ, որի վայրը հայտնի է և գտնվում է հրթիռի խոցման հեռավորության վրա, կարող է հարձակման ենթարկվել և ոչնչացվել արձակման որոշումը կայացնելուց հետո՝ մինչև 10 րոպեի ընթացքում:[773] Ըստ այդմ, հաշվի առնելով զենքի խոցման ճշգրտությունը, փաստահավաք խումբը եզրակացրել է, որ Ադրբեջանի զինված ուժերը դիտավորյալ են թիրախավորել կամուրջը:

Պարզաբանում պահանջող հաջորդ հարցը հետևյալն է. արդյո՞ք կամուրջը համարվում է ռազմական կառույց, և նման կառույցների վրա հարձակում իրականացնելու պարագայում ՄՄԻ-ի ո՞ր կանոններն են կիրառելի: Բոլոր կառույցները, այդ թվում՝ կամուրջները, գլխավոր ճանապարհները, բացառությամբ հատուկ պաշտպանության տակ գտնվողների, կարող են դառնալ ռազմական թիրախ, եթե իրենց բովանդակությամբ, տեղադրությամբ, նշանակությամբ կամ կիրառությամբ կարող են արդյունավետություն ապահովել ռազմական գործողություններում և որոնց լիակատար կամ մասնակի ոչնչացումը, գրավումը կամ չեզոքացումը տվյալ պահին առկա հանգամանքներում կարող է տալ բացահայտ ռազմական առավելություն:[774] Կամուրջը և հաղորդակցության այլ ուղիները համարվում են երկակի օգտագործման կառույցներ. այսինքն՝ կարող են ունենալ ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական նշանակություն: 1956թ.-ին ԿԽՄԿ-ն կազմել է այն կառույցների ցանկը, որոնք կարող են դիտվել որպես ռազմական. դրանց մեջ են նաև հաղորդակցության այն ուղիները և միջոցները (երկաթուղի, ճանապարհներ, կամուրջներ, թունելներ և ջրանցքներ), որոնք կարող են ունենալ ռազմական նշանակություն: Ցանկից դուրս են այն շինությունները, կայանքները կամ փոխադրամիջոցները, որոնք պաշտպանված են Ժնևի՝ 1949 թվականի օգոստոսի 12-ի I, II, III կոնվենցիաներով:[775] Երբ որոշակի կառույց օգտագործվում է ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական նպատակներով, համարվում է, որ նրա նշականությունը կարող է ընկալվել որպես ռազմական, որքան էլ այն իր կարևորությամբ լինի երկրորդական: Ուստի, այդ կառույցը կարող է որակվել որպես ռազմական: Սակայն եթե անգամ նման կառույցը, քաղաքացիական բնակչության կենցաղային պահանջները սպասարկելուց զատ, ստանում է նաև ռազմական նշանակություն՝ առնելով երկակի նշանակություն, այնուամենայնիվ նրա վրա հարձակումը կարող է անօրինական համարվել, եթե այդ հարձակումը կարող է վնաս պատճառել խաղաղ բնակչությանը:[776]

772 Տես Կապ, հրամանատարություն և կառավարում (Communication, Command and Control):

773 «Ճշգրիտ հարվածային հրթիռ. LORA հեռահար հրետանային համակարգ», Իսրայելի օդատիեզերական արդյունաբերություն, հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 11-ին, https://www.iai.co.il/p/lora

774 Տես Ժնևի 1949 թվականի ապրիլի 12-ի կոնվենցիաները, 1977 թվականի 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասը: Համանման սահմանում առկա է նաև մշակութային կառույցների պաշտպանության մասին Հաագայի կոնվենցայի 1999 թվականի երկրորդ արձանագրության 1-ին հոդվածի (զ) մասում, https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/Treaty.xsp?action=openDocument&documentId=F0628265ED4F2118412567BB003E0B0C

775 Ցանկը նշված է ԿԽՄԿ-ի լրացուցիչ արձանագրությունների մեկնաբանության մեջ, պարբերություն 2002, ծանոթագրություն 3. Pilloud et al., 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների՝ 1977 թվականի հունիսի 8-ի լրացուցիչ արձանագրությունների մեկնաբանություն:

776 Marco Sassòli, “Legitimate Targets of Attacks Under International Humanitarian Law,” Background Paper (Cambridge, Massachusetts: Harvard Program on Humanitarian Policy and Conflict Research, 2004), 7, https://hhi.harvard.edu/publications/legitimate-targets-attacks-under-international-humanitarian-law

Օրինակ, նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի դատական պալատը «Պրլիչը և այլք» գործով դատը վարելիս Մոստարում Հին կամրջի վրա հարձակումը գնահատել է՝ առաջնորդվել է հենց հիշյալ կանոնով: Չնայած նրան, որ կամուրջը համարվել է ռազմական, սակայն դրա ոչնչացումը համարվել է ոչ իրավաչափ, քանի որ անհնար է դարձրել բնակչության համար սննդամթերքի և դեղորայքի մատակարարումը, ինչը հանգեցրել է այնտեղ գտնվող մարդկանց համար մարդասիրական ճգնաժամի և շատ լուրջ հոգեբանական ազդեցություն է ունեցել Մոստարի բնակչության վրա:[777]

Հավաքված վկայությունների համաձայն՝ Բերձորի կամուրջն օգտագործվել է քաղաքացիական նպատակներով, քանի որ մարդասիրական օգնությունը (սննդի, բժշկական պարագաների, դեղորայքի մատակարարումը, շտապօգնության մեքենաների երթևեկը և այլն), նաև արցախցիների տեղահանումը կատարվել է բացառապես այդ ճանապարհով: Տեսանյութերից մեկում հստակ երևում է, որ հարձակումն իրականացվել է օրվա առաջին կեսին: Տեսանելի է, թե ինչպես են հարձակման պահին անցնում քաղաքացիական մեքենաներ,[778] ուստի կարելի էր ենթադրել, որ քաղաքացիական անձանց շրջանում հարձակման հետևանքով կարող էին լինել մեծ թվով վիրավորումներ և մարդկային զոհեր:

Այսպիսով՝ փաստահավաք խմբի հավաքած փաստերը հաստատում են, որ Ադրբեջանը դիտավորյալ հարձակումներ է իրականացրել կամուրջների վրա այն պահին, երբ դրանք օգտագործվել են քաղաքացիական նպատակներով: Հաշվի առնելով քաղաքացիական բնակչության համար կամուրջների առանցքային կարևորությունը, ինչպես նաև հարձակման պահին անհրաժեշտ նախազգուշացման միջոցներ չկիրառելը՝ փաստահավաք խումբը համոզված է, որ Ադրբեջանը փորձել է ոչնչացնել Բերձորի կամուրջը՝ նպատակ ունենալով հոգեբանորեն ազդել տեղական բնակչության վրա և արգելափակել հնարավոր օգնության մուտքն Արցախ:

Մարտակերտ, Դրմբոն և Գետավան

Փաստահավաք խումբը հաղորդումներ է ստացել, որ վնասվել են նաև Մարտակերտ-Դրմբոն ճանապարհը և Գետավանի կամուրջը:

Ջուլիետա Իշխանյանը փաստահավաք խմբին է տրամադրել Մարտակերտ-Դրմբոն ճանապարհին իր արած լուսանկարը (Պատկեր 15.24), որում երևում է ճանապարհին ընկած համազարկային կրակի ռեակտիվ համակարգի արկ: Փաստահավաք թիմը խնդրել է ԲԱՏՀ մասնագետին նույնականացնել զինատեսակը: ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ նշել է, որ Մարտակերտ-Դրմբոն ճանապարհածածկույթին հարվածել է 9K58 շարքի (ՀԿՌՀ) «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգից արձակված, խորհրդային կամ ռուսական արտադրության «Երկիր-երկիր» դասի 9M5 շարքի 300մմ արկ: Ըստ EXIF-ի տվյալների՝ ԲԱՏՀ մասնագետը որոշակի վստահությամբ հաստատել է, որ լուսանկարն արված է 2020 թվականի նոյեմբերի 12-ին Մարտակերտ-Դրմբոն ճանապարհին՝ Մարտակերտ քաղաքի մոտ: Նա հավանական է համարել, որ զինամթերքն արձակվել է 9K58 դասի «Սմերչ» ՀԿՌՀ-ից: Ադրբեջանի զինված ուժերի զինանոցում եղել են խոշոր տրամաչափի, այդ թվում՝

777 Դատախազն ընդդեմ Պրլիչի և այլոց, IT-04-74-T, Դատական պալատ, վճիռ և կարծիք (Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ, 29 մայիսի, 2013թ.):

778 Ա1+, «Կադրերում երևում է, թե ինչպես է արկն ընկնում ՀՀ և Արցախը կապող կամուրջը Հակարի գետի վրա»:

9K58 շարքի ՀԿՌՀ-ներ (30 միավոր 9K58 համակարգեր):[779] ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ զինամթերքն ունեցել է առանձնացող մարտագլխիկ և, հնարավոր է, որ մարտագլխիկը չի պայթել:

«Tert. am» կայքը սեպտեմբերի 30-ին փաստագրել է արկի կիրառման ևս մեկ դեպք Մարտակերտ-Դրմբոն ճանապրհին (Տե՛ս Պատկերներ 15.25 և 15.26):[780] Փաստահավաք խումբը դարձյալ խնդրել է ԲԱՏՀ մասնագետին նույնականացնել զինատեսակը: Նա մեծ վստահությամբ եզրակացրել է, որ Դրմբոնի և Մարտակերտի խաչմերուկում ճանապարհածածկույթին հարվածել է ռուսական արտադրության «Երկիր-երկիր» դասի 9M5 դասի 300մմ արկ: 2020 թվականի սեպտեմբերի 30-ին YouTube-ում վերբեռնվել է մի տեսանյութ, որտեղ դարձյալ երևում են այդ զենքի մնացորդները, ինչը հուշում է, որ միջադեպը տեղի է ունեցել նշված ամսաթվին մոտ օրերին:

Դրմբոնի և Մարտակերտի միջև՝ խաչմերուկի տարածությունում, ինչպես երևում է այդ տարածքի արբանյակային պատկերներում, նկատելի որևէ ռազմական կառույց չկա: ԲԱՏՀ մասնագետը բարձր վստահությամբ եզրակացրել է, որ տեսանյութում երևացող զենքի մնացորդները խորհրդային կամ ռուսական արտադրության «Երկիր-երկիր» դասի 9M5 շարքի 300մմ արկի մնացորդներ են: Նա հավանական է համարել, որ զինամթերքն արձակվել է 9K58 շարքի «Սմերչ» ՀԿՌՀ-ից, ունեցել է առանձնացող մարտագլխիկ կամ, հնարավոր է, որ մարտագլխիկը չի պայթել:

Գոհարը Գրիգորյանը հիշում է, որ Մարտակերտից դուրս գալիս տեսել են, որ Գետավանի կամուրջը պայթեցրել են: Հարցվողը նշել է, որ Գետավանի կամուրջը Մարտակերտից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, և այդ կամուրջը միակն էր, որ կապում էր Վարդենիս-Քարվաճառ-Մարտակերտ ճանապարհը: Ու թեև կամուրջը ավիրված էր, սակայն, այնուամենայնիվ, մարդատար մեքենաները կարողանում էին անցնել:

Մարտակերտի բնակիչ Ջուլիետա Իշխանյանը հայտնել է, որ Գետավան գյուղի կամուրջը վնասվել էր ԱԹՍ-ի հարվածից: Կամրջի վնասման մասին Ջուլիետան իմացել է ոստիկաններից՝ մինչև Քարվաճառ հասնելը: «Բարեբախտաբար կամրջի մի մասն էր վնասվել, ու մեքենաները կարողացան այդ մի հատվածով անցնել: Եթե ամբողջությամբ քանդվեր, հնարավոր չէր լինի այդտեղից դուրս գալ: Մեքենաները ահավոր շատ էին», - ասել է նա:[781]

Վնասվել է նաև Քարինտակից դեպի Սղնախ տանող կամուրջը, որը գտնվում էր Կարկառ գետի վրա: «Կամուրջը վնասվել էր այն աստիճան, որ անհնար էր մենքենայով անցնել դրա վրայով»,- վկայում է Վլադիմիրը:[782] Նոյեմբերի 3-ին «Հետք Թիվին» հրապարակել է տեսանյութ գյուղի թիրախավորման և վնասված տների մասին:[783]

779 «Ռազմական հավասարակշռություն 2020»:

780 Tert.am, «Մարտակերտ-Դրմբոն ճանապարհին հակառակորդի սմերչի արկ է ընկած», 30 սեպտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=8a1I53mdKzA.

781 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Ջուլիետայի հետ, 2 դեկտեմբերի, 2020թ.:

782 Հարցազրույց Շուշիի բնակիչ Վլադիմիրի հետ, 10 դեկտեմբերի, 2020թ.

783 HetqTV, «Թշնամին Թիրախավորել է Քարին Տակ Գյուղը», 3 նոյեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=wleEQFuLmhg

Պատկեր 15.24. Ճանապարհի մեջ խրված «Երկիր-երկիր» 300 մմ 9M5 հրթիռի պոչային հատվածը, 2020թ. (Աղբյուրը՝ Ջուլիետա Իշխանյան):

Պատկեր 15.25. Հրթիռի շարժիչ կայանքը, սեպտեմբերի 30, 2020թ. (Աղբյուրը՝ Tert.am)

Պատկեր 15.26. Հրթիռի շարժիչի կայանքի՝ ճանապարհին խփելու արդյունքում առաջացած փոսը, 30 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Tert.am):

Պատկեր 15.27. Հրթիռի աշխարհագրական դիրքի վերծանումը՝ Դրմբոն-Մարտակերտ խաչմերուկում (Աղբյուրը՝ Google Earth):

Փաստահավաք խումբը տեղեկություններ է ստացել, որ Մարտակերտի բնակիչ Արթուր Առուստամյանը վիրավորում է ստացել սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-15:00-ի միջակայքում, Մարտակերտ քաղաքում՝ կամրջի մոտ: Դեպքը տեղի է ունեցել ավտոկայանից մի փոքր ներքև՝ կամրջին չհասած.

> «Իմ սպիտակ «Ժիգուլի»-ով էի (47157 պետհամարանիշով): Մինչև հիմա երեք բեկոր կա գլխումս. մի հատը մեջքիս ա եղել, դա վիրահատել, հանել են, երկու հատ էլ ոտքիցս են հանել: Ոտքիցս մի կողմից մտել էր, մյուս կողմից՝ դուրս եկել: Վիրավոր ոտքս մինչև հիմա չի աշխատում. թաթս կախված ա, ուզում եմ ձգեմ, չի ստացվում: Գլխիս բեկորները չեն հանել, քանի որ իմ պառկած հիվանդանոցում միայն տրավմատոլոգներ էին, իսկ վիրահատությունը պետք է նևրոխիրուրգ աներ»:[784]

Արթուր Առուստամյանը փաստահավաք խմբին է տրամադրել տեսահսկիչ համակարգի խցիկի տեսագրության սկրինշոթը,[785] որտեղ երևում է իր հետ պատահած միջադեպը: Զենքը նույնականացնելու խնդրանքով փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին, որը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ Մարտակերտում մեքենայի մոտ պայթել են «Օդ-երկիր» կամ «Երկիր-երկիր» կասետային արկի բեկորաֆուգասային մարտական տարրեր, որոնք էլ վիրավորել են վարորդին (Տե՛ս Պատկեր 15.28): Բացի այդ, ավտոմեքենայի կանգնած տեղից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա տեղի է ունեցել ավելի մեծ՝ երկրորդ պայթյուն, որի հավանական պատճառը եղել է ավիացիոն զինամթերքը (Տե՛ս Պատկեր 15.29): Մարդատար քաղաքացիական սպիտակ մեքենայի անցնելու ժամանակ Մարտակերտի մոտ տեղի է ունեցել առնվազն չորս պայթյուն: ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ մեքենայի վարորդը վիրավորվել է պայթյուններից: Երկրորդ խոշոր պայթյունը տեղի է ունեցել ճանապարհի շարունակության վրա՝ քաղաքացիական մեքենայի ետնամասում:

Բացի այդ, հարձակման մյուս վկան վիրավորվել է նույն վայրում սեպտեմբերի 30-ին՝ տեղական ժամով 1400-1500 սահմաններում: ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ կիրառված զինատեսակներից մեկը եղել է կասետային, որը ցրել է բեկորաֆուգասային մարտական տարրեր: Մասնագետի գնահատմամբ անհնար է, որ զինատեսակի մեջ չլիներ ոչ կոնտակտային պայթուցիչով հակատանկային զենք, քանի որ պայթյունները տեղի են ունեցել հենց հարվածի պահին: Նա առավել հավանական է համարում, որ պայթյունների պատճառ են եղել բեկորաֆուգասային (HE-FRAG) կամ կրկնակի նշանակության ֆուգասային (HEDP)[786] մարտական տարրերը, քան բեկորաֆուգասային հակատանկային պայթուցիկ լիզքով (HEAT) զինամթերքը: Այս եզրակացությունը հիմնավորվում է նաև պայթյունի բեկորների տեսանելի հետքերով և տուժողի բեկորային վիրավորումների մասին հաղորդումներով: ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ առավել հավանական է, որ կիրառվել են «Երկիր-երկիր» կասետային արկեր, քան ավիացիոն կասետային զինամթերք: Ենթազինատեսակի դետոնացումից հետո փաստագրված մեծ պայթյունը առաջացրել է զգալի քանակությամբ բեկորներ, որոնք էլ, նրա կարծիքով, վնասել են մոտակա տները, մեքենաները և ճանապարհածածկը:

784 Հարցազրույց Մարտակերտի բնակիչ Արթուրի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

785 Տեսագրությունը հասանելի է այստեղ՝ https://mega.nz/folder/WxllUKQI#QjxOeCPCbHLId1pliYfRPg

786 Նաև հայտնի է որպես «հակատանկային բեկորաֆուգասային արկ» (HEAT-FRAG):

Պատկեր 15.28. Մարտակերտում՝ քաղաքացիական մեքենայի մոտ տեղի ունեցած պայթյունը, 30 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Արթուր Առուստամյան):

Պատկեր 15.29. Մարտակերտում՝ քաղաքացիական մեքենայի մոտ տեղի ունեցած երկրորդ պայթյունը, 30 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Արթուր Առուստամյան):

ՄՄԻ-ի հիմնական նպատակն է սահմանափակել զինված հակամարտության կողմերի օգտագործած պատերազմի վարման մեթոդներն ու միջոցները և երաշխավորել այն անձանց պաշտպանությունը և նրանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը, որոնք անմիջականորեն չեն մասնակցում կամ այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին: ՄՄԻ-ի անկյունաքարային սկզբունքը տարբերազատումն է. հակամարտության կողմերը միշտ պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը և կոմբատանտներին, ինչպես նաև քաղաքացիական կառույցները՝ ռազմականներից: Հարձակումները պետք է ուղղվեն բացառապես ռազմական թիրախների վրա և չպետք է ուղղվեն քաղաքացիական կառույցների վրա: Տարբերազատման սկզբունքի կարևորությունը հակամարտող կողմերին պարտավորեցնում է խուսափել կամ գոնե նվազագույնի հասցնել պատահական մահերի, քաղաքացիական բնակչության վիրավորումների թիվը, թիրախավորումից դուրս թողնել այն կառույցները, որոնք կարող են ուղղակի հարձակումների ժամանակ ծառայել որպես պաշտպանական ապաստարան: Սա նախազգուշացման սկզբունքն է: Ռազմական գործողությունների ընթացքում «պետք է մշտապես հոգ տանել խաղաղ բնակչությանը և քաղաքացիական կառույցները հարձակումներից պաշտպանելու համար»:[787] Պետք է ձեռնարկել նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները՝ ռազմական կառույցների վրա հարձակումների ընթացքում կանխելու քաղաքացիական զոհեր ունենալու սպառնալիքը, ինչպես նաև արգելելու կամ նվազագույնի հասցնելու քաղաքացիական կառույցներին ու գույքին հասցված վնասները: Այս կանոնը կիրառելի պետք է լինի հակամարտող բոլոր կողմերի համար: ՄՄԻ-ի երրորդ հիմնարար սկզբունքով ագելվում է իրականացնել հարձակում, եթե ենթադրվում է, որ այն կհանգեցնի քաղաքացիական զոհերի, խաղաղ բնակիչների վիրավորումների, քաղաքացիական կառույցների վնասման կամ ոչնչացման, որոնք ենթադրվող ռազմական առավելության համեմատ կլինեն չափից ավելի մեծ:

Այսպիսով, հավաքված փաստերի և յուրաքանչյուր դեպքի վերլուծության հիման վրա փաստահավաք խումբը եզրակացրել է, որ Արցախում Ադրբեջանի ռազմական ուժերը իրականացրել են կանխամտածված և կանոնավոր հարաձակումներ ճանապարհների և կամուրջների վրա, ինչպես նաև ոչ տարբերակված հարձակումների են ենթարկել Արցախի բնակչությանը:

Մարտունու քաղաքապետարանի շենքը

Մարտունու քաղաքապետարանի տարածքը թիրախավորվել է 2020թ.-ի հոկտեմբերի 1-ին, որի հետևանքով վիրավորում են ստացել այնտեղ գտնվող հայ և արտասահմանցի լրագրողներ, վառվել է շենքին մոտ կայանված մեքենան, այլ մեքենաներ վնասվել են բեկորներից (դեպքերի նկարագրությունը տե՛ս լրագրողների թիրախավորման մասին բաժնում): Փաստահավաք խումբը ուսումնասիրել է դեպքի վայրում եղած լրագրողների երկու տեսանյութ, որտեղ երևումեն կիրառված զենքի մնացորդները և հասցված վնասները:[788] Բացի այդ, փաստահավաք խումբը ուսումնասիրել է նաև հոկտեմբերի 1-ին քաղաքի ուղղությամբ իրականացված հարձակումները՝ վերլուծելով «Factor TV»-ի թղթակիցների նկարահանած

787 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 15. Հարձակման ժամանակ նախազգուշական միջոցների սկզբունքը»:

788 24TV, «Բացառիկ Կադրեր Մարտունուց. 24News-ի Լրագրողը Վիրավորվում է Ադրբեջանական Կրակից», 01.10.2020թ., https://www.youtube.com/watch?v=701kJLyXImA

տեսանյութը:[789] Տեսանյութի կադրերում երևում են վնասված քաղաքացիական կառույցները, ոստիկանության զոհված աշխատակցի մեքենայի թիրախավորումը, ինչպես նաև կիրառված զենքի մնացորդներ, որոնք նման են ՀԿՌՀ-ից արձակված արկերի: Մարտունու մի բնակիչ «Factor TV»-ի թղթակցին հայտնել է, որ կիրառվել է «Գրադ» զինատեսակ, որի հետևանքով մոտակայքում գտնվող տունը վառվել է, իսկ ոստիկանության աշխատակիցը՝ զոհվել: ԱՀ դատախազության տրամադրած տեղեկության համաձայն՝ Մարտունիում 18 վիրավորներից 8-ը տարբեր աստիճանների ծանր վնասվածքներ են ստացել, 6 զոհված քաղաքացիական անձանցից 3-ը սպանվել են հենց հոկտեմբերի 1-ին:

Քաղաքապետարանի շենքին վնասներ հասցրած, քաղաքացիական անձանց մահվան պատճառ դարձած և ուրիշներին վնասվածքներ պատճառած զենքի տեսակն ավելի ճշգրիտ որոշելու նպատակով փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին՝ փորձագիտական կարծիք ստանալու համար: Ըստ ԲԱՏՀ մասնագետի՝ տեսանյութերից և լուսանկարներից երևում են մի քանի զենքերի բաղադրիչներ և բեկորային մեծ վնասումներ, որոնք հետևանք են առնվազն երկու «Երկիր-երկիր» 122մմ 9Մ5 արկերի հարվածի: Առկա պատկերներում երևում են զինամթերքի մնացորդներ, որոնք ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ որակել է որպես «Երկիր-երկիր» 122մմ 9Մ դասի արկ: ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարել, որ արկը արձակվել է ԲՄ-21 «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգից (ՀԿՌՀ) կամ համանման կայանից: ԲՄ-21 ՀԿՌՀ-ը և դրա մոդիֆիկացված տարբերակներն առկա են Ադրբեջանի զինված ուժերի զինանոցում:

Տվյալ զինամթերքը 9Մ դասի արկ համարելու կարևորագույն տարրերն են փաթաթվող կայունացնող պոչաթևերը և հրթիռի պոչի հատվածում ձգման զսպանակները (համեմատիր Պատկերներ 15.30-ը և 15.32-ը): Փաստագրվել են նաև այլ տարրեր: Դրանք նույնպես հիմնավորում են զինամթերքի նույնականացումը որպես 9Մ դասի արկեր և ընդգրկում են պոչի ու իրանի հատվածները, ինչպես նաև տարբերակիչ ծայրափողակը և հրթիռի շարժիչի այլ տարրեր (Տես Պատկերներ 15.30, 15.33 և այլ պատկերներ): Ըստ երևույթին, հարվածի պահին զինամթերքի որոշ հատվածներ մասնակիորեն թաղվել են հողի մեջ (Տես Պատկեր 15.34): Նման բան հաճախ տեղի է ունենում, երբ հրթիռի սպառված ուժային կայանքը ընկնում է գետնին:

ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ նշել է, որ Մարտունու քաղաքապետարանի տարածքում կիրառվել է մի քանի զինատեսակ: Հավանական է, որ փաստագրված զինատեսակներից առնվազն մեկն ունեցել է առանձնացող («անջատվող») մարտագլխիկ: Գոյություն ունեն 9Մ5 դասի 122մմ արկերի երկու տարածված տարբերակներ, որոնք ունեն առանձնացող բեկորաֆուգասային մարտագլխիկներ՝ 9Մ53Փ և մոդիֆիկացված 9Մ522:[790] 9Մ522-ի տարբերակիչ հատկանիշներն են ավելի մեծ հեռահարությունը (9Մ53Փ-ից մոտ երկու անգամ ավելի) և մոդիֆիկացված մարտագլխիկը: ԲԱՏՀ մասնագետը փաստագրել է այս պատերազմի ընթացքում անջատվող մարտագլխիկներով 122մմ արկերի կիրառման նաև այլ դեպքեր:

Ներկայացված նյութերում տեսանելի վնասների հիմնական պատճառը եղել են բեկորային հարվածները: Բեկորների մեծ քանակն ամենայն հավանականությամբ կարելի է վերագրել

789 Factor tv, «Բացառիկ Կադրեր. 18+. Ինչ Իրավիճակ է Հրետակոծված Մարտունիում», հոկտեմբերի 1, 2020թ., https://www.youtube.com/watch?v=t6-nflDxB_M

790 «Պայթուցիկ զենքի էֆեկտներ. վերջնական հաշվետվություն»/"Explosive Weapon Effects: Final Report."

Պատկեր 15.30. Արկի վնասված հատվածը Մարտունու քաղաքապետարանի տարածքում, որտեղ երևում են հրթիռի հիմնական իրանի մի մասը և դրա պոչային մասի հատվածը՝ կայունացնող պոչաթևերի զսպանակի պատյանով, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Федеральное агентство новостей»):

այնպիսի մարտագլխիկների կիրառմանը, որոնց կառուցվածքն ավելացնում է բեկորային հարվածների վնասները թիրախավորված տարածքներում: Պատկերներ 15.35-ում և 15.38-ում երևում են փաստագրված որոշ բեկորային վնասների ապացույցները: Փաստագրված նյութերը վկայում են, որ հավանաբար կիրառվել են մի քանի բեկորաֆուգասային մարտագլխիկներ, սակայն նման հետևանքներ կարող էին առաջացնել նաև այլ զինատեսակներ: Պայթյունի առաջացրած գերճնշման հետևանքները կարելի է տեսնել նաև որոշ տեսանյութերում, որտեղ երևում են ջարդված պատուհաններ (Տե՛ս Պատկեր 15.38-ը) և վնասված մեքենաներ:

ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ եզրակացրել է, որ Մարտունի քաղաքին հարվածել են առնվազն երկու «Երկիր-երկիր» 122մմ 9M5 արկեր: Թեև ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարում, որ այս հարձակման ընթացքում կիրառվել են առնվազն երկու բեկորաֆուգասային մարտագլխիկներ, սակայն հնարավոր է, որ օգտագործվել են նաև այլ զինատեսակներ:

Բեկորաֆուգասային մարտագլխիկները նախատեսված են սովորական պայթուցիկ մարտագլխիկից ավելի շատ մահացու բեկորներ առաջացնելու համար:[791] Ի տարբերություն պայթյունի էներգիայի, բեկորաֆուգասային մարտագլխիկները հիմնականում նախատեսված են բարձր արագության բեկորներով թիրախին վնաս պատճառելու համար:[792]

Որպես կանոն՝ պայթուցիկ զենքերի կիրառումը բնակեցված տարածքներում պայթյունի և բեկորների հետևանքով առաջացնում է բազմաթիվ բարդ և ծանր վնասներ: Որքան մեծ է տարածքում քաղաքացիական անձանց և քաղաքացիական ենթակառուցվածքների

791 Cross et al., “Explosive Weapons in Populated Areas,” 21.

792 Dullum et al., “Indirect Fire: A Technical Analysis of the Employment, Accuracy, and Effects of Indirect-Fire Artillery Weapons,” 83.

Պատկեր 15.31. Մարտունու քաղաքապետարանի տարածքում փաստագրված արկի վնասված մասը, որտեղ երևում է պոչային հատվածը՝ կայունացնող պոչաթևերի զսպանակի պատյանով, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Սպուտնիկ Արմենիա»):

Պատկեր 15.32. 122 մմ հրթռիռի պոչի հատվածը՝ բացված պոչաթևերով, ձգման համակարգով և ծայրափողակով, 2012թ. (Աղբյուրը՝ «Администрация Соль-Илецкого городского округа»):

Պատկեր 15.33. Հրթիռի հատված՝ Մարտունու քաղաքապետարանի տարածքում: Ուշադրություն դարձրեք արկի շարժիչի տարբերակիչ ծայրափողակին, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Սպուտնիկ Արմենիա», 2020 թ.):

Պատկեր 15.34. Զինատեսակի թաղված հատված՝ Մարտունու քաղաքապետարանի տարածքում, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Սպուտնիկ Արմենիա»):

Պատկեր 15.36. Մարտունի քաղաքի շենքերի բեկորային վնասումները, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Федеральное агентство новостей»):

Պատկեր 15.35. Մարտունու քաղաքապետարանի մոտ վնասված մեքենա, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Федеральное агентство новостей»):

Պատկեր 15.37. Մարտունու քաղաքապետարանի մոտ վնասված մեքենա, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «24TV»):

խտությունը, այնքան ավելի մեծ է պայթյունի և բերկորների ցրման շառավիղում մարդկանց և քաղաքացիական ենթակառուցվածքներին վնաս հասցնելու հավանականությունը:[793]

«Human Rights Watch»-ն արձանագրել է, որ անկախ այս զենքերի կառավարվող լինելու հանգամանքից, դրանց չափերով պայմանավորված, պայթյունը և բեկորները կարող են առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք խիստ բացասական ազդեցություն կարող են ունենալ քաղաքացիական անձանց և քաղաքացիական ենթակառուցվածքների վրա անգամ այն դեպքերում, երբ վերջիններս ուղղակիորեն չեն թիրախավորվել:[794]

Փաստահավաք խմբի հավաքած նյութերից հետևում է, որ չկան վկայություններ կամ այլ ապացույցներ այն մասին, որ Մարտունի քաղաքը ռազմական գործողությունների տվյալ պահին օգտագործվել է ռազմական նպատակներով: Քանի որ քաղաքի տարածքում այլ հարվածներ չեն եղել, փաստահավաք խումբը եզրակացրել է, որ հարձակումն ունեցել է նպատակային նշանակություն՝ թիրախում ունենալով Մարտունու քաղաքապետարանը: Այստեղից բխում է, որ հարձակումը իրականացվել է քաղաքացիական և ոչ թե ռազմական կառույցների վրա: Հետևանքը եղել է այն, որ սպանվել է մեկ քաղաքացիական անձ, և վիրավորվել են չորս լրագրող: Այդ հարձակումները, որոնք իրականացվել են առանց թիրախի տարորոշման, ինքնին ենթադրում են միջազգային սահմանված իրավունքի սկզբունքի խախտում: Այդ սկզբունքը հակամարտող կողմերից պահանջում է մշտապես տարբերակել խաղաղ բնակիչներին կոմբատանտներից, ինչպես նաև քաղաքացիական կառույցները՝ ռազմական թիրախներից:[795] Տարբերակման այս սկզբունքի խախտումը պատերազմական հանցագործություն է:

793 John Borrie and Maya Brehm, “Enhancing Civilian Protection from Use of Explosive Weapons in Populated Areas: Building a Policy and Research Agenda,” International Review of the Red Cross 93, no. 883 (September 2011): 4–6, https://doi.org/10.1017/S1816383112000124.

794 “Explosive Weapons Devastating for Civilians,” Human Rights Watch, February 6, 2020, https://www.hrw.org/news/2020/02/06/explosive-weapons-devastating-civilians.

795 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 1. Քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև տարբերակման սկզբունքը» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 6-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs /v1_rul_rule1; «Սովորութային ՄՄԻ - Կանոն 7. Քաղաքացիական և ռազմական օբյեկտների տարբերակման սկզբունքը» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), էջ 7, հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 14-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl /eng/docs/v1_rul_rule7



Պատկեր 15.38. Սքրինշոթ, որի վրա երևում են պայթյունի գերճնշումից Մարտունու քաղաքապետարանի շենքի ջարդված պատուհաններից թռչող ապակու կտորներ, որոնք թափվում են մոտ կանգնած մարդկանց վրա, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Дождь»):

Եթե ենթադրյալ ռազմական թիրախը գոյություն չունի, և զենքի տվյալ տեսակը կիրառվում է բնակելի տարածքներում, ապա ծայրահեղ մեծ է դառնում քաղաքացիական անձանց վնաս պատճառելու վտանգը: Պատերազմի վարման միջոցների նման ընտրությունը համարվում է դիտավորյալ հարձակում քաղաքացական բնակչության և քաղաքացիական կառույցների վրա և բնականաբար համարվում է պատերազմական հանցագործություն:

Դպրոցներ եվ մանկապարտեզներ

Սաշա Առուստամյանը պատմում է, որ Շուշիում եղած ժամանակ տեսել է, թե ինչպես է դպրոցի տարածքում ընկել է 2 արկ և վնասել դպրոցի շենքը: Ըստ Սաշայի՝ հարվածը հասցվել է ԱԹՍ-ից: Նա նշել է նաև, որ վնաս է հասցվել դպրոցից վերև գտնվող Ղազանչեցոց եկեղեցու դիմացի շենքին:

Վնասված դպրոցների և մանկապարտեզների մասին տեղեկություններ ստանալու համար փաստահավաք խումբը դիմել է Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավարին: Պաշտոնական պատասխանի համաձայն՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով վնասվել են 41 դպրոց և 15 մանկապարտեզ, ևս 121 դպրոց և 20 մանկապարտեզ անցել է Ադրբեջանի զինված ուժերի հսկողության տակ: Պատերազմի ընթացքում որոշ դպրոցներ վերածվել են հիվանդանոցների և ապաստարանների: Հավաքված վկայությունների համաձայն՝ հարձակումների ակտիվացման ավելացման հետևանքով Հադրութի հիվանդանոցը հոկտեմբերի 2-ին տեղափոխվել է Ազոխ գյուղի դպրոցի ապաստարան:

Պատկեր 15.39. Մարտունու Մեսրոպ Մաշտոցի անվան №2 միջնակարգ դպրոցը, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատերազմից հետո փաստահավաք խումբն այցելել է Ադրբեջանի հարձակմանը ենթարկված Արցախի բնակելի թաղամասերը և Մարտունի քաղաքում փաստագրել մաշկույթի տանը, դպրոցին և բնակելի շենքերին հասցված վնասները, ինչպես նաև մոտակայքում հայտնաբերված զենքի մնացորդները:[796] Մարտունու մանկապարտեզի և դպրոցի թիրախավորումը հաստատում են լրագրողական տեսանյութերը: Պատրիկ Լանքաստերը նկարահանել է Մարտունու մանկապարտեզի ավերածությունները:[797]

«Human Rights Watch»-ը նույնպես փաստագրել է №2 դպրոցին հասցված ավերածությունները: Հայկական իշխանությունների տվյալներով՝ №2 դպրոցը կանոնավոր հրետակոծվել է հոկտեմբերի 1-ից 15-ն ընկած ժամանակահատվածում: «Human Rights Watch»-ը նշել է, որ «ամենամեծ ավերածությունները հավանաբար պատճառվել են հոկտեմբերի 19-ին «Գրադ» հրետանային արկերի ավերիչ համազարկից, որը մեծ վնասներ է հասցրել նաև քաղաքի մշակույթի տան երաժշտության և արվեստի դասարաններին, որոնք գտնվում են № 2 դպրոցի ուղիղ դիմացը՝ հրապարակի մյուս կողմում: Մարդու իրավունքների միջազգային գործընկերության (IPHR) այցելու հետազոտողների խումբը մի կերպ է փրկվել է հարձակումից»: Իսկ №2 դպրոցի տնօրեն Միհրան Ջիվանյանը նշել է, որ «դպրոցին ևս մեկ անգամ հարվածել են նոյեմբերի 8-ին՝ հրադադարից ընդամենը երկու օր առաջ»:[798]

796 Մշակույթի տան նկարները հասանելի են այստեղ՝ https://mega.nz/folder/L1URkQaa#1nL30kMBFVbeWfz6bVrAXA

797 Patrick Lancaster, "Armenia Azerbaijan War Vlog 2 Artsakh Civilians Killed & Schools Under Fire (Extended MUST WATCH), November 3, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=KeASopjBFUM

798 Bill Van Esveld and Tanya Lokshina, "Lessons of War: Attacks on Schools During the Nagorno-Karabakh War" (Human Rights Watch, September 8, 2021), https://www.hrw.org/news/2021/09/08/lessons-war

Սիլվա Սարգսյանը սեպտեմբերի 27-ին ընտանիքի անդամների հետ գտնվել է տանը՝ Ավետարանոցում, երբ առավոտյան բարձր ձայներ են լսել: Հետագայում պարզել են, որ հրետանային առաջին հարվածները հասցվել են Ծոշ գյուղի վերևի հատվածում տեղակայված հակաօդային պաշտպանության միջոցներին: Նա նշել է, որ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, այլևս չեն ունեցել էլեկտրաէներգիա, գազ, որի պատճառով սեպտեմբերի 30-ին լքել են գյուղը՝ բացի սկեսրայրից, որը գյուղից հեռացել է միայն հոկտեմբերի 25-ին՝ հակառակորդի զինված ուժերի՝ գյուղ մուտք գործելուց ընդամենը մի քանի ժամ առաջ: Նա նաև պատմել է, որ հոկտեմբերի 10-ից գյուղը մշտապես հրետակոծվել է: Թիրախավորվել են նաև գյուղի դպրոցը և մանկապարտեզը, որտեղ պատսպարվել էին գյուղի խաղաղ բնակչները: Իր համոզմամբ՝ գյուղի, այդ թվում՝ դպրոցի և մանկապարտեզի թիրախավորումը նպատակ է ունեցել բնակչությանը վնաս հասցնել և հետագայում ճանապարհ բացել Ծուշին գրավելու համար: Նա հայտնել է նաև, որ համացանցում տարածված տեսանյութերում տեսել է, թե ինչպես են ադրբեջանցի զինվորականները թալանում տները:

Ավետարանոց գյուղի մեկ այլ բնակչի՝ Համեստ Արզանյանի հավաստմամբ՝ գյուղում որևէ ռազմական կառույց չի եղել, և նրա կարծիքով ակնհայտ է, որ նպատակը եղել է՝ հրետակոծել խաղաղ բնակչությանը: Համեստը հայտնել է, որ բացի քաղաքացիական անձանց թիրախավորելուց՝ հոկտեմբերի վերջին օրերին գյուղի ուղղությամբ արձակված զինատեսակները վնասել են նաև գյուղի դպրոցը և մանկապարտեզը: Տեղեկացրել է նաև, որ ադրբեջանական զինված ուժերը գյուղը գրավելուց հետո ավիրել են այն. «Ասում են՝ սաղ մեքենաները իրանք քշել, տարել, գլորել են, տներում ինչքան շորեր, կահույք կա, սաղ թափել, կոտրատել են»:[799]

Պատկեր 15.40. Խ. Աբովյանի անվան դպրոցը Ծուշիում՝ հարվածից հետո, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Karabakh Records» տելեգրամյան ալիք):

799 Հարցազրույց Ասկերանի բնակիչ Համեստի հետ, 2020 թվականի դեկտեմբեր:

2020 թվականի հոկտեմբերի 28-ին Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը հայտնել է, որ ադրբեջանական օդուժը հրթիռային հարված է հասցրել Շուշի քաղաքին, որը պատճառ է դարձել բազմաթիվ լուրջ ավերածությունների, որոնց թվում ամբողջությամբ փլուզվել է մեկ շենք, և մասնակի վնասվել է Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը:[800]

Այգեստանի դպրոցը վնասվել է ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող զինամթերքի պահեստում տեղի ունեցած պայթյունից: Մեծապես վնասվել են դպրոցի պատուհանները և պատերը:[801]

«Human Rights Watch»-ի տվյալներով ադրբեջանական զորքերը չորս անգամ հարվածներ են հասցրել №10 դպրոցի տարածքին, որը գտնվում է փողոցի հակառակ կողմում՝ էլեկտրաենթակայանին մոտ: Հարձակումները լուրջ վնասներ են հասցրել տասնյակ դասասենյակների, շենքի արտաքին հատվածին և դպրոցները սպասարկող էլեկտրականության և ջրի մատակարարման համակարգերին:[802] Տարածքում վնասվել են առնվազն երկու դպրոց, տեղական բուժհաստատությունները և կենսական նշանակության այլ ենթակառուցվածքներ: Այս տարածքը հարձակումների է ենթարկվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում: №10 դպրոցի շրջակայքում և էլեկտրական ենթակայանի տարածքում հայտնաբերվել են տարբեր զինատեսակների, այդ թվում՝ 122 մմ-ից մինչև 300մմ տրամաչափի արկերի, ավիացիոն զինամթերքի և հրետանու ռումբերի մնացորդներ: Պատկեր 15.41-ում երևում են դպրոցի տարածքում ընկած 122մմ արկի մնացորդներ: «Human Rights Watch»-ը եզրակացրել է, որ Ադրբեջանը կիրառել է խոցման լայն շառավիղ ունեցող զինատեսակներ, այդ թվում՝ էապես ոչ ճշգրիտ հրետանային արկեր, իսկ հարվածները եղել են ոչ տարբերակված, հետևաբար՝ ոչ իրավաչափ:[803] ԲԱՏՀ մասնագետի գնահատմամբ՝ հավանական է, որ հարձակումները թիրախավորել են դպրոցից 250 մետր հեռավորությամբ գտնվող տեղական էլեկտրաենթակայանը: Պատկեր 15.41-ում երևում են №10 դպրոցի մոտ և նրա շրջակայքում արկերի հարվածներից առաջացրած հետևանքները: Հարվածները տեղի են ունեցել 2020 թվականի հոկտեմբերի սկզբին:

Այս հակամարտության մասին նախկին հաղորդումներում (ներառյալ ԲԱՏՀ մասնագետի տված այլ եզրակացությունները) նշվել է առանձնացող («անջատվող») մարտագլխիկներով հրետանային արկերի լայնածավալ կիրառման մասին: Այդ զենքի տեսակը կարելի է պարզել նրա հարվածի կետին մոտ գտնվող և գրեթե անվնաս մնացած ուժային կայանքի հատվածի առկայությամբ: Հաճախ այս զինատեսակի ուժային կայանքի հատվածը մասամբ թաղվում է հողի մեջ՝ գետնից ցցված թողնելով մնացորդներ:

Բացառությամբ Պատկեր 15.42-ում ներկայացված արկի շարժիչի՝ առկա փաստարկները հստակ ցույց չեն տալիս դպրոցի մոտ ընկած զինատեսակների մնացորդները: ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ եզրակացրել է, որ Պատկեր 15.42-ում փաստագրված զինամթերքի մնացորդները պատկանում են 122մմ արկի: Պատկեր 15.43-ում երևում են

800 «Շուշիում ամբողջությամբ ավերվել է բնակելի առանձնատուն, մասնակի վնասվել Խ. Աբովյանի անվան դպրոցը. ԱՀ ԱԻՊԾ, Արցախ լրատվական, հոկտեմբերի 28, 2020թ., https://artsakh.news/am/news/193147

801 Abrahamian, "Danger Afoot: In Artsakh, the Threat of Unexploded Munitions Lingers Long after the War."

802 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh."

803 Van Esveld and Lokshina, "Lessons of War."

Պատկեր 15.41. Ստեփանակերտի էլեկտրակայանը թիրախավորող հարվածների կետերը, այդ թվում՝ դպրոցի մոտակա տարածքում (պատկերի աջ ստորին անկյունում), 2020թ. (Աղբյուրը՝ «Human Rights Watch»):

Պատկեր 15.42. 122մմ արկի մնացորդները Ստեփանակերտի №10 դպրոցի բակում, 2020թ. (Աղբյուրը՝ «Human Right Watch»):

Պատկեր 15.43. Միալիցք մարտագլխիկների պայթյուններից առաջացած ծխի բազմաթիվ շիթերը, 4 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Bars Media»):

Պատկեր 15.44. Կասետային մարտագլխիկների պայթյուններից առաջացած ծխի բազմաթիվ շիթերը, 4 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Bars Media»):

Ստեփանակերտում՝ դպրոցի մոտ, մարտագլխիկների պայթունից բարձրացող ծխի շիթերը: Սա հուշում է, որ տեղի են ունեցել մի շարք խոշոր, իրարից առանձին պայթյուններ, ինչը վկայում է միալիցք մարտագլխիկների կիրառման մասին: Սա հակասում է Պատկեր 15.44-ում ներկայացված մեծ թվով փոքր պայթյունների հետքերին, որոնք, ըստ ԲԱՏՀ մասնագետի՝ չափավոր վստահությամբ արված գնահատականի, առաջացրել են անհայտ տեսակի կասետային զինամթերքի կիրառումից:

Պատկեր 15.45. №10 դպրոցի մոտ պայթած զինամթերքի պատճառած վնասը, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 15.46. №10 դպրոցի մոտ պայթած զինամթերքի պատճառած վնասը, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Դպրոցի փաստագրված ավերածությունները լայնածավալ և կառուցվածքային վնասներ են: Պատկերներ 15.45-ը և 15.46-ը արտացոլում են դպրոցին և հարակից տարածքներին պատճառվածվնասները:Լուսանկարներըհուշումեն,որ№10դպրոցինէականվնասէհասցրել առնվազն երկու խոշոր պայթյուններից առաջացած գերճնշումը: Այս պայթյուններից փշրվել են պատուհանների մեծ մասը, և վնասվել են մասնաշենքի ներքին պատերը: Հարվածային ալիքները սկիզբ են առել առանձին խոշոր ռմբաձագարներից, ինչը ևս մեկ վկայություն է այն բանի, որ դրանք առաջացել են միալիցք մարտագլխիկների պայթյուններից: Պատկերներ 15.45-15.47-ում ներկայացված ավերածությունները շատ մոտ են վնասի այն տեսակին, որը կարող է առաջանալ նման հարվածային ալիքներից: Հաշվի առնելով դպրոցին հասցված վնասը և զինատեսակի առաջացրած տեղային ռմբաձագարները՝ ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ եզրակացրել է, որ Ստեփանակերտի №10 դպրոցին հարվածել են առնվազն երկու խոշոր միալիցք ֆուգասային մարտագլխիկներով:

Պատկեր 15.47. №10 դպրոցի մոտ պայթած զինամթերքի պատճառած վնասը, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Ձեռք բերված արբանյակային պատկերների հիման վրա փաստահավաք խումբը փաստագրել է նաև Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղի դպրոցի մարզադահլիճի (հոկտեմբերի 30-ից հետո)[804] և Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի դպրոցի (հոկտեմբերի 25-ից հետո)[805] ավերածությունները: Պետությունների պրակտիկայի մեջ դպրոցները համարվում են prima facie քաղաքացիական կառույցներ, եթե, իհարկե, ըստ վերջնական վերլուծության, դրանք չեն վերածվել ռազմական կառուցների: Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերվող 2000 թվականի կամընտիր արձանագրությունը դատապարտում է «զինված հակամարտությունների պայմաններում երեխաների թիրախավորումը, ինչպես նաև, ըստ միջազգային իրավունքի, պահպանվող կառույցների, այդ թվում՝ այնպիսի վայրերի վրա անմիջական հարձակումները, որտեղ սովորաբար գտնվում են մեծ թվով երեխաներ, ինչպիսիք են, օրինակ, դպրոցներն ու հիվանդանոցները»:[806]

804 Մարզադահլիճի՝ 2020 թվականի հունիսի 21-ի և 2020 թվականի հոկտեմբերի 30-ի արբանյակային պատկերները հասանելի են հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7154045/

805 Քարինտակի դպրոցի 2019, 2020 և 2021 թվականների արբանյակային պատկերները հասանելի են հղումով՝ https://public.flourish.studio/visualisation/7530297/

806 «Երեխայի իրավունքների կոնվենցիայի՝ զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին կամընտիր արձանագրություն» (Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտե, 25 մայիսի, 2000թ.), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/ instruments/optional-protocol-convention-rights-child-involvement-children

Ադրբեջանը կամընտիր արձանագրությունը վավերացրել է 2002 թվականին և պարտավորություն է ստանձնել չթիրախավորել դպրոցները կամ չկիրառել այնպիսի զենքեր, որոնց թիրախավորած կառույցի ոչ տարբերակված խոցման դեպքում կարող են վնասել բնակելի թաղամասեր: Փաստահավաք խումբը եզրակացրել է, որ դպրոցները ենթարկվել են ոչ տարբերակված հարձակումների, ինչը պատերազմի կանոնների կոպիտ խախտում է:

Խաղաղ բնակիչների տներ

Սաֆարյան Սուսաննայի տան պատուհանների ապակիները կոտրվել են առաջին իսկ պայթյուններից: Նա նշել է. «Չհասցրինք տանից դուրս գալ, պառկեցինք գետնին: Այս անգամ արդեն Հադրութն էր թիրախը. հենց քաղաքի վրա էին կրակում, ոչ թե կոնկրետ դիվիզայի, պոլկի վրա էին կրակում, այլ հենց տների վրա էին կրակում»:[807]

Իսկ Մարտունի քաղաք բնակիչ Ծահեն Բալայանը պատմում է.

> «Դե՛, տուն չկա արդեն, հիմա ես մենակ եմ, սաղ ջարդվել ա, պատուհան չկա, ցելոֆանով մի ձև ծածկել եմ, բայց ցուրտ ա: Մերոնք՝ աղջիկներս, թոռներս, էլ չեն գա: Ո՞նց պիտի ապրեմ, էստեղ երեխա ո՞նց պիտի ապրի, ո՞նց պիտի գա, երեխա ապրի, ոչ մեկը չեն ուզում գան էստեղ: Ո՛չ մեկը: Աղջիկս ասում ա, որ մաման էդտեղ մահացել ա, ես ո՞նց պիտի ապրեմ: Ո՞ւր բերես երեխեքին, տան կեսը վառվել ա, ես էլ, մի ուգլում նստած, նայում եմ, սաղ գիշեր չեմ կարում քնեմ, ո՞նց քնես՝ թուրքը 3 կողմիդ ա, թուրքին մոտիկ էլ ի՞նչ կարաս անես»:[808]

Փաստահավաք խումբը տեղեկություններ է ստացել պատերազմի ընթացքում ԱՀ-ի տարբեր տարածքներում գտնվող մեծ թվով բնակելի շենքերի և մասնավոր սեփականության ոչնչացման մասին: Որոշ դեպքերում ավերածությունները կամ ոչնչացումը կարելի է բացատրել դրանց՝ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի միջև ռազմական գործողությունների գծին մոտ լինելու հանգամանքով, սակայն փաստահավաք խումբը փաստագրել է բազմաթիվ դեպքեր, երբ վնասվել կամ ոչնչացվել են բնակելի այնպիսի շենքեր, որոնց մոտակայքում չեն եղել ռազմական կառույցներ, և որոնց ոչնչացումը ռազմական որևէ առավելություն հակառակորդին չի բերել: Փաստահավաք խումբը գտել է, որ ադրբեջանական զինված ուժերը հարձակումների ընթացքում չեն պահպանել նախազգուշացման սկզբունքը: Անմիջականորեն ռազմական կառույցների վրա չուղղված հարձակումները, ինչպես նաև քաղաքացիական բնակչության կյանքին, առողջությանը կամ ունեցվածքին ոչ համաչափ վնաս պատճառող հարձակումները որակվում են որպես պատերազմական հանցագործություններ:

Արցախի Հանրապետության նախագահի գրասենյակից փաստահավաք խմբին տրամադրել են տվյալներ՝ արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում վնասված շենքերի և շինությունների մասին: Արցախի Հանրապետության վերահսկողության տակ մնացած բնակելի թաղամասերում պայթյունների հետևանքով անտուն դարձած մարդկանց թիվը 1,176 է: Վնասվել են ընդհանուր թվով 295 բազմաբնակարանային շենք (2,239 բնակարան), 8.443 մասնավոր առանձնատուն, 72 վարչական շենք, 98 քաղաքացիական ենթակառուցվածքային

807 Հարցազրույց Հադրութի բնակիչ Սուսաննայի հետ, 21 դեկտեմբերի, 2020թ.:

808 Հարցազրույց Մարտունու բնակիչ Ծահենի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

օբյեկտ (որից՝ 13-ը՝ հյուրանոց, 49-ը՝ խանութ, 7-ը՝ լցակայան, 1-ը՝ ավտոկայանատեղի, 25-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 3-ը՝ կամուրջ), բնակչության սոցիալական կենսապահովման 96 ենթակառուցվածք (որից՝ 15-ը՝ նախադպրոցական հաստատություն, 41-ը՝ կրթական հաստատություն/դպրոց, 40-ը՝ բուժհիմնարկ/հիվանդանոց, պոլիկլինիկա, ամբուլատորիա)։ Ոչնչացված նկուղային շինությունների թիվը 110-ն է։ Նախնական գնահատումներով՝ ուսումնասիրված 8,380 շենքերին հասցված վնասի գումարի չափը կազմում է 12,5 միլիարդ դրամ։

Ադրբեջանի հարձակումներին ականատես մարդկանց բազմաթիվ վկայություններ փաստում են, որ գյուղերի վրա հարձակումները չեն ունեցել ռազմական որևէ թիրախ։ Փաստահավաք խմբին ականատեսները հայտնել են, որ շատ դեպքերում հեծակետերը, զորամասերը կամ օդային պաշտպանության կայանքները տեղակայված են եղել հարձակման ենթարկված գյուղերից դուրս՝ մեծ հեռավորության վրա։ Ադրբեջանական զինված ուժերի առաջին հարվածը եղել է կիրակի՝ առավոտյան՝ ժամը 650-ից 730-ի միջակայքում, երբ երեխաները, կանայք, տարեցները և խաղաղ այլ բնակիչներ դեռևս եղել են քնած, ինչը ենթադրել է տալիս, որ հարվածների նպատակը եղել է ահաբեկել քաղաքացիական բնակչությանը, ստեղծել խուճապ և ստիպել նրանց՝ լքելու իրենց տները։

Հադրութի շրջան

Թաղասեռ գյուղի բնակիչ Սպարտակ Ավագյանը 2020թ.-ի սեպտմբերի 27-ին՝ ժամը 810-820-ին, եղել է իրենց բակում, պատրաստվում էր աշխատանքի գնալ Հադրութ.

> «Հայաթում կանգնած էի, հետո օդում երկու անգամ կրակոց եկավ, երկու հատ իրար հետևից, թափով հենց։ Կանգնեցի՝ նայեմ, մինչև երկու վայրկյանը ռակետ խփեց կողքիս, ու արդեն ոտքերս, ձեռքերիս, փորիս տակը բեկորներ են։ Մի մետր էս կողմով խփավ, մի ավելի մոտիկ էլ էս մի աջի կողմովս կպավ։ Ռազմական կառույցներ մոտակայքում չեն եղել։ Ինչ ռակետ էր՝ չգիտեմ, տրուբայի նման էր, ընկել եմ կողքի վրա, մի կերպ նստեցի ավտոն, իջա հիվանդանոց»։[809]

Սպարտակը ապրել է մենակ։ Հետո է իմացել, որ տունը ավիրվել է, վնասվել է տան տանիքը, պատուհանների ապակիները ջարդվել են. «Դե՛ հարևանն ա գնացել հայաթ, անասուն-բան էր մնացել, որ կեր տա, զանգի, ասեցի որ կեր տա, ասեց կրիշան լավ պոկված ա»։[810]

Սպարտակը փաստել է. «Թաղասեռը Հադրութից 3 կմ է հեռու է՝ դեպի հյուսիս, գյուղում ոչ մի ռազմական օբյեկտ չկա, ոչինչ չկա, սովորական գյուղ է։ Մեր գյուղում էլի են խփել, հիվանդանոց բերեցին մի մեծ մարդու՝ Մելքումյան Էդիկին. ձեռքը կոտրվել էր, մի էրեխու բերեցին մեր վերևի գյուղից»։[811] Ըստ Սպարտակի վկայության՝ իր տունը գտնվել է զորամասից մոտ 3 կմ հեռավորության վրա։

Սպարտակի վկայությունները հաստատում է ԱՀ դատախազության տրամադրած տեղեկատվությունը, որի համաձայն՝ Սպարտակը և Էդիկը ստացել են բեկորային վնասվածքներ առավոտյան հրետակոծության հետևանքով։ Թաղասեռ գյուղի թիրախավորումը լրացուցիչ փաստում է «Factor TV» թղթակցի՝ սեպտեմբերի 29-ի տեսանյութը։

809 Հարցազրույց Հադրութի բնակիչ Սպարտակի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.։

810 Նույն տեղում։

811 Նույն տեղում։

Պատկեր 15.48. Թաղասեր գյուղը հրետանային հարվածից հետո, 2020թ. (Աղբյուրը՝ Factor TV):

Կադրերում երևում են գյուղի վրա ընկած համազարկային կրակի ռեակտիվ համակարգի արկը և ԱԹՍ-ի մնացորդները: Փաստահավաք խումբը երկու անգամ զրուցել է Սպարտակ Ավագյանի հետ և որևէ հակասություն չի հայտնաբերել տրամադրված տեղեկատվության մեջ, այդ իսկ պատճառով բացակայում է որևէ հիմք՝ կասկածելու նրա վկայության հավաստիությանը: Բացի այդ, «Factor TV»-ի լրատվական թողարկումը ևս հաստատում է գյուղի թիրախավորման փաստը համազարկային կրակի ռեակտիվ համակարգից:

Աիդա Հայրապետյանի տունը Հադրութում վնասվել է սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան ժամը 10-ի մոտակայքում: Աիդան այդ ժամանակ հարևանների հետ գտնվել է տան նկուղում (այնտեղ եղել են 30 մարդ, որոնցից 10-ը կամ 12-ը՝ երեխաներ): «Ուժեղ պայթունի ձայն լսվեց, և այնպիսի տպավորություն էր, որ տունը քանդվեց»,- հիշել է Աիդան: Աիդայի ամուսինը դուրս է եկել նկուղից և տեսել, որ արկը ընկել է տան մի կողմի վրա և վնասել է պատը, ամբողջությամբ քանդել տանիքը: Աիդան պատմել է, որ իր և հարևանի տներն իրար կպած են, և արկն ընկել է հարևանի տան վրա, որն ամբողջությամբ քանդվել է:

Ականատեսների վկայությունների իսկությունը պարզելու նպատակով փաստահավաք խումբն ուսումնասիրել է Հադրութում ադրբեջանցիների կողմից իրականացված հարձակումների վերաբերյալ չորս լրագրողական տեսանյութ, որոնք փաստում են Հադրութի մշակույթի տանը, բնակելի տներին, կից շինություններին պատճառած վնասները պատերազմի առաջին օրերին:[812] Արցախի հեռուստատեսության լրատվականի թղթակցին հոկտեմբերի 6-ին տված հարցազրույցում Հադրութի քաղաքապետ Վահան Սավադյանը հայտնել է, որ քաղաքի ուղղությամբ կիրառվել է օդուժ ու ծանր հրետանի, որի հետևանքով

812 CIVILNET, “Hadrut, Karabakh: The Town at the Heart of the War,” October 1, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=cWRP01dnMKs; CGTN, “Video Shows Aftermath of Shelling in Hadrut, Nagorno-Karabakh Region,” October 8, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=3jeUe-nMwy4.

Պատկեր 15.49. Աիդայի հարևանի տունը, սեպտեմբերի 27, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

վնասվել են քաղաքացիական անձանց տներ, ջրի խողովակներ և էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցը: Աիդա Հայրապետյանի վկայությունը հաստատվում է «CivilNet»-ի թղթակցի տեսանյութով, որտեղ երևում է Աիդայի հարևանի տունը՝ ավիրված վիճակում:[813]

Միջադեպերի մասին հաղորդումները արժանահավատ են, և փաստահավաք խումբը չի հայտնաբերել որևէ ապացույց առ այն, որ Աիդայի և Սպարտակի տները եղել են ռազմական կառույցներ կամ նրանց մոտակայքում եղել են ռազմական թիրախներ: Այդ տները հստակ դասակարգվում են որպես քաղաքացիական շինություններ, որոնք չէին կարող որևէ վտանգ ներկայացնել ադրբեջանական զինված ուժերի համար: Տեղեկատվության աղբյուրի համաձայն՝ հարձակումներն իրականացվել են «Գրադ» արկերով և հրետանային միջոցներով:

Ստեփանակերտ

Պատերազմի ընթացքում պարբերաբար թիրախ է դարձել Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը: Հարվածները սկսվել են 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին և շարունակվել պատերազմի ամբողջ ընթացքում: Լայնածավալ ռմբակոծությունների ընթացքում կիրառվել է զենքերի մեծ տեսականի, այդ թվում՝ ռեակտիվ հրետանի, ավիացիոն զինամթերք և հրետանային կայանքներ: Փաստահավաք խումբը հավաքել է Ստեփանակերտի 52 բնակչի վկայություն և հարցազրույց իրականացրել 24 բնակչի հետ: Վկայություններն ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ Ստեփանակերտի բնակիչները կրակոցների և պայթուների ձայները լսել են սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան ժամը 650-730-ի սահմաներում, որից հետո միայն միացել է Ստեփանակերտի օդային տագնապի ազդանշանը:

813 CIVILNET, “Hadrut, Karabakh: The Town at the Heart of the War.”

Պատկեր 15.50. 2020 թվականի հոկտեմբերի 4-ին ադրբեջանական ինքնաթիռի հարվածից առաջացած ձագարը Ստեփանակերտի բնակելի թաղամասում՝ Սասունցի Դավիթ փողոցում (Աղբյուրը՝ «Human Rights Watch»):

Էլմիրա Բաբայանը սեպտեմբերի 27-ին՝ վաղ առավոտյան, որդու հետ գտնվել է Ստեփանակերտի շուկայում, որտեղ որպես անհատ ձեռներեց վաճառում էր միրգ ու բանջարեղեն: Ժամը 0630-ից 0700-ի սահմաններում լսել է ռմբակոծության ձայներ: Նույն օրը որդու զոքանչի ձեռքը վնասվել է բեկորից: Դեպքը տեղի է ունեցել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) առաքելության շենքի մոտակայքում: Էլմիրա Բաբայանը Ստեփանակերտում մնացել է մինչև հոկտեմբերի 7-ը: Նա նշում է, որ այդ ընթացքում ԿԽՄԿ առաքելության գրասենյակի շենքը (Սասունցի Դավիթ փողոց, շ. 50, ք. Ստեփանակերտ) կրկնակի թիրախավորվել էր:

Արմենուհի Քոչարյանը և Նարինե Խաչատրյանը փաստահավաք խմբին հայտնել են, որ ԿԽՄԿ առաքելության գրասենյակի շենքի մոտակայքում տեսել են քանդված բնակելի տուն: Ըստ հավաքած վկայությունների՝ ԿԽՄԿ գրասենյակի մոտակա տարածքը կրկին թիրախավորվել է հոկտեմբերի 4-ից 6-ը: ԿԽՄԿ գրասենյակի մոտակայքում գտնվող բնակելի տան և մեքենայի վնասումները հիմնավորվում են նաև Արցախի տեղեկատվական շտաբի[814] և Էդգար Էլբակյանի[815] հրապարակած լուսանկարներով և տեսնայութով:

Դեկտեմբերի 11-ին հրապարակված զեկույցում «Human Rights Watch»-ը արձանագրել է, որ 2020թ.-ի հոկտեմբերի 4-ին՝ ժամը 1300-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերի հարձակման հետևանքով խոշոր պայթուցիկ սարք է ընկել Սասունցի Դավիթ փողոցի մեջտեղում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակից մոտ 120մ և «Արցախէներգո»-ի գլխավոր մասաշենքից ավելի քան 400մ հեռավորության վրա գտնվող

814 @texekatvakanshtab, “Кадры от 27-го сентября...,” September 29, 2020, Telegram video, /1237 https://t.me/texekat-vakanshtab/1237.

815 @elbakyan_edgar, “ЭКСКЛЮЗИВ! Азербайджан пытался обстрелять здание миссии Красного Креста в жилом квартале Степанакерта в первый день военной агрессии,” September 29, 2020, https://t.me/elbakyan_edgar/228.

բնակելի թաղամասում: Հարվածը եղել է հարձակումների այն շարքից, որը վնասել է Ստեփանակերտի էլեկտրակայանը, ինչպես նաև բնակելի շենքեր և ձեռնարկություններ: Քանի որ շատ հարվածներ, որոնք հասցվել են մեկ րոպեից քիչ տևած ժամանակահատվածում և ուղղված են եղել մի քանի բնակելի շենքերի, այլ ոչ թե ռազմական թիրախների, կարելի է ենթադրել, որ հարձակումը կարող էր լինել ռմբակոծություն, որը խախտում է պատերազմական օենքները: Հարձակումը «Human Rights Watch»-ը որակել է որպես ոչ տարբերակված:[816]

Սասունցի Դավիթ փողոցում վնասումների ամենամանրամասն նկարագրությունը ներկայացված է Ստեփանակերտի էլեկտրակայանի վրա հարձակումների մասին արված հետաքննության մեջ:

Ստեփանակերտի Ալեք Մանուկյան փողոցում գտնվող Լյուդմիլա Պետրոսյանի տունը վնասվել է սեպտեմբերի 27-ին: Նա պատմել է.

> «...ուժեղ դմբոց եկավ, էն բազարի կողմից սև ծուխ բարձրացավ, էդ ծուխը որքան գնում, այնքան շատանում էր, որքան գնում, այնքան շատանում էր, նայում էինք էդ ծխին, տեսնենք՝ որտեղ ա էլի, էդ րոպեին մի հատ դմբոց եկավ էլի նորից, մինչև մի 5 րոպե էլ չքաշեց էլի՝ երկրորդ հարվածը արդեն մեր շենքին էր... Մեկ էլ տեսնենք՝ պատուհանները արդեն թռչկոտում են տան մեջ, ես էլ դուրս եկա միանգամից: Ամուսնուս քիթը վնասվել էր, պատռվել էր, հետո մեր աղջկա ոտքերը սաղ ապակի էին, ասկոլկա, դե՛, տարանք նկուղում, մաքրեցինք»:[817]

Ալեք Մանուկյան փողոցին երկրորդ հարվածը եղել է հոկտեմբերի 4-ին, որի հետևանքով զոհվել է Արկադի Լալայանը: Արկադի Լալայանի որդին՝ Նվեր Լալայանը, հոր մահվան մասին իմացել է հեռախոսով, քանի որ եղել է զինվորական ծառայության մեջ: Արկադի Լալայանը գտնվել է իր բնակարանի պատշգամբում, որին հարվածել ու պայթել է արկը: Նվերը նշում է, որ ռազմական որևէ կառույց մոտակայքում չի եղել, իսկ շտաբը գտնվել է մոտ 1 կմ հեռավորության վրա:

Այս վկայությունները հաստատվել են նաև Արցախի Հանրապետության դատախազության հաղորդագրությամբ, որտեղ ասվում է, որ ադրբեջանական զինված ուժերը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հրետակոծության են ենթարկել Ստեփանակերտի Ալեք Մանուկյան փողոցը: Հարձակման պահին տվյալ փողոցի 7-րդ շենքի բնակիչ Արկադի Լալայանը գտնվել է իր բնակարանի պատշգամբում, դիրքով՝ դեպի արկի պայթյունի ուղղությունը:

Փաստահավաք խումբը դեկտեմբերին այցելել է Ալեք Մանուկյան փողոց և փաստագրել այնտեղ գտնվող շենքերին հասցված վնասները: Լյուդմիլայի բնակարանը գտնվում է Պատկեր 15.51-ում երևացող շենքում:

Հոկտեմբերի 31-ին՝ առավոտյան, հրթիռակոծվել են Ստեփանակերտի շուկան և հարակից փողոցի տները, չնայած այն հանգամանքին, որ նախօրեին՝ հոկտեմբերի 30-ին, ժնևում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ և մասնակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ հատուկ շեշտվել է Արցախի խաղաղ բնակչության և քաղաքացիական ենթակառուցվածքների դիտավորյալ թիրախավորման անընդունելի լինելը: Նախնական

816 “Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh.”

817 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Լյուդմիլայի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

Պատկեր 15.51. Ալեք Մանուկյան փողոց 7, հրետակոծությունից հետո, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

տվյալներով կիրառվել է «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ: Տեղական և արտասահմանյան լրագրողները նկարահանել են հրթիռակոծության հետևանքները:[818]

Ռոզետա Դադայանի վնասված տունը գտնվում է Ստեփանակերտի շուկայից 100 մետր հեռավորության վրա՝ Վազգեն Օվյան 16 հասցեում: Ռոզետան պատմում է, որ տագնապի ազդանշանի ժամանակ գնում էր աղջկա տուն, քանի որ այնտեղ նկուղ կար, և կարող էր ավելի ապահով լինել: Ռոզետայի և աղջկա տները իրար մոտ էին: Պայթյունի ժամանակ Ռոզետան եղել է աղջկա տանը:

Ռոզետան հիշում է, որ իրենց տունը վնասվել էր նաև նախորդ պատերազմի ընթացքում, և հազիվ էին հասցրել վերանորոգել այն, երբ նորից վնասվեց՝ այս անգամ ավելի շատ: Ռոզետայի խոսքերով՝ հոկտեմբերի վերջերին՝ ցերեկվա ժամերին, շուկայի հարևանությամբ վնասվել են մի քանի տներ: Այդ օրը, տագնապի ձայնը լսելուց անմիջապես հետո, ինքն ու աղջիկը վազել են ապաստարան, սակայն մինչև տեղ կհասնեին, տեղի է ունեցել մեկ այլ պայթյուն. «Մնացինք հատակին ընկած, ծխի մեջ կորած: Դուրս եկա ապաստարանից, տեսա ծխի դանդաղ իջնող ամպը»,- պատմել է Ռոզետան:[819] Նա աղջկա հետ ապաստարանից դուրս է եկել պայթյունից մոտ 15 րոպե անց, երբ տեղում արդեն ներկա էին լրագրողներ:

818 @texekatvakanshtab, “Новые кадры результатов ракетного обстрела Центрального рынка Степанакерта и жилого дома: Фотограф - Давид Каграманян,” October 31, 2020, Telegram video, https://t.me/KarabakhRecords/1473; Инфотека24 (@infoteka24), “Работали из РСЗО «Град» Репортаж @wargonzo с центрального рынка Степанакерта, обстрелянного рано утром ВС Азербайджана,” October 31, 2020, Telegram video, https://t.me/infoteka24/10404; Инфотека24 (@infoteka24), “Премьер-министр Армении Никол Пашинян написал в Твиттере...,” October 31, 2020, Telegram video, https://t.me/infoteka24/10419.

819 Հարցազրույց Ստեփանակերտի բնակիչ Ռոզետայի հետ, 16 դեկտեմբերի, 2020թ.:

Պատկեր 15.52. Ստեփանակերտի շուկայում հայտնաբերված զինամթերքի բեկոր, 31 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ ԼՂԸ տեղեկատվական կենտրոնի տելեգրամյան ալիք, լուսանկարը՝ Դավիթ Ղահրամանյանի):

Այն հարցին, թե ինչո՞ւ են ռմբակոծել իրենց բնակելի տները, Ռոզետան պատասխանել է, որ հավանական պատճառը թերևս եղել է այն, որ իրենց տները գտնվել են քաղաքի կենտրոնում, որտեղից ճանապարհները գնում են ծննդատուն և հանրապետական հիվանդանոց:

ԱՀ ՆԳՆ արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը հաղորդել է, որ ավերվել է շուկայի մի մասը, նյութական մեծ վնասներ են պատճառվել խաղաղ բնակչությանը: Ավերվել է նաև բնակելի տուն՝ ամբողջ գույքով: Մասնակի վնասվել են նաև հարևանությամբ գտնվող շենքի բնակարաններ: Ըստ ծառայության հաղորդման՝ եղել է մի քանի պայթուն:[820] Ռազմական գործողությունների ավարտից հետո՝ դեկտեմբերին, փաստահավաք խումբն այցելել է շուկային կից փողոցները և արձանագրել, որ չնայած քաղաքի բնակիչներն արդեն սկսել են մաքրման և վերականգնման աշխատանքները, սակայն մոտակա տները, ճանապարհները, սննդամթերքի խանութները և այլ շենքեր դեռևս մնում են շատ լուրջ վնասված:

Հոկտեմբերի 16-ին արկը հարվածել և ոչնչացրել է նաև Վլադիմիր Սարգսյանի՝ Պուշկինի 19 հասցեում գտնվող տունը: Հարվածի օրը տանը եղել է միայն Վլադիմիրի 82-ամյա մայրը, ով գամված է եղել անկողնուն և չի ցանկացել գնալ ապաստարան: Մինչ այդ Վլադիմիրի ընտանիքի մյուս անդամները տեղափոխվել են Հայաստան, իսկ ինքը և մայրը մնացել էին Արցախում: Օդային հարվածի մասին Վլադիմիրին հեռախոսով տեղեկացրել է հարևանը, իսկ տուն հասնելուն պես տեսել է, որ տունը, բացի այն հատվածից, որտեղ գտնվել է մայրը, ամբողջությամբ քանդվել է: Վլադիմիրի մորը տեղափոխել են հիվանդանոց, թեև նա շատ լուրջ վնասվածքներ չէր ստացել:

820 «Առավոտյան հրթիռակոծվել է Ստեփանակերտը. թիրախավորել են շուկան, բնակելի տներ. լուսանկարներ», Sputnik Արմենիա, 31 հոկտեմբերի, 2020թ., Լուրեր, https://armeniasputnik.am/20201031/stepanakert-hrtirakocutyun-ar-cax-paterazm-25133744.html

Պատկեր 15.53. Ռոզետայի տունը հարվածից հետո (ներսից և դրսից), 31 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 15.54. Ռոզետայի հարևանի տունը հարվածից հետո, 31 հոկտեմբերի, 2021թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Վլադիմիրը նշում է, որ բացառությամբ մոր գտնված հատվածից, տունը ամբողջովին քանդվել է. «Մի հատ պատ ա մնացել, մեկ էլ պոլի կեսը: Ռումբն ընկել ա հենց տան վրա»: Վլադիմիրն ասում է, որ մոտակայքում ռազմական օբյեկտներ չկան:[821]

821 Վլադիմիրի տան լուսանկարները հասանելի են հղումով՝ https://mega.nz/folder/C1kxnLpQ#hNzzRo2mMn-SqPqV9H5wryA

Պատկեր 15.55. Վլադիմիր Սարգսյանի՝ հրետակոծությունից ավերված տունը, 16 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

Պատկեր 15.56. Վիլյամ Սարոյան փողոցի 7 հասցեում՝ ասֆալտապատ մայթի մեջ խրված 9M5 տիպի «Երկիր-երկիր» 300մմ հրթիռի պոչի հատվածը, Ստեփանակերտ, 5 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Փոլ Ռոնցհայմերի թվիթերյան էջ): I).

«Հետք»-ի թղթակցի պատրաստած տեսանյութում երևում է Վլադիմիր Սարգսյանի՝ ամբողջությամբ ավիրված տունը:[822]

Փաստահավաք խումբը, բացի ավերված տների վերաբերյալ նյութերից, հնարավորության դեպքում ուսումնասիրել է նաև Ստեփանակերտի բնակելի շենքերի և բնակելի թաղամասերի վրա հարձակումների մասին հայկական և օտարերկրյա աղբյուրներում առկա տեղեկությունները:

Սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան, Ստեփանակերտի բնակելի թաղամասի վրա ընկել է ադրբեջանական բանակի կողմից արձակված «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌՀ) արկ, որի հետևանքով վնասվել է բազմաբնակարան շենք: Շենքը գտնվում է Կամոյի 2-րդ նրբանցք հասցեում, որի մոտակայքում կան ևս 3 բազմաբնակարան շենքեր: Ռազմական թղթակից Սեմյոն Պեգովի[823] և Արցախի տեղեկատվական շտաբի[824] հրապարակած տեսանյութերը հաստատում են բնակելի թաղամասի թիրախավորումը ՀԿՌՀ-ից:

822 Անի Սարգսյան, Հակոբ Պողոսյան, «Ադրբեջանը կասետային ռումբերով հրթիռակոծել է Ստեփանակերտը. 3 հոգի վիրավորվել է (տեսանյութ)» Հետք, 17.10.2020թ., https://hetq.am/hy/article/123211

823 WarGonzo (@wargonzo), "Карабахские дети рассказывают об обстрелах ВС Азербайджана РСЗО «Град» работал по жилым кварталам в центре Степанакерта," September 28, 2020, Telegram video, https://t.me/wargonzo/3485.

824 Ազատություն, «Հրետակոծության Հետևանքով Ստեփանակերտի Վնասված Բնակելի Տները. Արցախի Տեղեկատվական Շտաբի Տեսանյութը», սեպտեմբերի 27, 2020թ., https://www.youtube.com/watch?v=4coZ5IDL09o.

Մեկ այլ դեպքում՝ հոկտեմբերի 6-ին, շվեյցարացի անկախ լուսանկարիչը և ֆրանսիական ռադիոյի թղթակիցը իրենց հյուրանոցից 50-70մ հեռավորության վրա հայտնաբերել են «Սմերչ»-ի չպայթած երկու արկ:[825]

Հոկտեմբերի 4-ին «Kostnews»-ը նկարահանել է Ստեփանակերտի կենտրոնական հատվածում «Սմերչ» արկի ընկնելու պահը (Տե՛ս Պատկեր 15.58),[826] իսկ հոկտեմբերի 5-ին՝ չպայթած «Սմերչ» արկի պոչը՝ Ստեփանակերտի փողոցներից մեկում (Տե՛ս Պատկեր 15.57):[827]

Հոկտեմբերի 5-ին գերմանական «Bild» օրաթերթի և «WarGonzo»-ի ալիքի թղթակիցները նկարահանել են չպայթած «Սմերչ» արկ փողոցում, որտեղ կան բնակելի շենքեր, մեքենաներ և մանկապարտեզ (Տե՛ս Պատկեր 15.56):[828] Քարտեզների վերլուծության և Ստեփանակերտի բնակիչների հետ զրույցների միջոցով պարզվել է հրթիռի ընկնելու ճշգրիտ վայրը՝ Վիլյամ Սարոյան փողոց 7:

Պատկեր 15.57. Ստեփանակերտի փողոցներից մեկի ասֆալտապատ մայթի մեջ խրված 9M5 տիպի «Երկիր-երկիր» 300մմ մեկ այլ արկի պոչի հատվածը, 5 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Kostnews»-ի տելեգրամյան ալիք):

825 "Журналисты нашли в Степанакерте два неразорвавшихся снаряда 'Смерч,'" РИА Новости, October 6, 2020, https://ria.ru/20201006/stepanakert-1578412361.html.

826 @sashakots, "Ракета «Смерча» влетает в газон. И не срабатывает. Грунт очень мягкий, ушла полностью в землю," October 4, 2020, Telegram video, https://t.me/sashakots/17141.

827 @sashakots, "Степанакерт, свежие примеры применения РСЗО Смерч по городк," October 5, 2020, Telegram video, https://t.me/sashakots/17168; @sashakots, "Пригород Степанакерта и сам город снова утром были под огнем РСЗО Смерч. Город снова обесточен," October 5, 2020, Telegram video, https://t.me/sashakots/17166.

828 Karabakh Records (@KarabakhRecordbot), ""Это упало вчера вечером, очень близко к детскому саду", написал в Твиттер репортер немецкого издания Bild Paul Ronzheimer," October 6, 2020, Telegram video, https://t.me/KarabakhRecords/332; WarGonzo (@wargonzo), "ЭКСКЛЮЗИВ" И снова хвостовики азербайджанских РСЗО Торчат по всей столице Арцаха," October 5, 2020, Telegram video, https://t.me/wargonzo/3628.

Հոկտեմբերի 4-ին և 5-ին օգտագործված և փաստագրված զենքերի տեսակը պարզելու նպատակով փաստահավաք խումբը դիմել է ԲԱՏՀ մասնագետին՝ փորձագիտական կարծիք հայտնելու խնդրանքով: Վերջինս մեծ վստահությամբ փաստել է, որ, Պատկերներ 15.56 և 15.57-ից դատելով, Ստեփանակերտի փողոցներին հարվածել են 9M5 դասի «Երկիր-երկիր» 300մմ արկերի ուժային կայանքի բեկորներ: ԲԱՏՀ մասնագետի կարծիքով հավանական է, որ արկերն արձակվել են 9K58-շարքի «Սմերչ» ՀԿՌՀ-ից:

ԲԱՏՀ մասնագետը նաև մեծ վստահությամբ եզրակացրել է, որ մայթին հարվածելու պահին առնվազն մեկ զինամթերքի ուժային կայանքին կցված չի եղել մարտագլխիկ: Պատկեր 15.58-ում երևում է «Սմերչ» արկի ուժային կայանքի հատվածը՝ գետնին ընկնելիս: Կարելի է ենթադրել, որ առնվազն մեկ արկ ամենայն հավանականությամբ ունեցել է առանձնացող մարտագլխիկ կամ կրել է մարտական լիցք:

Պատկեր 15.58. 9M5 տիպի «Երկիր-երկիր» 300մմ արկի հատված: Նշենք, որ առջևի հատվածում բացակայում է աերոդինամիկական ձև ունեցող մարտագլխիկը, ինչը վկայում է առանձնացող մարտագլխիկի տարբերակ կիրառելու մասին, 4 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Kotnews»-ի տելեգրամյան ալիք):

Բացի այդ, Ստեփանակերտի բնակելի թաղամասերից մեկում գետնին հարվածելուց հետո լուսանկարվել է իսրայելական արտադրության «Elbit Systems»-ի 306մմ «Երկիր-երկիր» հեռահար հրետանու (EXTRA) հրթիռի մի հատված: Զինատեսակի մնացորդների պատկերը կարելի է տեսնել Պատկեր 15.59-ում: Փաստագրված զինատեսակի ուրվագիծը համապատասխանում է իսրայելական արտադրության «Elbit Systems» 306 մմ «Երկիր-երկիր» հեռահար հրետանու (EXTRA) հրթիռին: Գոյություն ունեն նույնականացման մի քանի առանցքային ֆիզիկական հատկանիշներ, որոնք հուշում են, որ Ստեփանակերտում

փաստագրված զինատեսակի մնացորդները պատկանում են «Elbit Systems»-ի հեռահար հրետանու (EXTRA) հրթիռին: Օրինակ, զինատեսակի հիմնական իրանի սև պատյանը համապատասխանում է գովազդային նյութերում և լրատվամիջոցներում ցուցադրված հեռահար հրետանու (EXTRA) հրթիռների պատյանին:[829]

Կարևոր է նշել, որ հակամարտող կողմերից միայն Ադրբեջանն է իր զինանոցում ունեցել EXTRA հրթիռներ:[830] Այս զինատեսակներն արձակվում են «Elbit Systems»-ի LYNX արձակման կայանի միջոցով, որը կարող է կրել նաև այլ տրամաչափի, այդ թվում՝ 122 մմ, 160 մմ և 306 մմ հրթիռներ:[831] Տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանն ունի 6 միավոր LYNX համակարգ, որոնցից յուրաքանչյուրը կրում է 8 EXTRA հրթիռ: [832]Ստոկհոլմի խաղաղության հիմնախնդիրների հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) տվյալներով՝ Ադրբեջանի զինված ուժերը 2006 թվականին ստացել են 6 հատ LYNX համակարգ և նույն տարում ձեռք բերել լրացուցիչ 50 հրթիռներ, որոնք առաքվել են 2008 և 2009 թվականներին:[833] Հաշվի առնելով, որ պատերազմի ժամանակ միայն Ադրբեջանն է կիրառել այս զինատեսակը՝ ԲԱՏՀ մասնագետը չափավորից բարձր վստահությամբ եզրակացրել է, որ զինատեսակն արձակվել է ադրբեջանական LYNX համակարգից:

Պատկեր 15.59. Ստեփանակերտում լուսանկարված EXTRA հրթիռի իրանը, 2020թ. (Աղբյուրը՝ TACC/AP/ Դմիտրի Լովեցկի):

829 “Rocket Artillery Catalog” (Elbit Systems-Land, n.d.), https://elbitsystems.com/media/elbit-systems-land-rocket-artillery-catalog.pdf

830 «Ռազմական հավասարակշռություն 2020»:

831 “E-LynXTM Mobile Tactical SDR Solutions,” Elbit Systems, accessed April 14, 2022, https://elbitsystems.com/products/communication-systems/software-defined-radios/.

832 “SIPRI Arms Transfers Database,” Stockholm International Peace Research Institute, accessed April 14, 2022, https://www.sipri.org/databases/armstransfers.

833 Տես նույն տեղում, SIPRI, Annex 2

«IMI Systems»-ը[834] գովազդում է EXTRA հրթիռները՝ որպես 10 մետրից ավելի քիչ շրջանային հավանական շեղում ունեցող բարձր ճշգրտության համակարգ, որի հեռահարությունը 30-ից 150 կմ է:[835] Այն կառավարվում է գլոբալ տեղակայման համակարգի (GPS) և նավագնացության իներցիոն համակարգի (INS) միջոցով, պահանջում է լրացուցիչ ղեկավարման և կառավարման (C2) միջոցներ, ներկառուցված տուրբաճնշակի և զենքի քթամասում տեղադրված թևիկների հաշվին կարող է մանևրել թռիչքի ընթացքում:[836] Զինատեսակն ունի մարտալիցքի մի քանի տարբերակ, այդ թվում՝ միալիցք 120կգ ներթափանցող և բեկորային մարտագլխիկներ, ինչպես նաև բեռնափոխադրող տարբերակ, որը կարող է ցրել մինչև 400 հակատանկային/հակահրետանային ռումբ: Քանի որ այդ զենքի իրանի հիմնական մասը մնում է անվնաս, ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ մինչև թիրախին հարվածելը նրա մարտագլխիկն առանձնացել է ուժային կայանի հատվածից: Հաշվի առնելով Ադրբեջանի զինված ուժերի զինանոցում առկա հրթիռների սահմանափակ քանակը՝ ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարում, որ զինամթերքը կիրառվել է կարևոր նշանակություն ունեցող թիրախի ոչնչացման նպատակով: «Human Rights Watch»-ի պնդմամբ՝ այս համակարգը կիրառվել է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին Մարտակերտի զինվորական հոսպիտալին հարվածելու համար:[837]

Առաքելության ընթացքում փաստահավաք խումբը անկախ լրագրողներից և Արցախի բնակիչներից ստացել է բազմաթիվ լուսանկարներ, որտեղ երևում են Շուշիի ու Ստեփանակերտի փողոցներում, տների մոտ ընկած տարբեր զինատեսակների և հրթիռների մնացորդներ: Որոշ նմուշներ ուղարկվել են ԲԱՏՀ մասնագետին՝ փորձագիտական կարծիք ստանալու նպատակով: Պատկերում երևում է 300մմ հրթիռի ուժային կայանքի հատվածը, որը թաղվել է այգում: Պատկերներ 15.60-ում և 15.61-ում երևում են պատճառված վնասը և զինամթերքի մնացորդները:

Ի պատասխան՝ ԲԱՏՀ մասնագետը մեծ վստահությամբ նշել է, որ Շուշիի խաղաղ բնակչի այգում ընկել է 9M5 դասի «Երկիր-երկիր» 300մմ հրթիռի ուժային կայանքի հատվածը: Նրա կարծիքով՝ հավանական է, որ հրթիռն արձակվել է 9K58-դասի «Սմերչ» ՀԿՌՀ-ից:

ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ Շուշի քաղաքի այգուն հարվածելու պահին այդ զենքի ուժային կայանքի հատվածին կցված չի եղել մարտագլխիկ: Սրանից կարելի է եզրակացնել, որ արկը հավանաբար ունեցել է առանձնացող մարտագլխիկ կամ կրել է մարտական լիցք:

9M5 դասի կրիչ արկերը իրենց ռազմական առանձնահատկություններով մոտ են 9M55K1 (ոչ կոնտակտային հակատանկային զինատեսակ, «Մոտիվ-3Մ»), 9M55K4 (հակատանկային ականներ), 9M55K5 (կրկնակի նշանակության ֆուգասային/ ֆուգասահակատանկային պայթուցիկ լիցքով), 9M55K6 (ոչ կոնտակտային հակատանկային զինատեսակ, 9H268)

834 EXTRA հրթիռի սկզբնական արտադրողը՝ IMI Systems-ը, ձեռք է բերվել Elbit Systems-ի կողմից 2018 թվականին: IMI Systems-ի կողմից նախկինում արտադրված զինամթերքը համարվում է «Elbit Systems»-ի զինամթերք: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «Elbit Systems-ի հաշվետվությունները 2018 թվականի չորրորդ եռամսյակի և ամբողջ տարվա համար, «Elbit Systems»-ի կայքը հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 14-ին, https://elbitsystems.com/pr-new/elbit-systems-reports-fourth-quarter-and-full-year-2018-results/

835 Շրջանային հավանական շեղման, անվրեպության և ճշգրտության մանրամասն քննարկման համար տես Cross et al., 2016, pp. 28-37: Նշենք, որ «ճշգրտություն» և «անվրեպություն» հասկացությունները հստակ սահմանված են, իսկ «ճշգրիտ» և «անվրեպ» բնութագրիչների հարցում ընդհանուր համաձայնություն չկա:

836 "Extended Range Artillery (EXTRA)," GlobalSecurity.org, հասանելի է եղել 2022թ.-ի ապրիլի 14-ին, https://www.globalsecurity.org/military/world/israel/extra.htm.

837 Williamson, "Unlawful Attacks on Medical Facilities and Personnel in Nagorno-Karabakh." Հարկ է նշել, որ զեկույցում առկա են նկատելի հակասություններ, այդ թվում՝ LYNX համակարգի սխալ նույնականացում և EXTRA հրթիռների օգտագործման ոչ հստակ ստուգում:

Պատկեր 15.60. Շուշի քաղաքի տներից մեկի այգում թաղված 9M5 տիպի 300մմ «Երկիր-երկիր» հրթիռի պոչի հատվածը, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

Պատկեր 15.61. Շուշի քաղաքի տներից մեկի այգում թաղված 9M5 տիպի 300մմ «Երկիր-երկիր» հրթիռի պոչի հատվածը, 2020թ. (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

և 9M55K7 (ոչ կոնտակտային հակատանկային զինատեսակ) արկերին: Բացի այդ, գոյություն ունեն արկերի 9M55Φ և 9M528 տարբերակներ, որոնք ունեն առանձնացող ֆուգասաբեկորային մարտագլխիկներ, որոնք թռիչքի ավարտին անջատվում են ուժային կայանքի հատվածից:[838]

Նկատի ունենալով հողում թաղված և անվնաս մնացած ուժային կայանքի հատվածը՝ ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ զինատեսակն ունեցել է առանձնացող մարտագլխիկ, կամ մարտագլխիկը չի պայթել: Ըստ երևույթին պատճառած վնասը շատ մեծ չի եղել: Արձանագրված պատկերը հուշում է, որ զինատեսակի ուժային կայանքի հատվածն առանձնացել է մարտագլխիկից և վայրէջք կատարել, նախքան մարտագլխիկը կհարվածի թիրախին, ինչպես լինում է սովորաբար: Հրթիռի դիրքը քաղաքացիական կառույցների նկատմամբ ցուցադրված է Պատկերներ 15.62-ում:

Մարտակերտում հոկտեմբերի 17-ին (Ադրբեջանի կողմից անտեսված երկրորդ հրադադարի օրը), արկն ընկել է Սոնա Գալստյանի տան բակում գտնվող գոմի վրա՝ ոչնչացնելով բոլոր անասուններին: Միջադեպի ժամանակ տանը եղել է Սոնայի փոքր տեգրը՝ Անանիա Հարությունյանը: Նա քնած է եղել, երբ ժամը 6-ին մոտ արկն ընկել է գոմի վրա: Գոմը գտնվում էր տանից 5 մետր հեռավարության վրա: Անանիան ասել է, որ իրենց տնից 2 կմ շառավղով տարածքում ռազմական որևէ կառույց չկա. միայն բնակելի թաղամասեր են:[839]

838 "300-Mm 'Smerch' Multiple Rocket Launcher System."

839 Ավերածությունների տեսանյութերն ու լուսանկարները հասանելի են հղումով՝ https://mega.nz/folder/H1EkGZg-J#kB472dvzp_WCWndH79DScw

Պատկեր 15.62. Արկի աշխարհագրական տեղորոշումը/գեոլոկացիան, 2020թ. (Աղբյուրը՝ Google Earth)

Շուշիի մոտ գտնվող Քարինտակ գյուղում նոյեմբերի սկզբին ոչնչացվել են տներ և լրջորեն վնասվել հանրային շենքեր: Քարինտակը գտնվում է Շուշի քաղաքից հինգ կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ Քարինտակ գետի ձախ ափին: Քարինտակը հակառակորդի կողմից ակտիվորեն թիրախավորվել է: Վլադիմիր Առուստամյանը պատմել է.

> «Գյուղի հիվանդանոցի վարիչն եմ, աշխատում եմ նաև որպես ընտանեկան բժիշկ: Մնացել էի գյուղում, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգնություն ցույց տամ: Նոյեմբերի 1-ին 3 պայթյունի շատ բարձր ձայն լսեցինք, դուրս եկանք, տեսանք՝ ուժեղ ծուխ է բարձրանում: Երբ ծուխը հանդարտվեց, տեսանք, որ հակառակորդի անօդաչուի հարվածից 3 տուն քանդվել է և իսպառ ոչնչացել: Դա եղել է նոյեմբերի 1-2-ին: Տները գտնվում էին գյուղի դպրոցից 20-30 մ հեռավորության վրա՝ Մեծ արտ կոչվող թաղամասում: Տեղանքում չեն եղել ռազմական նշանակության կառույցներ, որը կարող էր պատճառ դառնալ ռմբակոծման: Այդ երեք տները իսպառ ոչնչացվել են. այն տպավորությունն է, որ կարծես այդ տարածքում ոչինչ անգամ չի էլ եղել: Դպրոցը նույնպես վնասվել է. քանդվել են պատերը, տանիքը, պատուհանների ապակիները փշրվել են: Իմ՝ այնտեղ եղած ժամանակ պայթեցվել է 6 տուն, դպրոցի շենքի մի մասը, իսկ համայքապետարանի շենքի կողքին գտնվող տունը լրիվ ավերվել է»:[840]

Հարցվողը նշել է, որ հարվածները եղել են ԱԹՍ-ներից և համազարակային կրակի ռեակտիվ համակարգից:

Վլադիմիր Առուստամյանի տունը գտնվում է Շենամեջ կոչվող թաղամասում՝ դպրոցից 200մ հեռավորության վրա՝ դեպի Շուշի: Նոյեմբերի 1-2-ին նրա տունը նույնպես վնասվել է հրետակոծությունից: Տան բակում, ինչպես նաև բակից 10մ հեռավորության վրա տանտերը տեսել է ռումբի մեծ բեկորներ: Նմանատիպ բեկորներ նա տեսել է նաև դպրոցի ցանկապատից 10մ հեռավորության վրա: Ըստ հարցվողի՝ բեկորները եղել են «Սմերչ»-ից արձակված արկերի հատվածներ:

Շուշի քաղաքում պատերազմի սկզբից այլ բնակելի տներ ևս հարձակման են ենթարկվել: Նունե Շահրամանյանը սեպտեմբերի 26-ի լույս 27-ի գիշերը՝ ժամը 0130-0230-ի սահմաններում, ձայներ է լսել, նայել պատշգամբից ու վերհիշել Ապրիլյան պատերազմից առաջ տիրող իրավիճակը:[841] Նունեն պատմել է, որ ձայները գալիս էին ադրբեջանական դիրքերից, իսկ առավոտյան՝ ժամը 0730-ի սահմաններում, տեսել է Ստեփանակերտի ուղղությամբ իրականացվող հրետակոծությունը: Ժամը 0800-ի սահմաններում Շուշիում միացել են տագնապի ազդանշանները: Երկնքում տեսանելի են եղել անօդաչու թռչող սարքեր: Նունե Շահրամանյանի բնակարանը գտնվել է Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու դիմաց՝ Ղազանչեցոց 72 հասցեում. շենքը թիրախավորվել է երկու անգամ: Նունեն պատմել է, որ առաջին հարվածի հետևանքով տունը չի վնասվել: Հիշել է նաև, որ իրենց շենքը երկրորդ անգամ ռմբակոծվել է հոկտեմբերի 29-ի առավոտյան, երբ իրենք քնած էին ու գտնվում էին նկուղում: Նունե Շահրամանյանը պնդում է, որ իրենց շենքի մոտ որևէ ռազմական կառույց չի եղել. «Պարզապես թշնամին սկսել է հրետակոծել բնակելի շենքերը»,- ասել է նա: Հոկտեմբերի վերջին վերլուծական «Anna-News» լրատվական ցանցի թղթակիցը նկարահանել է Ղազանչեցոց փողոցում գտնվող բազմաբնակարան շենքի ավերածությունները:[842]

840 Հարցազրույց Շուշիի բնակիչ Վլադիմիրի հետ, 10 դեկտեմբերի, 2020թ.:

841 Հարցազրույց Շուշիի բնակիչ Նունեի հետ, 22 փետրվարի, 2021թ.:

842 @anna_news, “Первые кадры с места бомбежки в городе Шуши,” October 29, 2020, Telegram video, https://t.me/anna_news/9177.

Պատկեր 15.63. Ղազանչեցոց փողոցի շենքը՝ հրետակոծությունից հետո, 29 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ ՀՀ ԱԳՆ):

Պատկեր 15.64. Հրետակոծությունից առաջացած ռմբաձագար՝ շենքի մուտքի մոտ, 29 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ ՀՀ ԱԳՆ): .

Պատկեր 15.65. Ղազանչեցոց փողոցը՝ հրետակոծությունից հետո, 28 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Karabakh Records» տելեգրամյան ալիք):

Շուշին Շուշիի շրջանի վարչական կենտրոնն է և, իր աշխարհագրական դիրքով պայմանավորված, ռազմավարական կարևոր նշանակություն ունի: Շուշիում թիրախավորված նպատակային հարձակումներ են իրականացվել Ղազանչեցոց փողոցի ուղղությամբ, որտեղ գտնվում են քաղաքի պատմաշակութային նշանակության առանցքային կառույցներ, բնակելի տներ, դպրոց, հիվանդանոց և քաղաքացիական այլ ենթակառուցվածքներ: Շուշիի բնակիչները փաստահավաք խմբին հայտնել են, որ պատերազմի օրերին մշտապես լսել են ԱԹՍ-ի ձայներ, իսկ առաջին հարվածը եղել է հակաօդային պաշտպանության միջոցների ուղղությամբ, որից հետո միայն թիրախավորվել են քաղաքացիական կառույցները: Ադրբեջանի ռազմական ուժերը բնակելի թաղամասերում կիրառել են նաև ոչ տարբերակված զենք: Ադրբեջանի իրականացրած հարձակումների հետևանքով Շուշիում 12 անձ ստացել է վիրավորում, մեկ անձ էլ զոհվել է: Փաստահավաք խումբը Շուշիում արձանագրել է ոչ տարբերակված հարձակման առնվազն 6 դեպք:

Սոնյա Միքայելյանը պատմել է, որ ընկած արկ է տեսել Վարանդա 1-ին փողոցի և հարևան շենքերի միջև ընկած տարածքում՝ այսպես կոչված Բազարի թաղամասում, որը գտնվում է պարսկական մզկիթի մոտ, իսկ վերջինիս դիմացի շենքն ամբողջությամբ ռմբակոծվել է: Սոնյայի վկայությունների հիման վրա փաստահավաք խումբը, օգտագործելով քարտեզը և երկու լրագրողական նյութ,[843] պարզել է, որ փողոցի վրա ընկել է «Սմերչ» հրթիռ:

Շուշիի մոտ գտնվող Շոշ գյուղը հրետակոծվել է հոկտեմբերի 16-ին՝ ժամը 2220-ին: Յուրի Մելքումյանը ստացել է բեկորային վնասվածք: Նա հստակ հիշում է՝ երբ է եղել հարված, քանի որ 2 օր հետո եկել է տուն, տեսել, որ ժամացույցը ընկած է հատակին, սլաքն էլ ցույց է տալիս 10-ին 20 պակաս: Յուրին պատմում է.

> «Խփել են, տղաս տանը վիրավորվել է գլխից. վնասվել են ականջները, աչքերը: Ես էլ եմ վիրավորվել. միչև հիմա ականջներս չեն լսում: Հիմա, երբ տեսնում եմ տղայիս վիճակը, ասում եմ՝ տղաս է կարևոր, ես մեծ մարդ եմ: «Սմերչ»-ն ընկել է տան բակում՝ տնից 10մ հեռավորության վրա»:[844]

Վնասվել է նաև Յուրիի՝ 1999 թվականի արտադրության մեքենան, որը կայանված է եղել ավտոտնակում: Յուրին ասում է, որ «ադրբեջանցիք ուզում էին, որ մենք դուրս գանք, որ իրանք գան ստեղ ապրեն»:[845]

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է երկու լրատվական տեսանյութ,[846] որտեղ երևում է Յուրիի վնասված տունը: Շոշ համայնքի ղեկավար Էրիկ Աբրահամյանը հայտնել է Արցախի հեռուստատեսության լրատվականի թղթակցին, որ հոկտեմբերի 16-ին հարվածներ են հասցվել Շոշ գյուղի երկու թաղամասի: Հարվածի կենտրոնից 100 մետր շառավղով գտնվող բոլոր տները, մեքենաները, ավտոտնակները վնասվել են, որոշ քաղաքացիական անձինք ստացել են վիրավորումներ:

Էլմիրա Թորոսյանը պատմել է, որ մինչև վիրավորում ստանալն անդադար լսել է գնդակոծության ձայներ և հստակ չգիտեր՝ ինչ զինատեսակ էր օգտագործվում: Գիշերը՝

843 WarGonzo, "ЭКСКЛЮЗИВ Обстрел Иранской Мечети в Шуши," November 1, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=haVUcmcy_qg.

844 Հարցազրույց Ասկերանի շրջանի բնակիչ Յուրիի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

845 Նույն տեղում:

846 ArmeniaTV News, «Արցախի Շոշ Գյուղը Պարբերաբար Ենթարկվել է Ադրբեջանական Հրթիռակոծությունների», 17 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=AYK-BUYsQic

ժամը 4-ին, նա ուժեղ պայթուն է լսել և մտածել, որ «սա հաստատ մեր տան վրա է խփում, ձայնը շատ մոտ է ու ասկոլկաներ են, թե ինչ, անընդհատ թափվում են տանիքին»:[847] Առաջին հարկ իջնելու ժամանակ պայթունի ալիքից տան դուռը ջարդվել է, և հարվածի ալիքը խփել է Էլմիրայի դեմքին: Վախից Էլմիրան հստակ չի հիշում՝ ինչ է կատարվել դրանից հետո: Բացի տնից վնասվել են նաև տան մոտ կայանված երեք ավտոմեքենաները՝ «ГАЗ-52» բեռնատարը, «Mitsubishi Pajero IO»-ն և «ВАЗ-2105»-ը:

Երեք հարված է եղել, որոնցից երկուսը նույն տեղում՝ տան մոտ, մյուսը՝ մի փոքր վերև: Ըստ հարցվողի՝ կիրառվել են կասետային զենք և հրանոթներ, ինչը հաստատել են նաև ականազերծման աշխատանքներ իրականացնողները:

Էլմիրայի ամուսինը CIVILNET-ի թղթակցին պատմել է՝ ինչպես է փլուզվել իրենց տունը: Նա կնոջ և որդու հետ եղել է տանը: Նրա խոսքով՝ այդ օրը գյուղի ներքևի թաղամասում լսել են արկի հարված, դրանից հետո՝ մինչև գիշերվա ժամը 3-4-ը, մնացել են տան առաջին հարկում, որն ապաստարան է ծառայել: Հետո բարձարցել են տան երկրորդ հարկ՝ մտածելով, որ այնտեղ ապահով է: Դրանից հետո նորից նույն պայթյունի ձայնն են լսել. պատուհանների փշրված ապակիները թափվել են նրանց վրա, կինն էլ հենց այդ ժամանակ վիրավորվել է: Փաստահավաք խումբը ուսումնասիրել է CIVILNET-ի թղթակցի տեսանյութը,[848] որում երևում են մեքենաներին և տանը պատճառված վնասները:

Արցախի տեղեկատվական շտաբը հայտարարություն է տարածել, որ հոկտեմբերի 14-ին Էլմիրա Թորոսյանը վիրավորվել է Արցախի խաղաղ բնակավայրերի վրա Ադրբեջանի զինված ուժերի կողմից իրականացված հրթիռակոծության հետևանքով: Արցախի դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ պատերազմի ժամանակ Ծոշ գյուղում արձանագրվել է քաղաքացիական բնակչության շրջանում վիրավորման 4 դեպք, որից երեքը եղել են հոկտեմբերի 16-ին: Ծոշ գյուղում պատերազմի հետևանքով վնասվել է գյուղի տների 80%-ը: Արցախի հեռուստատեսության լրատվականը հայտնել է, որ 2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ գյուղի 93 տուն ենթակա է վերանորոգման, 3 տուն պետք է կառուցել հիմքից:

Կարոտ Մանասյանը սեպտեմբերի 27-ին մոր, կնոջ և երեք երեխաների (7, 13, 16 տարեկան) հետ գտնվել է Կարմիր շուկայի իր տանը: Առավոտյան, ժամը 0730-ի սահմաններում, զբաղվել է առօրյա գործերով և նախապատրաստվել՝ ձեթի արտադրության գործարան աշխատանքի գնալու, երբ լսել է ինքնաթիռի ձայն և արկի պայթյուն: Կարոտ Մանասյանի հավաստմամբ՝ արկը ընկել է իրենց տնից մոտ 200մ հեռավորության վրա, որի հետևանքով ինչպես իրենց տունը, այնպես էլ մոտակայքում գտնվող բնակելի տները վնասվել են: Կարոտ Մանասյանը ասել է, որ իրենց տունը լուրջ վնասներ չի կրել, քանի որ միայն «շուշեքն ա վնասվել էդ սնարյադից, պատերն ա մի քիչ հեռացել իրարից»:[849] Իսկ ինչ վերաբերում է այն տներին, որոնք ավելի մոտ են եղել արկի հարվածի կետին, ապա դրանք ամբողջությամբ «փլվել» են: Կարոտ Մանասյանը հաստատել է, որ մոտակայքում որևէ ռազմական կառույց չի եղել, արկը ընկել է դաշտում և «լավ մեծ փոս է սարքել դաշտի մեջ»: Նա միաժամանակ տեղեկացրել է, որ սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 5-ը (գյուղում իր գտնվելու ժամանակահատվածում)

847 Հարցազրույց Ասկերանի շրջանի բնակիչ Էլմիրայի հետ, 18 դեկտեմբերի, 2020թ.:

848 CIVILNET, «Արցախի Ծոշ Գյուղը՝ Ադրբեջանական Հրթիռակոծությունից հետո», 12 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=9UZGC5xc3z8.

849 Հարցազրույց Մարտունու բնակիչ Կարոտի հետ, 5 դեկտեմբերի, 2020թ.:

Կարմիր շուկան ակտիվորեն հրետակոծվել է ադրբեջանցիների կողմից, որի պատճառով գյուղի մի շարք տներ վառվել են, իսկ բազմաթիվ քաղաքացիական անձինք՝ վիրավորվել, մեկ մարդ էլ զոհվել է:

Փաստահավաք խումբն այցելել է Կարմիր շուկա և փաստագրել տներին հասցված վնասները:[850]

Մեկ այլ՝ Ներքին Ճարտար գյուղի բնակիչ Ռոբերտ Մանասյանի խոսքերով՝ գյուղը «լրիվ հրետակոծվել ա»: Նա իմացել է, որ ռմբակոծությունների հետանքով զոհեր են եղել, սակայն հստակ տվյալներ չի կարողացել փոխանցել: Հրետակոծվել է նաև գյուղի եկեղեցին: Ռոբերտ Մանասյանը նշել է, որ հրետակոծությունները քաղաքացիական բնակչությանը վախեցնելու և բնաջնջելու նպատակ են հետապնդել: Ճարտարում գտնվելու ընթացքում տեսել է բազմաթիվ անօդաչու թռչող սարքեր, «F16», «Սմերչ» ՀԿՌՀ-ի արկեր: Այդպիսի արկերից մեկը ընկել է նրա կիսակառույց տնից 50մ հեռավորության վրա, որի պատճառով «ճաք ա տվել» կառույցը: Նա հրետակոծության ձայներ է լսել նաև, երբ իր երեխաներին ու կնոջը ճանապարհել է Հայաստան. «Կրասնի բազար... Խփում էին, վասնավնոմ մեծ հրետանի էր»,- պատմել է նա:[851] Իսկ երբ կինը հիվանդացել է, նա ստիպված է եղել գալ Հայաստան՝ երեխաներին խնամելու. «Էդ ժամանակ ճանապարհները շատ լարված էին, էլի խփում էին»,- վկայել է Ռոբերտը:[852]

Պատկեր 15.66. 2020թ.-ին Ադրբեջանի հարձակման հետևանքով ավերված տուն Կարմիր Շուկայում (Աղբյուրը՝ Փաստերի ստուգման հարթակ):

850 Կարմիր շուկայի տներին հասցված վնասների լուսանկարները հասանելի են հղումով՝ https://mega.nz/folder/SwVXEQiS#h2mwn6NsDHJwNqOZcBYGDg

851 Հարցազրույց Մարտունի քաղաքի բնակիչ Ռոբերտի հետ, 2 փետրվարի, 2021թ.:

852 Նույն տեղում:

Ծահեն Բալայանի տունը Մարտունի քաղաքում ռմբակոծվել է սեպտեմբերի 27-ին, որի հետևանքով վիրավորվել են ինքը, ընտանիքի անդամները, իսկ կինը՝ Էլլադա Բալայանը, և հարևանի 8 տարեկան երեխան մահացել են: Ծահենը փաստահավաք խնբին է պատմել դեպքի մանրամասները.

> «Ես էդ ժամանակ տանն էի: Երբ առաջին պայթյունը լսեցի, էդ պայթյունի վրա դուրս եկա, ձեռքս պատին հենած՝ նայեցի դուրս, ասկոլկեքը խփեցին: Ամենամոտիկ պայթյունը երևի 3 մետրի վրա ա եղել, ոչ ավել: Մի ասկոլկա էլ տան պատը ծակեց, տան մի կողմը սաղ վառվել ա: 8 հատ սնարյադ է եղել: Առաջինը ուղղակի մտել ա այգու հողի մեջ, փոս ա արել, երկրորդից սաղ եղավ»:[853]

Անժելա Մելքումյանը՝ Էլլադայի դուստրը, վիրավորվել է: Նա պատմել է, որ հարվածի ժամանակ դրսում են եղել՝ տան բակում, սպասել են մեքենայի, որպեսզի տեղափոխվեն անվտանգ վայր: Նրա խոսքերով՝ կիրառվել է ԱԹՍ:

Մոտակայքում գտնվող ռազմական կառույցների մասին Ծահենը միայն գիտեր, որ Աղդամի ուղղությամբ՝ տնից 600մ (օդային ճանապարհով՝ 300 մետրից ոչ ավելի) հեռավորության վրա, տեղակայված է եղել հրետանի. «Մի 4-5 հատ պուշկա էր, դրանց վրա են կրակել: Էն էլ մեր վրա կրակեցին»: Դեպքից մի քանի օր հետո նրանք, ովքեր իրականացրել են ականազերծման աշխատանքները, Ծահենին հայտնել են, որ նրա այգում դեռ մնացել են ականներ: «Էդ այգում մենակ առաջին օրը մի 4 հատ տրաքել էր: Էդ լենթով բաներից էին, մի 20-30 հատ գտել են այգում, հայաթում: Մի մասը հանել են, մի մասը դեռ կա»,- ասել է նա:[854]

Փաստահավաք խումբը զրուցել է ևս մեկ վկայի՝ Մարտունու բնակիչ Մանուշ Գևորգյանի հետ, որը պատմել է.

> «...դեպքից առաջ՝ ժամը 0710-ին, բարձր ձայներ լսեցինք, դուրս եկանք բակ՝ տեսնելու համար, թե ինչ ձայներ են: Տեսանք, որ ամբողջ երկինքը՝ բեսպիլոտնիկներով լիքը, անընդհատ կրակոցներ էին լսվում: Կրակոցների ձայները գալիս էին հեռվից, բայց ԱԹՍ-ները չէին կրակում»:[855]

Մանուշի նկարագրությամբ եղել է մի կլոր գունդ, որը ընկել է ու սևացրել ամեն ինչ. «Մի հատը մեզ մոտ ընկավ»,- ասել է նա: Մանուշը հարվածից հետո ուշագնաց է եղել. դրանից հետո չի հիշում՝ ինչպես են իրեն տեղափոխել հիվանադանոց: Նա փաստահավաք խմբին նաև հայտնել է, որ տան ներքևում՝ ճանապարհի վրա, հրետանի էր տեղակայված: Նրա խոսքերով՝ իրենց վիրավորվելու օրը 4-5 հատ հարված է եղել տների ուղղությամբ, բայց հրետանուն ոչ մի հարված չի կպել: Մանուշը վստահեցրել է, որ տեսել է միայն ԱԹՍ, ձայնը նմանացրել է «դզզոցի», այլ բան չի տեսել:

Փաստահավաք խումբը հետազոտել է Ծահեն Բալայանի տան մասին «WarGonzo»-ի լրագրողի պատրաստած տեսանյութը, որում երևում են այրված տնամերձ շինությունը և կիրառված զինատեսակի բեկորներից առաջացած փոսերը:[856] Փաստահավաք խումբը չի հայտնաբերել սեպտեմբերի 27-ին (Մարտունու բնակելի շենքերին հարված հասցնելու օրը)

853 Հարցազրույց Մարտունի քաղաքի բնակիչ Ծահենի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

854 Նույն տեղում:

855 Հարցազրույց Մարտունի քաղաքի բնակիչ Մանուշի հետ, 21 փետրվարի, 2021թ.:

856 WarGonzo (@wargonzo), "ЭКСКЛЮЗИВ Карабах в огне: израильский-беспилотник камикадзе, иностранные РСЗО, обстрелы из Д-30 и разрушения...," September 28, 2020, Telegram video, https://t.me/wargonzo/3492.

հրետանի կիրառելու մասին հաստատված տեղեկություններ: Թնդանոթները տեղակայվել էին 2016 թվականին՝ Քառօրյա պատերազմի ընթացքում: Վկայությունների համաձայն՝ թնդանոթները չեն վնասվել: Հետևաբար՝ հարց է առաջանում, թե ադրբեջանական ուժերը ինչո՞ւ են կիրառել հրետանի, եթե որևէ ռազմական առավելություն չեն ապահովել՝ բացի խաղաղ բնակչությանը վնասելուց:

Փաստահավաք խմբի անդամները պատերազմից հետո Արցախ կատարած այցի ժամանակ զննել են տեղանքը և արձանագրել, որ հրետանին տեղակայված է եղել տան հակառակ կողմում՝ 600 մ հեռավորության վրա՝ հարվածի ուղղությամբ դեպի սարերը և ոչ թե դեպի գյուղը: Ծահեն Բալայանի տունը քաղաքի վերջին տունն է այդ հատվածում, իսկ նրանից մոտ 200 մետր հեռավորության վրա ցորենի պահեստ է: Փաստահավաք խմբի անդամները տարածքում լուսանկարել են M95 տեսակի կասետային արկեր: ԱՀ դատախազության տրամադրած տեղեկատվության մեջ նշվում է, որ հարուցված քրեական գործով ձեռք բերված տվյալների համաձայն՝ հարձակման ժամանակ կիրառվել է հրետանի:

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ին արված լուսանկարները[857] և տեսանյութը,[858] որոնցում երևում են Մարտունի քաղաքի քաղաքացիական այլ կառույցներին հասցված վնասները և զինատեսակների մնացորդներ:

Փորձագիտական կարծիք ստանալու նպատակով փաստահավաք խումբը հավաքված նյութերն ուղարկել է ԲԱՏՀ մասնագետին: Ելնելով զինատեսակների մնացորդների մոտավոր չափերից, կառուցվածքից, ներկվածքից և վրան երևացող տարբերակիչ նշաններից՝ ԲԱՏՀ մասնագետը չափավոր վստահությամբ եզրակացրել է, որ դրանք իսրայելական «Elbit Systems»-ի LAR-160 «Երկիր-երկիր» հրթիռի իրանի («պատյանի») մասեր են: Մարտունիում փաստագրված մնացորդների ֆիզիկական բնութագրերը համապատասխանում են այն զինատեսակի մնացորդներին, որոնք նախկինում նույնականացվել են LAR-160 տեսակի հրթիռների մնացորդների հետ: Պատկեր 15.69-ում ցուցադրված հրթիռի իրանի մասն ունի LAR-160 հրթիռի ֆիզիկական բնութագրերը:

Հակամարտության ընթացքում LAR-160 հրթիռներ կիրառել է միայն Ադրբեջանը:[859] LAR-160 հրթիռներ արձակում է «Lynx» ՀԿՌՀ-ն, որը կարող է կրել նմատիպ 26 հրթիռ: 2005 թվականին Ադրբեջանն Իսրայելից պատվիրել է 6 «Lynx» համակարգ, որոնք ստացել է 2006 թվականին: LAR-160-ը 45 կմ առավելագույն հեռահարություն ունեցող ոչ բարձր ճշգրտության հրթիռ է, որը կրում է 45կգ մարտական գլխիկ: Մարտագլխիկը լինում է բեկորաֆուգասային (HE-FRAG), կրիչ և բարձր ճշգրտությամբ:[860] «AccuLAR» մոդելի համեմատությամբ՝ LAR-160-ը համարվում է հարաբերականորեն ոչ այնքան բարձր ճշգրտության զինատեսակ: Այս զինատեսակին հատուկ տեխնիկական բնութագրիչները կարող են բարձրացնել քաղաքային կամ այլ խիտ բնակեցված վայրերում քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի հավանականությունը:

857 «Ադրբեջանի պատերազմն ընդդեմ Արցախի դեմ. լուսանկարներ», ՀՀ ԱԳՆ, հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 14-ին, https://www.mfa.am/am/awaa_p?page=5

858 Armenian Unified Infocenter (@armenianunified), «Ռազմական գործողությունների սկզբից ի վեր խաղաղ բնակչության թիրախավորման ևս մեկ օրինակ, Մարտունի, Արցախի Հանրապետություն (Լեռնային Ղարաբաղ)», թվիթերյան գրառում, 29 սեպտեմբերի, 2020թ., https://twitter.com/armenianunified/status/1310911995101827073

859 «Ռազմական հավասարակշռություն 2020»:

860 Dullum et al., “Indirect Fire: A Technical Analysis of the Employment, Accuracy, and Effects of Indirect-Fire Artillery Weapons.”

Պատկեր 15.67. Մարտունիում՝ տան մոտ ընկած արկի հատվածը՝ քաղաքացու ձեռքում, 27 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ ՀՀ ԱԳՆ):

Տեսանելի վնասը, ըստ երևույթին, առաջացել է բեկորների և պայթյունի գերճնշման համադրությունից, ինչը համապատասխանում է բեկորաֆուգասային մատագլխիկների կիրառմանը: ԲԱՏՀ մասնագետը հավանական է համարել, որ բնակելի թաղամասի վրա հարձակման ընթացքում առնվազն մի զինատեսակ կրել է բեկորաֆուգասային մարտագլխիկ: Ելնելով հարվածի հետևանքով պայթյունի առաջացրած մեծ ծավալի վնասից՝ ԲԱՏՀ մասնագետն անհավանական է համարել ավելի թույլ զենքի կիրառման հավանականությունը:

Գոյություն ունեն մեծ մակերեսների վրա բազմակի հարվածներ հասցնող համակարգեր, որոնցից են, օրինակ, համազարկային կրակի ռեակտիվ զինատեսակները:[861]

Համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի (ՀԿՌՀ)[862] օգտագործման իրավաչափության հարցը «Human Rights Watch»-ը քննարկել է 2014թ.-ին արևելյան Ուկրաինայում ՄՄԻ-ի նորմերի խախտումների մասին փաստահավաք զեկույցում: «Human Rights Watch»-ը կոչ է արել բոլոր հակամարտող կողմերին չօգտագործել բնակավայրերում կամ դրանց մոտակայքում «Գրադ»

861 Cross et al., “Explosive Weapons in Populated Areas,” 11.

862 Մարտական պայմաններում փորձարկված M270 համազարկային կրակի ռեակտիվ համակարգը (ՀԿՌՀ) չափազանց շարժունակ ռեակտիվ հրետանային համակարգ է, որն արտադրում է «Lockheed Martin Missiles and Fire Control»-ը:

Պատկեր 15.68. Ավերվածություններ, փաստագրված այն շենքի ներսում, որի կողքին հայտնաբերվել է իսրայելական «Elbit Systems»-ի LAR-160 «Երկիր-երկիր» հրթիռի իրանը (պատյանը), 27 սեպտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ ՀՀ ԱԳՆ):

ՀԿՌՀ-ներ՝ հաշվի առնելով զենքի հարվածային ոչ բարձր ճշգրտությունը և դրա պատճառով խաղաղ բնակիչների սպանվելու և վիրավորվելու բարձր հավանականությունը: Արցախի հակամարտության ընթացքում ոչ բարձր ճշգրտության զենքերի կիրառման առնչությամբ

«Human Rights Watch»-ը նշել է, որ, օրինակ, հաուբիցները, հրետանին և հրթիռները (օրինակ՝ «Գրադ» արկերը) այդպիսի համակարգեր են: Որոշ դեպքերում, իհարկե, հակառակորդ ուժերը կարող են մեղմել այդ զենքերի կիրառման հետևանքները՝ հետևելով հարվածների ճշգրտությանը, սակայն նախնական հարվածները որքան էլ լինեն ճշգրիտ, այնուամենայնիվ դրանց ստուգության հարաբերականությունը խիստ վիճարկելի և վտանգավոր է, ուստի դրանց օգտագործումը բնակելի թաղամասերին մոտ տարածքներում չունի որևէ արդարացում: Ավելին, Գազայի հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի փաստահավաք առաքելությունը ընդգծել է, որ «միջազգային իրավունքում չկա որևէ արդարացում հրթիռների և ականանետների կիրառման վերաբերյալ, որոնք ուղղված են որոշակի ռազմական թիրախների վրա այն տարածքներում, որտեղ գտնվում են խաղաղ բնակիչներ»:[863] «Լիբիայի անողոք աշխարհազորային պատերազմը. քաղաքացիական բնակչությունը տուժել է Տրիպոլիի համար մղվող մարտերում, ապրիլ-օգոստոս, 2019թ.» վերնագրված զեկույցում «Amnesty International»-ը արձանագրել է հիշյալ կարգի խախտում՝ նշելով, որ քաղաքացիական բնակչությանը մոտ գտնվող տարածքներում ադրբեջանական զինված ուժերը կիրառել են «Գրադ» հրթիռներ:

863 "«ՄԱԿ-ի փաստահավաք առաքելության զեկույցը Գազայի հակամարտության վերաբերյալ» (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), 2009թ. սեպտեմբերի 25), պարբ. 1687, https://www.refworld.org/docid/4ac1dd252.html

Օրինակ, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգը (ՀԿՌՀ) նախատեսված է խմբային թիրախներ ոչնչացնելու համար: Ճշգրտության տեսանկյունից համակարգը մոտ է հրետանուն: Խոցման մակերեսը կազմում է 672 հազար քառակուսի մետր:

Բացառությամբ մի դեպքի, որով հաստատվել է բնակելի թաղամասում հեռահար հրետանու բարձր ճշգրտության հրթիռ կիրառելու փաստ, ուսումնասիրված մյուս դեպքերում բացահայտվել է ոչ բարձր ճշգրտության հրթիռների կիրառում:

Հարձակումն իրավաչափ համարելու համար նախ պետք է, որ այն ուղղված լինի ռազմական թիրախի վրա: Հարձակումը ռազմական կառույցի վրա կարող է համարվել ոչ իրավաչափ, եթե ենթադրվում է, որ նրա հարվածից կարող են վնասվել քաղաքացիներ կամ քաղաքացիական կառույցներ: Անգամ ռազմական թիրախի վրա թույլատրելի հարձակման դեպքում պետք է ձեռնարկվեն բոլոր նախազգուշական միջոցները՝ քաղաքացիներին վնաս չպատճառելու համար:[864]

Քաղաքացիական անձանց դեմ հարձակման արգելքը բխում է ՄՄԻ-ի հիմնարար սկզբունքից, որը պարտավորեցնում է կողմերին մշտապես տարբերակել քաղաքացիական բնակչությանը կոմբատանտներից, ինչպես նաև քաղաքացիական կառույցները՝ ռազմականներից, և ռազմական գործողություններն ուղղել միայն ռազմական կառույցների դեմ:[865] Քաղաքացիական անձանց և կառույցների վրա հարձակումների արգելքը սովորութային միջազգային իրավունքի կանոն է, որը արտացոլված է 1-ին լրացուցիչ արձանագրության 51-րդ և 52-րդ հոդվածներում:

Զենքի ոչ տարբերակված լինելը պարզելու երկու ամենահայտնի չափորոշիչները հետևյալն են. «Արդյո՞ք զենքը կարող է ուղղվել ռազմական կոնկրետ կառույցի վրա, և արդյո՞ք հնարավոր է նվազեցնել զենքի կիրառման հետևանքները, ինչպես պահանջում է միջազգային մարդասիրական իրավունքը»: 1-ին լրացուցիչ արձանագրությունը սահմանում է այս երկու չափորոշիչները. 51-րդ հոդվածի 4-րդ մասի (b) կետով արգելվում է այնպիսի զենքերի կիրառումը, որոնք կուղղվեն ռազմական կոնկրետ կառույցների վրա, իսկ 51-րդ հոդվածի 4-րդ մասի (c) կետով արգելվում է կիրառել զենքեր, որոնց հետևանքները հնարավոր չէ սահմանափակել կամ նվազեցնել, ինչպես դա պահանջում է սահմանված արձանագրությունը:[866]

Հաշվի առնելով այն փաստը, որ բացառությամբ մեկի, ուսումնասիրված մյուս բոլոր դեպքերում բնակելի թաղամասերում չեն հայտնաբերվել ռազմական կառույցներ՝ այս միջադեպերը լուրջ հարց են բարձրացնում՝ կապված քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի և վիրավորների, քաղաքացիական օբյեկտներին հասցված վնասների և որևէ կոնկրետ ու ուղղակիորեն ակնկալվող ռազմական առավելության հարաբերակցության հետ կապված: Բնակելի թաղամասերում Արդբեջանի կողմից համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի կիրառումը հարձակման ուղղակի թիրախ է դարձրել խաղաղ բնակչությանը, ինչը միջազգային իրավունքի խախտում է, որը սահմանված է 1-ին լրացուցիչ արձանագրության 52-րդ հոդվածով:[867]

864 Sassòli, "Legitimate Targets of Attacks Under International Humanitarian Law," 1.

865 Դատախազն ընդդեմ Դարիո Կորդիչի, Մարիո Չերկեսի (վճիռ), IT-95-14/2-A, պարբ. 54:

866 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն:

867 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 71. Բնույթով անխտրական/չտարբերակող զենքեր», (Կարմիր Խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 14-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule71

Հաշվի առնելով Ադրբեջանի՝ բարձր ճշգրտության զենքերի, օրինակ, դրոնների (ավելի մանրամասն ներկայացված է վերևում) կիրառման ռազմատեխնիկական հնարավորությունները՝ հարց է առաջանում, թե ինչու են Արցախի խիտ բնակեցված տարբեր տարածքներում կանոնավոր կերպով կիրառվել նվազ ճշգրտության զենքեր, օրինակ՝ ՀԿՌՀ-ի հրթիռներ:

Փաստահավաք խումբը, հաշվի առնելով այդ զինատեսակների՝ քաղաքացիական բնակավայրերում կիրառելու մեծ սպառնալիքը, գտել է, որ դրանց օգտագործումը իրավաչափ չէ, անգամ եթե թիրախը եղել է ռազմական որևէ կառույց: Առաքելությունը համոզված է, որ լուրջ հիմքեր կան պնդելու, որ հրթիռային և հրետանային հարձակումների հիմնական նպատակներից մեկը եղել է խաղաղ բնակչության ահաբեկումը:

Այսպիսով՝ ներկայացված միջադեպերը և վկայությունները, որոնք փաստահավաք խումբը գնահատել է արժանահավատ, մեծապես ցույց են տալիս, որ պատերազմի ամբողջ ընթացքում և ուսումնասիրված բոլոր վայրերում Ադրբեջանը ռազմական կառույցները չի տարբերակել քաղաքացիականներից, խաղաղ բնակչությանը՝ կոմբատանտներից:

Փաստահավաք խումբը եզրակացրել է, որ Ադրբեջանը դիտավորյալ, հաճախակի և կանոնավոր հարձակումներ է իրականացրել խաղաղ բնակչության դեմ: Ադրբեջանը համակարգային կերպով իրականացրել է չտարբերակված հարձակումներ, քանի որ դրանք ուղղված չեն եղել որևէ կոնկրետ ռազմական թիրախի վրա/դեմ կամ որովհետև այն կիրառել է պատերազմի վարման միջոց կամ մեթոդը, որը չէր կարող ուղղվել կոնկրետ ռազմական թիրախի դեմ:

Խաղաղ բնակչության վրա հարձակումը համարվում է դիտավորյալ, եթե բնակության վայրում չկա ռազմական որոշակի թիրախ: Նման գործողությունները համարվում են պատերազմական հանցագործություններ և կարող են համարվել հանցագործություններ մարդկության դեմ:

Կասետային զենքեր. ոչ տարբերակված զինամթերք

«Ես մեր տան հայաթում էի: Երբ կասետային ռումբը գցեցին, ես ու բաջանաղս վիրավորվեցինք: Գյուղում մեծահասակ մարդիկ կային: Վազելով եկան, վերքը կապեցին, որ արյուն չգնա, հետո «ժիգուլի»-ով մի մարդ ինձ ու բաջանաղիս գյուղից հանեց, տարավ Ստեփանակերտ»:

Ասկերանի բնակիչ Հենրիխ Ադամյան[868]

Կասետային զինատեսակների խոցման մեծ մակերեսը և արձակված չկառավարվող հրթիռների մեծ քանակն անհնար են դարձնում ռազմական կառույցների և քաղաքացիական բնակչության տարբերակումը բնակելի տարածքներում:[869] Հետևաբար՝

868 Հարցազրույց Ասկերանի բնակիչ Հենրիխի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

869 Այս կարգավորումները սահմանափակում են զենքերի օգտագործման եղանակները և սահմանում են քաղաքացիական բնակչության դեմ և կառույցների վրա դրանց ազդեցությունը սահմանափակելու համար ձեռնարկելիք միջոցները: Ամենակարևոր կանոններն են. ա) տարբերակման կանոնը, բ) չտարբերակված

կասետային զինատեսակների կիրառումը բնակելի տարածքներում պատերազմական հանցագործություն է:[870]

Կասետային զինատեսակները օդում տրաքող և մեծ մակերեսով պայթուցիկ մարտական տարրեր կամ «փոքր ռումբեր» ցրող զենքեր են: Մոդելով պայմանավորված՝ մարտական տարրերի քանակը կարող է տատանվել մի քանիսից մինչև 600 և ավել միավորի: Կասետային զենք կարող է կրել ինքնաթիռը, հրետանին կամ հրթիռները: Մարտական տարրերի մեծ մասը պայթում է հարվածի պահին: Դրանց մեծ մասն ազատ ընկնող է, այսինքն՝ չի ուղղորդվում կոնկրետ թիրախի վրա:[871] Կասետային մարտական տարրերը նման են փոքր ձագարաձև պայթուցիկների՝ մի ծայրին վառ կարմիր կամ սպիտակ ժապավեն:

Կասետային ռումբերը դասվում են ոչ բարձր ճշգրտության զենքերի շարքին,[872] քանի որ կասետային զինատեսակի արկղից դուրս գալուց հետո մարտական տարրերը չեն կարող ունենալ ճշգրիտ նշանառություն և հարվածել հենց ընտրված թիրախին: Ոչ բարձր ճշգրտության են համարվում այն հարձակումները, որոնց ժամանակ կիրառվում են ռազմական գործողությունների վարման այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնք չեն կարող թիրախավորել ռազմական կոնկրետ կառույցներ: Զինված բոլոր հակամարտությունների ընթացքում սովորութային միջազգային մարդասիրական իրավունքն արգելում է ոչ բարձր ճշգրտության հարձակումները:[873] Բացի այդ, ոչ բարձր ճշգրտության ռազմատեսակների կիրառումը, եթե այն իրականացվում է առանց զենքի տարբերակման, կարող է որակվել որպես ուղիղ հարձակում քաղաքացիական անձանց վրա:[874]

Պատերազմից հետո «Halo Trust» հասարակական կազմակերպությունը, որն Արցախում գործում է 2000 թվականից (1990-ականների պատերազմից հետո հակահետևակային ականներ և չպայթած զինամթերք հայտնաբերելով և ականազերծելով), Ստեփանակերտում գտել և վնասազերծել է 1,548 կասետային զինամթերք:[875] «Halo Trust»-ի հետախուզական խումբը հայտնաբերել է M85 կասետային զինատեսակի տարբերակիչ նշանով՝ բազմաթիվ վարդագույն ժապավեններով արկեր: Դրանց մի մասը գտնվել է Ստեփանակերտի կենտրոնում գտնվող խիտ բնակեցված թաղամասի հինգ հարկանի մի շենքի տանիքում, որն ամբողջությամբ ավիրվել է հրետակոծությունից:[876]

հարձակումներն արգելող կանոնը, գ) համաչափության կանոնը, դ) հնարավոր նախազգուշական միջոցների կիրառման կանոնը: Տե՛ս «Դիտարկումներ կասետային զինամթերքի օգտագործման հետ կապված իրավական հարցերի վերաբերյալ» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 25 հունիսի, 2007թ.), https://digitallibrary.un.org/record/604266

870 ՄՔԴ-ի 1998 թվականի ստատուտի 8-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետի (xx) ենթակետի համաձայն՝ միջազգային զինված հակամարտություններում պատերազմական հանցագործություն են համարվում. «Այնպիսի զենքերի, ռազմատեսակների և տեխնիկայի օգտագործումը, ինչպես նաև պատերազմ վարելու այնպիսի մեթոդներ կիրառումը, որոնք ...իրենց էությամբ տարբերակված չեն և խախտում են զինված ընդհարումների վերաբերյալ սահմանված միջազգային այն օրենքները, որոնք ներառված են սույն ստատուտի հավելվածում»:

871 “Cluster Munitions: What Are They and What Is the Problem?,” International Committee of the Red Cross, August 1, 2010, https://www.icrc.org/en/doc/resources/documents/legal-fact-sheet/cluster-munitions-factsheet-230710.htm

872 https://www.icrc.org/en/doc/assets/files/other/cluster-munition-treaty-factsheet.pdf

873 Դատախազն ընդդեմ Ստանիսլավ Գալիչի (Վճիռ), պարբ. 5:

874 Դատախազն ընդդեմ Միլան Մարտիչի (Վճիռ), No. IT-95-11-T (Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ, 12 հունիսի, 2007թ.):

875 “Building Resilience in a Year of Crisis: 2020 Nagorno Karabakh Impact Report” (The Halo Trust, 2020), https://www.halotrust.org/media/7842/nk-2020-impact-report.pdf.

876 “A Cluster Bomb in the Attic: Aro’s Story,” The HALO Trust, accessed April 14, 2022, https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/aros-story/.https://www.halotrust.org/latest/halo-updates/stories/aros-story/?fbclid=IwAR3cYDI1UIPHEI-ufMFcequljxboKqLe1in-xKz0c2p0Y-hu0amhGuiE6UCE

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի[877] և «Human Rights Watch»-ի[878] զեկույցները հաստատում են կասետային մարտագլխիկներով LAR-160 և «Սմերչ» արկերի կիրառումը մայրաքաղաք Ստեփանակերտում, Շուշի և Հադրութ քաղաքներում և Ստեփանակերտի մոտ գտնվող Շոշ գյուղում:

Փաստահավաք խումբը ստացել է բազմաթիվ այլ տեղեկություններ, որոնք դարձյալ հաստատում են պատերազմի ընթացքում Ստեփանակերտ, Շուշի, Մարտունի, Հադրութ քաղաքներում և Վարդաշատ, Նորաշեն, Կոճողուտ, Կարմիր շուկա, Ավետարանոց, Շոշ գյուղերում և բնակելի այլ տարածքներում Ադրբեջանի կողմից կասետային զինամթերքի կիրառման փաստերը: Հայտնաբերվել են M095 մարտական բաղադրիչներ պարունակող իսրայելական LAR-160 արկեր, ինչպես նաև 9H235 մարտական բաղադրիչներ պարունակող 9M55K «Սմերչ» արկեր:

Ստեփանակերտ

Սերգեյ Դադայանը, որը Ստեփանակերտում օպտիկայի խանութ ուներ, պատմել է, որ պայթյունների հետևանքով վնասվել են խանութի, ինչպես նաև իր տան պատուհանները: Պայթուցիկ զինատեսակի կիրառման պատճառով ամբողջ մի տարածք՝ Վազգեն Սարգսյան փողոցի 16-րդ շենքից մինչև 18-րդ շենք, պատված է եղել ծխածածկույթով, որն ընդգրկել է նաև շենքերի միջև գտնվող խաչմերուկը: Փաստահավաք խմբի աշխատակիցները շրջել են տան և խանութի մոտակայքում: Սերգեյը ցույց է տվել ռմբակոծված բոլոր վայրերը՝ պայթյունների բեկորների հետքերով, ասել է, որ օպտիկայի խանութի դիմաց գտնվել է նաև չպայթած կասետային զինատեսակ, որն արդեն հեռացրել էին: Այն հարցին, թե արդյո՞ք հարձակումները նպատակ են ունեցել դիտավորությամբ վնաս պատճառել խաղաղ բնակչությանը, նա պատասխանել է, որ քաղաքների, գյուղերի վրա կրակելը միայն խուճապ և վախի մթնոլորտ ստեղծելու համար է իրականացվել:

Ստեփանակերտում տեղանքի զննության ընթացքում «Human Rights Watch»-ը փաստագրել է բազմաթիվ դեպքեր, երբ սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում քաղաքին հարվածներ հասցնելու նպատակով Ադրբեջանը կիրառել է կասետային զինատեսակ:[879]

Ստեփանակերտի բնակելի թաղամասերից մեկում «Amnesty International»-ը հայտնաբերել է իսրայելական արտադրության M095 DPICM (երկակի նշանակության կատարելագործված կասետային զինամտեսակ) փոքր ռումբերի կիրառման դեպք: Ադրբեջանն ունի մոտ 30 միավոր LAR-160 միջին հեռահարության (28 մղոն) ռեակտիվ հրետանու համակարգեր և 50 միավոր EXTRA 306մմ ռեակտիվ համակարգեր, որոնք նախատեսված են ավելի հեռահար (93 մղոն) և ճշգրիտ հարվածներ հասցնելու համար: Երկու զինատեսակներն էլ արտադրում է «Israeli Military Industries» (IMI՝ «Իսրայելական ռազմական արդյունաբերություն») ընկերությունը, որոնք տեղադրվում են IMI «Lynx» բեռնատարների վրա:[880]

877 2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի բնակչության դեմ ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակություն:

878 "Technical Briefing Note: Cluster Munition Use in the Karabakh Conflict," Human Rights Watch, July 15, 2021, https://www.hrw.org/news/2021/07/15/technical-briefing-note-cluster-munition-use-karabakh-conflict.

879 "Azerbaijan: Unlawful Strikes in Nagorno-Karabakh."

880 Sebastien Roblin, "Rockets, Cluster Munitions and Missiles Rain Down On Armenian And Azerbaijani Civilians," Forbes,

Պատկեր 15.69. Վ. Սարգսյան փողոցի շինությունները, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

«Բարս Մեդիա»-ի՝ հոկտեմբերի 4-ին նկարահանած տեսանյութում երևում են Ստեփանակերտի փողոցներից մեկում իրար մոտ ընկած կասետային ռումբեր և այրվող մեքենաներ, որոնք, ամենայն հավանականությամբ, գտնվել են հրթիռային պայթյուններին մոտ:[881] Բացի այդ, Ստեփանակերտի գերեզմանատնից 200-300 մ հեռավորության վրա Արցախի ԱԻՆ-ի աշխատակիցները հայտնաբերել են կասետային զինատեսակ:[882]

Պատկեր 15.70. Ստեփանակերտի արվարձաններում Ղարաբաղի ականազերծման մասնագետների խմբի կողմից հավաքված չպայթած կասետային ռումբեր, 2020թ. (Աղբյուրը՝ «Agence France-Presse»):

October 7, 2020, sec. Aerospace & Defense, https://www.forbes.com/sites/sebastienroblin/2020/10/07/rockets-cluster-munitions-and-missiles-rain-down-on-armenian-and-azerbaijani-civilians/.

881 Bars Media, "Кассетные бомбы над мирным Степанакертом/ Shelling Stepanakert with Cluster Bomb Missiles 04.10.2020," October 4, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=cZ2vsJnv86E.

882 WarGonzo (@wargonzo), "В 200-300 метрах от кладбища Степанакерта работники МЧС Арцаха обнаружили кассетные боеприпасы," October 20, 2020, Telegram post, https://t.me/KarabakhRecords/955.

Հադրութի շրջան

«Փաստերի ստուգման հարթակ»-ի լրագրողները Հադրութում գտնվելու ժամանակ արձանագրել են, որ հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած հրթիռակոծության ժամանակ Հադրութի բնակիչ Ֆելիքս Ծահինյանն իր տան բակում դրված բազկաթոռի վրա հայտնաբերել է չպայթած կասետային հրթիռի մարտական բաղադրիչ: Մարտական բաղադրիչներ են հայտնաբերվել նաև նրա տան բակում: Բարեբախտաբար ընտանիքից տուժողներ չեն եղել, քանի որ ռմբակոծության պահին տանը ոչ ոք չի եղել: Ֆելիքս Ծահինյանի հարևանի՝ 61-ամյա Ջուլիետա Մրդանյանի տան բակում ևս կասետային ռումբերի բաղադրիչներ են հայտնաբերվել: Նա իր տան բակից շուրջ 10 մարտական միավորի մնացորդ է հավաքել:[883]

Հոկտեմբերի 6-ին լրատվամիջոցներով տարածվեց նյութ, ըստ որի հրետակոծվել էր Հադրութի քաղաքապետ Վահան Սավադյանի տունը,[884] իսկ նրա ընտանիքը ժամանակավորապես տեղավորվել էր ապաստարանում:[885] «Human Rights Watch»-ը Հադրութում՝ Վահանի տանը հարված հասցրած զինամթերքի մնացորդը բնութագրել է որպես իսրայելական արտադրության LAR-160 դասի կասետային արկ:[886] Բացի այդ հրթիռից՝ «Human Rights Watch»-ը Հադրութում հայտնաբերել է նաև M095՝ կրկնակի նշանակության հրթիռի (չպայթած) մարտական բաղադրիչ: Յուրաքանչյուր հրթիռն ունի 104 մարտական բաղադրիչ, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնաոչնչացման մեխանիզմ:[887]

LAR-160-ը բաղկացած է փոխադրամիջոցի վրա տեղադրված բազմահրթիռային արձակման կայանքից, որն ունի գործարանում հերմետիկ կնքված մեկանգամյա օգտագործման մեկ կամ երկու արձակման ուղղորդիչների կոնտեյներ՝ լիցքավորված 160 մմ տրամաչափի հրթիռներով: LAR-160 հրթիռը ժամանակակից, ազատ թռիչքի, պոչաթևերով ղեկավարվող, կոշտ շարժիչով «Երկիր-երկիր» դասի 160մմ հրետանային արկ է՝ տեղավորված արձակման տուփում: LAR-160-ի հեռահարությունը կազմում է 45 կմ:[888]

Կասետային զինամթերքով համազարկային կրակի ռեակտիվ համակարգ կիրառվել է նաև Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղում, որը հրետակոծվել է պատերազմի առաջին օրերից, ինչի հետևանքով վնասվել են գյուղի տները, իսկ բնակիչներից ոմանք՝ վիրավորվել: Օրինակ, գյուղի բնակիչներից Հարութի (անունը փոխված է) տունը, որը գտնվում է Վարդաշատ գյուղի գերեզմանատնից 50մ և զորամասից 5 կմ հեռավորության վրա, ամբողջությամբ ավիրվել է սեպտեմբերի 27-ին: Սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան 630-700-ն, լսելով կրակոցների ձայները, Հարութը ընտանիքին անմիջապես տեղափոխել է Ներքին Խնձորեսկ և նույն օրը երեկոյան, վերադարձել գյուղ: Հարևանները Հարութին հայտնել են, որ գյուղին հարվածած

883 Անի Գրիգորյան, «Ադրբեջանը Արցախի խաղաղ բնակչության դեմ կիրառում է միջազգային կոնվենցիայով արգելված հրթիռներ», Փաստերի ստուգման հարթակ, 4 հոկտեմբերի, 2020թ., https://fip.am/en/13123

884 Инфотека24 (@infoteka24), " Кадры из Гадрута/Арцах," October 2, 2020, Telegram video, https://t.me/infoteka24/7511; @karabakh_news, "Гадрут (город в Арцахе)", October 2, 2020, Telegram video, https://t.me/karabah_news/423; Инфотека24 (@infoteka24), "Эксклюзивные фото корреспондента Инфотека24 из Гадрута: последствия авиаударов ВС Азербайджана," October 1, 2020, Telegram post, https://t.me/infoteka24/7419.

885 Գրիգորյան, «Ադրբեջանը Արցախի խաղաղ բնակչության դեմ կիրառում է միջազգային կոնվենցիայով արգելված հրթիռներ»:

886 "Azerbaijan: Cluster Munitions Used in Nagorno-Karabakh," Human Rights Watch, October 23, 2020, https://www.hrw.org/news/2020/10/23/azerbaijan-cluster-munitions-used-nagorno-karabakh.

887 Նույն տեղում:

888 https://tanknutdave.com/the-israeli-lar-160-mlrs-system/

առաջին արկը հենց իր տան վրա է ընկել: «Բարեբախտաբար ընտանիքիս ժամանակին հանել էի գյուղից, հակառակ դեպքում պարզ չէ, թե ինչ կլիներ նրանց հետ»,- ասել է նա:[889]

Հարութը հստակ չգիտեր, թե ինչ արկ է ընկել իր տան վրա, սակայն երբ փաստահավաք խմբի անդամները ցույց են տվել տարբեր զինատեսակների լուսանկարներ,[890] նա մատնանշել է առաջին լուսանկարը, որտեղ պատկերված էր կասետային զինատեսակ (իսրայելական արտադրության M095-ի մարտական բաղադրիչներ), և ավելացրել է, որ տան մոտ տեսել է կարմիր ժապավենով արկ: Լուսանկարներում նա ճանաչել է նաև իսրայելական արտադրության LAR-160 հրթիռի իրանը:

Սեպտեմբերի 27-ին Վարդաշատ գյուղի իր տանը ձեռքի և ոտքի վիրավորումներ է ստացել Արթուր Արշակյանը: Նրա վկայությամբ՝ վիրավորում է ստացել պայթուններից: Ցուցադրված զենքերի նկարներից ճանաչել է կասետային արկը. «Ես դրանից եմ վիրավորվել. «Սմերչ» է, «Սմերչի» կասետային արկ է: Ինձ որ խփել է, տանիքն է ցրիվ տվել: Էդ ժամանակ սենց բան կա, էտի ընկել է տանիքի վրա, ու իմ վրա է թափվել, սաղ չի թափվել իմ վրա, սաղ որ թափված լիներ, հիմա ես ստեղ չէի լինի, մի հատ սենց շարիկ է ինձ կպել»,- պատմել է նա:[891]

Արթուր Արշակյանը Հայաստանի ազգային անվտանգության սահմանապահ զորքերում է ծառայել և գիտեր, թե ինչպես է աշխատում կասետային զենքը: Արթուրը ռմբակոծման ժամանակ ծառայության մեջ չի եղել, ընտանիքի անդամների հետ գտնվել է իր տանը: Արցախի գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունները հաստատել են, որ Արթուր Արշակյանը բեկորային վնասվածք ստացել է իր տան բակում:

Ըստ վկայությունների՝ գյուղում որևէ ռազմական տեղամաս չի եղել: Որպես ռազմական հնարավոր թիրախ Արթուրը նշել է Սարիշեն գյուղում տեղակայված հակաօդային պաշտպանության ստորաբաժանումը: Սարիշենը գտնվում է Վարդաշատից 5-6 կմ հեռավորության վրա, իսկ օդային տարածությունը 1 կմ է: Փաստահավաք խմբի անդամները վկայություններ են հավաքել Վարդաշատ գյուղի ևս 5 բնակչից, ովքեր հաստատել են, որ, սեպտմեբերի 27-ից սկսած, գյուղի վրա եղել են հարձակումներ, շատ տներ վնասվել են, գյուղացիներից եղել են վիրավորում ստացածներ: Նկատի առնելով հարցազրույց տված վկաների պահվածքը և վկայություններում նույն փաստերը հաստատելու հանգամանքը՝ տեղեկությունները համարվել են բացարձակ արժանահավատ:

Փաստահավաք խումբը նաև հաղորդում է ստացել, որ կասետային զենքեր են կիրառվել Նորաշեն և Բերդաշեն գյուղերում: Նորաշեն գյուղից Վիկտոր Չատմազյանը փաստահավաք խմբին պատմել է, որ հակառակորդը հրետակոծել է ոչ միայն ռազմական կառույցները, այլև քաղաքացիական բնակչությանը և ավտոմեքենաները: Վիկտորի հետ փաստահավաք խումբը զրուցել է երկու անգամ (2020թ.-ի դեկտեմբերի 1-ին և 2021թ.-ի փետրվարի 22-ին): Վերջին հարցազրույցի ժամանակ Վիկտորն ասել է, որ իր ավտոմեքենան Նորաշեն գյուղի մոտ թիրախավորվել է կասետային զենքով: Վիկտորի կինը բացատրել է. «էն կարմիր լենթերովը, որ կա, չի իմացել, որ չի կարելի ձեռք տալ, բերել ա, ցույց տվել՝ ավտոյի մոտից

889 Հարցազրույց Հադրութի բնակիչ Հարութի հետ, 21 դեկտեմբերի, 2020թ.:

890 Այդ պատկերները հասանելի են այստեղ՝ https://mega.nz/file/fhFwiQ6S#CwjprCnKpgM6c73wm6JqB-Lrj8LB-kuMNeBkEhfFrnyY

891 Հարցազրույց Հադրութի բնակիչ Արթուրի հետ, 27 հունվարի, 2021թ.:

ինչ է հավաքել»:[892] Վիկտոր Չատմազյանը նշել է, որ նույն վայրում գտնվել է շուրջ 15-20 ավտոմեքենա, որոնք ամբողջությամբ վնասվել են, և շեշտել, որ բոլոր ավտոմեքենաները եղել են քաղաքացիական (այդ վայրում գտնվել է հացի փուռ, որտեղ աշխատել է Վիկտոր Չատմազյանը), իսկ մոտակայքում ռազմական որևէ օբյեկտ չի եղել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստահավաք խումբը չի հայտնաբերել գյուղերում և քաղաքում ռազմական կառույցների տեղակայման մասին որևէ տեղեկություն, իսկ հարձակումների ընթացքում կիրառվել են չտարբերակող զենքեր, որոնց մի մասը կարող էր խոցել մեծ մակերեսներ, փաստահավաք խումբը պնդում է, որ ադրբեջանական զինված ուժերը կասետային զենքեր են կիրառել ոչ թե ռազմական կոնկրետ թիրախների, այլ խաղաղ բնակչության դեմ ընդհանուր հարձակումներ իրականացնելու համար: Այս հարձակումները խախտել են սովորութային միջազգային մարդասիրական իրավունքով սահմանված տարբերակման սկզբունքը, որն ամրագրված է լրացուցիչ արձանագրության (I) 48-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածներում, որոնք նմանօրինակ գործողությունները համարում են պատերազմական հանցագործություն:[893]

Ասկերանի շրջան

Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի բնակիչ Հենրիխ Ադամյանը պատմել է, որ «գյուղում պատերազմի սկզբում հարվածներ չեն եղել»:[894] Գյուղի վրա առաջին արկն ընկել է հոկտեմբերի 22-ին կամ 23-ին. հարվածը հասցվել է «Սմերչ» ՀԿՌՀ-ից՝ չնայած նրան, որ դեռ գյուղից ոչ մի տարհանում չէր իրականացվել (մարդիկ չեն ցանկացել դուրս գալ իրենց գյուղից): Այդ օրերին զոհեր և վիրավորներ էլ չեն եղել: Հոկտեմբերի 25-ին ադրբեջանցիները մոտեցել են Ավետարանոց գյուղին և ամսի 26-ի առավոտից սկսել հուժկու հրետակոծել արկերով և «Սմերչով: Հենց այդ օրն են շատերը զոհվել և վիրավորվել: Առաջին հարվածները հասցրել են գյուղի գերեզմանոցին, որը գտնվում է գյուղից դեպի կիրճ տանող ճանապարհին. գերեզմանատան վրա ընկել է մոտ 40-50 արկ, մինչդեռ գերեզմանատան մոտակայքում եղել են բնակելի տներ: Այնուհետև սկսել են օգտագործել կասետային ռումբեր: Թվով 5-րդ կասետային ռումբի հարվածի հետևանքով Հենրիխը, որն այդ ժամանակ գտնվել է իր տան մոտ, ոտքին և ձեռքին ստացել է բեկորային վիրավորումներ:

Հենրիխը փաստահավաք խմբին պատմել է, որ արկերը հիմնականում արձակվում էին Հադրութի և Ֆիզուլիի միջև ընկած տարածքից: Երբ բնակիչները փորձել են տարհանել վիրավորներին, հակառակորդի ինքնաթիռը ռմբակոծել է գյուղը, որի պատճառով երեք խաղաղ բնակիչ վիրավորվել է, իսկ գյուղն ամբողջությամբ վերածվել է ավերակի: Այդ օրերին գյուղում միայն տղամարդիկ են եղել: Բոլոր վիրավորները եղել են խաղաղ բնակիչներ:

> «Ես մեր տան հայաթում էի: Երբ կասետային ռումբը գցեցին, ես ու բաջանաղս վիրավորվեցինք: Գյուղում մեծահասակ մարդիկ կային: Վազելով եկան, վերքերը կապեցին, որ արյուն չգնա, հետո մի մարդ ինձ ու բաջանաղիս գյուղից հանեց, տարավ Ստեփանակերտ: Ինձ պահեցին Ստեփանակերտի հիվանդանոցում, էդ տղուն էլ ուղարկեցին Երևան»,- պատմել է Հենրիխը[895]

892 Հարցազրույց Հադրութի բնակիչ Վիկտորի հետ, 1 դեկտեմբերի, 2020թ.:

893 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, հոդ. 8 (2) (b) (i), 8 (2) (b) (ii):

894 Հարցազրույց Ասկերանի բնակիչ Հենրիխի հետ, 17 դեկտեմբերի, 2020թ.:

895 Նույն տեղում:

Այն հարցին, թե ինչու են ադրբեջանական ռազմական ուժերը հարվածել քաղաքացիական բնակչությանը, Հենրիխը պատասխանել է, որ նպատակը եղել է խուճապ առաջացնելը և հնարավորինս շատ վնաս հասցնելը, մի խոսքով՝ կոտորելը:

Անդրեյ Համբարձումյանը պատմել է, որ հոկտեմբերի 23-ից ադրբեջանական զինված ուժերը սկսել են ակտիվորեն ռմբակոծել Ավետարանոց գյուղը: Անդրեյի վկայությամբ՝ իրենց տան ուղղությամբ չորս արկ է ընկել՝ երեքը տան բակում, մեկն էլ՝ տանիքին: Տունը շատ է վնասվել, իսկ գոմում կապված անասունները վիրավորվել են կամ վիրավորումից սատկել: Նա 35 կով, 2 ձի, 15 խոզ է կորցրել: Հոկտեմբերի 16-ին Անդրեյը իր տանը մոտենալիս է եղել, երբ ռումբը ընկել է: Տունը գյուղի դպրոցից գտնվում է 200մ, իսկ գերեզմանոցից՝ 200-250մ հեռավորության վրա: Վիրավորվել է կասետային զենքից, որից հետո նրան տեղափոխել են Ստեփանակերտ, ապա՝ Երևան: Վիրավորված ձախ ձեռքը անդամահատել են: Նա ասել է, որ այդ օրը, իրենից բացի, գյուղում վիրավորվել է նաև իր քեռակալը (բաջանաղը): Հարցին, թե ինչու էին ադրբեջանցիները թիրախավորել քաղաքացիական բնակչությանը, Անդրեյը պատասխանել է, որ նպատակը եղել է այդ տարածքները զավթելը: Արցախի հեռուստատեսության լրատվականի թղթակցին Անդրեյ Համբարձումյանը նույնպես վկայել է, որ ընկած արկերի քանակը եղել է 4-ը, և իր գնահատմամբ հարվածները հասցվել են կասետային զինամթերքով:[896]

Հոկտեմբերի 26-ին Արցախի մարդու իրավունքների պաշտպանը տարածել է հայտարարություն, ըստ որի՝ Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի ուղղությամբ կիրառվել է «Սմերչ» ՀԿՌՀ, որի հետևանքով զոհվել է մեկ քաղաքացիական անձ՝ Գևորգ Համբարձումյանը, վիրավորվել են երկու քաղաքացիական անձինք՝ Անդրեյ Համբարձումյանը և Հենրիխ Ադամյանը:[897] ԱՀ դատախազությունը հաստատել է, որ Հենրիխ Ադամյանը և Անդրեյ Համբարձումյանը վիրավորում են ստացել 2020 թվականի հոկտեմբերի 26-ին՝ Ասկերանի Ավետարանոց գյուղի հրետակոծության հետևանքով: Նրացից բացի նույն օրը վիրավորվել են ևս երկու անձինք:

Փաստահավաք խումբն ուսումնասիրել է երկու լրագրողական տեսանյութ,[898] որոնց միջոցով պարզվել է, որ հարձակման հետևանքով մի քանի ուղղությամբ պայթուններ են եղել, զգալի թվով անասուներ են ոչնչացվել: Արցախի հեռուստատեսության լրատվականի թղթակցին տված հարցազրույցում Ավետարանոց համայնքի ղեկավար Սևակ Բաղդասարյանը հայտնել է, որ գյուղում, բացի երկու տների ուղիղ հրետակոծությունից, վնասվել են նաև այլ տներ: Տեսանյութերից և հարցվածների վկայություններից երևում է, որ հարձակումը կրել է ոչ տարբերակված բնույթ, իսկ ավիրված տան պատերի, պատուհանների և այլ հատվածների վրա բեկորներից առաջացած անցքերը, ինչպես նաև ԱՀ դատախազության հաղորդումն առ այն, որ քաղաքացիական անձանց շրջանում վիրավորումների պատճառ են դարձել հրթիռային հարվածները, հիմք են տվել ենթադրելու, որ կիրառվել է կասետային զինամթերքով մարտագլխիկ: Տվյալների հավաքագրման թերթիկների միջոցով փաստահավաք խումբն ուսումնասիրել է գյուղի ևս 7 բնակչի հաղորդումները, որոնցից

896 ARTSAKH TV NEWS ՕՐ, «Լրատվական, Իրավիճակին ու տիրող տրամադրությունների Ավետարանոցում», 24 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?app=desktop&v=PKkVqkQVsTo

897 «Հակառակորդի «Սմերչ»-ի հարվածների հետևանքով Ավետարանոց գյուղում զոհվել է 1 և վիրավորվել 2 քաղաքացիական անձ», Հետք, 26 հոկտեմբերի, 2020թ., https://hetq.am/hy/article/123587

898 Ազատություն, «Դիվերսիոն Խումբ է Փորձել Գյուղ Մտնել, Բայց Մարտական Ոգին Բարձր է, Դուխով Ենք Ավետարանոցի Բնակիչներ», 25 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=frT7eFzrPfE.

մեկում հստակ նշվում է, որ գյուղացու ընտանիքի անդամները տեսել են կարմիր ժապավենով արկեր, որոնք ընկել են իրենց տան վրա և ամբողջությամբ քանդել տանիքը:

Վերլուծության հիման վրա փաստահավաք խումբը եզրակացրել է, որ Ավետարանոց գյուղում կիրառվել են կասետային ռումբեր:

Մարտունու շրջան

Փաստահավաք խումբը զրուցել է Բերդաշեն գյուղի բնակիչ Սվետլանա Հարությունյանի հետ, որը պատերազմի ընթացքում 12 օր մնացել է գյուղում: Փաստահավաք խումբն ուսումնասիրել է գյուղի ուղղությամբ իրականացված հարձակման հետևանքների մասին լրագրողական տեսանյութերը,[899] որոնք արվել են հոկտեմբերի 2-ին և 10-ին: Հոկտեմբերի 2-ի տեսանյութում գյուղի բնակիչները պատմում են, որ 4 օր առաջ՝ մոտավորապես ժամը 1130-ին, ավիահարված է եղել, որի հետևանքով ամբողջությամբ վառվել, ավիրվել է մի տուն: Հոկտմբերի 10-ի տեսանյութերում երևում են վնասված և ամբողջությամբ ավիրված տներ, մեքենաներ, բնակիչների հայտնաբերած կասետային արկերը և համազարկային կրակի ռեակտիվ համակարգի հրթիռի մնացորդները:

Արցախի հեռուստատեսության լրատվականի թղթակցի պատրաստած տեսանյութում [900]գյուղի բնակիչ Ստելլան պատմում է, որ հոկտեմբերի 9-ին ստացել է բեկորային վնասվածք. արկը պայթել է իրենից հինգ մետր հեռավորության վրա: Ստելայի վիրավորումը հաստատել է նաև ԱՀ դատախազությունը: Նրա տան պատուհանների վնասումները և հայտնաբերված զենքերի մնացորդները հիմք են տվել ենթադրելու, որ հոկտեմբերի 9-ին կիրառվել է «Սմերչ»-ի արկ՝ կասետային մարտական բաղադրիչներով:

Հավաքված վկայությունների և լրագրողական նյութերի ուսումնասիրության արդյունքում փաստահավաք խումբը արձանագրել է, որ պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 9-ին, Բերդաշեն գյուղի ուղղությամբ կիրառվել է կասետային զինամթերք:

Բացի այդ, պատերազմից հետո Արցախ կատարած այցի ընթացքում փաստահավաք խմբի անդամներն ուսումնասիրել են Մարտունիում Ծահեն Բալայանի տան տարածքը (դեպքի նկարագրությունը տե՛ս վերևում) և նրա բակում գտել կասետային զինամթերք:

Միջազգային մարդասիրական իրավունքն արգելում է կասետային զինամթերքի օգտագործումը քաղաքացիական կառույցներին մոտ տարածքներում կամ բնակելի թաղամասերում՝ ելնելով դրա ազդեցության մեծ շառավղից, ինչպես նաև կոմբատանտների և քաղաքացիական անձանց միջև տարբերակման անհնարինությունից: Քաղաքացիական բնակչության շարքում կասետային ռումբերից պատահական զոհեր ունենալու հավանականությունը կանխատեսելիորեն ավելի բարձր է, քան բազմաթիվ այլ զինատեսակների կիրառման դեպքում, քանի որ կասետային ռումբերի յուրաքանչյուր հարվածի խոցման մակերեսն ավելի մեծ է:[901] «Human Rights Watch»-ը գտնում է, որ

899 Федеральное агентство новостей, “Мартуни — Город, Которому Больно,” October 2, 2020, Vkontakte video, https://vk.com/video-73013298_456257460.

900 Արցախի հանրային հեռուստատեսություն, «Բերդաշենը ևս Ռմբակոծվել է Արգելված Կլաստերային Ռումբերով», 10 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=m9PBzgCViAY

901 “Cluster Bombs and Landmines in Kosovo: Explosive Remnants of War - ICRC” (International Committee of the Red Cross, June 2001), https://www.icrc.org/en/doc/resources/documents/report/explosive-remnants-of-war-brochure-311201.htm

Պատկեր 15.71. Շահեն Բալայանի տան պատը հարվածից հետո, ինչի արդյունքում սպանվել է նրա կինը: Շահեն Բալայանի տան բակում գտնված մարտական բաղադրիչը, 2020թ. (Աղբյուրը՝ փաստահավաք խումբ):

կասետային ռումբերի կիրառումը բնակելի տարածքներում համարվում է չտարբերակված հարձակում: [902]

«Կասետային զինամթերքի մասին» կոնվենցիան (ԿԶԿ) բոլոր հանգամանքներում արգելում է օգտագործել, մշակել, արտադրել, ձեռք բերել, կուտակել և փոխանցել կասետային զինամթերք, ինչպես նաև օգնել կամ խրախուսել որևէ մեկին՝ մասնակցելու արգելված գործողություններին, պարտավորեցնում է հավաքել մարտական չպայթած բաղադրիչները և օգնություն ցուցաբերել տուժողներին: Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը ընդգրկված չէ սույն կոնվենցիայի 110 մասնակից պետությունների ցանկում, միևնույն է, նա պետք է առաջնորդվեր ՄՄԻ-ի՝ պատերազմ վարելու մասին այն կանոններով և սկզբունքներով, որոնք կարգավորում են կասետային ցանկացած զինամթերքի կիրառումը զինված հակամարտությունների ընթացքում: Ըստ ՄՄԻ-ի սահմանած տարբերակման և համաչափության սկզբունքների՝ կասետային զինամթերքի օգտագործումը բնակելի տարածքներում անօրինական է:

Փաստագրված բոլոր դեպքերը վկայում են, որ Ադրբեջանն անտեսել է հարձակում իրականացնելուց առաջ հնարավոր բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները նախաձեռնելու մասին ՄՄԻ-ի պահանջը: Բաքուն պատասխանատվություն է կրում

902 “Fatally Flawed: Cluster Bombs and Their Use by the United States in Afghanistan” (Human Rights Watch, December 18, 2002), https://www.refworld.org/docid/3f4f594b7.html

բնակելի տարածքներում կասետային ռումբեր կիրառելու համար, որի հետևանքով վիրավորվել են քաղաքացիական անձինք, վնասվել են տներ և այլ քաղաքացիական գույք: Փաստահավաք խմբի ձեռք բերած ապացույցները և միջազգային կազմակերպությունների հրապարակած զեկույցները հաստատում են խիտ բնակեցված գյուղերում, քաղաքներում և դրանց շրջակայքում կասետային զինատեսակներ կիրառելու փաստերը: Կասետային զինատեսակների օգտագործումը նման վայրերում գնահատվում է ՄՄԻ-ի տարբերակման սկզբունքի խախտում և որակվում է որպես պատերազմական հանցագործություն:

Լրագրողների թիրախավորումը

«Կյանքդ էդ պահին վիճակախաղի տոմս էր, էս պահին կայիր, մյուս պահին՝ էլ չէ: Եթե դու գտնվում էիր այնտեղ, դու թիրախավորված էիր»:

«Factor TV»-ի օպերատոր Արթուր Դևրիկյան [903]

Փաստահավաք առաքելության շրջանակներում արձանագրվել են զինված հակամարտությունը լուսաբանող լրագրողների թիրախավորման դեպքեր: Լրագրողների նկատմամբ իրականացված հարձակումների հետևանքով մի խումբ լրագրողներ ստացել են մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ: Նման հարձակումները հանգեցրել են լրագրողների մասնագիտական գործունեության իրականացման խոչընդոտների, այդ թվում՝ լրագրողական նյութերի վրա աշխատելու արգելքների: Թիրախավորման դեպքերն ընդհանուր առմամբ իրենց ազդեցությունն են թողել նաև պատերազմի լուսաբանման վրա, քանի որ մի շարք լրագրողներ, անվտանգության նկատառումներից ելնելով, ստիպված են եղել լքել Արցախի Հանրապետությունը (Լեռնային Ղարաբաղը): Հարկ է նշել, որ Ադրբեջանն ունի լրագրողների իրավունքների ոտնահարման և խոսքի ազատությունը ճնշելու նախապատմություն, և այն, որ պատերազմի ընթացքում Ադրբեջանն օգտագործել է զենքեր, հատկապես անօդաչու թռչող սարքեր, որոնք ունեն մասնագիտացված և ճշգրիտ հետախուզական և թիրախային համակարգեր, ինչպես հետախուզություն, այնպես էլ հարձակումներ իրականացնելու համար:[904]

Հաշվի առնելով խախտումների փորձը, ադրբեջանական զինանոցի արդյունավետությունը և միջազգային մարդասիրական իրավունքի՝ (ՄՄԻ) տարբերակման, անհրաժեշտության, համաչափության և նախազգուշական միջոցառումների քաղաքականությունները, բավարար թվով ապացույցներ մատնանշում են լրագրողների թիրախավորման փաստը: Հետևաբար, ապացուցման բեռը առ այն, թե արդյոք լրագրողների թիրախավորումը և վնասվածքները զուտ պատահականություններ են եղել, թե՝ դիտավորություն, պետք է դրվի այն կողմ հանդիսացող պետության վրա, որն իրականացրել է գործողությունը և, հետևաբար, ունի հիմնավոր բացատրություն՝ արդարացնելու իր վարքը: Ինչպես ցույց է տալիս ստորև բերված վերլուծությունը, լրագրողների թիրախավորումը կամ միտումնավոր է եղել՝ նպատակ ունենալով Ադրբեջանի վարքագծի վերաբերյալ լուսաբանումը խաթարել, կամ լավագույն դեպքում՝ անխոհեմ: Ամեն դեպքում, լրագրողների թիրախավորումը և վնասվածքները, ինչպես նաև լրագրողներին ուղեկցող քաղաքացիական անձանց մահը հավասարազոր է ՄՄԻ-ի և մարդու իրավունքների նորմերի խախտումների:

Լրագրողների թիրախավորմանն առնչվող բազմաթիվ դեպքեր են գրանցվել, սակայն ստորև՝ սույն փաստահավաք առաքելության շրջանակում, ներկայացվում են միայն հետաքննված հիմնական դեպքերը:

903 Հարցազրույց Արթուր Դևրիկյանի հետ, 12 ապրիլի, 2021թ.:

904 Shaan Shaikh and Wes Rumbaugh, “The Air and Missile War in Nagorno-Karabakh: Lessons for the Future of Strike and Defense” (Center for Strategic and International Studies, December 8, 2020), https://www.csis.org/analysis/air-and-missile-war-nagorno-karabakh-lessons-future-strike-and-defense

2020 թվականի հոկտեմբերի 1, Մարտունի, Արցախ

Անկախ լրագրող Հերմինե Վիրաբյանը հոկտեմբերի 1-ին՝ ժամը 11:00-ից հետո, Արցախի Ստեփանակերտ քաղաքի տեղեկատվական շտաբի մոտից ուղևորվել է քաղաք Մարտունի՝ քաղաքացիական բնակավայրերին առավել վաղ հասցված վնասները փաստագրելու: Երեք լրագրողական մեքենաները, որոնցում եղել են Երեք լրագրողական խմբեր, միմյանցից որոշակի հեռավորություն պահելով, հասել են Մարտունու քաղաքապետարան, որի մոտ կանգնած քաղաքացիական բնակիչներից և ապաստարանի կանանցից հարցազրույցներ են վերցրել և լուսանկարել: Հերմինեին և ֆրանսիացի գործընկերներին՝ ֆրանիսական «Le Monde» պարբերականի լրագրողներ Ալլան Կավալին և Ռաֆայել Ծարլ Յաղուբզադենին տեղափոխող մեքենայի դիմապակուն Ա4 չափսի թղթի վրա տպված է եղել «Press» տարբերանշանը, որը եղել է տեսանելի: Մինչև քաղաքապետարանի շենքին հասնելը Հերմինեն զրահաբաճկոն է հագել և «TV» նշանով սաղավարտ կրել:

Պատկեր 16.1. Հերմինա Վիրաբյանը՝ հարվածից մեկ ժամ առաջ, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ Մեդիամաքս)

Հետագա դեպքերի մասին նա պատմում է.

> «Քաղաքապետարանից առավելագույնը 5 րոպե հեռավորության վրա մի փողոց էինք հասել, որտեղ մարդ չկար, դատարկ էր: Այդտեղ միայն բնակելի տներ էին, որտեղ ամեն ինչ սովորականի պես խաղաղ էր. դա սահման չէր, պատերազմական գոտի չէր, այդտեղ զինվորականներ չկային, ու ծայրահեղ լուռ էր: Մենք սկսեցինք լուսանկարել, մտանք նաև բակերը և նկարեցինք վնասված տները: Ռաֆայելը լուսանկարում էր, Ալանն էլ գրառումներ անում: Ես էլ ինձ հետ տեսախցիկ ունեի: Մենք դուրս եկանք բակից. տան դիմաց մեր մեքենան էր կանգնած, և արդեն պետք է նստեինք ու շարժվեինք, երբ աղմուկ լսեվեց: Պայթյունի ձայն

էր. ամեն ինչ շատ արագ ու վայրկենապես տեղի ունեցավ՝ գրեթե կես րոպեում: Այն պահին, երբ հասկացանք, որ պայթյունը մեզ վրա է գալիս, առանց ինչ-որ բան մտածելու, առանց իրար հետ խորհրդակցելու սկսեցինք անկանոն վազել: Ես միայն պայթյունների ձայներ էի լսում և նկատում շուրջս ընկնող ինչ-որ անհասկանալի բաներ: Հիշում եմ, որ գոռում էի՝ «բունկեռ, բունկեռ», բայց բոլոր դարպասները փակ էին, և ես նույնիսկ չէի մտածում պառկել, որպեսզի անշարժ մնամ տեղումս:

Ինչ-որ պահի հետևիցս լսեցի բարձր ու տանջալից գոռոցներ՝ «help, help»: Հասկացա, որ Ալլանն է: Ինձ մոտ շոկային վիճակ էր, և ես հիշողության կորուստ ունեցա: Միայն այն եմ հիշում, որ տեսա Ալլանին և Ռաֆայելին՝ տարբեր ուղղությունների վրա ընկած. հետևում սև ամպ էր, մոխիր ու ծուխ: Երբ հետ նայեցի, տեսա՝ Ալանը ամբողջությամբ արյան մեջ էր և ահավոր գոռում էր. ինձ թվաց, թե նա մահանում է: ...Ես հիշում եմ, որ խուճապահար վազեցի, վախեցած հանեցի զրահաբաճկոնս, բարձրացրի շալվարս ու երկար նայում էի, թե արդյոք ոտքերս տեղում են, որովհետև մտածում էի, թե շոկից կարող ա՝ չեմ զգում էդ ամենը»:[905]

Հերմինեն օգնել է Ռաֆայելին տեղափոխել Մարտունու հիվանդանոց, իսկ մյուս լրագրողները, ովքեր այդ պահին մոտակայքում են եղել և լսել են Հերմինեի աղմկալից ձայնը, օգնել են Ալանին:

Հերմինեն տեսել է, որ Ռաֆայելի ոտքը «բացվել է», և ոտքի ոսկորը երևում է: Ռաֆայելին Մարտունիում վիրահատել են, իսկ Ալանին Մարտունիից տեղափոխել են Ստեփանակերտ, որովհետև Մարտունիում չէին կարող անհրաժեշտ բուժօգնությունը ցույց տալ: Հերմինեն հիշում է, որ կար երկու հնարավորություն. կամ 40 րոպե Ալլանին փախցնել կրակոցների տակ ու փորձել փրկել, կամ թողնել Մարտունիում, որտեղ կմահանար: Երբ վիրավորված լրագրողներին Մարտունու հիվանդանոց են հասցրել, հիվանդանոցը դատարկ է եղել, և միայն ժամեր անց սկսել են անընդհատ նոր վիրավորներ բերել: Մարտունու բնակիչ Գրիշա Նարինյանը, որն ուղեկցում էր Հերմինեին և նրա ֆրանսիացի կոլեգաներին, սպանվել է: Հիվանդանոց հասնելուց 40-50 րոպե հետո փոխքաղաքապետը Հերմինեին ասել է, որ Գրիշան մահացել է:

Հերմինեն վստահ է, որ իրեն և գործընկերներին ադրբեջանական զինված ուժերը կանխամտածված հետևել են: Հասկանալով, որ քաղաքապետարանի տարածքում կարող էին լինել լրագրողներ, որոնք կլուսաբանեին տեղի ունեցածը, ադրբեջանցի զինվորները որոշել են չեզոքացնել նրանց, մանավանդ, որ արդեն նաև եթերից տեսել էին լրագրողների ուղիղ հաղորդումները:

2020թ.-ի հոկտեմբերի 1-ին լրագրողական մյուս խումբը՝ «24news» լրատվականի լրագրողներ Սևակ Վարդումյանը և օպերատոր Արթուր Հարությունյանը, հարձակման պահին գտնվել են Մարտունու քաղաքապետարանի շենքում: Արթուր Հարությունյանը գտնվել է Ստեփանակերտի Արցախի տեղեկատվական շտաբի մոտ, որտեղից ժամը 11-ի մոտակայքում իր մեքենայով ուղևորվել է Մարտունի: Նրա հետ է եղել նաև նույն լրատվականի լրագրող Սևակ Վարդումյանը: Մեքենայի վրա առկա է եղել «Press» գրառումը, և լրագրողները կրել են զրահաբաճկոններ՝ նույն տարբերակիչ գրառմամբ: Գնացել են Մարտունու քաղաքապետարան, որտեղ հանդիպել են նաև մի քանի այլ լրատվականների ներկայացուցիչների, նրանց հետ նաև «Le Monde»-ի լրագրողներին և Հերմինեին: Ժամը 13:00-ի սահմաններում Սևակն աշխատելիս է եղել քաղաքապետարանի շենքում, իսկ

905 Հարցազրույց Հերմինե Վիրաբյանի հետ, 26 ապրիլի, 2021թ.:

Պատկեր 16.2. «Le Monde»-ի վիրավոր լրագրողը հիվանդանոցում, 2 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Առավոտ» օրաթերթ):

Արթուրը եղել դրսում՝ ֆրանսիացի լրագրողների մոտ՝ Մոնթե Մելքոնյանի արձանից մոտ 5-6 մետր հեռավորության վրա կանգնած ֆրանսիացի լրագրողների մոտ:

Երբ ֆրանսիացի լրագրողները լքել են քաղաքապետարանի շենքը, Արթուրը վերադարձել է քաղաքապետարան, որից մի քանի րոպե հետո պայթյունի ձայն է լսվել: Արթուրը պատմել է, թե ինչպես էին վազում քաղաքապետարանի շենքի միջով, դռներ բացելով, փորձելով գտնել ապաստարան տանող ճանապարհը.

> «Սևակն էր դիմացից վազում, հետո՝ ես, մեր հետևից՝ մի ուրիշ մարդ, հերթով դռներն էինք բացում, որ հասկանանք, թե որտեղ է ապաստարանը: Սևակը երբ հասավ վերջին դռանը, դրսից հարվածի ուժգին ալիքը թափով բացեց բոլոր դռներն ու պատուհանները և մեզ տապալեց գետնին: Այն պահին, երբ Սևակը տեսավ, որ վերջին դուռն էլ չի բացվում, ևս մեկ ալիք հարվածեց: Սևակը բերանքսիվայր ընկավ: Հետո մենք սողալով մտանք սենյակները: Ես թաքնվեցի մի սենյակի անկյունում, իսկ Սևակը՝ կողքի: Եվս 3-4 պայթյունի ձայն լսվեց: Ամեն ինչ այնքան արագ եղավ, որ կարծես ընդամենը կես րոպե էլ չտևեց»:[906]

Արթուրը տեսել է, որ քաղաքապետարանի պատուհանները կոտրվել են, կողքի շենքից ծուխ է բարձրացել, շենքին մոտ կանգնած մի մեքենա է այրվել, որի վրա արկ էր ընկել, իսկ մի արկ էլ ընկեր էր իր մեքենայի մոտ և խրվել ասֆալտի մեջ. իր մեքենան էլ էր վնասվել:[907] Իսկ մոտակայքում ռազմական օբյեկտներ, որքանով ինքն էր տեղյակ, չկային:

906 Հարցազրույց Արթուր Հարությունյանի հետ, 5 ապրիլի, 2021թ.:

907 Ազատություն ռադիոկայան, «Թիրախավորվել է Մարտունու քաղաքապետարանը և հարակից տարածքը. 24 news-ի լրագրող», ֆեյսբուքյան հրապարակում, 1 հոկտեմբերի, 2020թ., https://www.facebook.com/azatutyun/videos/1742145575939423/

Պատկեր 16.3. «24News»-ի օպերատոր Արթուր Հարությունյանը (Աղբյուրը՝ լուսանկարը տրամադրել է Արթուրը):

Ինչպես նշել է Հերմինեն, Մարտունիում ադրբեջանցիների հարձակման պահին գտնվել են նաև լրագրողական այլ խմբեր. ռուսական «Дождь» հեռուստաընկերության գլխավոր խմբագրի տեղակալ Դմիտրի Ելովսկին Մարտունիում նույնպես հայտնվել է Ադրբեջանի հրետակոծության տակ: Թղթակիցը չի տուժել, պատսպարվել է ռմբապաստարանում:[908] Ադրբեջանական զինված ուժերը Մարտունիում թիրախավորել են նաև «Agence France-Presse» միջազգային լրատվական գործակալության լրագրողներին տեղափոխող ավտոմեքենան. լրագրողները չեն տուժել, սակայն մեքենան վնասվել է:[909]

Ականատեսների վկայություններն արժանահավատ են հետևյալ հիմնավորումներով. լրագրողական խմբերը գտնվել են նույն տարածքում, որտեղ տեղի են ունեցել վերոհիշյալ իրադարձությունները: Լրագրողական գործունեության ելակետը եղել է Մարտունու քաղաքապետարանը: Հերմինե Վիրաբյանը և «Le Monde» պարբերականի լրագրողները գտնվել են Նելսոն Ստեփանյան 15 հասցեում՝ բնակելի թաղամասում, որը Մարտունու քաղաքապետարանից գտնվում է 500-600մ հեռավորության վրա, իսկ «24 News» լրատվականի օպերատոր Արթուր Հարությունյանը և Սևակ Վարդումյանը գտնվել են Մարտունու քաղաքապետարանում: Բացի այդ, լրագրողները վկայակոչում են դեպքերի նույն ժամանակագրությունը: «Le Monde» պարբերականի լրագրողների ստացած

908 "Замглавреда Телеканала 'Дождь' Дмитрий Еловский Попал Под Обстрел в Нагорном Карабахе," TACC, October 1, 2020, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9601327?fbclid=IwAR1o59E8m9_IdWCuUR7DuYtOkOSn8XOAFEqm7x-kYFvHZL6Bl3nwiz4GPA98.

909 Armenian Unified Infocenter (@ArmenianUnified), «#breaking. Ադրբեջանի զինված ուժերը նաև թիրախավորել են մեքենա, որը տեղափոխում էր լրագրողներ Agence @afpfr-ից, որոնք ներկա պահին լուսաբանում են իրավիճակը #Արցախում», թվիթերյան գրառում, 1 հոկտեմբերի, 2020թ., https:// twitter.com/ArmenianUnified/status/1311631007452405760

Պատկեր 16.4. «Agence Fracne-Presse»-ի լրագրողներին տեղափոխող մեքենան, 1 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Հետք»):

վնասվածքների վերաբերյալ առկա են դատաբժշկական եզրակացություններ: Լրագրողների հայտնած տվյալների կապակցությամբ առկա են հաստատող առարկայական հիմքեր՝ տեսաձայնագրություններ և լուսանկարներ:[910] Լրագրողների թիրախավորման դեպքը փաստագրվել է նաև Հայաստանի և Արցախի Հանրապետությունների մարդու իրավունքների

910 "French Le Monde Journalists Critically Injured by Azerbaijan's Attack in Martuni Region of Artsakh / Karabagh," AzeriWarCrimes.org, October 2, 2020, https://azeriwarcrimes.org/2020/10/02/two-french-journalists-critically-injured-and-one-armenian-civilian-killed-by-azerbaijans-attack-on-press-car/; "Bus Carrying Russia, Armenian Journalists Hit by Artillery Fire | Cyprus Mail," Cyprus Mail, October 2, 2020, sec. Europe, https://cyprus-mail.com/2020/10/02/bus-carrying-russia-armenian-journalists-hit-by-artillery-fire/

պաշտպանների կազմած զեկույցում,[911] դեպքին անդրադարձել է «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը 2020 թվականի հոկտեմբերի 2-ի հայտարարության մեջ,[912] ինչպես նաև «The Committee to Protect Journalists»[913] և «International Press institute» [914]կազմակերպությունները:

Այդ օրվա բոլոր իրադարձություններն ամփոփելով՝ ակնհայտ է, որ 2020 թվականի հոկտեմբերի 1-ին Մարտունու քաղաքացիական հատվածները ենթարկվել են հրետակոծության, երբ այնտեղ էին գտնվում տեղացի և միջազգային լրագրողներ: Ժամը 13:15-ից 13:30-ի սահմաններում, «Le Monde» պարբերականի լրագրողներ Ալան Կավալին և Ռաֆայել Ծարլզ Յաղոբզադեն և անկախ լրագրող Հերմինե Վիրաբյանը Մարտունի քաղաքի Նելսոն Ստեփանյան փողոցում՝ 15-րդ տան մոտ, ադրբեջանական զինված ուժերի կողմից հասցված վնասները փաստագրելիս ենթարկվել են հրետակոծության (ինչն ապացուցվում է զենքերի տեսակներով): Հարձակման ենթարկվելու պահին լրագրողները գտնվել են «Press» տարբերանշանով իրենց մեքենայի մոտ: Արցախի Հանրապետության կողմից հայտնած տեղեկության համաձայն և ըստ դատաբժշկական եզրակացության՝ Ալլան Կավալին ստացել է կյանքին և առողջությանը սպառնացող ծանր վիրավորում, իսկ Ռաֆայել Ծարլզ Յաղոբզադեն՝ համեմատաբար թեթև վնասվածք՝ առողջության կարճաժամկետ խաթարմամբ: Լրագրողներին ուղեկցող Մարտունի քաղաքի 28-ամյա բնակիչ Գրիշա Նարինյանը տեղում մահացել է: Նկարագրված իրադարձությունների ընթացքում լրագրողական մեկ այլ խմբի՝ «24news»-ի օպերատոր Արթուր Հարությունյանը, լրագրող Սևակ Վարդումյանը, նաև «ArmeniaTV» հեռուստաընկերության օպերատոր Արամ Գրիգորյանը գտնվել են Մարտունու քաղաքապետարանի շենքում: Սևակ Վարդումյանը և Արամ Գրիգորյանը, ըստ դատաբժշկական եզրակացության, ստացել են թեթև վնասվածքներ:

2020 թվականի հոկտեմբերի 2, Մարտակերտ, Արցախ

Լրագրողների թիրախավորման հաջորդ դեպքը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 2-ին: «Factor TV»-ի օպերատոր Արթուր Դևրիկյանը նշում է, որ 2020թ.-ի հոկտեմբերի 2-ին՝ Մարտակերտից Ներքին Հորաթաղ վերադառնալիս, լրագրողներին, այդ թվում՝ նաև իրեն տեղափոխող «Mercedes-Benz Sprinter» ավտոմեքենան ենթարկվել է հարձակման: Ավտոմեքենայում գտնվել են հայ և արտասահմանյան լրատվականների 10-12 ներկայացուցիչ: Մարտակերտից Ներքին Հորաթաղ տանող ճանապարհին կրակոցի ձայներ է լսել, հետո տեսել է, թե ինչպես կրակոցներից մեքենայի պատուհանները ջարդվեցին: Երբ

911 «Արտահերթ զեկույց Արցախում (Լեռնային Ղարաբաղ) ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների վրա ադրբեջանական հարձակումների վերաբերյալ» (Երևան-Ստեփանակերտ. Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, 18 դեկտեմբերի, 2020թ.), https://www.ombuds.am/images/files/2fda5dc2a427732e0b8baa748b66cf37.pdf

912 "Call for Probe into Origin of Shelling That Injured Reporters in Nagorno-Karabakh," Reporters Without Borders, October 2, 2020, https://rsf.org/en/news/call-probe-origin-shelling-injured-reporters-nagorno-karabakh.

913 "At Least 4 Journalists Injured Covering Nagorno-Karabakh Conflict," Committee to Protect Journalists, October 1, 2020, https://cpj.org/2020/10/at-least-4-journalists-injured-covering-nagorno-karabakh-conflict/.

914 "Resumption of Fighting in Nagorno-Karabakh Risks Further Attacks on Journalists," International Press Institute, October 12, 2020, sec. Europe, https://ipi.media/resumption-of-fighting-in-nagorno-karabakh-risks-further-attacks-on-journalists/

Պատկեր 16.5. «Factor TV»-ի լրագրող Ռոբերտ Անանյանը (ձախից) և օպերատոր Արթուր Դևրիկյանը (աջից) (Աղբյուրը՝ լուսանկարելը տրամադրել է Արթուր Դևրիկյանը):

ծուխը է լցվել մեքենայի մեջ, դուրս են եկել՝ մեքենան կայանելով կիսակառույց մի շինության պատի տակ: Արթուրը նշում է, որ այդ ամենը կատարվել է 20 վայրկյանի ընթացքում, սակայն չի տեսել, թե ինչ զենքից են կրակել, բայց մեքենայի վրա բեկորների հարվածներից հետքեր են մնացել, որոնք արձանագրված են իրենց նկարած տեսանյութում (Պատկեր 16.6):[915]

Արթուրը նշում է, որ մեքենայի փշրված ապակիները լցվել էին ռուսական Առաջին ալիքի լրագրող Տիմոֆեյ Երմակովի գլխին, քանի որ նա պատուհանի մոտ էր նստած:

«Factor TV»-ի լրագրող Ռոբերտ Անանյանը, որը նույնպես լրագրողներին տեղափոխող մեքենայի մեջ է եղել, նշում է, որ մեկ կրակոց չի հնչել, այլ տևական կրակահերթ: Ճանապարհին շարժ չի եղել: Այն եղել է դատարկ ու քանդված վիճակում: Լրագրողներին տեղափոխող մեքենայի դիմապակու և կողային ապակիների վրա եղել է «PRESS» գրառումը, ինչպես նաև լրագրողները կրել են տարբերանշան ունեցող զրահաբաճկոններ: Դեպքի ողջ ընթացքը տեսաձայնագրվել է:[916]

Մարտակերտ քաղաքում շրջելիս լրագրողները ոչ մի զինտեխնիկա կամ զինվորական օբյեկտ չեն տեսել:

Ռոբերտը նշում է, որ հարձակման նպատակը եղել է այն, որ խոչընդոտվի իրավիճակի անաչառ լուսաբանումը, քանի որ խոցվել էին քաղաքացիական օբյեկտներ, խաղաղ բնակիչներ էին սպանվել: Այսինքն, ադրբեջանական ուժերի խնդիրը եղել է ոչ միայն ռազմական օբյեկտները թիրախավորելը, այլ նաև խաղաղ բնակիչներին ահաբեկելը: Նա ընդգծել է հետևյալը.

915 Factor tv, «ՀՐԱՏԱՊ. Կրակահերթ Լրագրողների Մեքենայի Վրա Մարտակերտում», 2 հոկտեմբերի, 2020թ., https://www.youtube.com/watch?v=3sAef__znJM

916 Նույն տեղում:

Պատկեր 16.6. Լրագրողներին տեղափոխող մեքենայի վրա հարձակման հետևանքները ցուցադրող տեսանյութից արված սկրինշոթ, 2 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Factor TV»):

> «Լրագրողների համար այս բարդ, կյանքի համար վտանգավոր միջավայրի ստեղծմամբ Ադրբեջան կոնկրետ նպատակ է հետապնդել թույլ չտալ հայկական և միջազգային մամուլին լուսաբանել իր գործած պատերազմական հանցագործությունները: Այսինքն նպատակը եղել է լրագրողներին Արցախից դուրս մղելը, որպեսզի պատերազմական հանցագործությունները, քաղաքացիական բնակչության թիրախավորումն ու մարդկանց տառապանքները չլուսաբանվեն: Նրանք մասամբ հասան իրենց նպատակին, որովհետև լրարողների մի մասը հեռացավ»:[917]

Այս ականատեսների վկայությունները արժանահավատ են այն հիմնավորմամբ, որ նրանք գտնվել են նույն թիրախավորված մեքենայում, ներկայացրել են նույն տեղեկատվությունը և բանավոր վկայությունից զատ նրանք նաև տեսանկարահանել են դեպքի ընթացքը, մեքենայի վնասվածքները, օրինակ, կոտրված ապակիների փշրանքները և պայթյունի բեկորների հարվածից մեքենայի վրա առաջացած հետքերի լուսանկարները: Տեսաձայնագրության մեջ տեսանելի է, որ լրագրողները կրել են հատուկ հանդերձանք, իսկ լրագրողական մեքենայի վրա փակցված է եղել «PRESS» գրառումը: Լրագրողների թիրախավորման այս դեպքը նույնպես փաստագրվել է Հայաստանի և Արցախի Հանրապետությունների մարդու իրավունքների պաշտպանների կազմած զեկույցում և «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի հայտարարության մեջ:[918]

917 Հարցազրույց Ռոբերտ Անանյանի հետ:

918 “Call for Probe into Origin of Shelling That Injured Reporters in Nagorno-Karabakh.”

Այսպիսով, 2020 թվականի հոկտեմբերի 2-ին հայ և ռուս լրագրողներին տեղափոխող ավտոբուսը թիրախավորվել է Մարտակերտից Ներքին Հորաթաղ գյուղ գնացող ճանապարհին: Ավտոբուսը վնասվել է, սակայն լրագրողները չեն վիրավորվել:

2020 թ. հոկտեմբերի 8, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցի

Լրագրողների թիրախավորման հերթական դեպքը արձանագրվել է 2020 թվականի հոկտեմբերի 8-ին Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցու վրա իրականացված հարձակման ժամանակ:[919] Ադրբեջանական զինված ուժերի կողմից տաճարի թիրախավորման պատճառով մարմնական վնասվածքներ են ստացել օրվա առաջին կեսին նույն տաճարի նախորդ հրթիռակոծման հետևանքները լուսաբանելու նպատակով տեղում գտնվող օտարերկրացի լրագրողներ Յուրի Կոտյոնոկը, Լևոն Արզանովը և նրանց ուղեկցող խմբի անդամ Հրանտ Բալադյանը:[920] Յուրի Կոտյոնոկը և Լևոն Արզանովը ծանր վիրավորվել են, Հրանտ Բալադյանը ստացել է միջին ծանրության վիրավորում, որը երկարաժամկետ քայքայիչ հետևանքներ է թողել նրա առողջության վրա: Լրագրողների թիրախավորման նշված դեպքը փաստագրել են նաև «Human Rihts Watch» կազմակերպությունը[921] և «The Committee to Protect Journalists»-ը:[922]

Պատկեր 16.7. Յուրի Կոտյոնոկին հեռացնում են Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուց, 8 հոկտեմբերի, 2020թ. (Աղբյուրը՝ «Azeri War Crimes»):

919 Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու նկատմամբ իրականացված հարձակման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես մշակութային հանցագործությունների բաժնում:

920 Azeri War Crimes, "Moment of Evacuation of the Russian Journalist Yuri Kotenok after Second Strike on Shushi Church," November 19, 2020, YouTube video, https://www.youtube.com/watch?v=FtfPGWv0GrM.

921 "Azerbaijan: Attack on Church Possible War Crime," Human Rights Watch, December 16, 2020, https://www.hrw.org/news/2020/12/16/azerbaijan-attack-church-possible-war-crime.

922 "Shelling Injures 2 Russian Journalists in Nagorno-Karabakh; Armenian Government Revokes Journalist's Accreditation," Committee to Protect Journalists, October 8, 2020, https://cpj.org/2020/10/shelling-injures-2-russian-journalists-in-nagorno-karabakh-armenian-government-revokes-journalists-accreditation/

Վերլուծություն

Այս գլուխը ցույց է տալիս, թե ինչպես է Ադրբեջանի կառավարությունը 2020 թվականի արցախյան պատերազմի ժամանակ բացարձակ անտեսել լրագրողների իրավունքները: Նման վերաբերմունքը հիշեցնում է ԶԼՄ-ների նկատմամբ Բաքվի ռեպրեսիվ քաղաքականությունը, ինչպես նաև նրա անհանդուրժողականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ պաշտոնական ադրբեջանական դիրքորոշումից շեղվող մեկնաբանությունների նկատմամբ:

Ադրբեջանի իշխանությունները հատկապես ագրեսիվ են եղել այն լրագրողների նկատմամբ, որոնց աշխատանքը ինչ-որ կերպ առնչվում էր Արցախին: Օրինակ, կոմերցիոն չափերի մեծ լսարան չունեցող բլոգեր Ալեքսանդր Լապշինը Արցախ այցելելուց հետո հետապնդման ենթարկվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից, որոնք Բելառուսից պահանջեցին արտահանձնել նրան: Արտահանձնումից հետո Բաքվի դատարանը Լապշինին երեք տարվա ազատազրկման դատապարտեց՝ Արցախ մուտք գործելու համար: Ավելի ուշ Լապշինին ներում շնորհեցին հավանաբար իր իսրայելական քաղաքացիության պատճառով՝ ակներև դարձնելով, որ քաղաքականությունը օրենքից վեր է: Լապշինը դիմեց ՄԻԵԴ՝ Բաքվին մեղադրելով իր սպանության փորձի և բանտում իրեն դաժան խոշտանգումների ենթարկելու մեջ: ՄԻԵԴ-ը գտել է, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել խոշտանգումն արգելող ՄԱԿ-ի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի թե՛ ընթացակարգային, թե՛ էական խախտում:[923] Ինչ վերաբերում է Արցախի դեմ վերջին պատերազմին, հարկ է նշել, որ պատերազմը սկսելուն պես՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, տեղական ժամանակով ժամը 10:00-ի սահմաններում, Ադրբեջանի տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությունը հայտարարություն է տարածել, որում ասվում էր, որ գերատեսչությունը սահմանափակել էր համացանցի հասանելիությունը՝ «Հայկական լայնածավալ սադրանքները կանխելու համար»:[924] Ադրբեջանում նման սահմանափակումները նորություն չեն:

Պատերազմի ժամանակ Ադրբեջանը խոչընդոտել է նաև միջազգային լրատվամիջոցների աշխատանքը: Օրինակ՝ ռուսական LifeNews պորտալի լրագրողներին արտաքսել են Ադրբեջանից, քանի որ ադրբեջանական իշխանությունները նրանց մեղադրել են «փաստերը խեղաթյուրելու»[925] մեջ: Իսկ ֆրանսիական France24 լրատվական գործակալության թղթակից Քեթրին Նորիս-Տրենտը նշել է, որ Ադրբեջանի իշխանությունները հետևել են լրագրողների տեղաշարժին, ուղեկցել նրանց և միջամտել լրագրողների և սովորական քաղաքացիների շփմանը:[926] Բացի այդ, քրեական գործ է հարուցվել «WarGonzo»-ի ռուս բլոգեր Սեմյոն

923 Lapshin v. Azerbaijan, No. 13527/18 (European Court of Human Rights December 4, 2018); "European Rights Court Finds Baku Authorities Guilty of Trying to Kill Blogger," Radio Free Europe/Radio Liberty, May 21, 2021, sec. Azerbaijan, https://www.rferl.org/a/azerbaijan-guilty-killing-blogger-lapshin-european-rights-court/31266991.html

924 "Ermənistanın törətdiyi genişmiqyaslı təxribatın qarşısını almaq üçün ölkə üzrə internetin verilməsi məhdudlaşdırıldı," Ministry of Digital Development and Transport of the Republic of Azerbaijan, September 27, 2020, https://mincom.gov.az/az/view/news/990/ermenistanin-toretdiyi-genishmiqyasli-texribatin-qarshisini-almaq-uchun-olke-uzre-internetin-verilmesi-mehdudlashdirildi

925 «Արտահերթ զեկույց Արցախում (Լեռնային Ղարաբաղ) ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների վրա Ադրբեջանի հարձակումների վերաբերյալ»:

926 «France24-ի թղթակիցն ասում է, որ Ադրբեջանի իշխանությունները խախտում են մամուլի ազատությունը», Արմենպրես, 12 հոկտեմբերի, 2020 թ., https://armenpress.am/arm/news/1031404/
"Azerbaijan Opens Criminal Case against Russian Blogger Semyon Pegov," TASS, October 12, 2020, https://tass.com/emergencies/1211417?fbclid=IwAR1pA4h6v8U8FVR0dFCY7h24j8jWa1xZGlzUVZnvrXiErlOPC0Gk0yQFeIU

Պեգովի դեմ՝ Արցախ այցելելու համար:[927] Ավելին, Ադրբեջանի իշխանությունները հրապարակայնորեն հայտարարել են, որ չեն կարող ապահովել Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների անվտանգությունը՝ հավելելով, որ լրագրողները Լեռնային Ղարաբաղ մուտք գործելուց առաջ պետք է թույլտվություն պահանջեն Ադրբեջանի իշխանություններից: Հաշվի առնելով նախապատմությունն ու առկա ենթատեքստը՝ այս հայտարարությունը ավելի շատ սպառնալիք է, քան նախազգուշացում: Ամենակարևորն այն է, որ Արցախի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ տեղեկություն ունի Ադրբեջանի կողմից ստեղծված հատուկ խմբերի մասին, որոնք ձևավորվել են Արցախում օտարերկրյա լրագրողների վրա նպատակային հարձակումներ իրականացնելու միջոցով նրանց տեղաշարժն ու գործունեությունը վերահսկելու համար:[928]

Հենց այս համատեքստում է պետք դիտարկել, թե ինչպես է Ադրբեջանն իրականացրել ռազմական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով զինված հակամարտությունը կարգավորող իրավական սկզբունքները, մասնավորապես՝ տարբերակման, անհրաժեշտության և համաչափության և նախազգուշացման սկզբունքները: Տարբերակման մասով պետական դերակատարները պետք է մի կողմից տարբերակում դնեն քաղաքացիական անձանց և օբյեկտների, իսկ մյուս կողմից՝ օրինական ռազմական թիրախների միջև: Ինչ վերաբերում է անհրաժեշտությանը և համաչափությանը, ապա հարձակումներն արգելվում են այն դեպքում, երբ ակնկալվում է, որ դրանք կհանգեցնեն չնախատեսված մարդկային կորուստների, քաղաքացիական անձանց շրջանում վիրավորումների և, քաղաքացիական օբյեկտների վնասմանը, ինչը չափազանց մեծ չափերի կարող է լինել ակնկալվող կոնկրետ և ուղղակի ռազմական առավելության համատեքստում: Այսպիսով, համաչափության սկզբունքը նպատակ ունի հնարավորինս նվազեցնել ռազմական գործողությունների հետևանքով առաջացած «կողմնակի վնասը»: Այն չափանիշը, որը հնարավորություն է տալիս որոշել, թե որքանով է նման վնասը արդարացված միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում, ենթադրում է մի իրավիճակ, որտեղ պետք է լինի ողջամիտ հարաբերակցություն օրինական ոչնչացման և անցանկալի կողմնակի ազդեցությունների միջև: Ավելին, վերը նշվածին համահունչ, անվտանգության մոտեցումը ենթադրում է, որ պետական դերակատարները պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները՝ խուսափելու և ցանկացած պարագայում նվազագույնի հասցնելու քաղաքացիական անձանց շրջանում պատահական կորուստները, վիրավորումները, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտներին հասցվող վնասը: Նախազգուշացման դրսևորումներից մեկը կարող էր լինել զգուշացնելու պարտավորությունը, ինչպես այն սահմանված է 1-ին արձանագրության շրջանակում:

Ելնելով այս սկզբունքներից և տարրական բանականությունից՝ լրագրողները և ընդհանրապես լրատվական մեդիան օգտվում են ռազմական գործողությունների հետևանքներից ընդհանուր պաշտպանվածության իրավունքից, որը ՄՄԻ-ով նախատեսված է քաղաքացիական անձանց և օբյեկտների համար: Այս եզրակացությունը հաստատվում է նրանով, որ 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 50-րդ հոդվածը, որը վերաբերում է միջազգային զինված

927 "Azerbaijan Opens Criminal Case against Russian Blogger Semyon Pegov," TASS, October 12, 2020, https://tass.com/emergencies/1211417?fbclid=IwAR1pA4h6v8U8FVR0dFCY7h24j8jWa1xZGlzUVZnvrXiErlOPC0Gk0yQFeIU

928 «Արտահերթ զեկույց Արցախում (Լեռնային Ղարաբաղ) ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների վրա Ադրբեջանի հարձակումների վերաբերյալ»:

հակամարտություններից տուժածների պաշտպանությանը, զինված հակամարտությունների տարածքներում վտանգավոր մասնագիտական առաքելություն կատարող լրագրողներին դիտարկում է որպես քաղաքացիական անձանց:[929]

Այս շրջանակում պետք է համարել, որ Ադրբեջանը ունեցել է հետախուզության և թիրախավորման զարգացած կարողություններ: Բազմաթիվ տեղեկություններ են հրապարակվել Ադրբեջանի կողմից թուրքական անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) լայնածավալ օգտագործման մասին: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը նույնպես հաստատել է պատերազմի ժամանակ անօդաչու թռչող սարքերի լայնածավալ կիրառումը՝ հայտարարելով, «Ադրբեջանի զինված ուժերի ունեցած ժամանակակից թուրքական անօդաչուների շնորհիվ առաջնագծում մեր կորուստները պակասել են» և «այս անօդաչուները ի ցույց են դնում Թուրքիայի ուժը: Դա նաև մեզ է ուժ տալիս»:[930] Ավելին, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը Twitter-ում և Telegram-ում հրապարակել է ամենօրյա լրահոս՝ անօդաչու թռչող սարքերի տեսանյութերով, որոնք իբր ցույց են տալիս հրթիռային հարձակումներ և ուղղորդված անօդաչու սարքերի կողմից կատարվող հարվածներ: Այս տեսանյութերը ցույց են տվել, որ հարվածի ենթակա տարածքը լիովին տեսանելի է, և ադրբեջանական ուժերը կարողացել են տեսնել, թե ինչ օբյեկտի կամ անձի են հարվածել: Պետք է նկատի ունենալ նաև, որ հնարավոր է՝ որոշ դեպքերում հարձակումները կատարվել են ոչ թե անօդաչու թռչող սարքերից, այլ տարբեր զինատեսակներով, սակայն հիմնվելով անօդաչու թռչող սարքերի կողմից ձեռք բերված հետախուզական տվյալների վրա: Դրան գումարվում են հաղորդված ապացույցներն առ այն, որ Ադրբեջանը վերահսկում էր էլեկտրոնային հաղորդակցությունը և մշտադիտարկում էր լրագրողներին՝ հետևելով նրանց հաղորդումներին: Այսպիսով, տրամաբանական և առավել հավանական է, որ ադրբեջանական ուժերը իմացել են քաղաքացիական լրագրողների գտնվելու տեղերի մասին այն վայրերում, որոնք հարձակման են ենթարկվել նախքան նշված հարձակումները:

Բացի այդ, հարձակումները, որոնց ընթացքում լրագրողները վտանգի են ենթարկվել և վիրավորվել, ռազմական թիրախներ չեն ունեցել, և հետևաբար նման հարձակումները խախտում են ՄԻՀ բոլոր սկզբունքները: Ինչպես վերը նշվեց, հարձակումներն իրականացվել են բնակելի թաղամասերի վրա և թիրախավորել են մամուլին պատկանող մեքենա, ինչպես նաև Ծուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) տաճարը այն պահին, երբ լրագրողները հաղորդում էին տաճարի վրա կատարված նախորդ հարձակման մասին: Ինչպես նշվեց վերևում, բոլոր վկաները նշել են, որ այդ հատվածներում ռազմական օբյեկտներ կամ թիրախներ չեն եղել: Նաև, ինչպես հայտնում են վերը նշված ականատեսները, Մարտունու վրա կատարված հարձակումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ լրագրողների տարբեր թիմեր, որոնց բոլորին հնարավոր է եղել նույնականացնել լրագրողի «PRESS» նշանով, այնտեղ են եղել փաստագրելու քաղաքացիական տարածքների վրա կատարված հարձակումը և այդ պահին եղել են քաղաքապետարանի շենքում ու հարակից տարածքներում: Եվ հենց այս ամենաուղիղ իմաստով՝ լրագրողները թիրախավորվել են և դա արվել է ՄՄԻ-ի և մարդու իրավունքների բոլոր նորմերի խախտմամբ:

929 «Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն (I), 1977 թ.» (Կարմիր Խաչի միջազգային կոմիտե, 7 դեկտեմբերի, 1978թ.), https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/470

930 Ռոբերտ Լի (@RALee85), «Մի քանի օր առաջ տված հարցազրույցի ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն ասել է. «Ադրբեջանի պատկանող թուրքական առաջադեմ անօդաչու թռչող սարքերի շնորհիվ ճակատում մեր զոհերի թիվը կրճատվեց», «Այս անօդաչուները ցույց են տալիս Թուրքիայի հզորությունը. Այն նաև մեզ է ոգևորում», թվիթերյան գրառում, 8 հոկտեմբերի, 2020թ., https://twitter.com/RALee85/status/1314146939374575617

Ավելին, լրագրողների դեմ այս հարձակումների հետևանքները և այդ հետևանքների արդյունքում Ադրբեջանի ձեռք բերած առավելությունները հանդիսանում են անուղղակի ապացույց այն բանի, որ այդ հարձակումները և լրագրողների թիրախավորումը եղել են միտումնավոր: Ինչ վերաբերում է հետևանքներին, ապա, ինչպես վկայում է սույն զեկույցը, տուժել է ութ լրագրող, այդ թվում՝ երկու ֆրանսիացի (մեկը կյանքի համար վտանգավոր վնասվածքներով) և երեք ռուս լրագրող: Հերմինե Վիրաբյանը հայտնել է, որ հիշողության կորուստ է ունեցել և դեպքից հետո այլևս չի կարողացել աշխատել պատերազմի հետ կապված թեմաներով, իսկ Արթուր Դևրիկյանը նշել է, որ չափազանց զգայուն է դարձել և վախենում է պայթյունի նմանվող ձայներից: Եվ ամենակարևորը՝ անվտանգության նկատառումներից ելնելով, լրագրողները լքել են Արցախը, և այս փաստը խոչընդոտել է պատերազմի լուսաբանմանը և սահմանափակել ամբողջ աշխարհում տեղեկատվության տարածումն այն ամենի մասին, ինչի միջով անցնում էր Արցախի բնակչությունը: Այսպիսով, լրագրողների թիրախավորումն Ադրբեջանին լրատվամիջոցների և հասարակայնության հետ կապերի համատեքստում տվել է առավելություն:

Եվ վերջապես, իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնող լրագրողների նշված թիրախավորումը ՄՄԻ-ի և մարդու իրավունքների նորմերի ակնհայտ խախտում է: Զինված հակամարտության ժամանակ լրագրողները համարվում են քաղաքացիական անձինք և օգտվում են քաղաքացիական անձանց պաշտպանող միջազգային սովորութային իրավունքի նորմերից՝ հիմնված տարբերակման, անհրաժեշտության, համաչափության և նախազգուշացման սկզբունքների վրա:[931] Քաղաքացիական բնակչությունը ներառում է բոլոր այն անձանց, որոնք զինված ուժերի անդամ չեն հանդիսանում կամ չեն մասնակցում մարտական գործողություններին:[932] Սովորութային իրավունքի համաձայն՝ հակամարտող կողմերը պարտավոր են միշտ տարբերակում դնել քաղաքացիական անձանց և կոմբատանտների միջև, իսկ հարձակումները կարող են ուղղված լինել միայն կոմբատանտների և ոչ՝ քաղաքացիական անձանց դեմ:[933] Հետևաբար, անխտրական/չտարբերակված հարձակումներն արգելվում են:[934] Ավելին, քաղաքացիական անձանց դիտավորյալ թիրախավորումը ռազմական հանցագործություն է, քանի որ այն Ժնևի կոնվենցիայի կոպիտ խախտում է: Մասնավորապես, «Լուրջ խախտում է համարվում հետևյալ գործողություններից որևէ մեկը, եթե այն կատարվել է սույն Կոնվենցիայով պաշտպանված անձանց կամ գույքի դեմ. դիտավորյալ սպանություն... մարմնին կամ առողջությանը վնաս պատճառելը»:[935] Բացի այդ, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի 2(a)(iii) պարբերությունը նախատեսում է, որ լուրջ խախտումների թվին են պատկանում «դիտավորությամբ մեծ տառապանք պատճառելը կամ մարմնին կամ առողջությանը լուրջ վնաս պատճառելը»: Ավելին, համաձայն 8-րդ հոդվածի 2(b)(i) պարբերության՝ «քաղաքացիական բնակչության դեմ որպես այդպիսին կամ ռազմական

931 Frédéric De Mulinen, Handbook on the Law of War for Armed Forces (Geneva: International Committee of the Red Cross, 1987), http://hre.ohchr.org/hret/InstitutionDetail.aspx?INSKey=460&Lng=en

932 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 5. Քաղաքացիական անձանց սահմանում» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 6-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docindex/v1_rul_rule5

933 «Սովորութային ՄՄԻ - Կանոն 1. Քաղաքացիական անձանց և կոմբատանտների տարբերակման սկզբունքը» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 6-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs /v1_rul_rule1

934 Տես https://ihl-databases.icrc.org/customary-ihl/rus/docs/v2_rul_rule34.

935 «Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա)» (Կարմիր խաչի միջազգային կոմիտե, 12 օգոստոսի, 1949թ.), հոդ. 147, https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380

գործողություններին ուղղակիորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց դեմ ուղղված հարձակումները», նույնպես կոպիտ խախտումներ են:[936]

Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին վերաբերող նորմերին, ապա ըստ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝

> Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:[937]

Ինչպես նաև, ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 10(1)-ի՝

> Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում[938]

Այս չափանիշներից և կանոններից ելնելով՝ լրագրողներին պաշտպանելու նպատակով հատուկ բանաձևեր են ընդունվել ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ Եվրոպայի խորհրդի կողմից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունել է թիվ 1738 բանաձևը, որը դատապարտում է լրագրողների, մամուլի ներկայացուցիչների և նրանց հետ առնչվող անձակազմի դեմ զինված հակամարտությունների ժամանակ իրականացվող կանխամտածված հարձակումները և բոլոր կողմերին կոչ է անում վերջ տալ նման գործելաոճին:[939] ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը նույնպես իր մտահոգությունն է հայտնել զինված հակամարտությունների ժամանակ լրագրողներին թիրախավորելու վերաբերյալ:[940] Բացի այդ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր թիվ R (96) 4 հանձնարարականում նույնպես անդրադարձել է կոնֆլիկտային իրավիճակներում լրագրողների պաշտպանությանը, որտեղ ընդգծվում է լրագրողների և լրատվամիջոցների դերի կարևորությունը՝ հասարակությանը տեղական և միջազգային օրենսդրության խախտումների, ինչպես նաև զինված հակամարտություններում քաղաքացիական բնակչության տառապանքի մասին իրազեկելու գործում, քանի որ լրագրությունը կարող է օգնել կանխել հետագա խախտումներն ու տառապանքը:[941]

---

936 Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ Ժնևի կոնվենցիա (Ժնևի չորրորդ կոնվենցիա):

937 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 16 դեկտեմբերի, 1966թ.), հոդ. 19, https://www.refworld.org/docid/3ae6b3aa0.html

938 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, փոփոխված թիվ 11 և 14 արձանագրություններով» (Եվրոպայի խորհուրդ, 4 նոյեմբերի, 1950թ.), հոդված 10, https://www.refworld.org/docid/ 3ae6b3b04.html

939 "Security Council Condemns Attacks Against Journalists in Conflict Situations, Unanimously Adopting Resolution 1738 (2006) | Meetings Coverage and Press Releases," UN News, December 23, 2006, https://www.un.org/press/en/2006/sc8929.doc.htm

940 «Սովորութային ՄՄԻ - 34-րդ կանոնին առնչվող պրակտիկա. Լրագրողներ» (Կարմիր Խաչի միջազգային կոմիտե), հասանելի է եղել 2022 թվականի ապրիլի 6-ին, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/rus/docs/v2_rul_rule34

941 «Նախարարների կոմիտեի թիվ R (96) 4 հանձնարարականը անդամ պետություններին՝ հակամարտություններում և լարված իրավիճակներում լրագրողների պաշտպանության մասին» (ԵԽ Նախարարների կոմիտե, 3 մայիսի, 1996թ.), https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-no-r-96-4-of-the-committee-of-ministers-to-member-states-on-the-protection-of-journalists-in-situations-of-conflict-and-tension?_101_INSTANCE_aDXmrol0vvsU_viewMode=view%2F

Հետևաբար, լրագրողներին թիրախավորելով՝ Ադրբեջանը ոչ միայն խախտել է լրագրողների իրավունքները, այլ նաև խախտել է ազատ արտահայտման և կարծիքի հիմքում ընկած արժեքները, քանի որ խոչընդոտվել և խստագույնս սահմանափակվել է հանրության՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքը: Վերոնշյալ փաստերի և իրավական նորմերի համադրության պարագայում ակնհայտ է, որ Ադրբեջանը դիտավորյալ է թիրախավորել լրագրողներին և, այդպես վարվելով, խախտել է միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների նորմերը:

Ընդհանուր առմամբ տարրական իրավական սկզբունք է այն, որ շարժառիթը կամ դիտավորությունը կարող է բացահայտվել առկա հանգամանքների կամ անուղղակի ապացույցների հիման վրա, և որ նման հիմնավոր ապացույցների ներկայացումից հետո, հատկապես այն դեպքերում, որտեղ մեղադրվող կողմը տիրապետում է փաստագրական ապացույցներին, մեղքը հերքելու բեռը դրվում է մեղադրյալի վրա: Այս մոդելի շրջանակում և հիմնվելով առկա ապացույցների վրա՝ միջազգային և տարաշածրջանային դերակատարները պարտավոր են դատապարտել Ադրբեջանին՝ պատճառած վնասների համար:

Եզրակացություն

Սույն փաստահավաք զեկույցը ներկայացնում է հանցագործությունների և մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ դեպքեր՝ ի ցույց դնելու Արցախում 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կառավարության կողմից իրականացված վայրագությունների համակարգային բնույթը և դրանց հետևանքները: Այն գլխավորապես հիմնվում է վկաների ցուցմունքների վրա և դրանք հաստատում է բաց աղբյուրների և հետախուզական վերլուծությունների լայն շրջանակի միջոցով՝ նպատակ ունենալով ցույց տալ Արցախում և Հայաստանում ապրող հայերին հասցված վնասի մասշտաբն ու ծանրությունը: Այս բացահայտումները հաշվի առնելով՝ ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք նպատակ ունեն վերականգնել զեկույցում նշված ոտնահարված իրավունքները:

Սույն փաստահավաք առաքելության նախապատրաստական աշխատանքները սկսվել են հենց պատերազմի սկզբից: Հայաստանում քաղաքացիական հասարակության մի շարք դերակատարներ միավորվեցին՝ փաստագրելու 2020 թվականի վերջին Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացված հանցագործություններն ու խախտումները: Այս ամփոփիչ դիտարկումները գրվել են մեկ տարի անց, և կարելի է փաստել, որ դեռևս շոշափելի առաջընթաց չի գրանցվել ռազմական հակամարտությամբ պայմանավորված ծայրահեղ հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ: Փոխարենը, Ադրբեջանի կառավարությունը, ցնծալով պատերազմի արդյունքով, այն ներկայացնում է որպես վառ օրինակ այն բանի, որ «ռազմական լուծում» կա՛, և որ հենց հարկադրանքն է արդյունք տալիս: Այս համոզմունքը դրված է 44-օրյա պատերազմից հետո Բաքվի գործունեության հիմքում, քանի որ այն օգտագործում է ուժը, ահաբեկումն ու վախը՝ միակողմանի զիջումներ կորզելու նպատակով: Բաքուն մինչ այժմ հրաժարվում է ազատ արձակել ռազմագերիներին և գերեվարված այլ անձանց: Այն շարունակաբար սպառնում է Արցախի և Հայաստանի սահմանամերձ համայնքներում ապրող մարդկանց անվտանգությանը: Սա կանխամտածված մարտավարություն է, որը նպատակ ունի շահագործել հակառակ կողմի հետպատերազմյան խոցելիությունը՝ բացարձակապես ահրամարհելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

Խիստ անհանգստացնող է, որ Ադրբեջանի կառավարության՝ ծայրահեղ հայատյաց հռետորաբանությունը շարունակվում է նույնիսկ պատերազմի ավարտից հետո: Թեպետ Ալիևի ռեժիմը դեկլարատիվ հայտարարություններ է անում խաղաղության վերականգման մասին, այն շարունակում է վերարտադրել իր թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ նրանց անվանելով «թշնամի» և ձևավորելով և խթանելով ռասիստական միտումներ: Այս իրավիճակը Արցախի ժողովրդի համար անհնարին է դարձնում արժանապատիվ կյանքի իր իրավունքն Ադրբեջանի ենթակայության տակ իրացնելը: Արցախցիները շարունակում են դիտվել որպես թշնամի, իսկ Ադրբեջանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում Արցախից նրանց՝ ֆիզիկական և մշակութային ներկայությունը ոչնչացնելու ուղղությամբ: Ավելին, ալիևյան ռեժիմի հետպատերազմյան հռետորաբանությունն ավելի է սաստկացել՝ տարածքային պահանջներ ներկայացնելով արդեն բուն Արցախից դուրս:

Այս իրավիճակը անպատժելիության ուղիղ հետևանք է: Բաքուն շարունակում է մարդու հիմնական իրավունքները խախտելու իր քաղաքականությունը, քանի որ այն որևէ նշանակալի միջազգային ճնշման չի հանդիպում: Միջազգային կազմակերպությունների և պետությունների մեծ մասն ընտրել են այս խնդիրների նկատմամբ աչք փակելու քաղաքականությունը և բավարարվում են խաղաղությանն աջակցելու մասին ընդհանրական հայտարարություններ անելով: Ինչպե՞ս կարող է խաղաղ կարգավորում հնարավոր լինել մի պարագայում, երբ կողմերից մեկը չի փոխում իր բացահայտ թշնամական վերաբերմունքը և շարունակում է գործել հանցագործություններ և մարդու իրավունքների խախտումներ: Այս հարցը որպես սոսկ երկկողմանի խնդիր դիտարկելը և այն միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում չդիտարկելը սահմանափակում է խախտված իրավունքների վերականգնման և ապագա հանցագործությունների կանխարգելման հնարավորությունները: